

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ, ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 378:94
ԳՄԴ 74.58+63.3
Ե 471

Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը և պատմության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Խմբագիրներ՝

բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Ենգոյան
բ.գ.թ. Սերի Հովհաննիսյան

Գրախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ. Կլիմենտ Հարությունյան
պ.գ.դ., պրոֆ. Վանիկ Վիրաբյան

Ենգոյան Փ., Սինասյան Է.
Ե 471 Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)/ Փ. Ենգոյան, Է. Սինասյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:

Աշխատությունում անդրադարձ է կատարվում Երևանի պետական համալսարանի դասախոսների, ուսանողության, վարչատնտեսական աշխատողների սխրանքներին ու մարտական ծառայություններին Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում և նրանց հայրենաշվեր գործունեությանը թիկունքում: Գրքում զետեղվել է ռազմաճակատ մեկնած համալսարանականների 400-ից ավելի կենսագրություն: Հավաքագրվել են տվյալներ արխիվներից, անձնական գործերից, ճակատայիների և զոհված համալսարանականների հարազատների, ընկերների բանավոր ու գրավոր հուշերից: Պատերազմ մեկնած համալսարանականների մի մասը զոհվել է մարտի դաշտում, մյուսները, ավարտելով ուսումը, աշխատել են համալսարանում և այլ հաստատություններում:

Աշխատությունը հասցեագրված է պատմաբաններին, քաղաքագետներին, հարցի ուսումնասիրությամբ զբաղվող այլ մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակությանը:


ՀՏԴ 378:94
ԳՄԴ 74.58+63.3

ISBN 978-5-8084-2389-3

© ԵՊՀ հրատ, 2019
© Ենգոյան Փ., Սինասյան Է., 2019

Գ Ի Ր Ք Ը

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ ՁՈՒՀՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ 18
Ա. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ 18
Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ 66

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԵՎ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ 112

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐՏԱԴԱՇՏԵՐՈՒՄ ՋՈՀՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ (ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐ, ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ) 145

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏ ՄԵԿՆԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԸ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ 206
Ա) ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍԱՆԱԾ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ 206
Բ) ՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԵՎ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍԱՆԱԾ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ 386

ՎԵՐՋԱԲԱՆ 538

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 562

ՌԱՋՄԱՃԱԿԱՏ ՄԵԿՆԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ 567

РЕЗЮМЕ 581

SUMMARY 584

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս տարի՝ 2019 թ., նշվում է Մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հիմնադրման 100-ամյակը:

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բացառիկ է Երևանի պետական համալսարանի դերակատարումը: Լինելով հայ ժողովրդի 20-րդ դարի ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ ԵՊՀ-ն, իր գոյության տարիներին զարգանալով ու հզորանալով, դարձել է հանրապետության ուսումնագիտական և կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումների է հասել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների համար բարձրորակ կադրերի պատրաստման գործում: Համալսարանն այն կենսատու արմատն է, որից ճյուղավորվել է մեր հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծագույն մասը: Հենց նրա ֆակուլտետների հիմքի վրա 1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. սկզբներին ստեղծվեցին Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Երևանի պետական բժշկական, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական, Գյուղատնտեսական և Ժողովրդական տնտեսությունների ինստիտուտները (ներկայումս համալսարաններ): Երևանի պետական համալսարանը հիմք դարձավ նաև 1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման համար, որի հիմնադիր կազմի 23 ակադեմիկոսներից 12-ը ԵՊՀ պրոֆեսորներ էին: Բարձրորակ գիտական կադրերի պատրաստումը և գիտության զարգացումը համալսարանում կարևոր նշանակություն ունեցան հանրապետությունում գիտության տարբեր ուղղությունների առաջացման և զարգացման համար:

Հանրապետությունում այժմ գործող բոլոր բուհերի դասախոսների և գիտահետազոտական հիմնարկների գիտաշխատողների, ակադեմիկոսների, գիտության դոկտորների, պրոֆեսորների, դոցենտների զգալի մասը Մայր բուհի նախկին սաներն են: ԵՊՀ շրջանավարտներից շատերը անվանի գիտնականներ են, որոնք մեծ ճանաչում են

ձեռք բերել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: Նրանց թվում են Գևորգ Ջահուկյանը, Էդուարդ Աղայանը, Արտաշես Շահինյանը, Սերգեյ Մերգելյանը, Միքայել Չայլախյանը, Էզրաս Հասրաթյանը, Գուրգեն Սահակյանը և ուրիշներ: Համալսարանում են ուսանել հանճարեղ գրողներ Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ, ինչպես նաև հասարակական-քաղաքական ու պետական մի շարք ականավոր գործիչներ:

Ի պատիվ Հայաստանի առաջին հանրապետության ղեկավար այրերի՝ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի և հանրային կրթության նախարարներ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանի և Նիկոլ Աղբալյանի՝ իր գոյության մեկ տարին չբոլորած նորանկախ Հայաստանի Հանրապետությունը 1919 թ. մայիսի 16-ին ընդունեց համալսարանի հիմնադրման մասին որոշում, որով համալսարանը բացվեց 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (Գյումրի) առևտրային դպրոցի շենքում: Նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի նիստում որոշվեց համալսարանը տեղափոխել Երևան՝ նրան տրամադրելով Երևանի սեմինարիայի շենքը (ներկայիս Աբովյան 52 հասցեում գտնվող համալսարանի սև շենքը): Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ «Երևանի համալսարանը վերակազմելու մասին» հրամանով վերաբացված համալսարանը կոչվեց Երևանի ժողովրդական համալսարան և գործեց 1921 թ. հունվարից: Նախկին մեկ՝ պատմալեզվագրական ֆակուլտետի փոխարեն համալսարանը ուներ երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետ: 1923 թվականից Երևանի համալսարանը անվանվեց պետական համալսարան:

ԵՊՀ 100-ամյա պատմության մեջ ակներև են համալսարանի լավագույն ձեռքբերումները, նաև որոշակի դժվարություններն ու կորուստները: Դրանցից կարելի է առանձնացնել այն փաստը, որ 1937 թ. 12 ահասարսուռ ամիսների ընթացքում Երևանի պետական համալսարանում փոխվել է 6 ռեկտոր, որոնցից և ոչ մեկը, բնականա-

բար, չի հասցրել քիչ թե շատ լուրջ ավանդ ներդնել համալսարանի պատմության մեջ: Դաժան ճակատագրի արժանացան նաև բազմաթիվ համալսարանականներ, որոնք ենթարկվեցին անլուր հալածանքների, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով, նրանցից շատերն իրենց մահկանացուն կնքեցին բանտերում և աքսորավայրերում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին համալսարանի դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ, աշխատակիցներ զինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը, նրանցից 300-ը հերոսաբար զոհվեց, մի մասն էլ տուն վերադարձավ վիրավոր և հաշմանդամ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին համալսարանի և համալսարանականների գործունեության լուսաբանմանն է նվիրված սույն աշխատությունը: Նրա հիմքում ընկած է Փ. Ենգոյանի «Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին» (Երևան, 1975, ԵՊՀ հրատ.) աշխատությունը, որը լրացվել է փաստական, արխիվային նոր նյութերով և անուններով. ավելացվել են նոր գլուխներ, վերջաբան և գրականության ցանկ:

Առաջին գլխում ներկայացվել են Երևանի պետական համալսարանի հիմնադրման կարևորությունը և նրա խաղացած դերը բարձրագույն կրթությամբ կադրեր պատրաստելու գործում: Այդ կադրերը մեծ դերակատարում ունեցան Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական և մշակութային կյանքի զարգացման գործում: Միաժամանակ ցույց է տրված հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում:

Երկրորդ գլխում փաստական հարուստ նյութերի հիման վրա լուսաբանվել է համալսարանի դերակատարումը զորահավաքային, աշխարհազորային, կամավորական ջոկատների ստեղծման, հայկական ազգային դիվիզիաների կազմում համալսարանականների ակտիվ մասնակցության, կարմիր բանակի շարքերում կռվելու պատրաստակամության, թիկունքային աշխատանքներին արդյունավետ մասնակցության մասին: Հայրենական մեծ պատերազմի առաջին

օրերից սկսած՝ ԵՊՀ-ն զինվորագրվեց հայրենիքի պաշտպանության: Ռազմաճակատ մեկնեցին համալսարանի պահակից մինչև ռեկտորը՝ խոստանալով մինչև վերջ ծառայել հայրենիքի պաշտպանության գործին:

Գարեգին Պետրոսյանը, ելույթ ունենալով համալսարանի ընդհանուր ժողովում, հայտարարել է, որ ինքնակամ թողնում է ռեկտորի պաշտոնն ու կամավոր մեկնում ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Դա հուզիչ ու ոգեշնչող կոչ էր, որը լայն արձագանք գտավ համալսարանականների շրջանում, և նրանցից շատերը հետևեցին իրենց ռեկտորի օրինակին: Պատերազմի միայն առաջին տարում ռազմաճակատ մեկնեց 360 համալսարանական, այդ թվում՝ Անուշավան Արզումանյանը, Գևորգ Ջահուկյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Վաչե Նալբանդյանը, Աշոտ Ասլանյանը, Հովհաննես Բարսեղյանը, Սիրաք Գյուլբուդաղյանը, Պետրոս Բեզիրգանյանը, Պերճ Բոշնաղյանը, Սերոբ Պողոսյանը, Գևորգ Բաբաջանյանը, Բենիկ Թումանյանը, Կորյուն Շահբազյանը, Վաչագան Սաղաթելյանը և շատ ուրիշներ: Պատերազմական տարիներին համալսարանի առջև ծառացան հրատապ նոր խնդիրներ, վերանայվեցին ուսումնական ծրագրերը, ներդրվեցին ռազմական պատրաստման դասընթացներ, կազմակերպվեցին ռազմապաշտպանական միջոցառումներ, ուժեղացվեց ռազմահայրենասիրական, գաղափարական-դաստիարակչական աշխատանքը՝ ուսանողների մեջ արմատավորելու թշնամուն հաղթելու կամք ու վճռականություն: Կազմակերպվեցին նաև ուսանողուհիների բուժքույրական դասընթացներ, որտեղ սովորեցնում էին առաջին բուժօգնության ձևերն ու մեթոդները, իսկ գործնական պարապունքներն անցկացվում էին հոսպիտալում: Այս դասընթացների առաջին շրջանավարտների մի մասը ծառայության մեկնեց հանրապետության հիվանդանոցներ և հոսպիտալներ, իսկ մյուսները՝ տարբեր ռազմաճակատներ:

Համալսարանականներն ակտիվորեն մասնակցեցին նաև թիկունքային աշխատանքներին: Համալսարանի ամբիոններն ու լաբորատորիաները արտադրության մեջ ներդրեցին մի շարք նորարարու-

թյուններ. ԵՊՀ քիմիկոսները գազապաստարանների համար մշակեցին ածուխի և ֆիզիոլոգիական աղի ստացման տեխնոլոգիաներ, ուսումնասիրեցին Երևանի տրամվայի էլեկտրական և հեռախոսային ընդգետնյա ցանցի կաբելների քայքայման պատճառները և միջոցառումներ ձեռնարկեցին՝ դրանց դեմ պայքարելու համար, նիկելապատեցին կառուչուկի գործարանի ԱՊՍ կայանի համար անհրաժեշտ 700 մանր դետալներ, ուսումնասիրեցին Ագարակի, Փիրդուդանի հանքերը և 909 նմուշի մեջ ճշտեցին պղնձի քանակը և այլն: ԵՊՀ երկրաբանները հետազոտեցին և ճշգրտեցին հանրապետության հանքային հարստությունների պաշարները, տնտեսագետները օգնեցին հանրապետության պլանավորող օրգաններին ճիշտ հաշվառման ենթարկել հումքային ու աշխատանքային հնարավորությունները: Արտադրության մեջ նոր մեխանիզմների ներդրման գործում արդյունաբերական ձեռնարկություններին օգնեցին համալսարանի ֆիզիկոսները, մաթեմատիկոսներն ու մեխանիկոսները: Գրեթե ամեն օր համալսարանից աշխատանքային ուժեր էին ուղարկվում հանրապետության տարբեր շրջաններ՝ դաշտային աշխատանքներում կոլտնտեսականներին օգնություն ցույց տալու համար: Հարյուրավոր ուսանողներ ու դասախոսներ դասերից հետո Երևանի երկաթուղային կայարանում ու ավտոկայանում օգնում էին բարձման ու բեռնաթափման աշխատանքներին: Համալսարանականները մեծ եռանդով կազմակերպեցին մետաղի ջարդոնի և բանակի համար տաք հագուստի հավաքման աշխատանքները, մասնակցեցին Երևանում հակաօդային պաշտպանության կազմակերպման ու ղեկավարման գործին և այլն: Պատերազմի տարիներին համալսարանի ղեկավարությունը, կուսակցական և հասարակական կազմակերպությունները հատուկ ուշադրության էին արժանացնում ռազմաճակատներում զոհված կամ գործող բանակում գտնվող զինվորականների զավակներին. զիջում էին ուսման վարձը, պարբերաբար տալիս դրամական օգնություն, ապահովում հագուստով և այլն:

Երրորդ գլխում ներկայացվել են զոհված համալսարանականների կենսագրությունները: Նրանք ընկան ռազմաճակատներում՝

թողնելով լավագույն հայրենասերների հիշատակ, որը սրբությամբ են պահպանում Երևանի պետական համալսարանի սաները: 1979 թ. մայիսի 8-ին՝ Մեծ հայրենականում խորհրդային ժողովրդի տարած փառապանծ հաղթանակի 34-րդ տարեդարձի նախօրեին, Երևանի պետական համալսարանի բակում հանդիսավորությամբ բացվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը, որի վրա գրված է «Հավերժ փառք 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականներին»: 5 մ բարձրություն ունեցող գրանիտե հուշարձանին ամրացված պղնձե թռչնող կանաչ տերևը խորհրդանշում է երիտասարդ զոհվածներին, իսկ աղբյուրից ավազանի մեջ հոսող ջուրը՝ կյանքն ու հավերժությունը:

Ոչինչ մի մոռացվել. ոչ ոք չի մոռացվել... Հուշարձանը դրա վառ ապացույցն է և սիրո ու երախտագիտության խոսք՝ զոհված համալսարանականների հիշատակին, որոնք առանց երկմտանքի մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենի սուրբ հողը ու զոհվելով անմահացան:

Չորրորդ գլուխը նվիրված է համալսարանում սովորող ուսանողների, ասպիրանտների ու դասավանդող դասախոսների սխրանքներին: Մեծ հայրենականի տարիներին հայրենիքի պաշտպանության գործին զինվորագրված 869 համալսարանականների՝ դասախոսների, ուսանողների, ասպիրանտների ու վարչատնտեսական ոլորտի աշխատողների գրեթե 90 տոկոսը եղավ պատերազմի ռազմաճակատներում: Շատերը պարգևատրվեցին Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով: Դասախոսներից գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, իսկ ուսանողներից Սուրեն Սարգսյանը արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման:

Նշված գլխում անդրադարձ է կատարվել Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում մարտնչած, ապա համալսարանում ուսանող, ասպիրանտ ու դասախոս դարձած համալսարանականների կենսագրություններին և կատարած սխրանքներին:

Վերջաբանում ամփոփված են ուսումնասիրության արդյունքները, հիմնավորված է ԵՊՀ-ի կատարած դերը ոչ միայն Հայրենական մեծ պատերազմում, այլև Արցախյան շարժման, ադրբեջանա-արցախյան պատերազմի տարիներին (1988-1994)՝ անդրադարձ կատարելով նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմին համալսարանականների մասնակցությանը, նրանց ցուցաբերած սխրանքներին:

Թեմայի հետազոտությունը մեզ բերել է այն համոզման, որ Հայրենական մեծ պատերազմին ԵՊՀ-ից մասնակցած դասախոսների, ասպիրանտների, ուսանողների և վարչատնտեսական աշխատողների թիվն ավելի մեծ է, քան այն նշված է պրոֆեսոր Փ. Ենգոյանի աշխատությունում (500 մասնակից)[1] և համալսարանի ռեկտոր Հ. Բունիաթյանի՝ ԵՊՀ 25-ամյակի առթիվ կարդացած զեկուցման մեջ հիշատակված 850 մասնակիցների թիվը[2]: Իրականում Մայր բուհից Հայրենական մեծ պատերազմին մասնակցողների թիվը կազմել է ավելի քան 869 մարդ, որից շուրջ 300-ը զոհվել է[3]: Մեզ հաջողվել է արխիվային տարաբնույթ փաստաթղթերի, աշխատությունների, հուշագրությունների և այլ նյութերի համադրմամբ պարզել և Փ. Ենգոյանի աշխատությունում հիշատակված 57 զոհված համալսարականների կենսագրությանը հավելել ևս երկու տասնյակից ավելի մասնակիցների կենսագրականներ, իսկ 231 մասնակից համալսարանականների անուններին՝ ևս շուրջ 200 անուն ու կենսագրություն: Ցավոք սրտի, կան Հայրենական մեծ պատերազմին մասնակից համալսարանականներ, որոնց գործունեությանը անդրադարձ չենք կատարել՝ անհրաժեշտ տեղեկությունների և փաստերի բացակայության պատճառով:

Շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ երկարամյա աշխատող, «Երևանի համալսարանի» թերթի խմբագիր, բանասիրական գիտու-

[1] Տե՛ս **Փ. Ենգոյան**, Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, Երևան, 1975, էջ 37:

[2] Տե՛ս **Հ. Բունիաթյան**, Պանծալի հոբելյան (Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի 25-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան» ամսագիր, 1946, N4-5 (ապրիլ-մայիս), միացյալ համար, էջ 18:

[3] Տե՛ս «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, N 17-18, 9 մայիսի, 1985, էջ 1, 12 մայիսի, 1990, էջ 1:

թյունների թեկնածու Վ. Մաղալյանին, ՀՀ ազգային արխիվի վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր Ա. Վիրաբյանին և ԵՊՀ թանգարանի տնօրեն Հեղինե Գասպարյանին՝ աշխատանքը գրելիս մեզ փաստաթղթային, թանգարանային, արխիվային անհրաժեշտ նյութեր, լուսանկարներ տրամադրելու համար:

Երբ ես էլ մտա համալսարան,
Ամեն ինչ այնպես պարզ էր թվում,
Կյանքն ինձ թվում էր մի երգարան,
Եվ միտքը՝ կղզի՝ սիրո ծովում:

Բայց երբ խորացա խոհերի մեջ,
Իմ սիրո ծովը կղզիացավ,
Եվ ծովանալով իմ միտքն ամբողջ
Սիրո կղզու շուրջն օվկիանացավ...

Տեսա, որ կյանքը հատրակ չունի,
Ու ես կաթիլի ափին եմ դեռ,
Եվ սերունդները՝ այս անհունին՝
Մինչև գերեզման՝ ուսանողներ...

Եվ հիմա տրեզերքն է մշտահոս
Մայր համալսարանն իմ լուսաբեր,
Լուսինն էլ ճաղատ մի դասախոս,
Եվ աստղերն ինձ հետ ուսանողներ...

Իմ համալսարան

Չգիտեմ՝ երգով մարդ դառա՞, թե՞ ոչ,
Ի սեր իմ ազգի մասիսահառաչ
Բայց խոնարհում եմ գլուխս դողդոջ,
Իմ համալսարան, քո լույսի առաջ:

Քանզի դու ես ինձ երկնել մոր նման,
Վայրենի կավս քեզնով սափորվեց,
Ո՜վ մտքի բրուտ, իմ համալսարան,
Երգս քո լույսով վեր ծիածանվեց...

Բայց կուզենայի դեռ այնպես բուրեն
Քնարիս դաշտերն հայրենահոսյով,
Որ ողջ ազգերը քեզ վարդեր բերեն,
Քեզ քո Մասիսը բերեն քո լույսով,–

Իմ համալսարա՜ն, իմ հայ ժողովուրդ,
Բախտդ կավ, դու միշտ հանչարեղ բրուտ...

Հովհաննես Շիրազ 1948 թ., 1965թ.
ԵՊՀ շրջանավարտ

Իմ դասախոսները

Աբեղյանն էր, Մանուկ, լսարան մտնում լուռ,
Քուռկիկ Ջալալու սանչից բռնած,
Եվ Լեոն էր գալիս՝ մի անամոթ մրմուռ
Իր նոր խոհերի պարսին խառնած:

Ղափանցյանն էր, Գրիգոր, մեզ գրաբար կարդում,
Գիրն Եղիշեի լուսահանճար,
Ամառյանն էր, Հրաչյա, շքամուղքից ելնում՝
Որպես շարժական լեզվի տաճար:

Տերտերյանն էր, Արսեն, որ ամեն օր անդուլ
Քաղաքն էր շրջում հոգեխռով,
Մանանդյանն էր, Հակոբ, մեր գունդն առաջնորդում
Տիգրանակերտից մինչև Հռոմ:

Օ՜, Խանզադյան Յոլակ, ցոլա իմ հուշերում,
Հայ կամառում վառված մոլեգին լույս,
Քեզ եմ հիշում Սիմոն, բազմակարծիք ծերուկ,
Միջամուխ, դժբախտ մեր Պոլոնիուս:

Ասատուրն էր, Գևորգ, իր շուրթերով դալուկ,
Շշնջում Խայյամ ու Ֆիրդուսի,
Արարատովն էր մեզ զորաշարժի տանում՝
Ղարսի հրացանը կապած ուսին:

Օ՜, Թորոսենց Վահան, առյուծաբաշ դու խալղ,
Թավ ծիծաղիդ բոցով սիրտ վառած,
Եկուր խոնարհ ծնկեմ որպես Օսկար Ուայլդ,
Վեհ բազին դարչած ոգուդ առաջ:

Եվ Գյուլին էր գալիս՝ մի զուսպ ժպիտ դեմքին,
Հեգնելական քայլով ծանրաբարո,
Շավարշյանն էր իջնում մի վառ լապտեր ձեռքին՝
Իգդիրի խաժակ ճանապարհով...

Ինչ սեղմել ևև պատրիև իմ հուշերը ծալ-ծալ,
Օ՜, Վռամ Կոստրան և Կարո-Մելիք,
Եվ Էդիլյան Գուրգեև – դուք ածանցյալ ևևցյալ,
Դուք հավերժում կորած աստղածաղիկ:

Եվ Դրաստամատն է վեհ, քաջայրը փարպեցի,
Հուշերիս մեջ հպարտ վեր բարձրանում,
Ես ո՞ր մեկիդ հիշեմ այս հուզմունքիս պահին,
Օ՜, դասախոսևեր իմ քաղցրանուն:

Եվ, ասում ևն, Ստեփան Մալխասյանն էր գալիս,
Բայց չեմ լսել ես քեզ, այր վեհաշուք,
Համալսարանի դեմ ծեր բարդիևեր կային
Ու մի վարար աղբյուր՝ լավ եմ հիշում...

Եվ Անժուրի պոռթկուն ծիծաղն է հնչում կեզ
Հարակից մի լսարանի դռնից,
Այս հուշերգը գրեց Խաչիկ Դաշտենցը՝ ես,
Պատմագրական բաժնից...

Խաչիկ Դաշտենց 1947-1965 թթ.
ԵՊՀ շրջանավարտ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Ա. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

Երևանի պետական համալսարանի հիմնադրումը բացառիկ երևույթ էր հայ ժողովրդի կյանքում: Այն մեր ժողովրդի՝ կրթության, լուսավորության նկատմամբ ունեցած ցանկությունների, դարավոր ձգտումների, հաստատված պահանջների իրագործման արդյունք էր: Հայ ժողովուրդը, որ դեռևս միջնադարում հասել էր համալսարանական կրթօջախներ ունենալու մակարդակին, պատմության նորագույն շրջանում ավելի քան զգում էր դրա անհրաժեշտությունը, առավել ևս անկախության և սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու պայմաններում: Հասկանալի պատճառներով Հայաստանը, բացի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնից, չունենալով բարձրագույն ուսումնական որևէ հաստատություն, զրկված էր երկրի ներսում ազգային կադրեր պատրաստելու հնարավորություններից: Դա էր պատճառը, որ նույնիսկ 1922 թ. հանրապետությունում կային բարձրագույն կրթությամբ ընդամենը 12 գյուղատնտես, 73 բժիշկ, 107 ուսուցիչ և սակավաթիվ այլ մասնագետներ[4]:

Պատահական չէ, որ Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հովհաննես Թումանյանը, դեռևս 1917 թ. մայիսին գրել է. «Պետք է ստեղծել Հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտու-

[4] Տե՛ս **Պ. Ղարիբջանյան**, Երևանի պետական համալսարան, Երևան, 1994, էջ 31:

թյան տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի ջահ՝ Հայկական համալսարան…»[5]:

Ուղիղ 100 տարի առաջ՝ 1919 թ. մայիսի 16-ին, Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդը որոշում ընդունեց համալսարան հիմնելու մասին՝ առաջնահերթ համարելով բացել պատմալեզվաբանական ֆակուլտետ[6]: Որոշման մեջ մասնավորապես ասվում էր.

«Լսեցին… հանրային կրթության մինիստրի զեկուցումը՝ Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 5 միլիոն ռուբլի հատկացնելու մասին:

2. Որոշեցին.

ա) հիմնել Երևանում համալսարան՝ հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսահրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով,

բ) համալսարանը բանալ 1919-1920 ճեմարանական տարում,

գ) մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը՝ ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության,

դ) առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը,

ե) համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել 300.000 ռուբլի՝ հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը»[7]:

Նշված որոշման հիման վրա 1919 թ. հունիսի 5-ին Նախարարների խորհուրդն ընդունեց «Երևանի համալսարանի մասին» օրենք[8]:

Համալսարանի տեսուչի (ռեկտոր) պաշտոնում նշանակվեց Եվրոպայում և Ռուսաստանում մեծ հռչակ ունեցող իրավագետ, Մոսկ-

[5] Երևանի պետական համալսարան - 90, Սրտի խոսք, կազմ.՝ Վ. Մաղալյան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 8:
[6] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78:
[7] ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, թ. 78:
[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 83, նաև՝ ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:

վայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը: Վերջինս հռոմեական և քաղաքացիական իրավունքի մասնագետ էր և այդ ժամանակ աշխատում էր Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես պրոֆեսոր և ռեկտորի պաշտոնակատար[9]: Յ. Ղամբարյանը ժամանակին Մ. Կովալևսկու, Ս. Պոստնիկովի և ուրիշների հետ հեռացվել էր Մոսկվայի համալսարանից, մեկնել արտասահման, որտեղ Փարիզում հիմնել էր «Ռուսական բարձրագույն դպրոց», 1905 թ. հեղափոխությունից հետո վերադարձել էր Սանկտ Պետերբուրգ և դասախոսական աշխատանքից բացի՝ դարձել «Գրանատ» հանրագիտական բառարանի խմբագիրներից մեկը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Յ. Ղամբարյանը վերադարձել է իր ծննդավայրը՝ Թիֆլիս, որտեղ դասավանդել է նորաբաց պոլիտեխնիկումում: Նրա օգնականը՝ քիմիկոս Դավիթ Զավրյանը, Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի դոցենտ էր: Վերադառնալով Թիֆլիս՝ աշխատել է անդրկովկասյան մասնավոր համալսարանում: Նրանք երկուսն էլ Հայաստանի անդրանիկ համալսարանի անխոնջ կազմակերպիչներն էին, լավ մասնագետներ, որոնք, բուհական աշխատանքի գիտակներ լինելով հանդերձ, դժբախտաբար, հազվադեպ էին լինում Հայաստանում և հիմնականում ապրում ու գործունեություն էին ծավալում Թիֆլիսում[10]:

Սահմանվեց համալսարանի պրոֆեսորի աշխատավարձի չափը՝ մինիստրական, իսկ արտասահմանից հրավիրելու դեպքում՝ ավելի բարձր[11]:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի՝ 1919 թ. դեկտեմբերի 5-ի ՀՀ նախարարների խորհրդին ուղղված զեկուցագրից տեղեկանում ենք, որ Երևան քաղաքում հարմար շենքեր չգտնելու պատճառով նախարարությունն առաջարկել է համալսարանը ժամանակավորապես տեղափոխել Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղ կային բոլոր հարմարությունները: Նշված գրու-

[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, թթ. 114 և 132:
[10] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 37:
[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 105:

թյան հիման վրա վարչապետ Ա. Խատիսյանի մակագրությամբ որոշվել է «Հայաստանի համալսարանը ժամանակավորապես մինչև ուսումնական տարվա վերջը տեղափոխել Ալեքսանդրապոլ»[12]: Մինչև համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացումը անհրաժեշտ էր լուծել երկու կարևոր խնդիր՝

1) այն ապահովել որակյալ դասախոսական կազմով,

2) ստեղծել ընդունելության կարգ և կազմակերպել ընդունելություն:

Հենց նշված խնդիրների իրագործմանն էլ ձեռնամուխ եղան համալսարանի կազմակերպիչները:

Հանրային կրթության վերոնշյալ նախարարները և կազմակերպիչները՝ Յ. Ղամբարյանն ու նրա օգնական, հայտնի քիմիկոս Դ. Զավրյանը, անժխտելի և մեծ ավանդ ունեցան ոչ միայն համալսարանի բացման, այլև նրա անդրանիկ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետը բարձրորակ դասախոսական կազմով ապահովելու գործում: Հենց նրանց ջանքերով դասախոսական աշխատանքի հրավիրվեցին ժամանակի նշանավոր գիտնականները, փորձառու ու ճանաչված մանկավարժները՝ Մանուկ Աբեղյանը (հայ գրականություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Ստեփան Մալխասյանցը (պատմական լեզվաբանություն), ֆակուլտետի առաջին դեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայոց պատմություն և հայ գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Մինասյանը (հայոց պատմության հին շրջան), դեկանի պաշտոնակատար (1920 թ. հունիս - հուլիս) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Աշխարհիբեկ Քալանթարը (Արևելքի պատմություն և հնագիտություն) և ուրիշներ:

Երկրորդ կարևոր հարցը ուսանողության հավաքագրումն էր, որը կարգավորվեց ՀՀ նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 8-ին հաստատված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնե-

[12] Տե՛ս **Լ. Զարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 36:

րի» համաձայն, ըստ որի՝ իսկական ուսանող կարող էին դառնալ առաջին հերթին միջնակարգ կրթությամբ քաղաքացիները՝ առանց սեռային խտրականության, ապա՝ միջնակարգ կրթություն չունեցողները, որոնք ընդհանուր ժողովի թույլտվությամբ կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիր: Դիմումի հետ պահանջվում էր ներկայացնել միջնակարգ կրթության վկայական կամ նրա վավերացված պատճենը, ծննդյան և զինվորական ծառայության վկայականները: Ուսանողները պետք է վճարեին ուսման վարձ՝ տարեկան 500, իսկ ազատ ունկնդիրները՝ 100 ռուբլի: Դիմումների թիվը համալսարանում մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը եղել է 632: Սակայն համալսարանի ժամանակավոր կանոնների համաձայն՝ ընդունվել է ընդամենը 260 ուսանող, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Հետաքրքրական է, որ ուսանողների մեջ մեծ թիվ են կազմել ուսուցիչները[13]:

Նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1920 թ. հունվարի 31-ին, Ալեքսանդրապոլի (Գյումրի) առևտրային դպրոցի շենքում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին խորհրդարանի փոխնախագահ Ա. Սահակյանը, նախարարապետ (վարչապետ) Ա. Խատիսյանը, հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, նույնիսկ անգլիական կառավարության ռազմաքաղաքական կոմիսար, գեներալ Ուորտրոպն իր շքախմբով, ամերիկացի կոմիսար-գնդապետ Հասկելը, ֆրանսիական ռազմաքաղաքական հետախուզության պետ Պուադեպարը, Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ասադուլլա խանը, Դենիկինի զինվորական ներկայացուցիչ, հայկական դիվիզիայի նախկին պետ Ջենկևիչը և ուրիշներ[14]:

[13] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 38:
[14] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր (տեսուչ) Յ. Ղամբարյանը: Համալսարանի բացման անհրաժեշտությունն ու նրա սոցիալ-քաղաքական դերն ընդգծեց նաև Ն. Աղբալյանը. «Չնայած որ մեր երկիրը ավերված է, մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, ձեռք է բերված սերունդների արյունով… Մենք վերաշինում ենք մեր տունը և հիմնում կրթության տաճարներ՝ առանց խորհելու, թե ինչ են մեր մասին մտածում մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը: Մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս կգա փոթորկից անվտրճանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան»[15]: Ապա շարունակելով խոսքը՝ ասել է. «Այս համալսարանում միտքը պիտի լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ճրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքների»[16]:

Վարչապետ Ա. Խատիսյանն իր ողջույնի խոսքում կոչ է արել բռնության շղթան տապալելուց հետո կործանել նաև տգիտության շղթան:

Պառլամենտի կողմից ողջույնի խոսք է ասել փոխնախագահ Ա. Սահակյանը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդի հայրապետական ողջույն-օրհնանքի ընթերցումից հետո հանդես են եկել դիվանագիտական ներկայացուցիչներ Ուորտրոպը, Հասկելը և Պուադեպարը:

Համալսարանի բացման առթիվ ստացվել են 300-ից ավելի ողջույնի հեռագրեր, որոնց թվում՝ Թիֆլիսի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ջավախիշվիլուց և Բաքվի պետական համալսարանի ռեկտոր Դուբրովսկուց: Հեռագրերն ընթերցել է Սիրական Տիգ-

[15] «Հառաջ» թերթ, 1920, փետրվարի 5, N 26:
[16] Տե՛ս «Հառաջ» թերթ, 1920, փետրվարի 6, N 27:

րանյանը: Այնուհետև շնորհավորական խոսքերով են հանդես եկել գնդապետ Ջենկևիչը, գեներալ Նազարբեկյանը, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, Երևանից՝ Ա. Շարաֆյանը, Նոր Բայազետից՝ Վ. Աֆրիկյանը, Հայ հեղափոխական դաշնակցության կողմից՝ Ա. Ղազարյանը, էսէռների կողմից՝ Ա. Խոնդկարյանը և ուրիշներ[17]:

Ելույթներին հաջորդել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, պրոֆեսոր Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անդրանիկ դասախոսությունը՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով: Մեսրոպ արքեպիսկոպոսը նվիրյալ հայրենասեր էր, իսկական մտավորական, տիրապետում էր մի քանի օտար լեզուների:

Մեսրոպ արքեպիսկոպոսը ծնվել է 1865 թ. Զանգեզուրի Շիկահող գյուղում: 1882 թ. ավարտել է Շուշիի թեմական, 1885 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1890 թ.՝ Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները համալրել և կատարելագործել է Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում և Վենետիկում: 1895-1898 թթ. Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակներով նշանակվել է Երևանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսուչ, Շուշիի հոգևոր թեմական դպրոցի տնօրեն: 1902 թ. Սանկտ Պետերբուրգի համալսարանում պաշտպանել է ատենախոսություն[18]: Նշանակվել է Էջմիածնի սինոդի անդամ, Գևորգյան ճեմարանի տեսուչ, ձեռնադրվել է եպիսկոպոս: Հաշվի առնելով նրա գիտակրթական մակարդակն ու մանկավարժական հարուստ փորձը, կազմակերպչական ունակությունները՝ նրան հրավիրել էին Հայաստանի նորաբաց համալսարան որպես հայ գրականության և կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր և պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան (1919 թ. հունիսից մինչև 1920 թ. դեկտեմբեր): Մի տարուց ավելի ժամանակահատվածում նրան հաջող-

[17] Տե՛ս «Հառաջ» թերթ, 1920, փետրվարի 6, N 27:
[18] Տե՛ս Երևանի պետական համալսարան, Կենսագրական հանրագիտարան, խմբ.՝ Ա. Սիմոնյան, Երևան, 2009, էջ 5:

վեց մեծածավալ աշխատանքներ կատարել ոչ միայն ֆակուլտետի ուսումնական գործընթացը կազմակերպելու, այլև գիտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ:

Համալսարանի բացման արարողությունը վերածվեց իսկական տոնախմբության:

1920 թ. հունվարի 31-ին համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացման օրը լույս տեսավ «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվեց չքավոր ուսանողների օգնության ֆոնդին[19]:

«Հայաստանի համալսարան» թերթում, բացի համալսարանի ռեկտոր (տեսուչ) Յ. Ղամբարյանի հոդվածից, տպագրվել են նաև ֆակուլտետի ղեկան Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ողջո՛ւյն, Հայաստանի համալսարան», ֆակուլտետի դասախոսներ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայաստանի համալսարանը», Ստեփան Մալխասյանցի «Համալսարանը և լեզուն», 1920 թ. հունիսից ղեկանի պաշտոնակատար Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի «Երա՞զ, թե՞ իրականություն» հոդվածները: Հետաքրքիր է, որ թերթում հրատարակվել է նաև համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի (1920 թ. փետրվար-մայիս) դասացուցակը: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի դասերը սկսվել են փետրվարի մեկից և տևել մինչև հունիսի մեկը: Նշվել են նաև դասավանդվող առարկաներն ու նրանց ժամաքանակը, դասախոսների անուն-ազգանունները: Հաշվի առնելով ունկնդիրների իմացության մակարդակն ու նրանց հետաքրքրությունների շրջանակը՝ դասախոսությունները սկսվել են երեկոյան ժամը հինգից՝ յուրաքանչյուր առարկան երկուական ժամով: Անպատրաստների համար նախատեսվել է նաև երկու ժամ (հատկապես գրաբար և ֆրանսերեն առարկաներից): Ըստ դասացուցակի՝ առաջին կիսամյակում դասավանդել են պրոֆեսոր Մեսրոպ եպիսկոպոսը (հայ գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Մինասյանը (հայոց պատմության հին շրջան),

[19] Տե՛ս «Հայաստանի համալսարան» թերթ, Ալեքսանդրապոլ, 1920, 31 հունվարի:

դոցենտ Ս. Մալխասյանցը (գրաբար), դոցենտ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (գրաբար), դոցենտի պաշտոնակատար Ռուբեն Աբրահամյանը (համեմատական լեզվաբանություն և հունարեն), դոցենտի պաշտոնակատար Սիրական Տիգրանյանը (հոգեբանություն), պրիվատ-դոցենտ Աշխարհիբեկ Քալանթարը (Արևելքի պատմություն), Ն. Սիմոնյանը (ընդհանուր պատմության նոր դար), Է. Ուսպենսկայան (ֆրանսերեն): Կարճ ժամանակ անց ֆակուլտետը համալրվել է նոր դասախոսներով: Հանրային կրթության և արվեստի նախարարության հոկտեմբերի 30-ի N161 և 162 հրամաններով Գրիգոր Ղափանցյանը և Աշոտ Գասպարյանը 1920 թ. օգոստոսի մեկից նշանակվել են համապատասխանաբար ԵՊՀ լեզվաբանական ֆակուլտետի պրիվատ-դոցենտ և ընդհանուր պատմության դասախոս:

Այսպիսով՝ պատմալեզվաբանական ֆակուլտետը աստիճանաբար համալրվել է բարձրորակ մասնագետներով: Ֆակուլտետում բացման ժամանակ ունկնդիրների թիվ եղել է 262, իսկ դասախոսներինը՝ 32:

Առաջին օրը՝ փետրվարի մեկին, առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվը վիճակվել է անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մալխասյանցին: Բացի ուսանողներից՝ դասախոսությանը ներկա են եղել նաև ՀՀ հանրային կրթության նախարարը, համալսարանի ռեկտորը, նրա օգնական-կազմակերպիչը, ֆակուլտետի դասախոսները և ուրիշներ: Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի ուսումնագիտական և կազմակերպչական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակում ղեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, ղեկանի պաշտոնակատարներ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի ու Հակոբ Մանանդյանի զեկուցագրերը և ֆակուլտետի ժողովների նիստերի արձանագրությունները, որոնք հաշվետվություններ են կատարված աշխատանքների մասին[20]: Դրանք մեզ տեղեկություններ են տալիս մասնագիտական գրականության ձեռքբերման դժվարությունների, ուսումնական գործին առնչվող հայրենանվեր աշխատանքների, ինչպես նաև դասախոսությունների որակի բարձրաց-

[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թթ. 190, 191:

ման, տեքստերի տպագրման նախապատրաստման և հրատարակման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների, դիմորդների ընդունելության, ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացման խնդիրների մասին: Արձանագրություններից պարզ է դառնում, որ չնայած ֆակուլտետում անվանի դասախոսների անձնուրաց ջանքերին, ինչպես նաև ուսանողության մեծ խանդավառությանն ու ջանասիրությանը, այնուամենայնիվ առաջին կիսամյակի արդյունքները չեն գոհացրել տնօրինության սպասելիքները՝ ֆակուլտետի դասախոսներին ու ղեկավարությանը հանգեցնելով այն եզրահանգման, որ համալսարանը՝ որպես ուսումնագիտական հաստատություն, պետք է իր գործունեությունը ծավալի ոչ թե Ալեքսանդրապոլում, այլ մայրաքաղաքում: 1920 թ. մայիսի 27-ին այդ հարցով պաշտոնապես հանրային կրթության նախարարին է դիմել ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոսը՝ ասելով. «Առաջին սեմեստրի փորձը համոզեց բոլոր դասախոսներին, որ անհրաժեշտ է համալսարան ունենալ մայրաքաղաքում: Ֆակուլտետի հանձնարարությամբ Զատկի տոներին եկա Երևան: Դիմեցի հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանին, և նա խոստացավ հնարավոր քայլեր կատարել այդ ուղղությամբ: Նույն խնդրանքով, պարո՛ն նախարար, նորից դիմում եմ Ձեզ, որ միջոցներ ձեռք առնեք առաջիկա ամիսներին: Սեպտեմբեր ամսին համալսարանը տեղափոխվի Երևան, որ նա ունենա հատուկ շենք, և որ այդ որոշումը տեղի ունենա ըստ կարելվույն շուտ, որպեսզի կարելի լինի հոգալ բնակարաններ նաև դասախոսների համար»[21]:

Համամիտ լինելով վերոնշյալ հարցադրմանը՝ նորաձևանակ նախարար Գ. Ղազարյանը առաջարկ է արել Նախարարների խորհրդին՝ համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ[22]: Այդ առաջարկի հիման վրա էլ 1920 թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշեց.

1. համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան,

[21] ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 117:
[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 115:

2. ուսուցչական սեմինարիայի շենքը (այժմ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի շենք – Է. Մ.) հատկացնել համալսարանին,

3. պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր[23]:

Ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացրեց 500 000 ռուբլի: Համաձայն նշված որոշման՝ Երևանում համալսարանն իր պարապմունքները պետք է վերսկսեր 1920 թ. հոկտեմբերի 16-ին, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումը իրագործել: Հայաստանի խաղաղ զարգացումը խաթարվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետևանքով: Դեռևս պատերազմի օրերին Երևան տեղափոխվեց համալսարանը, որի հետագա գործունեությունը պարզապես անհնարին դարձավ թուրքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում: Համալսարանը չկարողացավ վերսկսել իր պարապմունքները միակ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետում: Այդ մասին են փաստում դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մանանդյանի՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեության մասին 1920 թ. հոկտեմբերի 17-ին գրած մի զեկուցագիրը, ինչպես նաև նույն ֆակուլտետի դասախոսների 1920 թ. հոկտեմբերի 29-ի արձանագրությունը, որում մասնավորապես ասվում է. «1920 թ. հոկտեմբերի 29-ին՝ երեկոյան ժամը 5-ին, տեղի ունեցավ Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի վեցերորդ նիստը: Նախագահում էր ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանը, իսկ արձանագրում էր Ե. Ֆրանգյանը: Ներկա էին Ս. Տիգրանյանը, Մ. Աբեղյանը, Ռ. Աբրահամյանը, Ա. Քալանթարը, Ե. Տեր-Մինասյանը և Ա. Գասպարյանը:

Օրակարգն էր՝

1. ֆակուլտետի բացման հարցը,

2. նոր խնդրատուներ ընդունելու հարցը:

Ս. Տիգրանյանն առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի վերաբացումը նկատի ունենալով ռազմաճակատի լուրջ դրությունը: Կարծիքների կարճ փոխանակությունից հետո ձայների

[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, թ. 117 և ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 128:

մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վճռին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչությանը հայտարարելու ֆակուլտետի աշխատանքների սկզբի մասին, երբ այդ հնարավոր կգտնի»[24]:

Փաստորեն՝ դրությունը ռազմաճակատում այդպես էլ չկարգավորվեց: Հանրապետությունը Ալեքսանդրապոլի պայմանագրով կորցրեց ոչ միայն Սևրի պայմանագրով Հայաստանին տրված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև իր փաստական վերահսկողության տակ գտնվող հողերի կեսը:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երևանում: Որքան էլ սուր էր խորհրդային նորաստեղծ իշխանությունների բացասական վերաբերմունքը Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության նկատմամբ, այնուամենայնիվ, կարևորելով համալսարանի գոյության պատմական փաստը, որոշվեց ոչ թե փակել, այլ ուղղակի վերակազմել այն՝ հարմարեցնելով իր շահերին ու խնդիրներին: Միաժամանակ ելնելով գիտակրթական այդ կարևոր օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից՝ հարկ է նկատել, որ տասնամյակներ շարունակ անտեսվել են Հայաստանի առաջին հանրապետության սկզբնական տարիներին արված ձեռնարկումները և գոյություն ունեցող փաստաթղթերը:

Ըստ ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանի («Երևանի համալսարանը վերակազմելու մասին»)՝ «Երևանի համալսարանը վերակոչվում է Երևանի ժողովրդական համալսարան, նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական, իսկ նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում էին արձակված: Լուսավորական ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտականություն է դրվում սույն հրամանը հրապարակելու օրից

[24] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 44:

մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատին հաստատության՝ նոր համալսարանի կազմակերպման հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմը և շտատները: Հանճնաժողովի նախագահ է նշանակվում ընկ. Կողբետլյանցը, անդամներ՝ ընկ. ընկ. Գ. Չուբարյանը, Գ. Պիճիկյանը և ուսանողության երկու ներկայացուցիչներ»[25]:

Անհրաժեշտ էր անմիջապես մշակել համալսարանի նոր կանոնադրությունը, համալսարանը լիովին ապահովել պրոֆեսորադասախոսական կազմով, լուծել ուսանողության ընդունելության, ուսումնական ծրագրերի և բարձրագույն ուսումնական հաստատության աշխատանքն ապահովող նյութական ու կազմակերպչական բազմաթիվ հարցեր: Հանճնաժողովը շուտով լուսժողկոմատին է ներկայացրել համալսարանի կանոնադրության երկու նախագիծ, որոնցից մեկի նախատիպը Հայաստանի համալսարանի նախկին կանոնադրությունն էր (դրան կողմնակից էին Ե. Կողբետլյանցը և Գ. Պիճիկյանը), իսկ մյուսը՝ որպես նոր տիպի համալսարան, կազմվել էր ՌԽՖՍՀ կառավարության 1918 թ. օգոստոսի 2-ի դեկրետի և հոկտեմբերի 1-ի օրենքի հիման վրա[26]: Լուսժոմկոմատը որոշ փոփոխություններով ընդունեց երկրորդ նախագիծը և 1920 թ. դեկտեմբերի 28-ին հաստատեց Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը[27]: Նույն օրն էլ ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը ստորագրեց «Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպման մասին» հրամանը[28]:

Երևանի ժողովրդական համալսարանի կանոնադրությունը և նրա առաջին շրջանի գործունեությունը ցույց են տալիս, որ այստեղ հենց սկզբից հաշվի էին առնվել Խորհրդային Ռուսաստանի փորձը, 1917-1920 թթ. ընթացքում բարձրագույն դպրոցի վերակառուցման համար ձեռնարկված միջոցառումները: Երևանի ժողովրդական համալսարանը առաջին իսկ օրվանից իր աշխատանքն սկսեց իբրև նոր

[25] ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 17-18:
[26] Տե՛ս **Լ. Զարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 48:
[27] Տե՛ս ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 35-39:
[28] Տե՛ս նույն տեղում, էջ 34-35, նաև «Կոմունիստ», 1921, հունվարի 4:

տիպի բարձրագույն դպրոց[29]: Նրա կանոնադրության առաջին իսկ հոդվածում շեշտվում էր, որ նորաստեղծ «Երևանի ժողովրդական համալսարանը բանվորագյուղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականությունն է դարձնում բնական և սոցիալական գիտությունները ու նրանց ուսումնասիրության մեթոդները՝ նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»[30]: Այդ նպատակով, ինչպես նշված է կանոնադրության մեջ, «…Ժողովրդական համալսարանը կազմակերպում է դասընթացներ և հատվածական դասախոսություններ, գործնական, լաբորատորական և սեմինարական աշխատանքներ, հրատարակում է ամեն տեսակ աշխատություններ և օժանդակիչ ձեռնարկներ, կազմակերպում է գրադարան-ընթերցարան, թանգարան և այլն»[31]:

Կանոնադրության համաձայն՝ համալսարանի բարձրագույն օրգանը նրա խորհուրդն էր, որի կազմում ընդգրկված էին ղեկավարներ, երեք ներկայացուցիչ դասախոսներ[32], մեկական ներկայացուցիչ կոմկուսից, լուսժողկոմատից, արհմիությունից, կուլտուր-կրթական կազմակերպություններից ու պրոլետկուլտից և հինգ ներկայացուցիչ ուսանողներից: Խորհրդում վերջիններիս մասնակցությունը կանոնադրությամբ նախատեսվում էր բուհերի ղեկավարման գործին ուսանողության մասնակից դարձնելու վերաբերյալ ՌԽՖՍՀ լուսժողկոմատի 1918 թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ, որն ընդունվել էր կուսակցության Կենտկոմի ցուցումով՝ որպես բարձրագույն դպրոցը դեմոկրատացնելու ուղղությամբ կիրառված քայլ[33]:

Կանոնադրության համաձայն՝ համալսարանի խորհրդի իրավասության մեջ մտնում էին հետևյալ խնդիրները՝ վարչակազմի ղե-

[29] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 49:
[30] ՀԽՍՀ ղեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 35:
[31] Նույն տեղում:
[32] Համալսարանի խորհրդի առաջին կազմում 1921 թ. հունվարի 2-ին տեղի ունեցած նիստում փակ (գաղտնի) քվեարկությամբ դասախոսներից ընտրվեցին Հ. Մանանդյանը, Ե. Կողբետլյանցը և Կ. Սավիչ-Զաբլոցկին: Տե՛ս Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, թղթապ. 222, վավ. 92, թթ. 57-58:
[33] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 49-50:

կավարությունը, ֆակուլտետների կողմից առաջադրվող դասախոսների հաստատումը, բյուջեի սահմանումն ու իրացումը, ռեկտորի ընտրությունը: Տարաձայնությունների դեպքում հարցի վերջնական լուծումը վերապահվում էր լուսավորության ժողովրդական կոմիսարիատին[34]: Համալսարանի խորհրդում լուսժողկոմատի առաջին ներկայացուցիչն էր բանասեր Կարապետ Մելիք-Օհանջանյանը, իսկ ՀԿ(բ)Կ կենտկոմի ներկայացուցիչը՝ Վահան Շահգելդյանը (նա ուսանող էր)[35]: Թեև խորհրդի նիստում հարցերն ընդհանրապես լուծվում էին բաց քվեարկությամբ (եթե խորհրդի անդամների մեկ չորրորդը չէր պահանջում փակ քվեարկություն), սակայն ռեկտորի, վարչության անդամների և դասախոսների ընտրությունը կատարվում էր փակ քվեարկությամբ: Ժամանակավոր կանոնադրությունից երևում է, որ համալսարանի ղեկավարման համակարգը հենց սկզբից դեմոկրատական բնույթ ուներ, որը ապահովում էր դասախոսների և ուսանողների լայն մասնակցությունը արմատական հարցերի քննարկման և լուծման գործում[36]:

1921 թ. հունվարի սկզբին լուսժողկոմատը հրավիրեց համալսարանի խորհրդի առաջին նիստը, որտեղ քննարկվեց նրա վարիչի (ռեկտորի) ընտրության հարցը (ռեկտոր անվանվել է 1922 թ. փետրվարից): Փակ (գաղտնի) քվեարկությամբ ռեկտոր ընտրվեց պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը[37]: Պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ականավոր պատմաբան Հ. Մանանդյանը եղավ համալսարանի երկրորդ ռեկտորը: Նա բազմակողմանի և խորը գիտելքների տեր հայագետ էր: Անցել էր հիանալի դպրոց՝ ուսանելով Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի, Սանկտ Պետերբուրգի և Դորպատի համալսարաններում: Հ. Մա-

[34] Տե՛ս ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 38:
[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 261, թ. 12, գ. 20, թ. 4:
[36] Տե՛ս **Լ. Զարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 50:
[37] Համալսարանի ռեկտորներից միայն Հակոբ Մանանդյանն է, ըստ ժամանակավոր կանոնադրության, ընտրվել փակ (գաղտնի) քվեարկությամբ: Հետագայում ռեկտորները նշանակվել են ՀԽՍՀ լուսժողկոմատի, ԽՍՀՄ բարձրագույն կրթության պետական կոմիտեի, ապա՝ միևիստրության կողմից, տե՛ս **Լ. Զարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 50:

նանդյանը հեղինակ է հայերեն, ռուսերեն և գերմաներեն ավելի քան 150 աշխատությունների՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանն ու մշակույթին: ԵՊՀ-ում 1921-1931 թթ. նա առաջինն էր, որ դասավանդել է հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն: Ռեկտորի պարտականություններից ազատվելուց հետո Հ. Մանանդյանը ղեկավարել է արևելագիտական և պատմագրության ֆակուլտետները, 1921-1925 թթ. եղել է համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1939 թ. նա ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, իսկ 1943 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1925-1931 թթ. եղել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Դեռևս 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ձևավորվել էին և գրեթե լիովին հայտնի էին պատմալեզվաբանական ֆակուլտետ դիմած բոլոր 90 դիմորդների (ընդունվածների) անունները: 1921 թ. հունվարի 23-ին նախապատրաստական աշխատանքներից հետո Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ հունվարի 24-ին վերսկսվեցին պարապմունքները:

Երևանի ժողովրդական համալսարանի վերաբացման պաշտոնական, հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին՝ կիրակի օրը, Ս. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (այժմյան Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում): Այդ օրը ակումբում հավաքվել էին մայրաքաղաքի հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ, համալսարանի դասախոսներ, ուսանողներ, զինծառայողներ: Համալսարանի խորհրդի անդամները և դասախոսները Լուսավորության ժողկոմի և ռեկտորի հետ տեղ գրավեցին բեմում: «Ինտերնացիոնալի» հնչյունների ներքո հանդիսավոր նիստը բացեց Հ. Մանանդյանը: Ճառով հանդես եկավ ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը, որը, վերլուծելով բարձրագույն կրթության և գիտության դերը, մասնավորապես նշեց. «…Ժողովրդական համալսարանը պետք է հանդիսանա մտքի գիտական աշխատանոց բանվորության և գյուղա-

ցիության համար: Դասախոսական զբաղմունքներից այստեղ ավելի մեծ տեղ պետք է բռնեն լաբորատորական և սեմինարական աշխատանքները, այն է՝ ուսանողների ինքնաշխատությունը դասատուների ղեկավարությամբ: Ուսանողները պետք է աշխատեն յուրացնել գիտական հետազոտման մեթոդը և այդ ուղղությամբ վարժվեն և հմտանան»[38]: Այնուհետև ողջույնի խոսքով հանդես են եկել Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի անունից Վահան Երեմյանը, արհեստակցական միությունների բյուրոյի կողմից՝ Հայկ Ազատյանը, կարմիր բանակի կողմից՝ քաղբաժնի պետ Անահիտ Լալայանը:

Եզրափակման խոսքում ռեկտոր Հակոբ Մանանդյանը, շնորհակալություն հայտնելով բարեմաղթությունների համար, նշել է, որ Հայկական բարձրավանդակը զուրկ է եղել բարձր ուսումնավայրերից, հայ մտավորականությունը ստիպված է եղել գործել ու աշխատել երկրի սահմաններից դուրս, և որ այժմ նա պետք է վերադառնա իր հայրենիքը՝ տառապած աշխատավորության գիտական պետքերին ծառայելու: «Ժողովրդական համալսարանի ուսումնական կոլեգիան,– հայտարարել է նա,– բացում է այս կրթարանի դռները գիտության ճգտողների առաջ և հույս ունի, որ ուսանողության հետ միասին, ընդհանուր ջանքերով, կկարողանա շինել ու շենացնել Հայաստանի այս բարձր ու միակ ուսումնավայրը»[39]: Այնուհետև ուսանողությունը, ինչպես նաև ներկաները ունկնդրել են առաջին դասախոսությունը: «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել Գրիգոր Չուբարյանը[40]:

Երևանի համալսարանի վերաբացումը բացառիկ կարևոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Աշխարհասփյուռ հայ մտավորականությունը վերջապես լայն հնարավորություն էր ստանում աշխատելու հայրենիքում և ծառայելու հարազատ ժողովրդի գիտական ու հոգևոր պահանջմունքներին: Մեր երիտասարդության

[38] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 51-52:
[39] Տե՛ս նույն տեղում:
[40] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

համար բացվեցին մայրենի լեզվով բարձրագույն դպրոցի դռները: Դրանով պետք է բացատրել այն մեծ ոգևորությունն ու խանդավառությունը, որով ժողովուրդն ընդունեց համալսարանի վերաբացման լուրը: Այդ ուրախալի փաստը մեծ ցնծությամբ ընդունեց նաև սփյուռքահայությունը, որը խորապես գիտակցում և բարձր էր գնահատում ազգային կրթօջախի պատմական դերը[41]:

Երևանի ժողովրդական համալսարանը վերաբացվեց հանրապետության համար չափազանց ծանր պայմաններում: Այդ հանգամանքը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ նրա գործունեության վրա, մանավանդ սկզբնական շրջանում: Սակայն տնտեսական այդպիսի անմխիթար պայմաններում անգամ կառավարությունը մեծ զոհողությունների գնով անում էր ամեն հնարավորը՝ համալսարանի համաչափ աշխատանքն ապահովվելու համար: Այդ էր, թերևս, պատճառը, որ գտնվեցին մարդիկ, որոնք համալսարանի վերաբացումն այդ շրջանում համարում էին «շռայլություն և շքեղություն»: Նման կարծիք էր հայտնում նաև Պոլսում հրատարակվող «Ժողովրդի ձայն» թերթը[42]: Ելնելով երկրի տնտեսական ծանր վիճակից և չհասկանալով այդ դժվարությունների ժամանակավոր բնույթը՝ ոմանք նույնիսկ 1922-1923 թթ. առաջարկում էին փակել համալսարանը: Ցույց տալով նման կարծիքի անհիմն ու վնասակար լինելը՝ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանը, որ շատ էր կապված համալսարանին և մեծապես աջակցում էր նրա գործունեության ծավալմանը, ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարում (1923 թ.) ելույթ ունենալով, «Ժողովրդական լուսավորության մոտակա խնդիրները» թեմայով զեկուցման մեջ այդ առթիվ ասել է. «Երևանի գավառային կոնֆերանսում շատ ընկերներ հարձակվեցին համալսարանի վրա՝ պատճառաբանելով, որ այնպիսի պայմաններում, երբ միջոցներ չկան, անհրաժեշտ է համալսարանը փակել և այլն: Մենք գտնում ենք, որ այդ համալսարանը պետք է գոյություն ունենա և ահա թե ինչու: Վերցրե՛ք, օրինակ, պատմագրական ֆակուլտետը: Անհրաժե՞շտ է արդյոք մեզ

[41] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 52:
[42] Տե՛ս նույն տեղում:

ունենալ ֆիլոլոգիայից մեր նոր դասատուները, թե՞ ոչ: Ռուսական համալսարաններից մեզ մոտ չեն գա այնպիսինները, որոնք իմանան հայոց գրականությունը, պատմությունը, լեզուն և այլն»[43]: Այնուհետև զեկուցման մեջ մանրամասն վերլուծվել է համալսարանի դերը և հիմնավորվել նրա խիստ անհրաժեշտությունը մեր ժողովրդի կյանքում: Մտքերի փոխանակությունից հետո ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարը որոշել է ոչ միայն պահել համալսարանը, այլև առաջարկել է լրջորեն ամրապնդել և ընդլայնել նրա ֆակուլտետները: Համագումարի որոշմամբ վերջնականապես լուծվեց համալսարանի հետագա գոյության հարցը, և վերջ տրվեց Հայաստանում բարձրագույն դպրոցի զարգացման հեռանկարների մասին եղած թյուր կարծիքներին[44]:

Համալսարանի դերակատարությունն ու գործունեությունը բարձր գնահատելով՝ ՀԽՍՀ կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանը 1923 թ. գրել է. «Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ չպետք է խնայել: Սրանք անհրաժեշտ և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանը այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսական ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունաբերությունն ու արհեստը չէին կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու է համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանալու է շարունակ և անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանը այդ սիրտն է…»[45]:

Հայաստանի կառավարությունը սկզբում կարողացավ ստեղծել սոսկ ժողովրդական համալսարան և երկու տարուց ավելի տևող կազմակերպչական աշխատանքից հետո այն դարձնել պետական համալսարան:

---

[43] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1ա, թ. 55:
[44] **Լ. Դարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 53:
[45] Երևանի պետական համալսարան - 90, Սրտի խոսք, էջ 49:

Սկզբում համալսարանն ուներ ընդամենը երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական[46]: Մաթեմատիկական և բնական մյուս գիտությունները կենտրոնացվել էին բնագիտական ֆակուլտետում: Երիտասարդության հոսքը մեծ էր երկու ֆակուլտետներում էլ: Չնայած համալսարանի գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցների սղությանը, լաբորատորիաների, կաբինետների, ինչպես նաև որոշ մասնագետների ակնհայտ պակասին, այնուամենայնիվ, հենց առաջին օրվանից՝ 1921 թ. հունվարի 24-ից համալսարանի պարապմունքները սկսվեցին:

Վերակառուցված համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի կազմում էր պատմագրության բաժինը: Պատմագրական առարկաների ուսումնասիրության կազմակերպումն ու ղեկավարությունն իրականացվում էին պատմության առարկայական հանձնաժողովի կողմից, որը գլխավորում էր Հակոբ Մանանդյանը: Ուսումնասիրվում էին Հայաստանի պատմություն, ընդհանուր պատմություն և հեղափոխական շարժումների պատմություն, լեզվաբանական և գրականագիտական առարկաներ: Պարապմունքներն ընթանում էին միանգամայն կազմակերպված ձևով: Շատ որոշակի էր զգացվում երիտասարդության ուսման ծարավը, դասախոսների ոգևորությունը, դժվարությունները հաղթահարելու նրանց պատրաստակամությունը: Սակայն ընդամենը 18-20 օր հետո՝ 1921 թ. փետրվարի կեսերին սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով Երևանի ժողովրդական համալսարանը դադարեց գործելուց: Չնայած ապրիլին քաղաքացիական կռիվներն ավարտվեցին, բայց համալսարանի և նրա ֆակուլտետների անմիջապես վերաբացումը հնարավոր չէր: Լուսժողկոմատը և համալսարանի ղեկավարությունը նախապատրաստական լուրջ աշխատանքներ տարան՝ համալսարանի գործունեությունը նորմալ հունի մեջ դնելու համար: Հանրապետության պահանջներից ելնելով՝ որոշվեց համալսարանի կառուցվածքը,

[46] 1921 թ. հունվարի 2-ին դասախոսների ֆակուլտետային ժողովներում փակ (գաղտնի) քվեարկությամբ հասարակագիտական ֆակուլտետի ղեկան ընտրվեց Սիրական Տիգրանյանը, իսկ բնագիտական ֆակուլտետի ղեկան՝ Դավիթ Զավրյանը, տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 53:

ճշգրտվեց պատրաստվող կադրերի մասնագիտացումը, լուծվեցին պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ինչպես նաև ուսումնանյութական բազա ստեղծելուն առնչվող խնդիրները:

Համալսարանը տեղափոխվել էր Աստաֆյան (այժմ՝ Աբովյան 52) փողոցում գտնվող նախկին ուսուցչական սեմինարիայի՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի սև, տուֆաշեն, երկհարկանի շենքի առաջին հարկը, քանի որ երկրորդ հարկը դեռևս զինվորական հիվանդանոց էր: 1921 թ. հոկտեմբերի 10-ին համալսարանում վերսկսվեցին պարապմունքները: Շենքը կառուցվել էր 1902-1903 թթ. Ստեփան Ավետիքյանին պատկանող այգու տեղում ինժեներ Ն. Կիտկինի նախագծով: 1933-1935 թթ. կառուցվեց երկրորդ հարկը, իսկ 1939 թ.՝ համալսարանի դասախոս Ն. Բունիաթյանի նախագծով աջ թևը, որտեղ այժմ մեծ դահլիճն է[47]:

Հանրապետության ժողկոմխորհը, ելնելով ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հեռանկարներից և այդ առնչությամբ մասնագիտական կադրեր ունենալու պահանջներից, 1921 թ. հոկտեմբերից համալսարանում ուսուցումը կազմակերպեց ավելի լայն ընդգրկմամբ: Նախկին երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետների փոխարեն բացվեց հինգ ֆակուլտետ՝ բնագիտական, արևելագիտական, տեխնիկական, մանկավարժական և խորհրդային շինարարության: Ծայրաստիճան քայքայված հանրապետությունը նաև մանկավարժների, ինժեներների, գյուղատնտեսների և բժիշկների մեծ կարիք ուներ[48]:

1921 թ. պատմագիտական մասնագիտացումների հիմքի վրա ստեղծվեց արևելագիտության ֆակուլտետը, որը 1922-1923 ուստարում ստացավ պատմագրական անվանումը: Վերջինս գործեց մինչև 1924-1925 ուստարին: Թե՛ արևելագիտական, թե՛ պատմագրական անվանված ֆակուլտետների հիմնական խնդիրը մանկավարժական կադրերի պատրաստումն էր: Արևելագիտության, այնուհետև պատմագրական ֆակուլտետները սկզբում ղեկավարում էր 1921 թ. հոկ-

[47] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 54:
[48] Տե՛ս նույն տեղում:

տեմբերից ռեկտորի պարտականություններից ազատված Հ. Մանանդյանը (1921-1923 թթ.), իսկ որոշ ժամանակ անց՝ ճանաչված հայագետ Մ. Աբեղյանը (1924-1925 թթ.): Նշված ուստարում հայագիտական բոլոր մասնագիտությունները կրկին ներառվեցին հասարակագիտական ֆակուլտետի մեջ՝ կազմելով վերջինիս պատմագրական բաժինը: Ելնելով հանրապետության և ԽՍՀՄ հայաբնակ վայրերի համար մայրենի լեզվով բարձրագույն կրթությամբ մանկավարժների օրավուր աճող պահանջարկից՝ 1926 թ. ստեղծվեց մանկավարժական ֆակուլտետը, որի կազմի մեջ մտավ պատմագրական բաժինը՝ պատմություն, գրականություն և լեզու մասնագիտություններով: Այդ կառուցվածքը պահպանվեց մինչև 1930 թվականը: Այդ տարիներին՝ 1923-1924 թթ., պատմագրական բաժնում աշխատելու հրավիրվեցին ճանաչված լեզվաբան, խորը գիտելիքների տեր, մանկավարժական մեծ հմտություններ ունեցող Հրաչյա Աճառյանը, պատմաբան ու հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան), որը դասավանդում էր հայոց պատմության նորագույն շրջանը: Նույն թվականին ընդհանուր պատմության դասախոսությունները կարդալու համար հրավիրվեց Ստեփան Ներսիսյանը: Նրա դասախոսություններն իրենց գիտական հագեցվածությամբ, տրամաբանական կառուցվածքով և պատմական փաստերի խոր վերլուծությամբ արժանանում էին ուսանողների հիացմունքին ու համակ ուշադրությանը: Հրավիրվեցին նաև Եվրոպայում կրթություն ստացած տաղանդավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, աշխարհագետ-մանկավարժ Ստեփան Լիսիցյանը, գրականագետ Սիմոն Հակոբյանը, ճանաչված պատմաբան Վահան Ռշտունին և հայոց պատմության մասնագետ, «Նեմեսիս» գործողության մասնակից, Թալեաթ փաշայի սպանության կազմակերպիչ Հակոբ Ջորյանը:

1920-ական թթ. ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, քանակապես և որակապես աճելով, դարձավ հզոր կոլեկտիվ: 1920-1930-ական թթ. դասավանդող առարկաների ցանկը և դասախոսների անուն-ազգանունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել հայ պատմաբան և բանասերների ավագ սե-

րունդը ֆակուլտետի ստեղծման, կայացման ու հետագա ամրապնդման գործում: 1920 թվականից սկսած՝ ֆակուլտետում դասավանդել են Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Մանուկ Աբեղյանը (հայ հին գրականություն), Արսեն Տերտերյանը (հայ նոր գրականություն), Գուրգեն Էդիլյանը (մանկավարժություն և հոգեբանություն), Հրաչյա Աճառյանը (հայոց լեզվի պատմություն), Հայկ Գյուլիքևխյանը (փիլիսոփայություն), Առաքել Բաբախանյանը (հայոց նորագույն պատմություն) և ուրիշներ:

1929-1930 ուստարում համալսարանի դասախոսական կազմի պրոֆեսորներից շատերը անվանի գիտնականներ էին, բազմաթիվ աշխատությունների հեղինակներ ու փորձառու մանկավարժներ: Նրանք ոչ միայն հմտորեն իրականացրին պատմաբան-բանասեր կադրերի ուսուցման գործը, այլև պատրաստեցին իրենց փոխարինողներին: Նրանցից յուրաքանչյուրը ֆակուլտետում նոր ամբիոն հիմնադրեց: Եթե 1919-1920 թթ. համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում դասավանդող պատմաբանների ու բանասերների թիվը 10-ն էր, ապա 1924-1925 թթ. հասավ 24-ի, 1929-1930 թթ.՝ 30-ի:

Համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժինը 1925-1930 թթ. ավարտել է 181 ուսանող[49]: Այդ բաժնի 1920-ական թթ. շրջանավարտներից են Գրիգոր Միքայելյանը (հետագայում դոկտոր, պրոֆեսոր), Աբգար Հովհաննիսյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), լեզվաբաններ Արարատ Ղարիբյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), Գուրգեն Սևակը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս), գրականագետ Մկրտիչ Մկրյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ): Այդ բաժնի շրջանավարտներից էին նաև գրողներ Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, Սողոմոն Տարոնցին և ուրիշներ[50]:

1920-1930 թթ. ընթացքում համալսարանի ֆակուլտետները, բաժինները, ուսուցանվող մասնագիտությունները ենթարկվել են փոփոխությունների՝ ելնելով ժողովրդական տնտեսության, գիտության ու

[49] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 58:
[50] Տե՛ս նույն տեղում, էջ 87-88:

մշակույթի զարգացման առաջնահերթ պահանջներից: Գյուղատնտեսության վերականգնումն ու զարգացումը բարձրագույն կրթությամբ գյուղատնտեսների մեծ պահանջ էր ներկայացնում: Այդ նպատակով 1921 թ. նոյեմբերին բացված բնագիտական ֆակուլտետի հիմքի վրա համալսարանում բացվեց գյուղատնտեսական ֆակուլտետը: Պետք է ըստ արժանվույն գնահատել այն անուրանալի վաստակը, որ ֆակուլտետի կազմակերպման ու ամրապնդման գործում ունեցավ հայ առաջին ագրոքիմիկոս-մանրէակենսաբան Պապա Քալանթարյանը[51]: Նրա մասնագիտական առաջարկները հավանության արժանացան նախ հողժողկոմատի ու լուսժողկոմատի, ապա՝ նաև կառավարության կողմից: Պապա Քալանթարյանը դարձավ ֆակուլտետի առաջին դեկանը և մեծ նվիրյալը: Նրա նախկին սաները խոր ակնածանքով ու երախտագիտությամբ են հիշում իրենց բազմահմուտ ու բարձր առաքինությունների տեր ուսուցչին:

Գյուղատնտեսական ֆակուլտետը գտնվում էր բոլորի ուշադրության կենտրոնում: Համալսարանի ռեկտորատը լուրջ միջոցառումներ ձեռնարկեց ֆակուլտետի ամրապնդման, նրա ուսումնանյութական բազայի բարելավման ուղղությամբ: Նոր առարկաների դասընթացներ կարդալու համար բանակցություններ սկսվեցին թիֆլիսաբնակ որոշ մասնագետների հետ՝ նրանց Երևանի համալսարան հրավիրելու նպատակով: Սկսվեց ֆակուլտետի ընդլայնման շրջանը: Շուտով այն առաջատար տեղ գրավեց: Գյուղատնտեսական ֆակուլտետը համասարանի կազմում մնաց մինչև 1930 թ. հունիսը, ապա անջատվելով՝ վերածվեց ինքնուրույն ինստիտուտի[52]:

Հարկ է նկատել, որ մինչև 1930 թվականը ամենից շատ շրջանավարտներ տվել է հենց գյուղատնտեսական ֆակուլտետը (279 հոգի): 1925 թ. համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը և մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը տվեցին առաջին 58 շրջանավարտները[53]: Հետագա տարիներին համալսարանն ավարտեցին բազմաթիվ մասնագետներ՝ տնտեսագետներ, իրավա-

[51] Տե՛ս **Լ. Պարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 57:
[52] Տե՛ս նույն տեղում:
[53] Տե՛ս նույն տեղում, էջ 84:

բաններ, բժիշկներ ու ճարտարագետներ, որոնց կարիքը մեծապես զգացվում էր երկրի կրթության և ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում:

Գյուղատնտեսական ֆակուլտետում և առհասարակ համալսարանում բարձր հիմքերի վրա էր դրված քիմիայի դասավանդումը: Դրանում մեծ դերակատարում ունեին քիմիական առարկաների դասախոսները՝ պրոֆեսորներ Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանցը և Հակոբ Հովհաննիսյանը: Նրանց տքնաջան աշխատանքի շնորհիվ այդ ֆակուլտետի շատ շրջանավարտներ այնքան մանրակրկտորեն խորացան քիմիայի մեջ, որ դարձան այդ գիտության ճանաչված մասնագետներ այն դեպքում, երբ համալսարանում քիմիական ֆակուլտետ կամ բաժին դեռ գոյություն չուներ: Այդ տարիներին գյուղատնտեսական ֆակուլտետն ավարտեցին և հետագայում գիտության տարբեր ոլորտներում մեծ ճանաչում ձեռք բերեցին նշանավոր գիտնականներ՝ ֆիզիոլոգ Էզրաս Հասրաթյանը, ագրոքիմիկոս Գագիկ Դավթյանը, կենսաբաններ Վարդան Գյուլքանյանը, Հրանտ Բատիկյանը, գյուղատնտես Գեղամ Աղաջանյանը, բույսերի ֆիզիոլոգ Միքայել Չայլախյանը, մանրէաբան Հարություն Փանոսյանը, քիմիկոսներ Հովհաննես Չալտիկյանը, Արաքսի Բաբայանը, Մամիկոն Դարբինյանը և շատ ուրիշներ[54]:

Հանրապետության վերականգնումն ու զարգացումը, ինչպես նաև ոռոգման ջրանցքների կառուցումը պահանջում էին տեխնիկական որակյալ կադրեր, որոնց պատրաստման անհրաժեշտության թելադրանքով Հայաստանի կառավարությունը 1921 թ. հոկտեմբերին համալսարանում հիմնեց տեխնիկական ֆակուլտետ: Ֆակուլտետի կազմակերպման շրջանում մեծ աշխատանքներ են տարել հատկապես նրա առաջին դեկան Դավիթ Զավրյանը, հետագայում ՝ ֆակուլտետի դեկաններ և ինժիներներ Դավիթ Հակոբջանյանը, Գրիգոր Շիրմազանը, մաթեմատիկոսներ Արշակ Տոնյանն ու Զեբեք Խոջանեթյանը, ֆիզիկոս Հովհաննես Նավակատիկյանը[55]:

[54] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 89-90:
[55] Տե՛ս նույն տեղում, էջ 89-90:

Տեխնիկական ֆակուլտետի բացման դեմ որոշ մտավորականներ առարկում էին այն պատճառաբանությամբ, որ հանրապետության թույլ արդյունաբերությունը չի կարող նպաստել նրա զարգացմանը, որ չկա անհրաժեշտ բազա ուսանողների գործնական աշխատանքների համար: Լուսժողկոմատը և համալսարանի ղեկավարությունը, հաշվի առնելով դժվարությունները, գործադրում էին ամեն ջանք՝ նորաբաց ֆակուլտետում աշխատանքները լիարժեքորեն կազմակերպելու համար:

Առաջին երկու տարիների ընթացքում տեխնիկական ֆակուլտետում դասավանդվում էին միայն տեսական առարկաներ: Դեռևս ճշգրտված և վերջնականապես լուծված չէր մասնագիտացումների հարցը, որը քննարկվում էր նույնիսկ հանրապետական թերթերում:

Համալսարանի վարչությունը և դեկանատը դասավանդման համար հրավիրել են դասախոսական համապատասխան կադրեր՝ ստեղծելով նաև ուսումնաօժանդակ հարմարություններ՝ քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, մեխանիկայի ուսումնական արհեստանոց, «գծագրություն», «մեքենաների մասեր» առարկաների համար դասասենյակներ և այլն: Միաժամանակ բարելավվեց ուսումնամեթոդական աշխատանքը, ճշտվեցին մասնագիտությունները, պատրաստվող կադրերի մասնագիտացումը[56]:

Տեխնիկական ֆակուլտետը անհրաժեշտ էր ոչ միայն զարգացող արդյունաբերության համար: Ֆակուլտետի առջև խնդիր էր դրված պատրաստելու նաև մաթեմատիկայի, ֆիզիկայի, տեխնիկական գիտությունների ուսուցիչներ՝ տեխնիկումների, բանվորական ֆակուլտետների և երկրորդ աստիճանի դպրոցների համար նույնպես: Տեխնիկական ֆակուլտետը հիմնավորապես մտավ համալսարանի կազմի մեջ՝ մնալով նրա կազմում մինչև 1930 թ. հունիսի 14-ը, երբ համալսարանից անջատվելով՝ դարձավ ինքնուրույն ինժիներատեխնիկական (շինարարական) ինստիտուտ, որն ուներ նաև քիմիայի ֆակուլտետ[57]:

[56] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 97:
[57] Տե՛ս նույն տեղում, էջ 90:

Տեխնիկական ֆակուլտետ ավարտած 47 ճարտարագետները մեծ աշխատանք կատարեցին ինչպես նախագծային հիմնարկների ստեղծման ու նրանց գործունեության ծավալման, այնպես էլ շինարարության բնագավառում: Շրջանավարտ ճարտարապետներ Հովհաննես Մարգարյանը, Մարկ Գրիգորյանը, Սամվել Սաֆարյանը և ուրիշներ համալսարանն ավարտելուց հետո ակադեմիկոս Ա. Թամանյանի ղեկավարությամբ ձեռնարկեցին քաղաքամայր Երևանի և հանրապետության մյուս քաղաքների ու շրջանների նախագծումն ու կառուցապատումը[58]:

1932 թ. Մինիստրների խորհրդի որոշմամբ տեխնիկական ֆակուլտետի հիման վրա Երևանում ստեղծվեց նաև Քիմիկոտեխնոլոգիական ինստիտուտ: Կառավարության 1933 թ. փետրվարի 27-ի որոշման հիման վրա այդ երկու տեխնիկական ինստիտուտները միացվեցին՝ 1933 թ. մարտի 1-ից վերանվանվելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ[59]:

Ժողովրդական լուսավորությունը կազմակերպելու գործում կարևոր նշանակություն ուներ մանկավարժական կադրերի պատրաստումը: Համալսարանի մանկավարժական ֆակուլտետը, որը կոչված էր այդ բնագավառում մեծ աշխատանք կատարելու, հիմնադրվել է 1921 թ. հոկտեմբերին: Նրա կազմակերպման ու ամրապնդման գործում մեծ ծառայություն ունեն համալսարանի հիմնադիր դասախոսները՝ մանկավարժ-հոգեբան Գուրգեն Էդիլյանը, որը դարձավ ֆակուլտետի առաջին դեկանը, և մանկավարժ Արշավիր Շավարշյանը, որն աշխատում էր համալսարանում ֆակուլտետի կազմակերպման առաջին իսկ օրվանից[60]:

Համալսարանի վարչությունը, նկատի ունենալով իր առջև ծառացած դժվարությունները, 1922 թ. հունիսի 14-ին լուսժողկոմատում հարց բարձրացրեց՝ ֆակուլտետը համալսարանից անջատելու մասին: 1922 թ. այդ ֆակուլտետի հիմքի վրա Երևանում բացվեց ինքնու-

[58] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 90:
[59] Տե՛ս նույն տեղում, էջ 58:
[60] Տե՛ս նույն տեղում, էջ 59:

րույն մանկավարժական ինստիտուտ՝ եռամյա դասընթացով: Սակայն ժողկոմխորհի որոշմամբ 1924 թ. հոկտեմբերին այն կրկին միացվեց համալսարանին՝ դառնալով հասարակագիտական ֆակուլտետի մի բաժինը՝ ֆիզիկամաթեմատիկական, պատմագրական և կենսաբանական ենթաբաժիններով[61]:

Համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժնի գծով մասնագետների պատրաստումը կապված էր առավել մեծ դժվարությունների հետ ոչ միայն այն պատճառով, որ զգալի էր դասախոսական կադրերի պակասը, այլև շատ քիչ էր այդտեղ սովորելու անհրաժեշտ պատրաստություն ունեցող երիտասարդների թիվը: Բաժնի դասախոսներ Արշակ Տոնյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Բահաթուր Բահաթրյանը, Հարությունն Անժուրը և Աշոտ Տեր-Սկրտչյանը ժամանակին մեծ ջանքեր գործադրեցին այդ սակավաթիվներից լավագույններին ընտրելու և նրանց մեջ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների նկատմամբ սեր պատվաստելու համար:

1928-1930 թթ. ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը տվեց 22 շրջանավարտ, որոնց թվում էին անվանի մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը, մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ Արամ Նալբանդյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Արմենակ Վարդանյանը և ուրիշներ[62]:

Համալսարանի ֆիզիկամաթեմատիկական բաժինը ստեղծվել է 1922 թ. մանկավարժական ֆակուլտետի կազմում: Դրա հիման վրա 1933 թ. սեպտեմբերին ստեղծվեց ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որը ԽՍՀՄ բարձրագույն կրթության մինիստրության 1959 թ. ապրիլի 8-ի N 381 հրամանով բաժանվեց երկու՝ ֆիզիկայի և մեխանիկամաթեմատիկական ինքնուրույն ֆակուլտետների: 1971 թ. մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեց կի-

[61] Տե՛ս **Լ. Դարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 59:
[62] Տե՛ս նույն տեղում:

րառական մաթեմատիկայի ֆակուլտետը, իսկ 1988 թ.՝ մեխանիկայի ֆակուլտետը: 1975 թ. ֆիզիկայի ֆակուլտետի հիմքի վրա կազմակերպվեց ռադիոֆիզիկայի ինքնուրույն ֆակուլտետը[63]: Մեկ տարի հետո՝ 1925-1926 ուստարում, հասարակագիտական ֆակուլտետի մանկավարժական բաժինը նորից անջատվեց և վերակազմվեց որպես ինքնուրույն մանկավարժական ֆակուլտետ՝ գոյատևելով մինչև 1930 թվականը[64]:

1930 թ., երբ համալսարանի առանձին ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ՝ Ինժիներատեխնիկական, Գյուղատնտեսական և Կոոպերատիվ-տնտեսագիտական, բուն համալսարանը վերածվեց Մանկավարժական ինստիտուտի: 1933 թ. համալսարանը վերստեղծվեց, և Մանկավարժական ինստիտուտը դարձավ նրա ֆակուլտետներից մեկը: Մեկ տարի անց՝ 1934 թ., ֆակուլտետը անջատվեց համալսարանից՝ դառնալով Հայկական մանկավարժական ինստիտուտ[65]:

1921 թ. հոկտեմբերին համալսարանում կազմակերպվեց նաև խորհրդային շինարարության ֆակուլտետ, որը հիմնականում կադրեր էր պատրաստում արտադրության, ֆինանսների և բանգյուղտեսչական մարմինների համար: Ֆակուլտետի առաջին դեկանը կարճ ժամանակով (1921 թ. սեպտեմբերից 1922 թ. փետրվար) եղել է Գևորգ Ղարաջյանը, ապա՝ գրականագետ-քննադատ Ցոլակ Խանզադյանը, որին փոխարինել է Թադևոս Ավդալբեկյանը[66]:

Երևանի համալսարանի վարչությունը 1922 թ. սեպտեմբերի 1-ին որոշեց խորհրդային շինարարության ֆակուլտետը վերակոչել հասարակագիտական ֆակուլտետ (հասֆակ)[67]: Հասարակագիտական ֆակուլտետը, որը հետագայում կրկին անվանափոխվեց սոցիալ-տնտեսագիտականի, ապա՝ իրավատնտեսագիտական ֆակուլտետի, մեծ դեր է կատարել իրավաբանների և տնտեսագետների պատ-

[63] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 59, 88:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 59:
[65] Տե՛ս նույն տեղում:
[66] Տե՛ս նույն տեղում, էջ 60:
[67] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

րաստման գործում: Համալսարանում ձեռք բերելով հարուստ գիտելիքներ՝ երիտասարդ մասնագետների այդ բանակը ձեռնամուխ եղավ սոցիալ-տնտեսական բազմազան ու բազմաբնույթ հարցերի շուտափույթ լուծմանը[68]:

Համալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետն իր առաջին շրջանավարտները (95 տնտեսագետ և 13 իրավաբան) տվել է 1925-1926 ուսումնական տարում: Մինչև 1930 թվականը այդ ֆակուլտետն ավարտեց 260 ուսանող, նրանց թվում՝ հետագայում համալսարանի ռեկտոր՝ դոկտոր-պրոֆեսոր, փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հենրի Գաբրիելյանը, դոկտոր-պրոֆեսոր Արարատ Մարուխյանը, Հայաստանի ֆինանսների նախարար Արմենակ Շեկոյանը և ուրիշներ[69]:

1922 թ. ռեկտորի պարտականություններից ազատվեց Հակոբ Մանանդյանը: Ռեկտորի պաշտոնում նրան փոխարինեց Դավիթ Զավրյանը, որը, փաստորեն, չաշխատեց: 1922 թ. փետրվարի 14-ին համալսարանի նոր ռեկտոր հաստատվեց մանրէաբան-կենսաքիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը[70], որն այդ պաշտոնում մնաց մինչև 1930 թ. հուլիս ամիսը: Նրա անվանն ու աշխատանքին են առնչվում համալսարանի առաջին շրջանի գործունեության 8 տարիները: Հ. Հովհաննիսյանն ամեն կերպ ջանում էր ըստ ժողովրդական տնտեսության պահանջարկի ճշտել համալսարանում պատրաստվող կադրերի մասնագիտացումը, ստեղծել նյութատեխնիկական բազա և համալրել դասախոսական կազմը[71]:

1921-1923 թթ. վերաբացված համալսարանի բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներում դասավանդելու հրավիրվեցին Հայաստանի նշանավոր մանկավարժներ, Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր երկրների հեղինակավոր բուհերն ավարտած ճանաչված և տաղանդավոր դասախոսներ Ստեփան Ղամբարյանը, Ալեքսանդր Հակոբյանը, Գրիգոր Չուբարյանը, Արսեն Տերտերյանը,

[68] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 59:
[69] Տե՛ս նույն տեղում:
[70] Տե՛ս նույն տեղում, էջ 89:
[71] Տե՛ս նույն տեղում:

Ավետիք Տեր-Պողոսյանը, Գուրգեն Էդիլյանը, Լևոն Լիսիցյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գևորգ Ասատուրը, Թադևոս Ավդալբեգյանը, Հայկ Ազատյանը, Անժուրը (Հարութիւն Չեբոտարյան), Տիգրան Մուշեղյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Պապա Քալանթարյանը, Արշակ Տոնյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Արշավիր Շավարշյանը, Վահան Արծրունին, Գրիգոր Արեշյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Գևորգ Գրծելյանը, Արշակ Հակոբյանը, Սպանդարատ Կամսարականը, Գրիգոր Շիրմազանյանը, Ցոլակ Խանզադյանը, Զեբեթ Խոջաենթյանը, Հրաչյա Աճառյանը, Հայկ Գյուլիքևխյանը, Հովակիմ Բեդելյանը, Ալեքսանդր Թամանյանը, Լևոն Ռոտինյանցը, Սարգիս Աբովյանը, Ժիրայր Միրզախանյանը, Համբարձում Քեչեկը, Խորեն Երիցյանը, Լևոն Հովհաննիսյանը, Հայրապետ Հովհաննիսյանը, Գրիգոր Մենդիկյանը, Բահաթուր Բահաթրյանը: 1924-1928 թթ. համալսարան հրավիրված դասախոսներից էին Լեոն (Առաքել Բաբախանյան), Ստեփան Լիսիցյանը, Նիկողայոս Բունիաթյանը, Հրանտ Գալիկյանը, Սիմոն Հակոբյանը, Ստեփան Ներսիսյանը, Միքայել Թումանյանը, Հայկանդուխտ Չախմախչյանը, Հակոբ Զորյանը, Հայկ Կանայանը, Արտաշես Մելիք-Ադամյանը, Վահան Ռշտունին, Բոգդան Գալստյանը, Արամ Եսայանը, Հովնան Գաբրիելյանը, Տիգրան Զրբաշյանը, Աշոտ Տեր-Մկրտչյանը, Մուշեղ Սանթրոսյանը, Լևոն Արիսյանը, Բարդուղիմեոս Ֆանարջյանը, Արտավազդ Եղիազարյանը (Արտո) և ուրիշներ: Նրանք գերադասեցին թողնել արտասահմանում իրենց բարեկեցիկ, ապահով, մեծ գումար վաստակող աշխատանքները, վերադառնալ սովի, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում հայտնված հայրենիք՝ Հայաստան, ու նվիրվել սեփական ժողովրդի սերունդներին կրթելու ու դաստիարակելու հայրենանվեր գործին՝ դիմագրավելով բազմաթիվ դժվարությունների:

Մի քանի տարում, փաստորեն, հաջողվեց նորաստեղծ Երևանի համալսարանի շուրջ համախմբել եվրոպական մայրաքաղաքներում բարձրագույն կրթություն ստացած և ազգային ու համաշխարհային գիտական շրջանակներում արդեն իսկ ճանաչում գտած համարյա բոլոր մտավորական ուժերը. անգնահատելի ու կարևոր մի հանգա-

մանք, որը միանգամից ապահովեց Երևանի պետական համալսարանի՝ միջազգային չափանիշներին համապատասխան գիտակրթական մակարդակ: Հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ համալսարանի՝ որպես գիտակրթական կառույցի հենքը Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի կարողություններն էին, որոնց շնորհիվ էլ նրա հիմքում դրվեց գլաձորյան և տաթևյան ավանդույթներից բխող միջնադարյան մտքի լուսավորյալ ժառանգությունը:

Մեծահամբավ գիտնական, աշխարհահռչակ բևեռախույզ, Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր, մեծ հայասեր Ֆրիտյոֆ Նանսենը, 1925 թ. այցելելով Հայաստան, միաժամանակ եղավ նաև Երևանի պետական համալսարանում՝ հիացմունքով խոսելով համալսարանում դասավանդող պրոֆեսորների մասին և կարևորելով նրանց գիտական բարձր մակարդակն ու մի քանի օտար լեզուների տիրապետելու հանգամանքը: Ահա թե ինչ է գրել աշխարհահռչակ գիտնականը 1927 թ. իր հուշերում. «Նույն օրը (1925 թ. հունիսի 19-ին – Է. Մ.) ճաշից առաջ այցելեցինք նաև համալսարան: Այն մի գեղեցիկ շենք էր կենտրոնական փողոցի վերջում՝ հրաշալի այգով շրջապատված: Հանդիպում ունեցանք ռեկտորի և պրոֆեսորների հետ, որ մեզ ուղեկցեցին տարբեր ինստիտուտներ: Համալսարանը նոր էր հիմնադրվել և նոր պետք է զարգանար, բայց նյութական քիչ միջոցներ ուներ: Սակայն զարմանալի է, որ հակառակ մեծ դժվարություններին՝ շատ բան էր արված: Ինձ համար մեծ անակնկալ էր, որ պրոֆեսորներից մեկը նորվեգերեն գիտեր, նա լավ ծանոթ էր նաև Նորվեգիային: Նա բուսաբան, դոկտոր, պրոֆեսոր Հովակիմ Բեդելյանն էր, որ բուսաբանություն էր ուսումնասիրել Կոպենհագենում և բազմիցս ճանապարհորդելով Նորվեգիայով՝ երկու անգամ հասել էր մինչև Հյուսիսային հրվանդան: Չափազանց համակրելի մի անձնավորություն էր նա:

Շենքը դիտելուց հետո շրջեցինք պարտեզում, ուր գյուղատնտեսական տարբեր փորձեր էին դրված: Համալսարանին կից էր նաև գյուղատնտեսական մի բարձրագույն դպրոց: Այստեղ կառուցվում էր

նոր շենք լաբորատորիաների համար: Ստվերախիտ ծառերի տակ սեղան էր գցված՝ հրաշալի ծիրանով ու կեռասով, նաև գինի կար այնտեղ, որ ամռան այս շոգին առանձնապես հաճելի էր: Պրոֆեսորներից շատերը գերմաներեն ու անգլերեն լեզուներով ճառեր արտասանեցին, իսկ ռեկտորը, ողջույնի խոսք ասելով, հրապարակեց ինձ համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան շնորհելու մասին որոշումը»[72]:

Ժողովրդի առողջական վիճակը բարվոքելու նպատակով անհրաժեշտ էր ստեղծել բժշկական հիմնարկների լայն ցանց և կազմակերպել բժշկական կադրերի պատրաստման գործը, որոնց կարիքը չափազանց մեծ էր հատկապես գյուղական վայրերում: Համալսարանի վերաբացումից կարճ ժամանակ անց հարց դրվեց՝ բժշկական ֆակուլտետ ստեղծելու մասին:

ՀԽՍՀ ժողկոմխորհի որոշմամբ 1922 թ. մարտին ստեղծվեց համալսարանի բժշկական ֆակուլտետը, որի դեկան նշանակվեց բժիշկ Սպանդարատ Կամսարականը: Նրան 1925 թ. փոխարինեց վիրաբույժ Համբարձում Քեչեկը[73]: Դասերը սկսվեցին 1922 թ. սեպտեմբերին բազմաթիվ դժվարությունների հաղթահարման գնով:

Հայաստանում բժշկական կրթության գործը կազմակերպելու նախաձեռնողներ դարձան քիֆլիսաբնակ բժիշկներ Գ. Խոսրոևը և Գ. Արեշյանը, որոնք դեռևս 1919 թ. մայիսին կազմակերպել էին նախաձեռնող խումբ, որի կազմում ընդգրկվել էին մաշկաբան Մ. Մզարեուլովը (նախագահ), Պ. Տեր-Ակոպովը, Գ. Տեր-Ներսեսովը (վիրաբույժ), Գ. Արեշյանը (գինեկոլոգ, քարտուղար), Գ. Խոսրոևը, Գ. Սիերովը (թերապևտներ) և ուրիշներ:

Բժշկական ֆակուլտետը համալսարանի կազմում մնաց մինչև 1930 թվականը, որից հետո անջատվեց՝ դառնալով ինքնուրույն ինստիտուտ: Մինչև նշված ժամանակահատվածը բժշկական ֆակուլտետը չորս անգամ շրջանավարտներ տվեց (137 բժիշկ), որոնք

---

[72] Երևանի պետական համալսարան - 90, Սրտի խոսք, կազմեց և հրատ. պատրաստեց Վ. Ս. Մաղալյանը, էջ 57-58:

[73] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 62-63:

հերոսական աշխատանք կատարեցին ինչպես Հայաստանի շրջաններում տարածված համաճարակային հիվանդությունների, հատկապես մալարիայի դեմ արդյունավետ պայքարում, այնպես էլ առողջապահական գործը կազմակերպելու՝ հիվանդանոցներ և բժշկական կետեր հիմնելու ուղղությամբ: Ֆակուլտետի այդ տարիների շրջանավարտներից էին Հրաչյա Բունիաթյանը (հետագայում համալսարանի ռեկտոր), Լևոն Հարությունյանը, Պարթև Մարգարյանը, Վերգինե Միքայելյանը, Գարեգին Միրզոյանը և ուրիշներ[74]:

1925-1930 թթ. շրջանավարտների մի մասը աշխատանքի անցավ համալսարանում, մյուսը՝ հանրապետության գյուղական շրջաններում, շատերն էլ գիտահետազոտական գործունեություն ծավալեցին գիտության տարբեր բնագավառներում՝ դառնալով անվանի գիտնականներ[75]: Այնուհանդերձ, որակյալ մասնագետների պակաս հանրապետությունում դեռևս կար:

Այսպիսով՝ առաջին և երկրորդ ուսումնական տարիների ընթացքում՝ 1920/1921 -1921/1922, ստեղծվեցին համալսարանի այն հինգ ֆակուլտետները, որոնք իրենց անվանափոխություններով հանդերձ համալսարանի կազմում գործեցին մինչև 1930 թ. հուլիս ամիսը:

Երևանի ժողովրդական համալսարանը ժողկոմխորհի 1923 թ. հոկտեմբերի 20-ի որոշմամբ վերանվանվեց ՀԽՍՀ պետական համալսարան[76]: Այդ շրջանում, երկրի ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման առավել բարձր պահանջներից ելնելով, ի թիվս այլ համալսարանների, վերակառուցվեց նաև Երևանի համալսարանը: Նրա ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին բժշկական, գյուղատնտեսական, ինժիներատեխնիկական (շինարարական), կոոպերատիվ-տնտեսագիտական և մանկավարժական առանձին ինստիտուտներ: Համալսարանը վերաբացվեց դրանից

[74] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, խմբ.՝ Ա. Սիմոնյան, աշխատասիրությամբ Հ. Գասպարյանի, Երևան, 2018, էջ 46:
[75] Տե՛ս **Լ. Ղաբիբջանյան**, նշվ. աշխ., էջ 87:
[76] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

միայն երեք տարի հետո՝ 1933 թ. սեպտեմբերին, մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտների հիմքի վրա[77]:

Համալսարանն իր հիմնադրման առաջին իսկ օրվանից հատուկ ուշադրություն է դարձրել ուսումնական ծրագրերի կատարելագործմանը և ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: 1920 թ. պատմալեզվաբանական ֆակուլտետում պարապմունքների հիմնական ձևը դասախոսությունն էր, որի նյութը ընտրում էին դասախոսները, անցկացվում էին նաև սեմինարներ, իսկ Երևանի ժողովրդական համալսարանում, որն արդեն ուներ նաև բնագիտական ֆակուլտետներ, դասախոսություններին զուգահեռ կազմակերպվում էին նաև գործնական, լաբորատոր աշխատանքներ ու սեմինարներ, որոնք ամրապնդում և խորացնում էին ուսանողի՝ լսարանում ստացած տեսական գիտելիքները:

Բնագիտական ֆակուլտետներում 1923 թվականից հիմք դրվեց նաև արտադրական պրակտիկային, որը կարևորվում էր ուսանողի տեսական գիտելիքները գործնականի հետ համադրելու առումով: Շուտով այն պարտադիր դարձավ համալսարանի բոլոր ֆակուլտետներում: Տարեցտարի ուսանողների ընդունելության աճը համալսարանը դարձնում էր ուսանողակենտրոն կրթագիտական հաստատություն: Ի թիվս այլ միջոցառումների՝ կառավարությունը արդեն ամեն տարի ավելացնում էր համալսարանի ընդունելության պլանը: Օրինակ՝ 1924 թ. համալսարանի առաջին կուրսեր են ընդունվել 416, 1925 թ.՝ 486 մարդ և այլն[78]: Համալսարանը աստիճանաբար դարձավ ուսումնական խոշոր հաստատություն: Այդ աճն առաջին հերթին պայմանավորված էր ուսանողների թվակազմով, որը 1919-1930 թթ., ըստ տարիների, ներկայացնում է հետևյալ պատկերը.

[77] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, նշվ. աշխ., էջ 64:
[78] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 2, գ. 4, թ. 14:

Ուսումնական տարի	Ֆակուլտետների քիվը	Ուսանողների քիվը
1919/1920	1	260
1920/1921-1922	2/5	255
1922/1923	5	463
1923/1924	5	938
1924/1925	4	895
1925/1926	4	1161
1926/1927	5	1187
1927/1928	5	1227
1928/1929	5	1318
1929/1930	5	1316

Ուսանողությանը նյութապես ապահովելու հիմնական միջոցը պետության կողմից տրվող թոշակն էր, որը լայնորեն կիրառվեց 1922 թ. մայիսի 26-ի «Ուսանողների համար պետական և մասնավոր թոշակների մասին» դեկրետի հիման վրա[79]: Մինչ այդ՝ դեռևս 1922 թ. փետրվարին, մտահոգված ուսանողության նյութական վիճակով, հանրապետության կառավարությունը որոշեց ժողկոմխորհի ֆոնդից 50 թոշակ սահմանել համալսարանում:

Տարեցտարի ավելանում էր նաև համալսարանն ավարտողների քիվը: Բարձրագույն կրթության նորանոր մասնագետների հանդես գալը կարևոր իրադարձություն էր հանրապետության կյանքում: Պատահական չէր, որ համալսարանը գրեթե ամեն տարի Մշակույթի տան դահլիճում ընդում էր հերթական տարեղարձը՝ ջերմորեն շնորհավորելով շրջանավարտներին, պրոֆեսորներին, դասախոսներին շրջանավարտների, ուսանողների, դասախոսների ու հասարկայնության այլ ներկայացուցիչների, ինչպես նաև ղեկավար աշխատողների մասնակցությամբ:

[79] Տե՛ս **Լ. Ղարիբջանյան,** նշվ. աշխ., էջ 80, 87:

Համալսարանը 1925-1930 թթ. տվել է 931 շրջանավարտ, որոնք, ըստ տարիների, բաշխվել են հետևյալ կերպ.

Ուսումնական տարի	Շրջանավարտների քիվը	Շրջանավարտները ըստ ֆակուլտետների
1924/1925	58	Գյուղատնտեսական ֆակուլտետը և մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը
1925/1926	150	Գյուղատնտեսական, սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետները և մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը
1926/1927	90	Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը, գյուղատնտեսական, բժշկական և սոցտնտեսագիտական ֆակուլտետները
1927/1928	161	Մանկավարժական, սոցտնտեսագիտական, բժշկական, տեխնոլոգիական ֆակուլտետները
1928/1929	240	Մանկավարժական, սոցտնտեսագիտական, գյուղատնտեսական, բժշկական և տեխնոլոգիական ֆակուլտետները
1929/1930	232	Մանկավարժական, սոցտնտեսագիտական, գյուղատնտեսական, բժշկական և տեխնոլոգիական ֆակուլտետները
Ընդամենը	931	

Երևանի համալսարանը հանրապետությանը տալիս էր բանիմաց ինժեներներ, ճարտարապետներ, բժիշկներ, տնտեսագետներ ու իրավաբաններ: Նրա նախկին սաները Հայաստանի հեռավոր անկյուններն էին հասցնում կրթական լույսը, որ ստացել էին բուհում:

Ուսումնական գործընթացի առաջնահերթ խնդիրներից էր ուսանողությանը անհրաժեշտ դասագրքերով ու ձեռնարկներով ապահովելը: 1922 թ.՝ համալսարանում ապակետիպ տպագրության սկզբնավորումից հետո, շատերը ձեռնամուխ եղան դասագրքերի թարգմանության և հայերեն ձեռագրերի կազմման գործին[80]: Միայն 1922 թ. հրատարակվեցին Մանուկ Աբեղյանի «Համառոտագրություն հայոց գրականության պատմության», Հակոբ Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքի ժամանակ», Արսեն Տերտերյանի «Հայոց նոր գրականություն», Գուրգեն Էդիլյանի «Աշխատանքային դպրոց», Հովհաննես Նավակատիկյանի «Հանրահաշիվ», «Վերլուծական երկրաչափություն», Ալեքսանդր Հակոբյանի «Ֆիզիկա» ձեռնարկները: Նույն թվականին լույս տեսավ Վահան Արծրունու «Մարդակազմություն» ձեռնարկի 1-ին (ոսկրաբանություն) և 2-րդ (հողաբանություն), ապա՝ 3-րդ և 4-րդ մասերը: Հաջորդ տարիներին թարգմանվեցին Գուտմանի «Ֆիզիկայի հիմունքներ» (թարգմանիչ՝ Դ. Հակոբջանյան) գիրքը, Պոսյեի «Դիֆերենցյալ և ինտեգրալ հաշիվներ» դասընթացը (թարգմանիչ՝ Արշակ Տոնյան), Մեշչերսկու «Տեսական մեխանիկա» (թարգմանիչ՝ Դ. Հակոբջանյան), Գրոսհայմի «Բույսերի կարգաբանություն» գրքերը: Ավետիք Տեր-Պողոսյանը գրեց և հրատարակեց «Ընդհանուր կենդանաբանություն», Արշակ Հակոբյանը՝ «Ֆիզիոլոգիա», Ռուբեն Գաբրիելյանը՝ «Կենսաբանություն», Սարգիս Աբովյանը՝ «Կաթնատնտեսություն» ձեռնարկները: Երկու մասով հրատարակվեց Լեոյի «Հայոց պատմության նորագույն շրջանը» դասախոսությունների շարքը[81]:

1920 թ. դեկտեմբերին վերաբացված համալսարանն ուներ նյութատեխնիկական աղքատիկ բազա. չկային լաբորատորիաներ, սե-

[80] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 40, 41:
[81] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

նյակներ, գրադարանը, արհեստանոցներ, գործնական աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներ, չէին բավարարում լսարանները:

1922-1923 ուստարում համալսարանն արդեն ուներ հաստատված բյուջե, ինչպես նաև զանազան արտաբյուջետային գումարներ, որոնք աստիճանաբար ընդլայնվում էին՝ ստացվելով տարբեր կազմակերպություններից, երբեմն էլ առանձին անձերի նվիրատվություններից: Հայաստանի ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի տարբեր ոլորտների համար կադրեր պատրաստելու նպատակով բացվեցին տարբեր ֆակուլտետներ, ամբիոններ ու մասնագիտություններ, լաբորատորիաներ, կաբինետներ ու արհեստանոցներ: Համալսարանի վարչությունը կառավարության օժանդակությամբ հիմնեց քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, հանքաբանության կաբինետ, մեխանիկական արհեստանոց և այլն[82]:

1922 թ. Ստեփան Ղամբարյանի ջանքերով ստեղծվեց վերլուծական քիմիայի լաբորատորիան, 1922 թ.՝ Հարությունն Անժուրի (Չեբոտարյան) ջանքերով ֆիզիկայի լաբորատորիան: 1925 թ. համալսարանը Անժուրին գործուղեց Փարիզ՝ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, և այդ գործը նա կատարեց պատվախնդրորեն: Այսօր արդեն այդ սարքավորումներից մի քանիսը ԵՊՀ պատմության թանգարանի ցուցանմուշների շարքում են:

1922 թ. բժիշկ Վահան Արծրունու ղեկավարությամբ հիմնվեց անատոմիայի աշխատանոցը: 1922 թ. հիմնադրվեց նաև ֆիզիոլոգիայի լաբորատորիան[83]: Այդ գործում մեծ դերակատարում ունեցավ Արշակ Հակոբյանը: Նույն շրջանում Տիգրան Մուշեղյանը կազմակերպեց կենդանիների ֆիզիոլոգիայի, իսկ բժիշկ Գրիգոր Հայրապետյանը՝ հյուսվածաբանական լաբորատորիաների ստեղծման գործը: 1925 թ. ստեղծվեցին նաև ֆիզիոլոգիական քիմիայի (հիմնադիր՝ Հակոբ Հովհաննիսյան), դեղագործության (հիմնադիր՝ Գրիգոր Մեղինկյան) լաբորատորիաները, ինչպես նաև մի շարք այլ աշխատանոց-

[82] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 42:
[83] Տե՛ս նույն տեղում:

ներ ու արհեստանոցներ, որոնցից յուրաքանչյուրի բացումը կարևոր իրադարձություն էր համալսարանի կյանքում:

Հիմնադրված լաբորատորիաների համար տարբեր հանրապետություններից ու արտերկրից ստացվում էին թանկարժեք սարքավորումներ՝ ռենտգենապարատ, մանրադիտակներ և այլն: 1926 թ. համալսարանի լաբորատորիաների համար սարքավորումներ է ձեռք բերել նաև անվանի ֆիզիոլոգ, այն ժամանակ Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Լևոն Օրբելին[84]:

1925 թ. Ա. Թամանյանի նախագծով սկսվեց անատոմիկումի նոր շենքի կառուցումը, որը նպաստեց համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքների զարգացմանը, իսկ 1927 թ. Տերյան փողոցում կառուցվեց մի նոր մասնաշենք (Պոլիտեխնիկական ինստիտուտի հին մասնաշենքը), որտեղ տեղավորվեցին համալսարանի լաբորատորիաները:

Շրջանային փողոցում (այժմ՝ Կորյունի փողոց) կառուցվեց երկհարկանի, 25 սենյակից բաղկացած ուսանողական հանրակացարան, որը Երևանի առաջին շենքերից էր, իսկ նույն փողոցի մի այլ հատվածում՝ եռահարկ հանրակացարան՝ դասախոսների համար[85]:

1924 թ. Ա. Թամանյանը նախագծեց ՀԽՍՀ պետական համալսարանի ընդհանուր նախագիծը, որը մաս էր Երևանի գլխավոր հատակագծի և նախատեսում էր համալսարան՝ 2000 ուսանողի համար: Այն ընդգրկում էր Աստաֆյան (ներկայիս՝ Աբովյան) փողոցում գտնվող հիմնական շենքի շրջակա շուրջ 25 հեկտար տարածք՝ Աբովյան, Տերյան և Սունդուկյան (այժմ՝ Մաշտոցի պողոտա) փողոցների՝ Շրջանային (հետագայում՝ Կիրովի, այժմ՝ Կորյունի) փողոցից հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ըստ այդ հատակագծի՝ համալսարանի գլխավոր մասնաշենքից հարավ կառուցվեցին բժշկական ֆակուլտետի տեսական ամբիոնների համալիրը, կլինիկաների շեն-

[84] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 43:
[85] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

քերը, ապա՝ աստղաֆիտարանը, Գյուղատնտեսական և Պոլիտեխնիկական ինստիտուտների շենքերը[86]:

Շինարարական աշխատանքների ծավալումը հնարավորություն ընձեռեց ընդլայնելու բուհի ուսումնաօժանդակ հիմնարկների ցանցը, որի շնորհիվ համալսարանը դարձավ ուսումնագիտական կենտրոն՝ արժանանալով համընդհանուր ճանաչման:

Երիտասարդ դասախոսներ պատրաստելու գործը կազմակերպված բնույթ ստացավ միայն ասպիրանտուրայի հիմնադրումից հետո: Երևանի համալսարանի ասպիրանտուրան ստեղծվել է 1928 թ. սեպտեմբերին: Առաջին տարում տրվել է 8 տեղ, որից 5-ը՝ պատմագրական բաժնին (պատմական մատերիալիզմի, լեզվի պատմության, հայոց պատմության և ընդհանուր պատմության գծով): Առաջին ասպիրանտներ են հաստատվել պատմագրական բաժնի շրջանավարտներ Աբգար Հովհաննիսյանը՝ ընդհանուր պատմության գծով, Հայկ Գյուլիքևխյանի և Հայկ Ազատյանի ղեկավարությամբ, նույն բաժնի 19269-1927 ուստարվա շրջանավարտ Արարատ Ղարիբյանը՝ լեզվի պատմության գծով, պրոֆեսոր Հրաչյա Աճառյանի ղեկավարությամբ, Հենրի Գաբրիելյանը պատմական մատերիալիզմի գծով, իսկ Նորայր Դաբաղյանը՝ ընդհանուր գրականության գծով[87]: Համալսարանի առաջին ասպիրանտներից էին նաև Հովհաննես Չալթիկյանը՝ քիմիայի, Վարդան Գյուլքանյանը՝ մասնավոր երկրագործության և Հարություն Փանոսյանը՝ գյուղատնտեսական մանրէաբանության մասնագիտություններով: Հաջորդ տարի ավելացավ ասպիրանտների թիվը. տեխնիկական ֆակուլտետից՝ Լիպարիտ Ճարակյանը, գյուղատնտեսական ֆակուլտետից՝ Ամալյա Ազատյանը, մանկավարժական ֆակուլտետից՝ Գուրգեն Վանանդեցին և ուրիշներ: Ասպիրանտներից շատերը գործուղվում էին՝ գիտական խոշոր կենտրոններում (Մոսկվա, Լենինգրադ) մասնագիտանալու[88]: ՀԽՍՀ լուսժողկոմատը և համալսարանի վարչությունը մտավորականու-

[86] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 44, 48:
[87] Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, կազմ.՝ Է. Մինասյան, Երևան, 2009, էջ 19:
[88] Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 47:

թյան լավագույն ներկայացուցիչների ուժերի խելամիտ օգտագործման և դասախոսական նոր կադրերի պատրաստման միջոցով կարողացան լուծել համալսարանը պրոֆեսորադասախոսական որակյալ կադրերով ապահովելու դժվարին ու խիստ կարևոր խնդիրը:

1930-ական թթ. պատմագրական ֆակուլտետում ստեղծվեցին նոր ամբիոններ, անցկացվեցին ընդհանուր և հատուկ դասընթացներ: 1930-1931 ուստարում ուսումնական գործընթացը ներդաշնակ կազմակերպելու համար ստեղծվեցին հետևյալ ամբիոնները՝ ԽՍՀՄ պատմության (վարիչ՝ Վահան Ռշտունի), ընդհանուր պատմության (վարիչ՝ Կարո Ղազարյան), հայ ժողովրդի պատմության (վարիչ՝ Հակոբ Զորյան), հնագիտության (վարիչ՝ Աշխարհիբեկ Քալանթար), հայոց լեզվի (վարիչ՝ Հրաչյա Աճառյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (վարիչ՝ Գ. Ղափանցյան), ժողովրդական բանահյուսության (վարիչ՝ Մ. Աբեղյան), հայ հին և նոր գրականության (վարիչ՝ Ա. Տերտերյան), մանկավարժության (վարիչ՝ Գ. Էդիլյան):

1933 թ. հիմնադրվեց Մանկավարժական ինստիտուտը, ինչի հետևանքով էլ պատմության, գրականության և լեզվի մասնագիտությունների հիմքի վրա համալսարանում ձևավորվեց պատմալեզվագրական ֆակուլտետը՝ երեք բաժիններով: Դեկան նշանակվեց հանրապետությունում գիտական մեծ ճանաչում ունեցող մտավորական և հեղինակություն վայելող, բոլորի կողմից սիրված և հարգված Վահան Ռշտունին (1933-1936 թթ.)[89]: Մեկ տարի անց ֆակուլտետը ստացավ պատմագրական անվանումը (ուսումնառության շրջանը 5 տարի էր):

ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի 1936 թ. ապրիլի 16-ի՝ «Երևանի պետական համալսարանի մասին» որոշմամբ Մայր բուհում կատարվեցին կառուցվածքային որոշակի փոփոխություններ: Հայաստանի պատմության, հայոց լեզվի և գրականության խոր ու բազմակողմանի ուսումնասիրման գործը ամուր հիմքերի վրա դնելու և ուսումնագիտական գործընթացը արմատապես բարելավելու անհրաժեշտությու-

[89] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, էջ 19:

նից ելնելով՝ պատմագրական ֆակուլտետը բաժանվեց երկու ինքնուրույն ֆակուլտետների՝ պատմության և լեզվի ու գրականության, որոնք էլ պիտի իրականացնեին հայագիտական և հումանիտար մյուս գիտությունների ավանդումն ու ուսումնասիրությունները: Փաստորեն՝ 1936-1937 ուստարում պատմագրական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեցին պատմության և բանասիրության ֆակուլտետները: Դրանից հետո համալսարանը պատրաստեց զուտ պատմաբաններ և բանասերներ: Պատմաբանների ընդհանուր թիվը մինչև 1940 թվականը կազմել է 220 մարդ[90]: Հայրենական մեծ պատերազմի շրջանում հասկանալի պատճառներով պատմության և մյուս ֆակուլտետների ուսանողների թիվը կտրուկ նվազեց: Այսպես, եթե 1941 թ. պատմության ֆակուլտետը տվել է 33, ապա 1942 թ.՝ 13, 1943 թ.՝ 12, 1944 թ.՝ 18 շրջանավարտ: Շատ դասախոսներ, ասպիրանտներ և ուսանողներ մեկնեցին ռազմաճակատ և փառքով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Ռազմի դաշտում հերոսի մահով ընկան ֆակուլտետի դեկան Ներսես Պողոսյանը, դասախոսներ Միսակ Արմենյանը, Արամայիս Աբգարյանը, Գրիգոր Կուլօղլյանը, ասպիրանտներ Ռուբեն Փորսուղյանը, Ասքանազ Պողոսյանը, 30-ից ավելի ուսանողներ, որոնց թվում՝ Գևորգ Աբովյանը, Աղաջան Աղաջանյանը և ուրիշներ[91]: Պատերազմից հետո ֆակուլտետի ուսանողների և դասախոսների թիվը կտրուկ ավելացավ:

1980-1990-ական թթ. պատմության ֆակուլտետից առանձնացան և ինքնուրույն ֆակուլտետներ դարձան փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների ֆակուլտետները: Բանասիրական ֆակուլտետից առանձնացան և ինքնուրույն ֆակուլտետներ դարձան արևելագիտության, ռուս բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության և ժուռնալիստիկայի ֆակուլտետները:

Պատմության և բանասիրության ֆակուլտետների անցած ուղին արժևորվում է հայագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու

[90] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, էջ 19:

[91] Տե՛ս **Փ. Ենգոյան**, Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 38-40:

նվաճումներով, պատմաբանի ու բանասերի, ուսուցչի որակավորում ստացած տասնյակ հազարավոր շրջանավարտների հայրենանվեր աշխատանքով:

1920 թ. ՀԽՍՀ-ում տեղի ունեցավ բարձրագույն դպրոցի վերակառուցում: Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հիմքի վրա ՀԽՍՀ ժողկոմխորհի 1930 թ. մարտի 7-ի որոշմամբ արդեն ստեղծվել էր Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը, իսկ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի 1930 թ. հունիսի 14-ի որոշմամբ վերակառուցվեց նաև ՀԽՍՀ պետական համալսարանը[92]: Մի քանի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին չորս ինքնուրույն ինստիտուտներ. տեխնիկական ֆակուլտետը վերածվեց Ինժիներատեխնիկականական (շինարարական) ինստիտուտի (Պոլիտեխնիկականական ինստիտուտ), տնտեսագիտական ֆակուլտետը՝ Առևտրակոոպերատիվ ինստիտուտի (Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտ), բժշկական ֆակուլտետը՝ Բժշկական ինստիտուտի, մանկավարժական ֆակուլտետը՝ Մանկավարժական ինստիտուտի: Վերջինս 1930-1933 թթ. զբաղեցնում էր համալսարանի շենքը և կոչվում էր Մանկավարժական ինստիտուտ, կազմված էր վեց ֆակուլտետից՝ պատմատնտեսագիտական՝ պատմական և տնտեսագիտական բաժանմունքներով, գրական-լեզվաբանական, քիմիական, ագրոբիոլոգիական, ֆիզիկամաթեմատիկականական և մանկավարժական:

Այսպիսով՝ համասարանի հիմքի վրա ձևավորվեց Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը:

1933 թ. հունիսի 10-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի որոշմամբ ՀԽՍՀ ժողկոմխորհի հանձնաժողովին առաջարկվեց երկամսյա ժամկետում կառուցել համալսարանի շենքի (Մանկավարժական ինստիտուտի) երրորդ հարկը: Այդ շրջանում Խորհրդային Միության ողջ տարածքում մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնումը, իրոք, կենսական անհրաժեշտություն էր,

[92] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 49:

մինչդեռ համալսարանները ճյուղային ինստիտուտների վերածելը ոչ միայն չէր արդարացվում, այլև կոպիտ սխալ էր, որը, բարեբախտաբար, շտկվեց, և որոշ ժամանակ անց համալսարանները կրկին վերաբացվեցին[93]:

ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի 1933 թ. հուլիսի 15-ի որոշմամբ, որը բխում էր երկրի ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման առավել բարձր պահանջներից, նույն թվականի սեպտեմբերին կրկին վերաբացվեց Երևանի պետական համալսարանը՝ միավորելով Մանկավարժական և Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտները: Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ համալսարանի վերաբացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Աղասի Խանջյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը և ուրիշներ[94]:

Համաձայն նոր կառուցվածքի՝ համալսարանն ուներ հետևյալ հինգ ֆակուլտետները՝ տնտեսագիտական ֆակուլտետ՝ հետևյալ բաժանմունքներով՝ պլանային հաշվառման, ֆինանսական, առևտրական, սովետական շինարարության, պատմալեզվագրական ֆակուլտետ՝ հետևյալ բաժիններով՝ պատմական, գրական, լեզվաբանական, բնապատմական ֆակուլտետ՝ բիոլոգիական և քիմիական բաժանմունքներով, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ՝ ֆիզիկական և մաթեմատիկակական բաժանմունքներով, մանկավարժական ֆակուլտետ՝ հետևյալ բաժանմունքներով՝ ժողովրդական լուսավորության և ռուսական գրականության:

1934 թ. մանկավարժական ֆակուլտետը վերստին անջատվեց համալսարանից, և նրա հիմքի վրա ստեղծվեց մանկավարժական ինստիտուտը՝ որպես ինքնուրույն կառույց: Նույն թվականին բնագիտական ֆակուլտետը բաժանվեց երկու՝ կենսաբանական և քիմիական ֆակուլտետների, իսկ տնտեսագիտական ֆակուլտետի բաժինների հիման վրա ստեղծվեցին երկրաբանական-աշխարհագրական և խորհրդային շինարարության առանձին ֆակուլտետները:

[93] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 49-50:
[94] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

1934-1935 թթ. զգալի աշխատանքներ տարվեցին համալսարանում ուսումնագիտական գործընթացի բարելավման ուղղությամբ[95]:

Այսպիսով՝ 1936-1937 ուստարում վերջնականապես ձևավորվեց նախապատերազմյա շրջանում համալսարանի նոր կառուցվածքը՝ հետևյալ ութ ֆակուլտետներով՝ պատմության, բանասիրական, իրավաբանական, երկրաբանական-աշխարհագրական, քիմիական, կենսաբանական, ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական:

1933-1934 ուստարուց սկսած՝ անցած յոթ տարիների համեմատությամբ ուսանողների թիվը կրկնակի աճել է: Ըստ տարիների՝ ուսանողների թիվը 1934-1935 ուստարում կազմել է 1104, 1935-1936 ուստարում՝ 1148, 1936-1937 ուստարում՝ 1232, 1938-1939 ուստարում՝ 1344, 1938-1939 ուստարում՝ 1580 և 1939-1940 ուստարում՝ 1718 մարդ: Աճել է նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը: 1933-1934 ուստարում այն կազմում էր 138, իսկ 1940 թ.՝ 220 մարդ[96]:

Ռեկտոր Գ. Պետրոսյանի՝ համալսարանի հիմնադրման 20-ամյակին ներկայացված զեկուցման մեջ համալսարանի նվաճումների կողքին անդրադարձ է կատարվում նաև համալսարանի առջև ծառացած խնդիրներին, մասնավորապես առանձնացվում են պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, հետագայում նրանց որակի բարձրացման, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության ընդլայնման, համալսարանը երիտասարդ պրոֆեսորներով և դոցենտներով համալրելու և այլ հարցեր[97]: Ուսումնական գործընթացում խնդիր էր դրվում առավել ծավալելու և ընդգրկուն դարձնելու սեմինարները, մասնագիտական ու ֆակուլտատիվ կուրսերը, ուսանողներին առավել լայն չափով ընդգրկելու գիտահետազոտական աշխատանքներում, բարձրացնելու օտար լեզուների իմացության մակարդակը, այդ լեզուների ուսումնասիրման արդյունավետությունը, ուսանողների լաբորատորային և պրակտիկ աշխա-

[95] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 50:
[96] Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Երևանի պետական համալսարանը, Երևան, 1941, էջ 21, նաև Երևանի պետական համալսարան-90, Սրտի խոսք, էջ 61:
[97] Տե՛ս Երևանի պետական համալսարան-90, Սրտի խոսք, էջ 61-62:

տանքների դրվածքը, ընդլայնելու համալսարանի նյութական բազան, կառուցելու նոր մասնաշենքեր և այլն[98]:

Այսպիսով՝ Մայր բուհի հիմնադրումը կարևոր նշանակություն ունեցավ հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտները անհրաժեշտ բարձրորակ կադրերով համալրելու գործում, ինչն էլ մեծապես նպաստեց Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական և մշակութային վերելքին: Դրա հետ մեկտեղ համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին ակտիվ գործունեություն ծավալեցին ռազմաճակատում և թիկունքում՝ մեծ դեր կատարելով հաղթանակի ապահովման գործում:

[98] Տե՛ս Երևանի պետական համալսարան-90, Սրտի խոսք, էջ 62:



Երևանի Աբովյան (նախկին՝ Աստաֆյան) փողոցի թիվ 52 հասցեում այս երկհարկանի տուֆաշեն շենքը ուսուցչական սեմինարիայի համար 1902-1905 թթ. իր միջոցներով կառուցել է բարեգործ Երվանդ Տեր-Ավետիքյանը: 1921 թ. շենքը հատկացվել է Երևանի համալսարանին:



ԵՊՀ կենտրոնական մասնաշենքը, ճարտարապետ՝ Է. Տիգրանյան

ԵՊՀ կազմակերպիչները, հիմնադիր ռեկտորներն ու առաջին դասախոսները




Ալեքսանդր Խատիսյան
Հայաստանի առաջին
հանրապետության վարչապետ



Գևորգ Մելիք-Ղարագյոզյան
Հանրային կրթության
նախարար




Նիկոլ Աղբալյան
Հանրային կրթության և
արվեստի նախարար




Աշոտ Հովհաննիսյան
ՀԽՍՀ լուսավորության
ժողովրդական կոմիսար



Ղամբարյան Յուրի Ստեփանի,
իրավաբան, պրոֆեսոր
(Երևանի համալսարանի
առաջին ռեկտոր 1919 թ. հուլիս -
1920 թ. դեկտեմբեր)




Մանանդյան Հակոբ Համազասպի,
պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ
ակադեմիկոս (Երևանի
համալսարանի ռեկտոր 1920 թ.
դեկտեմբեր - 1921 թ. հոկտեմբեր)




Աբեղյան Մանուկ
(հայագետ)



Հովսեփյան Գարեգին
(հայագետ)



Տեր-Մովսիսյան Մեսրոպ
(հայագետ)



Մալխասյանց Ստեփան
(հայագետ)



Չավրիյան Դավիթ
(քիմիկոս)



Տեր-Մինասյան Երվանդ
(հայագետ)



Տիգրանյան Սիրական
(իրավագետ)



Քալանթար Աշխարհիբեկ
(հնագետ)



Ղամբարյան Ստեփան
(քիմիկոս)



Ղափանցյան Գրիգոր
(հայագետ)

Հայրենական մեծ պատերազմի մասնակից ԵՊՀ ռեկտորներ



Արզումանյան Անուշավան Աղաֆոնի
1904-1965

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս,
ռեկտոր՝
1937 թ. օգոստոս - 1937 թ. սեպտեմբեր



Պետրոսյան Գարեգին Բախշիի
1902-1997

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝
1938-1941 թթ., 1949 թ. հունիս - 1957 թ. փետրվար




Քունիաթյան Հրաչյա Խաչատուրի
1907-1981

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1942 թ. օգոստոս - 1946 թ. մայիս



Հարությունյան Նագուշ Խաչատուրի
1912-1993

Մեխանիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1961 թ. մայիս - 1963 թ. ապրիլ



Ներսիսյան Մկրտիչ Գեղամի
1909-1999

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1966 թ. ապրիլ - 1977 թ. մայիս


«Համալսարանի հիմնադիրների ու առաջին անվանի դասախոսների անունները ոսկյա տառերով են գրված հայկական բազմադարյա մշակույթի տարեգրության էջերում»:
1970 թ.





Համալսարանականները
զինպատրաստության ժամերին





Համալսարանականները
զինպատրաստության ժամերին



Հայրենական մեծ պատերազմի համալսարանական
վետերաններ



Գեներալ Նվեր Սաֆարյանը համալսարանականների հետ



Համալսարանականները
նշում են Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը



Վետերանների հերթական հանդիպումը



Հովհաննես Բաղրամյանը
համալսարանում, 1981 թ.



Հայրենական պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը
հավերժացնող աղբյուր-հուշարձանը ԵՊՀ բակում

Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը, ինչպես մեր հայրենիքի մյուս ժողովուրդները, արժանավայել ավանդ են ներդրել Հիտլերյան Գերմանիայի դեմ մղած պայքարում: Հայ ռազմիկները զինվորից մինչև մարշալը իրենց պսակել են... անվեհեր մարտառումների անթառամ փառքով:

Գ. Կ. Ժուկով
ԽՍՀՄ մարշալ, Խորհրդային Միության քառակի հերոս

Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Երևանի պետական համալսարանի վրա ծանր ազդեցություն թողեց ստալինյան բռնությունների շրջանը: Չնավորվել էր Ստալինի անձի պաշտամունք և հաստատվել էր նրա միահեծան իշխանությունը, լայն ծավալ էին ստացել բռնությունները, հալածանքներն ու սպանությունները: Բռնությունների նոր ալիքի ծավալման առիթ դարձավ Լենինգրադի կոմունիստների ղեկավար Ս. Կիրովի սպանությունը: Սկսվեց կատաղի մարդառոս: Ամենուր հայտնաբերվում և ոչնչացվում էին «ժողովրդի թշնամիներ» և «ընդհատակյա կազմակերպություններ»: Խորհրդային Միության բնակիչները ահ ու սարսափի մեջ էին, քանի որ նրանցից որևէ մեկը ապահովագրված չէր վտարվելուց, ձերբակալումից, աքսորվելուց կամ գնդակահարվելուց: 1937-1939 թ. խորհրդային երկրի պատմության մեջ ձերբակալությունները ու գնդակահարությունները հասան անասելի չափերի: Բազմաթիվ մտավորականներ, ենթարկվելով անհիմն մեղադրանքների, հայտնվեցին համակենտրոնացման ճամբարներում: Նման քաղաքականություն էր կիրառվում նաև ազգային պետություններում: Հայաստանում զանգվածային բռնություններն ու մտավորականության ջարդը սկսվեց 1936 թ. հուլիսին, երբ Թիֆլիսում կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար, Ստալինի նշանակած Լ. Բերիան կազմակերպեց ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը: Շուտով համատարած ձերբակալությունների ալիքը տարածվեց ամբողջ հանրապետությունով մեկ՝ կլանելով հայ ժողովրդի լավագույն զավակներից շատերին: Մարդիկ անգամ իրենց տներում հանգիստ չունեին. վեր էին թռչում ամեն հեռախոսազանգից ու դռան թակոցից: Բռնությունների ու զանգվածային ձերբակալությունների արդյունքում բանտերը լցվեցին անմեղ մարդկանցով, որոնց ներկայացնում էին ամենատարբեր մտացածին մեղադրանքներ՝ «խորհրդային իշխանության դեմ ակտիվ պայքար», «ազգայնամոլ», «ժողովրդի թշնամի», «հայրենիքի դավաճան» և այլ պիտակներով:

Անհիմն մեղադրանքների զոհ դարձան Հայաստանի կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը, Հայհեղկոմի առաջին նախագահ Սարգիս Կասյանը, Մարքսիզմ-լենինիզմ ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը և բոլոր այն ղեկավար աշխատողները, որոնք երբևէ առնչվել էին «ժողովրդի թշնամի» Խանջյանի կամ նրա մերձավորների հետ: Բռնաճնշումների ենթարկվեցին գիտության, լուսավորության, արվեստի գործիչներ, գրողներ, համալսարանի բազմաթիվ դասախոսներ ու ուսանողներ, գլխատվեց հանրապետության մտավորականության սերուցքը: Նրանց թվում էին Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Ջապել Եսայանը և շատ ուրիշներ: Ձերբակալվեցին և բանտեր նետվեցին բազմաթիվ շարքային աշխատողներ, բանվորներ ու գյուղացիներ, որոնցից շատերն անգամ տարրական պատկերացում չունեին քաղաքականության և իրենց ներկայացվող մեղադրանքների մասին: Բռնություններից զերծ չմնաց նաև Հայ առաքելական եկեղեցին: Պետականացվեցին եկեղեցիների և վանքերի հարստությունները, փակվեց եկեղեցիների մեծ մասը, մի մասն էլ քանդվեց, բռնությունների ենթարկվեցին բազմաթիվ հոգևորականներ: Միայն 1938 թ. ձերբակալվեց 164 հոգևորական, որոնցից ավելի քան 90-ը ձերբակալվեց[99]: 1938 թ. խեղդամահ արվեց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը: 1938 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն նրա առաջին քարտուղար Գ. Հարությունյանի ստորագրությամբ որոշում ընդունեց, ըստ որի՝ պետք է փակվեր Էջմիածնի վանքը, և վերացվեր հայ հոգևորականության համազգային կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը: Սակայն, բարեբախտաբար, Սփյուռքի, միջազգային հանրության ու կաթողիկոսական տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի (հետագայում Գևորգ VI կաթողիկոս) ջանքերով այդ որոշումը չիրագործվեց:

1930-ական թթ. Հայաստանում քաղաքական բռնաճնշումների ենթարկվեց մոտ 25 հազար մարդ, որոնց մոտ կեսը գնդակահարվեց:

[99] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Հ. Սիմոնյան, Երևան, 2012, էջ 647:

Միայն 1937-1938 թթ. գնդակահարվեց 6250 մարդ: ՀԿԿ կենտկոմի սեպտեմբերյան պլենումը աշխատանքից ազատեց կուսակցական և պետական բարձրաստիճան ղեկավարների, այդ թվում՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ամատունուն: ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Գրիգոր Հարությունյանը:

Ստալինյան բռնաճնշումները չշրջանցեցին նաև Երևանի պետական համալսարանը: Միայն 1937 թ. տասներկու ահասարսուռ ամիսների ընթացքում համալսարանում փոխվեց վեց ռեկտոր, որոնցից ոչ մեկը չհասցրեց լուրջ ավանդ ունենալ Մայր բուհի զարգացման գործում: Նրանք բոլորն էլ մեղադրվում էին հակահեղափոխական, աջ տրոցկիստական-ազգայնական կազմակերպության անդամ լինելու կեղծ ու շինծու մեղադրանքով կամ Հայաստանը Խորհրդային Միության կազմից անջատելու ուղղությամբ վնասակար աշխատանքներ կատարելու, հատկապես «ժողովրդի թշնամի», «հայտնի ազգայնական» համարված Աղասի Խանջյանին պաշտպանելու, նրա հետ կապեր ունենալու մտացածին ու հորինովի մեղադրանքներով: Նման շինծու մեղադրանքներ առաջադրվեցին համալսարանի ռեկտորներ Հակոբ Գարեգինի Հովհաննիսյանին (ռեկտոր 1922 թ. փետրվար - 1930 թ. հուլիս), տնտեսագետ, պրոֆեսոր Վռամ Քրիստափորի Միքայելյանին (ռեկտոր 1935 թ. հուլիս -1937 թ. հունվար): Երկուսն էլ իրենց մահկանացուն կնքեցին 1941 թ. աքսորավայրում[100]:

Համալսարանի հաջորդ ռեկտոր, կուսակցական ու պետական գործիչ Միքայել Ավետիսի Ենգիբարյանը վերոնշյալ մեղադրանքներով 1937 թ. դեկտեմբերին դատապարտվեց գնդակահարության: Գրեթե նույն մեղադրանքներով 1937 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին ռեկտոր դարձած Հենրի (Հարություն) Գաբրիելի Գաբրիելյանը 1938 թ. դատապարտվեց 12 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում, սակայն 1941 թ. մարտի 6-ին դատավճիռը չեղյալ համարվեց, և նա ազատվեց պատժի կրումից[101]:

[100] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 51:
[101] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

1937 թ. օգոստոս-սեպտեմբերին համալսարանի հաջորդ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (հետագայում՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս) Անուշավան Աղաֆոնի Արզումանյանը նույնպես մեղադրվեց «հայտնի ազգայնական» Ա. Խանջյանին պաշտպանելու մեղադրանքով, սակայն նա կարողացավ ապացուցել իր անմեղությունը և 1939 թ. հունիսին ազատ արձակվեց: Նրան փոխարինած հաջորդ ռեկտորին՝ պատմաբան Կամսար Առաքելյանին (ռեկտոր 1937 թ. նոյեմբեր-1938 թ. հունվար), վերոնշյալ մեղադրանքներից բացի, ներկայացվեց նաև Բաքվի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տեռորիստական խմբավորման անդամ լինելու մեղադրանք: Նա երկու անգամ ձերբակալվեց նույն մեղադրանքով. առաջինը՝ 1939 թ. հունիսին՝ դատապարտվելով ութ տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում, ապա 1947 թ. հունվարին ազատվեց պատժի կրումից, սակայն երկրորդ անգամ՝ 1949 թ. փետրվարին, ձերբակալվեց նույն մեղադրանքով և հունիսին դատապարտվեց ազատ աքսորի, որտեղից ազատվեց միայն 1954 թվականին[102]: Վերոնշյալ բոլոր ռեկտորներն էլ արդարացվել են 1955 թ., և նրանց գործերը կարճվել են հանցակազմի բացակայության պատճառով:

Դաժան ճակատագրի արժանացան նաև Երևանի պետական համալսարանի բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ, որոնք հեռացվեցին համալսարանից, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով, ենթարկվեցին անլուր հալածանքների, անասելի խոշտանգումների, արժանապատվության ոտնահարման և անմարդկային կտտանքների, նրանցից շատերն իրենց մահկանացուն կնքեցին բանտերում ու աքսորավայրերում: Քչերին հաջողվեց խուսափել այդ ահավոր մսաղացից: Իսկ այդ գեհենում առողջությունը կորցրած ու հրաշքով փրկվածները, վերադառնալով հայրենիք, առնվազն հինգ տարի իրավունք չունեին ապրելու մայրաքաղաքում՝ իրենց իսկ տանը[103]:

[102] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 52:
[103] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

Հակախորհրդային ագիտացիա անելու, ազգայնական ընդհատակյա կազմակերպության անդամ լինելու, «արտասահմանյան լրտես» լինելու կեղծ ու շինծու մեղադրանքներով 1937 թ. ձերբակալվեցին և 1938 թ. գնդակահարվեցին համալսարանի անվանի մի շարք դասախոսներ՝ իրավագետ, պրոֆեսոր, հասարակական գործիչ Հրանտ Գալիկյանը, գրող, հրապարակախոս, մանկավարժ Վահան Թոթովենցը, բժշկական գիտությունների թեկնածու Սպանդարատ Կամսարականը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Հակոբյանը, պատմաբան, պրոֆեսոր, նշանավոր մանկավարժ Աստվածատուր Խաչատրյանը, պատմաբան, բանասեր, տնտեսագետ Թադևոս Ավդալբեկյանը, փիլիսոփա, պրոֆեսոր, կուսակցական-պետական գործիչ Լևոն Արիսյանը, իրավաբան, հոգեբան, պետական գործիչ, համալսարանի հիմնադիրներից Սիրական Տիգրանյանը[104]: Համալսարանի դասախոս, կուսակցական գործիչ, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, տնտեսագետ, պրոֆեսոր Ներսիկ Ստեփանյանը ձերբակալվեց 1936 թ. մայիսին Կիրովի սպանության մասնակից և հակահեղափոխական, տեռորիստական, տրոցկիստական-ազգայնական կազմակերպության անդամ լինելու կեղծ մեղադրանքով և գնդակահարվեց 1938 թ. հուլիսին[105]:

1938 թ. ձերբակալվեց և 1939 թ. գնդակահարվեց համալսարանի անվանի դասախոս, գրականագետ, պրոֆեսոր Սիմոն Հակոբյանը: Վերոնշյալ կեղծ մեղադրանքներով 1937 թ. ձերբակալվեց և 1938 թ. փետրվարին գնդակահարվեց նշանավոր ինժեներ-տեխնոլոգ, քիմիկոս Հուսիկ Պողոսյանը[106]:

1937 թ. ձերբակալվեցին և աքսորավայրերի դաժան պայմաններում իրենց մահկանացուն կնքեցին համալսարանի մեծաքանակ դասախոսներ, նրանց թվում՝ հրապարակախոս, գրականագետ Ջապել Եսայանը (1943 թ. Բաքվի բանտում անլուր տառապանքներից հետո), պատմաբան, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պատմու-

[104] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 53-58:
[105] Տե՛ս նույն տեղում, էջ 60:
[106] Տե՛ս նույն տեղում, էջ 58:

թյան ֆակուլտետի ղեկան, Թալեաթ փաշայի սպանության կազմակերպիչ Հակոբ Զորյանը (1942 թ. աքսորավայրում), հողագետ, պրոֆեսոր, մանկավարժ Բոգդան Գալստյանը (1938 թ. բանտում), փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նշանավոր մանկավարժ, հոգեբան Գուրգեն Էդիլյանը (1942 թ. Օմսկի աքսորավայրում), երկրաբան, պրոֆեսոր Տիգրան Ջրբաշյանը (1937 թ. բանտում), վիրաբույժ, պրոֆեսոր Հարություն Միրզա-Ավագյանը (1938 թ. բանտում), փիլիսոփա, գրականագետ, երաժշտագետ Հակոբ Հարությունյանը (1943 թ. աքսորավայրում), մաթեմատիկոս, պրոֆեսոր Արշակ Տոնյանը (1942 թ. Սվերդլովսկի դատապարտյալների հիվանդանոցում), հնագետ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, համալսարանի հիմնադիրներից Աշխարհիբեկ Քալանթարը (1942 թ. Սիբիրի աքսորավայրում), բժիշկ, մանկավարժ, դրամատուրգ Ստեփան Բաղդասարյանը (1941 թ. աքսորավայրում)[107], ճարտարապետ, պրոֆեսոր, Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունին (1938 թ. հունվարին Երևանի բանտի հիվանդանոցում), քիմիկոս, պրոֆեսոր Հովհաննես Ակունյանը (1947 թ. Բլագովիշչենսկում): Անվանի գյուղատնտես, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պապա Քալանթարյանը 1939 թ. սեպտեմբերին աքսորվել էր Ղազախստան, որտեղ էլ 1942 թ. մահացել էր բանտի հիվանդանոցում[108]: Պետական-կուսակցական անվանի գործիչ, հայտնի պատմաբան, համալսարանի հիմնադիր դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (հետագայում՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս) Աշոտ Հովհաննիսյանը ձերբակալվեց 1937 թ. հուլիսին հակահեղափոխական, աջ տրոցկիստական-ազգայնական կազմակերպության ղեկավար լինելու կեղծ ու շինծու մեղադրանքով: 1941 թ. հուլիսին դատապարտվել է 8 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում (Կոմի ԻԽՍՀ), 1943 թ. ապրիլին վաղաժամ ազատվել է՝ տեղափոխվելով Ուզբեկստան: 1949 թ. վերադարձել է Հայաստան և հինգ տարի հարկադրված ապրել Կիրովականում

[107] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 54, 56, 58:
[108] Տե՛ս նույն տեղում, էջ 60:

(այժմ՝ Վանաձոր): 1954 թ. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով[109]:

Համալսարանի դասախոս, իրավաբան, քաղաքական և կուսակցական գործիչ Զարմայր Աշրաֆյանը ձերբակալվել է 1936 թ. նոյեմբերին կրկին վերոնշյալ մեղադրանքներով, դատապարտվել է 10 տարվա ազատազրկման և մահկանացուն կնքել աքսորավայրում: Նմանօրինակ կեղծ մեղադրանքներով 1938 թ. ձերբակալվել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Ռոտինյանցը, որը 1939 թ. աքսորվել է Ղազախստան և արդարացվել 1955 թվականին:

ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Կարապետ Մելիք-Օհանջանյանը նույն մեղադրանքով ձերբակալվել է 1937 թ. և 1941 թ. դատապարտվել է 5 տարվա ազատազրկման և աքսորի, միայն 1946 թվականից հետո նրան իրավունք է տրվել վերջնականապես հաստատվելու Երևանում:

Համալսարանի հիմնադիր դասախոս, փիլիսոփա, գրականագետ, պրոֆեսոր և հասարակական գործիչ Հայկ Գյուլիքևխյանը նմանօրինակ կեղծ մեղադրանքներով 1939 թ. մայիսին դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: Սակայն նույն թվի սեպտեմբերին կարճվել է նրա դեմ հարուցված քրեական գործը[110]:

1937 թ. ձերբակալվել և տարբեր տարիներին ազատազրկման են դատապարտվել համալսարանի անվանի դասախոսներ՝ ճարտարապետ-ջրաշինարար Գրիգոր Շիրմազանյանը, գյուղատնտես Գևորգ Գրծելյանը, ֆիզիկոս, պրոֆեսոր Հովհաննես Նավակատիկյանը, իրավաբան, հրապարակախոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Չուբարյանը, Պողոս Սոտնիկյանը, պատմական և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Հասրաթյանը, պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, հասարակական-քա-

[109] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 61:
[110] Տե՛ս նույն տեղում:

ղաքական գործիչ Արտավազդ Եղիազարյանը, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ստեփան Ղամբարյանը և ուրիշներ[111]:

Երևանի պետական համալսարանի վերը թվարկված բոլոր գիտնական-դասախոսները, որոնց մեծ մասը աքսորվել է կամ գնդակահարության դատապարտվել, հիմնականում հետմահու արդարացվել են 1954-1958 թվականներին: Անվանի հայորդիներին վերադարձվեցին նրանց բարի համբավն ու անունը, իսկ մեղադրական գործերը կարճվեցին հանցակազմի բացակայության հետևանքով:

Մեծանուն գիտնական, լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանին ձերբակալեցին 1937 թ. սեպտեմբերին՝ մեղադրելով լրտեսության և հակահեղափոխական գործունեության մեջ: 1938 թ. շարունակվում էր անվանի դասախոսի հարցաքննությունը, որն ուղեկցվում էր դաժան ծեծով: Այդ մասին Հ. Աճառյանը պատմել է իր բանտախցում գտնվող համալսարանական դասախոս-ընկերներին: 1939 թ. մարտի 7-ին կայացավ Հ. Աճառյանի դատավարությունը: Նրան մեղադրեցին համալսարանում դաշնակցական հայտնի կազմակերպության անդամակցության և այլ անհիմն հանցանքների մեջ՝ ենթարկելով 6 տարվա ազատազրկման: ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիան, լսելով Հ. Աճառյանի գործի բեկման բողոքը, որոշեց նրա գործը վերադարձնել վերաքննության: Դրա համար նպաստավոր եզրակացություն էր ներկայացրել գլխավոր զինվորական դատախազի օգնական Գյոլեցյանը: Նույն թվականի վերջին Հրաչյա Աճառյանն ազատ արձակվեց ժամկետից շուտ[112]: 1949-1950 թթ. հակամառականության մեղադրանքով Հ. Աճառյանը վտարվեց համալսարանից, բայց վերականգնվեց աշխատանքի ինը ամիս հետո: Հարկ է նշել, որ համալսարանից հեռացումը ծանր ապրումներ, ճիգեր ու լարվածություն է պահանջել անվանի ու մեծավաստակ գիտնականից: Միայն այն հանգամանքը, որ երբեմն մթով, հակառակ իր վատ տեսողությանը, թաքուն գնացել, պտտվել է համալ-

[111] Տե՛ս Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 64-65:
[112] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գ. 1, Երևան, 2010, էջ 521:

սարանի շենքի շուրջ, վկայում է գիտնականի՝ Մայր բուհի նկատմամբ տածած անմնացորդ սիրո ու նվիրվածության մասին: Նա անգամ շենքի պատերն է շոշափել՝ ասելով. «Թող ինձանից բոլոր տեսակի պաշտոններն ու տիտղոսները խլեն, միայն թե ինձ չզրկեն իմ աշակերտներից (ուսանողներին նա այդպես էր անվանում)»[113]:

Այսպիսով՝ չնայած 1930-ական թթ. երկրորդ կեսից սկսած ստալինյան բռնաճնշումների արդյունքում գլխատվեց մեր մտավորականության, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանում դասավանդող գիտնական-դասախոսների սերուցքը, բայց հայ ժողովրդի բնածին իմաստությունը սպանելն անհնարին էր:

Ստալինի մահից և ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո աքսորավայրերից վերադարձավ 1930-ական թվականներին հալածանքների ու բռնությունների ենթարկված, բայց և հրաշքով փրկված զոհերի մի մասը՝ Աշոտ Հովհաննիսյան, Կարապետ Մելիք-Օհանջանյան, Գրիգոր Չուբարյան, Լևոն Ռոտինյանց, Գևորգ Գրծելյանը, Գրիգոր Շիրմազանյանը և ուրիշներ, գիտնականներ, որոնք ժամանակին կանգնած են եղել Երևանի համալսարանի հիմնադրման ակունքների մոտ: Ծանոթանալով այդ վաստակաշատ մտավորականների՝ Մայր բուհի զարգացման գործում ներդրած վաստակին՝ անհրաժեշտ է փաստել, որ հենց նրանք իրենց գործընկերների հետ միասին մանկավարժական հմուտ փորձի և գիտական բարձր մակարդակի շնորհիվ 1920-1930-ական թթ. դաստիարակեցին և պատրաստեցին իրենց փոխարինողներին:

1940-1950-ական թթ. ասպարեզ իջավ ԵՊՀ շրջանավարտ երիտասարդ գիտնականների մի նոր համաստեղություն՝ լեզվաբաններ Արարատ Ղարիբյան, Գուրգեն Սևակ, Էդուարդ Աղայան, Գևորգ Ջահուկյան, Էդուարդ Աբայան, գրականագետներ Սկրտիչ Սկրյան, Էդվարդ Ջրբաշյան, Հրանտ Թամրազյան, մաթեմատիկոսներ Արտաշես Շահինյան, Մխիթար Ջրբաշյան, Սերգեյ Մերգելյան, Ռաֆայել Ալեքսանդրյան, մեխանիկոսներ Նագուշ Հարությունյան, Սերգեյ Համբարձումյան, ֆիզիկոսներ Նորայր Քոչարյան, Միքայել Տեր-

[113] **Ք. Ազառյան**, Հրաչյա Ազառյանի կյանքի ու գործունեության չհրապարակված էջերից, «Հանդես Երևանի համալսարանի», 1997, N1, էջ 100:

Միքայելյան, Գուրգեն Սահակյան, Վիլիկ Հարությունյան, կենսաբաններ Միքայել Չայլախյան, Գագիկ Դավթյան, Դարյա Տետերևնիկովա-Բաբայան, քիմիկոսներ Հովհաննես Չալթիկյան, Վերգինե Թառայան և ուրիշներ:

Այսպիսով՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը՝ 1941 թ. հունիսը, Երևանի պետական համալսարանը, իր հիմնադրման օրվանից շուրջ երկու տասնամյակից ավելի դիմակայելով զանազան դժվարությունների և սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, կարողացավ ամրապնդվել և զարգանալ, իր բարձրորակ դասախոսական կազմի շնորհիվ ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտներն ապահովեց անհրաժեշտ որակյալ կադրերով, որոնք իրենց ներդրումն ունեցան Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատներում ու թիկունքում մեր ժողովրդի հաղթանակի ապահովման գործում:

Երկրորդ աշխարհամարտը, որն իրավամբ համարվում է մարդկության պատմության մեծագույն աղետը, խլեց 60 միլիոնից ավելի մարդկային կյանք՝ անթիվ-անհամար բնակավայրեր վերածելով փլատակների: Աշխարհակործան այս պատերազմում Հայաստանը, բարեբախտաբար, ռազմական գործողությունների թատերաբեմ չդարձավ: Պատերազմի մահաբեր ալիքը, բախվելով կովկասյան լեռներին, անանցանելի դարձավ, ընկրկեց, որով մեր երկիրը զերծ մնաց անխուսափելի թվացող ավերածություններից ու կոտորածից: Բայց, այնուհանդերձ, այն նաև մեր պատերազմն էր, քանի որ անմիջականորեն առնչվում էր նաև մեր ժողովրդի կենսական շահերին, որովհետև նրա մասնակից դարձավ նաև Հայոց ցեղասպանության արդյունքում ձևավորված հայ Սփյուռքը, ողջ աշխարհասփյուռ հայությունը՝ իր 600 հազար ռազմիկներով, որից Խորհրդային Հայաստանից բանակ մեկնեցին ավելի քան 300 հազար, իսկ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից՝ ևս 200 հազար հայեր: Գաղտնիք չէ, որ մյուս հանրապետություններում, հատկապես Աղրբեջանում և Վրաստանում, հայերն ուղղակի քավության նոխազի դեր են ունեցել և հաճախ ազերիների ու վրացիների փոխարեն զորակոչվել: Այդ հանրապետություններում զորակոչված հայերի թիվը անհամեմատ մեծ է եղել՝

նրանց ընդհանուր քանակի հետ տոկոսային հարաբերակցության մեջ վերցրած: Շուրջ 100 հազար հայեր պատերազմին մասնակցեցին ԽՍՀՄ դաշնակից երկրների բանակների և ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթած երկրների դիմադրական ու պարտիզանական շարժման շարքերում[114]: Պատերազմի ընթացքում ռազմաճակատներում զոհվեց ավելի քան 200 հազար հայ զինվոր[115], նրանց թվում՝ նաև 3 հազար հայ քաջասիրտ կանայք:

Ընդհանուր առմամբ Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 108 հայի, որից 4-ին՝ խորհրդա-ֆիննական պատերազմում, 101-ին՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին[116]: Հայաստանում ծնված 10 այլազգի քաղաքացու ևս շնորհվել է հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Ն. Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի, իսկ 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են «Փառքի շքանշանի» բոլոր երեք աստիճաններով՝ դառնալով «Փառքի շքանշանի» լրիվ ասպետներ, որոնց իրավունքները հավասարեցված են եղել Խորհրդային Միության հերոսի կոչում ունեցողներին[117]:

Պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդիների շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում (Հ. Յոլյան, Ա. Միկոյան, Ի. Թևոսյան, Բ. Հարությունով, Ն. Նարինյան, Բ. Սալամբեկով, Ա. Խաչատրյան և Լ. Օրբելի): Պատերազմի մասնակից երեք ականավոր հայ գիտնականների՝ «Միգ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին, հրթիռամիջու-

[114] Տե՛ս **Հարությունյան Կ.,** Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Երևան, 2002, էջ 19:
[115] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, Երևան, 2012, էջ 651:
[116] Տե՛ս Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 578:
[117] Տե՛ս **Арутюнян К., Погосян Г.**, Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941-1945), Ереван, 2010, с. 7:

կային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, պրոֆ. Սամվել Քոչարյանցին և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի[118]:

1945 թ. դեկտեմբերի տվյալներով պատերազմին մասնակցել են 68 հայ գեներալ, ավիացիայի մարշալ (Սերգեյ Խուդյակով (Խանփերյանց)) և մեկ ծովակալ: Պատերազմի մասնակից հայ սպաներից 1946-1997 թթ. գեներալի կոչում է շնորհվել ևս 94-ին, ծովակալի կոչում՝ 8 հայի: Բանակի գեներալ Հ. Բաղրամյանին 1955 թ. շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: Նույն թվականին Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում է շնորհվել Հ. Իսակովին: 1975 թ. զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Հ. Բաբաջանյանին, իսկ 1980 թ. ինժեներական զորքերի մարշալի կոչում՝ Սերգեյ Ագանովին: Վերջինս պատերազմի տարիներին վաշտի հրամանատարից հասել էր բանակի ինժեներական զորքերի շտաբի պետի պաշտոնին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 6-ը՝ զորակազմի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար[119]:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդն են ունեցել նաև անտեսանելի ճակատի լեգենդար հետախույզները՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովհաննիսյանը, գեներալ-մայորներ Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանովը, Վյաչեսլավ Գուրգենովը, Խորհրդային Միության հերոս, գնդապետ Գևորգ Վարդանյանը, նրա կինն ու գործընկերուհին, քաջասիրտ հայուհի Գոհար Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց գործած սխրանքները հայտնի պատճառներով դեռևս լիովին չեն լուսաբանվել[120]:

---

[118] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 578:

[119] Տե՛ս **Арутюнян К., Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 6-8, Очерки истории Российкой внешней разведки, т. 4, 1941-1945, Москва, 2003, էջ 324-333:

[120] Տե՛ս **Арутюнян К., Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 6:

Ազգային զորամիավորումների ստեղծումը ռազմաքաղաքական շատ կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր: Այդ ուղղությամբ արդեն 1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին լարված աշխատանք կատարվեց Հայաստանում: Պրոֆ. Հ. Մելիքսեթյանի կարծիքով՝ փաստացի կազմավորվեց 7 հրաձգային դիվիզիա՝ 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ, 261-րդ, 61-րդ, 320-րդ, և վերստին կոմպլեկտավորվեց երկու կաղրային դիվիզիա՝ նախկին հայկական լեռնահրաձգային 76-րդ (հետագայում վերանվանվեց 51-րդ գվարդիականի) և 136-րդ: Ձևավորվեցին նաև երկու առանձին մոտոհրաձգային գումարտակներ և մեծ թվով երթային վաշտեր: Թվարկված առաջին հինգ դիվիզիաները պաշտոնապես ստացան «Հայկական» անվանումը, իսկ վերջին չորսը, չնայած «Հայկական» չկոչվեցին, բայց նրանց անձնակազմի 60-80 տոկոսը նս կազմում էին հայերը, ուստի դրանք նույնպես իրավացիորեն կարելի է «Հայկական» ազգային զորամիավորումներ համարել: Բացի դրանից՝ Հայաստանը մասնակցել է նս 16 դիվիզիաների կազմավորմանը (151-րդ, 386-րդ, 388-րդ և այլն)[121]:

Պատերազմի ընթացքում խորհրդային բանակի կազմում եղել են 6 հայկական ազգային դիվիզիաներ (76, 89, 261, 390, 408, 409-րդ), որոնցից 261-րդ դիվիզիան մշտապես տեղակայված էր ՀԽՍՀ-ում և ռազմաճակատում մարտնչող հայկական դիվիզիաների համար անհրաժեշտ համալրում պատրաստելուց բացի՝ պաշտպանում էր նաև խորհրդա-թուրքական պետական սահմանը: Մնացած հինգ դիվիզիաները ակտիվորեն մասնակցել են ռազմական գործողություններին: Նրանցից բացի՝ Խորհրդային Հայաստանում կազմավորվել կամ իրենց համալրումն են ստացել նս 8 հրաձգային ազգային դիվիզիաներ և մի շարք բրիգադներ:

Պատերազմի հենց սկզբում բանակին աջակցելու նպատակով Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում, ստեղծվել է ժողովրդական աշխարհազոր: 1941 թ. դեկտեմբերի 1-ի

[121] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, Հայ ժողովրդի ավանդը Մեծ հայրենականի հաղթանակում, «Հանդես Երևանի համալսարանի», 1995, N 10, էջ 6:

դրությամբ հայկական աշխարհազորն ունեցել է 52 ջոկատ՝ 26 000 անձնակազմով[122]:

Հայկական առաջին զորամիավորումը, որը մտել է մարտական գործողությունների մեջ, 390-րդ դիվիզիան էր. այն ձևավորվել է Կերչում ծավալված կատաղի ու լարված մարտերի ժամանակ՝ 1941 թ. դեկտեմբերին, դեսանտային զորամասերի հայ մարտիկներից ու հրամանատարներից: 1942 թ. հունվարին Հայաստանից այստեղ ուղարկվեցին մեծ թվով հայ ռազմիկներ, որոնք իրենց հետ տարել էին նաև տպարան, և շուտով այնտեղ լույս ընծայվեց Ղրիմի ռազմաճակատի «Մարտական գրոհ» հայերեն առաջին ճակատային թերթը: Ի դեպ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին հրատարակվել են 16 անուն հայերեն ռազմաճակատային թերթեր, որոնք կարևոր դեր են կատարել հայ ռազմիկների բարոյաքաղաքական ու մարտական դաստիարակության և ուսուցման գործում[123]:

1942 թ. հունվարից մինչև մայիսը 390-րդ դիվիզիան խորհրդային բանակի այլ միավորումների հետ Կերչում ծանր մարտեր մղեց գերմանական գերակշիռ տանկային ուժերի և ավիացիայի դեմ: Այդտեղ էլ 1942 թ. մարտի վերջերին զոհվեց դիվիզիայի հրամանատար գնդապետ Սիմոն Զաքյանը: Դիվիզիան Կերչում մարտերը շարունակեց մինչև մայիսի 23-ը, երբ խորհրդային զորքերը հարկադրված եղան թողնել թերակղզին:

Անդրկովկասում ազգային զորամիավորումների կազմավորումն ավելի հրամայական դարձավ այն բանից հետո, երբ գերմանական հրամանատարությունը, օգտվելով երկրորդ ճակատի բացակայությունից, իր հիմնական ուժերը կենտրոնացնելով ԽՍՀՄ-ի դեմ 1942 թ. ամռանը հարձակում ծավալեց դեպի Կովկաս:

Հայտնի է, որ Երկրորդ աշխարհամարտը սկսվել է 1939 թ. սեպտեմբերի 1-ին գերմանական զորքերի Լեհաստան ներխուժմամբ: Սկսվել է մարդկության պատմության մեջ իր չափերով ու արյունահե-

[122] Տե՛ս **Թադևոսյան Ռ.,** Դրվագներ հայոց ռազմարվեստի պատմությունից, XIX-XX դարեր, Երևան, 2012, էջ 420:
[123] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 10:

ղությամբ աննախադեպ պատերազմ՝ Գերմանիայի զինված ուժերի հաղթարշավով: 1939-1941 թթ. Գերմանիան իր դաշնակիցների՝ Ճապոնիայի և Իտալիայի աջակցությամբ զավթել էր գրեթե ողջ Եվրոպան, նաև խոշոր տարածքներ Ասիայում ու Աֆրիկայում: Այդ ընթացքում ԽՍՀՄ-ը գրեթե առանց դժվարության իրեն էր կցել մի շարք սահմանամերձ տարածքներ Արևմուտքի սահմանակից երկրներից: Նախ խորհրդային զորքերը մտել էին Արևմտյան Բելառուսիա և Արևմտյան Ուկրաինա, ապա՝ նաև Բեսարաբիա ու Մերձբալթիկա:

1939 թ. վերջին ԽՍՀՄ-ին ավելի լուրջ ռազմական փորձություն էր սպասվում խորհրդա-ֆիննական պատերազմում: Ֆինլանդիայի հետ եղած սահմանային վեճը վերաճել էր անհաշտ հակամարտության: Երբ խորհրդային կառավարությունն իր հյուսիսային սահմանի անվտանգությունը ապահովելու նկատառումով առաջարկեց Լենինգրադից 20-32 կմ հյուսիս ձգվող սահմանային գիծը առնվազն 70 կմ հեռացնել քաղաքից՝ փոխարենը պարտավորվելով Ֆինլանդիային հանձնել կրկնակի մեծ տարածք Կարելիայում, ֆիննական կառավարությունը, սակայն, կտրականապես մերժեց այդ առաջարկը, ինչն էլ ի վերջո հանգեցրեց ծանր ու արյունահեղ պատերազմի:

Խորհրդա-ֆիննական պատերազմում (1939 թ. նոյեմբերի 30 - 1940 թ. մարտի 13) խորհրդային զորքերին ծանր կորուստների գնով (333 հազար զոհ, վիրավոր ու ցրտահարված, այս պատերազմին մասնակցած 16 հազար հայերից (նրանց թվում կային բազմաթիվ համալսարանականներ) 2 հազարը զոհվեցին, այդ թվում՝ նաև կաճայք) հաջողվել է ճեղքել թշնամու 135 կմ երկարությամբ, ավելի քան 2 հազար խոշոր կրակակետ ունեցող «Մաներհայմի գիծ» անվանումով ամրությունների հզոր շղթան և Մոսկվայի հաշտության բանակցություններում իր պայմանները թելադրել Ֆինլանդիային[124]: Այս պատերազմում իրենց քաջագործությունների համար խորհրդային 412 ռազմիկների շարքում Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 4 հայորդիներ:

[124] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 578:

1940 թ. դեկտեմբերի 18-ին Հիտլերը հաստատեց ԽՍՀՄ-ի դեմ կայծակնային պատերազմի ծրագիրը, որը ստացավ «Բարբարոսա» անվանումը: Ըստ այդ ծրագրի՝ նախատեսվում էր արդեն շուրջ երկու տարի հաջողությամբ կիրառվող մարտավարությամբ՝ գերազանց սպառազինված և շարժունակ խմբավորումների անակնկալ ու սրընթաց գործողություններով, արագորեն մասնատել ու ոչնչացնել ԽՍՀՄ արևմտյան սահմանագոտում տեղակայված զորքերը, շուրջ երկու ամսվա ընթացքում ջախջախել կարմիր բանակի հիմնական ուժերը, ոչնչացնել Խորհրդային Միության արդյունաբերական կենտրոնները՝ հասնելով անվերապահ հաղթանակի: Այդ նպատակով գերմանական հրամանատարությունը ԽՍՀՄ սահմանի մոտ կենտրոնացրել էր լավ սպառազինված 190 դիվիզիա, որոնք տեղաբաշխվել էին 3 հիմնական՝ «Հյուսիս», «Հարավ» և «Կենտրոն» ռազմավարական ուղղություններով:

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Գերմանիայի դաշնակիցների թիվն ավելացավ ևս մեկով. 1941 թ. հունիսի 18-ին բարեկամության և չհարձակման պայմանագիր կնքվեց Գերմանիայի և Թուրքիայի միջև, ինչը նշանակում էր, որ Գերմանիան հնարավորություն էր ստանում անարգել օգտագործելու Թուրքիայի ցամաքային, առավել ևս ծովային տիրույթները: Գերմանական ռազմանավերը իսկույն ներխուժեցին Սև ծով և ընդհուպ մոտեցան ԽՍՀՄ ծովափնյա շրջաններին: Փաստորեն՝ ամեն բան պատրաստ էր ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սանձազերծելու համար:

Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ բարեկամացած Թուրքիային, ապա դժվար չէր հասկանալ, թե այդ դեպքում ինչ էր սպասվում Հայաստանին ու հայ ժողովրդին: Հայոց ցեղասպանությունը իրականացրած Թուրքիան անմիջապես խոշոր ռազմական ուժեր՝ 26 սպառազեն դիվիզիա էր կենտրոնացրել Խորհրդային Հայաստանի սահմանի մոտ և հարմար պահի էր սպասում՝ այնտեղ ներխուժելու համար[125]:

[125] Տե՛ս **Штеменко С.,** Генеральный штаб в годы войны, Москва, 1968, с. 54:

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի հետ կնքած չհարձակման մասին պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Խորհրդային Միության վրա: Դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին՝ Օբերզալցբուրգում Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Ա. Հիտլերը ցուցում էր տվել իր զորավարներին առաջիկա պատերազմում անխնա բնաջնջելու սլավոնական ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքին, հիշեցնելով, թե «մեր ժամանակներում այլևս ով է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»[126]: Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, հիշելով և վերապրելով առաջին համաշխարհային պատերազմում գերմանա-թուրքական ռազմական դաշինքի արդյունքում իրականացված Հայոց ցեղասպանության փաստը և յուրացնելով այդ վայրենի սպանդի դասերը, մեկ մարդու պես գիտակցվելով, թե իր համար ինչպիսի վտանգ կարող էր առաջանալ Գերմանիայի հաղթանակի դեպքում, ոտքի կանգնեց՝ պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցելով մարտական գործողություններին ռազմաճակատի բոլոր հատվածներում՝ հեռավոր Մուրմանսկից մինչև Մերձբալթիկա, ԽՍՀՄ արևմտյան սահմաններով ղեպի հարավ՝ մինչև Օդեսա և Ղրիմ: Հայ մարտիկները Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների շարքում մարտնչում էին զինվորական բոլոր օկրուգների և ռազմաճակատների տարբեր զորատեսակների կազմում: 1941 թ. օգոստոսի 25-ին «Правда» թերթը «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում նշել է. «Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, նա գիտե, ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես

[126] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 544:

բռնկվեց պատերազմը, որն սկսել է մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»[127]:

Ընդհանուր առմամբ Խորհրդային Հայաստանից բանակ զորակոչվածները կազմել են հանրապետության բնակչության (1,4 մլն մարդ, 1941 թ.) 23 %-ն այն դեպքում, երբ ԽՍՀՄ մասշտաբով այս ցուցանիշը կազմում էր 18 %, այն է՝ 200 մլն բնակչից (1941 թ.) 34,5 մլն զորակոչված[128]: Խորհրդային զինված ուժերի քաջարի մարտիկները Հայրենական մեծ պատերազմի արյունահեղ մարտերում հայրենասիրության, հերոսության, անձնազոհության հրաշալի օրինակներ են ցույց տվել: Խորհրդային ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չեն մնացել նաև կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում, այլև արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, լուսավորության, առողջապահության, արվեստի, մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում, խորհրդային տնտեսություններում փոխարինել են տղամարդկանց, այլև համալրել են բանակի շարքերը՝ իրենց մեծ լուման ներդնելով հաղթանակի գործում: Տղամարդկանց հավասար նրանք ծառայության են անցել՝ մարտական բոլոր դժվարությունները հաղթահարելով, նրանց հետ միասին հասել են մինչև վերջնական հաղթանակ, մինչև Բեռլին: «…Երբեք ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում»[129],– ասել է գեներալ Չույկովը:

Կանայք և աղջիկները համալրել են նաև խորհրդային բանակի, ռազմաօդային և ռազմածովային նավատորմների և հակաօդային պաշտպանության միավորումների շարքերը: Խորհրդային երկրի հազարավոր կանայք՝ բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, ուսանո-

[127] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ Հ. Սիմոնյան, էջ 651:
[128] Տե՛ս **Թադևոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 420:
[129] **Чуйков В.,** Начало пути, Москва, 1962, с. 261.

ղուհիներ, մտավորականության ներկայացուցիչներ, կամավոր մեկնել են ռազմաճակատ և մարտնչել ֆաշիստական զավթիչների դեմ որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ, հատկապես որպես բժշկասանիտարական աշխատողներ և այլն: Խորհրդային ժողովրդի արիասիրտ դուստրերը անձնազոհության, հերոսության անկրկնելի օրինակներ են ցույց տվել Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Սևաստապոլի, Ստալինգրադի, Կուրսկի, Կովկասի և Խորհրդային Միության այլ քաղաքների և բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերում:

Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ առհավետ արձանագրվեցին շատ հերոսուհիների անուններ, որոնք իրենց սխրագործություններով անմահ փառք բերեցին խորհրդային կնոջը: Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ առհավետ ամրագրվել են Զոյա Կոսմոդեմյանսկայայի, Լիզա Չայկինայի, Ուլյանա Գրոմովայի, Լյուբա Շևցովայի, Մայա Պեգլիվանովայի (Փահլևանյան) և այլ անմահ հերոսուհիների անունները: Խորհրդային կառավարությունը, բարձր գնահատելով կանանց ծառայությունները Հայրենական մեծ պատերազմում, 70 հայրենասեր կանանց արժանացրել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Ավելի քան 120 հազար կանայք պարգևատրվել են Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով ու մեդալներով, 8 հազար կին պարգևատրվել է «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալով: Հարյուր հազարավոր կանայք իրենց կրծքին կրել են հերոսական քաղաքների պաշտպանության համար շնորհված մեդալներ[130]:

Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են մեծ թվով քաջասիրտ հայուհիներ, ավելի քան 10 հազար հայ կանայք, որոնցից 4 հազարը՝ ՀԽՍՀ-ից, մյուսները՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից և Սփյուռքից[131]: Պատերազմի ամենա-

[130] Տե՛ս **Մարտիրոսյան Լ.,** Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (1941-1945), Երևան, 1961, էջ 7:
[131] Տե՛ս **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 420:

ծանր փորձությունների ժամանակ հայ կանայք բարձր են պահել հայ ժողովրդի դարավոր պայքարի հերոսական ավանդները՝ սրբորեն կատարելով իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Հայրենիքի պաշտպանության համար մղված դաժան պայքարում նրանք ցուցաբերել են բարձր գիտակցություն, հայրենասիրություն և վճռականություն: Համալրելով խորհրդային բանակի շարքերը՝ անձնվիրաբար մարտնչել են ֆաշիստական զավթիչների դեմ: Խորհրդային հայրենիքի նկատմամբ հայ կնոջ ունեցած անսահման սիրո մասին գեղեցիկ կերպով է արտահայտվել կամավոր ռազմաճակատ մեկնած Լենա Գրիգորյանը. «Իմ հայրենիքը ծաղկուն Հայաստանն է: Բայց իմ հայրենիքը ոչ միայն Հայաստանն է, այլև ամբողջ Խորհրդային Միությունը: Ուզում եմ հազար կյանք ունենալ, որպեսզի դրանք բոլորը նվիրեմ Խորհրդային Միությանը»[132]:

Պատերազմի առաջին ամիսներին հիտլերյան բանակին հաջողվեց գրավել Լատվիան, Լիտվայի զգալի մասը, Արևմտյան Բելառուսիան և Արևմտյան Ուկրաինայի մեծ մասը: Խորհրդային բանակը հարկադրված եղավ նահանջել երկրի խորքը: Պաշտպանական մարտերը շարունակվեցին մինչև 1941 թվականի աշնան ամիսները: Պատերազմը սկսվելու պահից մինչև բաղձալի հաղթանակի բերկրալի օրը մեր ժողովուրդը թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում, ամենագործուն մասնակցություն ունեցավ: Սեղմ ժամկետներում ռազմական իրադրության պահանջներին համապատասխան վերակառուցվեց թիկունքի ամբողջ աշխատանքը, ապահովվեց ռազմաճակատի կարիքների անխափան բավարարումը: Պատերազմը շատ լուրջ և բարդ խնդիրներ դրեց հանրապետության արդյունաբերության առաջ: Պետք էր արագորեն յուրացնել մինչ այդ արդյունաբերության մեջ չեղած զենքերի, կապի միջոցների, տրանսպորտի և ռազմական այլ պարագաների արտադրության տեխնոլոգիան և թողարկումը: Անհրաժեշտ էր աննախընթաց չափով ընդլայնել պաշտպանական արդյունաբերության համար ռազմավարական հումք և կիսաֆաբրիկատներ, սննդի ու թեթև արդյունաբերական ապրանքներ արտա-

[132] **Է. Միհասյան**, Հայ հերոսուհի կանայք, Երևան, 2016, էջ 341:

դրող ձեռնարկությունները՝ լայնորեն օգտագործելով տեղական ռեսուրսները: Անդուլ աշխատանք էր կատարում նաև գյուղի աշխատավորությունը՝ ռազմաճակատին տալով կենսամթերքներ, իսկ արդյունաբերությանը՝ անհրաժեշտ հումք: Ռազմաճակատ մեկնածներին ամենուրեք փոխարինում էին կանայք, պատանիներն ու ծերերը: Արդեն 1941 թ. վերջերին Հայաստանը ռազմաճակատի համար թողարկում էր ավելի քան 140 անուն արտադրանք[133]:

Պատերազմի հենց սկզբից Հայաստանում ձևավորվեցին կարմիր բանակի մի քանի զորամիավորումներ, որոնց հանրապետությունն ապահովեց ոչ միայն մարդկանցով, այլև տրանսպորտով, հանդերձանքով և նյութատեխնիկական այլ միջոցներով:

Թիկունքում աշխատանքը վերակառուցելու և պատերազմի պահանջներին համապատասխան կազմակերպելու այդ լարված օրերին, խորհրդա-գերմանական ճակատի տարբեր հատվածներում ծավալված առաջին իսկ մարտերում ծնվեցին ու առնականացան նաև բազմաթիվ հայ ռազմիկներ ու սպաներ: Դրանցից էին Հարավարևմտյան ռազմաճակատի մոտոհրաձգային դիվիզիաներից մեկի հրամանատար գնդապետ Աշոտ Սարգսյանը, քաղաքացիական կռիվներում և խորհրդա-ֆիննական պատերազմում աչքի ընկած հրամանատար, գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը, հրետանավոր գնդապետ Լևոն Դարբինյանը, գնդապետ Ասքանազ Կարապետյանը, կապիտան Մաթեոս Մադաթյանը, մայոր Համազասպ Բաբաջանյանը, գրոհային օդաչու Նելսոն Ստեփանյանը, ռմբակոծիչ օդաչու Պատրիկ Գազազյանը և հազարավոր ուրիշ հայորդիներ: Պատերազմի առաջին հայ խիզախների թվում անմոռաց սխրանքներ կատարեցին Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը մասնակցած շուրջ 200 հայ ռազմիկներ: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը ամրոցի պաշտպանները արիաբար դիմագրավեցին հակառակորդի թվապես մի քանի անգամ գերակշռող ուժերին՝ կաշկանդելով նրանց առաջխաղացումը: Ամրոցի խիզախ պաշտպաններից էին

[133] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 10:

Սամվել Մաթևոսյանը, Սոս Նուրիջանյանը, Վահան Գրիգորյանը և ուրիշներ[134]:

Եթե պատերազմի առաջին ամիսներին հայ խիզախներն առանձին անհատներ կամ փոքր խմբեր էին, ապա հետագայում նրանց թիվը զգալիորեն բազմապատկվեց: Խորհրդային բանակի տարբեր զորատեսակներում հազարավոր հայ մարտիկներ ու սպաներ աչքի ընկան Մոսկվայի մատույցներում և Լենինգրադի պաշտպանների շարքերում, Ստալինգրադում ու Կուրսկի աղեղում, Ղրիմում ու Կովկասում, Ուկրաինայում ու Բելառուսիայում, Մերձբալթիկայում ու եվրոպական երկրներում: Սակայն հայ ռազմիկների մարտական սխրագործությունների տարեգրությունը մեծապես հարստացավ ազգային զորամիավորումների կազմավորումից հետո, Կերչի ու Կովկասի համար մղված ճակատամարտերում: Մարտերում կատարած սխրանքների համար հայերից առաջինը կառավարական բարձր պարգևի արժանացավ ավագ լեյտենանտ, օդաչու Պատրիկ Գազազյանը. ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հուլիսի 8-ի հրամանագրով նա պարգևատրվեց մարտական «Կարմիր դրոշի շքանշանով»: 1941 թ. հունիսի 24-ին Սարգիս Հայրապետյանն իր այրվող ինքնաթիռը գիտակցաբար մխրճեց հակառակորդի տանկային շարասյան մեջ՝ կյանքի գնով կատարելով մարտական առաջադրանքը[135]:

Պատերազմի առաջին տարում կատարած սխրանքների համար 4 հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հայերից առաջինն այդ բարձր կոչմանն արժանացավ օդաչու Լազար Չափչախովը, երկրորդը՝ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի օդաչու Նելսոն Ստեփանյանը, երրորդը՝ գումարտակի հրամանատար լեյտենանտ Խաչատուր Մելիքյանը, չորրորդը՝ հրետանային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Սերգեյ Օգանովը: Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա հայկական գյուղի Բերբեր Օբա կոչվող բարձունքում տեղակայված Ս. Օգանովի մարտ-

[134] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 652:
[135] Տե՛ս նույն տեղում:

կոցը, որն ուներ 24 հոգուց բաղկացած անձնակազմ, 1941 թ. նոյեմբերի 17-18-ը անհավասար մարտ մղեց հակառակորդի 50 տանկերի դեմ և ոչնչացրեց դրանցից 30-ը: Խիզախ հրետանավորները զոհվեցին, բայց իրենց կյանքի գնով կատարեցին մարտական առաջադրանքը՝ թույլ չտալով թշնամուն մտնել Դոնի Ռոստով[136]:

1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը տեղի ունեցած Սմոլենսկի ճակատամարտում մարտիկների ցուցաբերած զանգվածային հերոսության և ռազմական բարձր վարպետության արդյունքում ծնվեց խորհրդային գվարդիան: Առաջին գվարդիականների թվում էր 395-րդ հրաձգային գնդի հրամանատար մայոր Համազասպ Բաբաջանյանը, որը, բացի գվարդիականի պատվավոր կոչումից, պարգևատրվեց նաև «Կարմիր դրոշի շքանշանով»: Դա ապագա ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի առաջին մարտական պարգևն էր[137]: Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին իր ռազմավարական ունակություններով ու խիզախությամբ աչքի ընկավ ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի առաջին տեղակալ, գլխավոր ծովային շտաբի պետ, ծովակալ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան): Իսակովը զբաղվում էր Լենինգրադի հրետանային պաշտպանության ամրապնդման գործերով: Հետագայում նրան շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի ղեկավարն էր գնդապետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց): Դժվարին իրավիճակում նա ղեկավարեց շտաբի աշխատանքը, կապ հաստատեց բոլոր զորամասերի հետ, որի շնորհիվ միայն պատերազմի առաջին օրը Արևմտյան ռազմաճակատի օդաչուները ոչնչացրին հակառակորդի 100 ինքնաթիռ: Հետագայում Խուդյակովին շնորհվեց ավիացիայի մարշալի (առաջին հայ մարշալը) կոչում, և նա առաջադրվեց օդային բանակի, ապա՝ ամբողջ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետի պաշտոնում[138]:

---

[136] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 653:
[137] Տե՛ս նույն տեղում:
[138] Տե՛ս նույն տեղում, էջ 654:

Հայրենական մեծ պատերազմի առաջին մարտերում իրենց խիզախությամբ և մարտավարական հմտությամբ աչքի ընկան Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գնդապետ Իվան (Հովհաննես) Բաղրամյանը (հետագայում Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս), նույն ռազմաճակատի հրետանու պետ, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը (հետագայում հրետանու գեներալ-գնդապետ), Հարավային ռազմաճակատի հրետանու պետ, գնդապետ Իվան Վեքիլովը, 12-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը և շատ ուրիշներ:

1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942 թ. ապրիլի 20-ը տեղի ունեցած Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի ամենանշանավոր մարտերից մեկը Մոսկվայի ճակատամարտն էր: Կարմիր բանակը ոչ միայն կասեցրեց ֆաշիստական «Կենտրոն» բանակային զորախմբի առաջխաղացումը Մոսկվայի մատույցներում, այլև հզոր հակահարվածով 100-250 կմ հետ շպրտեց նրան դեպի Արևմուտք[139]: Այդ հաղթանակը ցրեց գերմանաֆաշիստական բանակների անպարտելիության մասին առասպելները՝ նպաստելով հակահիտլերյան դաշինքի ամրապնդմանը:

Մոսկվայի ճակատամարտին ռուսների, ուկրաինացիների, բալառուսների, ԽՍՀՄ ժողովուրդների ներկայացուցիչների հետ մասնակցեցին մի քանի հազար հայորդիներ: Նրանց թվում էր գեներալ-մայոր Հովհաննես Բաղրամյանը: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Սարգիս Վանեցյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) և 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Հայկ Մարտիրոսյանը (հետագայում գեներալ-մայոր) և ուրիշ հրամանատարներ:

Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Ստալինգրադի ճակատամարտում (1942 թ. հուլիսի 17 - 1943 թ.

[139] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 654:

փետրվարի 2): Հայրենական պատերազմի ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող այդ ճակատամարտում կարմիր բանակը տարավ պատմական խոշոր նշանակություն ունեցող հաղթանակ, որն ավարտվեց գերմանական մի մեծ զորախմբի շրջապատմամբ և լրիվ ջախջախմամբ: Հակառակորդն այստեղ կորցրեց ավելի քան 1.5 միլիոն մարդ՝ սպանված, վիրավոր և անհայտ կորած, որը կազմում էր խորհրդա-գերմանական ճակատում մարտնչող ֆաշիստական զորքերի 1/4 մասը[140]:

Ստալինգրադի ճակատամարտը վճռական բեկում մտցրեց ինչպես Հայրենական մեծ պատերազմի, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ: Ստալինգրադի տակ ֆաշիստական զորքերի պարտությունը ցնցեց երկրորդ Ռայխի հիմքերը, խարխլեց նրա նկատմամբ իր դաշնակից երկրների վստահությունը, նպաստեց Գերմանիայի կողմից զավթված եվրոպական մի շարք երկրներում դիմադրական շարժման ուժեղացմանը: Ճապոնիան ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել ԽՍՀՄ-ի նկատմամբ ակտիվ գործողությունների դիմելու ծրագրից, իսկ Թուրքիան, որը պատրաստվում էր 1942 թ. նոյեմբերի 24-ին հարձակվել Խորհրդային Միության վրա, հարկադրված եղավ իր 26 դիվիզաները հետ քաշել Խորհրդային Միության սահմաններից: Ստալինգրադի ճակատամարտում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց ավիաէսկադրիլիայի հրամանատար, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանին, որը օդային մարտերում ցած գցեց հակառակորդի 22 ինքնաթիռ: Իր խիզախությամբ աչքի ընկավ գվարդիայի մայոր Մաթևոս Մաղաքյանը, որը պարգևատրվեց «Լենինի շքանշանով»: Նման պարգևի արժանացան նաև տանկային բրիգադի կոմիսար Գրիգոր Գալուստովը, որը Բրիգադը Ստալինգրադի մատույցներում ոչնչացրեց հակառակորդի 218 տանկ[141]:

Ստալինգրադի ճակատամարտին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցեց նախկին Հայկական 76-րդ հրաձգային դիվիզիան:

[140] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 655:
[141] Տե՛ս նույն տեղում, էջ 656:

Այն մարտերում աչքի ընկնելով՝ վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, որի կազմում իրենց սխրագործություններով աչքի ընկան նաև բազմաթիվ համալսարանականներ: Դոնի ճակատի մարտերում աչքի ընկան քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ-Գալաջնը, հրետանու գեներալ մայոր Իվան Վեքիլովը, 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Հայկ Թումանյանը, 60-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ասքանազ Կարապետյանը (հետագայում գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս), Ստեփան և Վլադիմիր Միկոյան եղբայրները, հետախույզ Սուրեն Միրզոյանը, սակրավոր Սուրեն Ավետիսյանը և ուրիշներ[142]: Կալաչ քաղաք գրոհող խորհրդային զորամասերի մեջ էր նաև գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի ղեկավարած մոտոմեքենայացված բրիգադը, որը նույնպես արժանացավ գվարդիական ու ստալինգրադյան կոչումների: Իրենց հիանալիորեն դրսևորեցին նաև ռազմաօդային ուժերի կապի պետ, գնդապետ Անուշավան Ստեփանյանը, գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը, Միհրան Բոստանջյանը, Արտաշես Հարությունյանը, Արամայիս Պողոսյանը, Կոստանդին Նազարովը, Խաչիկ Բաղդասարյանը Արամ Միրզոյանը և ուրիշներ: Այդ ահեղ գոտեմարտում իրենց կյանքը զոհեցին բազմաթիվ հայորդիներ, որոնցից մեկի՝ ավագ լեյտենանտ Արտաշես Գիմորյանի՝ արկի բեկորներից այրված կուսակցական տոմսն արյունաշաղախ վերնաշապիկի հետ այժմ պահվում է Մոսկվայում՝ խորհրդային բանակի կենտրոնական թանգարանում որպես հերոսության մի սուրբ մասունք:

Հայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև Հայրենական մեծ պատերազմի մյուս նշանավոր՝ Կուրսկի ճամատամարտին, որը տեղի ունեցավ 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը: Կուրսկի ճակատամարտում կարմիր բանակը ոչ միայն ամբողջովին ջախջախեց հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից բաղկացած զորախմբավորումը, այլև ընդմիշտ թաղեց գերելույան ստահոդ քարոզչության սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են

[142] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 656:

միայն հաղթելու ձմեռային պայմաններում: Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը. գերմանական բանակը ստիպված էր ամբողջ ճակատով մեկ անցնել պաշտպանության: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում ցուցաբերած հերոսությունների համար հայ ժողովրդի զավակներից շատերը արժանացան կառավարական բազմապիսի պարգևների: Մարտերում իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած գնդապետ Գրիգոր Գալուստովին և լեյտենանտ Վլադիմիր Իոնիսյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Սուվորովի առաջին աստիճանի զորավարական բարձրագույն շքանշանով պարգևատրվեց 11-րդ գվարդիական բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը, որին շնորհվեց նաև գեներալ-գնդապետի կոչում: Նման պարգևի և ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանցը)[143]:

Կարելի է առանձնացնել օդաչու, ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանի անձնազոհ սխրանքը: 1943 թ. օգոստոսի 3-ին՝ Բելգորոդի շրջանում մարտական հերթական առաջադրանքը կատարելիս, թշնամու զենիթային-հրետենային կրակից սկսվեց այրվել խիզախ օդաչուի ինքնաթիռը: Անվեհեր հայորդին չօգտվեց պարաշյուտից և այրվող ինքնաթիռը մխրճեց հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների վրա՝ իր կյանքի գնով ոչնչացնելով դրանք: Այդ սխրանքի համար Էդուարդ Բունիաթյանը հետմահու արժանացավ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի»: Մինչ այդ նա պարգևատրվել էր նաև այլ շքանշաններով: Դեռևս 1942 թ. ապրիլի 5-ին Հիտլերի կողմից հաստատված թվ 41 դիրեկտիվում ասված էր, որ պետք է «հիմնական ուժերը կենտրոնացնել և արագորեն կենսագործել ճեղքումը դեպի Կովկաս», տիրանալ նրա ռազմավարական ուղիներին: Գերմանական հրամանատարության նպատակն էր խորհրդային բանակին զրկել Կովկասի հումքի հա-

[143] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 656:

րուստ աղբյուրներից, գրավել հացառատ Կուբանը, Բաքվի ու Գրոզնու նավթը, Հայաստանի պղինձը, Վրաստանի մարգանեցն ու մյուս հարստությունները: Գերմանական գլխավոր շտաբը ձգտում էր ԽՍՀՄ-ի դեմ տրամադրել Թուրքիային և Կովկասի վրայով ճանապարհ բացել դեպի Մերձավոր ու Միջին Արևելք: Այսպիսով՝ 1942 թ. հուլիսի վերջից խորհրդային բանակի հիմնական խնդիրը դարձավ Ստալինգրադի ու Կովկասի պաշտպանությունը: Ավելի քան 100 000 հայորդիներ մասնակցեցին Կովկասի համար մղվող մարտերին, որոնք սկսվեցին 1942 թ. հուլիսի 27-ին և ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին: Նրանց զգալի մասը մարտնչեց Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում[144]: Նրանց թվում էին նաև ԵՊՀ բազմաթիվ ուսանողներ, ասպիրանտներ, դասախոսներ ու այլ աշխատակիցներ: Կովկասի պաշտպանության մարտում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաև ավիաէսկադրիլիայի հրամանատար, կապիտան Սամսոն Մկրտումյանին և հրաձգային բրիգադի գումարտակի հրամանատար, ավագ-լեյտենանտ Ղուկաս Մադոյանին[145]:

1942 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր Սևծովյան նավատորմի և Կովկասյան ռազմաճակատի զորքերի գործողությունները փոխհամաձայնեցնում էր ռազմաճակատի հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը: Հոկտեմբերին 4-ին Տուապսեի շրջանում նա ծանր վիրավորվեց՝ կորցնելով ձախ ոտքը, բայց կազդուրվելուց հետո շարունակեց ծառայությունը գործող բանակում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1942 թ. դեկտեմբերի 13-ի հրամանագրով ծովակալ Իսակովը պարգևատրվեց «Լենինի շքանշանով»: Կովկասի հերոսամարտի շրջանում հայ ժողովուրդը 1943 թ. փետրվարին հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամակի տակ ստորագրել էր 335 316 մարդ: Այն վառ

[144] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 657:
[145] Տե՛ս նույն տեղում:

կերպով արտահայտվում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթները[146]: Ժողովուրդն իր որդիներին ու դուստրերին կոչ էր անում տուն վերադառնալ հաղթանակով: Նամակը, որ բազմահազար օրինակներով հրատարակվեց հայերեն և ռուսերեն, տարածվեց ոչ միայն Կովկասյան, այլև մյուս բոլոր ռազմաճակատներում, լայն արձագանք գտավ թշնամու դեմ մարտնչող բոլոր հայ ռազմիկների սրտերում: Պատասխան նամակում նրանք երդվեցին սուրը պատյանը չդնել մինչև լիակատար հաղթանակ:

Կովկասյան ռազմաճակատների զորքերը 1943 թ. հունվարին պաշտպանությունից անցան հարձակման և 1943 թ. հոկտեմբերին հաջողությամբ եզրափակեցին այն: Մարտերը խորհրդային զորքերի հաղթանակով ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին, երբ գերմանական զորքերը վերջնականապես դուրս քշվեցին երկրամասից: Կովկասի պաշտպանության և ազատագրման համար ծավալված մարտերում իր կարևոր ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը, որի նկատմամբ հիտլերյան գլխավոր շտաբի կազմած, այսպես կոչված, «Գյորինգի կանաչ թղթապանակը» գաղտնի փաստաթղթում նախատեսված էր անցկացնել հատուկ միջոցառումներ: Նրանում մասնավորապես ասված էր, թե պետք է «հաշվի առնել առանձնապես հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ» և համապատասխան վերաբերմունք ցուցաբերել[147]: Իհարկե, ֆաշիստական պարագլուխներն այդ հարցում միանգամայն ճիշտ կռահում էին կատարել, քանի որ մեր ժողովուրդը չէր մոռացել ու երբեք չի մոռանա, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարության իրականացրած Հայոց մեծ եղեռնը ոգեշնչվել ու աջակցություն էր գտել հենց գերմանական իմպերալիստների կողմից: Ուստի, երբ հիտլերյան զորքերը մոտեցան Անդրկովկասի դարպասներին, ամբողջ հայ ժողովուրդը, նրա բազմահազար ռազմիկները հավատարմորեն կանգնեցին Կովկասի պաշտպանների շարքերում: Այդ

[146] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 658:
[147] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 13:

մարտերում աչքի ընկավ հատկապես 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ իր հրամանատարներ Անդրանիկ Սարգսյանի, Արտաշես Վասիլյանի և Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ: Այդ դիվիզիան 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանագրով արժանացավ «Թամանյան» պատվավոր կոչման: Կովկասի համար մղված մարտերում հայ ռազմիկները զանգվածային հերոսություններ կատարեցին՝ անմահացնելով իրենց անունները, բարձր պահելով մեր ժողովրդի պատիվն ու փառքը: Այսպես՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը 1943 թ. սեպտեմբերին՝ Դոլգայա բարձունքը գրավելու ժամանակ, գիտակցորեն գնաց դեպի մահ, կրծքով փակեց թշնամու դզոտի գնդացրային հրակնատը և ապահովեց իր ստորաբաժանման առաջացումը, որի համար ետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ զինված ուժերի նախարարի հրամանով նրա անունը առհավետ գրանցվեց այն վաշտի անձնակազմի ցուցակում, ուր նա ծառայել էր: Բացի Հ. Ավետիսյանից՝ նման անձնազոհություն են կատարել ևս երեք հայ մարտիկներ՝ ավագ սերժանտներ Սուրեն Առաքելյանը, Ապավեն Ռոստոմյանը և գերմանական գերությունից փախած ու իտալական պարտիզանական շարժման մեջ ընդգրկված Գևորգ Քոլոզյանը[148]: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայորդու և Հայաստանում ծնված մեկ հույնի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Թամանյան թերակղզու ազատագրմամբ վերջնականապես վերացվեց գերմանական զորքերի այն կարևոր հենակետը, որը հնարավորություն էր ընձեռում նրանց՝ իրենց ձեռքում պահելու Ղրիմը: Ուստի դրանից հետո օրակարգում դրվեց Ղրիմի ազատագրման հարցը, և 1944 թ. մայիսին այն լիովին մաքրվեց ֆաշիստական հորդաներից: Այդ մարտերում ևս աչքի ընկավ Թամանյան դիվիզիան, որի հինգ ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Կովկասի և Ղրիմի համար ծավալված մարտերից առաջ ու դրանց զուգընթաց Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերն իրականացնում էին նաև Ուկրաինայի ազատագրումը: 1943 թ. օգոստոսի

[148] Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 13:

վերջերից մինչև 1944 թ. վերջերը Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ ուկրաինական ռազմաճակատների զորքերը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Ուկրաինան: Այդ ռազմաճակատների զորքերի կազմում մարտնչել են շուրջ 80 000 հայ ռազմիկներ, այդ թվում նաև համալսարանականներ: Եթե դրան ավելացնենք նաև 1941-1942 թթ. Ուկրաինայի պաշտպանական ծանր մարտերին մասնակցած հայերի թիվը, որը կազմել է ավելի քան 20000, ապա Ուկրաինայի համար մարտնչած հայերի թիվն կանցնի 100000-ից: Նրանցից ավելի քան 30000-ը զոհվել է մարտերում[149]: Այդ մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 21 հայ խիզախների շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում Կիև մտան 50-րդ հրաձգային կորպուսի զորամասերը: Կորպուսի հրամանատարն էր գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, որն արժանացավ «Լենինի շքանշանի»: Մարտերում աչքի ընկավ հատկապես 409-րդ դիվիզիան, որն ստացավ Կիրովգրադյան անվանումը: Այն Հայրենական մեծ պատերազմն ավարտեց Չեխոսլովակիայում, ապա մասնակցեց միլիտարիստական Ճապոնիայի ջախջախմանը:

Գեներալներ Սարգիս Մարտիրոսյանի և ԵՊՀ ռազմագիտության ամբիոնի վարիչ Անդրանիկ Ղազարյանի հրամանատարությամբ գործող միավորումները առաջինների թվում անցան Դնեպրը, մասնակցեցին Կիևի և այլ քաղաքների ու մարզերի ազատագրմանը: Դնեպրի անցման համար մոտ 2000 ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, որից 18-ը հայեր էին (երկուսը համալսարանականներ՝ Անդրանիկ Ղազարյան և Սուրեն Սարգսյան):

50000 հայ ռազմիկներ, որոնց թվում՝ համալսարանականներ, մասնակցեցին Բելառուսիայի ազատագրմանը, որոնցից 15000-ը զոհվեց մարտերում: Նրանցից շատերը սխրանքների համար պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 հայորդիներ

[149] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 659:

արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման[150]: Նրանց թվում էր Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Հովհաննես Բաղրամյանը: Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկնելու համար «Վիտերբսկյան» անվանում շնորհվեց 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիային: Նրա երեք հրաձգային գնդերին շնորհվեց «Պոլոցկյան» անվանում: Ուկրաինայի և Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկան տասնյակ հազարավոր հայ մարտիկներ, այդ թվում՝ համալսարանականներ: Նրանց թվում էին Իվան Վեքիլովը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Գևորգ Տեր-Գասպարյանը, Ասքանազ Կարապետյանը, Հայկ Թումանյանը, Համազասպ Բաբաջանյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը (Ալեքսանդր Խուդյակով) և ուրիշներ:

Բազմաթիվ հայորդիներ ակտիվորեն մասնակցել են նաև Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների, Կարելիայի, Խորհրդային Անդրբևեռի համար մղված մարտերին: Լենինգրադի և Մերձբալթիկայի համար մղված կռիվներում հերոսաբար զոհվեց Խորհրդային Միության հերոս, գրոհային ավիագնդի հրամանատար փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:

Մերձբալթիկայի ու Բելառուսիայի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղված մարտերում կրկին աչքի ընկավ ականավոր զորավար Հովհաննես Բաղրամյանը, որն իրականացրեց մի շարք դժվարին, բայց փայլուն գործողություններ: Մերձբալթիկայում աչքի ընկած հայ զորավարներից է նաև գվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը: Նրա ղեկավարած դիվիզիան անձնուրացությամբ և մեծ հոգատարությամբ ազատագրեց Էստոնիայի Տարտու քաղաքը, որի համալսարանում սովորել էր Խաչատուր Աբովյանը: Այդ մարտերում վճռականորեն հանդես եկան նաև 51-րդ գվարդիական դիվիզիան և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը կառուցվել էր հիմնականում սփյուռքահայության տրա-

[150] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 660:

մաղրած միջոցներով: Այդ տանկային շարասյունը ստեղծելու համար Մերձավորարևելյան երկրներում կազմակերպվեց հանգանակություն ԵՊՀ հայ ժողովրդի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանի ջանքերով: 1944 թ. աշնանը գերմանական զավթիչները վերջնականապես վռնդվեցին խորհրդային երկրի սահմաններից, և մարտերը փոխադրվեցին Գերմանիայի ու նրա դաշնակիցների տարածքները: Խորհրդային բանակը ձեռնամուխ եղավ ֆաշիզմի լծի տակ տառապող եվրոպական ժողովուրդներին ազատագրելու իր պատմական առաքելության իրականացմանը, հիտլերյան բանակի ջախջախմանն ու Բեռլինի վրա հաղթանակի դրոշի բարձրացմանը: Այդ մեծագույն պատմական խնդիրները կատարվեցին 1944-1945 թթ. ձմռան և գարնան հարձակողական գործողությունների ընթացքում: 1945 թ. ապրիլի 30-ին Բեռլինի վրա բարձրացվեց կարմիր դրոշ, իսկ երկու օր հետո գրավվեց Գերմանիայի մայրաքաղաքը: Մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան անվերապահ կապիտուլյացիայի ենթարկվեց: Թշնամուն իր սեփական հողում ջախջախելու համար խորհրդային բանակի մղած մարտերում նույնպես անձնուրաց մասնակցություն ունեցան հայկական զորամասերն ու հայ ռազմիկները:

Հայ ժողովրդի հազարավոր զավակներ՝ որպես ազատարարներ, անցան եվրոպական մի շարք պետությունների սահմանները և ազնվորեն կատարեցին իրենց սրբազան պարտքը: Ավելի քան 20 հայ գեներալներ իրենց միավորումներով հետապնդեցին ու ջախջախեցին Գերմանիային և նրա դաշնակիցներին իրենց իսկ տարածքներում: 409-րդ Կիրովգրադյան և 89-րդ Թամանյան դիվիզիաները մասնակցեցին ինչպես Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի ազատագրմանը, այնպես էլ Գերմանիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի թշնամական խմբավորումների ջախջախմանը: 89-րդ դիվիզիան խորհրդային բանակի միակ զուտ ազգային զորամիավորումն էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը և պատերազմն ավարտեց Էլբայի ափին: Դա մեծ պատիվ էր հայկական դիվիզիայի համար, քանի որ կարմիր բանակի զորամիա-

վորումներից միայն նրան էր պատմական այդպիսի կարևոր առաջադրանք տրվել: Ռազմաճակատի զորքերի առաջապահ խմբի կազմում 89-րդ Թամանյան դիվիզիան, ապրիլի 16-ի առավոտյան անցնելով հարձակման, համառ մարտերում կոտրելով հակառակորդի դիմադրությունը, շարժվեց դեպի ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք՝ Ճանապարհին գրավելով Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը և բազմաթիվ բնակավայրեր: Ապրիլի 29-ին հայկական դիվիզիան արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինում: Գործելով գրոհային ջոկատներով՝ դիվիզիան համառ մարտերով առաջ էր շարժվում դեպի Բեռլինի կենտրոնը՝ Ռայխստագի շրջան, որտեղ Հումբոլդ-Հայն այգում հանդիպեց հակառակորդի պաշտպանական երկաթբետոնե հզոր ամրություններ ունեցող բերդի կայազորի կատաղի դիմադրությանը: Դիվիզիայի հզոր հարվածների տակ մայիսի 2-ին՝ ժամը 14:00-ին, ամրոցի կայազորը անձնատուր եղավ: Դիվիզիայի զորամասերը գերի են վերցրել հակառակորդի 5112 զինվոր ու սպա, գրավել հարուստ ռազմավար[151]:

Բեռլինի գրավումը մեծ ցնծություն առաջ բերեց հաղթող զորքերի մեջ: Օդ թռան հազարավոր հրթիռներ, թնդացին հաղթական կրակոցներ և ուռաներ, որոնց ձայնը խլացվեց Ռայխստագի պատերի տակ՝ հայկական քոչարի պարողների խրոխտ դոփյունի և զուռնա-դհոլի զիլ ձվագի ներքո: Բեռլինի ճակատամարտում ցուցաբերած սխրանքների համար դիվիզիան պարգևատրվել է «Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով»՝ դառնալով եռակի շքանշանակիր: Բեռլինյան մարտական գործողությունների հմուտ ղեկավարման համար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը նույնպես արժանացել է «Կուտուզովի երկրորդ աստիճանի զորավարական շքանշանի»:

Հազարավոր հայորդիներ, նրանց թվում՝ համալսարանականներ, մասնակցեցին ֆաշիզմի լծից Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրայի և Գերմանիայի ազատագրման մարտերին: Միայն Լեհաստանի համար մղված մարտերում Խորհրդային Միության հերո-

[151] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 660:

սի կոչման արժանացավ 18 հայորդի, իսկ 8 շարքային զինվոր դարձավ «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ: 10 հայեր հերոսացան ֆաշիստական Գերմանիայի ջախջախման և Բեռլինի գրավման մարտերում:

Չեխոսլովակիայի ազատագրության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունը, որի զորքերը առաջինների թվում 1945 թ. մայիսի 9-ին մտան Պրահա: Կորպուսի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար Սարգիս Մարտիրոսյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Մայիսի 9-ին ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Հեռավոր Արևելքում ֆաշիստական Գերմանիայի դաշնակից միլիտարիստական Ճապոնիայի ջախջախման գործում: Չնայած 1941 թ. ապրիլի 5-ին չեզոքության պայմանագիր էր ստորագրվել ԽՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև, բայց վերջինս ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելուց հետո մշտապես օգնում էր նրան և Խաղաղօվկիանոսյան ռազմական թատերաբեմում ծանր կորուստներ պատճառում հակաֆաշիստական խմբավորման երկրների զինված ուժերին: Ճապոնական ռազմամոլները ԽՍՀՄ հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացրել էին միլիոնանոց Կվանտունյան բանակը՝ դրանով իսկ կաշկանդելով կարմիր բանակի զգալի ուժեր, որոնք շատ անհրաժեշտ էին խորհրդա-գերմանական ճակատում: Իր դաշնակցային պարտավորություններին հավատարիմ ԽՍՀՄ-ն օգոստոսի 9-ին պատերազմ հայտարարեց Ճապոնիային: Նույն օրը կարմիր բանակի Անդրբայկալյան, Առաջին և Երկրորդ հեռավորարևելյան ռազմաճակատների զորքերը Խաղաղօվկիանոսյան նավատորմի և Ամուրյան գետային նավատորմիղի աջակցությամբ մարտական գործողություններ սկսեցին ԽՍՀՄ հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացված ճապոնական խոշոր զորախմբի դեմ: Սրընթաց հարձակման հետևանքով կարճ ժամանակամիջոցում գլխովին ջախջախվեց Կվանտունյան բանակը: Խորհրդային զորքե-

րը մինչև օգոստոսի վերջը ճապոնական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսարևելյան ու Կենտրոնական Չինաստանի և Հյուսիսային Կորեայի տարածքները, Հարավային Սախալինը ու Կուրիլյան կղզիները: 1945 թ. սեպտեմբերի 2-ին մարտնչող կողմերը ամերիկյան «Միսսուրի» գծանավի տախտակամածի վրա ստորագրեցին Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով և ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի այդ եզրափակիչ մարտական գործողությանը խորհրդային բանակի շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան հայ ժողովրդի մի քանի հազար զավակներ, այդ թվում՝ մեկ տասնյակից ավելի համալսարանականներ, որոնց զգալի մասը մինչ այդ մարտնչել էր խորհրդա-գերմանական ռազմական գործողությունների թատերաբեմում: Ճապոնիայի ջախջախման գործում աչքի ընկավ Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանցը): 12-րդ օդային բանակի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց «Կուտուզովի առաջին աստիճանի շքանշանով»: Կվանտունյան բանակի ջախջախման և Հարավային Սախալինի ազատագրման գործում մեծ դեր կատարեց Հեռավորարևելյան երկրորդ ռազմաճակատի հրետանին, որի հրամանատարը Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովն էր: Ռազմաճակատի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց «Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով»: Նույն ռազմաճակատի հակաօդային պաշտպանության պետ, հրետանու գեներալ-մայոր, համալսարանական Գևորգ Չայլախյանը պարգևատրվեց «Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով»: Նման պարգևի արժանացավ նաև Երկրորդ հեռավորարևելյան ռազմաճակատի բժշկասանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնուզյանը[152]:

Ցուցաբերած խիզախության համար «Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով» պարգևատրվեց 215-րդ հրաձգային դիվի-

[152] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 662:

զիայի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, համալսարանական, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը: Լայնահուն Ամուր գետը առաջինների թվում հաջողությամբ հաղթահարելու և չինական քաղաքները ազատագրելու մարտերում ցուցաբերած սխրանքների համար «Սուվորովի երրորդ աստիճանի շքանշանով» պարգևատրվեց 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Առաքել Հովհաննիսյանը: Չանչուն և Մուկդեն քաղաքների ազատագրման գործում կարևոր դեր կատարեց 278-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարը գնդապետ Կոնստանտին Լազարյանն էր: Դիվիզիան արժանացավ «Խինգանյան» պատվավոր անվան, իսկ նրա հրամանատարը պարգևատրվեց մարտական «Կարմիր դրոշի շքանշանով»: «Կարմիր դրոշի շքանշանով» պարգևատրվածների թվում էին նաև 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալ, ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաջյանը, 6-րդ գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, ծովային օդաչու Վազգեն Վարդանյանը, տանկիստ Սերգեյ Սկրտչյանը, Սախալինյան ռազմական նավատորմիղի շտաբի պետ, առաջին կարգի կապիտան (հետագայում փոխծովակալ) Վալերիան Սուրաբեկյանը և շատ ուրիշներ[153]:

Խորհրդային բանակի 1943-1944 թթ. վճռական հաղթանակներում իրենց ավանդն ունեցան նաև օկուպացված Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելառուսիայի, Լենինգրադի մարզի, Մերձբալթիկայի և այլ շրջաններում թշնամու խոր թիկունքում գործած պարտիզանները, որոնց շարքերում ևս աչքի ընկան հարյուրավոր հայեր՝ ունենալով ինքնուրույն պարտիզանական ջոկատներ: Միայն Ուկրաինայում և Բելառուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում՝ ավելի քան 1000, Հոլանդիայում՝ շուրջ 800 պարտիզաններ: Գոյություն ունեին պարտիզանական մի քանի ջոկատներ, նույնիսկ

[153] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 663:

գունդ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից: Օրինակ՝ Ուկրաինայում գերմանական զավթիչների դեմ մարտնչել է 100 հոգուց բաղկացած «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի հրամանատարությամբ, և 250 հայերից բաղկացած՝ Անաստաս Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ: 80 հայերից էր բաղկացած Լենինգրադի և Կալինինի մարզերում գործող պարտիզանական 41-րդ ջոկատը՝ Արտեմ Սաղումյանի գլխավորությամբ: Ղրիմում է մարտնչել 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի՝ «Ստեփան Շահումյանի անվան ջոկատը»՝ Անդրանիկ Մալխասյանի հրամանատարությամբ: Ֆրանսիայում է գործել խորհրդային առաջին պարտիզանական ջոկատը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ: Գնդի անձնակազմը բաղկացած էր 2000 հոգուց, որից հայեր էին 1200-ը: Հունաստանում գործում էր 1000 հայից բաղկացած «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ, Հոլանդիայում՝ 800 հայերից բաղկացած խումբը, ինչպես նաև հոլանդական դիմադրական շարժմանն աջակցող խմբերը և այլն[154]: Այդ ջոկատների մի մասը, որոնց կազմում կային նաև համալսարանականներ, գործողություններին մասնակցել են՝ փախչելով համակենտրոնացման ճամբարներից և մասնակցելով պարտիզանական շարժմանը:

Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին Հենրիկ Զաքարյանը, Վահան Գրիգորյանը (Բելառուսիա), քույր ու եղբայր Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Հարությունյանցը և Մայա Փեհլիվանյանը (Ուկրաինա), Արտյոմ Պետրոսյանը (Չեխոսլովակիա), Գևորգ Քոլոզյանը, Սկրտիչ Դաշտոյանը (Իտալիա), Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը (Ֆրանսիա), Անդրանիկ Միրզոյանը (Հոլանդիա), Արարատ Նավոյանը (Լեհաստան) և ուրիշներ[155]:

[154] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 666:
[155] Տե՛ս նույն տեղում:

Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում իր ավանդն ունի նաև սփյուռքահայությունը: Պատերազմի տարիներին սփյուռքահայերի մեծ մասը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը, համախմբվեց ազգային ճակատի մեջ՝ ստեղծելով մի շարք առաջադիմական կազմակերպություններ և ընկերություններ: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում ստեղծվեցին Հայկական առաջադիմական լիգա և Ամերիկայի հայերի ազգային խորհուրդ, Ֆրանսիայում՝ Ֆրանսահայերի ազգային ճակատ, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Եթովպիայում և այլ երկրներում՝ Խորհրդային Միության բարեկամների ընկերություններ և հակաֆաշիստական առաջադիմական կազմակերպություններ, որոնք ամբողջ պատերազմի ընթացքում հետևողականորեն վարում էին հօգուտ ԽՍՀՄ-ի գործունեություն: Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես օժանդակեցին մայր հայրենիքին, այլև նյութական զգալի օգնություն ցուցաբերեցին կարմիր բանակին: Օրինակ՝ սփյուռքահայերի հանգանակության շնորհիվ, որը կազմակերպել էր Հայ առաքելական եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նախաձեռնությամբ, պատերազմի տարիներին կառուցվեցին «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուներ (առաջինն շարասյունն ուներ 21, երկրորդը՝ 22 «Տ-34» մակնիշի տանկեր): Բացի դրանից՝ իրանահայերի հանգանակած գումարների միջոցներով կառուցվեց նաև «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը[156]:

Բազմաթիվ սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են՝ զենքը ձեռքներին: Միայն ԱՄՆ բանակում մարտնչել է շուրջ 20000 հայ: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը պարգևատրվեց ԱՄՆ-ի Կոնգրեսի «Պատվո մեդալով», որն այդ երկրի բարձրագույն պարգևն է: Պատերազմական տարիներին այդ պարգևին արժանացել է ընդամենը 87 մարդ: Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուների շարքում էին Չարլզ Տերտերյանը, Սեմ Պարսամյանը, Քըրք Քրքորյանը (ՀՀ ազգային հերոս): Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը, Հայկ Շեքերջյանը, Ջոն Աբա-

[156] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 666:

ջյանը, Սարգիս Զարգարյանը, սիրիական բանակում աչքի ընկան Արամ Կարամանուկյանը, Բուլղարիայում՝ Գաբրիել Գաբրիելյանը և ուրիշներ: Շուրջ 30 000 հայեր կային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց մի մասը զորակոչված էր Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից: Անգլիայի և Ֆրանսիայի երկնքում են հերոսացել ռազմական օդաչուներ Նոյել, Ջեկ և Լևոն Աղազարյան եղբայրները, որոնցից առաջինը զոհվել է Անգլիայում, իսկ երկրորդը՝ Ֆրանսիայում կատարած մարտական թռիչքների ժամանակ[157]: Նրանց քույրը՝ Մոնիկ Աղազարյանը, պատերազմի ժամանակ ռազմական օդանավակայանի պատասխանատու ծառայող էր:

Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական-պարտիզանական շարժման շարքերում: Իր անմար սխրանքով Ֆրանսիայում հռչակվեց Միսաք Մանուչյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի հերոսի կոչման: Մ. Մանուչյանը 1943 թ. մարտից Փարիզի շրջանում գործող «Ստալինգրադ» ջոկատի, իսկ նույն թվականի մայիսից Փարիզի ու Փարիզի շրջանի պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատների հրամանատարն էր: 1943 թ. նոյեմբերի 16-ին նա մատնությամբ ձերբակալվեց ֆաշիստների կողմից և 1944 թ. փետրվարի 21-ին իր 23 զինակիցների հետ գնդակահարվեց: Հայ ռազմագերիներին ֆաշիստական գերությունից ազատելուն մեծապես օգնեցին աշխարհահռչակ երգիչ և Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրի ծնողները՝ Միքայել և Քնար Ազնավուրյանները, քույրը՝ Աիդան, և անձամբ Շառլ Ազնավուրը: Հանուն Ֆրանսիայի իրենց կյանքը զոհեցին հայ ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները:

Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում և դիմադրական պայքարում: Ամբողջ Բուլղարիայով մեկ քնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Ռազգրադ-

[157] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 666:

լյան), որին ֆաշիստները դաժան խոշտանգումներից հետո կախաղան հանեցին[158]:

Սվյուռքահայության միայն չնչին մասը չմիացավ հայ ազգային ճակատի ուժերին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավարներից ոմանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Հարություն Բաղդասարյանը (քարտուղար), Գարեգին Նժդեհը, Դրաստամատ Կանայանը (Դրո), Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: Խորհուրդը գործում էր ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության հովանավորության ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական իշխանության հաստատումն էր և այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական լեգեոնի ստեղծումը: Նժդեհն ու Դրոն այդ գործին լծվեցին հայ ռազմագերիներին փրկելու նպատակով: Նրանք շրջում էին ռազմագերիների ճամբարներում և հավաքագրում հայ զինվորներին ու սպաներին: Ընդհանուր առմամբ հաջողվեց հավաքագրել 8000-9000 մարդ՝ ստեղծելով Հայկական լեգեոնի 10 գումարտակ[159]: Հատկանշական է, որ ռայխսկանցլեր Հերման Գյորինգն իր «Կանաչ թղթապանակում» ֆաշիստական զորապետներին հրահանգել էր. «Կովկասում բնիկների (վրացիների, հայերի, թաթարների և այլն) և ռուսների միջև եղած հակասությունները պետք է օգտագործել հօգուտ մեր շահերի՝ հաշվի առնելով հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ»[160]: Գերմանացիների նկատմամբ հայերի անբարյացակամության մասին նշել է նաև Ադոլֆ Հիտլերը: 1942 թ. անդրադառնալով ազգային լեգեոնների կազմավորման հարցին՝ նա հայտարարել է. «Չգիտեմ, թե ինչպես իրենց կպահեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդների թվին չեն պատկանում: Ես միայն մուսուլմաններին եմ վստահելի համա-

[158] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 666:
[159] Տե՛ս նույն տեղում, էջ 668:
[160] Նույն տեղում:

րում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց միայն մուսուլմանական զորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին՝ ես հայերին չեմ վստահում»[161]: Հիտլերի այդ մտավախությունը անհիմն չէր: Նա լավ հասկանում էր, որ հայ ժողովրդի մեջ դեռ թարմ էին 1915 թ. ողբերգական իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը Գերմանիայի անմիջական հովանավորությամբ ծրագրված իրագործեց Հայոց ցեղասպանությունը: Չնայած Հիտլերի մտավախությանը՝ գերմանական բանակի կազմում խորհրդային ռազմագերիներից ստեղծվեցին ազգային լեգեոններ: Անմիջապես նշենք, որ հայ լեգեոնականների մեծ մասը թշնամաբար էր տրամադրված գերմանացիների նկատմամբ և մտադիր չէր մարտնչել նրանց համար: Նրանց զգալի մասը գերմանացի զինվորի համազգեստ էր հագել՝ շատ թե քիչ մեղմելու ռազմագերու թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին՝ անցնելու ռազմաճակատի գիծը՝ միանալով կարմիր բանակին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, ռազմաճակատ փոխադրված գումարտակների անձնակազմերի մեծ մասը կա՛մ միացավ պարտիզաններին (այսպես կազմակերպվեց Ուկրաինայում Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կա՛մ անցավ ռազմաճակատի գիծը՝ շարունակելով մարտնչել կարմիր բանակի շարքերում: Իսկ լեգեոնականների այն գումարտակները, որոնք տեղափոխվեցին Ֆրանսիա, հիմք դարձան խորհրդային պարտիզանական առաջին գնդի կազմավորմանը: Նման կերպ վարվեցին նաև Հոլանդիա և Հունաստան տեղափոխված հայկական գումարտակները: Այսպիսով՝ հիտլերականների կողմից ստեղծված Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական վերմախտին, այլև դարձան խորհրդային պարտիզանական ջոկատների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմադրական շարժումների համալրման աղբյուրներ:

[161] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 669:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր արժանի ավանդն ունեցավ Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորությունը: Չնայած պարտիզանական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից անընդհատ ստացվող հարազատների բոթը գուժող «սև թղթերին»՝ Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն շարունակեցին իրենց գործունեությունը բոլոր արդյունաբերական ճեռնարկությունները, այլև շահագործման հանձնվեցին նորերը, այդ թվում՝ ավիացիոն, ժամացույցների, շարժիչների վերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակներ՝ 10 տեսակի զինամթերքի, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի արտադրությունները և այլն[162]:

1942 թ. հոկտեմբերից Երևանի N 447 գործարանը (հետագայում՝ Հայէլեկտրամեքենաշինական) սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանում արտադրվեցին «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր ու շասսի, որոնք ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին տարում N 447 գործարանը սկսեց «ՈՒՏ-2Մ» ինքնաթիռների սերիական արտադրությունը, որոնք տեղում փորձակվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ[163]:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալիորեն ավելացան: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը հնարավորություն տվեց հացի ներմուծումը հասցնելու նվազագույն չափերի: Ճեռնարկ-

[162] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 669:
[163] Տե՛ս նույն տեղում, էջ 670:

ված միջոցառումների շնորհիվ անասունների գլխաքանակը չնվազեց, անգամ ավելացավ կարմիր բանակի համար նախատեսված մսի ֆոնդը: Գյուղի աշխատավորության խնայողությունների հաշվին կառուցվեցին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը և «Սովետական Հայաստան» զրահագնացքը: Ընդհանրապես պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների խնայողությունների հաշվին ստեղծվեցին նաև «Զանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա», «Սովետական Հայաստան» տանկային շարասյուները, «Սովետական Հայաստան», «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլիաները և այլն [164]:

Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին հանրապետության գիտության, կրթության, արվեստի, գրականության, մշակույթի բնագավառների աշխատողները, այդ թվում՝ ԵՊՀ ուսանողները, դասախոսներն ու աշխատակիցները:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում զգալի ավանդ ունեցան ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում ռազմական արդյունաբերության և տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները: Ահա նրանցից մի քանիսի թվարկումը. Անաստաս Միկոյան՝ եղել է ՀամԿ /բ/ Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, ԽՍՀՄ կառավարության նախագահի տեղակալ, ղեկավարել է կարմիր բանակի, մատակարարման կազմակերպման գործը, Իվան Թևոսյան՝ ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, Արտեմ Միկոյան՝ «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորային բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր, Համո Յոլյան՝ N 92 հրետանային գործարանի տնօրեն, Ստեփան Ակոպով՝ ԽՍՀՄ մեքենաշինության ժողկոմ, Սուրեն Աղաջանով՝ N 21 ավիագործարանի տնօրեն, Պարույր Մաթևոսյան՝ Ստալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն, Բագրատ

[164] Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 670:

Հարությունով՝ ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ, Լևոն Օրբելի՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, Լենինգրադի, Ռազմաբժշկական ակադեմիայի պետ, Հովսեփ Օրբելին 1946 թ. մասնակցել է Նյուրնբերգի դատավարությանը որպես մեղադրող կողմի վկա և մերկացրել ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին բազում հայրենանվեր աշխատանքներ կատարած, հետագայում Խորհրդային Միության միջուկային և ջրածնային զենքի հիմնադիր Կիրիլ Իվանովիչ Շչոլկինին, նույն ինքը Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին, եռակի անգամ շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից մինչև նրա հաղթական ավարտը Խորհրդային Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենածանր պահերին և ամենուրեք մշտապես զգում էին թիկունքի աշխատավորության աջակցությունը՝ ստանալով նրանց նյութական ու բարոյական օգնությունը: Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում իրենց հերոսական սխրանքներով անմար փառք վաստակեցին հայ ժողովրդի բազմահազար զավակներ՝ որոշակի ավանդ ներդնելով բաղձալի հաղթանակի կովման գործում: Հայ ժողովուրդը գերազանց քննություն հանձնեց թե՛ թիկունքում և թե՛ ռազմաճակատում: Ահա այսպիսին է Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների մասնակցության խիստ համառոտ պատկերը, որը երբեք չի խամրի ժամանակի հոլովույթում:

Հայրենական մեծ պատերազմի օրերին, երբ ֆաշիստ բարբարոսները հարձակվեցին մեր հայրենիքի վրա, համալսարանի ամբողջ կոլեկտիվը վերակառուցեց իր աշխատանքները և ակտիվ կերպով մասնակցեց ֆաշիզմի լիակատար ջախջախման գործին: Պատերազմի հենց սկզբից համալսարանի 850 ուսանողներ և դասախոսներ մեկնեցին ճակատ: Նրանցից շատերը կատարեցին ռազմական մեծ սխրագործություններ: Համալսարանի դասախոսներից Սովետական Միության հերոսի կոչում ստացավ գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, իսկ ուսանողներից՝ Սուրեն Սարգսյանը: Հայրենական պատերազմի օրերին համալսարանի դասախոսներն սկսեցին էլ ավելի լուրջ զբաղվել գիտական աշխատանքով և լուծեցին մի շարք կարևոր գործնական և տեսական նշանակություն ունեցող խնդիրներ: Արտադրության մեջ ներդրվեցին տասը կարևոր նշնակություն ունեցող թեմաներ: Համալսարանի անվանի պրոֆեսորները իրենց կենդանի խոսքով և գրչով բացահայտում էին ֆաշիստական Գերմանիայի ավազակային քաղաքականությունը և երիտասարդ սերնդի մեջ ավելի արմատավորում սերը դեպի մեր Հայրենիքը:

Համալսարանում կազմակերպվեց Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, որը երկու տարվա բեղմնավոր աշխատանքից հետո անցավ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ցանցը: Կազմակերպվեցին և այժմ գործում են ԽՍՀՄ պատմության և Հայաստանում բնական գիտությունների պատմության գիտահետազոտական կաբինետները: 1942 թ. ստեղծվեցին քիմիական և ֆիզիկական մի շարք լաբորատորիաներ: Պատերազմի օրերին ավելի մեծ թափով սկսեցին աշխատել ուսանողական գիտական խմբակները, ավելի լայն ծավալվեցին ուսանողական գիտական կոնֆերանսները և համալսարանի գիտական սեսիաները: Մինչև այժմ համալսարանն ունեցել է 17 գիտական սեսիա:

1942-1943 թթ. ուսումնական տարվանից համալսարանում սկսեց գործել Երաժշտական լեկտորիումը:

Հրաչյա Բունիաթյան
ԵՊՀ ռեկտոր, 1946 թ.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԵՎ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից Երևանի պետական համալսարանն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ ռազմահայրենասիրական, զորահավաքային և թիկունքային աշխատանքներին: Մեծ հայրենականի նախօրեին մայր կրթօջախի բանասիրական, պատմության, իրավաբանական, տնտեսագիտական, կենսաբանական, քիմիական, երկրաբանական, աշխարհագրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում սովորում էին 1461 ուսանող, 68 ասպիրանտ, դասավանդում էր 19 պրոֆեսոր, 53 դոցենտ, 94 ավագ դասախոս և 54 ասիստենտ: 1941 թ. համալսարանն ուներ 41 ամբիոն[165]:

Պատերազմի առաջին իսկ օրերից, այնուհետև ողջ ընթացքում վերոնշյալ ֆակուլտետներից հարյուրավոր համալսարանականներ մեկնեցին գործող բանակ, ռազմաճակատ: Համալսարանում պարբերաբար գումարվում էին նիստեր, ժողովներ, ցույցեր, որտեղ ռեկտորատի ներկայացուցիչները և դասախոսները, իրենց ելույթներում հիշելով հայ ժողովրդի անցած պատմական ուղին, նրա մղած ազգային-ազատագրական շարժումների հերոսական էջերը, հայրենասիրական բոցաշունչ կոչերով կամավոր զինվորագրվում էին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին՝ այն համարելով քաղաքացիական պարտականություն և ազգային արժանապատվության գործ:

Համալսարանի ավագագույն դասախոսներ Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը և Հովհաննես Կարապետյանը 1941 թ. հուլիսի 3-ին «Սովետական Հայաստան» թերթում հանդես եկան հոդվածով, որտեղ գրում էին. «Գիտակցելով րոպեի մեծությունն ու լրջությունը՝ մենք էլ, չնայած մեր ծերացած հասակին, պատրաստ ենք մեր կա-

[165] Տե՛ս «Երևանի համալսարան», 1985, 9 մայիսի, N17-18, էջ 1:

ռավարության առաջին իսկ կոչին նետվել կռվի՝ ի սպաս դնելու մեր ուժերն ու գիտելիքները մեր լայնածավալ հայրենիքի համար»[166]:

Պատերազմ մեկնեցին համալսարանի պարետն ու դռնապանը, ամբիոնի վարիչն ու դեկանը, դասախոսն ու ուսանողը, ասպիրանտն ու ռեկտորը: 1941-1945 թթ. գործող բանակում եղան համալսարանի արական սեռի բոլոր այն քաղաքացիները, որոնք պարտավոր էին լինել այնտեղ: Ռազմաճակատ մեկնեց նաև համալսարանի այն ժամանակվա ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նույն զորամասում՝ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում, իր ճակատային ռազմական ծառայությունն անցկացրեց համալսարանի դասախոս և հետագա տարիների ռեկտոր Սկրտիչ Ներսիսյանը: Երկուսն էլ զորացրվել են միայն ծանր վիրավորվելուց հետո[167]:

Հայաստանը պատերազմի նախօրեին արդեն համատարած գրագիտության հանրապետություն էր և բանակ էր ուղարկում հիմնականում 18-40 տարեկան միջնակարգ և մասամբ բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիների: Ըստ էության, Հայրենական մեծ պատերազմը հայերի համար առավելապես մտավորականության պատերազմ էր: Այն ժամանակներում համալսարանը, բարձր մտավորականության եզակի կենտրոն լինելով, առաջին օրինակն էր ծառայում հայրենասիրական ու կառուցողական բոլոր ձեռնարկներում թե՛ պատերազմական, թե՛ հետպատերազմյան առաջին տասնամյակների ընթացքում:

Պատերազմի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորների՝ 390-րդ, 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաների, և դեռևս 1920-22 թթ. կազմավորված 76-րդ լեռնային հրաձգային դիվիզիայի, քաղաշխատողների, ինժեներական, համբարակային, քիմիական, կապի, մեխանիզացիոն և մյուս ծառայությունների միջին ու բարձր հրամկազմի մեջ ծանրակշիռ տեղ են ունեցել համալսարանի նախկին սաները:

---

[166] Երևանի պետական համալսարանի պատմությունից, էջ 67:

[167] Տե՛ս Հ. Բարսեղյան, Երևանի պետական համալսարանը 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, «Հանդես Երևանի համալսարանի», 1995, N2, էջ 16:

Միայն 1941 թ. տարբեր ռազմաճակատներ են մեկնել 360-ից ավելի ուսանողներ և դասախոսներ, իսկ պատերազմի հետագա չորս տարիների ընթացքում համալսարանի ճակատից մեկնել է ավելի քան 509 մարդ: Նրանցից շուրջ 300-ը զոհվել է հանուն հայրենիքի խաղաղ ու անվրդով կյանքի: Ռազմաճակատ մեկնած 869 համալսարանականներից 213-ը կոմունիստներ էին, իսկ 628-ը՝ կոմերիտականներ[168]:

Մինչև Հայրենական մեծ պատերազմը համալսարանի պատրաստած մեծ թվով մասնագետ կադրերը՝ շրջանավարտ ինժիներները, մեխանիկները, երկրաբանները, քիմիկոսները, ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները, ներգրավվել էին խորհրդային շինարարության բնագավառում՝ հասնելով լուրջ հաջողությունների: Նրանք ակտիվորեն շարունակեցին իրենց գործը նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Համալսարանն անգնահատելի աշխատանք կատարեց նաև հայրենական գիտության զարգացման ուղղությամբ: Պատերազմի նախօրյակին համալսարանի ամբիոններում ու լաբորատորիաներում մշակվեցին բազմաթիվ գիտակրթական հիմնախնդիրներ, կատարվեցին արժեքավոր հայտնագործություններ, որոնք ներդրվեցին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ: Համալսարանի քիմիական, ֆիզիկամաթեմատիկական, երկրագործական ֆակուլտետների ամբիոնները մշտական կապի մեջ են եղել հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների հետ և օգնել նրանց արտադրական գործընթացների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու, ժողովրդական տնտեսության ռեսուրսների ճշգրիտ հաշվարկներ կատարելու և արտադրական առօրյայում բազմաթիվ խնդիրներ լուծելու հարցերում: Համալսարանի հայագիտական ամբիոնները գիտական խոր ուսումնասիրություններ կատարեցին հայ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության բնագավառում:

Համալսարանի բազմաթիվ սաներ դարձան հանրապետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման

[168] Տե՛ս «Երևանի համալսարան», 1985, 9 մայիսի, N17-18, էջ 1:

գործի կազմակերպիչներ, կուսակցական ու պետական ապարատի ղեկավար աշխատողներ, իսկ նրա մեծ կոլեկտիվի անդամները՝ հանրապետության հասարակական կյանքի վերափոխման ակտիվ մասնակիցներ:

Երևանի պետական համալսարանը հանրապետության հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքի զարգացման գործում իր ակտիվ գործունեությունը շարունակեց նաև Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ կենաց ու մահու պայքարի ելավ ֆաշիզմի դեմ:

Պատերազմի առաջին իսկ ամիսներից ռազմաճակատներում մարտական գործողությունների ընթացքն անբարենպաստ եղավ կարմիր բանակի համար: Չնայած պաշտպանական հերոսական մարտերին և բազում սխրանքներին՝ 1941 թ. հուլիսին խորհրդային զորքերը հարկադրված թողեցին Լատվիան, Լիտվիան, Բելառուսիան և Ուկրաինայի մեծ մասը: Ստեղծված դժվարին իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր ամբողջ երկիրը մեկ մարտական ճամբարի վերածել՝ կենտրոնացնելով բոլոր ռեսուրսները:

«Ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով բանվորությունը թիկունքում կենտրոնացրեց աշխատանքային ողջ ներուժը՝ արդյունաբերությունը պատերազմի ժամանակաշրջանին համապատասխան վերակառուցելու համար: Գյուղացիությունը հայրենասիրական աշխատանք ծավալեց՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ընդարձակելու համար: Մտավորականությունը ջանքեր գործադրեց գիտական նորարարություններ կատարելու և դրանք ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու ուղղությամբ:

1941 թ. հուլիսից ԽՍՀՄ բոլոր ազգային հանրապետություններում հայրենասիրական մեծ շարժում սկսվեց: Բանվորները, կոլտնտեսականներն ու մտավորականները, ամենուրեք հայրենիքի նկատմամբ ջերմ սիրով տոգորված, իրենց վճռական պատրաստակամությունը հայտնեցին՝ այն թշնամուց պաշտպանելու համար: Հարյուր հազարավոր կամավորներ համալրեցին աշխարհազորի շար-

քերը: Միայն Մոսկվայի աշխարհազորում հաշվվում էր 100 հազար, Լենինգրադի աշխարհազորում՝ 160 հազար բանվոր ու ծառայող[169]:

Մոսկվացիների ու լենինգրադցիների օրինակով պատերազմի առաջին իսկ օրերից կամավոր կարմիր բանակ մեկնեցին և աշխարհազոր մտան նաև Հայաստանի հազարավոր բանվորներ, կոլտնտեսականներ, մտավորականներ, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդներ, կանայք ու աղջիկներ:

Պաշտպանության պետական կոմիտեի հրամանով 1941 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի տարածքում հանրապետության ուժերով ձևավորվեց հայկական երեք դիվիզիա: Այդ դիվիզիաներում ղեկավար աշխատանքի նշանակվեցին կուսակցական և կոմերիտական հարյուրավոր պատասխանատու աշխատողներ: Պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում դեսանտային զորամասերում ծառայելու համար հավաքագրվեց ավելի քան 500 կամավոր ու 1400 կոմերիտական: Երևանի Կիրովյան շրջանից, որտեղ զինվորական հաշվառման մեջ էր գտնվում ուսանող երիտասարդությունը, տարբեր ժամանակներում ռազմաճակատ մեկնեց 2000 կոմերիտական, Լենինական քաղաքից (Գյումրի)՝ կոմերիտականների երկու երրորդը, Կիրովականից (Վանաձոր)՝ կեսից ավելին[170]:

Պատերազմի առաջին իսկ օրերից հայրենասիրական մեծ շարժում սկսվեց մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ և պետական համալսարանում:

«1941 թ. հունիսի 22-ի ժամը տասներկուսն էր,– գրում է պրոֆեսոր Փ. Ենգոյանը,– համալսարանի միջանցքներում ընդհանուր լռություն էր տիրում: Ուսանողները ֆակուլտետներին ու ամբիոններին կից կաբինետներում քննությունների էին պատրաստվում: Հիշում եմ այսօրվա նման՝ ակադեմիկոս Մառի անվան կաբինետում պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողները կոնսուլտացիայի էին կանչվել: Այն անց էր կացնում պրոֆեսոր Վահան Ռշտունին, երբ մենք կլանված լսում էինք նրան, լացակումած ներս եկավ կաբինետի

[169] Տե՛ս **Փ. Ենգոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 8:
[170] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 3, թ. 1:

վարիչ Աստղիկ Խոնդկարյանը և հայտնեց, որ գիշերը ֆաշիստները ռմբակոծել են մեր քաղաքներն ու գյուղերը: Այս լուրի ազդեցության տակ բոլորս ոտքի կանգնեցինք և սպասեցինք պրոֆեսորի խոսքին: Նա իր բնավորության համաձայն հանգիստ դիմեց մեզ. «Ես բազմիցս անգամ լսել եմ ձեզանից ու ձեր ընկերներից, որ եթե հարկ լինի, դուք ձեր գրիչները կվոխարինեք զենքով և կպաշտպանեք սոցիալիստական հայրենիքը: Հասել է ժամը,– ասաց նա,– որ գործի վերածեք ձեր խոստումները»: Նրա պարտավորեցնող խոսքից հետո դուրս եկանք միջանցք: Մեկ-երկու րոպե անց անսովոր արագությամբ ուսանողները դուրս եկան նաև մյուս կաբինետներից: Ուսանողների հավաքը միջանցքում սովորականի նման չէր: Միմյանց նայելիս անմիջապես զգում էինք, որ բոլորս էլ փոխվել ենք, լրջացել, զգաստացել: Նույն օրը համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ միտինգ: Դահլիճում հավաքվածներին հաղորդում արվեց ֆաշիստական Գերմանիայի ոխստաղրուժ հարձակման, սահմանամերձ շրջաններում ֆաշիստների կատարած առաջին բարբարոսությունների, մեր քաղաքների ու գյուղերի ռմբակոծությունների մասին, մեր խնդիրների ու հետագա անելիքների մասին: Հուզումնալից էր, երբ կոլեկտիվի անդամները՝ ուսանող թե դասախոս, հերթով մոտենալով ամբիոնին, հայրենասիրական ճառերով ու կոչերով հավաստիացրին կուսակցությանն ու կառավարությանը, որ արյան գնով կպաշտպանեն խորհրդային հայրենիքը, սոցիալիզմի նվաճումները, որոնց վրա ձեռք է բարձրացրել անարգ թշնամին: Առանձնապես տպավորիչ էին պատմաբան-դասախոսներ Ներսես Պողոսյանի, Սերոբ Պողոսյանի, Համո Հարությունյանի, համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի, կուսկոմիտեի քարտուղար Դավիթ Դավթյանի և ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանի ելույթները: Նրանք կոչ արեցին պաշտպանելու հայրենիքը այնպես, ինչպես պաշտպանել են մեր նախնիները դեռևս շատ դարեր ու տարիներ առաջ գերմանական օրդենների, շվեդների, մոնղոլ-թաթարների, սելջուկների, արաբների, պարսկական խաների ու թուրքական փաշաների արշավանքների

ժամանակ»[171]:

Շարունակելով իր խոսքը՝ Փ. Ենգոյանը հիշում է. «Դիմելով ուսանող երիտասարդությանը՝ պատմության ֆակուլտետի դեկան Ներսես Պողոսյանն ասաց. «Ձեր սրբազան պարտքն է մեզ հետ միասին պաշտպանել Հոկտեմբերյան հեղափոխության ձեռքբերումները, սոցիալիզմ կառուցող ավագ սերնդի աշխատանքի ու պայքարի արդյունքները: Հիշեք պատմության տված դասերը այն մասին, որ գաղտագողի հարձակվող թշնամին ավելի նենգ է ու կատաղի»[172]:

Հունիսի 23-ին համալսարանի մի խումբ ուսանող երիտասարդներ, այդ թվում՝ և աղջիկներ, գնացել են զինվորական կոմիսարիատ և հարցում արել, թե երբ կարող են մեկնել կարմիր բանակ կամ կարող են ցուցակագրվել կամավորական ջոկատներում: Մեկ օր անց պատմության, երկրաբանական, իրավաբանական ֆակուլտետների ուսանողներից բաղկացած մի խումբ ներկայացել է զինկոմիսարիատ և խնդրել զինկոմ գնդապետ Բիլբուլյանին իրենց ժամանակից շուտ ուղարկել բանակ: Կոմիսարը հատուկ գրությամբ շնորհակալություն է հայտնել համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանին ուսանողների կողմից ցուցաբերած հայրենասիրության համար և խնդրել է բացատրել նրանց, որ բանակ զորակոչելու հարցը կորոշի կոմիսարիատը՝ ըստ անհրաժեշտության[173]:

«Արձակուրդը սկսվել էր,– գրում է Փ. Ենգոյանը,– բայց ուսանողները դեռ չէին ուզում մեկնել իրենց ծննդավայրերը: Հուլիսի սկզբին նրանց ներկայացուցիչները եղան կուսակցական կոմիտեում ու խնդրեցին զինվորական կոմիսարիատի միջոցով արտահերթ զորահավաք կազմակերպել և իրենց ուղարկել գործող բանակ: Կուսակցական կոմիտեն այդ առթիվ ստացավ շրջանային կոմիսարի համաձայնությունը, և համալսարանի ուսանողական առաջին կամավորական խումբը մայրաքաղաքի մյուս հայրենասերների հետ միասին մեկնեց կարմիր բանակ»[174]:

---

[171] **Փ. Ենգոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 9-10:
[172] Նույն տեղում, էջ 10:
[173] Տե՛ս նույն տեղում, էջ 11:
[174] Տե՛ս նույն տեղում:

1941 թ. հուլիսի 11-ը համալսարանի ուսանողների համար նշանավոր օր դարձավ: Այդ օրը նրանք Երևանի երկաթուղային կայարանում հայ ժողովրդի հարյուրավոր այլ զավակների հետ բանակ ուղարկեցին իրենց ընկերներին, նրանց թվում՝ Պարույր Առաքելյանին, Դրաստամատ Ավագյանին, Մխիթար Սկրտչյանին, Վահրամ Պետրոսյանին, Հրաչիկ Պառավյանին, Վիկտոր Սարգսյանին, Վոլոդյա Սարգսյանին, Միշա Երիցյանին, Գարուշ Մնացականյանին, Գագիկ Մովսիսյանին, Բագրատ Նալբանդյանին[175]:

Մեկնելուց առաջ պատմության ֆակուլտետի ուսանողներ Դրաստամատ Ավագյանը և Բարդուխ Գևորգյանը, որոնք մինչ այդ ծառայել էին բանակում, իրենց ուսանող ընկերներին դիմեցին հետևյալ խոսքով. «Ինչպես տեսնում եք, մենք արդեն զինվորագրվեցինք կարմիր բանակին: Հեռանալով ձեզանից՝ մենք ցանկանում ենք, որ հաղթանակը թշնամու դեմ տանենք առանց ձեզ, իսկ դուք ծառայեք հայրենիքին խաղաղ աշխատանքով»[176]:

Հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, համալսարանում հրավիրվեց ուսանողական հավաք, որտեղ քննարկվում էր բերքահավաքի ժամանակ գյուղի աշխատավորությանը օգնելու հարցը: Հավաքում որոշում ընդունվեց մեկնելու գյուղական շրջանները՝ ըստ բնակավայրերի, և փոխարինել բանակ մեկնած կոլտնտեսականներին: Մի քանի օրվա ընթացքում ուսանողները մեկնեցին հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները:

1941 թ. ամառային արձակուրդները սովորականի նման չանցան: Գրեթե նույն լարվածությամբ ամառային ամիսներին շարունակեցին աշխատել համալսարանի կուսակցական և վարչական անձնակազմը, ԼԿԵՄ և արհմիութենական կոմիտեները: Համալսարանի կուսակցական և կոմերիտական ակտիվիստները քաղաքից բացակայում էին միայն շրջանային կոմիտեի թույլտվությամբ, իսկ ամբիոնի վարիչները, դեկաններն ու ռեկտորատի աշխատողները՝ ռեկտորատի թույլտվությամբ:

---

[175] Տե՛ս **Փ. Եզոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 11:
[176] Նույն տեղում, էջ 11-12:

Պատերազմը լուրջ փոփոխություններ առաջացրեց համալսարանի ներքին կյանքում, աշխատանքները վերակառուցվեցին պատերազմական ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Այդ ժամանակահատվածում ժողովրդական տնտեսության համար պետք էին բարձրագույն կրթությամբ այնպիսի կադրեր, որոնք հարկ եղած դեպքում կարող էին դառնալ սպաներ ու զինվորներ, ռազմական գործի լավագույն կազմակերպիչներ:

1941 թ. ամռան երկու ամիսների ընթացքում համալսարանի ռեկտորատը և կուսակցական կոմիտեն, վերադաս օրգանների ցուցումների համաձայն, վերանայեցին ուսումնական ծրագրերն ու դասաժամերը, ավելացրին ռազմագիտության ուսուցման ժամերը: Համալսարանի ծավալով մշակվեց կոլեկտիվի անդամների ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների ծրագիր:

1941 թ. համալսարանի ուսանողներն ու դասախոսները սովորականից 10 օր շուտ վերադարձան ամառային արձակուրդներից: Նրանցից ամեն մեկը զեկույց ներկայացրեց ռեկտորատին, կուսակցական և ԼԿԵՄ կոմիտեներին՝ բերքահավաքի ժամանակ կոլտնտեսություններում ու սովխոզներում կատարած աշխատանքի մասին: Ֆիզիկամաթեմատիկական և պատմության ֆակուլտետների մի քանի ուսանողներ իրենց զեկույցները համալսարան ուղարկեցին Ղարաբաղից կամավոր հիմունքներով բանակ մեկնելուց առաջ: Նամակներից մեկում, որը հասցեագրված էր կուսակցական և ԼԿԵՄ կոմիտեներին, ասված էր. «Սիրելի՛ ընկերներ, մենք սիրով կատարեցինք ձեր հանձնարարությունը, ամառային գրեթե բոլոր օրերին մասնակցեցինք դաշտային աշխատանքներին, փոխարինեցինք ռազմաճակատ մեկնած կոլտնտեսականներին և առատ բերք հավաքեցինք: Երբ մոտենում էր համալսարան վերադառնալու օրը, ականատես եղանք, թե ինչպես մեր շրջանի երիտասարդները մեկնեցին կարմիր բանակ: Մենք նույնպես որոշեցինք մեկնել նրանց հետ հայրենի օջախից, իսկ զեկույցները՝ փոստով ուղարկել ձեզ: Կարծում ենք, որ բախտ կվիճակվի մեզ հաղթանակից հետո վերադառնալ սիրելի հա-

մալսարան և գրկախառնվել ձեզ հետ»[177]:

Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեն նման երկու նամակ ստացավ Ախալքալաքի Բոգդանովկայի շրջանից: Դրանք գրել էին համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող Վահրամ Սարգսյանը և տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող Հրաչիկ Զաքարյանը: Վահրամ Սարգսյանի նամակում ասված էր. «Մեր գյուղում դաշտային աշխատանքները հիմնականում ավարտվեցին: Համոզված եմ, որ իմ կողմից կատարած աշխատանքը գոհացրել է կոլտնտեսության ղեկավարությանը: Այդ մասին նրանք կգրեն ձեզ: Երբ մոտենում էր համալսարան վերադառնալու օրը, ես նույնպես որոշեցի մեկնել բանակ իմ մանկական ընկերների հետ: Որոշումս թաքցրի ծնողներիցս և խնդրեցի զինկոմին գյուղի ընկերների հետ միասին բանակ ուղարկել նաև ինձ: Նա սկզբից մերժեց, բայց երբ համոզվեց, որ ես պնդում եմ իմ խնդրանքը, համաձայնեց, և ես մեկնեցի: Նամակս գրում եմ ճանապարհից, մնաք բարով, համբուրում եմ բոլորիդ, իմ սիրելի ընկերներ և ուսուցիչներ»[178]:

Վ. Սարգսյանի բանակ մեկնելուց մեկ շաբաթ անց համալսարանի ԼԿԵՄ կոմիտեն Բոգդանովկայի շրջանի գյուղբաժնից մի շնորհակալագիր ստացավ նրա ցուցաբերած հայրենասիրության համար: Վերոհիշյալ բոլոր նամակները հրապարակվեցին համալսարանի ընդհանուր ժողովում, որը հրավիրվել էր այդ նպատակով:

1941 թ. օգոստոսի վերջին համալսարանի ուսումնական շենքն ու հանրակացարանները նորից լեփ-լեցուն էին ուսանողներով ու դասախոսներով: Օգոստոսի 30-ին համալսարանում ուսանողության և դասախոսական կազմի ժողով տեղի ունեցավ: Ժողովում զեկուցումով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանը: Նա իր զեկուցման մեջ շարադրեց նոր ուսումնական տարում համալսարանի ռեկտորատի, կուսակցական ու հասարակական կազմակերպությունների և դասախոսական կազմի անելիքները, ուսումնադաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները և

[177] **Փ. Ենգոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 13:
[178] Նույն տեղում:

կաղրերի պատրաստման գործում պատերազմական ժամանակաշրջանում առաջադրվող նոր խնդիրները: Ժողովում տրված զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն: Ելույթ ունեցող ուսանողները պարտավորվեցին սովորել բարձր առաջադիմությամբ, միաժամանակ ակտիվորեն մասնակցել համալսարանում ու մայրաքաղաքում կազմակերպվող ռազմապաշտպանական միջոցառումներին, տիրապետել ժամանակակից ռազմական գիտության նվաճումներին: Դասախոսներն իրենց պարտքը համարեցին ուժեղացնել ռազմահայրենասիրական, գաղափարական-դաստիարակչական աշխատանքը՝ ուսանող երիտասարդության մեջ արմատավորելով թշնամուն հաղթելու կամք ու համոզվածություն: Ժողովի ընդունած որոշման մեջ ընդգծվեց, որ կոլեկտիվը մինչև վերջ կկատարի կուսակցության ու կառավարության առաջադրանքները:

Ժողովի վերջում ճայն խնդրեց ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանը: Բոլորը ճանաչում էին նրան որպես կրակոտ ու անսպառ եռանդի տեր երիտասարդի: Ամբիոնից նա հրապարակեց համալսարանից ռազմաճակատ մեկնած իր ընկերների նամակները՝ ուղղված ողջ ուսանողությանն ու դասախոսական կազմին: Առանձնապես մեծ տպավորություն գործեցին երկրաբանական ֆակուլտետի ուսանող Սասունիկ Գրիգորյանի և պատմության ֆակուլտետի ուսանող Մուշեղ Սաֆարյանի նամակները: Համալսարանի սաները դասընկերներին ու դասախոսներին հավաստիացնում էին, որ իրենք կարմիր բանակի շարքերում կկռվեն ու կպայքարեն հայրենասիրաբար և բարձր կպահեն սիրելի համալսարանի պատիվն ու հեղինակությունը: Շատ հուզիչ էր Գրիգորյանի նամակի ավարտական մասը. «Սիրելի՛ Պետիկ, ինչպես գիտես, ես ծնողներիս միակ տղան եմ: Այլևս նրանց մոտիկից մխիթարելու և ուրախություն պատճառելու հնարավորություն չունեմ: Չնայած նրանք ուրախալից նամակներ են գրում ինձ, բայց ներքուստ հասկանում եմ, որ դա նրանց վիճակի իսկական պատկերը չէ: Խնդրում եմ, ընկերների հետ հաճախակի այցելեք նրանց և մխիթարեք իմ փոխարեն: Ես հավատով լցված եմ մեր հաղթանակի նկատմամբ, բայց թե կվիճակվի՞ ինձ վերադառնալ և նորից գրկախառնվել նրանց հետ, դժվարանում եմ ասել: Եթե հազա-

րավոր եղբայր ռազմիկների հետ ընկնեմ ռազմադաշտում, իմացեք որ նրանք կընդունեն ձեզ իմ փոխարեն»[179]:

Հաջորդ օրը՝ առավոտյան, երկրաբանական և աշխարհագրական ֆակուլտետի ուսանողները, որոնք ապրում էին հանրակացարանում, այցելության գնացին Սասունիկ Գրիգորյանի ծնողներին՝ թաքցնելով նրանցից իրենց որդու գրած նամակի բովանդակությունը: Հետևելով նրանց օրինակին՝ օգոստոսի 31-ին ուսանողները նման այցելություններ կազմակերպեցին կարմիր բանակ մեկնած այն ընկերների ծնողներին, որոնք ապրում էին Երևանում: Այդ օրը համալսարանի բոլոր ուսանողների հիշողության մեջ մնաց որպես այցելությունների օր՝ ի պատիվ իրենց հայրենասեր ընկերների ու նրանց ծնողների:

1941 թ. սեպտեմբերի մեկին՝ վաղ առավոտյան, հարազատ համալսարանը նորից բացեց դռներն իր սաների առաջ: Այդ օրը դասախոսները նախօրոք հանճնարարություն էին ստացել պարապմունքի առաջին մեկ ժամվա ընթացքում հաղորդումներ անելու բուհերի վերաբերյալ կուսակցության և կառավարության նոր առաջադրանքների մասին՝ պայմանավորված երկրի պատերազմական վիճակով, նաև պարզաբանելու համալսարանում անցկացվելիք ռազմահայրենասիրական միջոցառումները:

Անցան ուսումնական տարվա առաջին երկու շաբաթները: Սեպտեմբերի 16-ին հրավիրվեց համալսարանի կուսակցական և կոմերիտական ակտիվի միացյալ նիստ: Հրապարակվեց ՀԿԿ կենտկոմի որոշումը՝ բոլոր հիմնարկներում աշխարհազոր կազմակերպելու մասին: Այդ որոշման մեջ ասված էր, որ պատերազմի ժամանակաշրջանում հանրապետության կուսակցական ու հասարակական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկն էլ այն է, որ նրանց ջանքերով քաղաքներում, գյուղերում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ձեռնարկություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեն ժողովրդական աշխարհազորներ և նրանց միջոցով ամեն կերպ զարկ տրվի աշխատավո-

[179] **Փ. Ենգոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 15:

րության ռազմական ուսուցմանը:

Համալսարանի կուսակցական ակտիվի նիստը որոշեց ստեղծել աշխարհազորային վաշտեր, հրամանատարներ նշանակել զինվորական գործն իմացող սպաների, իսկ քաղաքացիական գծով տեղակալներ՝ կուսակցական կոմիտեի և ֆակուլտետային բյուրոների քարտուղարներին[180]: Ակտիվի նիստի որոշմամբ համալսարանի աշխարհազորի ընդհանուր հրամանատար նշանակվեց ռազմական ամբիոնի դասախոս, լեյտենանտ Արտիկ Միքայելյանը, իսկ կոմիսար՝ առաջին քարտուղար Դավիթ Դավթյանը: Աշխարհազորերում ուսանողության ու դասախոսական կազմի ռազմապաշտպանական ուսուցման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանի վրա:

1941 թ. սեպտեմբերի 17-ին համալսարանի բակում հավաքվեցին բոլոր դասախոսները, վարչական համակարգի աշխատողներն ու ուսանողները: Տեղում, ըստ ֆակուլտետների, նշանակվեցին դասակների հրամանատարներ ու քաղաքացիական գծով նրանց տեղակալներ: Աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը աշխարհազորականներին ծանոթացրեց ռազմապաշտպանական ուսուցման ծրագրերին և հրապարակեց պարապմունքների կայուն օրերն ու ժամերը: Եվ, այսպես, սեպտեմբեր ամսից մասնագիտական ուսուցմանը զուգընթաց սկիզբ դրվեց կոլեկտիվի անդամների ռազմական ուսուցմանը: Աշխարհազորի ընդհանուր ծրագրին համապատասխան՝ ուսումնասիրվում էին ռազմավարության ու մարտավարության, ժամանակակից զենքի ու պատերազմի տեսակների և պրակտիկ մարտավարական վարժությունների հարցեր:

Համալսարանի աշխարհազորայինները ակտիվորեն մասնակցում էին նաև մայրաքաղաքի տարբեր մասերում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կառույցներին:

Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի որոշման համաձայն՝ ՀԿԿ կենտկոմը տեղական կուսկազմակերպություններին հանձնարարեց կարևոր արդյունաբերական ձեռնարկություն-

[180] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 4, թ. 28:

ներում կազմակերպել զինված պաշտպանության գործը, ռազմավարական կարևորագույն հաղորդակցություններում, քաղաքներում և այլ բնակավայրերի մատույցներում կառուցել հակաօդային կրակակետեր, հակատանկային արգելքներ, խրամատներ և պաշտպանական այլ հենակետեր[181]: Այդ ամբողջ աշխատանքը պետք է կատարվեր բնակչության ուժերով և միջոցներով:

Կատարելով ՀԿԿ կենտկոմի հանձնարարությունը՝ համալսարանի աշխարհազորայինները իրենց ուժերով խրամատներ ու հակատանկային արգելակներ կառուցեցին Նորքում, Քանաքեռի շրջակայքում և մասնակցեցին մայրաքաղաքի կարևոր ձեռնարկությունների շրջակայքում ռազմապաշպանական նշանակություն ունեցող կառույցների շինարարությանը: Աշխարհազորային պարապմունքները հաջող կազմակերպելու և մայրաքաղաքի ռազմապաշտպանական կառույցներին ակտիվորեն մասնակցելու համար 1941 թ. հոկտեմբերին համալսարանի կոլեկտիվը շնորհակալագիր ստացավ Երևանի կայազորի հրամանատարի կողմից: Շնորհակալագիրը ստանալիս աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը հավաստիացրեց, որ այսուհետև աշխարհազորում ռազմական ուսուցումը կկազմակերպվի այնպես, որ ամեն մի աշխարհազորական դասախոս թե ուսանող դառնա պատրաստի մարտիկ: Եվ իրոք, գործող բանակ մեկնած բազմաթիվ համալսարանականներն ընկերներին գրած նամակներում հիշատակում էին, որ աշխարհազորի պարապմունքների ժամանակ իրենց ռազմական գիտելիքները շատ օգտակար են եղել ռազմադաշտում:

1941 թ. համալսարանում կազմակերպվեցին ուսանողուհիների բժշկասանիտարական՝ բուժքույրական դասընթացներ: Ուսանողուհիները սովորում էին բժշկագիտական ընդհանուր հիմունքներ, հիվանդներին ու վիրավորներին առաջին բուժօգնություն ցույց տալու ձևերն ու մեթոդները: Օրական մի քանի ժամ դասախոսություններ լսելուց հետո դասընթացի ունկնդիրները գործնական պարապմունքներ անցկացրին զինվորական հիվանդանոցներում (հոսպիտալնե-

[181] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 11, 12:

րում): Նրանցից ամեն մեկը սովորաբար շաբաթական 1-2 օր պարտաղիր կարգով հերթապահում էր հոսպիտալներում: Բուժքույրական դասընթացների առաջին շրջանավարտների (1941 թ. սեպտեմբեր) մի մասը ծառայության մեկնեց հանրապետության հիվանդանոցներն ու հոսպիտալները, իսկ մյուս մասը՝ տարբեր ռազմաճակատներ: Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի 1941 թ. հաշվետու զեկուցման մեջ նշվում էր, որ բուժքույրական դասընթացները սովորել և բուժսանիտարական ծառայության է մեկնել 180 աղջիկ[182]: Բուժքույրական դասընթացները համալսարանում գործեցին մինչև 1944 թվականը:

1941 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին թիկունքային բնակչության ռազմական ուսուցման խնդիրն ավելի սրությամբ դրվեց: Պաշտպանության պետական կոմիտեն տեղական կուսակցական ու խորհրդային իշխանություններին հանձնարարություն տվեց բնակչության ռազմական ուսուցումը համարելու ժամանակի հրամայական խնդիր և անելու ամեն ինչ՝ այն կատարելու համար: Երկրի բարձրագույն իշխանության այդ առաջադրանքը պայմանավորված էր 1941 թ. աշնանը ռազմաճակատում և թիկունքում ստեղծված ծանր դրությամբ: Ֆաշիստական Գերմանիան, օգտագործելով իր գերազանց ռազմական ուժերը, արագությամբ խորանում էր ԽՍՀՄ տարածքն ու մոտենում Մոսկվային: Պաշտպանության պետական կոմիտեի ցուցումով Մոսկվայի ամբողջ բնակչությունը ոտքի ելավ՝ հայրենի քաղաքը պաշտպանելու:

Հոկտեմբերի վերջին ֆաշիստական հրոսակախմբերը Մոսկվայի մոտ, Կալինինո-Վոլոկամսկ, Նարո-Ֆոմինսկ ճակատում և Տուլայի մատույցներում սկսեցին իրենց վճռական հարձակումները: Այդ ժամանակամիջոցում Ղրիմում ճեղքեցին Պերեկոպի պարանոցը և սկսեցին պաշարել Սևաստոպոլը: Լենինգրադը շրջափակման ենթարկելու նպատակով ֆաշիստական զորքերն անցան Վոլխովի արևելյան ափը և մտան Տիխվինի շրջանը: Թշնամին հարձակման նախաձեռնությունը պահում էր իր ձեռքը: Երկիրն ապրում էր ահեղ օրեր:

[182] Տե՛ս **Փ. Եղոյան,** Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, էջ 16:

Հայրենիքը փրկելու համար հարկավոր էր ուժերի բացարձակ գերակշռություն ձեռք բերել թշնամու նկատմամբ: Բոլոր ազգային հանրապետությունների աշխատավորները կուսակցության Կենտկոմի և Պաշտպանության պետական կոմիտեի ցուցումներով «Ամեն ինչ Մոսկվայի ու Լենինգրադի պաշտպանության համար» կարգախոսներ առաջադրեցին: Մոսկվայում տեղի ունեցած ճակատամարտերի օրերին հայրենասիրական շարժման նոր ալիք սկսվեց: Ինչպես մյուս հանրապետությունների, այնպես էլ Հայաստանի հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները իրենց ժողովներում քննարկեցին Պաշտպանության պետական կոմիտեի որոշումը՝ Մոսկվան պաշարողական դրության մեջ հայտարարելու մասին, և պարտավորվեցին երկու հերոս քաղաքների համար մարտնչող խորհրդային զորամասերին համալրումներ, հանդերձանք և պարենային մթերքներ ուղարկել:

ՀԿԿ կենտկոմի ցուցումով 1941 թ. աշնանը հանրապետության կոմունիստների և կոմերիտականների մեջ նոր թափով շարժում ծավալվեց՝ կամովին բանակ մեկնելու և խորհրդային հայրենիքի մայրաքաղաքի պաշտպանությանը մասնակցելու համար: Կենտկոմի կոչին առաջինը արձագանքեցին Երևանի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները: 1941 թ. հոկտեմբերի վերջին համալսարանի կուսակցական և կոմերիտական մի խումբ ակտիվիստներ ՀԿԿ Կիրովյան շրջկոմի քարտուղար Հայկ Մելքոնյանի և շրջանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Բիլբուլյանի հետ կանչվեցին ՀԿԿ կենտրոնական կոմիտե: Երեկոյան 23:00-ին նրանց ընդունեց Կենտկոմի քարտուղար Սուրեն Սիքայելյանը: Նա Կենտկոմի անունից հանձնարարություն տվեց համալսարանականներին՝ կամավորական շարժում սկսելու ղեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար: 24:00-ին համալսարանի ակտիվիստները, վերադառնալով Կենտկոմ, խորհրդակցեցին իրենց հետագա անելիքների մասին: Ծրագրեցին ուսանողական ընդհանուր ժողով հրավիրելուն առնչվող հարցերը, և այդ մասին զեկուցվեց շրջկոմի քարտուղար Հայկ Մելքոնյանին:

Հաջորդ օրը՝ դասերից հետո, համալսարանի կուսակցական կոմիտեում հրավիրվեց կուսակցական ու կոմերիտական ղեկավար աշխատողների խորհրդակցություն: Այն վարում էր կուսկոմիտեի քարտուղար Դավիթ Դավթյանը: Նա ակտիվիստներին բացատրում էր Կենտկոմից ստացված առաջադրանքները և դրանք կատարելու համար նախապես մշակված միջոցառումները: Որոշվել էր, որ առաջինը հանդես գան ակտիվիստները, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների քարտուղարները, ԼԿԵՄ կոմիտեի և ԼԿԵՄ բյուրոների անդամները:

Երեկոյան՝ ժամը 19:00-ին, համալսարանի մեծ դահլիճում հրավիրվել է ուսանողական ընդհանուր ժողով, որտեղ ընդարձակ զեկուցումով հանդես է եկել համալսարանի աշխարհազորի հրամանատար Արտիկ Միքայելյանը: Հայրենասեր այդ զինվորականն իր ազդեցիկ ելույթով այն աստիճան է ոգևորել ժողովականներին, որ զեկուցումից հետո դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար դիմումների տարափ է տեղի ունեցել: Կուսկոմիտեում տեղի ունեցած խորհրդակցության որոշման համաձայն՝ առաջինը հանդես են եկել համալսարանի պատմության ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղար, կուսկոմիտեի անդամ Փայլակ Ենգոյանը, ԼԿԵՄ կոմիտեի անդամ Կիմ Խաչատրյանը, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Պետիկ Փիրումյանը, ԼԿԵՄ կոմիտեի անդամ Վահագն Ներսիսյանը, Հարություն Խալաթյանը: Նրանց կոչերին արձագանքել են պատմության ֆակուլտետից Գուրգեն Մխիթարյանը, Արտաշես Մուրադյանը, Գևորգ Աբովյանը, Ստեփան Վարդանյանը, բանասիրական ֆակուլտետից՝ Հարություն Մկրտչյանը և շատ ու շատ ուրիշներ: Ժողովում դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար կամավոր հիմունքներով ցուցակագրվել է շուրջ 150 ուսանող: Պատմության ֆակուլտետի ուսանողուհի Արաքսյա Մելքոնյանը, իր ելույթում բարի ճանապարհ մաղթելով կամավորներին, միաժամանակ ուսանողուհիների անունից հավաստիացրել է ՀԿԿ կենտկոմին, որ իրենք նույնպես պատրաստ են կռվելու անարգ թշնամու դեմ:

Ժողովի վերջում համալսարանականները մի կոչով դիմել են

հանրապետության բուհերի ուսանող երիտասարդությանը՝ հետևելով նրանց օրինակին զինվորագրվել կամավորական շարժմանը: Կոչի մեջ նշված էր. «Մենք՝ համալսարանի ուսանողներս, հասակ ենք առել ու մեծացել խորհրդային իշխանության հետ միասին, մեծացել նրա արևի տակ, ստացել նրա մայրական գուրգուրանքը, հիմա էլ պատրաստ ենք մարտնչել նրա համար գոռոզ թշնամու դեմ: Մենք լցված ենք հաղթանակի համոզմունքով, ժամանակավորապես կթողնենք սիրելի համալսարանը: Եթե մեզանից ոմանք իրենց կյանքը զոհաբերեն ռազմաճակատներում, ապա դա էլ կլինի հանուն հայրենիքի, ուր ապրում են մեր հայրերը, մայրերը, եղբայրներն ու քույրերը»[183]:

Կոչում նշվել է նաև այն, որ համալսարանի կոլեկտիվի ավագ անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել խորհրդային կարգերի հաստատմանը և սոցիալիզմի կառուցմանը: Իսկ երիտասարդները, ուսանող կոմերիտականները պարտավորվել են արյան գնով պաշտպանել նրանց աշխատանքով ու պայքարով ձեռք բերված նվաճումները, որոնք ցանկացել է խլել ու ոչնչացնել անարգ թշնամին՝ գերմանական ֆաշիզմը:

Համալսարանականների կոչը մեծ արձագանք է գտել մայրաքաղաքի ուսանողության շրջանում: Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, անասնաբուժական-անասնաբուծական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական և բժշկական ինստիտուտների հարյուրավոր ուսանողներ կամավոր հիմունքներով զինվորագրվել են՝ դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար: 1942 թ. սկզբին ՀամԼԿԵՄ կենտկոմի ռազմական բաժնի տրամադրության տակ է ուղարկվել վերջին խումբը, որի կազմում էին նաև համալսարանի կուսակցական ու կոմերիտական ակտիվիստները:

Պատերազմի առաջին տարում հերթական զինակոչերով և կամավոր հիմունքներով համալսարանից կարմիր բանակ են մեկնել մոտ 360 ուսանողներ, դասախոսներ և վարչատնտեսական աշխա-

[183] **Փ. Ենգոյան**, նշվ. աշխ., էջ 21, 22:

տողներ: Նրանց մի մասը, որ մինչ այդ ծառայել էր կարմիր բանակում և տիրապետում էր ռազմական տեխնիկային, մեկնել է գործող բանակ, մյուս մասը՝ ռազմական դասընթացներում կարճատև ուսուցման՝ հրամկազմը համալրելու նպատակով: Համալսարանի բազմաթիվ դասախոսներ ղեկավար պաշտոնների են նշանակվել հայկական դիվիզիաներում և իրենց ուսանող սաների հետ մարտնչել ռազմաճակատներում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համալսարանականները եղել են Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, ծառայել են ցամաքային, ծովային և օդային զորամասերում: Պարգևատրվել են Խորհրդային Միության բազմաթիվ ու բազմապիսի շքանշաններով ու մեդալներով, նրանցից երկուսը ստացել են Խորհրդային Միության հերոսի կոչում:

Պատերազմի երկրորդ տարում՝ 1942 թ., դրությունը ռազմաճակատներում կարմիր բանակի համար մնացել է չափազանց ծանր ու լարված: Ֆաշիստական զորքերը Մոսկվայից ընդամենը 120 կմ հեռավորության վրա են գտնվել՝ շարունակելով հարձակումները: Մերձբալթիկան, Բելառուսիան, գրեթե ամբողջ Ուկրաինան օկուպացվել են թշնամու կողմից: Չնայած ֆաշիստական զորքերին չի հաջողվել գրավել Լենինգրադը, բայց շրջափակման են ենթարկել այն: Կարմիր բանակը հերոսաբար դիմադրել է ու մարտնչել: Ամբողջ խորհրդային ժողովուրդը ամեն ջանք գործադրել է՝ վճռական բեկում մտցնելու պատերազմի ընթացքի մեջ:

Թիկունքի աշխատավորներն իրենց աշխատանքային հերոսությամբ բոլոր բնագավառներում սոցիալիստական մրցություն ծավալեցին՝ սպառազինման, ռազմական պարենի և ռազմական այլ նյութերի թողարկումն ավելացնելու համար: Բանվոր դասակարգի հայրենասիրական և հերոսական աշխատանքի շնորհիվ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության ռազմական վերակառուցումն ավարտվեց ժամանակին: Երկրի խոր թիկունքում էվակուացված ձեռնարկությունների վերակառուցմանը զուգահեռ ծավալվեց նոր գործարանների, հանքահորերի, էլեկտրակայանների շինարարությունը: 1942 թ.

երկրորդ կեսին ռազմական արդյունաբերությունը ոչ միայն վերականգնվեց, այլև ավելի հզորացավ:

Ռազմաճակատի և թիկունքի պահանջները բավարարելու համար անձնուրաց աշխատեցին երկրի գյուղատնտեսության և տրանսպորտի աշխատողները՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու և ռազմաճակատի ու թիկունքի անխափան սպասարկումը կազմակերպելու համար:

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին երկրի տնտեսական ու ռազմական հզորությունը բարձրացնելու համար իր ուժերը համախմբեց նաև հայ ժողովուրդը: Պաշտպանության պետական կոմիտեի հրահանգների համաձայն՝ 1942 թ. Հայաստանի արդյունաբերությունը վերակառուցվեց և ռազմաճակատի կարիքների համար արտադրեց զենք, զինամթերք, զինվորական հանդերձանք, ռազմական գույք և այլն: Պատերազմի առաջին երկու տարում ռազմաճակատի ու թիկունքի համար թողարկվեց արտադրանքի 270 նոր տեսակ[184]: Պաշտպանական նշանակություն ունեցող կարևոր արտադրանքի թողարկում կազմակերպվեց Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում, Լենինականի, Ղափանի, Ալավերդու ձեռնարկություններում: 1942 թ. սկզբներին Պաշտպանության պետական կոմիտեի կողմից որոշակի առաջադրանքներ ստացան հանրապետության թեթև և պարենային արդյունաբերական ձեռնարկությունները:

Պետական առաջադրանքները կատարելու ուղղությամբ հայրենասիրական մեծ աշխատանք կատարեցին մեր հանրապետության գյուղատնտեսության աշխատողները: Հաշվի առնելով այն իրադրությունը, որ ԽՍՀՄ մի շարք կարևոր գյուղատնտեսական շրջաններ շրջափակվեցին թշնամու կողմից, Հայաստանի կոլտնտեսականները մեծ ջանքեր թափեցին բանակին պարենային մթերքներ տալու, արդյունաբերությանը հումքով ապահովելու և պետական առաջադրանքները կատարելու համար:

[184] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 37, թ. 22, 24:

Անդրկովկասի համար ծանր օրերին ավելի ամրապնդվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորության կապերն ու համագործակցությունը: 1942 թ. օգոստոսի 23-ին Թբիլիսիում հրավիրվեց Անդրկովկասի ժողովուրդների միտինգ, որտեղ երեք հանրապետությունների ժողովուրդների ներկայացուցիչները երդում տվեցին մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել իրենց հարազատ Անդրկովկասը: «Մենք,– ասված է միտինգում ընդունված բանաձևում,– երբեք գլուխներս չենք խոնարհի գերմանական գիշատիչ, ավազակ իմպերիալիստների առջև, ինչպիսի ծանր փորձություններ էլ, որ կրելու լինենք: Մենք գիտենք, մենք հաստատ հավատում ենք, որ թշնամին կջախջախվի: Այդ ժամը շուտով կհնչի, և այն ժամանակ վա՜յ ֆաշիստական զավթիչներին ու մարդասպաններին»[185]:

Երեք հանրապետությունների ներկայացուցիչները միտինգում կոչ արեցին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի բոլոր աշխատավորներին էլ ավելի ամրապնդել բարեկամությունը, անդուլ աշխատանք կատարել բոլոր բնագավառներում և ռազմաճակատին տալ ամեն ինչ: Նրանք կոչ արեցին նաև խտացնել կարմիր բանակի շարքերը, փոխարինել ռազմաճակատում ընկած հարազատներին և կռվել ֆաշիստական ավազակների դեմ մինչև նրանց լիակատար ոչնչացումը:

1942 թ. սեպտեմբերի 27-ին նորից Թբիլիսիում տեղի ունեցավ երեք հանրապետությունների երիտասարդության և Անդրկովկասյան ռազմաճակատի զորամասերի ներկայացուցիչների միտինգ: Տարբեր ազգերի ներկայացուցիչներ ելույթներ ունեցան և երդում տվեցին, որ իրենք ինտերնացիոնալ համերաշխությամբ կկազմեն անբաժան մարտական բանակ և երբեք գլուխ չեն խոնարհի անարգ թշնամու առաջ. «Կմեռնե՜նք, բայց թշնամուն առաջ գալ չենք թողնի»[186]:

Կովկասի պաշտպանության օրերին Թբիլիսիի վերոհիշյալ բազմամարդ միտինգի ազդեցության տակ ինչպես Վրաստանի ու Ադրբե-

[185] Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգը, Երևան, 1942:
[186] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր..., Երևան, 1959, էջ 31, տե՛ս նաև **Փ. Ենգոյան**, նշվ. աշխ., էջ 25:

ջանի, այնպես էլ Հայաստանի քաղաքներում ու գյուղերում, արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում ու սովխոզներում տեղի ունեցան բազմաթիվ ժողովներ, որտեղ խորհրդային մարդիկ երդվեցին համատեղ պայքարել և թույլ չտալ, որ ֆաշիստական զորքերը ներխուժեն Կովկասի սահմանները: Երևանի պետական համալսարանի միտինգում համալսարանականները, պաշտպանելով երեք հանրապետությունների ժողովուրդների ներկայացուցիչների համատեղ կոչը, պարտավորվեցին այսուհետև ամեն ինչ անել՝ ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու և հայրենի Անդրկովկասը պաշտպանելու համար: Միտինգի մասնակիցները իրենց ելույթներում ընդգծեցին, որ միասնական ջանքերով հանդես կգան անարգ թշնամու՝ գերմանական ֆաշիզմի դեմ: Համալսարանի ռեկտորատը, կուսակցական ու հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև դեկանատներն ու ամբիոնները իրենց առջև ծառացած ամենահրատապ խնդիրներից մեկը համարեցին կոլեկտիվի բոլոր անդամների, առաջին հերթին՝ ուսանողության հայրենասիրական դաստիարակությունը, հայրենիքի ու խորհրդային իշխանության հանդեպ նվիրվածության ամրապնդումը: Այդ նպատակով ֆակուլտետներում, բաժիններում, ուսանողական խմբերում, հանրակացարաններում ու նրանց կից ակումբներում կազմակերպեցին բազմապիսի զրույցներ ու զեկուցումներ ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի՝ հանուն իրենց անկախության օտարերկրյա նվաճողների դեմ մղած հերոսական պայքարի պատմության վերաբերյալ: Ուսանողների համար կազմակերպվեցին զեկուցումներ՝ գերմանական ասպետների, լեհական պանների, ֆրանսիացիների, մոնղոլների դեմ ռուս ժողովրդի մղած պատերազմների, թաթարների, սելջուկների, արաբների, պարսիկների և թուրքերի դեմ հայ ժողովրդի դարավոր մաքառման մասին, խորհրդային ժողովուրդների հեղափոխական պայքարի, սոցիալիստական հեղափոխության, քաղաքացիական կռիվների ու օտարերկրյա ինտերվենցիայի ժամանակ կարմիր բանակի ու ժողովրդի հերոսական գործերի, սոցիալիզմի կառուցման շրջանում տնտեսական ու քաղաքական դժվարությունների

հաղթահարման մասին:

Ուսանողներին հայրենասիրական գաղափարներով զինելու նպատակով, բացի ուսումնական պլանով նախատեսված պաշտոնական ժամերից, կազմակերպվեցին արտալսարանային միջոցառումներ՝ զեկուցումներ, տեսական գիտաժողովներ և դասականների աշխատությունների անհատական ուսումնասիրություններ[187]:

Համալսարանի արհկոմի և ԼԿԵՄ կոմիտեի նախաձեռնությամբ ուսանողության համար ցուցադրվեցին խորհրդային ժողովուրդների հերոսական անցյալը պատկերող կինոֆիլմեր, կազմակերպվեցին պատերազմի մասնակիցների, սոցիալիստական աշխատանքի առաջավորների հետ հանդիպումներ: Ռեկտորատի և կուսակցական կոմիտեի հանձնարարությամբ համալսարանում ակադեմիկոսներն ու պրոֆեսորները դասաժամերից դուրս բազմիցս հանդիպումներ ունեցան ուսանողների հետ և հուշեր պատմեցին անցյալում տեղի ունեցած պատերազմների, հայ ժողովրդի համար ստեղծված անելանելի վիճակի, գաղթերի, սովի ու աղքատության մասին, խորհրդային կարգերի հաստատման համար մեր երկրի աշխատավորության մղած հեղափոխական պայքարի և սոցիալիստական վերափոխումների ուղղությամբ ավագ սերնդի կատարած հայրենասիրական աշխատանքի մասին:

Համալսարանի դասախոսները, պրոպագանդիստներն ու ագիտատորները պատերազմի տարիներին գաղափարական-քաղաքական հսկայածավալ աշխատանք են ծավալել մայրաքաղաքի և հանրապետության գյուղական շրջանների աշխատավորության շրջանում: Կուսակցական կոմիտեի որոշմամբ 1942 թ. սկզբին համալսարանում ստեղծվել էր պրոպագանդիստների և ագիտատորների սեմինար, որտեղ նրանք լսել են զեկուցումներ ԽՍՀՄ արտաքին ու ներքին քաղաքականության վերաբերյալ: Սեմինարում առաջ քաշված հարցերի շուրջ պրոպագանդիստներն ու ագիտատորները հանդես են եկել հանրապետության գործարաններում, ֆաբրիկաներում ու կոլտնտեսություններում: Համալսարանի դասախոսները, ասպիրանտ-

[187] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 93, թ. 15, 16:

ներն ու բարձր կուրսերի ուսանողները ամենուրեք դասախոսություններ են կարդացել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում խորհրդային բանակի սխրանքների, թիկունքի աշխատավորության հայրենասիրական աշխատանքի, միջազգային իրադրության մասին: ՀԿԿ կենտկոմի հանձնարարությամբ նրանք հանրապետության քաղաքներում ու գյուղերում անցկացրել են ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության և հայրենասիրության թեմաներով արտագնա կոնֆերանսներ:

Պատերազմի տարիներին ժողովրդական տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական կադրերի զգալի մասը մեկնել էր բանակ: Գրեթե ամենուրեք զգացվում էր կադրերի պակաս, պահանջվում էր, որ հանրապետության բուհերը նոր շրջանավարտներով լրացնեին այդ պակասը:

ՀԽՍՀ մինիստրների խորհրդի պետպլանի բաժինը ամեն տարվա համար իջեցնում էր որոշակի ծրագիր՝ առաջարկելով բուհերին կադրեր պատրաստել՝ ըստ պետական առաջադրանքների: Պետական ու ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող այդ խնդրի կատարումը պահանջում էր հաղթահարել մի շարք դժվարություններ, որոնք ամբողջ երկրում, այդ թվում՝ և մեր հանրապետությունում, ստեղծվել էին պատերազմի հետևանքով: Ստեղծված նյութական դժվար պայմաններում միջնակարգ դպրոցների ոչ բոլոր շրջանավարտներն էին ձգտում սովորել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար նրանց մեծ մասը մտնում էր աշխատանքի գործարաններում, ֆաբրիկաներում ու կոլտնտեսություններում: 1942-1943 թթ. նյութական հնարավորությունների սղության պատճառով շատ-շատերը հեռանում էին բուհերից: Մնացած ուսանողների մի մասը ուսման նկատմամբ կորցրել էր հետաքրքրությունը, ինչը դարձյալ բացատրվում էր անապահով վիճակով: Այս հանգամանքը, բնականաբար, անդրադառնում էր ուսման ընդհանուր առաջադիմության վրա:

Բարձրագույն կրթության համակարգում եղած վերոհիշյալ դժվարությունները առկա էին նաև Երևանի պետական համալսարանում: Ռեկտորատից, կուսակցական ու հասարակական կազմակեր-

պությունների պահանջվում էր անել ամեն հնարավոր բան՝ դրանց հետևանքները մեղմացնելու և հնարավորության դեպքում վերացնելու համար:

Ռեկտորատի և կուսակցական կոմիտեի հանձնարարությամբ դեկանատներն ու ամբիոնները համալսարան ընդունվող դիմորդների քանակն ապահովելու համար կապեր են հաստատել հանրապետության դպրոցների հետ: Դպրոցների ղեկավարության հետ միասին հրավիրել են շրջանավարտների ժողովներ, հավաքներ, որտեղ հորդորել են ընդունվել բուհերը, կողմնորոշել մասնագիտությունները ճիշտ ընտրելու հարցում: Ընդունելության քննությունների ժամանակ կազմակերպվել են խորհրդատվություններ և լրացուցիչ պարապմունքներ: Առավել դժվարություն ներկայացնող առարկաների քննությունների ժամանակ դասախոսները շատ հաճախ շրջանավարտներին նախապես ծանոթացրել են հարցման ենթակա դժվարամարս թեմաներին: Այդ բոլորը կատարվել է հանուն այն բանի, որ համալսարանի բոլոր ֆակուլտետները, առավելապես բնական գիտությունների ֆակուլտետները, համալրվեն պետական ծրագրով նախատեսված ուսանողների քանակով:

Ռեկտորատի և կուսակցական կոմիտեի հանձնարարությամբ դեկանատները, ամբիոնները, կուսակցական, ԼԿԵՄ և արհմիութենական բյուրոները ուսումնասիրել են ամեն մի ուսանողի ապրելակերպը, նրա նյութական միջոցները, ապահովության աստիճանը, ընտանեկան վիճակը և այլն: Բոլոր կարիքավոր ուսանողներին հաշվառման են ենթարկվել և յուրահատուկ վերաբերմունք դրսևորել նրանց նկատմամբ. զիջել են ուսման վարձը, պարբերաբար տվել դրամական օգնություն, արհկոմիտեի միջոցներով ապահովել հագուստով, ամառային ու ձմեռային արձակուրդներին ուղարկել սանատորիաներ ու հանգստյան տներ:

Ռեկտորատը, կուսակցական ու հասարակական կազմակերպությունները հատուկ ուշադրություն են ցուցաբերել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում զոհված կամ գործող բանակում գտնվող զինվորականների զավակների նկատմամբ: Բացի օգնության վերոհիշյալ ձևերից՝ ուսանողներն օգտվել են նաև օրենքով նա-

խատեսված արտոնություններից:

1942-1945 թթ. ընթացքում համալսարանում սովորող շատ կարիքավոր ուսանողներ խոստովանել են, որ եթե չլիներ համալսարանի ղեկավարության հոգատարությունը, ապա դժվար թե կարողանային մինչև վերջ սովորել և ավարտել համալսարանը:

Մաղումները կանխելու և ուսման որակը բարձրացնելու նպատակով ռեկտորատի որոշմամբ մի շարք առարկաների գծով ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար ամբիոնները կազմակերպել են արտաժամյա պարապմունքներ, բոլորի համար մշտական խորհրդատվություններ, ամբիոններին կից կաբինետներում՝ դասագրքերի և գրառված դասախոսությունների ընթերցումներ:

Հանուն ակադեմիական առաջադիմության բարձրացման, հանուն նրա, որ կադրերի պատրաստման պլանը անթերի կատարվի, համալսարանի դասախոսներն իրենց ազատ ժամանակը հաճույքով տրամադրել են ուսանողներին: Դեռ ավելին, նրանցից շատերը ուսանողների հարցերին տեղում պատասխանելու համար պարբերաբար այցելել է հանրակացարաններ: Համալսարանի կոմերիտական համաժողովներից մեկում ուսանողները իրենց երախտագիտության խոսքն են ասել դասախոսներին, հատկապես նրանց արտալսարանային աշխատանքի համար, ինչն իրենց ավելի ու ավելի են պարտավորեցրել ու ոգևորել:

Համալսարանի ռեկտորատի, կուսակցական հասարակական կազմակերպությունների, դեկանատների, ամբիոնների և դասախոսական կազմի հայրենանվեր աշխատանքի շնորհիվ համալսարանը պատերազմի բոլոր տարիներին բարձրագույն կրթությամբ մասնագետ կադրերի պատրաստման ուղղությամբ կատարել է պետության կողմից տրված առաջադրանքները: Այդ տարիներին համալսարանն ավարտել են և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատանքի մեկնել հարյուրավոր քիմիկոսներ, ֆիզիկոսներ, մեխանիկներ, մաթեմատիկոսներ, տնտեսագետներ, երկրաբաններ, աշխարհագրագետներ, բանասերներ, պատմաբաններ ու իրավաբաններ:

1942 թ. Պաշտպանության պետական կոմիտեն առաջադրանք է տվել Հայկական ԽՍՀ-ին՝ թողարկել ռազմական արտադրանքի նոր տեսակներ: Նշված խնդիրը կատարելու համար անհրաժեշտ է եղել վերակառուցել արտադրության աշխատատար գործընթացները, մշակել արտադրանքի թողարկման նոր տեխնոլոգիա: Այդ գործում արտադրական կոլեկտիվներին մեծ օգնություն են ցուցաբերել հանրապետության գիտահետազոտական ինստիտուտներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես և Երևանի պետական համալսարանը: Համալսարանի ամբիոններն ու լաբորատորիաները մշակել և արտադրության մեջ են ներդրել մի շարք նորարարություններ, ինչպիսին, օրինակ, եղել են համալսարանի քիմիկոսների մշակած ածուխի, ֆիզիոլոգիական աղի ստացման տեխնոլոգիաները: Միութենական կառավարության հանձնարարությամբ ուսումնասիրվել են Ագարակի և Փիրդոուղանի հանքերը, ու 909 նմուշի մեջ ճշգրտվել է պղնձի քանակը, տեղական նյութից մշակվել կավիճ ստանալու տեխնոլոգիան, լուծվել է բուսական յուղերի գեներացիայի խնդիրը և այլն:

Համալսարանի երկրաբանները հետազոտել են հանրապետության հանքային հարստությունները և ճշգրտել նրանց պաշարները, տնտեսագետները օգնել են հանրապետության պլանավորող կազմակերպություններին ճիշտ հաշվառման ենթարկել հումքային ու աշխատանքային ռեզերվները[188]:

Արտադրության մեջ նոր մեխանիզմների ներդրման գործում հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններին օգնել են համալսարանի ֆիզիկոսները, մաթեմատիկոսներն ու մեխանիկները: Արտադրության մեջ աշխատող ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների մասնագիտական-տեխնիկական գիտելիքները բարձրացնելու համար համալսարանի գիտնականները բազմաթիվ զեկուցումներ են կարդացել գործարաններում ու ֆաբրիկաներում, հրավիրել տեսական կոնֆերանսներ ու գիտական նստաշրջաններ:

[188] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 83, թ. 21, 22:

Ռեկտորատի և կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ համալսարանի դասախոսները, ուսանողներն ու վարչատնտեսական աշխատողները մեծ ծավալի աշխատանք են կատարել մայրաքաղաքի գործարաններում, ֆաբրիկաներում, հանրապետության կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների դաշտերում: Պատերազմի տարիներին համալսարանը գրեթե ամեն օր աշխատանքային բրիգադներ է ուղարկել Աշտարակի, Արտաշատի, Էջմիածնի շրջանները, որոնք կոլտնտեսականների հետ կատարել են դաշտային աշխատանքներ, հավաքել բամբակ, խաղող, հացահատիկ, բանջարաբոստանային կուլտուրաներ, իսկ գարնանացանի ժամանակ մաքրել են առուներն ու ջրանցքները:

Հարյուրավոր ուսանողներ ու դասախոսներ պարապմունքներից հետո բարձման ու բեռնաթափման աշխատանքներ են կատարել Երևանի երկաթուղային կայարանում ու ավտոկայաններում:

1942-1943 թթ. մայրաքաղաքի բարեկարգման գործում բանվորական ուժի խիստ կարիք էր զգացվում: Այդ աշխատանքը կատարելու համար լուրջ պարտավորություններ են դրվել ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների կոլեկտիվների վրա: Համալսարանի ուսանողներն ու դասախոսները վերաձորոգել են փողոցները, տրամվայի գծերը, մասնակցել ջրատար խողովակների և կոմունալ այլ հարմարանքների տեղադրման աշխատանքներին[189]:

Պատերազմի տարիներին արտադրությունը մետաղի հումքով ապահովելու համար ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, մետաղյա ջարդոնի հավաքման ծավալուն աշխատանքներ են սկսվել: Համալսարանի կոլեկտիվը սիրով արձագանքել է այդ կարևոր միջոցառմանը և պարտավորվել ամեն ամիս որոշակի քանակությամբ մետաղյա ջարդոն հավաքել: ԼԿԵՄ կոմիտեի որոշմամբ ամեն մի կոմերիտական օրական 10-15 կգ մետաղյա ջարդոն պետք է հանձներ համալսարան:

Պատերազմի առաջին շրջանում, երբ կարմիր բանակը տաք հագուստի լուրջ կարիք ուներ, կուսակցական ու խորհրդային կազ-

[189] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 76, թ. 16, 17:

մակերպությունները, արդյունաբերության արտադրանքը կենտրոնացված կարգով հանձնելուց բացի, կազմակերպեցին նաև տաք հագուստ հավաքելու գործը: Բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ և Հայաստանում, ստեղծվեցին տաք հագուստի հավաքումը կազմակերպող հանրապետական հանձնաժողովներ: Բացի դրանից՝ խոշոր աշխատանքներ կատարվեցին՝ պաշտպանական ֆոնդեր ստեղծելու և բնակչության միջոցները լրացուցիչ կերպով գործող բանակին տրամադրելու ուղղությամբ:

Համալսարանի կոլեկտիվը սիրով է արձագանքել Ռուսաստանի ֆեդերացիայի Տամբովի շրջանի աշխատավորների կոչին: Իրենց սեփական միջոցների խնայողությունների հաշվին համալսարանի դասախոսներն ու ուսանողները պատերազմի սկզբում զգալի դրամական միջոցներ են տրամադրել տանկային շարասյուների կառուցման համար: Համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի 1942 թ. մարտի 21-ին տրված հաշվետվության մեջ նշված է, որ կոմերիտականների ուժերով միայն 6 ամսում հավաքվել ու պետությանն է հանձնվել 235 տոննա գունավոր մետաղ, 5820 ռուբլի փոխառության պարտատոմս, կիրակնօրյակների միջոցով՝ 5373 ռուբլի: Պաշտպանական ֆոնդի համար հանձնել են 3670 ռուբլու կոմերիտական չերվոնեց, բանակայինների ընտանիքներին օգնելու համար՝ 1780 ռուբլի[190]:

Համալսարանականները ակտիվորեն մասնակցել են կարմիր բանակի համար տաք հագուստներ հավաքելու, նվեր-ծանրոցներ ուղարկելու, ինչպես նաև շրջափակումից ազատագրված բնակչությանն օգնելու, ավերված տնտեսությունը վերականգնելու գործին: 1942-1943 թթ. համալսարանի ռեկտորատը, կուսակցական և ԼԿԵՄ կոմիտեները շնորհակալական նամակներ են ստացել գործող բանակի զորամիավորումներից իրենց հասցեով ուղարկված արժեքավոր նվեր-ծանրոցների համար:

Համալսարանում ստեղծվել են հոսպիտալներին կից հանձնաժողովներ, որոնց միջոցով ռեկտորատը հոսպիտալներին տրամադրել է կոշտ և փափուկ գույք, գրականություն, կուլտուր-կենցաղային այլ

[190] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 76, թ. 19, 20:

իրեր[191]: Պատերազմի տարիներին համալսարանի կոլեկտիվը ուշագրավ աշխատանք է կատարել նաև մայրաքաղաքում հակաօդային պաշտպանության կազմակերպման ու ղեկավարման ուղղությամբ: Ստեղծել է հակաօդային պաշտպանության շտաբ, որը կազմակերպել է հակաօդային պաշտպանության հատուկ խմբակներ: Շտաբը կոլեկտիվի անդամներին մասնակից է դարձրել գազապաստարանների և թաքստոցների կառուցմանը, ուսումնական կորպուսներում ու հանրակացարաններում սահմանել է լուսաքողարկման ռեժիմ, կազմակերպել է հակաօդային պաշտպանության ուսուցման գործը: Պաշտպանական աշխատանքներ է կատարել նաև համալսարանից դուրս՝ քաղաքի թաղամասերում, կարևոր ձեռնարկություններում:

1942 թ. նոյեմբերի 6-ին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 24-րդ տարեդարձի առթիվ տեղի ունեցած հանդիսավոր նիստում համալսարանի դասախոսները, ուսանողներն ու վարչա-տնտեսական աշխատողները, բաց նամակով դիմելով ՀամԿ(բ)Կ կենտկոմին, իրենց պատրաստակամությունն են հայտնել՝ ամեն կերպ օգնելու կարմիր բանակին, բավարարելու նրա կարիքները և թիկունքում աշխատելու ըստ արժանվույն:

Պատերազմի տարիներին, երբ մեծացել էր շփումը կապիտալիստական աշխարհի հետ, երբ միլիոնավոր մարդիկ մնացել էին շրջափակված տարածքներում, և Մերձբալթիկայում, Ուկրաինայի ու Բելառուսիայի արևմտյան մասերում աշխուժացել էր գերմանաֆաշիստական գաղափարախոսության տարածումը, օտարերկրյա հետախուզությունը զանազան ճանապարհներով սկսել էր ամեն կերպ ազդել գաղափարապես անկայուն տարրերի վրա: Դրան մեծապես նպաստել են ֆաշիստական Գերմանիայի հաջողությունները պատերազմի առաջին երկու տարում: Հարկ է եղել ուժեղացնել գաղափարական աշխատանքը բնակչության մեջ, նրանց ցույց տալ ռազմաճակատում Գերմանիայի հաջողությունների ժամանակավոր լինելը և ամրապնդել հավատը ԽՍՀՄ-ի ու նրա հերոսական բանակի անխուսափելի հաղթանակի նկատմամբ: Այդ ուղղությամբ մեր հանրապե-

[191] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 69, թ. 28, 29:

տությունում ամենօրյա մասսայական-քաղաքական աշխատանքներ են ծավալվել: Այդ գործում մեծ օգնություն են ցույց տվել բուհերի, այդ թվում՝ և պետական համալսարանի պրոպագանդիստներն ու ագիտատորները:

Համալսարանի պրոպագանդիստ դասախոսները բազմապիսի ու բազմաբովանդակ զեկուցումներով հանդես են եկել մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում և հանրապետության գյուղական շրջաններում, սովխոզներում ու կոլտնտեսություններում: Զեկուցումներ են կարդացել մեր երկրի ժողովուրդների հերոսական անցյալի, նրանց համատեղ պայքարի ու ստեղծագործական աշխատանքի, անխախտ ու անշահախնդիր համագործակցության, բանվորագյուղացիական դաշինքի, Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում քաջարի կարմիր բանակի սխրագործությունների, թշնամու թիկունքում ծավալված պարտիզանական շարժումների, ԽՍՀՄ-ի նկատմամբ ֆաշիզմի դեմ օրեցօր աճող դժգոհությունների ու ազգային-ազատագրական շարժումների, շրջափակված տարածքներում ստրկական ռեժիմի, բնակչության նկատմամբ ֆաշիստական իշխանությունների գործադրած գազանությունների, թալանի ու սպանությունների վերաբերյալ:

Հանրապետության աշխատավորության և հայ ռազմաճակատայինների գաղափարական, հայրենասիրական դաստիարակության գործում մեծ նշանակություն ունեցան համալսարանի կոլեկտիվի՝ մամուլում հրապարակած հայրենասիրական նամակներն ու կոչերը: Պատերազմի հենց առաջին տարում, երբ ֆաշիստական բարբարոսները սկսեցին խորանալ ԽՍՀՄ տարածքը, համալսարանի մեծաթիվ կոլեկտիվը նամակով դիմեց Պաշտպանության պետական կոմիտեին՝ հայտնելով իր պատրաստակամությունը՝ համալրելու կարմիր բանակի շարքերը և արյան գնով պաշտպանելու հայրենի հողը: Նամակում մասնավորապես ասված էր. «Մենք ոչ ոքի չենք զիջի մեր ծաղկուն, սքանչելի հայրենիքը, ոչ ոքի չենք զիջի մեր նվիրական ազատությունը»[192]:

[192] «Սովետական Հայաստան», 9 նոյեմբերի, 1941:

1942 թ. փետրվարին կարմիր բանակի տարեդարձի առթիվ Հարավարևմտյան ռազմաճակատի հայ մարտիկներին ուղղված նամակում ասված էր. «Արշավեցեք դեպի արևմուտք, արշավեցեք Վարդան Մամիկոնյանի, Սասունցի Դավթի նման: Ձեզ են սպասում ֆաշիստական գերության մեջ տնքացող մայրերն ու մանուկները: Հիշեցեք Դավիթ Բեկի ու Գևորգ Մարզպետունու ասպետական երդումները, եղեք նրանց իսկական ժառանգները հայրենիքի պաշտպանության հարցում»[193]:

Խորհրդային ժողովրդին ու պետությանը համալսարանի կոլեկտիվի մատուցած ամենամեծ ծառայությունը եղավ այն, որ նրա սաները՝ դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ և վարչատնտեսական աշխատողներ, մտան գործող բանակ՝ արյան գնով պաշտպանելով խորհրդային հայրենիքը:

Այսպիսով Երևանի պետական համալսարանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեծածավալ գործունեություն իրականացրեց ոչ միայն զորահավաքային աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելով, այլև իր 869-ից ավելի սաներին ուղարկելով ռազմաճակատ՝ ռազմահայրենասիրական արդյունավետ քարոզչությամբ և թիկունքային ակտիվ աշխատանքներով նպաստեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին:

[193] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 90, թ. 30, 31:

Պատերազմի դաշտում զոհվածներին

Սիրելի իմ, հարազատ իմ, ընկեր իմ,
Որ հանգչում ես այժմ անհայտ մի խորշում,
Ջահել սրտով, անկնճիռ ու անխորշոմ,
Դու իղձերիս, ապրումներիս մտերիմ:

Ես – եղբայրդ՝ տվայտանքով քո հոգու,
Ես – ընկերդ՝ սրտիդ զարկով բաբախող,
Հարազատդ փարված կրծքիդ սրահող,
Մի վառ հույսով խոր վերքերդ եմ ամոքում:

Գուցե վաղը ես էլ բաղվեմ մի խորշում
Կույր ու դաժան մի գնդակով՝ քութ արճիճ,
Թաղեմ ճակատն իմ անկնճիռ, անխորշոմ:

Ու թող մեռնենք, եղբայր, սիրով ու անմիջ,
Վառ հավատով, որ սերունդները անցավ, –
Կկերտեն մեզ փառքի անմահ հուշարձան...

Պարույր Սևակ, 1942 թ.
ԵՊՀ շրջանավարտ

Երեկ էր ասես

Հիմա պատահմամբ, երբ անցնում եմ ես
Սուրբ շենքի մուտով համալսարանի,
Կարոտով լցված ես հիշում եմ քեզ
Ժպտալիս փեղկում մեր լսարանի:
Չէ՞ որ գնացիր կռիվ՝ ողջ թերի բողած,
Որ մնա շենքը Համալսարանի,
Որ ուրիշ դեմքեր ժպտալով շողան
Լուսավոր փեղկից մեր լսարանի:
...Ընկար ջերմ ու ջինջ քո հոգուն վայել՝
Ջինվորի շորում դիրքեր փորելիս:
Գիրնականն ես դու հիմա շատ խորունկ,
Եվ զինվոր խիզախ, և՛ ընկեր բարի,
Ա՞խ, դու ամեն օր դիրքեր ես փորում
Առաջին գծում մեր հուզաշխարհի:

Մարո Մարգարյան, 1948 թ.
ԵՊՀ շրջանավարտ

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐՏԱԴԱՇՏԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ (ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐ, ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ)

«Նրանք ընկան կռիվներում, բայց ապրում է
հոգին նրանց ապրողների հոգիներում...»
Պարույր Սևակ

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակը ձեռք բերվեց մեծ զոհաբերություններով: Կենաց ու մահու կռվում իրենց կյանքը չխնայեցին ԽՍՀՄ եղբայրական ընտանիքի բոլոր ժողովուրդների զավակները: Զոհվեց ավելի քան 20 միլիոն մարդ: Շատերի հետ զոհվեցին նաև Երևանի պետական համալսարանի բազմաթիվ սաներ՝ դասախոսներ, ուսանողներ ու վարչատնտեսական աշխատողներ: Նրանք զոհվեցին ռազմաճակատներում մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու ժամանակ: Առ այսօր հարազատների ու մտերիմների մոտ պահպանվում են ռազմաճակատներից նրանց գրած շատ ու շատ նամակները, որոնք բովանդակում են մեծ հայրենասիրություն և հավատ գալիք հաղթանակի նկատմամբ: Նամակներում համալսարանականներն արտահայտել են իրենց նվիրվածությունը հարազատ պետությանն ու ժողովրդին: Կասկած չի հարուցում այն ճշմարտությունը, որ մարտադաշտում նրանց կողմից հայրենիքին նվիրված յուրահատուկ հայրենասիրության դրսևորումը արդյունք էր այն քաղաքական ու գաղափարական մկրտության, որ նրանք ստացել էին համալսարանում ուսումնառության տարիներին: Նրանք ընկան ռազմաճակատներում, բայց թողեցին լավագույն հայրենասերների հիշատակ, որը սրբությամբ են պահպանում համալսարանի սաները: Նրանց անունները և գործունեությունը ներկայացվում է այբբենական կարգով:

ԱԲԳԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՎԱՐԱԳԻ (1906-1942) – Ծնվել է 1906 թ. Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: 1925 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) բանֆակը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ավարտելուց հետո գործուղվել է Վաղարշապատ (Էջմիածին)՝ ուսուցչական աշխատանքի: 1938 թ. ընդունվել է ասպիրանտուրա, 1941 թ. ավարտել է, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և նշանակվել դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում: 1941 թ. դեկտեմբերին զորակոչվել է կարմիր բանակ: Ա. Աբգարյանն ավարտել է Բաքվի ռազմական ուսումնարանը և ուղարկվել գործող բանակ: Առաջին անգամ մասնակցել է Ղրիմի համար մղվող ծանր մարտերին:

Ա. Աբգարյանը ռազմաճակատում առաջին իսկ օրից իրեն դրսևորել է որպես հայրենիքին նվիրված զորական՝ օրինակելիորեն կատարելով մարտական առաջադրանքները: Նա խիզախություն և արիություն է ցուցաբերել հատկապես Կերչում շրջապատման մեջ ընկած խորհրդային զորամասերի մարտական գործողությունների ժամանակ: 1942 թ. մայիսին թշնամու գերակշռող ուժերի դեմ մղված մի անհավասար ճակատամարտում հարյուրավոր հայրենասերների հետ զոհվել է նաև պետական համալսարանի դասախոս, ավագ քաղղեկ Արամայիս Աբգարյանը:

ԱԲՈՎՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1920-1943) – Ծնվել է 1920 թ. Ալավերդու շրջանի Ուզունլար գյուղում: 1932 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1939 թ. ավարտել է Երևանի Ս. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանում սովորելու երկուսուկես տարիների ընթացքում աչքի է ընկել իր գերազանց առաջադիմությամբ և հասարակական գործունեությամբ: Եղել է ֆակուլտետի ԼԿԵՄ բյուրոյի քարտուղար, համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի անդամ: Պատերազմի առաջին տարում ակտիվ մասնակցություն է ունեցել համալսարանում տարվող ռազմապաշտպանական միջոցառումներին՝ իր օրինակով ոգևորելով կոմերիտականներին, վարակելով նրանց հայրենասիրությամբ:

1942 թ. ՀԼԿԵՄ կենտկոմը կոչով դիմել է բոլոր կոմերիտականներին և արձագանքել Խորհրդային Միության տարբեր քաղաքներում ծավալված կամավորական շարժմանը՝ համալրելով կարմիր բանակի շարքերը: Ինչպես միշտ, այնպես էլ այս կոչին առաջինը արձագանքել են համալսարանի ուսանողները: Այդ գործի լավագույն կազմակերպիչներից մեկը եղել է ԼԿԵՄ բյուրոյի քարտուղար Գևորգ Աբովյանը: Վերջինս 1942 թ. օգոստոսին հանրապետության հարյուրավոր կոմերիտական կամավորների հետ մեկնել է բանակ: Չորս ամիս Թբիլիսիի հատուկ զինվորական դպրոցում սովորելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել ռազմաճակատ: Երկու ամիս եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում՝ ակտիվ մասնակցություն ունենալով Կովկասի քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թ. Գ. Աբովյանը տեղափոխվել է Կերչի ռազմաճակատ, ծառայել է դիվիզիայի շտաբում, աչքի է ընկել իր գերազանց ծառայությամբ, ռազմաճակատի հրամանատարության կողմից պարգևատրվել պատվոգրերով ու մեդալներով:

Մեկուկես տարի նա եղել է Հայրենական մեծ պատերազմի ամենաղժվարին ռազմաճակատներից մեկում՝ Կերչում: Իր հարազատներին գրած նամակներում նա մշտապես հաստատ համոզմունք է հայտնել հաղթանակի մասին: 1943 թ. հոկտեմբերին Գ. Աբովյանը զոհվել է Կերչի կատաղի մարտերից մեկում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՈՒՍՏԻ (1907-1942) – Ծնվել է 1907 թ. սեպտեմբերի 10-ին Արթիկի շրջանի Սարալանջ (նախկինում Մեծքաշ) գյուղում: Մայրը մահացել է, երբ Հարությունը 10 տարեկան չկար: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, հետո հաճախել է Հառիճի և Լենինականի (Գյումրի) տարբեր դպրոցներ: 19 տարեկան հասակում (1926 թ.) որպես ուսուցիչ և դպրոցի տնօրեն աշխատանքի է անցել Ղուկասյանի շրջանի Սեպասար գյուղում: 1931 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմատնտեսագիտական ֆակուլտետը: Զարմանալի ընդունակությունների տեր երիտասարդը գրել է նաև բանաստեղծություններ, որոնք բարձր գնահատականների են արժանացել Հ. Շիրազի կողմից:

Հ. Աբրահամյանը 1935 թ. ավարտել է համալսարանը և անմիջապես աշխատանքի անցել Էջմիածնի ձեռագրատուն-մատենադարանում: Նա մատենադարանում եղել է ավագ մասնագետ, 1937 թ. մայիսից նշանակվել է արխիվի բաժնի վարիչ, Էջմիածնի մանկավարժական տեխնիկումում՝ պատմության ուսուցիչ:

Հ. Աբրահամյանը բանակ է մեկնել 1941 թ. աշնանը կնոջ՝ Ազնիվի խնամքին թողնելով իր երեք երեխաներին: Շարքային զինվորից նա մի տարում բարձրացել է լեյտենանտի աստիճանի: Կերչում նահանջի դաժան օրերին նա ցուցաբերել է քաջություն, անզիջում մարտնչել է թշնամու մեծաքանակ ուժերի դեմ: Կերչից հարազատներին գրել է նամակներ՝ հայտնելով, որ շուտով մեկնելու է մարտադաշտ: Մատենագետ, բանասեր մարտիկը հավատարիմ մնաց իր ուխտին: Նա մարտնչել է թշնամու դեմ Կովկասի համար մղվող մարտերում և զոհվել 1942 թ. Ղրիմում:

1940 թ. Հ. Մանվելյանի համահեղինակությամբ տպագվել է Հարություն Աբրահամյանի «Անանուն ժամանակագրություն», իսկ 1941 թ.՝ «Կալվածագրեր» կոթողային հետազոտությունները: Երիտասարդ մատենագետի անավարտ ու անտիպ բազմաթիվ ձեռագրեր այսօր դեռ լռում են սպասելով հրատարակման[194]:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՂԱՋԱՆ ՍԵՐԳԵՅԻ (1909-1942) – Ծնվել է 1909 թ. Դիլիջանի շրջանի Ջարխեչ (Հաղարծին) գյուղում: Հայրենի գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ մինչև 1931 թվականը, աշխատել է որպես բանվոր ու արհեստավոր: 1931 թ. նոյեմբերին զորակոչվել է կարմիր բանակ, որտեղ ընդունվել է ԽՄԿԿ շարքերը: 1933 թ. զորացրվել է բանակից և ընդունվել Երևանի ինդուստրիալ բանֆակը: 1938 թ. ավարտել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. հուլիսին երրորդ կուրսից նորից զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայել է Կիրովաբադում ու Ղազախում, իսկ 1941 թ. դեկտեմբերին նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Հայկական դիվիզիայի կազմում Աղաջանյանը մարտերով հասել է մինչև

[194] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, Երևան, 2005, էջ 439:

Կերչ: 1942 թ. Կերչի համար մղվող կատաղի մարտերից մեկում հերոսաբար զոհվել է:

Հայրենիքի համար այլ ռազմաճակատներում իրենց կյանքն են զոհաբերել նաև Աղաջան Աղաջանյանի մյուս երեք եղբայրները, որոնցից երկուսը՝ Պերճ Աղաջանյանը և Արփիար Աղաջանյանը, նույնպես եղել են համալսարանի հայրենասեր սաները:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՓԻԱՐ ՍԵՐԳԵՅԻ (1912-1941) – Ծնվել է 1912 թ. Դիլիջանի շրջանի Ջարխեչ գյուղում: Մինչև 1924 թվականը եղել է գյուղում, ապա տեղափոխվել է Դիլիջան: 1929 թ. ավարտել է Դիլիջանի երկրորդ աստիճանի դպրոցը և նույն թվականին ընդունվել Լենինականի (Գյումրի) Ամերկոմի տեխնիկումը: 1932 թ. Ա. Աղաջանյանը նշանակվել է ուսուցչական աշխատանքի Լեռնային Ղարաբաղում: 1934 թ. վերադարձել է հայրենի գյուղ և նշանակվել դպրոցի տնօրեն: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա հանձնել է հինգերորդ կուրսի քննությունները և զորակոչվել կարմիր բանակ: Ա. Աղաջանյանը, ըստ համակուրսեցիների բանավոր տեղեկությունների, ուսումնառության տարիներին աչքի է ընկել իր առաջադիմությամբ և կազմակերպվածությամբ, սիրել է իր մասնագիտությունը և ունեցել խոստումնալից տվյալներ՝ ապագայում գիտական աշխատող դառնալու համար:

1941 թ.՝ զինվորական վերապատրաստման կարճատև դասընթացն ավարտելուց հետո, Ա. Աղաջանյանը մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և զոհվել մարտերից մեկում: Նրա ծավալած ռազմական գործողությունների մասին տեղեկությունները քիչ են:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՊԵՐՃ ՍԵՐԳԵՅԻ (1914-1941) – Ծնվել է 1914 թ. Դիլիջանի շրջանի Ջարխեչ (Հաղարծին) գյուղում: 1934 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Լեռնային Ղարաբաղի Մեծշեն գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում: Մեկ տարի աշխատելուց հետո՝ 1935 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

Մեկ-երկու տարվա տարբերությամբ համալսարանի բանասիրական և տնտեսագիտական ֆակուլտետներն են ընդունվել նրա եղբայրները՝ Արփիար Աղաջանյանը և Աղաջան Աղաջանյանը: Վերջին երկուսը համալսարանից կարմիր բանակ են զորակոչվել Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին, իսկ ինքը՝ Պերճ Աղաջանյանը՝ համալսարանն ավարտելուց անմիջապես հետո՝ 1940 թվականին:

Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Պերճ Աղաջանյանը ծառայելիս է եղել Բրեստի սահմանամերձ զորամասերից մեկում: 1941 թ. հունիսին մասնակցել է կարմիր բանակի սահմանամերձ մարտերին: Պոլտավայի պաշտպանողական մարտերի ժամանակ գերի է ընկել և ուղարկվել համակենտրոնացման ճամբար: 1943 թ. փետրվարին մի խումբ հայերի հետ միասին Աղաջանյանը փախել է և միացել Լենինգրադի մարզում գործող պարտիզանական ջոկատին: «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1972 թ. երկրորդ համարում գրված է, որ ֆաշիստական Գերմանիայից փախած հայկական մի ջոկատ՝ Սաղումյանի գլխավորությամբ, անցել է պարտիզանների կողմը և շարունակել պայքարը հիտլերյան ավազակների դեմ: Նախկին ռազմագերիներից կազմված այդ ջոկատը ենթարկվել է պարտիզանական երրորդ գնդին:

Պարտիզանական բրիգադի հրամանատար Ա. Վ. Գերմանը գրել է, որ կարճ ժամանակամիջոցում հայերից կազմված (նրանց թվում՝ Պերճ Աղաջանյանը) պարտիզանական ջոկատը ցույց տվեց, որ հաջողությամբ տիրապետում է նաև պարտիզանական պայքարի մարտավարությանը: Ջոկատը, որի կազմում եղել են նաև այլազգի մարտիկներ, կարողացել է հաջողությամբ իրականացնել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ շրջապատման ճեղքումը Ժիտնիյա գյուղի մոտ, գերմանացիների Գորուշկա խոշոր կայազորի ջախջախումը, Չերնոզերիե լճի մոտ պատժիչ գումարտակի ոչնչացումը, Շելոն գետի երկաթուղային մեծ կամրջի պայթեցումը, կենդանի ուժի ու տեխնիկայի հետ թշնամու ավելի քան 25 ռազմական գնացքների խորտակումը և այլն:

1944 թ. փետրվարին Խորհրդային Միության հերոս Ա. Վ. Գեր-

մանի բրիգադի 4-րդ պարտիզանական գունդը, որի կազմում եղել է հայերից կազմված վաշտը, միացել է կարմիր բանակի զորամասերին՝ մասնակցելով ֆաշիստական զորքերի դեմ մղվող վերջին ու վճռական մարտերին: 1944 թ. նոյեմբերին՝ Քյոնիգսբերգի գրավման ժամանակ, հերոսաբար զոհվել է նաև համալսարանի 30-ամյա սան Պերճ Աղաջանյանը:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ (1912-1941) – Ծնվել է 1912 թ. Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում: Վեց տարեկան հասակում կորցրել է հորը, որի պատճառով հետագայում ընտանիքի հոգսը ընկել է նրա վրա: 1922-1927 թթ. եղել է բատրակ և իր նվազագույն միջոցներով մի կերպ պահել իր փոքր եղբայրներին ու քույրերին: Վաղարշապատի առաջին և երկրորդ աստիճանի դպրոցներն ավարտելուց հետո սովորել ու ավարտել է Վաղարշապատի գյուղատնտեսական տեխնիկումը: Մեկ տարի կուսշրջկոմում աշխատելուց հետո՝ 1934 թ., զորակոչվել է կարմիր բանակ: 1936 թ. զորացրվել է և գործուղվել՝ Հայաստանի կոմունիստական գյուղատնտեսական դպրոցում սովորելու: 1937 թ.՝ դպրոցի փակվելուց հետո, Առաքելյանը նորից աշխատանքի է անցել Վաղարշապատի կուսշրջկոմում: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է պատերազմը, Պ. Առաքելյանն արդեն ուսանելիս է եղել երրորդ կուրսում, կատարել է նաև ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղարի պարտականությունը: Եռանդուն ու հայրենասեր կոմունիստը մեծ աշխատանք է ծավալել ուսանողության շրջանում՝ կուսակցության ու կառավարության առաջին կոչերին արձագանքելու և կարմիր բանակի շարքերը համալրելու համար: Ժողովներից մեկում նա կոչ է արել ֆակուլտետի կոմունիստներին չսպասել զորականչի և կամովին մեկնել ռազմաճակատ: Նա առաջիններից էր միասին մեկնեց Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և այնտեղ էլ զոհվեց:

ԱՎԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՆԱԶԱՐԻ (1920-1943) – Ծնվել է 1920 թ. Կիրովականի (Վանաձոր) շրջանի Դարբազ գյուղում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի

պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: Համալսարանում սովորել է մինչև 1942 թվականը: Եղել է գերազանցիկ ուսանող, անվանական թոշակառու:

1942 թ. փետրվարին, երբ Հայաստանի բուհերում կամավորական շարժում էր սկսվել, Ս. Ավագյանը, արձագանքելով մայրաքաղաքի բուհական երիտասարդության կոչերին, դիմել է ՀԼԿԵՄ Երքաղկոմին՝ կամավոր բանակ մեկնելու համար: 1942 թ. փետրվարին համալսարանի 4-րդ կուրսի ուսանող Ս. Ավագյանը զինվորական կոմիսարիատի կողմից գործուղվել է Սուխումիի՝ հետևակային ուսումնարանում զինվորական ուսուցում անցնելու համար: Նույն թվականին՝ կարճատև ուսուցումից հետո, նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1943 թ. հունիսին Տուապսեի համար մղվող մարտերում զոհվել է: Ծնողների ու հարազատների մոտ պահպանվում են Ավագյանի շքանշաններն ու մեդալները, որոնք վկայում են մարտադաշտում նրա ցուցաբերած հայրենասիրության ու արիության մասին:

ԱՎԵՏԻՍՅԱՆ (ՄԱՍԼՈՎ) ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏՉԻ (1909-1944) – Ծնվել է 1909 թ. Իգդիր քաղաքում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո դերձակ Մկրտչի ընտանիքը հանգրվանել է Էջմիածնում: Նույն թվականին սպանվել է հայրը՝ երեխաների խնամքը թողնելով մոր ուսերին: 1929 թ. Գ. Ավետիսյանն ավարտել է Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: Աշխատանքի է անցել Հրազդանի շրջանում, ապա՝ Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղում, սկզբում՝ որպես ուսուցիչ, այնուհետև՝ տնօրեն: 1932 թ. Ե. Չարենցի խմբագրմամբ լույս է տեսել Գնիշիկ գյուղի դպրոցի տնօրեն Գ. Ավետիսյանի «Կարմիր լաչակներ» ժողովածուն: 1933 թ. Գ. Ավետիսյանն ընդունվել և 1938 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը և որպես դպրոցի տնօրեն ու հայոց լեզվի և գրականության ուսուցիչ նշանակվել Գորիսի Խնձորեսկ գյուղում: Մի քանի տարի այստեղ աշխատելուց և 1940 թ. ասպիրանտուրան կիսատ թողնելուց հետո որպես լրագրող աշխատանքի է անցել «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրությու-

նում: Նա շարունակում է ստեղծագործել՝ բարձր գնահատականներ ստանալով հայ մեծանուն գրողներից: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, մեկնել է ռազմաճակատ՝ ծառայելով 89-րդ հրաձգային դիվիզիայի 400-րդ գնդում, եղել է հրամանատարի քաղգծով տեղակալ[195]: Վախճանվել է 1944 թվականին:

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԻՍԱՀԱԿ ԱՎԵՏԻՍԻ (1914-1942) – Ծնվել է 1914 թ. Խանդարի շրջանի Խաչակապ (նախկին Ղուշչի) գյուղում: Տեղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի քիմիական տեխնիկումում, որից հետո անցել է մանկավարժական գործունեության: Ուսուցչական աշխատանքին զուգահեռ ստեղծագործել է՝ գրելով բանաստեղծություններ: 1935 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը, որն ավարտել է գերազանցության դիպլոմով, ապա ընդունվել է ասպիրանտուրա: Հայրենական պատերազմին սկսվելուն պես մեկնել է ռազմաճակատը՝ գրիչը փոխարինելով զենքով: Սկզբնական տարիներին աշխատել է զինվորական թերթում: Զոհվել է 1942 թ. մայիսի 31-ին Հյուսկովկասյան ռազմաճակատում՝ Մոզդոկի համար մղվող կռվում:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՄԱՋԱՍՊԻ (1912-1942) – Ծնվել է 1912 թ. Իգդիրում: Հետագայում նրանց ընտանիքը տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում: 1932 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և զորակոչվել բանակ: Չորս տարի Հեռավոր Արևելքի զորամասերում ծառայելուց հետո վերադարձել է Հայաստան: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Ստալինեց» (այժմ՝ «Կոմսոմոլեց») թերթի խմբագրությունում որպես գյուղական երիտասարդության բաժնի վարիչ:

1939 թ. Հ. Բաբաջանյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և միաժամանակ աշխատել համալսարանի տպարանում: 1941 թ. ամռանը նորից զորակոչվել է և ծառայել Հայկական 89-րդ դիվիզիայում: Նույն թվականի աշնանը Հ. Բաբաջանյանը այդ դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, մասնակցել Կովկասի քաղաքների

[195] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 293-294:

ու գյուղերի համար մղվող կատաղի մարտերին: 1942 թ. մարտերից մեկում տասնյակ հայ հայրենասերների հետ զոհվել է նաև լեյտենանտ Հակոբ Բաբաջանյանը: Նրա մասին մինչև այսօր էլ հիացմունքով են խոսում ընկերներն ու ծանոթները:

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵԻ (1913-1941) – Ծնվել է 1913 թ. Հաղպատում: Ծնողները հողագործ էին: Հայրը մահացել է՝ երեխաների հոգսը թողնելով կնոջ ուսերին: Առաջին համաշխարհային պատերազմը և հայ-թուրքական ընդհարումները ծանր կնիք են թողել Արտեմի ընտանիքի վրա:

Ա. Բադալյանը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան՝ եղբոր մոտ: Աշխատանքի է անցել «Ավանգարդի» խմբագրությունում: Հայոց լեզվի և գրականության երկարամյա ուսուցչի փորձն օգնել է հանդես գալ երիտասարդական մամուլում հետաքրքիր ու բովանդակալից հոդվածներով ու ակնարկներով:

1935 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1940 թ. ֆակուլտետի ղեկավարությունը փորձել է նրան որպես ասպիրանտ պահել, սակայն վերջինիս տարերքը լրագրությունն էր: Ա. Բադալյանը դարձավ «Ավանգարդի» ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: Նա ջանք ու եռանդ չէր խնայում երիտասարդությանը դաստիարակելու հայրենասիրական գաղափարներով: 1941 թ. Արևելյան Բելառուսիայում ծառայելու ժամանակ, երբ պայթել են թշնամու առաջին ռումբերը, ողբերգական մահով խզվել է ավագ լեյտենանտի կյանքի թելը[196]:

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՄՈՒՇԵՂ ԱՐՋՈՒՄԱՆԻ (1914-1943) – Ծնվել է 1914 թ. Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: 1932 թ. ավարտել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է, ընդունվել ասպիրանտուրա և զորակոչվել կարմիր բանակ: Իր զորամասի կազմում մարտեր մղելով՝ Մ. Բալասանյանը հասել է մինչև Թեոդոսիա: 1942 թ. ամռանը ծանր մարտերից մեկի ժամանակ գերի

[196] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 1, Երևան, 1989, էջ 301:

է ընկել: Այդ մասին «Սովետական Հայաստան» թերթն իր 1966 թ. մայիսի 5-ի համարում գրել է. «Հուլիսյան շոգ օրերին հիտլերականները բազմաթիվ ռազմագերիների Թեոդոսիայից ոտքով փոխադրեցին Ժիտոմիր՝ համակենտրոնացման ճամբարներից մեկը, որտեղ կար մոտ 50 հազար մարդ»: Հիտլերականները նրանց տանում էին՝ ծաղրուծանակի ենթարկելով: Երբեմն ավտոմատներից կրակ էին բաց անում նրանց վրա: Ռազմագերիների, այդ թվում՝ Մ. Բալասանյանի հայացքներն արտահայտում էին վրեժ, սակայն մահվան շեմին կանգնած՝ նրանք ցասումով համբերում էին: Ականատես հոդվածագիր Կոստանյանը պատմել է, որ Մ. Բալասանյանն իր առաջին հոգսն էր համարում գերիներին օգնելը: Նրա աջակցությամբ կազդուրվել են մի քանի գերիներ: Նա միշտ հուսադրել է գերիներին, որ նրանք ամուր մնան, սաղրանքների չենթարկվեն՝ սպասելով կարմիր բանակի մոտենալուն:

Մ. Բալասանյանը մի գիշեր իր ընդհատակյա աշխատողների օգնությամբ ճամբարից փախցրել և ուկրաինական պարտիզանների կողմն է անցկացրել 12 մարդու: Նա նման խնդիրներ հաճախ է կատարել՝ կապ հաստատելով պարտիզանների ու ընդհատակյա աշխատողների հետ: Գերիներին միշտ հասցրել է խորհրդային ինֆորբյուրոյի տեղեկությունները և ոգևորել նրանց:

1943 թ. ամռանը՝ ուկրաինական պարտիզանների և Ժիտոմիրի մարզի ընդհատակյա աշխատողների առաջադրած մարտական խնդրի կատարման ժամանակ, մի դավաճանի մատնությամբ ընկել է գեստապոյի ձեռքը: Ժիտոմիրի նացիստական դատարանի կողմից դատապարտվել է մահապատժի: Նրան գնդակահարել են Ժիտոմիրի անտառներից մեկում:

ԲԱԽՇԻՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1915-1944) – Ծնվել է 1915 թ. Ստեփանավանում: 1934 թ. ավարտել է Ստեփանավանի գյուղատնտեսական տեխնիկումը և մինչև 1936 թվականը աշխատել կոլտնտեսությունում: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և ավարտել 1941 թ. հունիսին: Պետական քննությունները հանձնելուց 9 օր հետո նա զորա-

կոչվել է բանակ: Մանգլիսի զինվորական ուսումնարանն ավարտելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Սկզբում եղել է դասակի հրամանատար, իսկ մայորի կոչում ստանալուց հետո՝ վաշտի հրամանատար: Մասնակցել է Գրոզնիի, Մոզդոկի, Տուապսեի և Նովոռոսիյսկի պաշտպանությանը: Եղել է խորհրդային դեսանտային այն զորամասերի կազմում, որոնք կատաղի մարտեր են մղել ֆաշիստական զորքերի դեմ: Նովոռոսիյսկի շրջանում տեղի ունեցած մարտերից մեկում Գ. Բախշինյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել Երևան՝ բուժվելու: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Երրորդ ուկրաինական ռազմաճակատ, որտեղ որպես կապի վաշտի հրամանատար մասնակցել է Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերին: Նա մասնակցել է նաև Լեհաստանի ու Չեխոսլովակիայի քաղաքների ու գյուղերի ազատագրմանը: Մուկաշովի շրջանում տեղի ունեցած մարտերում Գ. Բախշինյանը ծանր վիրավորվել է, տեղափոխվել Կրակովի հոսպիտալ, որտեղ էլ 29 տարեկան հասակում վախճանվել է:

Ռազմաճակատում Գ. Բախշինյանը մտերմացել է ուկրաինացի Միշայի հետ, և երկուսով պայմանավորվել են, որ մեկնումեկի զոհվելու դեպքում մյուսը մշտական կապ կպահպանի ընկերոջ ընտանիքի անդամների հետ: Մարտադաշտում տրված խոստման համաձայն՝ Բախշինյանի ընկեր Միշան մշտապես նամակագրական կապի մեջ է եղել Գ. Բախչինյանի քրոջ՝ Վարդուհի Բախչինյանի հետ:

Ռազմաճակատներում մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու համար Գ. Բախշինյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և «Խիզախության համար», «Մարտական ծառայության համար» մեդալներով:

1973 թ. Գ. Բախշինյանի դասընկերը՝ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Աշոտ Ասլանյանը, «Կոմունիստ» թերթում հրատարակված իր հոդվածում գրել է, որ Բախշինյանը եղել է համալսարանի այն սաներից մեկը, որն ունեցել է տաղանդավոր գիտնական լինելու և իր կյանքը հայրենիքին նվիրաբերե-

լու տվյալներ: Եվ իրոք, Բախշինյանը հայրենիքի համար մարտնչեց և նրա համար էլ ռազմադաշտում զոհաբերեց իր կյանքը:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ՏԻԳՐԱՆԻ (1919-1942) – Ծնվել է 1919 թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1939 թ., Վ. Բարսեղյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և սովորել է մինչև 1941 թ. դեկտեմբերը: Դեկտեմբերի 28-ին զորակոչվել է բանակ և ծառայության ուղարկվել Հայկական 89-րդ դիվիզիա: 1942 թ. օգոստոսին նա ավագ սերժանտի կոչումով մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ:

1942 թ. սեպտեմբերի 24-ի առավոտյան, երբ Հայկական 89-րդ դիվիզիան սկսել է իր հարձակումը թշնամու պաշտպանական գծերի վրա, Վ. Բարսեղյանը առաջադրանք է ստացել հրետանու կրակով լռեցնել հակառակորդի կրակակետը՝ ապահովելով հետևակի առաջխաղացումը: Այդ խնդիրը կատարելու ժամանակ, երբ թշնամին ինքն էլ հակահարձակման էր անցել, Վ. Բարսեղյանը մինչև վերջ մարտնչել է և թույլ չի տվել, որ թշնամին խորանա դիվիզիայի զբաղեցրած տարածք: Նրա մարտական ընկեր և համագյուղացի Արծրուն Եղիազարյանի գրավոր հիշողություններում նշված է, որ հրետանային ջոկի հրամանատար Բարսեղյանը վիրավոր վիճակում զարմանալի համառությամբ դիմադրել է թշնամուն այնքան ժամանակ, մինչև որ վերջինս դադարեցրել է իր հակագրոհը: Առաջին մարտում ցուցաբերած խիզախության համար նրան ներկայացրել են պարգևատրման:

Սեպտեմբերի 24-ի ուշ երեկոյան ավագ սերժանտ Վ. Բարսեղյանին ծանր վիրավոր վիճակում տեղափոխել են դաշտային հոսպիտալ: Նրա մարտական ընկերները հույս են ունեցել, որ նա կապաքինվի և նորից կվերադառնա իրենց շարքերը, բայց ապարդյուն: Բարսեղյանը ցուցաբերեց խիզախություն և փառքով զոհվեց հայրենիքի համար:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱԹԱԲԵԿ ԱԼԵՔՍԱՆԻ (1923-1943) – Ծնվել է 1923 թ. Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: 1940 թ. ավարտել է Աչաջուրի

միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ինչպես միջնակարգ դպրոցում, այնպես էլ համալսարանում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Համալսարանում սովորել է ընդամենը մեկ տարի: Գերազանց գնահատականներով հանձնելով առաջին կուրսի քննությունները՝ զորակոչվել է բանակ: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում և մասնակցել Կովկասի ազատագրման մարտերին: 1943 թ. փետրվարյան մարտերից մեկում ընդամենը 20 տարեկան հասակում Ա/ Գալստյանը զոհվել է: Հարազատները պահել են նրա վերջին նամակը, որում նա իր համոզմունքն է հայտնել ֆաշիստական Գերմանիայի դեմ խորհրդային ժողովրդի հաղթանակի մասին:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼԻ (1911-1941) – Ծնվել է 1911 թ. Արևմտյան Հայաստանի Սասուն գավառում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական կոտորածներից ազատվելու համար ընտանիքի հետ գաղթել և մշտական բնակություն է հաստատել Աշտարակի շրջանի Ավան գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է նույն գյուղում, իսկ 1933 թ. ավարտել է Երևանի լեռնաքիմիական տեխնիկումը: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետի երկրաբանության բաժինը: Եղել է ֆակուլտետի առաջավոր ուսանողներից մեկը, մի քանի տարի՝ ֆակուլտետի ԼԿԵՄ բյուրոյի քարտուղար: 1939 թ. ավարտել է համալսարանը, ստացել է երկրաբանի որակավորում և զորակոչվել բանակ: 1939-1940 թթ. ծառայել է Կիևի հատուկ զինվորական օկրուգի տանկային զորամասում: Երբ սկսվել է պատերազմը, Ա. Գալստյանը այդ նույն զորամասի կազմում որպես տանկիստ մասնակցել է ԽՍՀՄ սահմանամերձ տարածքների պաշտպանությանը: Մի քանի ամիս եղել է կատաղի մարտերի մեջ և 30 տարեկան հասակում զոհվել ռազմաճակատում:

ԳԱԼՍՏՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ ՏՈՆԱԿԱՆԻ (1909-1942) – Ծնվել է 1909 թ. Արևմտյան Հայաստանի Դերջան գավառի Դերջան գյուղում: 1915 թ. զրկվել է ծնողներից՝ ապաստան գտնելով որբանոցներում: 1928 թ.

ավարտել է Լենինականի (Գյումրի) մանկատան մանկավարժական տեխնիկումը և ուսուցչական աշխատանքի անցել Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում: 1929 թ. տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղ՝ նշանակվելով Մարտակերտի շրջանի Հաթեր գյուղի դպրոցի վարիչ: Կարճ ժամանակում աչքի է ընկել իր մանկավարժական և հասարակական աշխատանքով, որի համար առաջ է քաշվել և նշանակվել ժողկրթբաժնի տեսուչ:

1931 թ. Գ. Գալստյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1936 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1937 թ. զորակոչվել է բանակ: Երկու տարի հետո՝ 1939 թ., զորացրվել է և շարունակել կրթությունը ասպիրանտուրայում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1940 թ., նորից զորակոչվել է բանակ: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին մտել է ամենակատաղի կռիվների մեջ: Վաշտի հրամանատար Գ. Գալստյանը մասնակցել է սահմանամերձ շրջանների համար մղվող մարտերին՝ դրսևորելով մեծ հայրենասիրություն: Ֆաշիստական զորքերի կատաղի հարձակումներին ցույց է տվել համառ դիմադրություն և պարգևատրվել շքանշանով:

1942 թ. Գ. Գալստյանը մասնակցել է Կերչի ազատագրման մարտերին: 1942 թ. մայիսին՝ Կերչի մոտ հետախուզական գործողության ժամանակ, հերոսաբար զոհվել է:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1920-1945) – Ծնվել է 1920 թ. Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Եղել է ժիր ու աշխույժ դպրոցական, ավարտել է դպրոցը բարձր առաջադիմությամբ, սիրել է կարդալ իր ժողովրդի կյանքը պատկերող վեպեր, որոնք նրա մեջ բորբոքել են հայրենասիրական կրակ: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Ա. Գրիգորյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Սովորել է մեծ ոգևորությամբ և դարձել ուսման առաջավոր: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, ուսումն ու երազանքները կիսատ թողած՝ զորակոչվել է բանակ: Վրաստանի Թելավի քաղաքի

սպայական զինվորական ուսումնարանն ավարտելուց հետո՝ 1943 թ., ուղարկվել է գործող բանակ՝ նշանակվելով գումարտակի հրամանատար: Անդրանիկն իր գումարտակով մասնակցել է ուկրաինական բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ազատագրմանը, մարտերում աչքի է ընկել իր աչալրջությամբ, արիությամբ և պարգևատրվել Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով: Գվարդիայի մայոր Ա. Գրիգորյանի մարտիկները Երկրորդ և Երրորդ ուկրաինական ռազմաճակատների մյուս զորամասերի հետ մասնակցել են Հունգարիայի ազատագրմանը: 1945 թ. փետրվարի 13-ին, երբ համառ մարտերից հետո ազատագրվել էր Բուդապեշտը, Ա. Գրիգորյանը ներկայացվել է երկրորդ կառավարական պարգևի: Մոտ էր արդեն հաղթանակի օրը, երբ պետք է իրականանային Անդրանիկի երազանքները, բայց նա ընկավ հերոսի մահով հեռավոր Ավստրիայում:

Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի դպրոցական թանգարանի մի անկյունը նվիրված է Անդրանիկ Գրիգորյանին: Այստեղ ցուցադրված են նրա լուսանկարը, ռազմաճակատային նամակները, ծոցատետրերը և այլ իրեր: Նամակներից մեկում, որ նա գրել է 1945 թ. ապրիլի 18-ին, ասված է. «Մի ցանկություն ունեմ, մի իղձ՝ տեսնեմ պատերազմի վերջը և վերադառնամ Հայաստան, հայոց հողը համբուրեմ չորացած շուրթերով և այնտեղ առնեմ այնքան բաղձալի հանգիստ: Կարծում եմ՝ իղձս կկատարվի»:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ԿԱՐԱՊԵՏԻ (1912-1942) – Ծնվել է 1912 թ. ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում: Սովորել է Կուսապատի և Մարտակերտի միջնակարգ դպրոցներում: Ուսումը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը: Այն ավարտելով՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի «հայոց լեզու և գրականություն» բաժինը: 1938 թ. ավարտել է և աշխատել է դպրոցում որպես ուսուցիչ: 1938 թ. կազմել է իր բանաստեղծությունների ժողովածուն և ստեղծագործությունները տպագրել տարբեր թերթերում ու պարբերականներում: 1938-1939 թթ. աշխատել է Ստեփանակերտում որպես մարզային ժողկրթբաժնի վարիչ և դասավանդել է Շուշիի մանկավարժական

ինստիտուտում որպես հայոց լեզվի և գրականության դասախոս: 1939 թ. զորակոչվել է բանակ և 1941-1942 թթ. կռվել Արևելյան Բելառուսիայում: Ջոհվել է 1943 թ. հունվարին Խատին գյուղի պաշտպանական մարտերում:

ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԳՈՐՅԱՆ) ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳԻ (1906-1942) – Ծնվել է 1906 թ. Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Լամզկերտ գյուղում: Կոտորածի և գաղթի գեհենական ճամփաները նրան իր քրոջ և հազարավոր որբերի հետ հասցրել են Էջմիածին, այնտեղից էլ՝ Գանձակ (Կիրովաբադ): 1919 թ. որպես «ըմբոստ և անհուսալի» Էզրաս Հասրաթյանի և Սարմենի հետ Հայկը հեռացվել է Գանձակի որբանոցից և եկել Երևան: Դպրոցն ավարտելուց հետո միջնակարգ կրթությամբ պատանին ուսուցիչ է նշանակվել Ապարանի շրջանի Մռավյան գյուղի դպրոցում, որոշ ժամանակ էլ աշխատել է Սանահինում: Հայոց լեզվի և գրականության ուսուցչին հուզել է բարձրագույն կրթություն ստանալու հանգամանքը: 1922 թ. նա ընդունվել է Երևանի համալսարանի մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը, որը գերազանցությամբ ավարտել է 1927 թ. որպես անվանական թշակառու: Դրանից անմիջապես հետո վերադարձել է նորից դպրոց, այս անգամ՝ Երևանի Աբովյանի անվան միջնակարգ դպրոց: Հետո Հ. Գոբյանը դասախոսական աշխատանքի է հրավիրվել Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ: Նա դասավանդել է հայ, ռուս և եվրոպական դասական գրականություն: Նա պաշտպանության է ներկայացրել իր թեկնածուական ատենախոսությունը, որի պաշտպանությունն այդպես էլ չի կայացել, քանի որ զորակոչվել է բանակ: Ատենախոսության փոխարեն Հ. Գոբյանը պաշտպանել է Կերչն ու Սևաստոպոլը և 1942 թ. հունիսին՝ Սևաստոպոլի պաշտպանության ժամանակ, ընկել գիտնական-մանկավարժ մարտիկին վայել մահով:

Հ. Գոբյանը ոչ միայն մամուլում և գրողների տանը, այլև Երևանի պետհամալսարանում ակտիվորեն մասնակցել է գրական-գիտական կյանքին[197]:

[197] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մռւսաները չլռեցին, հ. 2, էջ 444-445:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱԿՈԲ ԳԵՎՈՐԳԻ (1918-1941) – Ծնվել է 1918 թ. Թազագյուղում: Սովորել է տեղի դպրոցում, ավարտել է Խարբերդի միջնակարգ դպրոցը: 1939 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: 1941 թ. մեկնել է զինծառայության: Կռվել է Մերձբալթիկայում: Զոհվել է 1941 թվականին[198]:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԵՂԻՇԻ (1913-1943) – Ծնվել է 1913 թ. Փարպի գյուղում: Հարևան Բազմաղբյուր գյուղի կոլերիտ յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո իր ուսումը շարունակել է Երևանում: Այնուհետև ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետ: Համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանային թերթում որպես պատասխանատու քարտուղար, հետագայում տեղափոխվել է «Ավանգարդի» խմբագրություն: 1942 թ. աշխատել է «Սովետական Հայաստան» թերթում և ՀՀԳ-ում որպես բաժվար ու հերթապահ խմբագիր: Պատերազմի սկսվելուց հետո դարձել է «Կարմիր զինվոր» թերթի թղթակից: Մ. Գրիգորյանը մինչև պատերազմի մեկնելը սովորել է Բաքվի հրամանատարական կարճատև դասընթացներում, կապիտանի կոչումով մեկնել հայկական հրաձգային դիվիզիա, որտեղ նշանակվել է գնդի քաղղեկ: Քաջաբար կռվել է Նովոռոսիյսկում, Տուապսեում, Թաման կղզում: Մի անգամ վիրավորվել է Հաջիմուշկայի համար ծավալված մարտերում, երկրորդ անգամ՝ դեսանտայիններին օգնության հասնելիս: Արժանացել է «Կարմիր աստղ» և «Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճան» շքանշանների: Զոհվել է 1943 թ. Մոլդոբեկում[199]:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՍՈՒՆԻԿ ՍԻՐԵԿԱՆԻ (1921-1941) – Ծնվել է 1921 թ. Անիի շրջանի Մարալիկ գյուղում: 1938 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) 50-րդ միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: Սովորել է մինչև 1941 թ. սեպտեմբեր ամիսը, որից հետո կամավոր մեկնել է կարմիր բանակ: Պատերազմի առաջին իսկ օրը

[198] Տե՛ս **Ս. Գրգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 221:
[199] Տե՛ս **Ս. Գրգորյան,** Մուսաները չլռեցին, Երևան, 1989, հ. 1, էջ 304:

ուղարկվել է Բաթումի, ապա՝ Փոթի: Նա խնդրել է հրամանատարությանը, որ իրեն ուղարկեն Ղրիմ՝ մասնակցելու Սևաստոպոլի համար մղվող մարտերին, և հրամանատարությունը հարգել է նրա կրկնվող խնդրանքները: Սևաստոպոլի մարտերից մեկում Գրիգորյանը ծանր վիրավորվել է: Նրան տեղափոխել են Սոչի: Նա չգիտեր, որ թշնամու գնդակը թունավոր է եղել՝ թողնելով իր մահաբեր հետևանքները:

1941 թ. դեկտեմբերի 23-ին Ս. Գրիգորյանի ծնողները Սոչիի հոսպիտալից հեռագիր են ստացել՝ տեղեկանալով իրենց որդու ծանր վիճակի մասին: Ծնողները և քույրերը շտապել են տեսնել նրան և գոնե լսել նրա վերջին խոսքերը: Դեկտեմբերի վերջին ծնողները հասել են իրենց վիրավոր որդուն: Նրա աճյունը տեղափոխել են գյուղ և պահ տվել հայրենի հողին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՕՆԻԿ ԱՐՏԱՇԻ (1920-1942) – Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մալաղիլեն գյուղում: Վաղ հասակում զրկվել է հորից և մնացել ավագ եղբոր խնամքի տակ: Սկզբնական կրթությունը ստացել է Սոս գյուղում, իսկ միջնակարգը՝ Շուշիում: 1937 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 6-ին զորակոչվել է կարմիր բանակ: Նրա ուսանող ընկերների տված տեղեկությունների համաձայն՝ Օ. Գրիգորյանը սովորել է կարճատև ռազմական դասընթացում և որպես հրետանավոր մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Ընկերների հետ ունեցած նամակագրություններից ակնհայտ է դառնում, որ նա զոհվել է 1942 թ. կեսերին:

ՋՈՒՔՅԱՆ ԴԱՎԻԹ ԴԱՎԹԻ (1917-1942) – Ծնվել է 1917 թ. Երևանում, 1937 թ. ավարտել է Երևանի Կրուպսկայայի (այժմ՝ Ն. Աղբալյանի) անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ավարտելուց հետո՝ 1940 թ., զորակոչվել է բանակ և Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցել պատերազմական գործողություններին: 1941 թ. վերջին և 1942 թ. սկզբին եղել է Կենտրոնական ռազմաճակատում: Մոսկվայի տակ կարմիր

բանակի տարած հաղթանակից հետո, երբ թշնամին ետ է շպրտվել, Դ. Զուբյանը եղել է հարձակվող մոտոմեքենայացված զորամասում: Նահանջող թշնամու հետ տեղի ունեցած մարտերից մեկում իր կյանքի 25-րդ տարում զոհվել է: Նրա մարտական գործողությունների մասին փաստում են մեդալներն ու շնորհակալագրերը, որոնց նա արժանացել է մարտերում ցուցաբերած խիզախության համար:

ԶՈՒՐԱԲՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆԻ (1912-1942) – Ծնվել է 1912 թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: 1930 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել ջրային տնտեսությունում: 1933-1934 թթ. աշխատել է Աղբրեջանական ԽՍՀՄ-ում որպես տեխնիկ-երկրաբան: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա՝ «երկրաբանություն» մասնագիտացմամբ: 1941 թ. Զուրաբյանը զորակոչվել է բանակ: Կարճատև դասընթացում ռազմական գործը սովորելուց հետո ուղարկվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Ռազմական գործողություններին նրա մասնակցության մասին մեզ մանրամասնություններ չեն հասել: Համալսարանական ընկերների տված բանավոր տեղեկությունների համաձայն՝ Վ. Զուրաբյանը զոհվել է 1942 թ. Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Դ. Զուրաբյանը, բացի մորից, այլ հարազատներ չի ունեցել: Նրա միայնակ մայրը երկար ժամանակ ապրել է համալսարանի հանրակացարանի դասախոսական մասնաշենքում: Որդու ուսանողական և մարտական ընկերները, ինչպես նաև համալսարանի ղեկավարությունը, արել են ամեն ինչ, որ «Սև մայրիկը» (այդպես էին կոչում նրան) թեթև տանի որդու կորստյան վիշտն ու նյութական դժվարությունները: Իսկ երբ զոհվածի մայրը մահացավ, նրան որդիաբար հողին հանձնեցին որդու ընկերները:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՍԱՅԻ (1912-1941) – Ծնվել է 1912 թ. Լոռու Դսեղ գյուղում: 1934 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1939 թ. համալսարանից զորակոչվել է կարմիր բանակ և մասնակցել խորհրդա-

ֆիննական պատերազմին: 1941 թ., երբ նա պետք է ավարտեր իր զինվորական ծառայությունը, սկսվել է Հայրենական պատերազմը: Լինելով կադրային զինվոր՝ Ա. Թումանյանն առաջին իսկ օրերին մասնակցել է սահմանամերձ շրջաններում ֆաշիստական զորքերի դեմ մղվող կատաղի մարտերին: 1941 թ. ամռանը մասնակցել է Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի և Թեոդոսիայի պաշտպանությանը:

1941 թ. աշնանը Թումանյանին ուղարկել են սովորելու Դնեպրոպետրովսկու հրետանային ուսումնարանում: Երբ ֆաշիստական զորքերը ներխուժել են Դնեպրոպետրովսկ, մարտերի մեջ են մտել նաև ուսումնարանի սաները: Նրանց մի ջոկատը, որի կազմում եղել է Ա. Թումանյանը, համառ դիմադրություն է ցույց տվել ֆաշիստ բարբարոսներին՝ մինչև վերջը պաշտպանելով տարածքը: Սակայն մեծաթիվ ու մինչև ատամները զինված թշնամու հետ տեղի ունեցող անհավասար մարտում հերոսաբար զոհվել են Ա. Թումանյանն ու նրա մարտական ընկերները:

Նրա հարազատների մոտ պահպանվել են այն նամակները, որոնցում նա միշտ հավատ է ներշնչել իր հարազատներին և հատկապես երեխաներին, որ ուշ թե շուտ թշնամին ջախջախվելու է, և նրան չի հաջողվի ներխուժել Անդրկովկաս:

Համալսարանի սանի՝ Աշոտ Թումանյանի երեխաները չմոռացան իրենց հոր պատգամները: Նյութական և հոգեկան զրկանքներ կրելով՝ նրանք սովորեցին ու ավարտեցին համալսարանը, որտեղ սովորել էր իրենց հայրը: Երկրաբան ու տնտեսագետ նրա երկու զավակները ժողովրդական տնտեսության ոլորտում ճեռնամուխ եղան հայրենանվեր աշխատանքի:

ԽԱԼԱԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՎԱՆԴԻ (1923-1944) – Ծնվել է 1923 թ. Իջևանի շրջանի Իջևան գյուղում: 1940 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Սովորել է մինչև 1942 թ. հունվարի 24-ը: Երկրորդ կուրսի առաջին կիսամյակի քննությունները ավարտելուց հետո զորակոչվել է կարմիր բանակ: Այնուհետև սովորել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանում: Նույն թվականի աշ-

նանը ավարտել է ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կոչում: Հ. Խալաթյանը մեկնել է ծառայության տանկային զորամասերում: 1942 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին որպես տանկային դասակի հրամանատար մասնակցել է Ստալինգրադի համար մղվող կատաղի մարտերին: Նրա մարտակից ընկերներից մեկի նամակում գրված է, որ տանկային դասակի հրամանատար, լեյտենանտ Խալաթյանն իր ռազմավարական հնարներով և թշնամուն հանկարծակի խաչաձև կրակի տակ վերցնելու հնարամտությամբ ցույց է տվել, թե ինչպես պետք է վարել տանկային մարտերը:

Ստալինգրադում կարմիր բանակի տարած հաղթանակից հետո Հ. Խալաթյանը մեկ այլ զորամասի հետ մեկնել է Ուկրաինական ռազմաճակատ: Մի քանի ամիս հետո ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո վերադարձել է իր զորամասը և կռվել մինչև 1944 թ. վերջը: 1944 թ. նոյեմբերին Հ. Խալաթյանը ծնողներին գրել է վերջին նամակը, որից հետո նրան համարել են անհայտ կորած:

Ֆաշիստական տանկերի դեմ մղած մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար Հ. Խալաթյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

ԽԱՉՅԱՆ ԹԵՎԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ (1913-1944) – Ծնվել է 1913 թ. Նախիջևանի Զնաբերդ գյուղում: 1931 թ. ավարտել է գյուղի 7-ամյա դպրոցը և ընդունվել Երևանի գյուղատնտեսական տեխնիկումը: Ավարտելուց հետո մի որոշ ժամանակ եղել է բանվոր, զբաղվել է նաև ստեղծագործական գործունեությամբ և 1933 թ. ընդգրկվել Խորհրդային գրողների միության մեջ:

1934 թ. Թ. Խաչյանը ընդունվել է համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է համալսարանը՝ անցնելով աշխատանքի, ընդունվել է նաև համալսարանի ասպիրանտուրան: 1941 թ. համալսարանի շատ ասպիրանտների հետ ռազմաճակատ է մեկնել նաև Թ. Խաչյանը: «Գրական թերթի» 1975 թ. մայիսի առաջին համարում տպագրված «Մի ձեռքիս հրացանն է, մյուսին՝ գրիչ» հոդվածում կարդում ենք. «Պատերազմի արհավիրքների մեջ ծնունդ են

առնում մարտիկ բանաստեղծ Խաչյանի վրեժի ցասման անսպառ հրով լեցուն տասնյակ բանաստեղծություններ՝ «Երդում», «Սահմանի վրա», «Նոյեմբերյան հուշ», «Փափագ» և այլն, որոնցում արտացոլվել են նրա ներաշխարհը, հայրենասիրությունն ու մարդկանց նկատմամբ ունեցած խոր հավատը: Այդ մասին է վկայում 1942 թ. ռազմաճակատից գրած նրա նամակը, որում ասված է. «Մի ձեռքիս հրացանն է, մյուսին՝ գրիչ: Մեկով կրակում եմ թշնամու վրա, մյուսով՝ գրում հայրենասերների և քաջերի մասին: Այսօր ես ահով նայեցի ձեռքիս հրացանին, զգացի, որ ատում եմ մարդ սպանելու «արվեստը»: Դա ինձ սարսափելի չթվաց, երբ հիշեցի, որ դրանով փրկելու եմ հազարավոր անմեղ երեխաների ու մայրերի կյանքը, մի քիչ մխիթարվեցի»:

Մի այլ նամակում նա գրել է. «Հայրենիքի համար մեռնելը սուրբ մահ է: Մահը, իհարկե, անարժան բան է, բայց կանգնած է մեր ճանապարհի վրա, և վաղ թե ուշ նրանից խուսափել չենք կարողանա: Հաղթանակը մերը կլինի»:

1944 թ. Կիևի համար մղվող մարտերում ընկավ նաև քաջարի մարտիկ, բանաստեղծ, համալսարանական Թևան Խաչյանը: Ռազմաճակատային նամակներն ու բանաստեղծությունները դարձան նրա կյանքի միակ վկան: Ծալծլված նամակներում ապրում են բանաստեղծ մարտիկի հայրենասեր ու բոցավառ սիրտը, նրա կարոտն ու ցավիրվածությունը հայրենիքի ու հարազատների հանդեպ:

ԽՆԿՈՅԱՆ ՎԱՉԵ ԱԹԱԲԵԿԻ (1904-1942) – Ծնվել է 1904 թ. ապրիլի 2-ին Ղարաքիլիսիայում (Վանաձոր)՝ մեծանում առակագիր և մանկավարժ Խնկո Ապոր ընտանիքում: 1908 թ. Հ. Թումանյանի միջնորդությամբ ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ Վ. Խնկոյանը հաճախել է Ս. Լիսիցյանի պանսիոնը: 1922 թ. Վ. Խնկոյանը ավարտել է միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ Վ. Խնկոյանն ընդունվել է Երևանի ժողովրդական համալսարանի հասարակագիտության ֆակուլտետի պատմագրական բաժին: Ուսումն ավարտելուց հետո մեկնել է Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ)՝ սովորելու Ֆ. Էնգելսի անվան

ժողտնտեսության ինստիտուտում: Ավարտելուց հետո Լենինգրադի տարբեր բուհերում և դպրոցներում «քաղաքատնտեսություն» և «հասարակագիտություն» է դասավանդել: Վ. Խնկոյանը գրել է առակներ, բանաստեղծություններ, որոնք տպագրվել են տարբեր թերթերում: Հայրենական մեծ պատերազմի օրերին՝ 1942 թ. վերջերին, կնոջ և երեխաների հետ հայտնվել է թշնամու շրջափակման մեջ, զենքը ձեռքին մարտնչել է, սակայն գերմանացի բարբարոսները նրան ընտանիքի հետ գնդակահարել են:

ԽՈՋԱՅԱՆ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ (1920-1942) – Ծնվել է 1920 թ. Շամխորի շրջանի Բարում գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ավարտել է կրթությունը 1940-1941 ուստարում և անմիջապես զինվորագրվել հայրենիքի պաշտպանության: Սովորել և ավարտել է Սումխումի ռազմահետևակային ուսումնարանը: Ավարտելուց հետո ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում և 1942 թ. հուլիսի 29-ին ուղարկվել է Հյուսիսկովկասյան ռազմաճակատ որպես ռազմաճակատի հրաձգային ջոկի հրամանատար: Երիտասարդ բանաստեղծն ու լրագրողը աչքի է ընկել Տուապսեի, Գելենջիկի և Նովոռոսիյսկի համար մարտնչելիս: Այդ մարտերից մեկում մահացու վերք ստանալով՝ տեղափոխվել է Գագրայի զինհոսպիտալ: Այստեղ էլ 1942 թ. նոյեմբերի 29-ին կնքել է իր մահկանացուն:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԹԱՆԵՍԻ (1920-1942) – Ծնվել է 1920 թ. Վաղարշապատում (Էջմիածին): 1937 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Վաղարշապատի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին համալսարանն ավարտելուց անմիջապես հետո զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Սումխումի ռազմական դպրոցը: Նույն թվականին ավարտել է այն, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և ականանետային դասակի հրամանատարի պաշտոնով ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Հարավսլավիայի ազատագրմանը: 1944 թ. հոկտեմբերի 20-ին Բելգրադի ազատագրման համար մղվող կատաղի մարտերից մեկում 24 տարեկան հասակում զոհվել է: Հ. Կարապետյանի ըն-

կերները սիրով ու հարգանքով են խոսել նրա մասին՝ որպես լավագույն ընկերոջ, հայրենասերի ու քաղաքացու:

Համալսարանի ուսանող Հայրապետ Կարապետյանը թաղված է Հարավսլավիայում:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՆԻԿ ԲԱԳՐԱՏԻ (1909-1942) – Ծնվել է 1909 թ. Սուրմալուի գավառի Դաշբուռուն գյուղում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընտանիքը հանգրվանել է Երևանի մերձակա Շենգավիթ գյուղում: Վ. Կարապետյանը դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1935-1941 թթ. որպես ուսուցիչ աշխատել է Նոր Արեշում, Թազա գյուղում, այնուհետև՝ Նոր Խարբերդում: 1941 թ. Վ. Կարապետյանը մեկնել է ռազմաճակատ: Չանցած մեկ տարի՝ թշնամու մահաբեր գնդակը խոցել է մանկավարժ-հրամանատարին, և նա զոհվել է[200]:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԻ (1914-1943) – Ծնվել է 1914 թվականին: Սկզբում աշխատել է որպես ցրիչ «Սովետական Հայաստանի» խմբագրությունում, հետո՝ գրաշար, որոշ ժամանակ անց՝ գրական աշխատող, բրիգադիր արդյունաբերության բաժնում: Այստեղից նաև տեղափոխել են «Ավանգարդի» խմբագրություն որպես կուլտուրայի և կրթության բաժնի վարիչ: 1935 թ. «Ավանգարդի» գործուղմամբ ընդունվել է Երևանի պետական համալսարան: Ավարտելով այն՝ կրկին վերադարձել է երիտասարդական թերթ Մի քանի ամիս պատասխանատու քարտուղար աշխատելուց հետո ՀԼԿԵՄ կենտկոմը նրան նշանակել է խմբագրի տեղակալ: 1941 թ. զինվորագրվել է խորհրդային երկրի մայրաքաղաքի պաշտպանության գործին: Լեյտենանտ Վարդան Կարապետյանը գործուղվել է Մոսկվա՝ առաջնագիծ: Խիզախորեն մարտնչել է թշնամու դեմ Սոժի և Դնեպրի վճռական գետանցումների ժամանակ: Մասնակցել է Կուրսկի, Խարկովի, Կիևի, Դնեպրոպետրովսկի ազատագրման համար ծավալված մարտերին: Զոհվել է 1943 թվականին[201]:

---

[200] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 219:
[201] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 1, էջ 311-312:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԻ (1922-1942) – Ծնվել է 1922 թ. Ախուրյանի շրջանի Իլխիյաբբի գյուղում: 1926 թ. ավարտել է շրջկենտրոնի կոլերիտ դպրոցը, իսկ 1937 թ.՝ Լենինականի (Գյումրի) մանկավարժական ուսումնարանը: 1931-1935 թթ. Հայաստանի տարբեր շրջաններում աշխատել է որպես ուսուցիչ: 1934-1935 թթ. ծառայել է բանակում և զորացրվել կրտսեր լեյտենանտի կոչումով:

1938 թ. Ն. Կիրակոսյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետի աշխարհագրական բաժինը: Սովորել է մինչև երրորդ կուրսը: Ն. Կիրակոսյանը եղել է համալսարանի ակադեմիապես առաջավոր ուսանողներիդ մեկը և հասարակական աշխատանքների ակտիվ մասնակից: 1941 թ. հուլիսին չորրորդ կուրսից զորակոչվել է բանակ և որպես փորձված զինվորական մեկնել է ռազմաճակատ, ակտիվ մասնակցություն ունեցել Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի քաղաքների պաշտպանությանը: 1942 թ. ֆաշիստական հարձակվող զորամասերի դեմ մղվող կատաղի մարտերում Ն. Կիրակոսյանը զոհվել է:

ԿՈՒԼՕՂԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1904-1942) – Ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: 1915 թ. Կուլօղլյանների ընտանիքը, կրելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության զարհուրելի դառնությունները, բռնագաղթել է Արևելյան Հայաստան: Այստեղ մահացել է Գրիգորի հայրը, մայրը ստիպված պատանուն հանձնել է ամերիկյան որբանոց: Երևանում միջնակարգ կրթություն ստանալուց հետո՝ 1927 թ., ապագա գրականագետը ընդունվել և 1931 թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի պատմատնտեսագիտական ֆակուլտետը: Հասարակական, կոմերիտական ակտիվ աշխատանքի համար նրան ընդունել են ԽՄԿԿ շարքերը: Մեկ տարի անց նա որպես դիալեկտիկական և պատմական մատերիալիզմ առարկայի գծով դասախոս ստացել է դոցենտի կոչում՝ դասավանդելով Երևանի պետական համալսարանում: Կարճ ժամանակ անց Գ. Կուլօղլյանը, գեղագիտության, ճշմարտության դիրքերից անկողմնապահ վերլուծելով գրական ստեղծագործությունները, շահել է շրջապատի համակրանքն ու վստահությունը: Նա ռազմադաշտ է

մեկնել Մոսկվայից 1941 թ., երբ աշխատում էր ատենախոսության վրա: Տուլայի մոտ անձնվիրաբար մարտնչել է գերմանաֆաշիստական հրոսակախմբերի դեմ և այս կատաղի ճակատամարտում էլ զոհվել 1942 թվականին: Գրիգոր Կուլօղլյանը բազմակողմանի զարգացած մտավորական էր, խորաթափանց գրականագետ-տեսաբան և քննադատ, ԽՍՀՄ և Հայաստանի գրողների միության անդամ, նրան մեծ ապագա էր սպասվում[202]:

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԳԵՎՈՐԳԻ (1918-1941) – Ծնվել է 1918 թ. Թազագյուղում: Սովորել է ծննդավայրի և Նոր Խարբերդի դպրոցներում: 1939 թ. ընդունվել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետ: 1941 թ. մեկնել է զինծառայության: Գ. Հակոբյանի մարտական սխրանքների ցուցակում արձանագրված են գերմանական ինքնաթիռների, տանկերի, զինապահեստների պայթեցում, առանձին սվինամարտեր, թշնամու գիշատիչ գրոհների վիժեցում և այլն: Կռվել է Մերձբալթիկայում: Զոհվել է 1941 թվականին[203]:

ՀԱԿՈԲՅԱՆ (ՍԵՎԱՆՅԱՆ) ԳՈՒՐԳԵՆ ԵՆՈՔԻ (1912-1945) – Ծնվել է 1912 թ. Վ. Ախտայում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1936 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: Տնտեսական ծանր պայմանները ստիպել են, որ նա 1936 թ. բաց թողնի Երևանի պետական համալսարանում առկա ուսում ստանալու հնարավորությունը՝ անցնելով աշխատանքի: Հայկական ԽՍՀ լուսժողկոմատը երիտասարդ Հակոբյանին գործուղել է Արտաշատ: Աշխատել է որպես ուսուցիչ: 1938 թ. ուսումը շարունակել է Մանկավարժական ինստիտուտում: Ստեղծագործել է՝ տպագրելով բանաստեղծություններ Սևանյան ստորագրությամբ: 1941 թ. էքստեռն կարգով հանձնելով քննությունները՝ պատրաստվել է դիպլոմ ստանալ, սակայն ստիպված է եղել գրիչի փոխարեն զենք վերցնել՝ հայրենիքը պաշտպանելու համար: Չնայած 5-6 ամսվա ամուսնացած էր, ինքնակամ զինվորագրվել է հայրենիքի պաշտպանությանը: Որպես կապավոր քաջաբար մարտնչել է թշնամու դեմ՝ Հյուսիսային Կովկասից, Ռումինիայից, Հունգարիայից հասնելով Չեխոսլովակիա:

---

[202] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 446-447:
[203] Տե՛ս Ս. Գրիգորյան, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 221:

Որպես խորհրդային բանակի ռազմիկ, 409-րդ հրաձգային գնդի կապավոր՝ գնդացրորդ Հակոբյան-Սևանյանը քաջաբար մարտնչել է՝ Բալկանյան երկրները թշնամուց ազատագրելու համար:

Ջոհվել է Սոպկա գյուղի մոտ խորհրդային բանակի հետ հետախուզական կապը պաշտպանելու համար գետն անցնելիս, երբ թշնամին նկատել է նրանց և ռմբակոծություն սկսել: Վիրավորվել է ձախ ոտքից: Մինչև հասցրել են հոսպիտալ, արյունաքամ է եղել՝ արյան շիթեր ցողելով շքանշանների և մեդալների վկայականներին[204]:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԽՇԻ ՇԱՄԻՐԻ (1922-1943) – Ծնվել է 1922 թ. Լեռնային Ղարաբաղի Թալիշ գյուղում: 1939 թ. ավարտել է Կիրովաբադի հայկական միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Համալսարանում ընդամենը մեկ տարի սովորելուց հետո ուսման գերազանցիկ և հարվածային-կոմերիտական Բ. Հարությունյանը զորակոչվել է կարմիր բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո նա նպատակ է ունեցել շարունակել կիսատ թողած ուսումը, սակայն նրա այդ իղձը մնացել է անկատար: Հայրենական մեծ պատերազմի սկզբին Բ. Հարությունյանը ծառայելիս է եղել Արևմտյան Ուկրաինայի Դրոգոբիչի մարզի Լիսովսկու շրջանի սահմանապահ զորամասում: Ընկերների նամակները վկայում են, որ Բ. Հարությունյանը սահմանապահի ծառայության մեջ անմիջապես աչքի է ընկել իր քաղաքական ու մարտական պատրաստականությամբ, որի համար պարբերաբար ընտրվել է կոնֆերանսների պատգամավոր: Հետաքրքրական է, որ 1941 թ. սկզբին գրած իր երկու նամակներում նա հիշեցրել է, որ սահմանի այն կողմում տիրում է անհանգիստ վիճակ և վտանգ է սպառնում:

1941 թ. հունիսի 22-ին՝ գերմանական հորդաները ԽՍՀՄ պետական սահմանն անցնելիս, առաջինը ընդհարվել են սահմանապահ զորամասերի, այդ թվում՝ այն զորամասի հետ, որի գերազանցիկ սահմանապահներից մեկը եղել է համալսարանի սան Հարությունյանը: Այդ օրը սահմանապահ շատ ռազմիկների հետ հայրենի հողը

[204] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 219-220:

պաշտպանելիս զոհվել է նաև 21-ամյա Բախշի Հարությունյանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԵՆԳԻԲԱՐԻ (1920-1941) – Ծնվել է 1920 թ. Ղափանի լեռնային գյուղերից մեկում: Գերազանցությամբ ավարտելով Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ 1939 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Մանկուց ստեղծագործել է: Նույն թվականի աշնանը նրան Ղափան են կանչում՝ ուղարկելով հերթական զինծառայության: 84-րդ հրաձգային գնդում Խ. Հարությունյանը ուսանել է Արևմտյան զինվորական օկրուգի հատուկ դաընթացներում, ինքնակրթությամբ սովորել է անգլերեն և գերմաներեն: Բրեստում գնդի հրամդպրոցը կրտսեր լեյտենանտի կոչումով ավարտելուց հետո նրան գործուղել են Բրեստ-Լիտովսկ՝ որպես հրամանատար սահմանային ամրությունների կառուցման հարցերով զբաղվելու համար: Սահմանային գծում հերթապահության ժամանակ թշնամին հարձակվել է՝ ռմբակոծելով բելառուսական հողը: 1941 թ. քաջարի լեյտենանտը զոհվեց: Քույրը Բրեստից մի բուռ հող է բերել և եղբոր համար վրան շիրմաքար դրել[205]:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ (1914-1941) – Ծնվել է 1914 թ. Վանում: Վասպուրականի հուլիսյան մեծ գաղթի ժամանակ, երբ եղել է ընդամենը մեկ տարեկան, նրա հայրն ու մայրը, երեք փոքր երեխաների հետ բազմաթիվ տառապանքներ կրելով, հասել են Երևան: Գաղթի ճանապարհի ծանր տառապանքների պատճառով Երևանում մահացել է նրա հայրը: Հազարավոր գաղթականների նման որբացել են նաև Վահագնը ու նրա փոքր քույրն ու եղբայրը: Օրվա հացը ձեռք բերելու համար 12 տարեկանից մտել է աշխատանքի: Լինելով արտակարգ ընդունակ և ուշիմ պատանի՝ նա աշխատանքին համընթաց ստացել է միջնակարգ կրթություն: 1934 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1939 թ. նա ավարտել է իրավաբանական ֆակուլտետը և նշանակվել քննչական աշխատանքի Երևան քաղաքում, ապա զորակոչվել է կարմիր բանակ:

[205] **Մ. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 233:

Նույն թվականին նրան ուղարկել են՝ Սարատովի զինվորական դպրոցում սովորելու: Երկու տարուց հետո ավարտելով այն՝ ստացել է լեյտենանտի կոչում: Վ. Հարությունյանը մասնակցել է ֆաշիստական զորքերի դեմ մղվող առաջին իսկ մարտերին: Ժիտոմիրի տակ մղվող կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել է և տեղափոխվել Խարկովի հոսպիտալ: Համալսարանի ուսանող Վ. Հարությունյանը վախճանվել է 27 տարեկան հասակում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԵՄ ՄԱՐԳԱՐԻ (1914-1944) – Ծնվել է 1914 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գյուլե-Ճարտար գյուղում: 1937 թ. ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1941 թ. նոյեմբերի 25-ին զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. գարնանը ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում և մեկնել գործող բանակ: Որպես հրետանային դասակի հրամանատար սկզբում եղել է Երկրորդ ուկրաինական ռազմաճակատում և մասնակցել է ուկրաինական քաղաքների պաշտպանությանը: 1943 թ. փոխադրվել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատ և մինչև 1944 թ. հուլիս ամիսը մասնակցել է բելառուսական հողերի ազատագրմանը: Մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար 1944 թ. պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մեդալներով: 1944 թ. հուլիսի 5-ին Բելառուսական ռազմաճակատից իր հարազատներին գրել է վերջին նամակը և չորս օր հետո՝ հուլիսի 9-ին, Բարանովիչի համար մղվող ծանր մարտերից մեկում զոհվել է:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՌՆՅԱԿ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ (1921-1942) – Ծնվել է 1921 թ. Նախիջևանում: 1922 թ. նրանց ընտանիքը մշտական բնակություն է հաստատել Երևանում: 1939 թ. ավարտել է Նորագավթի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ընդամենը երեք ամիս սովորելուց հետո զորակոչվել է և ուղարկվել կադրային ծառայության: Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը ծառայել է Կիևի ռազմական օկրուգում, Վորոշիլովգրադ, Կրոմոտորսկ քաղաք-

ներում: 1940 թ. ավարտել է կրտսեր հրամկազմի դպրոցը՝ ստանալով քաղղեկի տեղակալի կոչում: Հայրենական մեծ պատերազմի սկզբին մասնակցել է Ուկրաինայի արևմտյան սահմանների պաշտպանության համար մղվող առաջին մարտերին, որտեղ ցուցաբերած ակտիվության համար 1941 թ. Ն. Հովհաննիսյանը նշանակվել է հրաձգային վաշտի քաղղեկ: Մարտական առաջադրանքը խիզախությամբ կատարելու համար 1941 թ. աշնանը պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով:

1965 թ. «Կոմունիստ» թերթի համարներից մեկում տպագրվել է Վորոնեժի մարզի Օստրագորսկի շրջանի Պետրոպավլովսկ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Ժեմչուժինովի հոդվածը, որում ասված է, որ քաղղեկ Ն. Հովհաննիսյանը ակտիվորեն մասնակցել է Խաղաղ Դոնի ափերին տեղի ունեցած կատաղի մարտերին: 1942 թ. օգոստոսի 11-ին, երբ կարմիր բանակի զորամասերը կատարել են գետանցում, նա իր մարտիկներին նախապատրաստել է վճռական մարտի և կատարել հրամանատարության կողմից տրված բարդ խնդիրը. նա անցել է Դոնը և իր կրակով կանգնեցրել թշնամու հարձակումը: Սակայն դա նրա վերջին մարտն էր: Օգոստոսի 11-ին հակագրոհներից մեկի ժամանակ հերոսաբար զոհվել է:

Ներկայումս Պետրոպավլովսկ գյուղում կանգնեցված է մի հուշարձան, որի վրա տասնյակ հերոսների ազգանունների շարքում ոսկե տառերով գրված է նաև համալսարանական Նառնյակ Հովհաննիսյանի ազգանունը: Իսկ Պետրոպավլովսկ գյուղի պիոներական ջոկատներից մեկը կոչվել է նրա անունով: Ջոկատը կազմել է մի հուշալբոմ, որի վրա գրված է եղել. «Հայ ժողովրդի զավակ Նառնյակ Հովհաննիսյանը հերոսաբար զոհվել է Դոնի գետանցման ժամանակ»:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ (1923-1943) – Ծնվել է 1923 թ. Թբիլիսի քաղաքում: Կիրովականի շրջանի Ժդանով գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1941 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1942 թ. օգոստոսին զորակոչվել է կարմիր բանակ: Սումխումի քաղաքի ռազմական

դպրոցն ավարտելուց հետո մեկնել է ռազմաճակատ: 1943 թ. մասնակցել է Կերչի թերակղզում մղվող կատաղի մարտերին: Նույն թվականին վիրավորվել է, ապաքինվել և նորից վերադարձել ռազմաճակատ: Երկրորդ անգամ ռազմաճակատ մեկնելուց հետո Արամի ծնողները այլևս տեղեկություններ չեն ստացել որդու մասին: 1943 թ. «Զարյա Վոստոկա» թերթում հրապարակվել է «Ա. Ս. Հովսեփյանի սխրանքը» վերնագրով հոդված, որում նշվել է, որ Արամը մասնակցել է ֆաշիստական ռազմական էշելոնի կործանման գործողություններին և մեծ ակտիվություն ցուցաբերել: Արամ Հովսեփյանը մասնակցել է նաև պարտիզանական շարժմանը: Ենթադրվում է, որ նա անհայտ կորել է 1943 թ.՝ Կերչի շրջանում մղված մարտերի ժամանակ:

ՂԱՄԱՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1919-1941) – Ծնվել է 1919 թ. Թբիլիսիում: 1937 թ. ավարտել է տեղի 89-րդ հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: Մեկ տարի համալսարանում սովորելուց հետո մեկնել է զինվորական դպրոց, ավարտել այն, ստանալով լեյտենանտի կոչում՝ ծառայության է նշանակվել տանկային զորամասում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ա. Ղամարյանը ծառայելիս է եղել Լենինգրադի մարզի Լուգան քաղաքում, 1941 թ. գլխավորելով տանկային դասակը՝ մտել է Մոսկվայի համար մղվող մարտերի մեջ: 1941 թ. դեկտեմբերին Մոսկվայի մատույցներում ցուցաբերած արիության ու խիզախության համար Ա. Ղամարյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով» և ստացել ավագ լեյտենանտի կոչում: Այդ առթիվ ծնողներին ուղարկած նամակում Արտաշեսը գրել է. «Հասել է մարտնչելու ժամանակը: Պետք է կյանքի ու մահվան կռիվ մղել թշնամու դեմ: Ջենքը ձեռքին հայրենիքի համար զոհվելը մեծ փառք է: Ես ամբողջ հոգով տոգորված եմ թշնամուն շուտով ոչնչացնելու տրամադրությամբ: Ամենայն պատասխանատվությամբ կատարում եմ մարտական առաջադրանքը: Քանի կենդանի եմ, անձնազոհ կերպով պետք է կռվեմ թշնամու դեմ: Այժմ առողջ ու կենդանի եմ: Պարգևատրվել եմ «Կարմիր դրոշի շքանշանով»:








Ձախից աջ՝ Աբգարյան Արամայիս Վարագի, Աբովյան Գևորգ Հովհաննեսի, Աղաջանյան Աղաջան Սերգեյի, Աղաջանյան Արփիար Սերգեյի, Աղաջանյան Պերճ Սերգեյի, Առաքելյան Պարույր Ալեքսանի








Ձախից աջ՝ Ավագյան Սամվել Նազարի, Բաբաջանյան Հակոբ Համազասպի, Բալասանյան Մուշեղ Արզումանի, Բախշինյան Գարեգին Ալեքսանդրի, Բարսեղյան Վարազդատ Տիգրանի, Գալստյան Գալուստ Տոնականի








Ձախից աջ՝ Գրիգորյան Անդրանիկ Հարությունի, Գրիգորյան Սասունիկ Սիրեկանի, Գրիգորյան Օնիկ Արտաշի, Զուբյան Դավիթ Դավթի, Թումանյան Աշոտ Եսայու, Խալաթյան Հարություն Երվանդի








Ձախից աջ՝ Կարապետյան Հայրապետ Աթաճեսի, Հարությունյան Բախշի Շամիրի, Հարությունյան Վահագն Իգնատիոսի, Հովհաննիսյան Արտեմ Մարգարի, Հովհաննիսյան Նառնյակ Քրիստափորի, Հովսեփյան Արամ Սուրենի








Ձախից աջ՝ Ղամարյան Արտաշես Ալեքսանդրի, Ղարիբյան Երվանդ Խաչատուրի, Ղուլյան Ջամիլ Եփրեմի, Մանուկյան Արամ Վարդանի, Մանուկյան Սարգիս Մանուկի, Մաշուրյան Սերգեյ Մանուչարի








Ձախից աջ՝ Մարտիրոսյան Սարգիս Հովակիմի, Մելիքսեթյան Համբարձում Ստեփանի, Մնացականյան Գարուշ Եգորի, Մովսիսյան Մովսես Ավետիսի, Մուրադյան Պողոս Հարությունի, Նալբանդյան Բագրատ Սամսոնի








Ձախից աջ՝ Ներսիսյան Բախշի Մովսեսի, Ներսիսյան Հակոբ Հարությունի, Չիրիկյան Հարություն Գևորգի, Պողոսյան Աքաանազ Ստեփանի, Պողոսյան Ներսես Հարությունի, Ռոստոմյան Սերյոժա Վիրաբի











Ձախից աջ՝ Սահակյան Գուրգեն Դավթի, Սահակյան Ռուբեն Հովսեփի, Սաֆարյան Հայկազ Մկրտչի, Փոքինյան Խաչիկ Սմբատի, Օհանջանյան Արտաշես Օհանջանի

Մոսկվայում տեղի ունեցող ծանր մարտերից հետո Ա. Ղամբրյանը տեղափոխվել է 192-րդ տանկային բրիգադ, որը գտնվում էր Արևմտյան ռազմաճակատում: Այստեղ յուրաքանչյուր թիզ հողի համար տեղի են ունեցել արյունալի մարտեր: Թշնամին մեծ քանակությամբ տանկեր է կուտակել և ամեն կերպ ձգտել է գերակշռություն ձեռք բերել: Հատկապես ծանր մարտեր են տեղի ունեցել Լեոնովո գյուղի մոտ, որտեղ կռվելիս է եղել ավագ լեյտենանտ Ա. Ղամարյանի տանկային վաշտը: Նա երկու անգամ իր մեքենան դուրս է բերել կռվի և թշնամու խաչաձև կրակի տակ կատարել իր մարտական առաջադրանքը: Թշնամու հրետանու կրակից նրա տանկը ցնցվել է, սակայն նա շարունակել է կրակել թշնամու վրա: Նա ավելի է ոգևորվել, երբ նկատել է թշնամու դզոտից բարձրացող ծխի ևս քուլաները: Թեժ մարտի ժամանակ Ա. Ղամբարյանի տանկը ծխածածկոցի մեջ է ընկել, և փոքրացել է նրա տեսադաշտը: Օգտվելով դրանից՝ ֆաշիստները անմիջապես տեղափոխել են իրենց դիրքը, որպեսզի ճակատից հարվածեն խորհրդային տանկին: Սակայն Ա. Ղամարյանը կռահել է թշնամու մտադրությունը և ճարպկորեն խաբել է հիտլերականներին՝ փոխելով մեքենայի ուղղությունը: Երբ նորից սև ծխի ամպը պարուրել է նրան, նա վիրավորվել է, բայց շարունակել է կռվել, տանկի թրթուրներով տրորել հակառակորդի դիրքերը[206]: Նրա մարտական ոգին զարմանք է պատճառել թե՛ ընկերներին և թե՛ թշնամուն: Խիզախ տանկիստը մեն-մենակ մարտը շարունակել է այնքան ժամանակ, քանի դեռ թշնամին նրա վրա չի նետել իր վերջին մահացու արկը: Նրա մարմնին կպած բեկորի մի ծայրին մնացել են «Համամիութենական կոմունիստական» բառերը: Դա Ղամարյանի կուսակցական տոմսի մնացորդն էր, որը նա պահել էր իր գրպանում»[207]: Այսպես, հերոսաբար զոհվել է կուսակցության անդամության թեկնածու, տանկային երրորդ վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ, համալսարանական Արտաշես Ղամարյանը:ՄՆույն օրը տանկային

[206] Տե՛ս «Սովետական Վրաստան» թերթը, 22 հունիսի, 1971, N 72:
[207] Տե՛ս «Լենինյան դրոշ» Անդրկովկասյան զինվորական օկրուգի թերթը, 20 մայիսի, 1955:

բրիգադի քաղբաժնի կողմից Արևմտյան ռազմաճակատի հրամանատարության ուղարկված զեկուցագրում գրված էր. «Լեգովո գյուղի մոտ տեղի ունեցած տանկային մարտում հերոսություն ցուցաբերեց ավագ լեյտենանտ Արտաշես Ղամարյանը: Նա ոչնչացրեց թշնամու երեք խոշոր կրակակետեր, մի քանի տասնյակ ֆաշիստներ և ցույց տվեց, թե ինչպիսին կարող է լինել սովետական տանկիստը»[208]:

Լեյտենանտ Արտաշես Ղամարյանը Մոսկվայի հերոս պաշտպանների հետ հանգչում է Կալուգայի մարզի Նաղեժդա գյուղի մոտ գտնվող եղբայրական գերեզմանատանը: Հենց այստեղ էլ կանգնած է անմահության մի հսկա հուշարձան, որի վրա զոհված հերոսների անունների շարքում փորագրված է նաև նրա անունը:

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1922-1943) – Ծնվել է 1922 թ. Թալինի շրջանի Զարինջա գյուղում: Ավարտել է տեղի, ապա Թալինի միջնակարգ դպրոցը, որից հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը և ավարտել այն գերազանցության դիպլոմով: Ընդունվել է Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրան: Մասնակցել է խորհրդա-ֆիննական, խորհրդա-գերմանական պատերազմներին և Կովկասի համար մղվող մարտերին: Զոհվել է 1943 թ. հոկտեմբերին հիտլերյան գնդակից Ղրիմի և Կերչի ազատագրման համար մղվող մարտերում[209]:

ՂԱՐԻԲՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1908-1942) – Ծնվել է 1908 թ. Երևանի նահանգի Էջմիածնի գավառի Վերին Խաթունարխ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում: Տնտեսական ծանր պայմանները ստիպել են տակավին պատանի Երվանդին թողնել դպրոցը և դառնալ օրավարձ բանվոր: 1924 թ. ընդունվել է Լենինյան կոմերիտմիության շարքերը և ակտիվ մասնակցություն ցուցաբերել գյուղի հասարակական-քաղաքական կյանքին: 1931-1932 թթ. ծառայել է կարմիր բանակում: Զորացվելուց հետո վերադարձել է գյուղ, աշխատել որպես դաշտավարական բրիգադիր և կուսկազմակերպության քարտուղար: 1939-1940 թթ. եղել է

[208] Տե՛ս «Красная звезда» газета, 19 июня, 1963:
[209] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 279:

կոլտնտեսության վարչության նախագահ: Աշխատանքին համընթաց սովորել և ավարտել է միջնակարգ դպրոցը: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Երեք ամիս Բաքվի ռազմական ուսումնարանում սովորելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Կերչում տեղի ունեցած կատաղի մարտերին: Հարազատների մոտ պահպանվել են նրա նամակները, որոնց մեջ արտահայտված է մարտիկի հաստատ համոզմունքը գալիք հաղթանակի նկատմամբ: Կերչի մարտերում նա եղել է 4 ամիս: Ավագ լեյտենանտ Ե. Ղարիբյանը հերոսաբար զոհվել է 1942 թ. վերջին Կերչ քաղաքի մոտ 34 տարեկան հասակում:

ՂՈՒԼՅԱՆ ՋԱՄԻԼ ԵՓՐԵՄԻ (1912-1943) – Ծնվել է 1912 թ. Լեռնային Ղարաբաղի Ղարաչինար գյուղում: 1917 թ, մահացել է հայրը՝ ընտանիքը թողնելով մոր խնամքին: 1932 թ. ավարտել է Կիրովաբադի հայկական մանկավարժական տեխնիկումը և աշխատանքի անցել «Կիրովաբադի բանվոր» թերթի խմբագրությունում: 1933-1934 թթ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի Շահումյանի շրջանի շրջգործկոմում որպես հրահանգիչ, իսկ 1934-1937 թթ.՝ դպրոցի ուսուցիչ և վարիչ: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է այն և դիպլոմը չստացած՝ հունիսի 28-ին համալսարանի մի խումբ կամավորների հետ մեկնել է կարմիր բանակ: Մինչև 1942 թ. կեսերը սովորել ու ավարտել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանը, որից հետո՝ Տաշքենդի ռազմական ակադեմիան: Ստացել է մայորի կոչում և գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալի պաշտոնով մեկնել է ռազմաճակատ: Սկզբում եղել է Երկրորդ ուկրաինական, ապա՝ Առաջին բելառուսական ռազմաճակատներում: Մասնակցել է Կիևի, Ժիտոմիրի համար մղվող մարտերին և Բելառուսիայի տարածքի ազատագրմանը:

Հարազատներին ուղարկած նամակներից մեկում Ջ. Ղուլյանը գրել է. «Հարգելի՛ հարազատներ, ես շատ լավ եմ, ապրում ու կռվում

եմ: Մասնակցել եմ հարազատ Բելառուսիայի ազատագրմանը: Ես ինձ երջանիկ եմ համարում այդ պատվավոր գործի համար: Ուրախ եմ, որ այն ռազմաճակատը, որտեղ գտնվում եմ ես, գլխավորում է մեր դարի ամենափորձված զորավարներից մեկը՝ ընկ. Ռոկոսովսկին»:

Կնոջը հասցեագրված մի այլ նամակում կարդում ենք. «Հայրենիքի սերն է ինձ քեզանից ու իմ հարազատներից անջատել: Համոզվա՛ծ եղիր, որ ես եթե վերադառնամ քեզ մոտ, կվերադառնամ անպայման փառքով, հայրենիքիս համար պարտքս լրիվ հատուցած: Իսկ եթե զոհվեմ նրա մեծ պատվի համար, կամուսնանաս միայն 25 տարի հետո»: Նրա կինը՝ Շուշանիկը, սիրով կատարեց ամուսնու հանձնարարությունը՝ սպասելով նրա հայրենի հարկի տակ 25 տարի:

1943 թ. Ժիտոմիրում կատաղի մարտեր են տեղի ունեցել: Դեկտեմբերին հերոսաբար զոհվում է 31-ամյա մայոր Ղուլյանը: Միայն Ժիտոմիրի մարզի Չեռնիգովի շրջանի Լիպիսնո գյուղի հինգերորդ դասարանի աշակերտների ուղարկած նամակից հերոսի ծնողները տեղեկացել են, որ իրենց որդին թաղված է Լիպիսնո գյուղում: Նամակում գրված է. «Մեզ հայտնի դարձավ, որ մեր գյուղի եղբայրական գերեզմանատանը թաղված է նաև ձեր որդին՝ մայոր Ղուլյանը: Խնդրում ենք նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութեր ուղարկեք՝ դպրոցում կազմակերպված փառքի սենյակում տեղադրելու համար»:

Մշտական նամակագրական կապեր են հաստատվել համալսարանի խիզախ սան մայոր Ղուլյանի հարազատների և Լիպիսնո գյուղի դպրոցականների միջև:

ՃՇՄԱՐԻՏՅԱՆ ՀԱՅԿ ՍԵԴՐԱԿԻ (1910-1941) – Ծնվել է 1910 թ. Գյառգյառ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, միջնակարգ կրթությունը՝ Ստեփանավանում: Մինչև զինծառայության մեկնելը Ստեփանավանի շրջանի «Սոցիալիստական անասնապահություն» թերթի խմբագիրն էր: Ստեփանավանի ՀԼԿԵՄ շրջկոմը նրան գործուղել է՝ Երևանի պետական համալսարանի

տնտեսագիտության ֆակուլտետում սովորելու: Հ. Ճշմարիտյանը համալսարանն ավարտել է գերազանցությամբ: 1938 թ. ընդունվել է Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրայի հեռակա բաժինը, վերադարձել է Ստեփանավան և աշխատել որպես ուսուցիչ: Գնդացրորդ Հայկ Ճշմարիտյանը զոհվել է 1941 թ.՝ Մոսկվայի մոտակայքում ծավալված կռիվների ժամանակ[210]:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆԻ (1901-1943) – Ծնվել է 1901 թ. Երևանի Նահանգի Սուրմալու գավառի Էվջիլար գյուղում: 1918-1919 թթ. ընտանիքի անդամները սովից ու հիվանդությունից մահացել են, իսկ ինքը ընկել է ծանր տառապանքների մեջ: 1920 թ. մտել է կարմիր բանակի շարքերը և մասնակցել հեղափոխությանը: 1923-1924 թթ, սովորել ու ավարտել է Երևանի հրամանատարական դպրոցը և նշանակվել դասակի հրամանատար Դիլիջանի Երկրորդ հայկական գնդում: 1928 թ. հիվանդության պատճառով բանակից զորացրվել է և ՀԿԿ կենտկոմի հանձնարարությամբ զանազան աշխատանքներ կատարել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: 1938 թ. աշխատանքի է նշանակվել Երևանի համալսարանի հատուկ ամբիոնում որպես ռազմական դասընթացների դասախոս: 1941 թ. Ա. Մանուկյանը՝ որպես կադրային ծառայություն անցած հրամանատար, զորակոչվել է բանակ և հրաձգային հրամանատարի պաշտոնով ուղարկվել Հյուսիսկովկասյան ռազմաճակատ: Մասնակցել է Նովոռոսիյսկ քաղաքի շրջակայքում տեղի ունեցող դեսանտային գործողություններին: Երկու անգամ՝ 1942 թ. և 1943 թ., վիրավորվել է, ապաքինվել և նորից մասնակցել ռազմական գործողություններին: Մանուկյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով»: 1943 թ. Մանուկյանին ուղարկել են կենտրոնական ռազմաճակատ, որտեղ մասնակցել է Օրյոլ–Կուրսկ–Բելգորոդ քաղաքների համար մղվող մարտերին: Նույն թվականի սեպտեմբերի 1-ին Սումի մարզի Բորոմլյա գյուղի մոտ տեղի ունեցած մարտում Ա. Մանուկյանը զոհվել է:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1904-1941) – Ծնվել է 1904 թ. Ղարաքիլիսայում (Վանաձոր): Նախնական կրթությունը

[210] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 1, էջ 334-336:

ստացել է տեղի երեքդասյա դպրոցում՝ ապրելով զրկանքներով լի մանկություն: Հոր մահից հետո քաղցից մահացել են նաև քույրն ու չորս եղբայրները, ինչն էլ ստիպել է Մ. Մանուկյանին մեկնել Թբիլիսի՝ հաց վաստակելու համար: Այստեղ աշխատել է որպես ժամագործի աշակերտ: Կոմերիտմիությանը անդամագրվելուց հետո անցել է աշխատանքի: Ուսանել է Երևանի ՀԿԿ կենտկոմին կից 2-րդ աստիճանի խորհրդային կուսակցական դպրոցում: Ավարտելուց հետո Ալավերդիում աշխատել է որպես լեռնագործների ակումբի վարիչ: 1929 թ.՝ բանակից զորացրվելուց հետո, որպես ուսուցիչ աշխատանքի է անցել Համզաչիման գյուղում: 1928 թ. տեղափոխվել է Երևան՝ ՀԿԿ կենտկոմ՝ որպես ինֆորմատոր: 1930-1931 թթ. աշխատանքին զուգահեռ սովորել է Երևանի պետական համալսարանի երկամյա երեկոյան բաժնում: Մ. Մանուկյանը նշանակվել է Ստեփանավանի շրջանային թերթի քարտուղար, 1932 թ. եղել է Նոր Բայազետ շրջանային թերթի խմբագիրը:

1933-1937 թթ. գերազանց առաջադիմությամբ սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, ընդունվել ասպիրանտուրա, սակայն պատերազմի պատճառով չի կարողացել ավարտել այն և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1938 թ. նշանակվել է «Ավանգարդ» թերթի խմբագիր, մեկ տարի անց՝ ՀԿԿ կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ:

Զոհվել է 1941 թ. սեպտեմբերի 15-ին՝ իր ծննդյան օրը՝ Կերչում ընկնելով թշնամու ուժեղ շրջափակման մեջ[211]:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԻ (1920-1941) – Ծնվել է 1920 թ. Լենինականում (Գյումրի): 1938 թ. ավարտել է Լենինականի տեքստիլ կոմբինատին կից բանֆակը և որպես խառատ աշխատանքի անցել երկաթգծի վագոնային պարկում: Մեկ տարի հետո՝ 1939 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Կարճ ժամանակում աչքի է ընկել ուսման առաջադիմությամբ ու հասարակական ակտիվ գործունեությամբ:

[211] **Մ. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 1, էջ 333-334:

1940 թ. առաջին կուրսն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ: Մեկնելուց առաջ նա իր մորը նվիրված մի ոտանավոր է գրել.

Մայր իմ կարուրակեզ,
Ողջույն կուղարկեմ քեզ.
Թող քո սրտին մայրական
Նամակներս ուղարկած
Նեցուկ լինեն մի վայրկյան:

Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ս. Մանուկյանը ծառայելիս է եղել Ուկրաինական ԽՍՀ-ի Ժիտոմիրի մարզի Նովգորոդ-Վոլինսկ քաղաքում: Պատերազմի առաջին իսկ օրերին նա մասնակցել է հարձակվող ֆաշիստական զորքերի դեմ մղվող մարտերին: 1941 թ. հունիսի 23-ին մարտից առաջ իր ծնողներին գրել է վերջին նամակը և երկու օր հետո՝ հունիսի 25-ին, ընդամենը 20 տարեկան հասակում զոհվել է կատաղի մարտերից մեկում:

Համալսարանում եղած ժամանակ և բանակում ծառայելիս Մանուկյանը հայրենիքին նվիրված բանաստեղծություններ է գրել: Նա հայրենիքի համար չի խնայել նաև իր երիտասարդ կյանքը:

ՄԱՇՈՒՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒՉԱՐԻ (1910-1941) – Ծնվել է 1910 թ. Գորիս քաղաքում: 1930 թ. ավարտել է Երևանի բանֆակը և գործուղվել Մոսկվայի պետական համալսարան՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում սովորելու: 1935 թ. ուսումն ավարտելուց հետո սովորել է համալսարանին կից ասպիրանտուրայում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում:

Ս. Մաշուրյանի համալսարանական ընկերները գովասանքով են խոսել նրա՝ որպես բանիմաց ու խոստումնալից գիտնականի, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների գծով Հայաստանի առաջին գիտական աստիճան ունեցողներից մեկի, լավագույն ընկերոջ ու ազնիվ, հայրենասեր քաղաքացու մասին:

Համալսարանի շնորհալի դասախոսը՝ Ս. Մաշուրյանը, 1941 թ. հունիսին կանչվել է բանակ և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1941 թ. հոկտեմբերի 17-ին 32-րդ հրետանային գունդը,

որի կազմում է եղել Մաշուրյանը, տեղափոխվել է Տագանռոգի մոտ՝ ֆաշիստական մեխանիզացված զորամասերի առաջխաղացումը կանխելու համար: Ֆաշիստական հրամանատարությունը դիմել է բոլոր միջոցներին՝ կարմիր բանակի հրետանավորների դիմադրությունը և առաջընթացը կոտրելու համար: Ս. Մաշուրյանը գնդի հրամանատարի տեղակալի և շտաբի պետի հետ միասին ղեկավարել է հրետանու գործողությունները: Թշնամին անընդհատ գնդակոծել է թե՛ դիտակետը և թե՛ գնդի բնագծերը, բայց նահանջի հրաման չի տրվել: Դա ավելի է կատաղեցրել թշնամուն, որը համալրվելուց հետո 5 օր անընդհատ շարունակել է գնդակոծումը: Տագանռոգի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերում հարյուրավոր հայրենասերների հետ զոհվել է նաև 28-ամյա Սերգեյ Մաշուրյանը:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ՄԱԹԵՎՈՍԻ (1910-1942) – Ծնվել է 1910 թ. Սուրմալուի գավառի Հուսեյինի գյուղում: Վաղ հասակում կորցրել է ծնողներին և անցել հորեղբոր խնամակալության տակ: 1919 թ. հորեղբայրը ընտանիքի հետ գաղթել և բնակություն է հաստատել Վաղարշապատի (Էջմիածին) Եղվարդ գյուղում: Պատանի հասակում եղել է պահակ և միաժամանակ սովորել գյուղի առաջին աստիճանի դպրոցում: 1933 թ. ավարտել է Հոկտեմբերյանի (Արմավիր) բամբակագործական դպրոցը և նշանակվել շրջանային ֆիզկուլտխորհրդի պատասխանատու քարտուղար: 1934 թ. զորակոչվել է բանակ և դասակի հրամանատարի պաշտոնով ծառայել հեծյալ գնդում: 1935 թ. զորացրվել է: 1939 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Դ. Մարգարյանը՝ որպես կադրային ծառայությունը անցած զինվոր, զորակոչվել է և ուղարկվել գործող բանակ: Եղել է Հյուսիսային Կովկասի, Կերչի ռազմաճակատներում: Թշնամու դեմ մղվող մարտերից մեկում Մարգարյանը զոհվել է: Նրա ռազմական գործունեության մասին մեզ հասած տեղեկությունները քիչ են:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ ՀՈՎՍԵՓԻ (1911-1944) – Ծնվել է 1911 թ. Կոտայքի շրջանի (Աբովյան) Արամուս գյուղում: Միջնակարգ

դպրոցն ավարտել է Մհուբի (Բալահովիտ) միջնակարգ դպրոցը, ապա՝ Երևանի բանֆակը: 1931-1936 թթ. ընդունվել և ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է որպես ՀԿԿ կենտկոմի դատաքննչական բաժանմունքի պետ, 1941 թ. կամավոր զինվորագրվել է խորհրդային բանակ: Մասնակցել է Մոզդոկի ուղղությամբ Հյուսիսային Կովկասում ծավալված մարտերին, 1944 թ.՝ Ուկրաինայի, Բելառուսիայի, մերձբալթյան քաղաքների և Լեհաստանի ազատագրական կռիվներին: Զոհվել է Լեհաստանում 1944 թ. դեկտեմբերին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՍՐՈՊԻ (ԱԼ. ՄԱՐՏԻՆ) (1908-1942) – Ծնվել է 1908 թ. Նախիջևանի Փարաղաշտ գյուղում: Այնուհետև ընտանիքի հետ ապրել է Թազագյուղում՝ Մ. Աբեղյանի ծննդավայրում, այդտեղից էլ տեղափոխվել է Չարբախ: Նախնական կրթությունը ստացել է Թազագյուղում: 1929 թ. ընդունվել է Երևանի գեղարդ տեխնիկում: Նա շնորհաշատ նկարիչ էր: 1933-1938 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում: Աշխատել է որպես բանվոր, դասավանդել է համալսարանում, ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմում երկրորդ քարտուղար է եղել, հետո որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ աշխատել Երևանի Կիրովյան կուսշրջկոմում: Որոշ ժամանակ Երևանի թիվ 34 դպրոցում աշխատել է որպես տնօրեն: Ծառայել է Լենինականում (Գյումրի), Սպիտակի, Ջուլֆայի հրաձգային գնդերում, եղել է Խոյում և Թավրիզում: Թշնամու դեմ կռվել է Կերչում, Տուապսեում, Նովոռոսիյսկում, Գելենջիկում, Անապայում, Թամանում: Զոհվել է 1942 թվականին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀՈՎԱԿԻՄԻ (1910-1942) – Ծնվել է 1910 թ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառի Ղարաքիլիսա գյուղում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար 1919 թ. գաղթել է Հայաստան և տարիներ շարունակ եղել բատրակ: 1929-1933 թթ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ինչպես բանֆակում, այնպես էլ համալսարանում ուսումնառության տարիներին դրսևորել է իրեն ոչ միայն որպես ուսման առաջավոր, այլև իբրև ակտիվ կուսակցական, հասարակա-

կան աշխատող, եղել է բանֆակի, ապա՝ իրավաբանական ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղար:

Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը 1938 թ. ավարտելուց հետո Ս. Մարտիրոսյանը անցել է դասախոսական աշխատանքի նույն ֆակուլտետում և միաժամանակ կատարել Գերագույն դատարանի անդամի պարտականություն:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին ԽՄԿԿ կենտկոմի կոչով և ՀԿԿ կենտկոմի բյուրոյի 1942 թ. հունվարի 25-ի որոշմամբ Սարգիս Մարտիրոսյանը կուսակցական մի շարք ղեկավար աշխատողների հետ միասին մոբիլիզացվել և ուղարկվել է ռազմաճակատ: Նույն թվականի փետրվարին նա քաղաքական աշխատողի պաշտոնով մեկնել է Ղրիմի ռազմաճակատ: Աշխատել է 44-րդ բանակում որպես գնդի կոմիսար, ապա՝ 390-րդ հրաձգային դիվիզիայի զինվորական տրիբունալի կոլեգիայի անդամ և տրիբունալի կուսբյուրոյի քարտուղար:

Ս. Մարտիրոսյանի ռազմաճակատային գործունեությունը եղել է շատ կարճ՝ ընդամենը երեք ամիս: Նա 32 տարեկան հասակում զոհվել է Ղրիմի համար մղվող կատաղի մարտերից մեկում: Այդ կարճ ժամանակամիջոցում Ս. Մարտիրոսյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և «Արիության համար» մեդալով, որոնք իբրև մասունք պահում են նրա հարազատները:

ՄՂՐՈՒԹՅԱՆ ԵՂԻՇԵ ԿԱՐԱՊԵՏԻ (1914-1943) – Ծնվել է 1914 թ. սեպտեմբերի 27-ին Իգդիր քաղաքում: Դեռ վաղ մանկությունից ճաշակելով գաղթի ու կոտորածի դառնությունները՝ փոքրիկ Եղիշեն մի կերպ ապաստանել է Երևանում: Նա սովորել է Խ. Աբովյանի անվան դպրոցում: Որոշ ժամանակ անց սովորել է Երևանի ֆիզկուլտուրայի տեխնիկումում, ապա՝ 1934-1939 թթ., սովորել և ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: Համալսարանում նա հանճնել էր ասպիրանտական քննությունները: Հաճախ է հոդվածներ գրել և տպագրել պարբերական մամուլում: 1941 թ. մեկնել է խորհրդային բանակ, ծառայել ավիացիոն գնդում, եղել է կապավոր: Նա մասնակցել է Սմոլենսկի մարզի օդային մարտերին: Սմոլենսկի մարզի Գլին-

կա գյուղում «Կարմիր պարտիզան» կոլտնտեսության տարածքում օդային-կատաղի փոխհրաձգության ժամանակ զոհվել է ավիացիայի քաջարի մարտիկ, ավագ լեյտենանտ, «Կարմիր աստղ» շքանշանակիր Եղիշե Կարապետի Մարությանը[212]:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍՏԵՓԱՆԻ (1925-1943) – Ծնվել է 1925 թ. Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում: 1942 թ. ավարտել է Երևանի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական

ֆակուլտետը: Թե՛ միջնակարգ դպրոցում և թե՛ համալսարանում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, աչքի ընկել իր մաթեմատիկական բարձր գիտելիքներով:

Հ. Մելիքսեթյանի մաթեմատիկոս դառնալու երազանքը չի կատարվել: 1943 թ. հունիսի 21-ին առաջին կուրսի քննությունները գերազանց գնահատականներով հանձնելուց հետո զորակոչվել է բանակ: Շատերի նման նա նույնպես հույս ուներ, որ պատերազմի հաղթական ավարտից հետո կվերադառնա համալսարան և կշարունակի կիսատ թողած ուսումը: Սակայն Հ. Մելիքսեթյանը որոշ ժամանակ Վրաստանի Մանգլիս քաղաքում մնալուց հետո մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և կատաղի մարտերից մեկի ժամանակ 22 տարեկան հասակում զոհաբերել իր կյանքը հայրենիքի համար:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՐՈՒՇ ԵԳՈՐԻ (1920-1941) – Ծնվել է 1920 թ. Երևանում: 1938 թ. ավարտել է Երևանի 11-րդ միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Երկրորդ կուրսի քննությունները հանձնելուց հետո փոխադրվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Կարճ ժամանակում ճանաչվել ու աչքի է ընկել իր առաջադիմությամբ ու հասարակական ակտիվությամբ: Պատերազմի սկզբին Գ. Մնացականյանը համալսարանի հարյուրավոր կոմերիտականների հետ մեկնել է ռազմաճա-

[212] **Մ. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 448-449:

կատ: Հյուսիսային Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերից մեկում ընդամենը 21 տարեկան հասակում զոհվել է: Նրա մասին նույնպես պաշտոնական քիչ տեղեկություններ են հասել մեզ, սակայն ճանաչող ընկերները բարձր են գնահատել նրա հայրենասիրությունը, թշնամու նկատմամբ ունեցած ատելությունը և հավատը խորհրդային ժողովրդի հաղթանակի նկատմամբ:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ ԱՎԵՏԻՍԻ (1921-1941) – Ծնվել է 1921 թ. Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղում: 1939 թ. ավարտել է Սիսիանի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Համալսարանում սովորել է մինչև 1940 թ. հունվար ամիսը: Դեռևս առաջին կիսամյակի քննությունները չհանձնած՝ զորակոչվել է բանակ: Նույն թվականին ծառայել է Կիևի զինվորական օկրուգում՝ մասնակցելով Բեսարաբիայի ազատագրմանը:

1941 թ. հունիսի 22-ին, երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Մովսիսյանը որպես կադրային զինվոր մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի պաշտպանության համար մղվող մարտերին: Բերդիչև քաղաքի մոտ տեղի ունեցած կատաղի մարտի ժամանակ Մ. Մովսիսյանը զոհվել է 20 տարեկան հասակում: Զինվորական ծառայության ընթացքում նա հրամանատարության կողմից բազմիցս արժանացել է խրախուսանքի:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՊՈՂՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1915-1942) – Ծնվել է 1915 թ. Հյուսիսային Կովկասի Մայկոպ քաղաքում: 1923 թ. ընտանիքի հետ տեղափոխվել և մշտական բնակություն է հաստատել Իջևանում: 1937 թ. ավարտել է Իջևանի միջնակարգ դպրոցը և մեկ տարի ուսուցչական աշխատանք կատարելուց հետո 1938 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Սովորել է մինչև չորրորդ կուրսը: Հայրենական պատերազմի առաջին օրերին զորակոչվել է կարմիր բանակ: Մուրադյանը մարտնչել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում և զոհվել Կովկասի համար մղվող մարտերից մեկում:

Մարտից առաջ ծնողներին ուղղված մի նամակում Պ. Մուրա-

դյանը գրել է. «Մարդկային հասարակության մեջ դեռևս մնում են մարդակերներ՝ գերմանական ֆաշիստներ, որոնց պետք է միայն ատել ու ոչնչացնել: Մենք թշնամուն կջախջախենք և կհաղթենք վերջնականապես: Հարկավոր է միայն, որ մեզանից ամեն մեկը հաստատուն պահի իր կամքը»: Հայրենասիրության և հաղթանակի անկատմամբ նրա ունեցած համոզմունքները ընդգծվել են նաև նրա մյուս նամակներում:

Պ. Մուրադյանի ռազմաճակատում անցած ճանապարհի մասին տեղությունները սակավ են:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՍԱՄՍՈՆԻ (1920-1944) – Ծնվել է 1920 թ. Երևանում: 1938 թ. ավարտել է Մ. Գորկու անվան հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. հունիսին զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. սկզբին Բ. Նալբանդյանը ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել ռազմաճակատ:

1942 թ. գարնանը ֆաշիստական զորքերը մեծ կորուստների գնով գրավել են Կուբանը, Թամանյան թերակղզին, Հյուսիսային Կովկասի մեծ մասը և շարունակել են առաջ շարժվել: Կովկասի ռազմաճակատում ստեղծվել է ծանր վիճակ: Ռազմաճակատի հրամանատարությունը առաջադրանք է ստացել կանգնեցնել թշնամու առաջխաղացումը: Շատ զորամասերի հետ ռազմաճակատ է մեկնել նաև հրետանային այն դիվիզիոնը, որի շտաբի պետն էր Բ. Նալբանդյանը:

Նամակներում նրա ընկերները գրել են, որ Կովկասից ֆաշիստական զավթիչներին վռնդելուց հետո Բ. Նալբանդյանի զորամասը տեղափոխվել է Երկրորդ ուկրաինական ռազմաճակատ: Պաշտպանական կատաղի մարտեր է մղել 1944 թ.՝ թշնամու նահանջի ժամանակ:

1944 թ. հունվարին Բ. Նալբանդյանի դիվիզիոնը մասնակցել է Կիրովոգրադի ազատագրման համար մղվող համառ մարտերին: Ֆաշիստներն այստեղ կենտրոնացրել էին մեծ քանակությամբ զորք

և ռազմական տեխնիկա: Հունվարի 10-ին Բ. Նալբանդյանի դիվիզիոնը հասել է առաջադրված բնագիծը: Հաջորդ օրը խորհրդային հրետանավորների դիրքերն են գրոհել թշնամու 20 «վագր» տանկ և 20 զրահամեքենա: Ուժերի անհավասար մարտում թշնամին մեծ կորուստներ կրելով առաջ է շարժվել: Պահը դարձել է օրհասական: Զոհվել է դիվիզիոնի հրամանատարը: Նրան փոխարինել է շտաբի պետ Նալբանդյանը և իր անձնական օրինակով ոգևորել է ամբողջ անձնակազմին, որը ոչնչացրել է թշնամու 3 տանկ և 5 զրահամեքենա:

Սպառելով բոլոր արկերը՝ Բ. Նալբանդյանի հրետանավորները կազմակերպել են օղակաձև պաշտպանություն և կատաղած թշնամուն ետ մղել ավտոմատներով, նռնակներով ու սվինամարտերով: Շրջապատման մեջ ընկած նրա փառապանծ մարտիկները խուճապի չեն մատնվել: Թշնամու վերջին տանկային վճռական գրոհի ժամանակ իր մարտիկների հետ հերոսաբար ընկել է համալսարանական, ավագ լեյտենանտ Բագրատ Նալբանդյանը: Նա թաղված է Կալինինոյի շրջանի Կալինինկա գյուղի դպրոցի մոտ: Տապանաքարի վրա գրված է. «Այստեղ թաղված է ավագ լեյտենանտ Բագրատ Սամսոնիչը, որը հերոսաբար ընկավ Կիրովոգրադի պաշտպանության համար»:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀՄԱՅԱԿ ԳՐԻԳՈՐԻ (1914-1945) – Ծնվել է 1914 թ. Սպիտակի շրջանի Նալբանդ (Շիրիկամուտ) գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1936-1941 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետում: Աշխատել է որպես Եղեգնաձորի «Վերելք» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: Ապա զորակոչվել է բանակ՝ ստանալով լեյտենանտի զինվորական կոչում: Մինսկի համար ծավալվող կռվում Հ. Նալբանյանն իր տանկով ոչնչացրել է թշնամու երեք տանկ, չորս հրանոթ և երկու թնդանոթ՝ զինամթերքով հանդերձ: Խիզախության համար արժանացել է «Կարմիր դրոշի շքանշանի»: Աչքի է ընկել նաև Դնեպր, Վիսլա գետերի անցումների, Կիևի, Մինսկի, Ռովնոյի ազատագրական և Վարշավա-Բեռլինի ուղղությամբ մղված մարտերում: Զոհվել է 1945 թ. փետրվարի 4-ին Կուներսդորֆ գյուղում:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԲԱԽՇԻ ՄՈՎՍԵՍԻ (1922-1943) – Ծնվել է 1922 թ. Աղրբեջանական ՍՍՀ Խանլարի շրջանի Գետաշեն գյուղում: 1939 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1940 թ. աշնանը երկրորդ կուրսից զորակոչվել է բանակ և ծառայել Կիևի ռազմական օկրուգում: Հայրենական մեծ պատերազմի սկզբին Ներսիսյանը մասնակցել է մարզի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին: Բորոդյանկա քաղաքի համար մղվող մարտից առաջ նա իր ծնողներին գրել է նամակ. «Ինչպես գիտեք, թշնամին հանկարծակի հարձակվել է մեր հայրենիքի վրա: Սկզբում շատերին թվում էր, թե դա սահմանային պրովոկացիա է, բայց ընթացքը ցույց տվեց, որ մահու ու կենաց կռիվ է սկսվել մեզ համար: Դժբախտաբար, ֆաշիստական Գերմանիան չի ուզում հաշվի առնել գերմանական շուն ասպետների և Նապոլեոնի դասերը, որ ռուսական հողերը գրավելը հեշտ բան չէ: Մանավանդ սոցիալիզմի պայմաններում ԽՍՀՄ-ի ուժը արհամարհելը ճակատագրական դժբախտություն կլինի ֆաշիզմի համար: Մենք՝ բոլոր զինվորականներս, պայքարով ու կռվով ցույց կտանք, որ, իրոք, դա այդպես է: Երկու կամ երեք ժամ հետո այդ համոզմունքով մենք մարտի մեջ կմտնենք: Եթե զոհվենք, դա կլինի հանուն մեր մեծ գաղափարի ու հարազատ սոցիալիստական հայրենիքի»:

Ականատեսների վկայությամբ այն զորամասը, որի կազմում մարտնչելիս է եղել համալսարանական Բախշի Ներսիսյանը, Բորոդյանկայի մոտ թշնամու հարձակվող զորամասերին մեծ կորուստ պատճառելուց հետո նահանջել է դեպի Պոլտավայի մարզ և պաշտպանական մարտեր մղել Միրգորոդ քաղաքի շրջակայքում: Թշնամին անընդհատ գրոհել է խորհրդային զորամասերի դիրքերի վրա: Դիմադրությունը եղել է համառ և երկարատև: Վճռական հակագրոհի ժամանակ շատ հայրենասերների հետ զոհվել է 21-ամյա Բախշի Ներսիսյանը:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1910-1943) – Ծնվել է 1910 թ. Թուրքիայի Սիրվիսար քաղաքում: 1920 թ. ընտանիքի հետ

տեղափոխվել է Հունաստան, որտեղ ստացել է իր սկզբնական կրթությունը: 1932 թ. հայրենադարձվել է և մշտական բնակություն հաստատել Լենինականում (Գյումրի): Մինչև 1934 թվականը աշխատել է տեքստիլ կոմբինատում, որից հետո տեղափոխվել է Երևան: Մուլիտի գործարանում աշխատելուն զուգընթաց սովորել ու ավարտել է բանֆակը: 1939 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը և սովորել մինչև 1942 թվականը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Ջոհվել է Կերչ թերակղզու ազատագրման մարտերից մեկում 1943 թ. փետրվարի 10-ին[213]:

ՇԻՐԱԿԱՑԻ (ՇԱՏՎՈՐՅԱՆ) ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՐՏԻՐՈՍԻ (1907-1943) – Ծնվել է 1907 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): Որմնադիր Մարտիրոսի զավակը դեռ աշակերտական նստարանից է սկսել բանաստեղծական իր թոթովանքները, իսկ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Լենինականի մանկավարժական համալսարան: Երեք տարի աշխատել է Շիրակի գյուղերում որպես ուուցիչ: 1933 թ. ընդունվել է պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը, սակայն հիվանդության պատճառով ստիպված է եղել երրորդ կուրսից հեռակա կարգով շարունակել ուսումը: 30-ական թթ. Շիրակացին սովորել է նաև ՀԽԳ միության երկամյա դասընթացներում, 1936-1937 թթ. զբաղվել է ուսուցչությամբ՝ գրելով նաև բանաստեղծություններ և պոեմներ: Ա. Շիրակացին մարտնչել է Տուլայի մոտ և այնտեղ էլ 1943 թ. զոհվել[214]:

ՈՍԿԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՍԱՀԱԿԻ (1912-1943) – Ծնվել է 1912 թ. մայիսին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Ղարաքիլիսա գյուղում: Կրելով կոտորածի սարսափներն ու գաղթի դառն կնիքը՝ Ոսկանյանների ընտանիքն իր վերջնական հանգրվանն է գտել Արևելյան Հայաստանում: Գառնիկն ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոց, ապա՝ 1932-1938 թթ., գերազանց առաջադիմու-

[213] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 343:
[214] Տե՛ս նույն տեղում:

թյամբ սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Նկատի ունենալով Գ. Ոսկանյանի հասարակական և կազմակերպչական ունակությունները՝ ՀԿԿ կուսակցությունը նրան գործուղել է՝ աշխատելու Մեղրու կուսշրջկոմում որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: Այստեղից Գառնիկը տեղափոխվել է Երևանի կուսքաղկոմ՝ նույն պաշտոնում աշխատելու: 1939-1940 թթ. ծառայել է կարմիր բանակում՝ Տուլայում: Տպագրական մամուլում հաճախ է հանդես եկել գրախոսականներով և գիտական ուսումնասիրություններով: Քաջաբար մարտնչել է Կերչում և Թամանում, Նովոռոսիյսկում և Գելենջիկում՝ օգնելով դեսանտայիններին: 1943 թ. օգոստոսին Գ. Ոսկանյանն առաջին անգամ ծանր վիրավորվել է, ապաքինվելուց հետո նորից նետվել մարտի, օգոստոսի երկրորդ կեսին անցնելով հրետանային դիվիզիայի գլուխ՝ Նովոռոսիյսկում կատաղի մարտեր է մղել թշնամու դեմ, նորից ծանր վիրավորվել, տեղափոխվել դաշտային հոսպիտալ: 1943 թ. օգոստոսի 29-ին հակառակորդը ռմբակոծել է հոսպիտալը, որտեղ պառկած էր Գ. Ոսկանյանը: Որպես հրետանային դիվիզիայի հրամանատար՝ Գ. Ոսկանյանը, կյանքը վտանգի ենթարկելով, քաջաբար մարտնչել է, Տուլայում, Կերչում և այլուր[215]:

ՉԱՐԽՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ՍԵՐԳՈՅԻ (1916-1943) – Ծնվել է 1916 թ. Ախալցխա քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մեկնել է Օռալ գյուղ և աշխատել որպես դպրոցի տնօրեն, ապա՝ շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես պատասխանատու քարտուղար: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. հունիսին պետական քննությունները հանձնելու շրջանում սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Դ. Չարխչյանը զորակոչվել է կարմիր բանակ: Համալսարանական իր շատ ընկերների հետ կարճ ժամանակ անց մտել է գործող բանակ: Մինչ այդ նա գրել է շատ բանաստեղծություններ, որոնք վերաբերել են խաղաղ ժամանակաշրջանին: Ռազմաճակատում փոխվել է նրա ստեղծագործությունների թեմատիկան: Նա երգել է կռիվ,

[215] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 451-452:

հերոսական մահ, հաղթանակ.

Գնում եմ երկրիս իմ պարտքը տալու,
Գնում եմ կռիվ, կռիվն է վերջին,
Հերոսի փառքով հուր կռվի միջին՝
Հերոսների հետ անմահանալու:

Դ. Չարխչյանի բանաստեղծությունները տոգորված են մեծ հավատով ղեպի հայրենիքը, հաղթանակը: Նա հայրենիքի համար զոհվածների մահը համարել է անմահություն.

Անմահություն է մահը հերոսի,
Ինչ մահ, երբ նրա քաջագոհ հոգին
Վառվում է, ինչպես լույսը փարոսի
Եվ ուժ է տալիս նորից ամենքին:

Դ. Չարխչյանը մասնակցել է մի շարք ճակատամարտերի: Նա նախնական զինվորական պատրաստություն անցել է Բաքվում, հետո հերոսաբար մարտնչել Կուբանի անծիր հարթություններում, արիաբար կանգնել Ստալինգրադը պաշտպանող դյուցազուների շարքում: Հենց Ստալինգրադյան կռիվների ժամանակ էլ ծանր վիրավորվել է և 1943 թ. հուլիսի 26-ին հրաժեշտ տվել հույզերով ու հույսերով լի իր կյանքին:

ՉԻՐԻԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ (1912-1942) – Ծնվել է 1912 թ. Թուրքիայի Սիրիսար քաղաքում: 1925 թ. ընտանիքով փոխադրվել է Հայաստան և բնակություն հաստատել Երևանում: 1930 թ. աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում որպես մոդելիստ: 1941 թ. հունիսի առաջին զորակաչերի ժամանակ մեկնել է կարմիր բանակ: Սկզբում եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, ապա մասնակցել է Ղրիմի թերակղզու ազատագրման համար մղվող մարտերին: 1942 թ. անհայտ կորել է:

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ ՍՏԵՓԱՆԻ (1905-1942) – Ծնվել է 1905 թ. Էջմիածնի շրջանի ներքին Խաթունարխ գյուղում: 1930 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և երկու տարի աշխատել Ապարանի շրջանում որպես ժողկրթբաժնի վարիչ:

1932 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և 1937 թ. ավարտել է այն: Այնուհետև աշխատել է Երևանի Ջերժինսկու (այժմ՝ Հ. Աճառյանի) անվան միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար, Երքաղժողկրթբաժնում՝ որպես պատմության առարկայի մեթոդիստ:

1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ «Նորագույն պատմություն» մասնագիտությամբ: 1941 թ. ապրիլին 3 ամսով մեկնել է կարմիր բանակ՝ հատուկ քաղաշխատողների կուրսերում սովորելու համար: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցել է Հյուսիսային Կովկասի և Ղրիմի ազատագրման մարտերին և զոհվել է 1942 թվականին:

Ա. Պողոսյանը ռազմաճակատից իր հարազատներին գրել է. «Շատ ուրախ եմ, որ ծառայում եմ մեր հայրենիքի հզորությունն ամրացնող գործի վրա..., ղավաղիր թշնամու դեմ մղվող կռվում հերոսի մահով ընկան իմ համալսարանական ընկերներից շատերը: Զոհվածների թվում է նաև մեր Սիսակ Արմենյանը (Կիրովյան շրջկոմի քարտուղար): Խորապես ցավում ենք այդ ընկերների կորուստը, մեծ է մեր վիշտը: Թող այդ ծանր վիշտը մեր կրծքում մնա որպես այրող խթան՝ անողոք դատաստան տեսնելու ֆաշիստական ֆրիցների, մյուլլերների, հանսերի և դարչնագույն մյուս շների հետ: Մենք համոզված ենք մեր արդար գործի մեջ և նույնպես վստահ ենք, որ հեռու չէ այն օրը, երբ հիտլերյան ֆաշիստական ոհմակի պարագլուխները պետք է կանգնեն պատմության դատաստանի առաջ, մեր երկրի ժողովուրդների ու մայրերի առաջ և հաշիվ տան իրենց վայրագության համար, իրենց նողկալի վանդալիզմի համար: Դարեր շարունակ սերունդները անարգանքի սյունին են գամելու դարչնագույն վիշապին»:

Դիմելով իր մայրիկին՝ նույն նամակում նա գրել է. «Սիրելի՛ մայրիկ ջան, ձեր որդիներին ստոր թշնամուց երկիրը մաքրելու մեծ պատիվ է բաժին ընկել: Վշտացա՛ծ մայրիկ ջան, մեծ է ձեր վիշտը, դառնալի է ձեր արցունքը: Թող ձեր տառապանքն ու արցունքները մեզ ավելի լիցքավորեն՝ անողոք դատաստան տեսնելու կատաղած ֆաշիստների հետ»:

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1905-1943) – Ծնվել է 1905 թ. Հարություն-Մոջար (Զիլան) գյուղում: Թուրքական կոտորածներից ազատվելով՝ 1915 թ. ռուսական նահանջող զորքերի հետ անցել է Արևելյան Հայաստան: Ծնողներից ու հարազատներից զրկված, անօգնական պատանին մի կերպ տեղավորվել է Դիլիջանում և ունևոր ընտանիքներից մեկում բատրակություն արել: 1921 թ. տեղափոխվել է Երևան և մինչև 1924 թվականը «Արարատ» տրեստում աշխատել որպես բանվոր: 1925-1929 թթ. սովորել ու ավարտել է Անդրկովկասի կուսակցական բարձրագույն դպրոցը և աշխատանքի անցել ՀԼԿԵՄ կենտկոմում: 1932-1938 թթ. աշխատել է Կուս. պատմության ինստիտուտում, իսկ 1938-1941 թթ.՝ Երևանի պետական համալսարանում: 1938 թ. հուլիսից մինչև 1939 թ. հոկտեմբերը եղել է պատմության ֆակուլտետի դեկան և միաժամանակ դասավանդել ԽՍՀՄ պատմություն:

1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ներսես Պողոսյանը զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականին, երբ ձևավորվել է Հայկական 409-րդ դիվիզիան, նա նշանակվել է այդ դիվիզիայի քաղբաժնի հրահանգիչ: 1941 թ. վերջին 409-րդ դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Կովկասի պաշտպանական մարտերին: Մոզդոկի մոտ մղվող մարտերից մեկում զոհվել է:

ՌՈՍՏՈՄՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ՎԻՐԱԲԻ (1920-1942) – Ծնվել է 1920 թ. Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում: 1939 թ. ավարտել է Երևանի հիդրոմելիորատիվ տեխնիկումը և ընդունվել Երևանի երկաթգծի միջնակարգ դպրոցը: 1939 թ. ավարտել է այն և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ընդամենը մեկ տարի սովորելուց հետո հերթական զորակոչով մեկնել է կարմիր բանակ: Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը ծառայել է խորհրդա-ռումինական սահմանի մոտ գտնվող զորամասերից մեկում: Պատերազմի առաջին իսկ օրերին Ս. Ռոստոմյանը մտել է կատաղի մարտերի մեջ և մասնակցել Ուկրաինայի տարածքի պաշտպանությանը:

Ս. Ռոստոմյանի մարտական ուղին եղել է շատ կարճ՝ 1941 թ. հունիսի 22-ից մինչև օգոստոսի 8-ը: Նույն օրը Կիևի պաշտպանության ժամանակ ընդամենը 20 տարեկան հասակում համալսարանի սան Ռոստոմյանը զոհվել է: Զորամասից ստացված հայտագրում ասված է, «1941 թ. օգոստոսի 8-ին սոցիալիստական հայրենիքի համար մղվող մարտում, իր տված երդմանը հավատարիմ, հերոսաբար զոհվեց Հայկական ԽՍՀ-ի Երևան քաղաքում ծնված Սերգեյ Վիրաբի Ռոստոմյանը: Թաղված է Կիևից հարավ-արևմուտք գտնվող Կարմիր տրակտոր գյուղում»:

Ս. Ռոստոմյանը դեռևս դպրոցական տարիներին տարվել է գրականության ընթերցանությամբ և հակում ու ընդունակություններ է ունեցել բանաստեղծություններ գրելու: Դեռ համալսարանի առաջին կուրսում գրել է շատ բանաստեղծություններ, որոնք արտահայտել են սեր և նվիրվածություն հայրենի օջախի ու հայրենիքի նկատմամբ: Նա շարունակել է ստեղծագործել նաև բանակում: Հարազատների մոտ պահպանվել են նրա բանաստեղծությունները: Ահա դրանցից մեկը.

Սրևնք սուրը, եղբա՛յր, ընկե՛ր,
Մենք պողպատից ամրակուռ.
Ահեղ կռվի ժամն է եկել
Ելնք և դուք, մա՛յր ու քո՛յր:
Ելնենք որպես փոթորկուն ծով,
Սուրանք մոլի հողմի պես.
Վերջին մարտն է, զարկենք թափով,
Ջարդենք որպես Աքիլլես:
Հե՛յ, ֆաշիստնե՛ր, հերիք է դուք
Ոռնաք այդպես խելագար,
Զարկենք, ընկե՛ր, հաղթ ու կտրուկ,
Ողջույն քեզ կյանք ու պայքար:

ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԴԱՎԻԹԻ (1918-1943) – Ծնվել է 1918 թ. Մեղրու շրջանի Ագարակ գյուղում: 1937 թ, ավարտել է Մեղրու միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական հա-

մալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին չորրորդ կուրսից զորակոչվել է բանակ, ավարտել է ռազմական դպրոցը: Ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի ազատագրման մարտերին: Սահակյանը ծանր վիրավորվել է և տեղափոխվել Բաքու՝ հոսպիտալում բուժվելու համար: Ռազմաճակատում նրա ստացած վերքը այնքան ծանր է եղել, որ նրան անհապաղ վիրահատել են: Լեյտենանտ Սահակյանը մահացել է ընդամենը 25 տարեկան հասակում: Նամակներից մեկում նա իր ծնողներին ու հարազատներին գրել է. «Ֆաշիզմի նկատմամբ հաղթանակ տանելու համար մեզանից՝ ճակատայիններիցս, պահանջվում է մաքառել արյան գնով, իսկ ձեզանից՝ բարձրացնել հայրենիքի տնտեսական ու ռազմական հզորությունը: Համատեղ կատարենք հայրենիքի հանձնարարությունները և պաշտպանենք նրան գոռոզ թշնամուց»:

ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ (1915-1941) – Ծնվել է 1915 թ. Արթիկի շրջանի Գեղանիստ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Լենինականում (Գյումրի): 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և կամավոր մեկնել կարմիր բանակ:

Երկու տարի արևմտյան սահմանապահ զորամասերում ծառայելուց հետո Ռ. Սահակյանը ստացել է լեյտենանտի կոչում և նշանակվել դասակի հրամանատար: Հարազատներին գրած նամակներում նա կարմիր բանակում, առավելապես սահմանամերձ զորամասում ծառայելը համարել է խորհրդային քաղաքացու առաջին ու սրբազան պարտականություններից մեկը:

1941 թ. հունիսի 29-ին Ռուբեն Սահակյանի դասակը Լատվիայի սահմանի վրա կատաղի մարտի է բռնվել հարձակվող հակառակորդի հետ: Չնայած թշնամու ուժերի գերակշռությանը՝ նա խիզախորեն պաշտպանել է զբաղեցրած բնագիծը: Ավելի քան 15 ժամ կատաղած թշնամու դեմ մաքառելուց հետո նա հերոսաբար զոհվել է:

Հարազատներին իր վերջին նամակը դրել է Լատվիայից մարտից առաջ: Ազդեցիկ է հատկապես նամակի այն մասը, որտեղ նա իր

հարազատներին ու ընկերներին ուղարկել է իր վերջին համբույրներն ու բարևները՝ խնդրելով, որ իր կորուստը խոր կսկիծով չընդունեն: «Հայրենիքի համար զոհվելը,– գրել է Ռ. Սահակյանը,– պետք է դիտվի որպես արյան գնով հատուցում, հետևաբար և պատիվ ու հպարտություն: Անարգ թշնամու դեմ կռվելիս զոհեր տալու դեպքում չպետք է արտասվել, դրանով նա կուրախանա, պետք է հպարտ մնալ ու ավելի ատելությամբ կռվել»:

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԿՆՅԱԶԻ (1921-1941) – Ծնվել է 1920 թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ միջնակարգ կրթությունը՝ Երևանում: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և սովորել է մինչև չորրորդ կուրսը:

1941 թ. աշնանը, երբ Երևանի բուհերում սկսվել է կամավորական շարժում՝ դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար, Ա. Սաֆարյանը շատերի հետ կամավոր մեկնել է կարմիր բանակ: 1941 թ. նոյեմբերին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում մասնակցել է հարձակվող գերմանական զորքերի դեմ մղվող պաշտպանողական մարտերին: 1941 թ. դեկտեմբերի 6-ին Կերչում ծանր այրվածք է ստացել և տեղափոխվել հոսպիտալ: Երկու ամիս 21-ամյա համալսարանականը բժիշկների օգնությամբ մաքառել է մահվան դեմ: Արտավազդ Սաֆարյանը 1941 թ. փետրվարին երկրորդ անգամ վիրահատվելուց հետո մահացել է Օրջոնիկիձեի երկրամասի Եպատովկա քաղաքի հոսպիտալում:

ՍԱՖԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ ՄԿՐՏԻՉԻ (1915-1941) – Ծնվել է 1915 թ. Կարս քաղաքում: 1933 թ. ավարտել է Արմավիրի հայկական ութամյա դպրոցը և երեք տարվա ընդմիջումից հետո ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Համակուրսեցիները հիացմունքով են խոսել ընդունելության քննությունների ժամանակ ընդամենը 8-րդ դասարանի կրթություն ունեցած Հ. Սաֆարյանի գիտելիքների ու պատրաստականության մասին: Նա սովորել է միայն գերազանց գնահատականներով և միաժամանակ դրսևորել իրեն որպես լավագույն մարզիկ:

1939 թ. Հ. Սաֆարյանն ավարտել է համալսարանը, իսկ հետո գործուղվել է Մոսկվա՝ Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում սովորելու: Սակայն գիտության բնագավառում մեծ ապագա խոստացող երիտասարդին չի հաջողվել մինչև վերջը դրսևորել իր տաղանդը: 1939 թ. զորակոչվել է բանակ և մասնակցել սպիտակ ֆինների դեմ մղվող կռիվներին: Ռազմաճակատում ցուցաբերած քաջության համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Այնուհետև պաշտպանության մինիստրի հրամանով Սաֆարյանը փոխադրվել է Լենինգրադի ավիացիոն ուսումնարանը, որտեղ դասավանդել է ֆիզիկա:

Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Հ. Սաֆարյանը կանգնել է Լենինգրադի պաշտպանողների շարքերում և մարտնչել Լենինի քաղաքի համար: 1941 թ. հուլիսի վերջերին Բատետսկայա կայարանի համար մղվող մարտերում հերոսաբար զոհվել է:

Լենինգրադի սպորտի վետերաններն ակնածանքով են հիշել համալսարանական և հիանալի մարզիկ Հայկազ Աֆարյանի անունը:

Տաղանդավոր մարզիկի հիշատակը հավերժացնելու համար ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1965 թ. հուլիսի 31-ի որոշման համաձայն՝ Լենինականի (Գյումրի) մանկական սպորտային դպրոցը կոչվել է Հայկազ Սաֆարյանի անունով: Ի պատիվ նրա հիշատակի՝ հանրապետության մայրաքաղաքում ամեն տարի անցկացվել են թեթև ատլետիկայի համամիութենական մրցումներ:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՐՇԱԿԻ (1913-1941) – Ծնվել է 1913 թ. Երևանում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1934 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ մեկնել է Մոսկվայի համալսարան ատենախոսությունը մշակելու և Հայաստան վերադառնալու պայմանով:

1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Մոսկվայի համալսարանում կազմակերպվել է աշխարհազոր: Համալսա-

րանի կոլեկտիվի հարյուրավոր անդամների, դասախոսների, ասպիրանտների և ուսանողների հետ աշխարհազորի մեջ է մտել նաև Երևանի պետական համալսարանի ասպիրանտ Գուրգեն Սողոմոնյանը: 1941 թ. նոյեմբերին, երբ թշնամին ընդհուպ մոտեցել է Մոսկվային, Գ. Սողոմոնյանը՝ որպես աշխարհազորային, մասնակցել է մարտերին: Կարմիր բանակի զորամիավորումներից մեկի շարքերում կատաղի կռիվների ժամանակ շատերի հետ հերոսաբար զոհվել է նաև ավագ լեյտենանտ Գ. Սողոմոնյանը: Հայրենասեր համալսարանականի անունը գրված է Մոսկվայի պետական համալսարանի կոլեկտիվի՝ ռազմաճակատներում զոհված անդամների հուշատախտակին:

ՏԱՎԱՐԱԾՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՍԵՐԳԵՅԻ (1915-1941) – Ծնվել է 1915 թ. Ադրբեջանական ԽՍՀ Շամխորի շրջանի Բարսամ գյուղում: 1928 թ. ավարտել է հայրենի գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը և ընդունվել Կիրովաբադի մանկավարժական ուսումնարանը: 1931 թ. ավարտել է ուսումը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: Սկզբում եղել է աշխարհագրության ուսուցիչ, ապա՝ դպրոցի վարիչ: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: Հայրենական պատերազմի առաջին օրերին Տավարածյանը չորրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Ռազմաճակատներում նրա ծառայությունների մասին մեզ հավաստի տեղեկություններ չեն հասել: Ընկերներին ղրած նամակներից հայտնի է միայն, որ 1941 թ. զոհվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում:

ՓԱՆՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍԻ (1912-1942) – Ծնվել է 1912 թ. Կիրովականում (Վանաձոր): Ավարտել է տեղի մկիջնակարգ դպրոցը, այնուհետև տեղափոխվել Երևան: 1938 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և անցել մանկավարժական աշխատանքի: Նալբանդի երկաթգծի թիվ 57 դպրոցում աշխատել է որպես ուսմասվար և գրականության ուսուցիչ: Գրել է պատմվածքներ, ակնարկներ և նովելներ:

Զինծառայության մեկնել է 1939 թ. և այն ավարտելուց հետո պիտի վերադառնար իր մանկավարժական աշխատանքին: Սակայն ոչ խաղաղ պայմաններում շարունակել է իր ծառայությունը, նույնիսկ վիրավորվել՝ հայտնվելով հոսպիտալում: Զոհվել է 1942 թ.՝ Կերչի ազատագրման ժամանակ, թշնամու արձակած թունավոր գազից[216]:

ՓՈՓԻՆՅԱՆ ԽԱՉԻԿ ՍՄԲԱՏԻ (1918-1943) – Ծնվել է 1918 թ. Կիրովականում (Վանաձոր): 1935 թ. ավարտել է Կիրովականի միջնակարգ դպրոցը և նշանակվել մանկավարժական աշխատանքի Ժդանով գյուղի միջնակարգ դպրոցում: Երկու տարի ուսուցչական աշխատանք կատարելուց հետո՝ 1937 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1941 թ. հունիսին Խ. Փոփինյանը 5-րդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Ուզբեկական ԽՍՀ՝ Սամարղանդ քաղաքի զինվորական ակադեմիայում սովորելու համար: Ավարտելուց հետո մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Հիշատակ են մնացել հարազատներին գրած նրա հայրենասիրական նամակները, որոնցում նա նշել է հայրենիքի նկատմամբ իր ունեցած պարտքի, թշնամու դեմ խորհրդային ժողովրդի անխուսափելի հաղթանակի մասին: Իր ծնողներին վերջին նամակը նա գրել է 1943 թ. հոկտեմբերի 11-ին: Այդ նամակում նկարագրել է, թե ինչպես իրենց դիվիզիան հաջողությամբ կատարել է մարտական խնդիրը և դուրս է եկել թշնամու շրջապատումից:

1943 թ. վերջին այն դիվիզիան, որի կազմում եղել է Խ. Փոփինյանը, վերակազմավորվելու և համալրվելու համար տեղափոխվել է Թբիլիսի: Նրան նշանակել են քիմիական ծառայության պետ Կուբանի կազակային հեծելազորային կորպուսի չորրորդ գվարդիական քառակի շքանշանակիր դիվիզիայում: Գվարդիայի գնդապետ Մուշեղ Կարապետյանի կողմից տրված տեղեկությունների համաձայն՝ 1943 թ. աշնանը Զապարոժեի մարզի, Կույբիշևի շրջանի Կույբիշև գյուղի մոտ տեղի ունեցած մարտում Խ. Փոփինյանը հերոսաբար զոհվել է:

Զապարոժեի մարզի Կույբիշև գյուղի մոտ՝ եղբայրական գերեզ-

[216] Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 437-438:

մանի հուշարձանի վրա, ոսկե տառերով գրված են նաև համալսարանական Խաչիկ Փոքինյանի անունն ու ազգանունը: Նրա հարազատները նամակագրական կապեր են պահպանել Կույբիշևի գյուղական խորհրդի հետ, լրացուցիչ կենսագրական տեղեկություններ են հաղորդել Խ. Փոքինյանի նախապատերազմյան ժամանակաշրջանի կյանքի, ուսումնառության և աշխատանքային գործունեության մասին:

ՓՈՒՐՍՈՒՂՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՐՇԱԿԻ (1909-1944) – Ծնվել է 1909 թ. Կարս քաղաքում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընտանիքը տեղափոխվել է Երևան: Աբովյանի անվան դպրոցն ավարտելուց հետո Ռ. Փորսուղյանը դարձել է պիոներական և կոմերիտական աշխատանքների կազմակերպիչ: Նա ՀԼԿԵՄ կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու էր, ՀԼԿԵՄ կենտկոմի գյուղբաժնի վարիչ: 1933-1934 թթ. գերազանցությամբ ուսանել է Երևանի պետական համալսարանում: 1933-1936 թթ. եղել է «Հարվածային ուսանող» թերթի խմբագիրը, միևնույն ժամանակ հատուկ թղթակիցը: Որպես բացարձակ գերազանց ուսանողի՝ նրան 1934-1936 ուստարիներին թույլ են տվել ՀԱՄԽ պրոֆդպրոցում կուսպատմություն դասավանդել: Համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո հանձնել է ասպիրանտուրայի քննությունները և 1939-1940 թթ. որպես ասպիրանտ ու գիտաշխատող իր նպաստը բերել պատմագիտության զարգացմանը: 1942 թ. Ռ. Փորսուղյանն արդեն Հյուսիսային Կովկասի մարտերի մասնակից էր: Զոհվել է 1944 թվականին:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՕՀԱՆՋԱՆԻ (1917-1941) – Ծնվել է 1917 թ. Կարս քաղաքում: Չորս տարեկան հասակում ընտանիքի հետ գաղթել և բնակություն է հաստատել Լենինականում (Գյումրի): Տնտեսական շատ ծանր պայմանների հետևանքով մայրն իր երեք երեխաներին, այդ թվում՝ Արտաշեսին, տվել է մանկատուն, իսկ 1929 թ. իր երեխաներին ետ վերցրել մանկատնից և տեղափոխվել Երևան: 1929-1937 թթ. Արտաշեսը սովորել է Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, 1937 թ. ավարտել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1941 թ. երրորդ կուրսից կա-

մավոր մեկնել է օդաչուական դպրոց: Կարճ ժամանակում ավարտել, ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Կենտրոնական ռազմաճակատ: Վորոնեժի մոտ օդային մարտն ավարտելուց հետո, երբ նրան շրջապատել են ֆաշիստական կործանիչները, նա Գաստելլոյի օրինակով ոչնչացրել է թշնամու տանկերի շարասյունը, որը գնում էր հարձակման կարմիր բանակի զորամասերի վրա՝ հետմահու պարգևատրվելով «Կարմիր դրոշի շքանշանով»:

«Իստորիա ՍՍՍՌ» ամսագրի 1960 թ. երրորդ համարում տպագրվել է Վ. Ն. Գապոնովի «Հերոս Գաստելլոյականները» հոդվածը, որում մասնավորապես ասվում է. «Օդային նավատորմի փառապանծ սաները՝ Ալեքսանդր Պրեյսայզենինը, Դմիտրի Տարասովը, Լեոնիդ Միխաիլովը, Իվան Վդովենսկին, Վասիլի Բոնդարենկոն, Իվան Զորինը, Դիսան Կորյազինը, Վլադիմիր Պետրովսկին, Արտաշես Օհանջանյանը և մյուսները ռազմաճակատներում կատարեցին Գաստելլոյական սխրագործություններ և անմահացան խորհրդային ժողովրդի սրտերում: Նրանք անվախ էին, խիզախ, գործում էին վճռականորեն թե՛ ցերեկային և թե՛ գիշերային օդային մարտերում: Նրանք բոլորն էլ թշնամու նկատմամբ լցված էին մեծ ատելությամբ, իսկ հայրենիքի նկատմամբ կյանքին համարժեք սիրով ու նվիրվածությամբ»:

Զոհված ընկերներիս

Հայրենական կռվից հաղթանակով դարձել,
Ուսանող եմ ես արդ հայոց մայր կամառի,
Արյան ծովերով ու բոցերով եմ անցել,
Ընկերներով իմ քաջ որջն եմ փակել չարի:

Ու երբ մտքիս մեջ խորասուզված մի պահ
Նորից հայրենական մարտերն եմ ապարտում,
Այն վայրերն եմ հիշում, այն արնաներկ ճամփան,
Ուր ընկերներս ընկան հերոսական մարտում:

Նրանք ընկան հպարտ փառքի վեհ դիրքերում,
Իրենց աչքերը վառ դեպ հաղթանակ հառած,
Նրանք ընկան, երբ մեծ այգն էր շառագում՝
Արյան կաթիլներից իրենց ծնունդ առած:

Մենք թաղեցինք նրանց ցավով ու կսկիծով,
Լոկ խաչափայտ դրինք շիրիմների վրա,
Եվ մեզ հետ պարանք մենք նրանց զայրույթը ծով,
Մինչև ընկավ վերջին դահիճը հիտլերյան:

Արդ գարունն է գրկել խաղաղ իմ լեռնաշխարհին,
Եվ հնչում է ուժին երգը աշխատանքի,
Ես հիշում եմ կրկին զորիված ընկերներիս,
Որոնց թափած արյամբ հասանք հաղթանակի:

Նրանք ասես ինձ հետ համախում են դասի
Եվ ամեն օր ինձ հետ մատյաններ են թերթում,
Երեկ հաղթում էինք մարտում մենք միասին,
Իսկ այսօր գիտության դասերն ենք սերտում:

Գրիգոր Մանուչարյան, 1951,
Հայրենական մեծ պատերազմի
մասնակից համալսարանական

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՌԱԶՄԱՃԱԿԱՏ ՄԵԿՆԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԸ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Մեծ հաղթանակի օրը (9 մայիսի, 1945 թ.)
Մեր սուրը փառքով դրեցինք պատյան, –
Մեր հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից:
Ավետիք Իսահակյան

Ա) ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍԱՆԱԾ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

1941-1945 թթ. հայրենիքը պաշտպանելու համար ԽՍՀՄ բոլոր ազգային հանրապետություններից զորակոչվեցին միլիոնավոր մարդիկ, զորակոչվեցին ու մաքառեցին որպես մի ընտանիքի անդամներ: Նրանց մի մասը զոհվեց Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում, իսկ մյուսները վերադարձան՝ նորից անցնելով շինարարական խաղաղ աշխատանքի: Ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակից հետո վերադարձան նաև Երևանի պետական համալսարանի սաների մի մասը, մանկավարժներն ու գիտնականները: Ով կիսատ էր թողել իր ուսումը, նորից շարունակեց, ով մանկավարժ էր, նորից վերսկսեց իր գործունեությունը:

1945-1946 թթ. ընթացքում համալսարանի կոլեկտիվն իր շարքերում ընդունեց շուրջ 480 ռազմաճակատայինների: Ետպատերազմյան տարիներին շուրջ 120 նախկին ռազմաճակատայիններ բարձրագույն կրթությամբ կադրեր պատրաստեցին ժողովրդական տնտեսության համար: Այս ռազմաճակատայինների, ինչպես նաև ռազմաճակատներից այլ կազմակերպություններ աշխատանքի մեկնած հա-

մալսարանականների գործունեության լուսաբանմանն է նվիրված աշխատության նշված ենթագլուխը:

Ենթագլուխը նվիրված է նաև մարտադաշտ մեկնած այն համալսարանականների գործունեությանը, որոնք նախապատերազմյան տարիներին և պատերազմի սկզբում ուսանել են ԵՊՀ-ում, ապա՝ մեկնել ռազմաճակատ:

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԱԳԻ (1920-1998) – Ծնվել է 1920 թ. Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում: 1937 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) 50-րդ երկաթուղային միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. 5-րդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. հունվարը սովորել ու ավարտել է Բաքվի հետևակային ուսումնարանը, ստացել է լեյտենանտի կոչում՝ ականանետային վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոնով ծառայության ուղարկվելով 263-րդ հրաձգային դիվիզիա: 1942 թ. սեպտեմբերին «Կրասնի Կավկազ» հածանավով 45-րդ բանակի 408-րդ դիվիզիայի 672-րդ գնդի հետ իջել է Գելենջիկի սևծովյան ափը և նավաստիների զորամասի հետ միասին մասնակցել թշնամու դեմ մղվող կատաղի մարտերին: 1942 թ. հոկտեմբերին վիրավորվել է ոտքից և գերի վերցվել գերմանացիների կողմից: Մինչև 1945 թ. ապրիլ ամիսը եղել է գերության մեջ: Ազատվել է դաշնակիցների զորամասերի կողմից և վերադարձել խորհրդային բանակի շարքերը: Մինչև 1945 թ. դեկտեմբերի վերջը ծառայել է 93-րդ դիվիզիայում, որտեղից էլ զորացրվել է և շարունակել սովորել համալսարանում: 1946 թ. ավարտել է համալսարանի պատմության ֆակուլտետը, ստացել պատմաբանի որակավորում և ընդունվել ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: 1956 թվականից աշխատել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: 1965 թ. հունվարին Գ. Աբգարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սեբեոսի պատմություն և Անանունի առեղծվածը» թեմայով: Բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրության ատեստացիոն

հանճնաժողովը նրան միանգամից շնորհել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1975-1976 ուստարում դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում: Վախճանվել է 1998 թ. մայիսի 15-ին:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ (1903-1983) – Ծնվել է 1903 թ. Ազիզբեկովի (Եղեգնաձորի) շրջանի Ղուշչի (Կեչուտ) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, իսկ 1916-1917 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1917 թ. վերադարձել է գյուղ և զբաղվել գյուղատնտեսությամբ: 1933 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմատնտեսագիտական ֆակուլտետը: 1934 թ. ընդունվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կից ազգությունների ասպիրանտուրան: 1937 թ. ավարտել է, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և վերադարձել Հայաստան: Նույն թվականին որպես ավագ գիտաշխատող աշխատանքի է անցել Էջմիածնի մատենադարանում: 1941 թ. աշնանը զորակոչվել է կարմիր բանակ՝ անցնելով Անդրկովկասի ռազմական օկրուգի քաղվարչության տրամադրության տակ: Նույն տարում նշանակվել է «Մարտական գրոհ» թերթի թղթակից և իր զորամասի հետ մեկնել Կերչի ռազմաճակատ: Մասնակցել Կերչի ազատագրման մարտերին: 1942 թ. զորացրվել է, վերադարձել Հայաստան և նշանակվել դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում: 1943 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պրոֆեսորի կոչում:

1944 թ. գործուղվել է արտասահման «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կազմակերպելու հանճնարարությամբ: Եղել է Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներում և 6 ամիս հետո վերադարձել հայրենիք: 1943-1945 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի, իսկ 1968-1975 թթ.՝ հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ: Կյանքի հետագա տարիներին աշխատել է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում որպես պրոֆեսոր: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի

դեմ տարած հաղթանակի համար» և «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով: Վախճանվել է 1983 թվականին:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՀԱՄԻ (1915-1981) – Ծնվել է 1915 թ. Լենինականում (Գյումրի): 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Հայրենական պատերազմի երկրորդ օրը՝ 1941 թ. հունիսի 23-ին, մի խումբ համալսարանականների հետ զորակոչվել է կարմիր բանակ: Նա ծառայությունը սկսել է 45-րդ բանակի հրետանային գումարտակում, որը ձևավորվել էր 1941 թ. Հայաստանում և ռազմաճակատ էր ուղարկվել 1942 թվականին: Այդ գումարտակի կազմում Գ. Աբրահամյանն առաջին անգամ եղել է Երրորդ ուկրաինական ռազմաճակատում: Մասնակցել է Ղրիմի ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թ. նոյեմբերին հրամանատարության կողմից տրված առաջադրանքը կատարելու ժամանակ վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ՝ ապաքինվելու: Ընդամենը մեկ ամիս բուժվելուց հետո վերադարձել է Բելառուսական ռազմաճակատ և մասնակցել ԽՍՀՄ արևմտյան տարածքների ազատագրմանը: Ռազմաճակատի զորամասերի հարձակողական մարտերի ժամանակ Գ. Աբրահամյանը երկրորդ անգամ է վիրավորվել: Հոսպիտալում բավականին երկար մնալուց հետո վերադարձել է նույն ռազմաճակատը: Այս անգամ ծառայել է տանկային հարվածային երկրորդ բանակում: Որպես տանկիստ մասնակցել է Լանցբերգի, Բեռնաուի, Կյուստրինի և Բեռլինի գրավմանը: 1945 թ. ապրիլի 29-ին Բեռլինում տեղի ունեցած փողոցային մարտերի ժամանակ Գ. Աբրահամյանը երրորդ անգամ է վիրավորվել: Չնայած դրան՝ մինչև վերջնական հաղթանակը եղել է մարտերի մեջ: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Գ. Աբրահամյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մի շարք մեդալներով: Մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու համար հրամանատարության կողմից ստացել է մի քանի շնորհակալագրեր:

Պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1945 թ., Գ. Աբրահամյանը զորացրվել է և համալսարանում շարունակել իր կիսատ թո-

ղած ուսումը: Ավարտելուց հետո անցել է կուսակցական աշխատանքի: 1956 թվականից նա աշխատել է որպես Երքաղկոմի մարքսիզմ-լենինիզմի համալսարանի ռեկտոր: Վախճանվել է 1981 թվականին:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ԼԵՎՈՆԻ (1913-2007) – Ծնվել է 1913 թ. փետրվարի 16-ին Արդահան քաղաքում: 1920 թ. ընտանիքը գաղթել է Ալեքսանդրապոլ (Գյումրի), ապա՝ 1924 թ., տեղափոխվել Երևան: Յոթնամյա կրթությունն ստացել է Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև սովորել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում, որն ավարտել է 1931 թվականին:

1933 թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1935 թ. ուսումը շարունակել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում, որն ավարտել է 1940 թվականին: 1941-1946 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել է ավիատեխնիկական մատակարարման բաժանմունքի պետ: Զորացրվելուց հետո՝ 1946 թվականից, ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի բաժնում աշխատել է որպես կրտսեր գիտաշխատող: Եղել է ՀԽՍՀ ԳԱ տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար, ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, բաժնի վարիչ, ԳԱ մեխանիկայի ինստիտուտում՝ բաժնի վարիչ: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1963 թ.՝ դոկտորական ատենախոսություն Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1965 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1951-1980 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում:

1965-1992 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի առաձգականության մաթեմատիկական տեսության բաժնի վարիչ, 1992 թվականից՝ գլխավոր գիտաշխատող, 1956-1991 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ: Վախճանվել է 2007 թ. մարտի 4-ին:

ՂԱԼԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԻՍԱՀԱԿԻ (1914-1999) – Ծնվել է 1914 թ. օգոստոսի 23-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: 1929 թ. ավարտել է Մաղավուզի յոթնամյա դպրոցը և ընդունվել Լենինականի (Գյումրի) արհեստագործական ուսումնարանը: 1933 թ. ավարտել է այն և աշխատանքի անցել տեքստիլ կոմբինատում: Նույն տարվա վերջին զորակոչվել է բանակ և ծառայել մինչև 1935 թվականը: 1935 թ. աշնանը զորացրվել է և մեկ տարի հետո՝ 1936 թ., ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է համալսարանը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Հ. Ղալամյանը նորից է զորակոչվել: Նա՝ որպես կաղրային ծառայություն անցած զինվոր, անմիջապես ուղարկվել է ռազմաճակատ: 1942-1943 թթ. եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում ու 409-րդ դիվիզիայի կազմում մասնակցել է Մոզդոկի և մյուս քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: Պարգևատրվել է մի շարք մեդալներով:

1945 թ. Հ. Ղալամյանը զորացրվել է և ընդունվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաբանական ինստիտուտին կից ասպիրանտուրան: 1949 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և նշանակվելով ինստիտուտի գիտական քարտուղար: 1950-1951 թթ. աշխատել է «Հայածուխ» էքսպեդիցիայում որպես գլխավոր երկրաբան: 1951 թ. տեղափոխվել է համալսարան, ստացել դոցենտի կոչում և աշխատանքի անցել երկրաբանական ֆակուլտետում: 1954-1956 թթ. դասախոսական աշխատանքին զուգահեռ եղել է համալսարանի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար: 1963-1967 թթ. աշխատել է որպես գիտահետազոտական բաժնի ղեկավար, 1967-1979 թթ.՝ ԵՊՀ երեկոյան և հեռակա ուսուցման գծով պրոռեկտոր: 1972 թ. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ Հ. Ղալամյանը ստացել է վաստակավոր երկրաբանի կոչում: Կյանքի վերջին տարիներին աշխատել է ԵՊՀ պատմության թանգարանում որպես ավագ գիտաշխատող: Վախճանվել է 1999 թ. ապրիլի 5-ին:

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՀԱՅԿԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1914-1991) – Ծնվել է 1914 թ. դեկտեմբերի 11-ին Նոյեմբերյանի շրջանի Կոթ գյուղում (Կոթի): 1934 թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը և զորակոչվել բանակ: Երկու տարի ծառայելուց հետո զորացրվել է և 1937 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. հունիսի 25-ին նորից է զորակոչվել: Երկու ամիս ծառայելուց հետո ուղարկվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը: Դեռ չավարտած՝ ուսումնարանի բոլոր սաների հետ ուղարկվել է Կովկասի ռազմաճակատ և շուրջ երկու ամիս մասնակցել Սանչարոյի կիրճի պաշտպանական մարտերին: Ուսումնարանի սաները, այդ թվում՝ Հայկազ Ազիզբեկյանը, կարմիր բանակի կանոնավոր կադրային զորամասերի հետ միասին հերոսաբար մարտնչել է թշնամու դեմ և համառ մարտերով փակել նրա մուտքը դեպի Անդրկովկաս: Այդ մարտերից մեկում 1941 թ. հոկտեմբերի 20-ին Հ. Ազիզբեկյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել սկզբում Սուխումիի, իսկ հետո՝ Թբիլիսիի հոսպիտալ: 1943 թ. զորացրվել է և վերադարձել համալսարան: 1944 թ. ավարտել է և անցել կուսակցական աշխատանքի սկզբում Կիրովի շրջկոմում, ապա՝ ՀԿԿ կենտկոմում: 1949 թ. նորից աշխատել է որպես Կիրովյան կուսշրջկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ: 1950 թ. նրան ուղարկել են Միկոյանի անվան շրջկոմ (Արաբկիր վարչական շրջան), որտեղ մինչև 1953 թվականը աշխատել է որպես երկրորդ քարտուղար: 1953-1957 թթ. Հ. Ազիզբեկյանը աշխատել է ՀԿԿ Երքաղկոմում, «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագրությունում, «Գիտելիք» ընկերության Երևանի բաժանմունքում: 1959-1968 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ գիտության կոորդինացման խորհրդում: 1968 թ. աշխատել է ՀԽՍՀ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1960 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1970 թ.՝ դոկտորական ատենախոսություններ:

Կովկասի պաշտպանությանը ակտիվ մասնակցություն ունենալու համար Հ. Ազիզբեկյանը պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «Մարտական ծառայության համար», «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում

Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 1991 թ. հուլիսի 2-ին:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՐԱՄԻ (1923-1988) – Ծնվել է 1923 թ. մարտի 29-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1926 թ. տեղափոխվել է ընտանիքի հետ Երևան, որտեղ 1940 թ. ավարտել է Ստեփան Շահումյանի անվան առաջին դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1942 թ. զորակոչվել է բանակ և ծառայության անցել 180-րդ հրաձգային գնդում: Ռադիոհեռագրիչ Ռ. Ալեքսանդրյանն աչքի է ընկել Հյուսիսային Կովկասի մարտերում: 1942 թ. հոկտեմբերի 17-ին Հյուսիսարևելյան Տուապսեի շրջանում վիրավորվել է, սակայն շարունակել է մնալ դիրքում՝ կատարելով ռազմական առաջադրանքը: 1943 թ. հուլիսին վիրավոր լինելու պատճառով հեռացվել է բանակից և վերադարձել Երևան, որտեղ շարունակել է ուսումը: Ջուգահեռ դասավանդել է Երևանի հրետանային համար 17 դպրոցում:

1945 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1948 թ.՝ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան: 1948-1950 թթ. աշխատել է համալսարանում որպես ավագ դասախոս: 1949 թ. Ռ. Ալեքսանդրյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1955 թ. ստացել է դոցենտի կոչում:

1954-1959 թթ. նա ղեկավարել է ԵՊՀ դիֆերենցիալ հավասարումների ամբիոնը, 1959-1963 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի տնօրեն: 1962 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1966 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1963 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986 թ.՝ ակադեմիկոս:

1963-1978 թթ. Ռ. Ալեքսանդրյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի դիֆերենցիալ հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի բաժնի վարիչ, 1966-1967 թթ.՝ ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1978-1988 թթ.՝ մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի վարիչ: Ռ. Ալեք-

սանդրյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներ, ֆունկցիոնալ անալիզի, ընդհանուր և հանրահաշվական տոպոլոգիայի տեսության հարցեր: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և համահեղինակ «Общая топология» (М., 1979) դասագրքի:

1986 թ. Ռ. Ալեքսանդրյանն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: 1983 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Վերջինս պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», ինչպես նաև «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Վախճանվել է 1988 թ. մարտի 22-ին Երևանում:

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԲԱԳՐԱՏԻ (1922-1986) – Ծնվել է 1922 թ. հունվարի 22-ին Ղարաքիլիսա (Վանաձոր) քաղաքում: 1939 թ. ընդունվել է և 1944 թ. ավարտել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների և գրականության բաժինը: Ուսումնառության ընթացքում՝ 1942 թ., ինքնակամ մեկնել է ռազմաճակատ, ծառայել է 320-րդ հրաձգային դիվիզիայի ուսումնական գումարտակում: Մասնակցել է Մոզդոկի մարտերին, որտեղ էլ վիրավորվել է: 1943 թ. զորացրվել է ու շարունակել ուսումը:

1945-1948 թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1945-1951 թթ. աշխատել է «Ավանգարդ» թերթի խմբագրությունում որպես բաժնի վարիչ, խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար: 1950-1951 թթ. եղել է «Խորհրդային գրականություն» ամսագրի քննադատության բաժնի վարիչ, 1954-1986 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում խորհրդային գրականության բաժնի վարիչ:

1950 թ. պաշտպանել է «Գյուղը Նաիրի Զարյանի ստեղծագործության մեջ» թեմայով ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1963 թ. պաշտպանել է

«Ակսել Բակունց» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Կազմել և խմբագրել է «Հայ խորհրդային գրականության պատմություն» (1966, ռուսերեն) աշխատությունը: Ռուսերեն լույս են տեսել Ստեփան Զորյանին, Նաիրի Զարյանին և Ակսել Բակունցին նվիրված նրա մենագրությունները: Միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար Ս. Աղաբաբյանը գրել է «Հայ խորհրդային գրականություն» դասագիրքը (1969-1986): Գրել է «Խորհրդային բազմազգ գրականության պատմություն» վեցհատորյակի առաջին և երրորդ հատորների (1970, ռուսերեն)՝ հայ գրականությանը նվիրված գլուխները: 1976 թ. Մոսկվայում ռուսերեն լույս է տեսել նրա «Հայ գրականություն» բուհական դասագիրքը (համահեղինակներ՝ Վաչե Նալբանդյան, Սերգեյ Սարինյան): 1980 թ. Երևանում ռուսերեն լույս է տեսել նրա «Հայ գրականության կերպարները և ոճերը» քննադատական հոդվածների ժողովածուն:

Պարգևատրվել է «Պատվո նշան» (1972) և «Ժողովուրդների բարեկամության» (1982) շքանշաններով: Վախճանվել է 1986 թ. մարտի 19-ին Երևանում:

ԱՄԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՍԱՏՈՒՐԻ (1910-) – Ծնվել է 1910 թ. Գորիսի շրջանի Բռնակոթ գյուղում: Ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը և 1934 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, 1937 թ. ավարտել է այն՝ աշխատանքի անցելով ՀԽՍՀ ներքին առևտրի ժողկոմատում: 1933 թ. Գ. Ամարյանը տեղափոխվել է համալսարան, սկզբում աշխատել է որպես լաբորանտ, ապա՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի ասիստենտ ու դասախոս: 1941 թ. աշնանը զորակոչվել է կարմիր բանակ: Ավարտել է Բաքվի քաղաշխատողների վերապատրաստման դասընթացները և մեկնել գործող բանակ: Դասակի քաղղեկ է եղել Ղրիմի ռազմաճակատում, մասնակցել է Կերչի կատաղի մարտերին: Վիրավորվել է երկու անգամ՝ 1942 թ. մարտի 18-ին Կերչ քաղաքի պաշտպանության ժամանակ, և Կերչից ոչ հեռու՝ Կարաչելի շրջանում: Հոսպիտալում ապաքինվելուց հետո Գ. Ամարյանին սովորելու

նպատակով նախ ուղարկել են Գորկի, իսկ հետո՝ Մոսկվա: 1944 թ. ապրիլին նա ծանր հիվանդացել է և որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել:

Ղրիմի ռազմաճակատում պարգևատրվել է «Մարտական ծառայության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ.

Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1941 թ. Գ. Ամարյանը զորացրվել է, վերադարձել համալսարան՝ անցնելով դասախոսական աշխատանքի: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, այնուհետև ստացել է դոցենտի կոչում: 1950-1980-ական թթ. լույս են տեսել Գ. Ամարյանի մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ:

ԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՐՇԱԿԻ (1923-1983) – Ծնվել է 1923 թ. հունվարի 30-ին Կիրովական քաղաքում (Վանաձոր): Սովորել է տեղի երկաթգծի միջնակարգ դպրոցում և ավարտել 1940 թվականին: Նույն թվականին նա մասնակցել է Երևանի պետական համալսարանի ընդունելության քննություններին, բայց կամավոր մեկնել է կարմիր բանակ: Սկզբում սովորել է հակատանկային հրահանգիչների դպրոցում, ապա որպես հետախույզ ծառայության անցել 18-րդ բանակի 155-րդ հատուկ հրաձգային բրիգադում: 1942 թ. ամռանը մասնակցել է Կովկասյան լեռներում՝ Մարուսսկի լեռնանցքում տեղի ունեցող ճակատամարտերին: Նույն թվականի ամռանը նա Մոզդոկի ազատագրման համար մղվող մարտերում ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Նա մի քանի անգամ որպես հետախույզ թափանցել է թշնամու թիկունքը, պատվով կատարել մարտական առաջադրանքները՝ արժանանալով հրամանատարության խրախուսանքներին:

1943 թ. գարնանը Մ. Ամիրբեկյանը՝ որպես 2-րդ խմբի հաշմանդամ, դուրս է գրվել հոսպիտալից: Նույն թվականին վերադարձել է համալսարան, սովորել բանասիրական ֆակուլտետում և ավարտել 1948 թվականին:

Մ. Ամիրբեկյանը 1949-1959 թթ. աշխատել է «Ավանգարդի» խմբագրությունում որպես բաժնի վարիչ և պատասխանատու քարտուղար, այնուհետև՝ «Խորհրդային Հայաստան» ամսագրի խմբագրությունում որպես բաժնի վարիչ: Այդ տարիներին թերթերում և ամսագրերում տպագրվել են նրա բազմաքանակ հոդվածները, ակնարկները, ֆելիետոններն ու պատմվածքները, որոնք լայն ճանաչում են բերել հեղինակին: «Հայաստան» հրատարակչությունը 1961 թ. լույս է ընծայել Մ. Ամիրբեկյանի «Հողի ու վազի վարպետը» գրքույկը, 1965 թ.՝ «Անանուն ծաղիկը» պատմվածքների ժողովածուն, 1937 թ.՝ «Վերջին հողակտորի վրա» վեպի առաջին գիրքը: Նա ավարտել և տպագրության է հանձնել այդ վեպի երկրորդ գիրքը:

«Վերջին հողակտորի վրա» պատմավեպում (գիրք 1-2, 1973-1979 թթ.) ներկայացրել է 1918-1920-ական թթ. ազգային-ազատագրական պայքարը, մասնավորապես Ղարաքիլիսայի ճակատամարտն ու դրվագներ Սարդարապատի, Բաշ Ապարանի ճակատամարտերից:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ցուցաբերած արիության համար Միքայել Ամիրբեկյանը պարգևատրվել է «Խիզախության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 1983 թ. դեկտեմբերի 28-ին:

ԱՆԱՆԻԿՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ (1914-1982) – Ծնվել է 1914 թ. Արթիկի շրջանի Ղփշաղ գյուղում (Հառիճջ): Տեղական տարրական դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան և ընդունվել Երևանի քաղ-լուսավորական տեխնիկումը: 1933 թ. ավարտել է և մեկ տարի աշխատելուց հետո 1934 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և ընդունվել փիլիսոփայության գծով ասպիրանտուրա:

1940 թ. հերթական զորակոչով մեկնել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1945 թ. վերջը: Նախքան Հայրենական պատերազմի սկսվելը գվարդիայի ավագ սերժանտ Կ. Անանիկյանը ծառայել է

ԽՍՀՄ սահմանամերձ շրջանների զորամասերում որպես շարքային հրետանավոր, ապա՝ որպես հրանոթի հրամանատար: Մասնակցել է արևմտյան տարածքների պաշտպանական մարտերին: Երկար ժամանակ եղել է Առաջին և Չորրորդ ուկրաինական ռազմաճակատներում, մասնակցել է Կիևի, Կուրսկի, Օրյոլի և այլ քաղաքների պաշտպանությանը: Կուրսկում ծավալվող մարտերի ժամանակ նա վիրավորվել է, կարճ ժամանակում ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ:

1942-1944 թթ. Կ. Անանիկյանը եղել է Ստալինգրադյան ռազմաճակատում և մասնակցել քաղաքի պաշտպանության համար մղվող ամենակատաղի մարտերին: 1943 թ. մասնակցել է Կիևի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի հողերի ազատագրմանը և գերմանական մի շարք քաղաքների գրավմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Փառքի երրորդ աստիճանի» շքանշաններով և «Խիզախության համար», «Ստալինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1945 թ. նոյեմբերին Կ. Անանիկյանը զորացրվել է և շարունակել սովորել ասպիրանտուրայում: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1948 թվականից դասավանդել է համալսարանում: Երկար տարիներ եղել է ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ և կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար: Վախճանվել է 1982 թվականին:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ (1912-2004) – Ծնվել է 1912 թ. փետրվարի 1-ին Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Մրգաշատ գյուղում: 1933-1938 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, 1938-1941 թթ.՝ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1941 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նույն թվականին ինքնակամ զորակոչվել է ռազմաճակատ: 1941 թ. դեկտեմբերից մինչև 1942 օգոստոսը սովորել է Սուխումի ռազմական ուսումնարանում: 1942 թ. սեպտեմբերից մինչև 1944 թ. մայիսը եղել է Հյուսիսկովկասյան և Երկրորդ բելառուսական բանակների քաղա-

քական քաղկառավարման ագիտատոր, իսկ այնուհետև՝ մինչև 1945 թ. օգոստոսը՝ Առաջին բելառուսական բանակի 33-րդ քաղաքական վարչության դասախոս: 1945 թ. օգոստոսից մինչև 1946 թ. օգոստոսը դասախոսել է Սմոլենսկի ռազմական շրջանում: 1944 թ. հունիսի 21-ին Դրուտ գետի ափին (Բելառուսիա) ստացել է կանտուզիա:

Բ. Առաքելյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Հյուսիսային Կովկասի, Բելառուսիայի, Լեհաստանի ազատագրման և 33-րդ բանակի կազմում Բեռլինի գրավման մարտերին:

1954 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1957 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1946-1949 թթ. Բ. Առաքելյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1949-1959 թթ.՝ բաժնի վարիչ, 1959-1990 թթ.՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, այնուհետև՝պատվավոր տնօրեն: 1949 թվականից նա գլխավորել է Գառնիի, 1962 թվականից՝ Արմավիրի, իսկ 1970 թվականից՝ Արտաշատի հնագիտական պեղումները: 1968-1990 թթ. Բ. Առաքելյանը համատեղությամբ դասախոսել է ԵՊՀ-ում: 1968 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974 թ.՝ ակադեմիկոս: 1983-1990 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների և գրքերի: Կարևոր աշխատություններն են «Հայկական բարձրաքանդակները IV-VII դդ.» (Երևան, 1949), «Գառնի I» (ռուսերեն, Երևան, 1951), «Գառնի II» (ռուսերեն, Երևան, 1957), «Գառնի III» (Երևան, 1962), «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.», հ. 1 (Երևան, 1958), հ. 11 (Երևան, 1964), «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմութաև» (Երևան, 1976) մենագրությունները: Բ. Առաքելյանի ջանքերով ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է մատենաշարեր՝ «Հնագիտական պեղումները Հայաստանում» (22 պրակ), «Հայաստանի հնագիտական հուշարձաններ» (14 պրակ), «Դիվան հայ վիմագրության» (6 պրակ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (18 հատոր), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (13 հատոր) և այլն: Բ. Առաքելյանը՝ որպես հեղինակ և խմբագիր, գործուն մասնակցություն է ունեցել «Հայ ժողովրդի պատ-

մություն» ութհատորյակի 2-րդ և 3-րդ հատորների ստեղծմանը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն: Բազմիցս զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Մոսկվա, Փարիզ, Լիսաբոն, Լոնդոն, Հռոմ, Կահիրե և այլն): 1965 թ. Բ. Առաքելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1978 թ. և 1986 թ.՝ ՀԽՍՀ պետական մրցանակի: Պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 2004 թ. օգոստոսի 16-ին Երևանում:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՀԱԿ ՆԻԿՈՂՈՍԻ (1910-) – Ծնվել է 1910 թ. Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Մրգաշատ գյուղում: 1933 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, իսկ 1935 թ.՝ Կենտկոմին կից կուսակցական դպրոցը: 1935 թ. նա զորակոչվել է կարմիր բանակ: Զորացրվելուց հետո երկու տարի աշխատել է Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում: 1939 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ս. Առաքելյանն ուղարկվել է գործող բանակ, մտել Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիա որպես մարտկոցի քաղղեկ: Մինչև 1943 թ. հունիսը նա եղել է Անդրկովկասի ռազմաճակատում և մասնակցել Կովկասի քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թ. հունիսին Ս. Առաքելյանը վերապատրաստման դասընթացներում ստացել է շարային հրամանատարի վերաորակավորում և նշանակվել գնդացրային դասակի հրամանատար: Մինչև 1945 թվականը եղել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների գնդացրային դասակի հրամանատար: Մինչև 1945 թվականը մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների ազատագրման և ֆաշիստական Գերմանիայի ջախջախման վճռական մարտերին: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «Մարտական ծառայության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1946 թ.՝ զորացրվելուց հետո, Ս. Առաքելյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և աշխատանքի անցել Երևանի Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում: 1964 թվականից Ս. Առաքելյանը եղել է ԵՊՀ գիտական գրադարանի տնօրեն:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ՄԻՔԱՅԵԼԻ (1916-1988) – Ծնվել է 1916 թ. Ղափանի շրջանի Քաջարան գյուղում: 1933 թ. ավարտել է Ղափանի միջնակարգ դպրոցը և մինչև 1935 թվականը աշխատել Ղափանի շրջկոմում որպես պիոներ-բյուրոյի նախագահ: 1935 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1940 թ. ավարտել է և ընդամենը մի քանի ամիս աշխատելուց հետո զորակոչվել է բանակ: Մինչև Հայրենական պատերազմը ծառայել է Արևմտյան Բելառուսիայի զինվորական օկրուգի տանկային զորամասերից մեկում սկզբում որպես շարքային զինվոր, ապա՝ դասակի հրամանատար ու գումարտակի կուսակցական կազմակերպության քարտուղար: Մինչև 1941 թ. դեկտեմբեր ամիսը մասնակցել է Բելառուսիայի պաշտպանությանը: 1941 թ. դեկտեմբերի 2-ին Կոշարկայի հարավարևելյան մասում՝ Կարտուշ-Բերոզայի շրջանում տեղի ունեցած մարտի ժամանակ Վ. Առաքելյանը գերի է ընկել: Շատ գերիների հետ նրան ուղարկել են Ֆրիդրիխս քաղաք և այնտեղից՝ Վուստրաու: 1942 թ. ամռանը Վուստրաուի ֆաշիստական ճամբարում ստեղծվել է «Խորհրդային հայրենասերներ» հայկական ընդհատակյա կազմակերպություն, որում ներգրավվել են շատերը (Վաղարշակ Առաքելյանը՝ Քաջարանից, Սերգեյ Հովակիմյանը՝ Շամշադինից, Վաղարշակ Աբրահամյանը, Ժորա Գևորգյանը՝ Լեռնային Ղարաբաղից, Վահան Սարգսյանը՝ Ապարանի շրջանից, Հայկարամ Մարտիրոսյանը՝ Ստեփանավանից, Սարգիս Խաչատրյանը Լենինականից, Վահրիճ Մարտիկյանը՝ Մարտունու շրջանից և ուրիշներ):

Ընդհատակյա կազմակերպությունն իր առաջ խնդիր է դրել գերիների մեջ քարոզչական աշխատանք տանելու, ֆաշիզմի դեմ հաղթանակի հավատ ներշնչելու:

1943 թ. փետրվար-մարտ ամիսներին Լեհաստանի համակենտրոնացման ճամբարներից Վուստրաու են բերվել նոր հայ ռազմագե-

րիներ, որոնք նույնպես ընդգրկվել են Վ. Առաքելյանի ընդհատակյա խմբի մեջ և ակտիվ մասնակցություն ունեցել նրա աշխատանքներին: 1943 թ. վերջին նրանք ընդհատակյա կազմակերպության խմբի անդամների հետ միասին տեղափոխվել են Հիշպերկի ապակու գործարան: Նույն թվականին նրանք գործարանում ստեղծել են իրենց գաղտնի տպարանը, տպել ու տարածել հակաֆաշիստական թռուցիկներ ու կոչեր: Վ. Առաքելյանի գլխավորությամբ խումբը կազմակերպել է էլեկտրակայանների պայթեցումներ և գործարանի թողարկման ձախողումներ: Խմբի կողմից տրված հաղորդումների հիման վրա խորհրդային ինքնաթիռները ոչնչացրել են թշնամու զինվորներով բեռնված գնացքները, ռմբակոծել խոշոր արդյունաբերական օբյեկտներ:

1943 թ. խորհրդային հայրենասերների համարձակ գործողությունների հետևանքները սկսել են ավելի նկատելի դառնալ ֆաշիստական տեղական իշխանություններին: Թերթում հայտարարություն է տրվել, ըստ որի՝ պետական իշխանության մարմինները խոստացել են 30 հազար մարկ պարգևատրել բոլոր նրանց, ովքեր կհայտնաբերեն թռուցիկներ տարածողներին ու վնասարարություններ կատարողներին: Հասկանալի էր, որ այդ հայտարարությունն առաջին հերթին ուղղված էր հայրենասերների խմբի ղեկավար Վաղարշակ Առաքելյանի դեմ:

1944 թ. աշնանը հայրենասերների խմբի ղեկավար Վաղարշակ Առաքելյանը խորհրդային հետախուզական կենտրոնից առաջադրանք է ստացել՝ վերադառնալու Խորհրդային Միություն և տեսակցելու հրամանատարության հետ: Վ. Առաքելյանը եկել է Խորհրդային Միություն որպես հետախուզության հրամանատար և վերադարձել է Գերմանիա: 1945 թ. նրա ղեկավարությամբ խորհրդային հայրենասերների խմբի գործունեությունն ավելի է ծավալվել: Նրանք տեղեկություններ են հաղորդել Հիտլերի նստավայրի և ռազմական մի շարք կարևոր գործարանների, այդ թվում՝ Բեռլինի տանկերի ու ինքնաթիռների գործարանների տեղադրության մասին:

1945 թ. գարնանը Վ. Առաքելյանի «Խորհրդային հայրենասերներ» ընդհատակյա հակաֆաշիստական հետախուզական խումբը,

որն ունեցել է 23 անդամ, ակտիվ հետախուզական աշխատանք է կատարել Բեռլինի շրջանում: Խմբի ամենաակտիվ գործիչները՝ «Արաքսը» (Վաղարշակ Առաքելյանը) և «Վեներան» (Անտոնինա Օգնենկո), բազմաթիվ ու շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդել խորհրդային հրամանատարությանը:

1945 թ. Վ. Առաքելյանը զորացրվել է և մինչև 1948 թվականը աշխատել Ղափան քաղաքի միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար, 1948-1957 թթ.՝ Քաջարանի դպրոցում որպես ուսուցիչ և բաներիտ տեխնիկումի տնօրեն: 1957-1965 թթ. եղել է Քաջարանի շինարարական տեխնիկումի տնօրենը: 1965 թվականից մինչև կենսաթոշակի անցնելը Երևանի Ակսել Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանի տնօրենն էր: Վախճանվել է 1988 թվականին:

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ (1920-1986) – Ծնվել է 1920 թ. Լեռնային Ղարաբաղում: 1937 թ. ավարտել է Կիրովաբադի Ս. Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. չորրորդ կուրսից զորակոչվել է բանակ և ծառայել շուրջ 25 տարի՝ շարքային զինվորից հասնելով փոխգնդապետի աստիճանի:

1941 թ. դեկտեմբերից մինչև 1945 թվականը Ռ. Առուստամյանը եղել է Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում: Թամանյան հայկական եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի կազմում կռվել է Անդրկովկասյան, Հյուսիսկովկասյան և Մերձսևծովյան առանձին բանակի ռազմաճակատներում, ակտիվ մասնակցություն է ունեցել հատկապես Թամանի, Կերչի, Սևաստոպոլի ազատագրման համար մղվող կատաղի մարտերին: Պատերազմի ամբողջ ընթացքում Ռ. Առուստամյանը գրեթե միշտ եղել է մարտական շարքերում՝ հասնելով մինչև Բեռլին: Հմուտ զինվորականը արիության ու խիզախության համար պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, «Մարտական ծառայության համար», «1941-1945 թթ. Հայրե-

նական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Վարշավայի ազատագրման համար», «Բեռլինի գրավման համար» և այլ մեդալներով:

Պատերազմից հետո փոխգնդապետ Ռուբեն Առուստամյանը մինչև 1951 թվականը ծառայել է տարբեր զորամասերում, այնուհետև զորացրվել է և 1961 թվականից աշխատանքի անցել ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետում: 1970-ական թթ. եղել է այդ ֆակուլտետի դեկանի տեղակալ: Վախճանվել է 1986 թվականին:

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱՆ ՄՈՎՍԵՍԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Խանածախ գյուղում: 1937 թ. ավարտել է Բաքվի հայկական միջնակարգ դպրոցը և մեկ տարի ուսուցիչ աշխատելուց հետո ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 8-ին զորակոչվել է: 1942 թ. մարտին ավարտել է Թելավի ռազմահետևակային ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կոչում: Այնուհետև մեկնել է Ստալինգրադի ռազմաճակատ: Վ. Առուստամյանը մասնակցել է քաղաքի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին: 1942 թ. օգոստոսի 31-ին թշնամու դեմ մղված անհավասար մարտերից մեկում վիրավորվել է և գերի ընկել: Վոլգայի ափերից նրան քշել են մինչև Ֆրանսիա: Մի քանի անգամ փորձել է փախչել: Փախչելու անհաջող փորձի ժամանակ բռնվել է: 1944 թ. օգոստոս 18-ին որոշել են նրան գնդակահարել: Երբ ավտոմեքենայով իջեցրել են ձորը՝ գնդակահարելու, անսպասելիորեն մի ինքնաթիռ սկսել է ռմբակոծել: Վ. Առուստամյանը, օգտվելով ստեղծված խառնաշփոթ վիճակից, նետվել է գետի մեջ և անհետացել: Այնուհետև միացել է ֆրանսիական պարտիզաններին և ծառայել Ալեքսանդր Ղազարյանի պարտիզանական գնդում: Այդ գնդի կազմում Վ. Առուստամյանը, մասնակցելով բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը, դարձել է պարտիզանական մի ջոկատի հրամանատար:

Մի անգամ Վ. Առուստամյանը իր ջոկատով ազատել է 12 գյուղացիների, որոնց ֆաշիստները պետք է գնդակահարեին: Նրանցից մեկը 1965 թ. Առուստամյանին գրել է նամակ, որում մասնավորապես

ասվում է. «Բարեկա՛մ, ես արդեն ծերացել եմ և շատ բան չեմ հիշում, բայց այն, ինչ արեցիք դուք, մոռանալ չի կարելի: Դուք այնպես էիք կռվում Ֆրանսիայի համար, կարծես թե կռվում էիք ձեր հայկական հողի համար:

Ֆաշիզմից Ֆրանսիան ազատագրելու գործում դուք՝ Խորհրդային Հայաստանի մարդիկ, մեծ բաժին ունեք: Փա՜ռք ձեր հողին, և երիցս փա՜ռք բոլոր խորհրդային մարդկանց: Ֆրանսիայում ձեզ չեն մոռանում: Ժան»[217]:

1945 թ. Վ. Առուստամյանը նշանակվել է վաշտի հրամանատարի տեղակալ: 1945 թ. օգոստոսի 25-ին հատուկ հրամանով զորացրվել է գնդի հրամկազմը: 1946 թ. Վ. Առուստամյանը վերադարձել է համալսարան: 1948 թ. ավարտել է պատմության ֆակուլտետը: Պատմաբանի որակավորում ստանալուց հետո երկար տարիներ աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ Երևանի 23-րդ միջնակարգ դպրոցի տնօրեն:

Իր կատարած սխրագործությունների համար Վ. Առուստամյանը պարգևատրվել է «Պատերազմական խաչով», «Ժաննա դը Արկ», «Ֆրանսիայի ազատագրման համար» շքանշաններով, «Խիզախության համար», «Ստալինգրադի պաշտպանության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՃՈՏ ՏԻԳՐԱՆԻ (1919-1989) – Ծնվել է 1919 թ. փետրվարի 7-ին Քարվանսարայում (Իջևան քաղաք): 1936 թ. ընդունվել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետ, որն ավարտելուց հետո զորակոչվել է ծառայելու կարմիր բանակի շարքերում, որտեղից ուղարկվել է Մորումում գտնվող ռադիոկապի ռազմական դպրոց: Ուսումն ավարտելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել Արևմտյան ռազմաճակատ: 102-րդ և 275-րդ հրաձգային դիվիզիաների կազմում մասնակցել է Դոնբասի, Վորոշիլովոգրադի, Դոնի Ռոստովի մարտերին: 1942 թ. նշանակվել է այդ դիվիզիայի դասակի

[217] Տե՛ս «Սովետական Հայաստան», ապրիլի 17, 1964:

հրամանատար Հյուսիսկովկասյան ռազմաճակատում՝ մասնակցելով Պյատիգորսկի, Կիսլովոդսկի, Նալչիկի և Օրջոնիկիձեի մարտերին: 1942 թ. հունիսի 24-ին Դոնի Ռոստովի համար մղվող մարտերից մեկում վիրավորվել է, ստացել կանտուզիա: Վերականգնվելով կրկին մեկնել է ռազմաճակատ, սակայն 1942 թ. աշնանը կրկին վիրավորվել է Թերեք գետի մոտ: 1943 թ. սկզբում Նալչիկում, իսկ այնուհետև Թիֆլիսում բուժվելուց հետո ճանաչվել է հաշմանդամ և չի կարողացել մասնակցել ռազմական գործողություններին, որից հետո զորացրվել է:

1945 թվականից դարձել է ԽՄԿԿ անդամ: Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում (1944-1955 թթ.), ապա՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի երկրաբանական վարչությունում որպես գլխավոր ինժեներ (1954-1961 թթ.) և պետ (1961-1965 թթ.):

1965-1966 թթ. Ա. Ասլանյանը եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, 1966-1975 թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար: Ա. Ասլանյանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, 1950 թվականից՝ Պոլիտեխնիկական ինստիտուտում:

Հեղինակ է տնտեսական և գործնական նշանակություն ունեցող աշխատությունների, որոնք հիմնված են առավելապես ճշգրիտ գիտությունների հետազոտման աքսիոմատիկ մեթոդի վրա: Աշխատություններում լուսաբանված են ՀԽՍՀ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափությունները, ինչպես նաև երկրաբանության և երկրաֆիզիկայի ընդհանուր տեսական հարցերը: 1968 թվականից եղել է «Հայկական երկրաբանական ընկերության» նախագահ, 1970 թվականից՝ Մոլորակաբանության միջազգային ասոցիացիայի անդամ: Ընտրվել է ՀԽՍՀ 7-րդ և 8-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» և «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի»

շքանշաններով, բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 1989 թ. մարտի 16-ին:

ԱՎԱԳՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԴԱՎԻԹԻ (1906-1991) – Ծնվել է 1906 թ. Էջմիածնի շրջանի Սամաղար գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում, իսկ միջնակարգ կրթությունը՝ Էջմիածնի միջնակարգ դպրոցում: Այնուհետև մի շարք դպրոցներում աշխատել է որպես տնօրեն: 1929 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1933 թ. զորակոչվել է՝ ծառայելով հայկական լեռնահրաձգային դիվիզիայի հեծյալ գնդում: 1934 թ. զորացրվել է և մինչև 1936 թվականը աշխատել Երևանի Նար-Դոսի անվան դպրոցում: 1939 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Հայրենական պատերազմի առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ: Սկզբում անցել է ծառայությունը Խորհրդային Հայաստանում գտնվող 61-րդ հրաձգային դիվիզիայում: 1942 թ. վերջերից 320-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Կովկասի համար մղվող մարտերին, պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: Այնուհետև մասնակցել է Դոնեցկ, Մելիտոպոլ, Խերսոնես, Կախովկա, Օդեսա քաղաքների պաշտպանությանը: 1944-1945 թթ. 320-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի ազատագրմանը: Պարգևատրվել է «Բուդապեշտի գրավման համար» մեդալով և «Կարմիր աստղ» շքանշանով: Ավելի ուշ ստացել է նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան»:

Զորացրվելուց հետո աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում: 1986 թ. փետրվարից անցել է հանգստի և վախճանվել 1991 թ. դեկտեմբերի 2-ին:

ԱՎԱԳՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ԱՎԱԳԻ (1923-) – Ծնվել է 1923 թ. Երևանում: 1940 թ. ավարտել է Երևանի Օրջոնիկիձեի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Լ. Ավագյանը համալսարանի մի խումբ մարզիկների հետ գտնվելիս է եղել համամիութենական սպորտային շքերթի մասնա-

կիցների ճամբարում: Պատերազմի հենց առաջին օրը նա իր 25 ընկերների հետ միասին կամովին մեկնել է բանակ: Մի քանի ամիս Մոսկվայից ոչ հեռու գտնվող Նախոբինո կայարանում տեղակայված ինժեներական արգելափակոցների 143-րդ առանձին գումարտակում ծառայելուց հետո ականապատման և ականազերծման դասակի հրամանատարի օգնականի պաշտոնով մասնակցել է Մոսկվայի, Կալուգայի, Բելյովի տակ մղվող կատաղի մարտերին: 1942 թ. օգոստոսին Ռժևի ուղղությամբ տեղի ունեցող մարտական գործողությունների ժամանակ զորամասի հրամանատարությունը, նկատի ունենալով Լ. Ավագյանի մարտական ընդունակությունները, նրան գործուղել է՝ զբաղվելու Արևմտյան ռազմաճակատին ենթակա հրամանատարական կադրեր պատրաստող եռամսյա դասընթացներով: Ի տարբերություն մյուս ունկնդիրների, որոնց, առանց բացառության, տրվել է կրտսեր լեյտենանտի կոչում, Լ. Ավագյանը հրամանատարական իր ունակությունների համար ստացել է լեյտենանտի կոչում և Արևմտյան ռազմաճակատի մանդատային հանձնաժողովի կողմից նշանակվել տուգանային գումարտակի դասակի հրամանատար: 1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. մարտը անընդմեջ եղել է ռազմաճակատի ամենադժվարին հատվածներում: Հրամանատարության կողմից տրված մարտական բնութագրում ասված է, որ ավագ լեյտենանտ Ավագյանը՝ տակտիկապես գրագետ այդ սպան, ցուցաբերեց պահանջկոտություն, հրամանատարին յուրահատուկ կամք և կարողացավ գլխավորել տուգանայինները, մարտերը ամենադժվար հատվածներում: 1943 թ. մարտի 3-ին նա իր դասակով հետ է շպրտել հակառակորդի երկու հարձակումները, ճեղքել նրա պաշտպանական գիծը, ոչնչացրել թշնամու կրակակետը: Մի նոր մարտական առաջադրանք կատարելիս Լ. Ավագյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են ներքին գործերի ժողկոմատի տրամադրության տակ: Այստեղ Լ. Ավագյանը ստացել է նոր ու խիստ պատասխանատու հանձնարարություն՝ նշանակվելով բանդիտիզմի դեմ պայքարող օպերատիվ խմբի պետ:

1949 թվականից մինչև 1953 թվականը Լիպարիտ Ավագյանը սովորել է Մոսկվայում, ստացել զինվորական համապատասխան

բարձրագույն կրթություն և փոխգնդապետի աստիճանով գործուղվել Հայաստան: ՀԽՍՀ ներքին գործերի մինիստրությունում արդեն միլիցիայի գնդապետ Լ. Ավագյանը վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ ՆԳՄ մարտական և օպերատիվ ծառայությունների բաժնի պետ, Լենինականի (Գյումրի) միլիցիայի քաղաքային բաժնի պետ, հանրապետության պետավտոտեսչության բաժնի պետ և այլն:

Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած արիության ու խիզախության համար, իսկ պատերազմից հետո ներքին գործերի մինիստրությունում անձնուրաց ծառայության համար Լիպարիտ Ավագյանը պարգևատրվել է կառավարական շքանշաններով ու պատվոգրերով: Ավագյանը սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Հետագայում ևս գնդապետ Լ. Ավագյանը շարունակել է իր ծառայությունը ՀԽՍՀ ներքին գործերի մինիստրությունում:

ԱՎԱԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՏԵՄԻ (1918-1983) – Ծնվել է 1918 թ. Կրասնոսելսկի շրջանի Վերին Ճամբարակ գյուղում: 1936 թ. ավարտել է Դիլիջանի մանկավարժական տեխնիկումը և մեկ տարի հետո՝ 1937 թ., ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 1-ին զորակոչվել է և ուղարկվել՝ սովորելու Թելավի հետևակային ուսումնարանում: 1942 թ. փետրվարին ավարտել է, ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Հարավային ռազմաճակատի Ղրիմի տեղամասը: 1942 թ. փետրվարից մինչև մայիսը 390-րդ հրաձգային դիվիզիայի կազմում իբրև ականանետային դասակի հրամանատար մասնակցել է Ղրիմի պաշտպանության համար մղվող մարտերին: 1942 թ. մայիսին Կերչի տակ տեղի ունեցած մարտերից մեկում Ս. Ավագյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Սլավյանսկի, Ստալինգրադի և Աստրախանի հոսպիտալներում ապաքինվելուց հետո նա մեկնել է Ստալինգրադի ռազմաճակատ: 1942 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մասնակցել է քաղաքի համար մղվող կատաղի մարտերին: Նույն թվականի նոյեմբերի 8-ին երկրորդ անգամ է վիրավորվել և ուղարկվել երկարատև

բուժման: Պատերազմից հետո Ս. Ավագյանը երկար ժամանակ շարունակել է ծառայել խորհրդային բանակի մի շարք զորամասերում: 1952 թ. զորացրվել է և անցել ուսուցչական աշխատանքի Բասարգեչարի (Վարդենիսի) շրջանում: 1956 թ. վերադարձել է համալսարան, ավարտել է բանասիրական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտում որպես կրտսեր գիտական աշխատող՝ զբաղվելով հայ վիմագրության ուսումնասիրությամբ: Հեռակա կարգով Ս. Ավագյանը ավարտել է հայոց լեզվի գծով ասպիրանտուրան: 1970 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1971 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում որպես դոցենտ: Ս. Ավագյանը վախճանվել է 1983 թ. մարտի 27-ին:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱԲԳԱՐԻ (1918-2007) – Ծնվել է 1919 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում (Գյումրի): 1936 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է համալսարանը և զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Գորկու ռազմատանկային դպրոցը և տանկային դասակի հրամանատարի պաշտոնով ուղարկվել Վորոնեժի ռազմաճակատ: 1943 թ. նրան տեղափոխել են Ուկրաինական ռազմաճակատ, ուր մասնակցել է Բելգորոդ, Խարկով, Պոլտավա քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: Նույն թվականի հուլիսին Վ. Ավետիսյանը վիրավորվել է, ապաքինվել և 1944 թ. մայիսին նորից ուղարկվել Երկրորդ ուկրաինական ռազմաճակատ: Այստեղ երկրորդ անգամ վիրավորվելուց և ապաքինվելուց հետո մեկնել է Երրորդ բելառուսական ռազմաճակատ, իսկ 1945 թ. հունվարին՝ Առաջին մերձբալթյան ռազմաճակատ և որպես տանկային վաշտի հրամանատար մասնակցել Արևելյան Պրուսիայի գրավման համար մղվող մարտերին: Վ. Ավետիսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով», «Խիզախության համար», «Մարտական ծառայության համար» և այլ մեդալներով:

Պատերազմից հետո Վ. Ավետիսյանը զորացրվել է, 1954 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, ստացել է դոցենտի կոչում և նույն թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես երկրաբանական ֆակուլտետի ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնի դոցենտ, իսկ 1968-1976 թթ. ղեկավարել է նույն ամբիոնը: 2000 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1970 թ. Վ. Ավետիսյանը արժանացել է վաստակավոր երկրաբանի կոչման: Վախճանվել է 2007 թ. հոկտեմբերի 12-ին Երևանում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ (1911-1993) – Ծնվել է 1911 թ. Արտաշատի շրջանի Այգեզարդ (նախկին Դարչալու) գյուղում: 1936 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական բանֆակը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Խ. Ավետիսյանն առաջին իսկ օրերին զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. հունիսից-դեկտեմբեր ամսիներին սովորել է Թբիլիսիի ռազմաքաղաքական ուսումնարանում և նշանակվել է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի 7-րդ վաշտի քաղղեկ: 1942 թ. օգոստոսի 8-11-ը մարտնչել է Գրոզնիի պաշտպանության մարտերում: 1943 թ. Խ. Ավետիսյանը մասնակցել է Թբիլիսիի հրամանատարական եռամսա դասընթացներին, որոնց ավարտին նշանակվել է 402-րդ հրաձգային դիվիզիայի դասակի հրամանատար՝ լեյտենանտի կոչումով: 1944 թ. հունիսից Խ. Ավետիսյանը մարտնչել է Երկրորդ ուկրաինական ռազմաճակատի 375-րդ հրաձգային դիվիզիայում նախ որպես դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: Նույն թվականի հոկտեմբերի 5-ին վիրավորվել է և 1945 թ. փետրվարից վերադարձել ծառայության՝ արդեն քիկունքային հատվածում շարունակելով մասնակից լինել հաղթանակի գործին: Ապաքինվելուց հետո 1945 թ. վերջին որպես երրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է բանակից: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով», «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Զորացրվելուց հետո Խ. Ավետիսյանն անցել է կուսակցական աշխատանքի, 1946-1950 թթ. եղել է Երքաղկոմի Կիրովյան շրջկոմի (Կենտրոն վարչական շրջան) կուսկաբինետի վարիչ: 1950 թ. նշանակվել է մանկավարժական աշխատանքի Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: 1957 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում որպես գիտաշխատող: Վախճանվել է 1993 թվականին:

ԱՐԱԲՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԱՐՓԻԱՐԻ (1916-2003) – Ծնվել է 1916 թ. Կարս քաղաքում: Թուրքական կոտորածից ազատվելու համար նրանց ընտանիքը տեղափոխվել և բնակություն է հաստատել Թբիլիսիում: 1936 թ. Հ. Արաբյանը ավարտել է Թբիլիսիի ինդուստրիալ տեխնիկումը և ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ավարտելուց հետո՝ 1940 թ., զորակոչվել է բանակ: Մինչև Հայրենական մեծ պատերազմը ծառայել է Արևմտյան Բելառուսիայի հատուկ զինվորական օկրուգի զորամասերից մեկում: 1941 թ. մայիսին նշանակվել է իրավաբանական աշխատանքի Արևմտյան Բելառուսիայի 4-րդ բանակի դատախազությունում: Երբ սկսվել է պատերազմը, Հ. Արաբյանը առաջավոր գծում շատ ծանր պայմաններում կատարել է դատախազության հատուկ հանձնարարություններ, ակտիվ մասնակցություն ցույց տվել Բորբույսկի, Ռոգաչոյի, Մցենսկի և Բրյանսկի պաշտպանությանը: Բրյանսկի պաշտպանության ժամանակ ստացել է կոնտուզիա և բժշկական հանձնաժողովի կողմից շարքային ծառայության համար ճանաչվել ոչ պիտանի: 1942 թ. առողջական վիճակի վատթարացման պատճառով զորացրվել է: Հ. Արաբյանը պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Հ. Արաբյանը երկար ժամանակ աշխատել է որպես դատավոր, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում որպես քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ: Վախճանվել է 2003 թվականին:

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱՖՈՆԻ (1904-1965) – Ծնվել է 1904 թ. Ղափանի շրջանի Կավարտ գյուղում: 1920 թ. ընդունվել է կոմերիտմիության շարքերը: Եղել է Զանգեզուրի կոմերիտական կազմակերպության հիմնադիրներից մեկը: 1921 թ. ընտրվել է Ղափանի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար: 1928 թ. նրան գործուղել են՝ սովորելու Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում: Սակայն մեկ տարի անց նրան մոբիլիզացիայի կարգով նշանակել են ՀԿԿ Ղուրդուղուլիի (Արմավիր) շրջկոմի քարտուղար: Երեք տարի շրջկոմում աշխատելուց հետո Ա. Արզումանյանը նշանակվել է ՀԿԿ կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: 1933-1936 թթ. Ա. Արզումանյանը սովորել է Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի ագրարային ինստիտուտում, ապա՝ դարձել ՀԿԿ Երքաղկոմի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար: 1937 թ. օգոստոսի 7-ին նշանակվել է ԵՊՀ ռեկտոր, բայց ընդամենը մեկուկես ամիս անց ազգայնականներին և հատկապես «ժողովրդի թշնամի հայտնի ազգայնական» Աղասի Խանջյանին պաշտպանելու մեղադրանքով ազատվել է պաշտոնից, գործը հանձնել ՆԳՆ մարմիններին, իսկ իրեն բանտարկել են: Սակայն նա կարողացել է ապացուցել իր անմեղությունը և կարճ ժամանակ անց ազատվել բանտից: 1939 թվականից մինչև 1941 թվականը աշխատել է որպես քաղաքատնտեսության դասախոս:

Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ա. Արզումանյանը զորակոչվել է բանակ: Սկզբում նշանակվել է Երևանում գտնվող 40-րդ հրաձգային կորպուսի բաժնի տեսուչ, ապա կորպուսի հետ մեկնել է Իրան: 1942 թ. նրան Իրանից ուղարկել են Անդրկովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ, այնտեղից էլ՝ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ:

Ռազմաճակատներում Ա. Արզումանյանը վարել է քաղաքական տարբեր պաշտոններ. եղել է կորպուսի տեսուչ, 18-րդ բանակի քաղբաժնի ագիտատոր-պրոպագանդիստ: Հայրենիքին մինչև վերջը նվիրված այդ անվանի զորական-պրոպագանդիստն իր համոզիչ քաղաքական աշխատանքով կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում է ստացել Հարավային Կովկասի, Ղրիմի ռազմաճակատներում:

Ա. Արզումանյանը քաղաքական-դաստիարակչական մեծ աշխատանք է կատարել հատկապես Նովոռոսիյսկի համար մարտնչող դեսանտային զորամասերում:

Ռազմաճակատի հրամանատարությունը բարձր է գնահատել մայոր Արզումանյանի քաղաքական աշխատանքը և նրան պարգևատրել «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և մեդալներով:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո Անուշավան Արզումանյանը զորացրվել է և նորից սկսել իր գիտամանկավարժական գործունեությունը: Հմուտ մանկավարժ ու գիտնականը աշխատել է նաև Ադրբեջանի բարձրագույն ուսումնական հաստատություններում որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ ու դասախոս: Գիտության բնագավառում ցուցաբերած նրա տաղանդը շուտով ճանաչվել է Մոսկվայի գիտական հասարակության կողմից, և նա պատասխանատու աշխատանքի է նշանակվել ԽՍՀՄ ԳԱ համակարգում: 1950-1960-ական թթ. դոկտոր-պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ Անուշավան Արզումանյանը վարել է պատասխանատու պաշտոններ և իր գիտական գործունեությամբ ճանաչելի դարձել նաև Խորհրդային Միության սահմաններից դուրս: ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի տնօրեն աշխատելիս նա գրել է համամիութենական և համաշխարհային հետաքրքրություն ներկայացնող աշխատություններ, որոնց թվում եղել են գիտական մեծարժեք պարզաբանումներ ու մեկնաբանություններ տնտեսագիտական մի շարք արդիական նշանակություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ: Վախճանվել է 1965 թ. հուլիսի 18-ին Մոսկվայում:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄԱԿԻՉ ՎԱՀԱՆԻ (1919-1988) – Ծնվել է 1919 թ. հոկտեմբերի 25-ին պատմական Ուտիքի Բարսու գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղում, 1938 թ. ավարտել է Գանձակի մանկավարժական տեխնիկումը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Մ. Արզումանյանը զորակոչվել է բանակ և ընդամենը մեկ ամիս հետո մասնակցել Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը: Միկենգզենյան լեռնեբում ֆաշիստական զորքերի դեմ մղվող կատաղի մարտերից մեկում 20-ամյա շարքային զինվորական Արզումանյանը վիրավորվել է և ուղարկվել թիկունք՝ ապաքինվելու: Կարճատև բուժումից հետո՝ 1942 թ., նա նորից մեկնել է ռազմաճակատ: Այս անգամ նա եղել է սկզբում Կովկասյան, ապա՝ Առաջին և Չորրորդ ուկրաինական ռազմաճակատներում, մասնակցել է Կիևի ազատագրմանը, Սանդոմիրի, Պլացդարմի մարտական գործողություններին: Մ. Արզումանյանը մասնակցել է Լեհաստանի, Չեխոսլովակիայի քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը, պարգևատրվել է «Խիզախության համար», «Մարտական ծառայության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: Պատերազմի ծանր օրերին՝ 1942 թ., ընդունվել է ԽՄԿԿ շարքերը:

1945 թ. Մ. Արզումանյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա՝ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների գծով: 1949 թ. ավարտել է, պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ անցել դասախոսական աշխատանքի: Մի քանի տարի համալսարանում աշխատելուց հետո նա տեղափոխվել է ԽՄԿԿ կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը: Նորից համալսարանում 3 տարի աշխատելուց հետո նշանակվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ: 1964 թվականից պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մակիչ Արզումանյանը գլխավորել է այդ ամբիոնը, իսկ 1979 թվականից մինչև կյանքի վերջը եղել է «Հայկական սովետական հանրագիտարանի» գլխավոր խմբագիրը: Վախճանվել է 1988 թ. հուլիսի 20-ին Երևանում:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԻՄՈՆ ԿԱՐԱՊԵՏԻ (1924-1990) – Ծնվել է 1924 թ. Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղում: 1941 թ. ավարտել է

Երևանի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, ավարտել է առաջին կուրսը և 1942 թ. օգոստոսին պատերազմի մասնակից դարձել: Մեկ ամիս հետո նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, ուր ծառայել է 69-րդ առափնյա ծովային բրիգադում որպես հրաձիգ: Մասնակցել է Նովոռոսիյսկի շրջանում տեղի ունեցած դեսանտային գործողություններին և կատաղի մարտերից մեկում 1943 թ. հունվարի 11-ին ծանր վիրավորվել է: Ութ ամիս Բաքվի հոսպիտալում բուժվելուց հետո ուղարկվել է Առաջին ուկրաինական ռազմաճակատ: 898-րդ առանձին կապի գումարտակում որպես կապավոր մասնակցել է Խարկովի, Դնեպրոպետրովսկի, Ժիտոմիրի, Ռովնոյի, Կելցի ազատագրմանը և Սանդոմիթի հենակետերի վերացմանը: 1944 թ. հուլիսին Սանդոմիրի մոտ վիրավորվել է և առանց մարտական շարքից դուրս գալու բուժվել: Մասնակցել է գերմանական մի քանի քաղաքների, այդ թվում՝ Բեռլինի գրավմանը: Բեռլինի տակ մղվող մարտերից մեկում երրորդ անգամ վիրավորվել է, դարձյալ դուրս չի եկել մարտական շարքերից, զորամասի հետ մեկնել է Չեխոսլովակիա, մասնակցել Պրահայի ազատագրմանը: Ռազմաճակատներում Ս. Արզումանյանը պարգևատրվել է «Խիզախության համար», «Կովկասի պաշտպանության համար», «Պրահայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով ու գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերով:

1945 թ. Ս. Արզումանյանը զորացրվել է և նորից շարունակել իր կիսատ թողած ուսումը Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում: 1949 թ. ավարտել է և մինչև 1966 թվականը աշխատել արտադրության ոլորտում որպես գլխավոր երկրաբան:

1962 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966-1990 թթ. դասախոսել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում: 1966 թվականից Ս. Արզումանյանը դոցենտի պաշտոնով աշխատել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետի օգտակար հանածոների հան-

քանյութերի որոնման և հետազոտման ամբիոնում: 1986 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1989 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 1990 թ. սեպտեմբերի 26-ին:

ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ (1914-1989) – Ծնվել է 1914 թ. Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում: 1934 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և երկու տարի աշխատել «Բոլշևիկյան կոլխոզնիկ» շրջանային թերթի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար: 1936 թ. Ա. Բաբախանյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1941 թ. հունիսին: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, վերջին պետական քննությունը հանձնելուց մի քանի օր հետո զորակոչվել է բանակ: Սկզբում երեք ամիս սովորել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանում, ապա որպես թնդանոթաձիգ մեկնել է Ստալինգրադի ռազմաճակատ: Մինչև 1943 թ. սեպտեմբերը անընդմեջ մասնակցել է Ստալինգրադի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին, պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալներով: Սեպտեմբերի 16-ին ստացել է կոնտուզիա և զորացրվել: Նույն թվականի աշնանը վերադարձել է Հայաստան և նորից ուսուցչական աշխատանքի անցել հայրենի Այգեստան գյուղում: 1945 թ. տեղափոխվել է Երևան և ընդունվել ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա՝ փիլիսոփայության պատմության գծով: Ավարտելուց հետո՝ 1949 թ., անցել է դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում: 1954 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1956 թվականից մինչև 1969 թվականը աշխատել է Երևանի հեռակա մանկավարժական և Պոլիտեխնիկական ինստիտուտներում: 1969 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնում: Վախճանվել է 1989 թվականին:

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1917-1985) – Ծնվել է 1917 թ. օգոստոսի 1-ին Թբիլիսիում: 1940 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Հայրենական պատերազմի սկզբում Լ. Բաբայանը ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ասպիրանտ էր: 1942 թ. զորակոչվել է բանակ և ուղարկվել Թբիլիսիի 2-րդ հետևակային ուսումնարան: Սեպտեմբերին Լ. Բաբայանը՝ որպես դասակի հրամանատար, ծառայել է 394-րդ հրաձգային դիվիզիայի 815-րդ գնդում: Հյուսիսային Կովկասում մասնակցել է Կլուխորյան ղորրանների մարտերին: 1943 թ. անդամակցել է Կոմունիստական կուսակցությանը և ավարտել հրամանատարական կուրսերը՝ ստանալով լեյտենանտի կոչում, այնուհետև նշանակվել 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի (Թամանյան) 526-րդ գնդի 2-րդ գումարտակի հակատանկային դասակի հրամանատար: Լ. Բաբայանը ակտիվորեն մասնակցել է Կերչի և Ղրիմի թերակղզիների ազատագրմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով:

Լինելով գումարտակի հրամանատար՝ Լ. Բաբայանը առանձնացել է Լեհաստանի համար մղվող մարտերում: 1945 թ. ապրիլի 16-ին ծանր վիրավորվել է և զորացրվել որպես երկրորդ կարգի հաշմանդամ: Այնուհետև շարունակել է ուսումը ասպիրանտուրայում և 1946 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն ու մինչև 1948 թվականը աշխատել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում որպես ավագ գիտաշխատող: 1948-1960 թթ. զբաղեցրել է կուսակցական բարձր պաշտոններ, իսկ 1962 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1969-1985 թթ. եղել է պատմագրության բաժնի վարիչը: Նրա աշխատությունները վերաբերում են միջնադարյան Հայաստանի պատմությանն ու պատմագրությանը: Վախճանվել է 1985 թ. հունիսի 4-ին:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՄԱՋԱՍՊԻ (1920-2005) – Ծնվել է 1920 թ. Իգդիրում: Հետագայում նրանց ընտանիքը տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում: 1937 թ. ավարտել է Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը և մեկ տարի ուսուցչական

աշխատանք կատարելուց հետո՝ 1938 թ., ընդունվել է համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1941 թ. հուլիսին զորակոչվել է բանակ, նույն տարում Բաբաջանյանը ավարտել է Թելավի զինվորական ուսումնարանը և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Գրեթե նույն ժամանակ իր ավագ եղբոր՝ Հակոբի հետ միասին կռվել է Հյուսիսային Կովկասի քաղաքների ու գյուղերի պաշտպանության համար, եղել է Դոնի Ռոստովի համար մղվող ահեղ մարտերում:

1942 թ. ապրիլին Գ. Բաբաջանյանին ուղարկել են Ստալինգրադի ճակատամարտ, ուր ինժիներատեխնիկական զորամասերի կազմում կատարել է մարտական բարդ խնդիրներ: 1944 թ. ծառայել է Կույբիշևի և Ուֆայի ինժեներատեխնիկական զորամասերում, որտեղից էլ զորացրվել է, վերադարձել Հայաստան: 1944 թ. շարունակել է սովորել համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1946 թ. ավարտել է և մեկնել Մոսկվա՝ ասպիրանտուրայում սովորելու: 1950 թ. ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի: 1965-1967 թթ. եղել է մեխմաթ ֆակուլտետի դեկան: 1976-1981 թթ. ղեկավարել է ԵՊՀ տեսական մեխանիկայի ամբիոնը: Վախճանվել է 2005 թ. հոկտեմբերի 24-ին:

ԲԱԳԼԱՉՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՍԻՄՈՆԻ (1912-) – Ծնվել է 1912 թ. Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղում: 1931 թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը և ՀամԼԿԵՄ կենտկոմի կոչով մեկնել Ղափանի շրջան՝ ուսուցչական աշխատանքի: Սկզբում եղել է ուսմասվար, իսկ հետո՝ դպրոցի տնօրեն: 1935-1936 թթ. Մ. Բագլաչյանը ծառայել է կարմիր բանակում: Զորացրվելուց հետո՝ 1938 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. պատերազմի հենց առաջին ամսին Մ. Բագլաչյանը նորից զորակոչվել է և ծառայության ուղարկվել Նախիջևանում գտնվող զորամասերից մեկը: 1942 թ. այն գունդը, որի կազմում քաղղեկի պաշտոնով ծառայելիս է եղել Մ. Բագլաչյանը, անցել է պարսկական սահմանը և մեկ ամիս մնացել Թավրիզ քաղա-

քում: Նույն թվականի դեկտեմբերին վերադարձել է Լեռնային Ղարաբաղ և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1942 թվականից մինչև 1943 թվականը Մ. Բագլաչյանը եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատներում, մասնակցել Հյուսիսային Կովկասի և Ստալինգրադի համար մղվող կատաղի մարտերին: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1945 թ. Մ. Բագլաչյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1946 թ. ավարտել է համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը: Սկզբում աշխատել է որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս: 1955 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում: 1960-1970-ական թթ. եղել է ԵՊՀ տնտեսական աշխարհագրության ամբիոնի դասախոս:

ԲԱԴԱԼՅԱՆ ՀԱՅԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1915-2004) – Ծնվել է 1915 թ. հունվարի 22-ին Կոտայքի շրջանի (Աբովյան) Թազա գյուղում: 1936 թ. ավարտել է Երևանի էլեկտրատեխնիկական տեխնիկումը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1941 թ. և նույն թվականին զորակոչվել է բանակ: Նա մասնակցել է Մեծ հայրենականի մարտերին՝ Մոսկվայի ճակատամարտին, Կովկասի համար մղվող մարտերին, Կերչի և Ղրիմի ճակատամարտերին, Ստալինգրադի ճակատամարտին: 1943 թ. վիրավորվելուց հետո զորացրվել է, ապա՝ 1945-1947 թթ., ուսումնառությունը շարունակել է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում և 1947 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: Վերադառնալով Երևան՝ աշխատանքի է անցել Ռուսական մանկավարժական ինստիտուտում որպես մաթեմատիկայի ամբիոնի վարիչ: 1956 թ. Մոսկվայի պետհամալսարանում պաշտպանել է դոկտորական թեզ և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան: Հ. Բաղալյանի գիտամանկավարժական գործունեությունը 1957 թ. անխզելիորեն կապվում է ԵՊՀ ֆիզմաթ (ներկայումս մաթեմատիկայի) ֆակուլտետի հետ: 1960 թ. նրան շնորհվել է պրո-

ֆեսորի կոչում: 1978-1987 թթ. ղեկավարել է ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնը, միաժամանակ աշխատել «Մաթեմատիկա» միջբուհական տեղեկագրի գլխավոր խմբագրի պաշտոնում: Վախճանվել է 2004 թ. հոկտեմբերի 27-ին:

ԲԱԼՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՊՈՂՈՍԻ (1917-2002) – Ծնվել է 1917 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1940 թ. ավարտել է, զորակոչվել բանակ և մինչև վերջ մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1941 թ. ավարտել է Բաքվի զենիթային հրետանու դպրոցը, ստացել լեյտենանտի կոչում և նշանակվել դասակի հրամանատար Հայկական 89-րդ դիվիզիայում: Այնուհետև նրան ուղարկել են 20-րդ հատուկ զենիթային դիվիզիա որպես մարտկոցի հրամանատար: Ս. Բալյանը եղել է Առաջին բելառուսական, Առաջին և Երրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Վիլնյուսի ազատագրման ժամանակ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Նա մասնակցել է Քյոնիգսբերգի և Բեռլինի գրավմանը:

Լեյտենանտ Ս. Բալյանի անցած մարտական ուղին լի է ուշագրավ դրվագներով: Կարմիր բանակի շարքերում նա անցել է Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին, եղել է ֆաշիստական զորքերի դեմ մղված ամենակատաղի մարտերում: Նշանակալի է հատկապես Օդերի գետանցումը կատարելու ժամանակ նրա ցուցաբերած խիզախությունը: Իր վրա վերցնելով թշնամու հրետանու անընդհատ կրկնվող կրակը՝ նրա մարտկոցը ճեղքել է հակառակորդի գետափի պաշտպանական գիծը, ետ է շպրտել նրա մի քանի անգամ կրկնվող գրոհը՝ անցնելով մյուս կողմ: Թշնամու գերակշռող ուժերի դեմ մարտեր է մղել այնքան ժամանակ, մինչև խորհրդային մյուս զորամասերը կատարել են գետանցումը: Մարտական խնդիրը խիզախորեն կատարելու համար լեյտենանտ Ս. Բալյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Ալեքսանդր Նևսկի» շքանշաններով և 10 մեդալով:

1946 թ. Ս. Բալյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: Նույն թվականին աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական

ինստիտուտում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1951 թ. տեղափոխվել է համալսարան՝ անցնելով դասախոսական աշխատանքի: 1949 թ. Ս. Բալյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1951 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետում սկզբում իբրև ավագ դասախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1968 թվականից՝ պրոֆեսոր: 1969-1997 թթ. եղել է ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հիմնադիր վարիչը: 1970 թ. Ս. Բալյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչման: Վախճանվել է 2002 թ. մայիսի 15-ին:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԽՇԻԻ (1918-1991) – Ծնվել է 1918 թ. նոյեմբերի 5-ին Գորիսում: Ավարտելով տեղի մանկավարժական տեխնիկումը՝ 1935-1937 թթ. դասավանդել է Սիսիանի շրջանի Դարբաս գյուղում: 1937 թ. ընդունվել է ԵՊՀ երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ 1941 թ. զորակոչվելով կարմիր բանակ: Մասնակցել է 1941 թ. պաշտպանողական մարտերին, Մոսկվայի և այլ քաղաքների ճակատամարտերին: Ջորացրվել է 1942 թվականին: Նույն թվականին գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ 1942-1944 թթ. աշխատել է Անդրկովկասյան ճակատի հիդրոմետ ծառայության հայկական վարչությունում որպես աերոլոգ, իսկ ավելի ուշ՝ ինժեներսինոպտիկ: 1942 թ. ընդունվել է ասպիրանտուրա ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնում: 1946 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1949 թ. գործուղվելով ԽՍՀՄ ԳԱ աշխարհագրության ինստիտուտի դոկտորանտուրա՝ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Հետագա տարիներին պրոֆեսոր Ա. Բաղդասարյանը բազմակողմանի գիտական գործունեություն է ծավալել ՀԽՍՀ տնտեսագիտության ինստիտուտում: Ետպատերազմյան տարիներին երկար տարիներ դասավանդել է հանրապետության բուհերում և եղել է ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ: 1971 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: Վախճանվել է 1991 թ. ապրիլի 3-ին:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ (1919-1977) – Ծնվել է 1919 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, իսկ միջնակարգը՝ Շուշի քաղաքում: 1937 թ. Ա. Բաղդասարյանն ավարտել է մանկավարժական բանֆակը և մեկ տարի ուսուցիչ աշխատելուց հետո՝ 1938 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ա. Բաղդասարյանը 3-րդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Թելավի ռազմահետևակային ուսումնարանը: Սակայն նախատեսված ժամկետից շուտ ուսումնարանի մյուս սաների հետ նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1942 թ. ամռանը նա մասնակցել է Կովկասյան լեռնաշղթայի Մարուխյան և Դոնբայուլգեն լեռնանցքներում տեղի ունեցող մարտերին: Նույն թվականի աշնանը Օրջոնիկիձեի տակ տեղի ունեցած համառ մարտերից մեկում Ա. Բաղդասարյանը վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Մեկ ամիս բուժվելուց հետո նրան նորից ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1943 թ. մասնակցել է Գելենջեկի շրջանում տեղի ունեցող մարտերին և վիրավորվել երկրորդ անգամ: Ապաքինվելու համար նրան ուղարկել են ՀԽՍՀ Թումանյանի շրջանի Ախթալայի հոսպիտալը: Կարճ ժամանակում Ա. Բաղդասարյանը բուժվել է և մեկնել Աստրախան: 1943 թ. վերջերին որպես երրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է և շարունակել իր կիսատ թողած ուսումը Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետում: 1946 թ. ավարտել է և աշխատանքի նշանակվել ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանական ինստիտուտում: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, նշանակվել ավագ գիտաշխատող, 1972 թվականից՝ լաբորատորիայի վարիչ: Վախճանվել է 1977 թ. օգոստոսի 28-ին:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ (1908-1998) – Ծնվել է 1908 թ. մայիսի 10-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1927 թ. ընդունվել է ԵՊՀ բնագիտության ֆակուլտետը: 1938 թ. ընդունվել է Արմֆանի

երկրագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1942 թ. զորակոչվել է ծառայության: 1942 թ. փետրվարից մասնակցել է Կերչի մարտերին նախ որպես 47-րդ բանակի 158-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: Կովկասի համար մարտերում ծանր վիրավորվել է և զորացրվել բանակից որպես երկրորդ կարգի հաշմանդամ: Զորացրվելուց հետո շարունակել է աշխատանքը ՀԽՍՀ ԳԱ երկրագիտության ինստիտուտում, իսկ 1951 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Հետագայում աշխատել է որպես գիտական քարտուղար: Հետագա ամբողջ կյանքը նվիրել է Երկրաբանության ինստիտուտին:

Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Աշխատանքի հերոս է: Վախճանվել է 1998 թվականին:

ԲԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱՅԿԻ (1923-2010) – Ծնվել է 1923 թ. Գորիսի շրջանի Ցայջի (Հարգի) գյուղում: 1940 թ. ավարտել է Գորիսի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. դեկտեմբերին նա զորակոչվել է կարմիր բանակ և ծառայության ուղարկվել Հայկական 89-րդ դիվիզիա: 1942 թ. ամռանը նրան ուղարկել են 63-րդ տանկային բրիգադը և նշանակել դասակի հրամանատար: Հոկտեմբերին նույն պաշտոնով մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և մասնակցել Նալչիկ ու Մոզդոկ քաղաքների ազատագրմանը: Վ. Բարսամյանը 1942 թ. դեկտեմբերին Մոզդոկի տակ մղվող մարտերում ծանր վիրավորվել է և ուղարկվել Բաքու՝ հոսպիտալ, որտեղ ութ ամիս բուժվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ 1943 թ. օգոստոսին զորացրվել է: Երկու տարի աշխատելուց հետո՝ 1945 թ., նա վերադարձել է համալսարան: 1949 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1952 թ. նշանակվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում որպես դասախոս: Հետագայում Վ. Բարսամյանն անցել է կուսակցական աշխատանքի, ապա՝ վերադարձել ինստիտուտ, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: Հետագա տարիներին աշխա-

տել է որպես Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ: Վախճանվել է 2010 թվականին:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1920-2014) – Ծնվել է 1920 թ. Թալինի շրջանի Մաստարա գյուղում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. հուլիսին չորրորդ կուրսից զորակոչվել է բանակ: 1941-1942 թթ. ընթացքում Հ. Բարսեղյանը սովորել ու ավարտել է Բաքվի հրետանային և Թբիլիսիի բարձրագույն հրաձգային պաշտպանության ուսումնարանները: 1942 թ. գարնանը վաշտի հրամանատարի պաշտոնով ուղարկվել է Կովկասյան ռազմաճակատ և մասնակցել Կովկասի քաղաքների ու բնակավայրի համար մղվող պաշտպանական մարտերին: Նա երեք անգամ վիրավորվել է. առաջին անգամ՝ 1942 թ. մայիսին Կերչում, երկրորդ անգամ՝ նույն թվականի դեկտեմբերին Մոզդոկի տակ, երրորդ անգամ՝ 1943 թ. ապրիլին Ազովի ծովափին: Թշնամու երեք հարվածներից հետո էլ շարունակել է մնալ մարտական շարքերում:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Հ. Բարսեղյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1946-1948 թթ. նա եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի, այնուհետև՝ մինչև 1958 թվականը, Երևանի հեռակա պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս: 1958 թ. կրկին տեղափոխվել է ԵՊՀ և 1969 թ. ընտրվել հայոց լեզվի ամբիոնի վարիչ: 1977-1985 թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան, 1985-1990 թթ.՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչ: 1969-1972 թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար: 1955 թվականից նա կատարել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի, իսկ 1992 թվականից՝ ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի գիտքարտուղարի պարտականությունները:

Հ. Բարսեղյանը նաև հմուտ բառարանագիր է («Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան»,

Երևան, 1973): Նա պրոֆեսորներ Թ. Խ. Հակոբյանի և Ս. Տ. Մելիք-Բախշյանի հետ համահեղինակ է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (հնգհատոր, Երևան, 1986-2001): Գործընկերների վախճանվելուց հետո նա է խմբագրել ու հրատարակության պատրաստել հիշյալ բառարանի վերջին երկու ստվարածավալ հատորները: 2003 թ. այդ եզակի բառարանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի: Հ. Բարսեղյանի համահեղինակությամբ են կազմվել հանրակրթական դպրոցի 4-րդ (Երևան, 1970) և 5-7-րդ (Երևան, 1965) դասարանների «Հայոց լեզու» դասագրքերը:

1970 թ. Հ. Բարսեղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով, «Պատվո նշան» (1981), «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» (1985) շքանշաններով, «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով: Վախճանվել է 2014 թ. օգոստոսի 2-ին:

ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՀԱԿՈԲԻ (1916-1994) – Ծնվել է 1916 թ. Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղում: 1933 թ. ավարտել է Ախալքալաքի մանկավարժական տեխնիկումը և չորս տարի մանկավարժական աշխատանք կատարելուց հետո՝ 1938 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1941 թ. հունիսի 25-ին Պ. Բեզիրգանյանը համալսարանի երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1945 թվականը: Առաջին անգամ մարտական գործողություններին մասնակցել է Առաջին ուկրաինական ռազմաճակատում: Լեհաստանի տարածքն ազատագրելու ժամանակ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Պրահայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո վաշտի ավագ Բեզիրգանյանը զորացրվել է և նորից շարունակել սովորել Երևանի պետական հա-

մալսարանում: 1948 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, ընդունվել ասպիրանտուրա: Այնուհետև պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1952 թ. անցել դասախոսական աշխատանքի: 1969 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել դոկտորի կոչում: 1961-1987 թթ. եղել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1946-1994 թթ.՝ նյութի հետ ռենտգենյան ճառագայթների կոհերենտ փոխազդեցության ֆիզիկայի հիմնախնդրի և 1978-1994 թթ.՝ ռենտգենյան հետազոտությունների ճյուղային լաբորատորիաների գիտական ղեկավար: ԽՍՀՄ-ում ռենտգենահինտերֆերաչափության հիմնադիրն է: Պ. Բեզիրգանյանի ղեկավարությամբ ստեղծվել է բյուրեղների կառուցվածքային արատների ռենտգենաղիֆրակցիոն տեղագրական պատկերները տեսանելի դարձնող ռենտգենահեռուստատեսային եզակի համակարգ: Վախճանվել է 1994 թ. հունիսի 15-ին:

ԲԻՉԱԽՉՅԱՆ ՄԻՇԱ ԿԱՐԱՊԵՏԻ (1916-1991) – Ծնվել է 1916 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1937 թ. ավարտել է Լենինականի միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Արթիկի միջնակարգ դպրոցում: Մեկ տարի աշխատելուց հետո գործուղվել և ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը: 1941 թ. չորրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականին ավարտել է Թելավի զինվորական դպրոցը, ստացել սպայի կոչում և վաշտի հրամանատարի պաշտոնով նշանակվել ծառայության Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայում: 1942 թ. օգոստոսին իր զորամասի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մոզդոկի տակ 1942 թ. դեկտեմբերի 9-ին վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են ծառայության քիկունքային զորամասերում:

1946 թ. Մ. Բիշախչյանը զորացրվել է և շարունակել ուսումը ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է և նշանակվել մանկավարժական աշխատանքի Լենինականում: 1948 թվականից աշխատել է Լենինականի (Գյումրի) Ղ. Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոցում որպես ֆիզիկայի և աստղագիտության

ուսուցիչ: 1966 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում: Եղել է Հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ:

Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 1991 թվականին:

ԲՈՇՆԱՂՅԱՆ ՊԵՐՃ ՍԵՐԳԵՅԻ (1920-2004) – Ծնվել է 1920 թ. Նոր Բայազետ քաղաքում: 1938 թ. ավարտել է Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. հուլիսին Պ. Բոշնաղյանը զորակոչվել է կարմիր բանակ, ընդունվել Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմում: Նա եղել է Հյուսիսային Կովկասի, Անդրկովկասի, Առաջին բելառուսական ռազմաճակատներում և Մերձբալթյան հատուկ բանակում: Եղել է ականանետային գումարտակի հրամանատար, հետախուզության ու օպերատիվ ծառայության գծով գնդի շտաբի պետի օգնական, գնդի շտաբի պետ և այլն:

Փոխգնդապետ Պ. Բոշնաղյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Գրոզնի քաղաքի պաշտպանության, Թաման թերակղզու, Կերչի, Սևաստոպոլի ազատագրման, Ֆրանկֆուրտի և Բեռլինի գրավման համար մղվող մարտերին: Լեհաստանում Օդեր գետի անցման ժամանակ վիրավորվել է, բայց առանց շարքից դուրս գալու շարունակել է կռվել իր գնդի հետ:

Գնդապետ Ե. Կարապետյանի «Անմահության ճանապարհով» գրքում Բոշնաղյանը բնութագրվել է որպես լավագույն օպերատիվ ռազմիկ, շտաբային ծառայության գործին տեղյակ զինվորական, իսկ Վախթանգ Անանյանի «Ռազմի դաշտում» գրքում՝ որպես հմուտ ու համարձակ հետախույզ: Ահա թե ինչ է գրված նշված գրքում Պերճ Բոշնաղյանի մասին. «Պետհամալսարանի նախկին ուսանող, այժմ կարմիր սպա Պերճ Բոշնաղյանը մեր մեծ հայրենիքի հերոս, հնարամիտ և նվիրված զինվորական է: Հայրենական պատերազմի ռազմա-

ճակատներում, ուր գտնվում էր մոտ երկու տարի, շատ փայլուն սխրագործություններ է կատարել: Նա շատ անգամ է հաղթել թշնամուն և պատվով կատարել հրամանատարության մարտական առաջադրանքները գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում»:

Պ. Բոշնաղյանին ներկայացնելու համար գրքի հեղինակը երկու օրինակ է բերել նրա հետախուզական ծառայությունից: «Աշնանային մի գիշեր նա իր 12 մարտիկներով ներխուժել է թշնամու թիկունք, ձեռք բերել հավաստի տեղեկություններ թշնամու առաջիկա ծրագրած գործողությունների մասին: Երկրորդ օրինակն այն մասին է, թե ինչպես են Պ. Բոշնաղյանն և նրա մի խումբ մարտիկները գերությունից ազատել տաժանակրության դատապարտված 5000 քաղաքացու: 1948 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, 1950 թվականից՝ ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնում: 1955 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1956 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1952-1955 թթ. և 1961-1962 թթ. Պ. Բոշնաղյանը եղել է ԵՊՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1959-1961 թթ.՝ երկրաբանության ֆակուլտետի դեկան, 1965-1968 թթ.՝ դեկանի տեղակալ, 1966-1968 թթ. և 1992-1997 թթ.՝ ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնի վարիչ: 1997 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատանքների, այդ թվում՝ մեկ մենագրության: 1999-2003 թթ. Պ. Բոշնաղյանն ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր, երկար տարիներ ղեկավարել է ՀՀ պատերազմի վետերանների կոմիտեն: 1996 թվականից մինչև կյանքի վերջը եղել է ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների միության խորհրդի նախագահը, ԱՊՀ անդամ երկրների վետերանների հասարակական կազմակերպությունների միջազգային միությունը համադասող խորհրդի նախագահության անդամ: 1971 թ. Պ. Բոշնաղյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի

կոչման: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով: Ֆրանսիայի իշխանությունների կողմից նրան շնորհվել է «Փարիզ քաղաք» անվանական մեդալ: Պ. Բոշնաղյանը վախճանվել է 2004 թ. հունվարի 5-ին Երևանում:

ԲՈՅԱԽՉՅԱՆ ՓԱՅԼԱԿ ԵԳՈՐԻ (1914-1997) – Ծնվել է 1914 թ. Կարս քաղաքում: 1929 թ. ավարտել է Գորիսի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Անդրկովկասյան ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: 1933 թ. ավարտել է և աշխատանքի անցել Երևանի պետական բժշկական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության ամբիոնում: 1936 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարան, սկզբում աշխատել որպես ֆիզկուլտուրայի դասախոս, իսկ հետագայում՝ ամբիոնի վարիչ:

1940 թ.՝ ԽՍՀՄ պաշտպանության մինիստրի հրամանով հրամկազմի հավաքագրման ժամանակ, Փ. Բոյախչյանը համալսարանից զորակոչվել է բանակ: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա եղել է արևմտյան սահմանամերձ զորամասերում: Պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցել է ֆաշիստական հարձակվող զորամասերի դեմ մղվող կատաղի մարտերին: Մինչև 1941 թ. դեկտեմբեր ամիսը մասնակցել է Դոնբասի և Հարավային Ուկրաինայի պաշտպանության համար մղվող մարտերին: Դեկտեմբերին տեղի ունեցած մարտերից մեկում ծանր վիրավորվել է, ապաքինվել և 1942 թ. փետրվարին ուղարկվել Ստալինգրադի ռազմաճակատ: Մինչև սեպտեմբեր ամիսը մասնակցել է քաղաքի պաշտպանությանը: 1942 թ. սեպտեմբերին նորից է վիրավորվել, ապաքինվել և ուղարկվել ռազմաճակատ: Այս անգամ Փ. Բոյախչյանը մասնակցել է Արևելյան Պրուսիայի գրավմանը և Եվրոպայի հարավարևելյան երկրների ազատագրմանը:

Ռազմաճակատներում ցուցաբերած արիության ու խիզախության համար Փ. Բոյախչյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով ու մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո Փ. Բոյախչյանը զորացրվել է և վերսկսել իր աշխատանքը Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սկզբում աշխատել է Երևանի ֆիզկուլտուրայի և սպորտի ինստիտուտում որպես ավագ դասախոս, իսկ 1951 թվականից մինչև 1961 թվականը համալսարանում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության ամբիոնի վարիչ: 1961 թվականից նա աշխատել է Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում: Վախճանվել է 1997 թվականին:

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԵՂԻՇԵԻ (1922-1987) – Ծնվել է 1922 թ. Արտաշատի շրջանի Վարդաշեն գյուղում: 1939 թ. ավարտել է Երևանի Օրջոնիկիձեի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ընդամենը մեկ տարի համալսարանում սովորելուց հետո՝ 1940 թ., կամավոր մեկնել է բանակ: Մինչև Հայրենական պատերազմի սկսվելը ծառայել է Մոսկվայի զինվորական օկրուգի 14-րդ տանկային դիվիզիայում: Պատերազմի առաջին օրերից իր դիվիզիայի կազմում տեղափոխվել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատ: 1941 թ. դեկտեմբերի 8-ին Մոսկվայի տակ տեղի ունեցող կատաղի մարտերից մեկում վիրավորվել է, կարճ ժամանակում ապաքինվել և 1942 թ. մարտին մեկնել է Վոլխովի ռազմաճակատ: 1942 թ. մարտից մինչև դեկտեմբեր ամիսը մասնակցել է Լենինգրադի հերոսական պաշտպանությանը: 1943 թ. չորրորդ անգամ վիրավորվել է և որպես շարային ծառայության համար ոչ պիտանի՝ զորացրվել: Ռազմաճակատում մարտական առաջադրանքներն արիությամբ կատարելու համար Հ. Գառնիկյանը պարգևատրվել է «Փառքի երրորդ աստիճանի» շքանշանով և վեց մեդալով:

1943 թ.՝ զորացրվելուց հետո, վերադարձել է համալսարան և շարունակել սովորել պատմության ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է և անցել ուսուցչական աշխատանքի Երևանում: Մանկավարժության բնագավառում երկարատև ու անբասիր աշխատանքի համար 1973 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում: 1951-1987 թթ. Հ. Գառնիկյանը նշանակվել է Երևանի Լենյի անվան միջնակարգ

դպրոցի տնօրեն, աշխատել է նաև որպես պատմության ուսուցիչ: Վախճանվել է 1987 թվականին:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԳԱՍՊԱՐԻ (1920-2004) – Ծնվել է 1920 թ. Ազիզբեկովի շրջանի (Վայոց ձորի մարզ) Գորաղիզ գյուղում: 1937 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Ազիզբեկովի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Առաջին կուրսից աչքի է ընկել իր առաջադիմությամբ և հասարակական ակտիվությամբ: 1941 թ. օգոստոսի 3-ին համալսարանի մի շարք կամավորականների հետ միասին չորրորդ կուրսի ուսանող Ա. Գասպարյանը մեկնել է բանակ: Նույն ամսին նրան ուղարկել են՝ սովորելու Անդրկովկասի զինվորական օկրուգի Թելավի ռազմական ուսումնարան: 1941 թ. աշնանը ավարտել է ուսումնարանը և լեյտենանտի կոչումով ծառայության նշանակվել սկզբում Ստալինգրադյան, ապա՝ Մերձվոլգյան զինվորական օկրուգներում: Մարտական առաջին մկրտությունը ստացել է Ուկրաինայի ռազմաճակատներում: Վաշտի հրամանատարի պաշտոնով կապիտան Գասպարյանը մասնակցել է սկզբում Ուկրաինայի արևմտյան մարզերի ու քաղաքների պաշտպանությանը, իսկ հետագայում՝ Լեհաստանի ու Չեխոսլովակիայի ազատագրմանը: Նրա վաշտը հատկապես ակտիվ մասնակցություն է ունեցել Սանդոմիրի, Պլացդարմի, Չինստոխովի, Բրեսլաուի, Գլեյվիցի, Գինդենբուրգի, Օպելնի, Նեյսեի, Օպավայի, Օդերի, Մորավայի և Վիսլայի գետանցման համար ծավալված կատաղի մարտերին: Ա. Գասպարյանն իր վաշտով օգնել է նաև խորհրդային հեծյալ բանակին՝ թշնամու շրջապատումից դուրս գալու համար:

Ռազմաճակատներում հրամանատարության առաջադրանքները կատարելու գործում ցուցաբերած խիզախության ու արիության համար Ա. Գասպարյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, մի շարք մեդալներով և գերագույն գլխավոր հրամանատարության պատվոգրերով:

1946 թ. Ա. Գասպարյանը զորացրվել է, վերադարձել համալսա-

րան, ավարտել բանասիրական ֆակուլտետը և աշխատել հայրենի գյուղում որպես դպրոցի ուսմասվար: 1952 թ. նրան առաջ են քաշել և ձշանակել Կիրովականի (Վանաձոր) օկրուգային կոմիտեի օրգան «Կայծ» թերթի խմբագրի տեղակալ: Օկրուգային կոմիտեների վերացումից հետո աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: 1956 թվականից նա սույն թերթի «Կուսակցական կյանք» բաժնի վարիչն է: Ունեցել է պատմական գիտությունների թեկնածուի և ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում: 2000 թ. հրատարակել է «Մամուլ և իշխանություն. Հռոմեական կայսրությունից մինչև ժամանակակից հեղափոխություն» աշխատությունը: Վախճանվել է 2004 թ. մայիսի 5-ին:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԵԽԱԿԻ (1910-1988) – Ծնվել է 1910 թ. մայիսի 10-ին Կարսում: Վաղ հասակում զրկվել է ծնողներից: Նախնական կրթությունը ստացել է Կրասնոդարի որբանոցում, ապա՝ 1920-1928 թթ.՝ Լենինականում (Գյումրի): 1931 թ. ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել նախ Ստեփանավանում իբրև շրջանային թերթի պատասխանատու քարտուղար, ապա՝ Կրասնոդարում որպես հայկական դպրոցի տնօրեն: Այնուհետև ընդունվել է Լենինգրադի Էրմիտաժին առընթեր ասպիրանտուրան, որտեղ ականավոր գիտնական Հ. Օրբելու ղեկավարությամբ մասնագիտացել է հայ արվեստի ու մշակույթի պատմության մեջ: Ավարտելով ասպիրանտուրան՝ աշխատել է «Ավանգարդ» թերթում որպես բաժնի վարիչ:

1941 թ. Ն. Գասպարյանը շատերի պես մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է Կովկասի համար մղվող մարտերին, ապա՝ 1944 թ.՝ Ուկրաինայի, Բելառուսիայի և Լեհաստանի ազատագրական մարտերին: Պարգևատրվել է մի շարք մեդալներով: 1948 թ. ավարտել է ասպիրանտուրան՝ փիլիսոփայություն մասնագիտությամբ, իսկ 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նույն թվականից մինչև իր կյանքի վերջ աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության, իսկ 1970 թ.՝ փիլիսոփայության պատմության ամբիոնում դոցենտի պաշտոնով: Վախճանվել է 1988 թ. հունիսի 18-ին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ԱՎԵՏԻՍԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում: 1937 թ. ավարտել է Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 14-ին զորակոչվել է, 1942 թ. ավարտել Թելավի ռազմա-հետևակային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և նշանակվել ծառայության Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի 400-րդ գնդում: Մինչև 1942 թ. օգոստոսը եղել է հրաձգային դասակի հրամանատար, իսկ հետո՝ արգելափակիչ (զագրադ օտրյադ) ջոկատի հրամանատարի շարային գծով տեղակալ: Լ. Գևորգյանը մասնակցել է Հյուսիսային Կովկասի քաղաքների պաշտպանությանը:

1943 թ. հուլիսին՝ արգելափակիչ ջոկատների չեզոքացումից հետո, նրան ուղարկել են Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ, այս անգամ՝ որպես վաշտի հրամանատար: 1943 թ. նոյեմբերին Նիկոպոլի տակ մղվող մարտերում ծանր վիրավորվել է և որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից: Այնուհետև աշխատել է Թալինի և Աշտարակի շրջանների զինվորական կոմիսարիատներում որպես 4-րդ մասի պետ: 1947 թ. վերադարձել է համալսարան, հանձնել պատմության ֆակուլտետի պետական քննությունները, ստացել պատմաբանի որակավորում և աշխատանքի անցել կուսակցական և այլ հիմնարկներում: 1954-1957 թթ. եղել է ՀԿԿ Երքաղկոմի Օրջոնիկիձեի շրջանի երկրորդ քարտուղար, ՀԿԿ Երևանի օկրուգային կոմիտեի կոմերիտական և արհմիութենական մարմինների բաժնի վարիչի տեղակալ: 1957-1963 թթ. աշխատել է որպես Աշտարակի կուսշրջկոմի առաջին քարտուղար: 1963 թվականից Լ. Գևորգյանը աշխատել է որպես ՀԽՍՀ մինիստրների խորհրդի տեղական խորհուրդների և վարչական մարմինների բաժնի վարիչ:

Ռազմաճակատներում ցուցաբերած մարտական ծառայությունների համար Լ. Գևորգյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ ԳԵՂԱՄԻ (1904-1999) – Ծնվել է 1904 թ. դեկտեմբերի 20-ին Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում: Զբաղեցրել է կուսակցական տարբեր պաշտոններ Նոր Բայազետի, Վաղարշապատի և Վարդենիսի շրջաններում: 1925 թ. կոմունիստական կուսակցության անդամ է եղել: 1932-1937 թթ. աշխատել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական վերստուգող հանձնաժողովում, ինչպես նաև եղել է ԵՊՀ կուսակցական կազմակերպության քարտուղարը: 1942 թ. զորակոչվել է բանակ և նշանակվել համար 1569 հոսպիտալի ղեկավարի տեղակալ՝ կուսակցական մասով, այնուհետև նշանակվել է 370-րդ հրաձգային պահեստային գնդի կոմիսար: Զորացրվել է 1946 թ. կապիտանի զինվորական կոչումով: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: 1950-1984 թթ. զբաղեցրել է ԳԱ հրատարակչության տնօրենի պաշտոնը: Վախճանվել է 1999 թ. մարտի 4-ին Երևանում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԱՍՔԱՆԱԶԻ (1923-2002) – Ծնվել է 1923 թ. Ախտայի շրջանի Ներքին Ախտա գյուղում: 1934 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել և մշտական բնակություն է հաստատել Երևանում: 1934 թ. Վ. Գևորգյանը ավարտել է Երևանի Թելմանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Առաջին կուրսն ավարտելուց հետո՝ 1942 թ., զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1944 թվականը մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սկզբում եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում և մասնակցել Ստավրոպոլի երկրամասի ազատագրմանը: Մի քանի ամիս անց նրան ուղարկել են Նովոռոսիյսկի ռազմաճակատ: Եղել է շարքային գնդացրորդ և խիզախորեն կատարել հրամանատարության մարտական առաջադրանքները: Նովոռոսիյսկի շրջակայքում վիրավորվել է, կարճ ժամանակում ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Այս անգամ նա եղել է Հարավային ռազմաճակատում: Միլիտոպոլի մոտ տեղի ունեցած

մարտում ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Վ. Գևորգյանը շարային ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի և 1944 թ. զորացրվել բանակից: Նա նորից շարունակել է ուսումը պետական համալսարանում: Էքստեռն կարգով հանձնել է բանասիրական ֆակուլտետի քննությունները և 1946 թ. ավարտել: 1950 թ. Վ. Գևորգյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1948-1984 թթ. գրաբար է դասավանդել ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնում, իսկ 1985 թվականից մինչև կյանքի վերջը՝ հայոց լեզվի պատմության ամբիոնում: 1952 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1994-1995 ուստարում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հրավերով Վ. Գևորգյանը գրաբար է դասավանդել Երուսաղեմի Ալեք և Մարի Մանուկյանների անվան ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

Վ. Գևորգյանը պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանով», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 20 տարին» և այլ մեդալներով: Վ. Գևորգյանը վախճանվել է 2002 թ. մայիսի 15-ին Երևանում:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1913-1992) – Ծնվել է 1913 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում: Վաղ հասակից կորցրել է հորը և կրել բազում տառապանքներ ու զրկանքներ: 1929 թ. ավարտել է գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը, իսկ 1931 թ.՝ Շուշիի մանկավարժական տեխնիկումը: 1931-1937 թթ. աշխատել է Առաջածոր գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, ուսմասվար, ապա՝ տնօրեն: 1937 թ. Ա. Գրիգորյանն ընդունվել և 1941 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1942 թ. ընդունվել է ասպիրանտուրա՝ «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ: Նույն թվականի օգոստոսին զորակոչվել է բանակ և մինչև 1943 թվականը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, կռվել է Օրջոնիկիձեի ու Մոզդոկի ազատագրման համար: 1943 թ. հունվա-

րին Մոզդոկի տակ տեղի ունեցող կատաղի ճակատամարտում Ա. Գրիգորյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Նույն թվականի մայիսին ապաքինվել է և որպես շարային ծառայության համար ոչ պիտանի զորացրվել: 1943-1944 թթ. շարունակել է սովորել ասպիրանտուրայում, ավարտել է ժամկետից շուտ և 1945 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1949 թ. ստացել է դոցենտի կոչում և մինչև 1957 թվականը աշխատել համալսարանում որպես դասախոս: 1957 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Ռազմաճակատում Ա. Գրիգորյանը պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Վախճանվել է 1992 թվականին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՄԵՆԱԿԻ (1910-1982) – Ծնվել է 1910 թ. Կարսի շրջանի Ղզլչախչախ գյուղում: 1918 թ. գաղթել և բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1929 թ. ավարտել է Լենինականի մանկավարժական ուսումնարանը և մինչև 1934 թվականը աշխատել որպես ուսուցիչ: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: Երբ լրացել է նրա ծառայության ժամանակը, սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Սիմֆերոպոլի մոտ պատերազմի առաջին իսկ օրերին նա մտել է կատաղի մարտերի մեջ: Մասնակցել է Սիմֆերոպոլի, Դնեպրոպետրովսկի և Կատելնիկովի պաշտպանությանը: Երբ Դնեպրոպետրովսկից նրան ուղարկել են Ստալինգրադի ռազմաճակատ, ճանապարհին թշնամու ռմբակոծությունների ժամանակ վիրավորվել է, բայց շարունակել է մնալ մարտական գործողությունների մեջ:

Սերժանտ Գրիգորյանը պատերազմի ժամանակ ծառայել է հրետանային զորամասերում, մասնակցել է Դնեպրի գետանցման ժամանակ տեղի ունեցած կատաղի մարտերին: Հրետանային այն մարտկոցը, որի կազմում եղել է Գ. Գրիգորյանը, հաջողությամբ կատարել է գետանցումը և իր կրակով ապահովել է ռազմաճակատի

մյուս զորամասերի առաջխաղացումը:

Մարտական գործողություններում ակտիվություն ցուցաբերելու համար սերժանտ Գրիգորյանը պարգևատրվել է «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

1944 թ. Գարեգին Գրիգորյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1949 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1950 թ.՝ դոցենտի կոչում և անցել դասախոսական աշխատանքի: Վախճանվել է 1982 թվականին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ (1906-1977) – Ծնվել է 1906 թ. Բաքվում: Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեում: Սկզբում եղել է քաղսովետի հողբաժնի վարիչ, իսկ հետո՝ բնագիտական թանգարանի վարիչ: Որոշ ժամանակ Երևանի դպրոցներում ուսուցչական աշխատանք կատարելուց հետո ընդունվել ու ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսության ֆակուլտետը: 1933 թ. աշխատանքի անցել Էջմիածնի շրջանում, որտեղ էլ Գ. Գրիգորյանը կազմակերպել է հանրապետությունում առաջին արտադրական ագրոքիմիական լաբորատորիան: 1936-1939 թթ. նա աշխատել է խաղողագործական և գինեգործական փորձնական կայանում, որտեղ սկսել է իր առաջին գիտահետազոտական ուսումնասիրությունը:

Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, Գ. Գրիգորյանը նույնպես զորակոչվել է կարմիր բանակ և մինչև վերջ մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սկզբում կրտսեր լեյտենանտի և ապա լեյտենանտի կոչումով ծառայել է սակրավորների զորամասում և կատարել մարտական բարդ առաջադրանքներ: 1942-1943 թթ. լեյտենանտ Գրիգորյանը եղել է Հայրենական մեծ պատերազմի ամենադժվարին ռազմաճակատներից մեկում՝ Ղրիմի ռազմաճակատում: Մասնակցել է Կերչի մոտ ու նրա շրջակայքում տեղի ունեցող կատաղի մարտերին: Իր օրագրի էջերից մեկում նա գրել է. «Կերչի համար

մարտերը այնքան կատաղի էին տեղի ունենում, որ պաշտպանողական մարտը չէր տարբերվում հարձակողականից: Թշնամին անընդհատ ռմբակոծում էր թե՛ հարձակվելիս և թե՛ պաշտպանվելիս, իսկ մենք գործում էինք նրա հրետանու կրակի տակ»:

Կովկասի ռազմաճակատամասերից մեկում նա իր վաշտով մի պահ ընկել է շրջապատման մեջ, բայց կարողացել է պատռել թշնամու օղակը և նորից միանալ կարմիր բանակի զորամասերին:

Լեյտենանտ Գրիգորյանը պատերազմի տարիներին մասնակցել է նաև ռազմական մեծ նշանակություն ունեցող խնդիրների կատարմանը, ինչպես, օրինակ, ռազմավիրական ճանապարհի վերակառուցմանն ու ամրապնդմանը: Անդրկովկասի օկրուգի ռազմական խորհուրդի առաջադրանքները արիությամբ կատարելու համար Գ. Գրիգորյանը պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Պատերազմից հետո Գրիգորյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1958 թ. ստացել դոցենտի կոչում և շարունակել իր աշխատանքը կենսաբանական ֆակուլտետում մինչև իր մահը՝ 1972 թվականը: Նա մեծ աշխատանք է կատարել կենսաբանական ֆակուլտետում՝ ագրոքիմիայի ամբիոն հիմնադրելու համար: Վախճանվել է 1977 թվականին:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1912-2003) – Ծնվել է 1912 թ. Սուրմալուի նահանգի Կողբ գյուղում: 1930 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել Թալինի շրջանում: 1934-1939 թթ. սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1939 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել նրա շարքերում մինչև 1946 թվականը: 1942 թվականից մինչև 1945 թ. եղել է Պերեկոպյան 19-րդ տանկային կորպուսում և շարքային զինվորի աստիճանից հասել մինչև գնդի հրամանատարի տեղակալի պաշտոնին:

Առաջին խոշոր մարտը, որին մասնակցել է մայոր Գյուլբուդա-

ղյանը՝ որպես դիվիզիոնի հրամանատար, 19-րդ տանկային կորպուսի Միլիտոպոլի տակ մղած մարտն էր, որի ժամանակ թշնամին գլխովին ջախջախվեց, իսկ կորպուսը Ղրիմի գլխավոր մատույցների ու Պերեկոպի ամրությունների վրայով հասավ մինչև Արմյանսկ: Լ. Գյուլբուդաղյանի հրետանային դիվիզիոնը այդ մարտում թշնամու կողմից շրջապատման մեջ գտնվելիս խուճապի չի մատնվել և կռվել է այնքան ժամանակ, մինչև օգնության են հասել ռազմաճակատի մյուս զորամասերը: Թշնամու դեմ տեղի ունեցած ուժերի անհավասար մարտում հաղթանակ տանելուց հետո Լ. Գյուլբուդաղյանի դիվիզիոնը սրընթաց երթով Սիվալի վրայով անցել է Սիմֆերոպոլ՝ մասնակցելով Սևաստոպոլի համար մղվող մարտերին:

Ղրիմի ազատագրումից հետո 19-րդ տանկային կորպուսը, որի կազմում էր Լ. Գյուլբուդաղյանի դիվիզիոնը, տեղափոխվել է Մերձբալթիկա և մարտական խնդիրներ կատարել Ռիգայի ու Շաուլյալի ազատագրման համար:

Ինչպես Ղրիմի, այնպես էլ Մերձբալթիկայի ռազմաճակատներում ցուցաբերած արիության ու խիզախության համար մայոր Լիպարիտ Գյուլբուդաղյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ». «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր դրոշի» շքանշաններով և մի շարք մեդալներով:

1946 թ. սեպտեմբերին Լ. Գյուլբուդաղյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1946-2003 թթ. աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում: 1973 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1974 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 2003 թ. մայիսի 15-ին:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԻՐԱՔ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1915-1997) – Ծնվել է 1915 թ. Սուրմալուի գավառի Կողբ գյուղում: 1934 թ. ավարտել է Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Արմավիր գյուղի մանկավարժական տեխնիկումը և մինչև 1938 թվականն աշխատելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. հուլիսին զորակոչվել է կարմիր բանակ, ավարտել է Սուխումիի հրետանային ուսումնարանը, ստացել է կրտսեր լեյտե-

նանտի կոչում և նշանակվել ծառայության իբրև դասակի հրամանատար: 1942 թ. այն գունդը, որի կազմում եղել է Ս. Գյուլբուդաղյանը, ընկել է շրջապատման մեջ և գերվել թշնամու կողմից: 1944 թ. փետրվարին նրան հաջողվել է փախչել և միանալ հարավսլավական և ալբանական պարտիզանական ջոկատներին: Մասնակցել է Ալբանիայի ազատագրմանը: Տիրանայում տեղի ունեցած շքերթի ժամանակ ստացել է պարտիզանական տոմս:

1945 թ. վերադարձել է կարմիր բանակի շարքերը և կռվել Երրորդ ուկրաինական ռազմաճակատում: Մասնակցել է Ավստրիայի, Հունգարիայի ազատագրմանը: 1945 թ. մարտին Բալատոն լճի շրջակայքում տեղի ունեցող մարտերից մեկի ժամանակ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Պարգևատրվել է «Մարտական ծառայության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո Ս. Գյուլբուդաղյանը զորացրվել է և շարունակել սովորել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1974 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1978 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1952-1955 թթ. աշխատել է Լենինականի (Գյումրի) պետական մանկավարժական ինստիտուտում որպես դասախոս: 1956 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Վախճանվել է 1997 թ. հոկտեմբերի 17-ին:

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԱԿ ՄԵՍՐՈՊԻ (1918-1995) – Ծնվել է 1918 թ. օգոստոսի 11-ին Երևանում: 1936 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայկական բաժինը: 1941 թ. հունիսին ավարտել է համալսարանը և զորակոչվել բանակ: Մինչև դեկտեմբեր ամիսը սովորել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանում, որից հետո որպես լեյտենանտ մեկնել է ռազմաճակատ: 1942 թ. հունվարից մինչև մայիս ամիսը կռվել է 51-րդ բանակի 271-րդ դիվիզիայի 850-րդ հրետանային գնդում որպես հրե-

տանային դասակի հրամանատար: Մասնակցել է Ղրիմի թերակղզու ծանր ու դժվարին մարտերին: Մայիսի 14-20-ը ԽՍՀՄ զորքերը սկսեցին նահանջել Կերչից և հաստատվել Թամանի թերակղզում: Խ. Գյուլնազարյանը նահանջի ընթացքում հրետանային կրակով ապահովել է զորքերի, այդ թվում՝ 23 000 վիրավորների անվնաս նահանջը: Սակայն նրան չի հաջողվել նույն ճանապարհով անցնել Թաման և մայիսի 19-ին ստացել է կոնտուզիա ու գերի ընկել: 1944 թ. օգոստոսի 23-ին Խ. Գյուլնազարյանը ազատագրվել է գերությունից և միանալով գործող բանակին՝ ծառայության է անցել Երկրորդ ուկրաինական բանակի 27-րդ պահեստային սպայական գնդում: 1944 դեկտեմբերից մինչև 1945 թ. հունվարը մասնակցել է Բուդապեշտի համար մղվող մարտերին: Հունվարի 18-ին փողոցային մարտերից մեկում Խ. Գյուլնազարյանը վիրավորվել է և տեղափոխվել Բրաշովի զինվորական հոսպիտալ: Ապաքինվելով ապրիլից մասնակցել է Չեխոսլովակիայի համար մղվող մարտերին: Այնուհետև մնել է Ուկրաինական ԽՍՀ Կիևի շրջանի Ուման քաղաք և մինչև պատերազմի ավարտն ու զորացրումը (1946 թ. հունվար) մնացել է այնտեղ:

Զորացրվելուց հետո սովորել և ավարտել է ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: 1950 թվականից եղել է ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1950 թ. պաշտպանել է «Հայրենական պատերազմի արտացոլումը խորհրդահայ արձակում» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1972 թ. պաշտպանել է «Հայ քննադատական միտքը 1920-ական թթ.» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, իսկ 1985 թ.՝ ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման:

Խաժակ Գյուլնազարյանի ստեղծագործությունները թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն, ուկրաիներեն, լատիշերեն, էստոներեն, մոլդավերեն, տաջիկերեն, վրացերեն, ղազախերեն, լիտվերեն: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի

երկրորդ աստիճանի», «Պատվո նշան» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 1995 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում:

ԳՅՈՒԼՔԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1909-1986) – Ծնվել է 1909 թ. օգոստոսի 22-ին Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1926-1930 թթ., սովորել և ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը: Այնուհետև ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 1931-1936 թթ. երկրորդ կուրսից ընտրվել է ժողդատավոր և աշխատել Կոտայքում, Լենինականում, Երևանում: Հեռակա կարգով ավարտելով նաև Համամիութենական իրավաբանական ինստիտուտը՝ ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն դատարանի անդամ:

1938-1941 թթ. Ռ. Գյուլքանյանը եղել է Արդարադատության ժողկոմի տեղակալ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ զինվորական տրիբունալի նախագահի տեղակալ, ապա՝ նախագահ: Ղրիմի ազատագրման համար մղված պայքարում վիրավորվելուց հետո զորացրվել է, նշանակվել հանրապետության դատախազի տեղակալ, որտեղ աշխատել է մինչև 1949 թվականը: 1949 թ. մինչև իր կյանքի վերջը դասախոսել է համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ դասավանդելով «արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «աշխատանքային իրավունք» առարկաները: 1950 թվականից սկսած՝ որպես ավագ գիտաշխատող զուգահեռաբար աշխատել է ՀԿԿ կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և «Պատվո նշան» շքանշաններով: Վախճանվել է 1986 թ. դեկտեմբերի 22-ին:

ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ (1906-1984) – Ծնվել է 1906 թ. Արևմտյան Հայաստանի Մշո գավառի Հունան գյուղում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական կոտորածներից ազատվելու համար գաղթել է Երևան: 1933 թ. ավարտել է Երևանի 26 կոմիսարների անվան գյուղատնտեսական բանֆակը և նույն թվականի սեպտեմբերին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության բաժինը:

Համալսարանում չորս ամիս սովորելուց հետո ՀԿԿ կենտկոմը մոբիլիզացիոն կարգով նրան ուղարկել է Արտաշատի շրջան՝ կուսակցական աշխատանքի: 1935 թ. վերադարձել է համալսարան և շարունակել սովորել: 1939 թ. ավարտել է համալսարանը և մեկ տարի Երևանի քաղկոմում աշխատելուց հետո ընդունվել ԵՊՀ մարքսիզմ-լենինիզմի ամբիոնին կից ասպիրանտուրան: 1941 թ. դեկտեմբերին ընտրվել է համալսարանի կուսակցական բյուրոյի առաջին քարտուղար: 1942 թ. մարտին կամովին մեկնել է բանակ: Երկու ամիս Բաշկիրիայի Բելեբեյ քաղաքի քաղաշխատողների վերապատրաստման կուրսերում սովորելուց հետո մեկնել է Վորոնեժի ռազմաճակատ և նշանակվել գնդի կուսկազմակերպիչ: Ուրիվոյ քաղաքի տակ մղվող մարտերի ժամանակ նշանակվել է բատալիոնի հրամանատարի տեղակալ՝ քաղաքական գծով: Վորոնեժի ռազմաճակատում մասնակցել է Ստարի Սոկոլ, Բելգորոդ, Գրայվորոն, Խարկով քաղաքների ազատագրմանը: Ստարի Սոկոլի տակ ծավալված մարտերից մեկի ժամանակ վիրավորվել է, կարճ ժամանակում բուժվել՝ վերադառնալով իր զորամասը: Խարկով քաղաքի ազատագրումից հետո Դ. Դավթյանին ուղարկել են հարավարևմտյան ռազմաճակատ: Այստեղ թշնամու օղակումից դուրս գալու ժամանակ տեղի ունեցած մարտում ծանր վիրավորվել է և ուղարկվել Ղազախստան: Վեց ամիս հետո ապաքինվել է և ուղարկվել Մոսկվայի ռազմական օկրուգի տրամադրության տակ: Նոր կազմավորվող զորամասերի հետ նորից նրան ուղարկել են Խարկով, ապա Զապորոժե՝ նշանակելով հոսպիտալի քաղղեկ:

1946 թ. Դ. Դավթյանը զորացրվել է, վերադարձել համալսարան և անցել դասախոսական աշխատանքի: Համալսարանում աշխատել է մինչև 1949 թվականը, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նշանակվել Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ: 1972 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 1984 թվականին:

ԴՈՎԼԱԹՅԱՆ ՎԱՍԱՄ ՎԱՂԻՆԱԿԻ (1923-2005) – Ծնվել է 1923 թ. օգոստոսի 14-ին Նոր Բայազետում: 1940 թ. ավարտել է Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1942 թ. նոյեմբերի 7-ին զորակոչվել է բանակ: Կրտսեր լեյտենանտ Դովլաթյանը ծառայել է Անդրկովկասի շտաբի ծածկագրային բաժնում: 1946 թ. զորացրվել է և շարունակել ուսումը: 1949 թ. ավարտել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետը: 1954 թվականից աշխատել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր քիմիայի ամբիոնում, 1958-1989 թթ. զբաղեցրել է ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը: 1962-2005 թթ. եղել է նույն ինստիտուտի պեստիցիդների պրոբլեմային լաբորատորիայի, 1962 թվականից՝ միաժամանակ թունաքիմիկատների սինթեզի և փորձարարական լաբորատորիայի վարիչ, 1994 թվականից՝ ՌԴ բնական ԳԱ անդամ: Հեղինակ է ավելի քան 450 գիտական աշխատությունների: Դովլաթյանի առաջարկած ցիանամինա-սիմ-տրազինների սինթեզի եղանակը արտոնագրված է Գերմանիայում, Ճապոնիայում, Շվեյցարիայում: Վ. Դովլաթյանն ընդգրկված է համաշխարհային գիտության բնագավառի 500 ազդեցիկ առաջատար գիտնականների ցուցակում: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 2005 թ. դեկտեմբերի 25-ին Երևանում:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԵՐԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1908-1983) – Ծնվել է 1908 թ. Էջմիածնի շրջանի Աղավնատուն գյուղում: 1932 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1937 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1940 թ. ավարտել է ասպիրանտուրան՝ անցնելով դասախոսական աշխատանքի:

Ե. Եղիազարյանը կարմիր բանակ է կանչվել 1941 թ. սեպտեմբերին: Նույն թվականի վերջին ամիսներին ավարտել է Թբիլիսիի քաղաշխատողների վերապատրաստման կուրսերը և մեկնել գործող բանակ: Առաջին մարտերը, որոնց մասնակցել է քաղղեկ Եղիազարյանը, եղել են Կերչի շրջակայքում: Այդ մարտերից մեկի ժամանակ

Ե. Եղիազարյանի վաշտը դեսանտ է իջել Կերչի մոտ և կատաղի մարտերով հարկադրել հակառակորդին հետ նահանջել գրաված դիրքերից:

1942 թ., երբ Կերչի ռազմաճակատում կազմակերպվել է 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան, Ե. Եղիազարյանը նշանակվել է այդ դիվիզիայի հրաձգային գնդերից մեկի պրոպագանդիստ: Ռազմաճակատում նա սկզբում ստացել է քաղղեկի, իսկ հետո՝ ավագ լեյտենանտի կոչում: Կերչում Ե. Եղիազարյանը ծանր վիրավորվել է և որպես երրորդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից: Նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և ութ մեդալով:

1943 թ.՝ զորացրվելուց հետո, Ե. Եղիազարյանը վերադարձել է համալսարան, մի քանի տարի շարունակ աշխատել կուսակցական կոմիտեի քարտուղար և դասավանդել է աշխարհագրական ֆակուլտետում: 1957-1965 թթ. եղել է աշխարհագրական ֆակուլտետի դեկանը, համատեղության կարգով՝ ՀԿԿ ԿԿ-ին կից կուսակցական դպրոցի դասախոս: Վախճանվել է 1983 թ. նոյեմբերին:

ԵՆԳՈՅԱՆ ՓԱՅԼԱԿ ԻՍԱՀԱԿԻ (1921-1978) – Ծնվել է 1921 թ. Արթիկի շրջանի Ղոլղաթ (Գեղանիստ) գյուղում: 1939 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) թիվ 10 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. աշնանը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կամավորական շարժում է սկսվել՝ դեսանտային զորամասեր ծառայության մեկնելու համար: Փ. Ենգոյանը եղել է այդ շարժման կազմակերպիչներից մեկը համալսարանում: ՀԼԿԵՄ կենտկոմի ուղեգրով հանրապետության կոմերիտական ակտիվիստ կամավորականների հետ մեկնել է Մոսկվա՝ անցնելով ՀամԼԿԵՄ կենտկոմի ռազմական բաժնի տրամադրության տակ, ուղարկվել է դեսանտային ուսումնական զորամաս: Երեք ամիս պարաշյուտային թռիչքներին մասնակցելուց հետո նա ուղարկվել է ռազմաքաղաքական դպրոց: Ավարտելուց և լեյտենանտի կոչում ստանալուց հետո Փ. Ենգոյանը ուղարկվել է Կենտրոնական ռազմաճակատ: Մեկ տարի հետո նրան ուղարկել են Լենինգրադի ռազմաճա-

կատ, ուր մնացել է 1944 թվականից մինչև 1945 թ. մայիս ամիսը: Փ. Ենգոյանը մասնակցել է Էստոնիայի ռազմավարական նշանակություն ունեցող կղզիների ազատագրմանը: Լեյտենանտ Ենգոյանը 1944 թ. հոկտեմբերի 14-ի գիշերը՝ դեսանտային գործողությունների ժամանակ, Սորեմո կղզում ծանր վիրավորվել է և ուղարկվել Լենինգրադի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ և մասնակցել թշնամու դեմ մղվող վերջին և վճռական մարտերին: Գերմանական զորքերի կապիտուլացիայից հետո՝ մինչև մայիսի վերջը, նա մասնակցել է Մերձբալթիկայի անտառներում թաքնված էսէսականների դեմ մղվող մարտերին: Մարտական գործողություններում ցուցաբերած արիության համար նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մեդալներով:

Այն դիվիզիան, որի կազմում եղել է լեյտենանտ Ենգոյանը, 1945 թ. հուլիսին փոխադրվել է Գորկի՝ հետագայում Հեռավոր Արևելքի ռազմաճակատ մեկնելու նպատակով: Սակայն ճապոնական զորքերի արագ կապիտուլացիայի պատճառով դրա անհրաժեշտությունը չի եղել: 1945 թ. դեկտեմբերին Փ. Ենգոյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1948 թ. վերջին ավարտել է համալսարանի պատմության ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1956 թ. ստացել է դոցենտի կոչում և նշանակվել դասախոսական աշխատանքի համալսարանում: 1967 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1970 թ.՝ ստացել պրոֆեսորի կոչում: Նույն թվականից մինչև իր կյանքի վերջին օրերը եղել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ: Աշխատել է նաև որպես համալսարանի կուսկոմի քարտուղար: Եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի անդամ: Վախճանվել է 1978 թ. դեկտեմբերի 12-ին:

ԵՐԵՄՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՂՈՒԿԱՍԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: 1937 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարա-

նի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. օգոստոսին չորրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Կարճ ժամանակ մերձճակատային զորամասերից մեկում ծառայելուց հետո նա ուղարկվել է՝ սովորելու մարշալ Բուդյոննու անվան կապի ռազմական ակադեմիա, որն այդ ժամանակ գտնվում էր Տոմսկ քաղաքում: Ութ ամիս ակադեմիայում սովորելուց հետո նա ուղարկվել է Կրասնոյարսկի Մ. Կալինինի անվան ռազմական ուսումնարան, որը 1943 թ. օգոստոսին ավարտելով՝ ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ: Մասնակցել է Ղրիմի ազատագրման համար մղվող վճռական մարտերին: 1944 թ. Ն. Երեմյանն իր զորամասի հետ տեղափոխվել է Առաջին մերձբալթյան ռազմաճակատ և մասնակցել Արևելյան Պրուսիայի, Քյոնիգսբերգի և Դանցիկի գրավմանը: Ռազմաճակատներում մարտական առաջադրանքները խիզախորեն կատարելու համար Ն. Երեմյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և մի շարք մեդալներով: 1944 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը: 1946 թ. օգոստոսին լեյտենանտ Երեմյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1948 թ. ավարտել է համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և նշանակվել մանկավարժական աշխատանքի: Սկզբում աշխատել է հայրենի Ճարտար գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար, իսկ 1962 թվականից՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

ԹՈՂԵՎՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՏԻԳՐԱՆԻ (1906-1973) – Ծնվել է 1906 թ. Թիֆլիսում: 1929 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Այնուհետև աշխատանքի է անցել Հրազդանի և Կիրովականի ժողովրդական դատարաններում որպես ստաժոր, ապա՝ դատավորի քարտուղար: 1933 թ. ավարտել է Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը: 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1942 թ. փետրվարին զորակոչվել է կարմիր բանակ և

սովորել Սուխումի հետևակային ուսումնարանում: Ուսումն ավարտելուց հետո կրտսեր լեյտենանտ Թաղևոսյանը ծառայության է անցել 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 684-րդ հրաձգային գնդում որպես դասակի հրամանատար: Ակտիվորեն մասնակցել է Մոզդոկի մոտ տեղի ունեցած կռիվներին, որտեղ էլ 1942 թ. դեկտեմբերի վերջին ծանր վիրավորվել է: Երկարատև բուժումից հետո՝ 1943 թ. օգոստոսին, զորացրվել է և վերադառնալով Երևան՝ շարունակել է ուսումը: 1956 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում: 1959-1973 թթ. նշանակվել է բաժանմունքի վարիչ, 1944-1951 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզմաթ, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար: 1963-1973 թթ. եղել է «Հայկական քիմիական ամսագրի» պատասխանատու խմբագիրը: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով: Մահացել է 1973 թ. դեկտեմբերի 18-ին Երևանում:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՇԱՀԲԱԶԻ (1909-1992) – Ծնվել է 1909 թ. Աշտարակի շրջանի Ղարաջորան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Աշտարակի շրջանի Օշական գյուղում: 1930 թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: 1930-1933 թթ. աշխատել է Մարտունու շրջանում որպես ուսուցիչ և դպրոցի տնօրեն: 1933 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1938 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1938-1941 թթ. սովորել ու ավարտել է Մոսկվայի երկրաբանական-հետախուզական ինստիտուտին կից ասպիրանտուրան: 1941 թ. վերադարձել է Երևանի պետական համալսարան և աշխատել որպես ավագ դասախոս: 1942 թ. մայիսին Թ. Թաղևոսյանը զորակոչվել է կարմիր բանակ, որտեղ ծառայել է մինչև 1946 թվականը: Հայրենական պատերազմի տարիներին եղել է մի քանի ռազմաճակատներում: Սկզբում տարբեր պաշտոններով մարտնչել է Երրորդ ուկրաինական ռազմաճակատում՝ մասնակցելով Բալկանյան երկրների, հատկա-

պես Բելգրադի և Բուդապեշտի ազատագրմանը: Մինչև պատերազմի հաղթական ավարտը Թ. Թադևոսյանը եղել է մարտերի մեջ: Պարգևատրվել է «Բուդապեշտի ազատագրման համար», «Բելգրադի ազատագրման համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1946 թ. Թ. Թադևոսյանը զորացրվել է, վերադարձել համալսարան և նշանակվել դասախոսական աշխատանքի: 1948 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1952-1962 թթ. աշխատել է համալսարանի միներալոգիայի և պետրոգրաֆիայի ամբիոնի վարիչ, իսկ 1951-1955 թթ.՝ երկրաբանական ֆակուլտետի դեկան: 1967-1986 թթ. եղել է «Երևանի համալսարան» հանդեսի հիմնադիր-խմբագիրը: Վախճանվել է 1992 թ. մայիսի 29-ին:

ԹԱԻՐՅԱՆ ԻՎԱՆ ԱՂԱՍՈՒ (1905-1979) – Ծնվել է 1905 թ. Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում: Մինչև 1925 թվականը եղել է բատրակ և օրավարձով աշխատող բանվոր: 1927 թ. ավարտել է Ստեփանավանի խորհրդային կուսակցական դպրոցը և մինչև 1929 թվականը աշխատել է որպես կոմսոմոլի շրջկոմի քարտուղար: 1932 թ. ավարտել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը, ընդունվել ասպիրանտուրա և միաժամանակ դասավանդել ԽՄԿԿ պատմություն Անդրկովկասի ռազմական հրամանատարական դպրոցում: 1933-1934 թթ. եղել է քաղբաժնի պետի տեղակալ, 1934-1937 թթ.՝ համալսարանի մարքսիզմ-լենինիզմի դասախոս, 1937-1938 թթ.՝ Էջմիածնի կուսշրջկոմի առաջին քարտուղար, իսկ 1939-1940 թթ.՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի դասախոս: 1940 թ. փետրվարին Ի. Թաիրյանը դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում, այնտեղից էլ Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. ավարտել է Թբիլիսիի անդրկովկասյան քաղաշխատողների կուրսերը և դեկտեմբեր ամսին 15-րդ գվարդիական դիվիզիայի կազմում քաղբաժնի ագիտացիայի, պրոպագանդայի բաժնի վարիչի

պաշտոնով մեկնել է ռազմաճակատ: Եղել է Հարավային, Հարավարևմտյան և Ստալինգրադի ռազմաճակատներում: Համալսարանի մարքսիզմ-լենինիզմի դասախոս մայոր Թաիրյանը ամենուր միշտ ցուցաբերել է բացառիկ հայրենասիրություն ու նվիրվածություն հայրենիքի հանդեպ: Ահա թե ինչ է ասված նրա մասին Լենինական քաղաքի (Գյումրի) աշխատավորությանը Լենինի և Կարմիր դրոշի շքանշանակիր գվարդիական հրաձգային 15-րդ դիվիզիայի ուղարկած նամակում. «Հայ ժողովրդի արժանավոր զավակ մայոր Թաիրյանը բազմիցս գրոհների է առաջնորդել իր մարտիկներին: Միայն մի գյուղի համար մղված մարտի ժամանակ Թաիրյանը միայնակ զինաթափ արեց 30 իտալացիների և գերեց: Նրանց ցուցմունքները օգնեցին Թաիրյանին շրջապատելու և ջախջախելու իտալական մի գումարտակ... Ուր ահեղ կռիվ էր մղվում, այնտեղ հայտնվում էր հերոս Թաիրյանը և իր անձնական օրինակով նորանոր քաջագործությունների էր մղում մարտիկներին»[218]:

15-րդ գվարդիական դիվիզիայի շտաբի պետ Գոնիկմանը «Կոմունիստ» թերթում հրապարակված իր հոդվածում գրել է. «Թաիրյանը շատ հերոսական սխրագործություններ է կատարել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում: Ստալինգրադի տակ 44-րդ գվարդիական գնդի կուսկազմակերպիչ, գումարտակի կոմիսար Թաիրյանն իր գնդի զինվորների հետ միասին հետ է մղել թշնամու տանկային ու հետևակային բազմաթիվ գրոհները, նա կրակել է զենքի շատ տեսակներով թշնամու շատ զորատեսակների վրա: Իսկ երբ թշնամու տանկերը մոտեցել են նրա գումարտակի խրամատներին, նա անձնուրացաբար մոտեցել է և նռնակներ ու պայթող շշեր է նետել նրանց վրա: Նրա կողքին զինվորները իրենց միշտ զգացել են քաջ ու անվախ: 1941 թ. դեկտեմբերին նա իր քաջ զինվորների հետ անցել է թշնամու թիկունքը, ոչնչացրել նրա կրակակետը, և առանց կորուստի նրա գունդը առաջ է շարժվել»[219]:

Ամեն մարտից առաջ Ի. Թաիրյանը հավաքել է իր զինվորներին,

[218] «Սովետական Հայաստան», 17 ապրիլ, 1964:
[219] 15-րդ դիվիզիայի «Красный солдат» թերթ, 26 դեկտեմբերի, 1942:

բացատրել հրամանատարության կողմից տրված առաջադրանքի կատարման նշանակությունն ու անհրաժեշտությունը և կրակոտ խոսքերով ոգևորել նրանց[220]: Պատահական չէ, որ դիվիզիայի հրամանատարությունը պատերազմի ժամանակ և նրանից հետո հարց է բարձրացրել մայոր Թաիրյանին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու համար: Նա պարգևատրվել է կառավարական շատ շքանշաններով ու մեդալներով: Ռազմաճակատի ու գերագույն գլխավոր հրամանատարության կողմից ստացել է բազմաթիվ շնորհակալագրեր:

Հայրենական պատերազմի մարտերից մեկում մայոր Թաիրյանը ծանր վիրավորվել է և ապաքինվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել: 1944-1946 թթ. աշխատել է Ռոստովի օկրուգի կուսակցական հանճնաժողովում որպես պատասխանատու քարտուղար: 1947 թվականից Թաիրյանն աշխատել է ԽՄԿԿ-ին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվում որպես գիտաշխատող: Վախճանվել է 1979 թվականին:

ԹԱՎԱԴՅԱՆ ՂԱԱՍԻ ԲԱԽՇԻԻ (1918-1980) – Ծնվել է 1918 թ. Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Հյուսոտ գյուղում: 1934 թ. ավարտել է Շուշիքենդի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը, իսկ 1937 թ.՝ Շուշի քաղաքի մանկավարժական ուսումնարանը: 1937-1938 թթ. Շուշիքենդի դպրոցում աշխատել է որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1941 թ. չորրորդ կուրսից կամովին մեկնել է կարմիր բանակ: Նույն թվականին նրան ուղարկել են Լենինգրադի ռազմաճակատ, ուր մասնակցել է ֆաշիստական զորքերի դեմ մղվող կատաղի մարտերին: 1942 թ. Ա. Թավաղյանին ուղարկել են՝ սովորելու Լենինգրադի ռազմաօդային ակադեմիայում: Ավարտելուց հետո նրան ուղարկել են Մարիական ինքնավար հանրապետության մայրաքաղաք՝ Յոշկար Օլա: 1943 թ. հիվանդության պատճառով զորացրվել է և վերադարձել ուսուցչական աշխատանքի Լեռ-

[220] Տե՛ս «Коммунист», 9 մայիսի, 1970:

նային Ղարաբաղում: 1945 թ. վերականգնել է իր ուսանողական իրավունքը և շարունակել սովորել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1947 թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել է և նշանակվել աշխատանքի համալսարանում: Սկզբում աշխատել է որպես ասիստենտ, ապա՝ որպես դասախոս բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում: 1955 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1957 թ.՝ ստացել դոցենտի կոչում:

Մինչև 1970 թվականը Ա. Թավադյանը աշխատել է համալսարանում, նույն թվականի սեպտեմբերից՝ Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Հետագայում աշխատել է որպես այդ ինստիտուտի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1980 թվականին:

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ (1910-1989) – Ծնվել է 1910 թ. հունվարի 3-ին Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Հայոց ձոր գավառի Հայք գյուղում: Մանուկ հասակում զրկվել է հորից և քրոջ հետ միասին մնացել մոր խնամքի տակ: 1915 թ. Արևմտյան Հայաստանից գաղթել է Երևան, մեծացել ու նախնական կրթություն ստացել է որբանոցում: 1929 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և մինչև 1933 թվականը աշխատել որպես ուսուցիչ: 1933 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, ավարտել է 1937 թ. և 1938 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ հողժողկոմատում: Մինչև 1940 թվականը աշխատել է որպես պլանբաժնի վարիչի տեղակալ և միաժամանակ դասավանդել ԽՍՀՄ ֆինանսների ժողկոմատի հեռակա ֆինանսական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում: 1939 թվականից մինչև Հայրենական մեծ պատերազմը աշխատել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: Պատերազմի առաջին իսկ օրը Ն. Թովմասյանը կամովին մեկնել է կարմիր բանակ: Մինչև 1942 թ. աշնանը եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերին: 1942 թ. սեպտեմբերին ծանր վիրավորվել է, ապաքինվել, ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի և զո-

րացրվել: Մի որոշ ժամանակ աշխատել է ՀԽՍՀ ֆինանսների մինիստրությունում: 1947 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ քաղաքատնտեսության գծով: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1968 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և 1971 թ. ստացել պրոֆեսորի կոչում:

1964-1966 թթ. Ն. Թովմասյանը աշխատել է որպես տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, 1966-1968 թթ.՝ որպես տնտեսագիտական ինստիտուտի տնօրենի տեղակալ՝ գիտական գծով:

1968-1987 թթ. ղեկավարել է ինստիտուտի տնտեսական մտքի պատմության բաժինը, միաժամանակ շարունակել է մանկավարժական աշխատանքը համալսարանում: Վախճանվել է 1989 թ. նոյեմբերի 17-ին:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ ԵՍԱՅԻ (1917-1980) – Ծնվել է 1917 թ. Լոռու Դսեղ գյուղում: 1935 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1940 թ. ավարտել և ասպիրանտական աշխատանքի է անցել համալսարանում: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ, ավարտել է զենիթային հրետանու ուսումնարանը և ստացել ավագ լեյտենանտի կոչում՝ նշանակվելով սկզբում դասակի հրամանատար, այնուհետև՝ ուսուցողական հատուկ մարտկոցի հրամանատար: Նա իր մաթեմատիկական գիտելիքներն ու հնարամտություններն ի սպաս է դրել զենիթային հրետանավորներ պատրաստելու բարդ ու պատասխանատու գործին: Նա պատրաստել ու ռազմաճակատ է ուղարկել ռազմավարական հակաօդային պաշտպանության հարյուրավոր ռազմական մասնագետներ, որոնք թշնամու դեմ մղվող մարտերում գործի են դրել ժամանակակից հրետանային տեխնիկան:

1942 թ. զենքի նոր տեսակների համալրում ստանալու կապակցությամբ Թումանյանը տեղափոխվել է բանակի շտաբ և դասավանդել հրամանատարական կազմի կուրսերում:

Հրետանավոր սպայական կազմ պատրաստելու և այդ գործում ռազմաճակատի առաջադրանքները ջանասիրությամբ կատարելու համար Բենիկ Թումանյանը պարգևատրվել է մի քանի մեդալներով և հրամանատարության կողմից ստացել բազմաթիվ շնորհակալագրեր:

1946 թ. Բ. Թումանյանը զորացրվել է, վերադարձել համալսարան՝ շարունակելով իր գիտամանկավարժական գործունեությունը: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և որպես դոցենտ աշխատել է նորաստեղծ աստղաֆիզիկայի ամբիոնում: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել ֆիզմաթ գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1972 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974 թվականից մինչև կյանքի վերջը եղել է համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի դեկանը: 1979 թ. գիտամանկավարժական գործունեության համար նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Վախճանվել 1980 թ. փետրվարի 10-ին:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՔՐԻՍՏՓՈՐԻ (1923-1987) – Ծնվել է 1923 թ. փետրվարի 14-ին Մոսկվայում: Ավարտել է Մոսկվայի թիվ 172 դպրոցը: 1941 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1942-1943 թթ. ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմի մարտերին՝ Կովկասյան, Կերչի, Ղրիմի, Կուրսկի ճակատամարտերին: 1943 թ. վերջերին վիրավորվել և զորացրվել բանակից: 1944 թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ և 1949 թ. գերազանցությամբ ավարտել: Նույն թվականին ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա, գործուղվել է Մոսկվայի Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտը: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ս. Թումանյանը ԵՊՀ-ում աշխատել է 1952 թ. որպես ավագ դասախոս, իսկ 1956 թ.՝ դոցենտ: 1956-1957 թթ. եղել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանը, 1961-1965 թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Եղել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնա-

կարգ մասնագիտական կրթության փոխնախագահ: Վախճանվել է 1987 թ. ապրիլի 23-ին:

ԻՆՃԻԿՅԱՆ ԱՐԱՄ ՄԿՐՏԻՉԻ (1910-1975) – Ծնվել է 1910 թ. դեկտեմբերի 29-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1929-1932 թթ., հայոց լեզու և գրականություն է դասավանդել Գորիսի և Ալավերդու շրջանների դպրոցներում: Աշխատանքին զուգահեռ սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո՝ 1933-1934 թթ., դասավանդել է Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումում: 1934-1937 թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում և աշխատել Հայաստանի գրականության թանգարանում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատանքի է անցել ԱրմՖանի պատմության և գրականության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1937 թ. դարձել է գրողների միության անդամ: 1936-1940 թթ. ծառայել է կարմիր բանակում, մասնակցել է 1939-1940 թթ. խորհրդա-ֆիննական պատերազմին: Զորացրվել է՝ շարունակելով աշխատանքը Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտում: 1942 թ. մեկնել է ռազմաճակատ, կռվել է Արևմտյան ռազմաճակատում, վիրավորվել է և գերի ընկել: Եղել է Գերմանիայի բազմաթիվ համակենտրոնացման ճամբարներում: Պատերազմի ավարտից հետո աշխատել է Մանուկ Աբեղյանի անվան լեզվի և գրականության ինստիտուտում: 1946 թ. դարձել է բանասիրական գիտությունների թեկնածու: Նույն թվականին պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» մեդալով: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Թումանյան. կյանքի պատմությունը և գործունեությունը» թեմայով: Նույն թվականին ճանաչվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ա. Ինճիկյանը վախճանվել է 1975 թ. մարտի 22-ին Երևանում:

ԻՍԱԽԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՓՐԵՄԻ (1923-2004) – Ծնվել է 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: 1940 թ. ավարտել է Թալիշի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական

ֆակուլտետը: 1942 թ. ապրիլին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայության նշանակվել 409-րդ հրաձգային դիվիզիայում որպես ռադիոջոկատի հրամանատար: 1942 թ. դեկտեմբերին դիվիզիայի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և մասնակցել Մոզդոկի, Գիորգիևսկիի, Սևաստոպոլի, Կռապոտկինի, Տիխարեցկի, Կուբանի, Սլավյանսկի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին: 1943 թ. գարնանը 409-րդ դիվիզիան տեղափոխվել է Երրորդ ուկրաինական ռազմաճակատ և մասնակցել է Վորոշիլովգրադի, Կրեմենչուգի և Կիրովոգրադի ազատագրմանը: Դնեպրի գետանցման ժամանակ Ա. Իսախանյանը համալսարանի մյուս սան Նալբանդյանի հետ միասին այն ափից ղեկավարել է հրետանու կրակակետերի գործողությունները: Դնեպրի գետանցումից հետո, երբ կարմիր բանակի մարտական գործողությունները ընթացել են Արևմտյան Ուկրաինան, Մոլդավիան և Ռումինիան ազատագրելու համար, Ա. Իսախանյանը մասնակցել է Դնեստրի և Պրուտի գետանցմանը և մոլդավական Ֆլորեշտի, Բելց քաղաքների ազատագրմանը: Դիվիզիան առավել մարտական բարդ խնդիրներ է կատարել Յասի քաղաքի ազատագրման ժամանակ:

1944 թ. օգոստոսին Ա. Իսախանյանին գործուղել են Բաքու՝ Կասպյան բարձրագույն ռազմածովային ուսումնարանում սովորելու: Սակայն նրան չի հաջողվել սովորել, նա վերադարձել է ռազմաճակատ: Այս անգամ նրան ուղարկել են ֆինլանդիայի Պորկկալա Ուդդ թերակղզի՝ ծովային հետևակի 12-րդ զենիթային հրետանու դիվիզիոն, ուր ծառայել է մինչև զորացրվելը:

1946 թ. աշնանը Ա. Իսախանյանը զորացրվել է բանակից և շարունակել իր կիսատ թողած ուսումը համալսարանի երկրաբանական ֆակուլտետում: 1950 թ. գերազանցիկության դիպլոմով ավարտել է և աշխատանքի անցել ՀԽՍՀ մինիստրների խորհրդին կից երկրաբանական վարչությունում: Մինչև 1972 թվականը եղել է ավագ երկրաբան, գլխավոր ինժեներ, ապա՝ արշավախմբի պետ: Ա. Իսախանյանը 1972 թվականից երկրաբանական վարչությունում աշխատել է որպես արշավախմբի գլխավոր երկրաբան: 1967 թ. նրան շնորհվել է վաստակավոր երկրաբանի կոչում: Վախճանվել է 2004 թվականին:

ԻՇԽԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՎԵՏԻՍԻ (1922-1995) – Ծնվել է 1922 թ. Երևանում: 1939 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի անվան) միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը: 1940 թ. հոկտեմբերին երկրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1945 թվականը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ռ. Իշխանյանը մասնակցել է ֆաշիստական զորքերի դեմ մղվող առաջին պաշտպանական մարտերին: 1941 թ. հուլիսի 6-ին Սլուն գետի շրջանում Կոլոդեժնայա գյուղի մոտ տեղի ունեցած կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Ռ. Իշխանյանին նորից ուղարկել են ռազմաճակատ: Նա եղել է 287-րդ գվարդիական գեղի կազմում, հասել է մինչև Պրագա, մասնակցել Չեխոսլովակիայի տարածքի ազատագրմանը: Հրամանատարության կողմից տրված առաջադրանքները հաջող կատարելու համար պարգևատրվել է մեդալներով:

1945 թ. դեկտեմբերին շարքային գվարդիական Ռ. Իշխանյանը զորացրվել է և շարունակել իր կիսատ թողած ուսումը Երևանի պետական համալսարանում: 1949 թ. ավարտել է համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը և նշանակվել աշխատանքի Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում: 1956-1963 թթ. աշխատել է որպես դասախոս հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1974 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1978 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1963-1992 թթ. աշխատել է ԵՊՀ հայոց լեզվի, ապա՝ հայոց լեզվի պատմության ամբիոններում: 1991 թվականից մինչև իր կյանքի վերջը եղել է Հայաստանի ազգային գրադարանի տնօրենը: 1990-1995 թթ. ընտրվել է ՀՀ ԳԽ պատգամավոր: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1995 թ. փետրվարի 6-ին:

ԽԱԼԵՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՄԿՐՏԻՉԻ (1905-1990) – Ծնվել է 1905 թ. մայիսի 25-ին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Ցեղասպա-

նության օրերին զրկվել է ծնողներից և տեղափոխվել Երևանի որբանոցներից մեկը: 1925 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1925-1929 թթ. սովորել է ԵՊՀ իրավաբանական-տնտեսագիտական ֆակուլտետում: 1920-1930-ական թթ. զբաղեցրել է կուսակցական տարբեր պաշտոններ: 1941 թ. օգոստոսին զորակոչվել է բանակ և ծառայել 406-րդ հրաձգային դիվիզիայում որպես ինստրուկտոր: 1942 թ. փետրվարին ավագ քաղղեկ Խալեյանը միացել է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիային և նշանակվել 485-րդ առանձին բժշկասանիտարական մարտկոցի զինվորական կոմիսար: Մասնակցել է Գելենջիկ-Տուապսե-Նովոռոսիյսկի ծանր մարտերին:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: 1985 թ. ստացել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան»:

1945 թ. մայոր Խալեյանը զորացրվել է և անցել աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Վախճանվել է 1990 թ. դեկտեմբերին Երևանում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՄՈՎՍԵՍԻ (1918-2003) – Ծնվել է 1918 թ. Աղրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում: 1935 թ. ավարտել է Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումը: Երկու տարի աշխատել է որպես ուսուցիչ և 1937 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին չորրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Բաքվի հրետանային ուսումնարանում: 1942 թ. ավարտելուց հետո նշանակվել է մարտկոցի հրամանատարի տեղակալ և մասնակցել Բաքվի պաշտպանությանը: 1945 թ. ամռանը հակաօդային պաշտպանության զորամասի հետ ուղարկվել է Առաջին հեռավորարևելյան ռազմաճակատ՝ Ճապոնիայի դեմ կռվելու համար: Մանջուրիայում մասնակցել է ճապոնական Կվանտունյան բանակի դեմ մղվող մարտերին:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: 1946 թ. Գ. Խաչատրյանը զորացրվել է բանակից և շարունակել է սովորել համալսարանի պատմության ֆակուլտետում: Նույն թվականին ավարտել է համալսարանը, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի: 1971 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել պրոֆեսորի կոչում: Այնուհետև աշխատել է Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում: Վախճանվել է 2003 թվականին:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԻՄ ԲԱԼԱՅԻ (1924-1994) – Ծնվել է 1924 թ. Ղափանում: 1941 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. աշնանը համալսարանում կամավորական շարժում է սկսվել՝ դեսանտային զորամասեր ծառայության մեկնելու համար: Կ. Խաչատրյանը եղել է այդ շարժման մասնակիցներից մեկը: Երբ բժշկական հանձնաժողովը չի երաշխավորել նրան՝ դեսանտային զորամասում ծառայելու, նա բազմիցս խնդրել է ուղարկել իրեն համալսարանի կամավորների հետ: Դիմել է ՀԼԿԵՄ կենտկոմին՝ խնդրելով օգնել իրեն: Ի վերջո նրա խնդրանքը կատարվել է: 1944 թ. ստացել է բժշկական հանձնաժողովի համաձայնությունը և Կիրովյան շրջանի զինվորական կոմիսարիատի ուղեգրով մեկնել Բաքու՝ զենիթային դպրոցում սովորելու: Նույն թվականին դպրոցն ավարտելուց հետո նրան ուղարկել են Բաթումի՝ քաղաքն օդային հարձակումներից պաշտպանող հրետանային բրիգադում ծառայելու համար: 1945 թ. ապրիլին Բաթումիի 8-րդ հրետանային բրիգադան, որի կազմում ծառայելիս է եղել Կ. Խաչատրյանը, մեկնել է Հեռավոր Արևելք և օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ակտիվ մասնակցություն է ունեցել ճապոնական կվանտունյան բանակի ջախջախմանը: Բրիգադան ոչ միայն պաշտպանել է կարմիր բանակի զորամասերի հաղորդակցական ուղիները թշնամու օդային հարձակումներից, այլև

կատաղի մարտեր է մղել թշնամու ավիացիայի դեմ: Այն գունդը, որի կազմում եղել է Կ. Խաչատրյանը, խփել է թշնամու մի քանի տասնյակ ինքնաթիռ:

1945 թ. Կ. Խաչատրյանը զորացրվել և շարունակել է սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1950 թ. ավարտել է և ձշանակվել ուսուցչական աշխատանքի Ղափանում: 1952-1954 թթ. աշխատել է որպես ՀԼԿԵՄ շրջկոմի քարտուղար, իսկ 1954 թվականից անցել է կուսակցական աշխատանքի: Եղել է շրջկոմի հրահանգիչ և պրոպագանդայի գծով քարտուղար: 1969 թվականից աշխատել է Ղափանի քաղսովետի գործադիր կոմիտեի նախագահ:

Կ. Խաչատրյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, ՀամԼԿԵՄ կենտկոմի և Խաղաղության պաշտպանության կոմիտեի պատվոգրերով: Վախճանվել է 1994 թվականին:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ ԵՓՐԵՄԻ (1921-1994) – Ծնվել է 1921 թ. Կոտայքի (Աբովյանի) շրջանի Արամուս գյուղում: 1938 թ. ավարտել է Կոտայքի շրջանի Ելղովան գյուղի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժինը: Երբ սկսվել է պատերազմը, Հ. Խաչատրյանը չորրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականին սովորել ու ավարտել է Բաքվի հետևակային հրամանատարական ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել Հարավարևմտյան ռազմաճակատ: Ծառայել է 37-րդ բանակի 218-րդ հրաձգային դիվիզիայում որպես դասակի հրամանատար: Մարտական գործողություններին մասնակցել է 1941 թ. դեկտեմբերից մինչև 1942 թ. մարտի վերջը: Մասնակցել է Ուկրաինայի քաղաքների պաշտպանության համար մղվող մարտերին: 1942 թ. մարտին Կիրովսկ քաղաքի տակ տեղի ունեցող մարտերում ծանր

վիրավորվել է, երկու տեղից ստացել է բարդ վնասվածք և բուժվել տարբեր հոսպիտալներում: Ապաքինվելուց հետո՝ 1943 թ. սկզբին, նրան ուղարկել են ՀՍՍՌ զինվորական կոմիսարիատի տրամադրության տակ: Մինչև 1946 թվականը զինվորական կոմիսարիատում աշխատել է որպես հրահանգիչ: Ռազմաճակատում և կոմիսարիատում ծառայելու ժամանակ պարգևատրվել է մի շարք մեդալներով ու պատվոգրերով:

1944 թ. լեյտենանտ Խաչատրյանը զորացրվել է և շարունակել սովորել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է: Մինչև 1960 թվականը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ-ում որպես կենտրոնական գրադարանի բաժնի վարիչ և տնօրենի տեղակալ՝ գիտական գծով: 1960 թվականից Հ. Խաչատրյանը աշխատել է պետական համալսարանում նախ որպես գրադարանի տնօրեն, ապա՝ որպես ավագ լաբորանտ, իսկ հետագայում՝ որպես ավագ մեթոդաբան: Սկսած 1952 թվականից՝ Հ. Խաչատրյանը համալսարանում ընդհատումներով կատարել է դասախոսական աշխատանք: Վախճանվել է 1994 թվականին:

ԽԱՉԻԿՅԱՆ ՅԱԿՈՎ ԻՎԱՆԻ (1921-2015) – Ծնվել է 1921 թ. հուլիսի 17-ին Ջալալօղլիում (Ստեփանավան): 1938 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ա. Պուշկինի անվան դպրոցը, ապա՝ 1938-1941 թթ., աշխատել է «Կոմունիստ» (ռուսերեն) թերթի խմբագրությունում: 1939-1940 թթ. ծառայել է բանակում սկզբում 31-րդ հրաձգային դիվիզիայի 75-րդ գնդում, որը տեղակայված էր Հյուսիսային Կովկասում, ապա՝ Անդրկովկասի ռազմական շրջանում: 1940 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1942 թ. փետրվարին զորակոչվել է բանակ և ուղարկվել Թբիլիսիի ռազմական ուսումնարան: Ուսումն ավարտելուց հետո շարունակել է ծառայությունը Հայաստանում: 1944 թ. կրտսեր լեյտենանտ Խաչիկյանը ուղարկվել է Առաջին ուկրաինական ռազմաճակատ: Մասնակցել է Բեռլինի գրավմանն ու Պրահայի ազատագրմանը, իսկ 1945 թ. մայիսից մինչև 1946 թ. փետրվարը լեյտենանտ Խաչիկյանը ծառայել է Խորհրդային ռազմական վարչությունում, որը գտնվում էր Գերմանիայում: 1946 թ.

ապրիլին զորացրվել է և վերադարձել Երևան՝ շարունակելով ուսումը: 1949 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: 1949-1952 թթ. սովորել է ասպիրանտուրայում (Երևան-Մոսկվա): 1952-1953 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, 1953 թ.՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում: 1953-1962 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնում, 1962-1969 թթ. ղեկավարել է նշված բաժնի գեղագիտության խումբը: 1969-1973 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1973-1976 թթ.՝ տնօրեն, 1976 թվականից՝ ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, նաև Հայաստանի գրողների միության (1971), Հումանիզմի հիմնախնդիրների (1989), Հայոց փիլիսոփայության (2000), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային (2000), ՌԴ մանկավարժական և սոցիալական գիտությունների (2004) ակադեմիաների անդամ: Ռուսերեն առանձին գրքերով լույս են տեսել Յակով Խաչիկյանի «Ս. Գ. Շահումյանի պայքարը պատմության մեջ ժողովրդական մասսաների դերի մարքս-լենինյան ըմբռնման համար» (Երևան, 1956), «Արվեստի ճանաչողական նշանակության մասին» (Երևան, 1959), «Աբստրակցիոնիզմը և գեղարվեստական ճանաչողությունը» (Երևան, 1968), «Հայաստանում էսթետիկական մտքի զարգացման ակնարկ» (համահեղինակներ Ս. Թովմասյան, Ս. Թոփչյան և ուրիշներ, Մոսկվա, 1976), «Շեքսպիրը արվեստի մասին» (Երևան, 1977) աշխատությունները: Յակով Խաչիկյանի աշխատանքներով Հայաստանում սկզբնավորվել է գեղագիտության և հայ գեղագիտական մտքի պատմության համակարգված ուսումնասիրությունը («Հայ էսթետիկական մտքի պատմությունից» գիտական հետազոտությունների ժողովածու (պրակ 1-5, 1974-2005), «Հայ գեղագիտական մտքի պատմության զարգացման ակնարկ» (ռուսերեն, 1976, համահեղինակ և պատասխանատու խմբագիր)): Հեղինակ է «Հայ գեղագիտական մտքի պատմության մեթոդաբանական հարցեր» (ռուսերեն,

2001) գրքի, եռահատոր հուշագրության (2002-2005) և համահեղինակ՝ «Հայ կերպարվեստագետներն արվեստի մասին» (ռուսերեն, 2004) ժողովածուի: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», ինչպես նաև «Քեռլինի գրավման», «Կովկասի պաշտպանության», «Պրահայի ազատագրման» մեդալներով: Վախճանվել է 2015 թ. մարտի 20-ին Երևանում:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԾՎԻԿ ԳԱԼՈՒՍՏԻ (1916-2005) – Ծնվել է 1916 թ. Ղափանի շրջանի Ծավ գյուղում: 1936 թ. ավարտել է Ղափանի միջնակարգ դպրոցը, նշանակվել հայրենի գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում ուսուցչական աշխատանքի: Մեկ տարի հետո՝ 1938 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նրան ուղարկել են ուսուցչական աշխատանքի: Մեկ տարի հետո՝ 1942 թ., զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել է մինչև պատերազմի հաղթական ավարտը: Երկու տարի խորհրդային զորամասերի հետ եղել է Իրանում և պաշտպանել ԽՍՀՄ հարավային սահմանները: 1944 թ. ավարտել է Գորկու մարզի Կարպով քաղաքի ռազմաքաղաքական ուսումնարանը և ուղարկվել Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ: Մինչև 1945 թ. մայիս ամիսը եղել է մարտական գործողությունների մեջ: Մասնակցել է Լեհաստանի և Չեխոսլովակիայի ազատագրմանը, պարգևատրվել մի շարք մեդալներով:

Հաղթանակից հետո Ա. Կարապետյանը մի տարի ծառայել է Գերմանիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում: Այնուհետև նրան ուղարկել են Անդրկովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ, ուր ծառայել է մինչև 1950 թվականը: Էքստեռն կարգով ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1950 թ. զորացրվել է և նշանակվել աշխատանքի «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: Սկզբում եղել է գրական աշխատող, իսկ հետո՝ բաժնի վարիչ: Եղել է թերթի ուսումնական հաստատությունների և կուլտուրայի բաժնի վարիչը:

Ռազմաճակատներում Ա. Կարապետյանը պարգևատրվել է մի շարք մարտական մեդալներով: 1971 թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի

նախագահության հրամանագրով նրան շնորհվել է ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում: Վախճանվել է 2005 թվականին:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԻՍՐԱՅԵԼԻ (1901-1976) – Ծնվել է 1901 թ. Ղափանի շրջանի (Գեղանուշ) գյուղում: 1914 թ. մահացել է մայրը, իսկ 1920 թ.՝ հայրը: Իր գոյությունը պահպանելու համար մինչև 1917 թվականը որպես սևագործ բանվոր աշխատել է Ղափանի պղնձահանքերում: 1917 թ. վերադարձել է և հայրենի գյուղում բատրակություն արել: 1924 թ. որպես ճուլարանի վարպետ աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձաճուլական գործարանում: 1932-1936 թթ. սովորել ու ավարտել է Երևանի մանկավարժական բանֆակը և ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է և մեկնել կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի քաղաշխատողների վերապատրաստման դպրոցը և որպես քաղաքական աշխատող ուղարկվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Ծառայել է 18-րդ բանակում և մասնակցել Նովոռոսիյսկի շրջանում տեղի ունեցող դեսանտային գործողություններին: 1943 թ. Գ. Կոստանյանին՝ որպես հրետանավոր, ականանետային դասակի հրամանատար, ուղարկել են Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ: 1942 թ. նրանց զորամասը փոխադրվել է Երրորդ ուկրաինական ռազմաճակատ: Գ. Կոստանյանը 28-րդ հրաձգային դիվիզիայի հետ հասել է մինչև Ռումինիա, այստեղից էլ տեղափոխվել է Լեհաստան: Մասնակցել է Սանդոմիրի հենակետի ոչնչացմանը և Բեռլինի համար մղվող վերջին ու վճռական մարտերին: Գերմանիայի կապիտուլացիայից հետո ժամանակավորապես նրան նշանակել են Բեռլինի էլեկտրակայանի պարետ: 1945 թ. սեպտեմբերին նրան ուղարկել են Պոտսդամ, որտեղից էլ նույն թվականի նոյեմբերի 6-ին զորացրվել է:

Ռազմաճակատներում Գ. Կոստանյանը վիրավորվել է երկու անգամ, բայց վերքերի թեթևության պատճառով մարտական շարքից դուրս չի եկել: Մարտական առաջադրանքները արիաբար կատարելու համար Գ. Կոստանյանը պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության համար»,

«Վարշավայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Զորացրվելուց հետո Գ. Կոստանյանը վերադարձել է համալսարան և նշանակվել աշխատանքի: Երկար տարիներ աշխատել է որպես ավագ լաբորանտ երկրաբանական ֆակուլտետի միներալոգիայի լաբորատորիայում: Շուրջ 29 տարի համալսարանում աշխատելուց հետո՝ 1970 թվականից, Գ. Կոստանյանն անցել է թոշակի: Վախճանվել է 1976 թվականին:

ՀԱԿՈԲՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1917-1989) – Ծնվել է 1917 թ. հունիսի 15-ին Ղափանի շրջանի Լեռնաձոր գյուղում: 1940 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1942-1943 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Թ. Հակոբյանը 1962 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1963 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1962-1986 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչը, 1955-1957, 1963-1965 թթ.՝ նույն ֆակուլտետի դեկան: 1968 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Վախճանվել է 1989 թ. հոկտեմբերի 16-ին: Նա երկար տարիներ ԵՊՀ-ում դասավանդել է «տնտեսական աշխարհագրություն», «Հայաստանի պատմական աշխարհագրություն» և այլ առարկաներ: «Երևանի պատմություն» քառահատորյակի հեղինակ է, «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարանի» համահեղինակ:

ՀԱԿՈԲՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐՋՈՒՄԱՆԻ (1915-1985) – Ծնվել է 1915 թ. Ղափանի շրջանի Վաչագան գյուղում: Ավարտել է Ղափանի միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: Չորս տարի որպես դպրոցի վարիչ աշխատելուց հետո՝ 1938 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1942 թ. հուլիսի 7-ին չորրորդ կուրսից կամավոր մեկնել է կարմիր բա-

նակ: Նույն թվականին ավարտել է Ստալինգրադի ռազմաքաղաքական ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և դասակի հրամանատարի պաշտոնով մեկնել Ստալինգրադի ռազմաճակատ: Մասնակցել է քաղաքի պաշտպանական մարտերին: 1942 թ. նոյեմբերին թեթև վիրավորվել է, բայց առանց շարքերից դուրս գալու շարունակել է մասնակցել ռազմական գործողություններին: 1943 թ. ամռանը նրան ուղարկել են Առաջին ուկրաինական ռազմաճակատ, ուր մասնակցել է Կուրսկի տակ ծավալվող կատաղի մարտերին: 1943 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Առաջին ուկրաինական ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում որպես վաշտի հրամանատար մասնակցել է Կիևի ազատագրման մարտերին և Դնեպրի գետանցմանը: 1943 թ. հոկտեմբերի 23-ին ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո համարվել է մարտական ծառայության համար ոչ պիտանի՝ ուղարկվելով թիկունքային զորամաս: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», «Ստալինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1945 թ. Լ. Հակոբյանը զորացրվել է, վերադարձել համալսարան: 1949 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և անցել մանկավարժական աշխատանքի: Եղել է միջնակարգ դպրոցի ուսմասվար և տնօրեն: Այնուհետև աշխատել է գիշերօթիկ դպրոցում որպես ուսուցիչ: Վախճանվել է 1985 թվականին:

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՉԳԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ (1913-1982) – Ծնվել է 1913 թ. փետրվարի 14-ին Աշոցքի շրջանի Լեռնագոգ գյուղում: 1929-1934 թթ. սովորել է Լենինականի Ա. Մռավյանի անվան մանկավարժական տեխնիկումում, միաժամանակ աշխատել է քաղաքային փայտամշակման ֆաբրիկայում որպես բանվոր: Տեխնիկումն ավարտելուց հետո աշխատել է Լենինականի 3-րդ դպրոցում: 1936 թ. ընդունվել և 1941 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Մինչև 1942 թ. փետրվարի 23-ը աշխատել է Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Նալբանդյան գյուղի դպրոցի տնօրեն և պատմության ուսուցիչ, իսկ

այնուհետև զորակոչվել է բանակ: Մինչև 1943 թ. մայիսը մասնակցել է Կովկասի համար մարտերին, վիրավորվել է և զորացրվել: 1944-1947 թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում Հակոբ Մանանդյանի ղեկավարությամբ: 1947 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1969-1974 թթ. դասախոսել է Կիրովականի (Վանաձոր) մանկավարժական ինստիտուտում: 1971-1982 թթ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ:

Վ. Հակոբյանի ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի միջնադարյան պատմության, 18-րդ դարի հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրներին, տարբեր աղբյուրների քննությանը: «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարեր» (հատոր 1-2, 1951-1956 թթ.) ժողովածուում ներկայացրել է 85 ժամանակագրություն, որոնց մեծ մասն առաջին անգամ է դրվել շրջանառության մեջ: Կազմել և հրատարակել է «Կանոնագիրք հայոց»-ի երկու հատորները (1964-1971 թթ., Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ, 1974 թ.), «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարանները» (հատոր 1-3, 1974-1984 թթ., 1-ին հատորը՝ Ա. Հովհաննիսյանի հետ), մասնակցել է 18-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված փաստաթղթերի («Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երրորդում», հատոր 2, մաս 1-2, 1964-1967 թթ., ռուսերեն) և «Մեսրոպ Մաշտոց» (1962 թ.) ժողովածուների ստեղծմանը: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Վախճանվել է 1982 թ. մայիսի 6-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1897-1977) – Ծնվել է 1897 թ. Հյուսիսային Իրանի Արդաբիլ քաղաքում: Տարրական և միջնակարգ կրթությունը ստացել է Թավրիզում: Կուսակցության անդամ է եղել 1917 թվականից: 1917-1921 թթ. Իրանում կատարել է հեղափոխական-քարոզչական աշխատանք, որի համար հետապնդվել է տեղական իշխանությունների կողմից: Հետապնդումից ազատվելու համար տեղափոխվել է Խորհրդային Հայաստան՝ անցնելով կուսակցա-

կան աշխատանքի: 1922-1927 թթ. եղել է Կոտայքի շրջկոմի քարտուղար, Զանգեզուրի գավառային կոմիտեի կազմիրահանգչական բաժնի վարիչ:

1927-1932 թթ. Տ. Հակոբյանը սովորել և ավարտել է Մոսկվայի արևելագիտական ինստիտուտը: 1932-1934 թթ. եղել է Կոմունիստական համալսարանի ռեկտոր և դասախոս: 1934 թվականից մինչև թոշակի անցնելը աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես դասախոս: Երկար տարիներ դասավանդել է նաև հանրապետության մյուս բուհերում, այդ թվում՝ ՀԿԿ կենտկոմին կից երկամյա դպրոցում: 1961 թ. բազմամյա դասախոս ու մանկավարժ Հակոբյանին շնորհվել է գիտությունների վաստակավոր գործչի կոչում:

1941 թ. երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Տ. Հակոբյանը զորակոչվել է կարմիր բանակ: Խորհրդային զորամասերի կազմում ավագ քաղղեկի պաշտոնով մասնակցել է Հյուսիսային Իրանում ծավալված այն գործողություններին, որոնց նպատակն է եղել վնասազերծել գերմանական ռազմական ազդեցության հետևանքները Իրանում, ինչպես, օրինակ, ռազմամթերքի հայտնաբերումն ու բռնագրավումը:

Երբ ավարտվել է Հայրենական մեծ պատերազմը, Տիգրան Հակոբյանը զորացրվել է և նորից շարունակել դասախոսական աշխատանքը համալսարանում: Անցնելով թոշակի՝ չի դադարել աշխատել համալսարանի համար: Նա կատարել է կոնսուլտանտի պարտականություն և իր փորձով շարունակել դաստիարակել երիտասարդ մանկավարժներին: Վախճանվել է 1977 թվականին:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՊԵՏՐՈՍԻ (1920-2007) – Ծնվել է 1920 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշիի շրջանի Կիրով գյուղում: 1938 թ. ավարտել է Ստեփանակերտի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին համալսարանի մի քանի տասնյակ ուսանողների հետ միասին կամովին մեկնել է կարմիր բանակ: Մինչև 1942 թ. մարտ ամիսը սովորել ու ավարտել է Թելավի ռազմական ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և 45 մմ. ականանե-

տային ջոկի հրամանատարի պաշտոնով մեկնել ռազմաճակատ: 1942 թ. հուլիսին նա եղել է Տուլայի ճակատամասում և մասնակցել գերմանական հարձակվող զորամասերի դեմ մղվող կատաղի մարտերին: Մեկուկես տարի Ա. Հայրապետյանը մասնակցել է Տուլայի, Մոսկվայի, Կուրսկի, Օրյոլի, Ժիտոմիրի և Դեսնայի ու Դնեպրի գետանցման համար մղվող կատաղի մարտերին: 1943 թ. նոյեմբերին Դնեպրի գետանցման ժամանակ հրամանատարության առաջադրանքը անձնվիրաբար կատարելու համար Ա. Հայրապետյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, իսկ հետագա մարտական գործողությունների համար՝ նաև մի շարք մեդալներով: Մինչև 1944 թ. հունվարի 3-ը եղել է մարտերի մեջ: Ուկրաինայի Նովգորոդ-Վոլինսկի քաղաքի տակ տեղի ունեցած մարտի ժամանակ՝ 1944 թ. հունվարի 3-ին, Ա. Հայրապետյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Երկար ժամանակ բուժվելուց հետո համարվել է ոչ պիտանի շարային ծառայության համար: Մինչև 1946 թվականը ծառայել է թիկունքային զորամասերում և զորացրվել:

Ա. Հայրապետյանը շարունակել է սովորել Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է և մինչև 1951 թվականը աշխատել է Լեռնային Ղարաբաղի ԼԿԵՄ մարզկոմում որպես ագիտացիայի և պրոպագանդայի գծով քարտուղար, իսկ 1951-1952 թթ.՝ Ադրբեջանի ԿԿ կենտկոմի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում որպես կուսակցական բաժնի գրական աշխատող: 1952 թվականից Ա. Հայրապետյանը իր գործունեությունը ծավալել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության և քաղաքատնտեսության ամբիոնում: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և դասախոսել ԽՄԿԿ պատմություն: Վախճանվել է 2007 թվականին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԻ (1920-2014) – Նիկոլայ Հարությունյանը ծնվել է 1920 թ. օգոստոսի 7-ին Գանձակ քաղաքում: 1938 թ. գերազանցությամբ ավարտել է միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայերեն բաժինը, որն ավարտել է 1942 թվա-

կանին: Ավարտելուց հետո աշխատել է Երևանի համար 36 միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1943 թ. զորակոչվել է ծառայության և սովորել է Բաքվի զենիթահրթիռային ուսումնարանում, իսկ հետո՝ նույն տարվա մայիսին, մեկնել է ռազմաճակատ, որտեղ ծառայել է 1085-րդ առանձին զենիթային գնդում որպես հրամանատար: Զորամիավորումը տեղակայված էր Վոլգա գետի ափին՝ Կամիշինո քաղաքի շրջանում (գտնվում է Ստալինգրադից հյուսիս): 1944-1945 թթ. Ն. Հարությունյանը շարունակել է ուսումը Չկալովկայի (Օրենբուրգ) զենիթահրետանային ուսումնարանում, որն ավարտելով՝ ստացել է կրտսեր լեյտենանտի զինվորական կոչում: Զորացրվելուց հետո աշխատել է «Սովետական դպրոց» թերթում, իսկ 1948-1951 թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայում «ուրարտագիտություն» մասնագիտությամբ՝ ղեկավարվելով Լենինգրադի պետական համալսարանի կողմից: 1953-1954 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայի բաժնի պետ: 1955-1959 թթ. աշխատել է ԳԱ պատմության, 1959-1971 թթ.՝ հնագիտության և ազգագրության, 1971 թվականից՝ արևելագիտության (Հին Արևելքի բաժնի վարիչ) ինստիտուտներում: 1983 թվականից դասավանդել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում:

Ն. Հարությունյանի աշխատությունները վերաբերում են Ուրարտուի (Արարատյան թագավորության) ռազմաքաղաքական պատմությանը, տեղանվանագիտությանը, երկրագործությանն ու անասնապահությանը, նորագյուտ սեպագիր աղբյուրների ուսումնասիրությանը, մշակույթին:

Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Վախճանվել է 2014 թ. օգոստոսի 5-ին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ (1915-) – Ծնվել է 1915 թ. Լենինականում (Գյումրի): 1934 թ. ավարտել է Լենինականի շինարարական տեխնիկումը և նույն տարում ընդունվել Երևանի պե-

տական համալսարանի ֆիզիկամաթեմաթիկական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Բաքվի զենիթային հրետանու ուսումնարանում: 1942 թ. ավարտել է, ստացել լեյտենանտի կոչում և նշանակվել վաշտի հրամանատար զենիթաօդային պաշտպանության բրիգադայում: Մասնակցել է Ապշերոնյան թերակղզու, Բաքվի օդային պաշտպանությանը և Կրասնովոդսկի մերձծովյան հատուկ նշանակություն ունեցող մշտական կապի շինարարությանը: Թշնամու օդային հարձակումներից պաշտպանվելու, Անդրկովկասյան օկրուգի օդային պաշտպանության սպայական կադրեր պատրաստելու, Ամերիկյան զենիթային հրետանու տեխնիկան ուսումնասիրելու գործում ցուցաբերած մարտական ծառայությունների համար Գ. Հովհաննիսյանը պարգևատրվել է շքանշաններով և բազմիցս արժանացել խրախուսանքների:

1947 թ. լեյտենանտ Հովհաննիսյանը զորացրվել է, սովորել ասպիրանտուրայում, 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և անցել դասախոսական աշխատանքի ԵՊՀ էլեկտրականության ու տատանումների ֆիզիկայի ամբիոնում: 1965 թվականից դասախոսել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ (1920-2008) – Ծնվել է 1920 թ. Կոտայքի շրջանի Գառնի գյուղում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: Դեռ չավարտած՝ 1942 թ. փետրվարին զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայել է հայրենական 408-րդ դիվիզիայում, իսկ հետո՝ 109-րդ գվարդիական դիվիզիայի 312-րդ հրաձգային գնդում: Հ. Հովհաննիսյանը եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Կովկասի մի շարք քաղաքների ազատագրման համար մղվող կատաղի մարտերին: 1943 թ. աշնանը Մոզդոկում ծանր վիրավորվել է, ապաքինվել և զորացրվել բանակից: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «1941- 1945 թթ. Հայրենա-

կան մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: 1943 թ.՝ զորացրվելուց հետո, Հ. Հովհաննիսյանը վերադարձել է համալսարան՝ շարունակելով ուսումը աշխարհագրական ֆակուլտետում, 1945 թ. ավարտել է և երեք տարի այլ աշխատանքներ կատարելուց հետո անցել է դասախոսական աշխատանքի: 1949 թվականից Հ. Հովհաննիսյանը նախ ավագ դասախոսի, ապա դոցենտի պաշտոններով աշխատել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի տնտեսական աշխարհագրության ամբիոնում: Վախճանվել է 2008 մայիսի 5-ին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՂԱԶԱՐ ՍՈՍԻՆԻ (1920-1981) – Ծնվել է 1920 թ. Թալինի շրջանի Դաղալու (Եղնիկ) գյուղում: 1938 թ. ավարտել է Թալինի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը՝ 1941 թ. օգոստոսի 5-ին, երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Մինչև նոյեմբեր Դիլիջանում ու Ավճալայում ծառայելուց հետո մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Տագանրոգի համար մղվող կատաղի մարտերին: Երկու անգամ թեթև վիրավորվել է, առանց շարքից դուրս գալու շարունակել է մասնակցել մարտական գործողություններին:

1942 թ. մարտի 8-ին սկսվել է խորհրդային զորքերի վճռական հարձակումը, որի ժամանակ Ղ. Հովհաննիսյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ նախ Կիսլավոդսկ, իսկ հետո՝ Երևան: 1942 թ. հունիսին՝ ապաքինվելուց հետո, մոբիլիզացիոն կարգով նա ուղարկվել է՝ մի շարք քաղաքացիական հանձնարարություններ կատարելու: 1944 թ. զորացրվել է և վերադարձել համալսարան: 1946 թ. ավարտել է և աշխատանքի նշանակվել ՀԽՍՀ ֆինանսների մինիստրությունում: 1952-1956 թթ. դասավանդել է Ֆինանսական տեխնիկումում: 1956-1958 թթ. աշխատել է ՀԽՍՀ ժողտնտխորհում, 1959-1961 թթ.՝ Պետական վերահսկողության հանձնաժողովում, 1961-1972 թթ.՝ նորից ֆինանսների մինիստրությունում, 1974 թ.՝ Հայկոոպում: 1974 թ. հունիսից աշխատել է ՀԽՍՀ պետական ապահովության

վարչությունում: 1967 թ. նրան շնորհել են վաստակավոր տնտեսագետի կոչում: Վախճանվել է 1981 թ. մայիսի 13-ին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՍԱԿ ԼԵՎՈՆԻ (1911-2003) – Ծնվել է 1911 թ. Էջմիածնի շրջանի Ներքին Խաթունարխ գյուղում: 1931 թ. ավարտել է Էջմիածնի մանկավարժական տեխնիկումը և մինչև 1933 թվականը աշխատել է Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար ու մաթեմատիկայի ուսուցիչ: 1933 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1935 թվականը: Զորացրումից հետո՝ 1935 թ., նորից անցել է ուսուցչական աշխատանքի Կիրովականի (Վանաձոր) շրջանի Մեղրուտ գյուղի միջնակարգ դպրոցում: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1941 թ. սեպտեմբերին նորից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայությունը մինչև 1942 թվականը անցկացրել Լենինականում (Գյումրի): 1942 թ. սկզբին մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և մասնակցել Ռոստովի ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թ. հունվարին Ռոստովի տակ տեղի ունեցած մարտերից մեկում գերի է ընկել և ուղարկվել Գերմանիա՝ տաժանակիր աշխատանքի: Վեց ամիս Գերմանիայում մնալուց հետո նրան տեղափոխել են Ավստրիա: Անտառում աշխատելիս տեղացի բնակիչներից մեկի օգնությամբ, իր չորս ռուս գերի ընկերների հետ փախել է Սլովակիա՝ միանալով Սլովակիայի պարտիզանական ջոկատներին: 1944 թ. մասնակցել Սլովակիայում ծավալված պարտիզանական շարժմանը և ազգային ազատագրական ապստամբությանը: 1944 թ. սեպտեմբերին «անհայտ կորած» Միասկից հարազատները ստացել են մի նամակ, որում պարտիզանը գրել է հետևյալը. «Ես կենդանի եմ և առողջ, գտնվում եմ սլովակյան պարտիզանական խմբում: Մենք՝ ռուս, հայ, սլովակ, չեխ, սերբ պարտիզաններս, միասին կռվում ենք Գերմանական զավթիչների դեմ և սպասում ենք կարմիր բանակի գալուն»[221]:

1969 թ., երբ Սլովակիայի ազատագրված ժողովուրդը տոնել է ժողովրդական ապստամբության 25-ամյակը, շատ-շատերի հետ տո-

[221] **Մ. Հակոբյան**, Աստղերը չեն ընկնում, 1970, էջ 349,

նակատարությանը մասնակցելու են հրավիրվել նաև Միսակ Հովհաննիսյանը և նրա կինը: Նրանք երկուսով եղել են այն վայրերում, որտեղ Միսակը կռվել էր իր պարտիզան ընկերների հետ: Տոնակատարության առթիվ Մ. Հովհաննիսյանը պարգևատրվել է շքանշանով՝ պարտիզանական շարժմանը մասնակցելու համար:

Մ. Հովհաննիսյանը Սլովակիայի պարտիզանների շարքերում եղել է մինչև 1945 թ. փետրվարի 2-ը: Այդ օրը նա միացել է Սլովակիայի Կոշիցա քաղաքի ուղղությամբ հարձակվող Չորրորդ ուկրաինական ռազմաճակատի զորամասերին: Սույն թվականի մարտի վերջին Մ. Հովհաննիսյանը վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո՝ դեկտեմբերին, զորացրվել է և վերադարձել Երևան: 1946-1964 թթ. աշխատել է Երկոշ ֆաբրիկայում, իսկ 1964-1967 թթ.՝ Երևանի կոշիկի առաջին ֆաբրիկայում որպես պլանբաժնի վարիչ: 1967 թ. աշխատանքի է անցել թեթև արդյունաբերության համակարգում, իսկ 1971 թվականից անցել է թոշակի: Վախճանվել է 2003 թվականին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՇԱՀԵՆ ՍԱՐԳԻՍԻ (1916-2004) – Ծնվել է 1916 թ. օգոստոսի 16-ին Կարսի մարզում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և 1941 թ. հունիսի 10-ին զորակոչվել է բանակ: Սովորել է Մոսկվայի Ջերժինսկու անվան հրետանային ակադեմիայում: Մասնակցել է Կովկասի համար մարտերին և Ուկրաինայի հարավային շրջանների ազատագրությանը: Զորացրվել է 1946 թ. որպես ավագ լեյտենանտ-տեխնիկ:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով:

1947 թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ տարբեր ստորաբաժանումներում: 1952-1955 թթ. զուգահեռաբար աշխատել է նաև ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում, իսկ 1968-1970 թթ.՝ Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1985 թ. պարգևատրվել է «Հայրենա-

կան պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 2004 թվականին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Աբովյանի շրջանի Գյումրեզ գյուղում: 1938 թ. ավարտել է Երևանի թիվ 16 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1942 թ., երբ նա սովորելիս է եղել վերջին՝ 5-րդ կուրսում, զորակոչվել է կարմիր բանակ և կարճ ժամանակ անց մեկնել ռազմաճակատ: Ս. Հովհաննիսյանը եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում և մասնակցել Թամանյան թերակղզու, Թաման քաղաքի, Ղրիմի, Կերչի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրման, ինչպես նաև Ֆրանկֆուրտի ու Բեռլինի գրավման համար մղվող մարտերին: 1942 թվականից մինչև պատերազմի հաղթական ավարտը Ս. Հովհաննիսյանը ծառայել է 89-րդ հայկական դիվիզիայում և վարել է մի քանի պաշտոններ՝ վաշտի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, գնդի քաղաքական աշխատող և սպայի պատվի դատարանի նախագահ: Ռազմաճակատներում կապիտան Հովհաննիսյանը վիրավորվել է երկու անգամ. առաջին անգամ՝ 1941 թ. հունվարի 21-ին՝ Կերչ քաղաքի գրավման համար մղվող մարտերի ժամանակ, իսկ երկրորդ անգամ՝ 1945 թ. փետրվարի 7-ին Օդերի ափին պլացդարմ գրավելու ժամանակ: Երկու անգամ էլ տարբեր հոսպիտալներում ապաքինվել է և վերադարձել ռազմաճակատ:

Ռազմաճակատներում մարտական առաջադրանքները արիաբար կատարելու համար Ս. Հովհաննիսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», երեք «Կարմիր աստղ» շքանշաններով, 11 մարտական մեդալներով և ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր հրամանատարի անունից՝ 16 գրավոր շնորհակալագրերով: 1946 թ. օգոստոսին Ս. Հովհաննիսյանը զորացրվել է և աշխատանքի անցել դատախազության համակարգում: 1946-1948 թթ. աշխատել է Նոր Բայազետի, իսկ 1948-1949 թթ.՝ Երևանի քաղաքային դատախազությունում որպես քննիչ: 1952 թ. նրան նշանակել են Կիրովականի օկրուգի դատախազ, օկրուգի վերացումից հետո՝

Կիրովականի դատախազ: 1954 թվականից մինչև 1970 թվականն աշխատել է Երևանում: Եղել է Լենինյան և Շահումյան շրջանների, իսկ 1970 թվականից՝ ՀԽՍՀ դատախազության քննչական բաժնի դատախազ: 1969 թ. Ս. Հովհաննիսյանի անունը գրանցվել է ՀԱՄԽ-ի պատվո գրքում, իսկ նույն թվականի սեպտեմբերին նրան շնորհվել է վաստակավոր իրավաբանի կոչում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎՐՈՒՅՐ ԱՐՇԱԿԻ (1919-1965) – Ծնվել է 1919 թ. Նոր Բայազետի (Կամո) շրջանի Դուլայի (Կարմիր) գյուղում: 1930 թ. ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Երևան: 1937 թ. ավարտել է Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է և համալսարանի առաջին կամավորական խմբերից մեկի հետ մեկնել է կարմիր բանակ: Ծառայել է թշնամու թիկունքում մարտնչող խորհրդային կանոնավոր զորամասերում և պարտիզանական ջոկատներում: 1945 թ. զորացրվել է և վերադարձել համալսարան: 1946 թ. ընդունվել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետին կից ասպիրանտուրան, որն ավարտել է 1950 թվականին: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1956 թ.՝ ստացել դոցենտի կոչում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո դասախոսական աշխատանքի է անցել Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1957 թ. Վ. Հովհաննիսյանը փոխադրվել է համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և մինչև իր կյանքի վերջը՝ 1965 թվականը, աշխատել որպես դասախոս: Վախճանվել է 1965 թ. դեկտեմբերի 4-ին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՂԱՄԻ (Խորհրդային Միության հերոս) (1904-1992) – Ծնվել է 1904 թ. Բաքվում: Վաղ հասակում կորցրել է ծնողներին և տնտեսական ծանր պայմանների պատճառով թողել դպրոցը: 1920 թ. կարմիր բանակի հայկական մի զորամասում ծառայել է որպես ցրիչ: Այնուհետև սովորել ու ավարտել է Երևանի Մյասնիկյանի անվան, ապա՝ Թիֆլիսի ռազմական դպրոցները: Նա կարմիր բանակում վարել է մի շարք պատասխանատու

պաշտոններ, ապա՝ նշանակվել Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնի վարիչ:

1941 թ.՝ պատերազմի առաջին օրերին, Ա. Ղազարյանը մեկնել է կարմիր բանակ, նշանակվել է գնդի հրամանատար և օգոստոսին սկսել իր առաջին մարտերը գերմանական զավթիչների դեմ: Դնեպրի ափին մղված համառ մարտերի ժամանակ փոխգնդապետ Ա. Ղազարյանը վիրավորվել է: Բուժվելուց հետո նրան ուղարկել են Կույբիշև՝ նշանակելով բրիգադի հրամանատար: 1942 թ. սկզբին Ա. Ղազարյանի հրաձգային բրիգադը մտել է Բրյանսկի ռազմաճակատ և արիաբար պաշտպանել բնագծերը թշնամու գրոհներից: Հմտորեն մարտեր վարելու համար նրան շնորհվել է գնդապետի կոչում: 1942 թ. վերջերին Ա. Ղազարյանի հրաձգային բրիգադը վերակազմվել է, դարձել հրաձգային դիվիզիա, իսկ ինքը նշանակվել է հրամանատար: 1942-1943 թթ. ընթացքում Ա. Ղազարյանի դիվիզիան իր մարտական գործողություններով մեծ անուն է վաստակել ռազմաճակատում և պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով», իսկ ինքը՝ գնդապետ Ղազարյանը, ստացել է գեներալ-մայորի կոչում:

Գեներալ Ղազարյանի 74-րդ հրաձգային դիվիզիան հետագայում հաջող մարտեր է ծավալել Օրյոլ և Բելգորոդ քաղաքների ազատագրման ժամանակ: Առանց տեխնիկական հարմարանքների Ա. Ղազարյանը անցել է Դեսնա գետը և իր քաջագործություններով համբավ տարածել ամբողջ ռազմաճակատում: Այդ հաղթանակի համար բանակի ռազմական խորհուրդը հրապարակել է հատուկ թռուցիկ՝ ուղղված բանակի անձնակազմին: Թռուցիկում ասված էր. «Առա՛ջ դեպի Արևմուտք, համարձակորեն հաղթահարե՛ք ջրային արգելքները, ինչպես Ղազարյանի և Գուդզի քաջարի մարտիկները...»:

Երբ կարմիր բանակի զորամասերը մոտեցել են Դնեպրին, գեներալ-մայոր Ղազարյանը առաջադրանք է ստացել՝ հաղթահարելու ջրային արգելքը և ապահովելու գետանցումը: Ռազմաճակատի համար կարևոր նշանակություն ունեցող այդ խնդիրը կատարելու համար Ա. Ղազարյանն իր 380 մարտիկներով անցել է գետը և հետ

շպրտել թշնամու 100-ից ավելի գրոհները: Այդ անօրինակ սխրանքի համար գեներալ-մայոր Ղազարյանն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Հաղթանակից հետո գեներալ-մայոր Ղազարյանը փոխադրվել է Հեռավոր Արևելք և կռվել ճապոնական զորամասերի դեմ: Նրա դիվիզիան մյուս զորամիավորումների հետ միասին բազմիցս ճեղքել է ճապոնական բանակի ամրացված շրջանները: 1945 թ. ճապոնական ագրեսորների դեմ մղվող մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար Ա. Ղազարյանը պարգևատրվել է «Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով»:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո համալսարանի դասախոս, ամբիոնի վարիչ, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը երկար տարիներ ղեկավարել է առանձին զորամիավորումներ: 1955 թվականից եղել է պահեստի գեներալ[222]: Վախճանվել է 1992 թ. հունվարի 18-ին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ՄԵԼԻՔՍԵԹԻ (1914-1987) – Ծնվել է 1914 թ. Աղավնաձոր գյուղում: 1932-1935 թթ. մասնակցել է Կաուչուկի գործարանի թատերախմբի աշխատանքներին: Ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը՝ Նոր Խարբերդում նշանակվելով քիմիայի և կենսաբանության ուսուցիչ[223]: Դասավանդել է ընդամենը երկու տարի: 1935 թ. մասնակցել է Արմեն Գուլակյանի ղեկավարած թատերական 6-ամսյա դասընթացներին և որպես դերասան աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում: 1939-1941 թթ. աշխատել է Կոտայքի շրջանային պետական թատրոնում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, այնուհետև կրկին վերադարձել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն: Ա. Ղազարյանի լավագույն դերերից են՝ Համբո (Թումանյանի «Գիքոր»), Ներսես Աշտարակեցի (Դ. Ղազազյանի «Խաչատուր Աբովյան»), Ծերուն հայրիկ (Գրիգոր Յաղջյանի «Ոսկի

[222] Գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանի մասին տեղեկությունները վերցված են Արմո Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գրքից, Երևան, 1965:
[223] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Մուսաները չլռեցին, հ. 2, էջ 221:

քաղաք») Սուրաթով (Սունդուկյանի «Էլի մեկ զոհ»), Սաղաթել, Էլիզբարով (Շիրվանզադեի «Պատվի համար»), Արթուր Մոնտանելի (Վոյնիչի «Բոռ»), Միլլեր (Շիլլերի «Սեր և խարդավանք»), Նեզնամով, Դուդուկին (Ալեքսանդր Օստրովսկու «Անմեղ մեղավորներ»): Հեղինակ է մի շարք պիեսների՝ «Ցասման Միեր», «Երեք գիշեր», «Լուսաբաց» և այլն: Վախճանվել է 1987 թ.:

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՀՈՎՍԵՓԻ (1918-2002) – Ծնվել է 1918 թ. Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: 1934 թ. ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը և նույն տարում նշանակվել ուսուցչական աշխատանքի Քարահունջ գյուղի միջնակարգ դպրոցում: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1941 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: Նույն թվականին սովորել ու ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել Ղրիմի ռազմաճակատ: Մասնակցել է Ղրիմի պաշտպանության համար մղվող առաջին կատաղի մարտերին: 1942 թ. ապրիլին մարտերից մեկում ծանր վիրավորվել է և ազատվել զորամասերում ծառայելուց: Նույն թվականին նա նշանակվել է ուսուցիչ Երևանի 17-րդ հատուկ հրետանային դպրոցում, որտեղ պատրաստել է հրետանավորներ ռազմաճակատի համար: Զինվորական ծառայությանը համընթաց սովորել ու ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան՝ բույսերի ֆիզիոլոգիայի գծով: 1945 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նշանակվել աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ բուսաբանական ինստիտուտում: Սկզբում եղել է կրտսեր, հետո՝ ավագ գիտաշխատող, իսկ 1946 թ.՝ ֆիզիոլոգիայի լաբորատորիայի վարիչ: 1949 թ. նրան նշանակել են ՀԽՍՀ ԳԱ բուսաբանական ինստիտուտի և այգու տնօրեն: 1951 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել դոկտորի գիտական աստիճան, իսկ մեկ տարի անց՝ պրոֆեսորի կոչում: 1946 թ. եղել է ԳԱ բուսաբանության ինստիտուտի բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիայի վարիչ, 1949-1988 թթ.՝ տնօրեն, 1988 թվականից՝ գիտական խորհրդատու, 1970-1992 թթ.՝ ԳԱ կենսաբանության գիտական բաժանմունքի ակադեմի-

կոս-քարտուղար, 1970-1994 թթ.՝ նախագահության անդամ, 1994-2002 թթ.՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի պատվավոր տնօրեն:

Գիտական հետազոտությունները վերաբերում են բույսերի ֆիզիոլոգիային, բարձրակարգ բույսերի անհատական զարգացման և ծերացման հիմնահարցերին, բույսերի կենսագործունեության ակտիվացման, ցածրաբուն անտառների աճման և արդյունավետության վաղաժամ անկման գործընթացների պարզաբանման օրինաչափություններին: 1985 թ. պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 2002 թ. օգոստոսի 9-ին:

ՂԱՍԱԲՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲԻ (1920-1991) – Ծնվել է 1920 թ. Կարսում: Նույն տարում նրանց ընտանիքը գաղթել և բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլում (Լենինական): 1931 թ. տեղափոխվել է Երևան: Սովորել ու ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1936 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և դեռ չավարտած՝ զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. դեկտեմբերին ավարտել է Բաքվի ռազմահետևակային ուսումնարանը, ստացել սպայի կոչում և որպես ականանետային դասակի հրամանատար մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Ռոստովի համար մղվող մարտերից մեկում վիրավորվել է, ուղարկվել հոսպիտալ: Երկու ամիս հետո ապաքինվել է և վերադարձել նույն ռազմաճակատը: 18-րդ բանակի 295-րդ դիվիզիայի կազմում մասնակցել է Նովոռոսիյսկի ազատագրման համար ծավալվող դեսանտային գործողություններին: Ռ. Ղասաբյանը մասնակցել է Կրասնոդարի երկրամասի, Հարավային Ուկրաինայի, Խերսոնի, Նիկոլաևի, Օդեսայի ազատագրմանը: Նա իր դեսանտային վաշտով անցել է Դնեպր գետը և կասեցրել թշնամու առաջխաղացումը:

1943 թ. մայիսին՝ Յասի-Քիշնևի մարտերում, Ռ. Ղասաբյանը ստացել է կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Ռազմաճակատում նա պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկի» շքանշանով, «Արիության

համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և մի շարք այլ մեդալներով: Խերսոն, Նիկոլաև և Օչակով քաղաքների ազատագրման ժամանակ ստացել է նաև գերագույն գլխավոր հրամանատարի ստորագրությամբ շնորհակալագրեր: Պատերազմի թեժ մարտերում 1943 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը:

1944 թ. Ռ. Ղասաբյանը վատառողջ լինելու պատճառով զորացրվել է և շարունակել սովորել համալսարանի բանասիրական ֆակուլտետում՝ միաժամանակ աշխատելով ՀԼԿԵՄ կենտկոմում և Երևանի քաղաքային կոմիտեում: 1948 թ. խմբագրի պաշտոնով աշխատանքի է անցել ռադիոկոմիտեում: Քսան տարի ռադիոկոմիտեում աշխատելուց հետո տեղափոխվել է հեռուստատեսության ստուդիա, որտեղ աշխատել է որպես մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագիր: Բազմամյա աշխատանքի համար Ռ. Ղասաբյանը ստացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում և երկու անգամ պարգևատրվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով: Վախճանվել է 1991 թվականին:

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԻՇԽԱՆ ԱՂԱԼՈՅԻ (1916-2005) – Ծնվել է 1916 թ. Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Թելավի հետևակային դպրոցը: 1942 թ. ավարտել է և վաշտի հրամանատարի պաշտոնով ուղարկվել Ղրիմի ռազմաճակատ: Սեմիկոլոդեց ավանի մոտ տեղի ունեցող մարտում վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո կարճ ժամանակով եղել է Կովկասյան ռազմական օկրուգի տրամադրության տակ: 1943 թ. գարնանը նրան նորից ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Օրջոնիկիձե քաղաքի մոտ նորից ծանր վիրավորվել է, ապաքինվել և ուղարկվել սկզբում Բաքու՝ տանկային բրիգադա, իսկ հետո՝ Թամանյան դիվիզիա: Ռազմական գործողություններում մատուցած ծառայությունների

համար պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1947 թ. Ի. Ղարագյոզյանը բանակից զորացրվել է, հանճնել է պետական քննությունները, ստացել պատմաբանի որակավորում և սկսել է աշխատել որպես պատմության ուսուցիչ Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի անվան) դպրոցում: Վախճանվել է 2005 թվականին:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ (1920-1999) – Ծնվել է 1920 թ. Լենինականում (Գյումրի): 1937 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի անվան) միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 4-րդ կուրսի ուսանող Գևորգ Ղարիբջանյանը համալսարանի շատ հայրենասեր ուսանողների հետ միասին կամովին մեկնել է կարմիր բանակ: 1941 թ. սովորել ու ավարտել է Թելավի ռազմահրետանային ուսումնարանը՝ նշանակվելով սկզբում ջոկի, ապա՝ դասակի հրամանատար: Նախ եղել է Կովկասյան, այնուհետև՝ Կալինինյան ու Արևմտյան ռազմաճակատներում: 1944 թ. որպես գնդացրային դասակի ու վաշտի հրամանատար մասնակցել է Սմոլենշչինայի (Դուխովշչինա, Սմոլենսկ, Ռուդնյա) ազատագրմանը: Այդ մարտերում երկու անգամ վիրավորվել է, հոսպիտալներում ապաքինվել և նշանակվել Անդրկովկասի ռազմաճակատի «Մարտիկ» թերթի թղթակից-կազմակերպիչ, ապա կապիտան Գ. Ղարիբջանյանը ծառայել է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայում նախ որպես «Կարմիր զինվոր» թերթի պատասխանատու քարտուղար, ապա՝ խմբագրի տեղակալ: 1948 թ. օգոստոսին նա ընտրվել է ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար և այդ կապակցությամբ զորացրվել խորհրդային բանակի շարքերից:

1944 թ. Գ. Ղարիբջանյանը հանճնել է պետական քննությունները և ավարտել ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1946-1947 թթ. սովորել ու ավարտել է ասպիրանտուրան: 1948 թ. պաշտպանել է թեկնա-

ծուական, 1955 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1957 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ ակադեմիկոս: 1977-1982 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1985 թվականից մինչև կյանքի վերջը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը: 1947-1999 թթ. նա դասախոսել է ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում: Գ. Ղարիբջանյանը եղել է Հայաստանի գրողների, ինչպես նաև ժուռնալիստների միության անդամ: Հեղինակ է ավելի քան 300 գիտական աշխատությունների և հրապարակախոսական հոդվածների: Եղել է ԽՍԿԿ 22-րդ և 23-րդ համագումարների, ԽՍՀՄ VIVII, ՀԽՍՀ VIIIIX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1954-1981 թթ.՝ ՀԿԿ ԿԿ անդամ, 1966-1969 թթ.՝ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու: 1968 թ. Գ. Ղարիբջանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, «Խաչատուր Աբովյան» և այլ մեդալներով: Վախճանվել է 1999 թ. դեկտեմբերի 28-ին Երևանում:

ՃՇՄԱՐԻՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԵԿԻ (1906-) – Ծնվել է 1906 թ. Ստեփանավանի շրջանի Գյառ-Գյառ (Գարգառ) գյուղում: Տեղի տարրական դպրոցն ավարտելուց հետո մեկնել է Կիրովական (Վանաձոր), սովորել ու ավարտել է Կիրովականի մանկավարժական ուսումնարանը: 1931-1938 թթ. աշխատել է Լուսավորության մինիստրության ցանցում: Եղել է ուսուցիչ, դպրոցի տնօրեն և ժողկրթբաժնի վարիչ: 1938 թ. ընդունվել է պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և սովորել մինչև 1941 թվականը: Պատերազմի առաջին իսկ օրերին մեկնել է կարմիր բանակ և մասնակցել Ուկրաինայի քաղաքների պաշտպանության համար մղվող մարտերին: 1942 թ. մայիսին Խարկովի պաշտպանության ժամանակ Ս. Ճշմարիտյանն ընկել է շրջապատման մեջ և գերվել թշնամու կողմից: Այդ օրվանից սկսվել

է նրա կյանքի տառապալից ուղին: Ֆաշիստական դահիճները բազմաթիվ գերիների հետ միասին նրան քշել են Խարկովի, Օրյոլի, Խերսոնի, Նիկոլաևի, ապա՝ մահվան ճամբարները: Չկարողանալով տանել ճամբարային հրեշավոր պայմանները՝ Ս. Ճշմարիտյանն իր երեք ընկերների հետ մի քանի անգամ փախուստի փորձեր է կատարել, և նրանց նկատմամբ կիրառել են ծանր պատիժ:

1943 թ. ամռանը ֆաշիստական ճամբարում Ս. Ճշմարիտյանը հիվանդացել է տիֆով: Իբր թե բուժման համար տեղափոխել են գերիների հոսպիտալ: Սակայն այնտեղ տարածված են եղել նաև այլ սարսափելի հիվանդություններ, որոնց պատճառով օրական մահացել են մի քանի տասնյակ հիվանդ գերիներ:

1943 թ. Ս. Ճշմարիտյանին ուղարկել են Ռումինիայի Բուզավո քաղաքի համակենտրոնացման ճամբարը: Այդտեղ նրան հաջողվել է իրականացնել իր երազանքը: Դաշտային աշխատանքի ժամանակ մի ռազմագերու հետ փախել է՝ միանալով ռումին պարտիզաններին: Մի ամիս պարտիզանների մոտ մնալուց հետո միացել է կարմիր բանակի զորամասերին՝ մասնակցելով նրանց հարձակողական մարտերին: 1945 թ. մարտի 21-ին վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Բուդապեշտի ազատագրման ժամանակ աչքի է ընկել իր մարտական ակտիվությամբ, որի համար գերագույն գլխավոր հրամանատարության կողմից ստացել է շնորհակալագիր:

1944 թ. հուլիսին Հայրենական պատերազմի հաշմանդամ դարձած Ս. Ճշմարիտյանը զորացրվել է, վերադարձել համալսարան և շարունակել իր կիսատ թողած ուսումը: 1947 թ. ավարտելով պատմության ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել համալսարանում: Սկզբում եղել է ԵՊՀ մարքսիզմ-լենինիզմի ամբիոնին կից կաբինետի վարիչ, իսկ 1964 թվականից աշխատել է մանկավարժության ամբիոնում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՓՐԵՄ ՂԱԶԱՐԻ (1904-1974) – Ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանի Ռշտունյաց գավառի Մոխրաբերդ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կոտորածներից ազատվելու համար ընտանիքի հետ միասին գաղթել և բնակություն է հաստատել Երևա-

նում: Փոքր հասակում զրկվել է ծնողներից և իր գոյությունը պահպանելու համար դարձել է օրավարձով աշխատող բանվոր: 1920-ական թթ. աշխատել է Երևանի և Բաքվի արդյունաբերական ձեռնարկություններում: 1926 թ. զորակոչվել է կարմիր բանակ, որտեղ ծառայել է երկու տարի: 1928 թ. զորացրվել է և գործուղվել՝ սովորելու Անդրկովկասի կոմունիստական համալսարանում: Ավարտելուց հետո դասախոսական աշխատանքի է անցել Երևանի բուհերում, այնուհետև՝ պետական համալսարանում:

1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ե. Մանուկյանը համալսարանից մեկնել է ռազմաճակատ: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Հայկական դիվիզիայում եղել է քաղբաժնի ագիտատոր և կոմիսար, մասնակցել է Կովկասի քաղաքների ու գյուղերի ազատագրման համար մղվող մարտերին: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով:

1946 թ. Ե. Մանուկյանը զորացրվել է և նորից դասախոսական աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: Մինչև իր կյանքի վերջը աշխատել է համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնում: Երկարամյա դասախոս ու մանկավարժ Եփրեմ Մանուկյանը մի քանի տարի շարունակ եղել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: Ակտիվորեն մասնակցել է համալսարանի հասարակական-քաղաքական կյանքին: Վախճանվել է 1974 թվականին:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ ԱՐՄԵՆԱԿԻ (1917-2002) – Սարիբեկ Մանուկյանը ծնվել է 1917 թ. փետրվարի 10-ին Երևանում: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. զորակոչվել է բանակ և ուղարկվել Բաքվի Օրջոնիկիձեի անվան հետևակային ուսումնարանը: Նույն թվականի դեկտեմբերի 15-ին ավարտելով արագացված սպայական կուրսերը՝ ստացել է լեյտենանտի աստիճան և ուղարկվել Արևմտյան ռազմաճակատ: Որպես հետևակային վաշտի հրամանատար մասնակցել է

Կարմիր Լիման քաղաքի մարտերին: 1942 թ. հունվարի 22-ին՝ ձեռնամարտի ժամանակ, հրազենային վնասվածք է ստացել և տեղափոխվել Սարատովի նահանգի Բալաշով քաղաքի զինվորական հոսպիտալ: Այնուհետև ուղարկվել է Վորոնեժ և անցել հակատանկային կուրսեր՝ նշանակվելով առանձին հակատանկային գումարտակի հրամանատար: Այդ գումարտակի կազմում մասնակցել է Ուկրաինայի, Ռուսաստանի, Բելառուսիայի մի շարք քաղաքների ազատագրմանը: 1943 թ. Սոժ գետի ափին տեղի ունեցած մարտերում վիրավորվել է, որի արդյունքում զրկվել է աջ աչքից: Ու թեև լեյտենանտ Մանուկյանը ճանաչվել է երրորդ կարգի հաշմանդամ, նշանակվել է պահեստային գնդի սպա, իսկ այնուհետև՝ Առաջին բելառուսական ճակատի 95-րդ հրաձգային դիվիզիայի 90-րդ գնդի դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: Նա մասնակցել է Օսովեց, Գրոդնո ամրոցքաղաքների, Վիսլա գետի անցման, Վարշավա, Օդերի Ֆրանկֆուրտ և Բեռլին քաղաքների գրավմանը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով, իսկ 1985 թ. ստացել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշան»:

1945 թ. ավարտել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1949 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1951 թ. պաշտպանել է «Գեղամ Սարյան» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 1972 թ.՝ «Հակոբ Հակոբյան» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Վախճանվել է 2002 թ. փետրվարի 16-ին Երևանում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՐՇԱԿԻ (1909-1981) – Ծնվել է 1909 թ. Նախիջևանի Ջնաբերդ գյուղում: 1918 թ. ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Երևան: Նույն տարում սովից մահացել են նրա ծնողները, իսկ ինքը ինը տարեկան հասակում ընկել է որբանոց: Մի քանի տարի որբանոցում մնալուց հետո ավարտել է Լենինականի (Գյումրի) մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցիչ: Երկու տարի անց նրան նշանակել են Մարալիկի ԼԿԵՄ շրջկոմի ագիտա-

ցիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: Մի տարի շրջկոմում աշխատելուց հետո Ռ. Մանուկյանին գործուղել են Երևանի պետական համալսարան: 1931 թ. ընդունվել է համալսարանի պատմության ֆակուլտետը, որը ավարտել է 1935 թվականին: Համալսարանն ավարտելուց հետո Ռ. Մանուկյանը սովորել է Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում: Ասպիրանտուրայի երկրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1940 թվականը ծառայել բանակում: 1940-1941 թթ. շարունակել է սովորել ասպիրանտուրայում: 1941 թ. հունիսին Մոսկվայից գիտական գործուղման է եկել Երևան և համալսարանում անցել է դասախոսական աշխատանքի: 1942 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1952 թվականը: 1942 թ. եղել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանում, ապա՝ Ղրիմի ռազմաճակատում, 390-րդ հրաձգային դիվիզիայում որպես քաղղեկ:

1942 թ. օգոստոսին Ռ. Մանուկյանը վատառողջ լինելու պատճառով ուղարկվել է դասախոսական աշխատանքի նախ Թբիլիսիի տեխնիկական ուսումնարանում, ապա՝ սպաների վերապատրաստման կուրսերում: 1952 թ. նա զորացրվել է և վերադարձել Երևանի պետական համալսարան: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել պրոֆեսորի կոչում: Հետագա տարիներին աշխատել է համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնում: Ռազմաճակատում Ռ. Մանուկյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի մեդալներով ու շնորհակալագրերով: Վախճանվել է 1981 թ. փետրվարի 2-ին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԴԱՎԹԻ (1915-) – Ծնվել է 1915 թ. Նոր Բայազետի (Գավառ) շրջանի Սարուխան գյուղում: 1936 թ. ավարտել է Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, 1941 թ. հուլիսին զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին սովորել է Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում: Երբ ֆաշիստական զորքերը մոտեցել են Մոսկվային, ակադեմիայի շատ ունկնդիրների հետ միա-

սին Ա. Մարգարյանին վաշտի քաղղեկի պաշտոնով ուղարկել են Մոսկվայի ռազմաճակատ, 1942 թ.՝ Հարավային ռազմաճակատ՝ նոր կազմակերպվող ազգային զորամասերում ծառայելու: Սակայն դեպքերի բերումով մասնակից է դարձել Խարկովի, Ռոստովի, Նովոռոսիյսկի և կովկասյան քաղաքների պաշտպանությանը:

1941 թ. վերջին Ա. Մարգարյանին ուղարկել են Թբիլիսի հրետանային ուսումնարանը, որը ավարտելուց հետո ստացել է ավագ լեյտենանտի կոչում և ուղարկվել Երրորդ ուկրաինական ռազմաճակատ: Այս անգամ ստացել է մարտկոցի հրամանատարի պաշտոն՝ մասնակցելով Կիևի ու ուկրաինական մյուս քաղաքների ազատագրմանը:

1944 թ. Ա. Մարգարյանին ուղարկել են Առաջին բելառուսական ռազմաճակատ: Բրեսլաու քաղաքի ազատագրման համար մղվող մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվել է ֆաշիստական Գերմանիայի կապիտուլացիայից հետո և զորացրվել: 1945 թ. հունիսին աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: 1956 թվականից աշխատել է հանրապետության հեռուստատեսությունում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ ՀՈՎՍԵՓԻ (1915-1995) – Ծնվել է 1915 թ. Կոտայքի շրջանի Արամուս գյուղում: Ավարտել է Բալահովիտի միջնակարգ դպրոցը: 1936 թ. ընդունվել և 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ուսման ավարտից հետո մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, մասնավորապես Կովկասի, 1944 թ. Ուկրաինայի, Բելառուսիայի, Ռումինայի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի ազատագրական մարտերին: Ծանր վիրավորվել է Չեխոսլովակիայում և 1945 թ. սկզբներին զորացրվել: Պարգևատրվել է մարտական մի շարք մեդալներով:

Աշխատանքի է անցել Կոտայքի շրջանային թերթում որպես խմբագիր, շրջկոմի բաժնի վարիչ, եղել է երրորդ քարտուղար, ապա անցել է մանկավարժական աշխատանքի: Երկար տարիներ եղել է Աբովյանի շրջանի տարբեր դպրոցների տնօրեն: Վախճանվել է 1995 թ. մարտին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏԻ (1912-2002) – Ծնվել է 1912 թ. Եղեգնաձորի Վերնաշեն գյուղում: 1934 թ. ավարտել է Ստավրոպոլի գյուղատնտեսական տեխնիկումը և գյուղատնտեսի մասնագիտությամբ աշխատանքի անցել Վորոնեժի մարզում: 1936 թ. ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Հայաստան և որպես ռուսաց լեզվի ուսուցիչ աշխատել Հրազդանի շրջանի դպրոցներում: 1939 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. հունիսի 23-ին զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Կերչի ռազմաճակատ: Մասնակցել է Կերչի պաշտպանության, իսկ հետագայում՝ նրա ազատագրման համար մղված մարտերին:

1942 թ.՝ ֆաշիստական զորամասերի հարձակման ժամանակ, գերեվարվել է՝ մնալով գերության մեջ մինչև 1943 թվականը: 26 զինվորական ընկերների հետ փախել է ֆաշիստական ճամբարից և միացել Բելառուսիայում գործող Մոգիլևյան 9-րդ պարտիզանական բրիգադին: 1944 թ. հունիսի 27-ին միացել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատի զորամասերին: 1944 թ. աշնանը Զ. Մարգարյանին ուղարկել են ՀԽՍՀ զինվորական կոմիսարիատի տրամադրության տակ: 1950-1957 թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել Երևանի 51-րդ միջնակարգ դպրոցում: Սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը: 1957-1968 թթ. աշխատել է մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտում որպես ռուսաց լեզվի մեթոդիկայի բաժնի վարիչ: 1968 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում: Ղեկավարել է ծրագրված ուսուցման և տեխնիկական միջոցների ներդրման բաժինը և միաժամանակ դասավանդել ռուսաց լեզու:

Կերչի ռազմաճակատում Զ. Մարգարյանը պարգևատրվել է «Խիզախության համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Վախճանվել է 2002 թվականին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱՌԱՔԵԼԻ (1911-1991) – Ծնվել է 1911 թ. Ղափանի շրջանի Կավարտ գյուղում, հանքափոր բանվորի ընտանիքում: 1930 թ. ավարտել է Ղափանի պղնձի կոմբինատին կից գործարանային 7-ամյա դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը: 1933 թ. ավարտել է և հերթափոխի պետի պաշտոնով աշխատանքի ճշանակվել Ղափանի պղնձի կոմբինատում: 1934-1936 թթ. ծառայել է խորհրդային բանակում, զորացրվել և նորից աշխատանքի է անցել պղնձի կոմբինատում: 1938 թ. կոմբինատի գործուղման հիման վրա ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որտեղ սովորել է մինչև 1941 թվականը: 1941 թ. դեկտեմբերին զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Անդրկովկասի զինվորական օկրուգին կից քաղաքական աշխատողների կուրսերը: 1942 թ. նշանակվել է 390-րդ հրաձգային դիվիզիայում հակատանկային դասակի հրամանատարի տեղակալ՝ քաղաքական գծով: Այնուհետև դիվիզիայի հետ մեկնել է ռազմաճակատ: Ն. Մարգարյանը 1943 թ. սեպտեմբերին Խարկովի ազատագրման համար մղվող մարտերից մեկում վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Այս անգամ Ն. Մարգարյանը նույն պաշտոնով ծառայության է նշանակվել 297-րդ դիվիզիայում: Որոշ ժամանակ անց նրան նշանակել են գնդի կուսկոմիտեի քարտուղար:

Ն. Մարգարյանը մասնակցել է Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Ավստրիայի ազատագրմանը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ», երեք «Պատվո նշան» շքանշաններով, «Բուդապեշտի ազատագրման համար», «Վիեննայի ազատագրման համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Ն. Մարգարյանը 1946 թ. զորացրվել է և իր մասնագիտությամբ աշխատանքի է անցել երկրաբանական վարչություններում: 1946-1943 թթ. սովորել ու ավարտել է ՀԿԿ կենտկոմին կից կուսակցական

դպրոցը՝ անցնելով կուսակցական աշխատանքի: 1948-1950 թթ. աշխատել է Երևանի №447 գործարանում որպես ՀԿԿ կենտկոմի կուսկազմակերպիչ: 1950 թ. տեղափոխվել է երկրաբանական վարչություն և նշանակվել արշավախմբի պետ: 1965 թվականից Ն. Մարգարյանը եղել է երկրաբանական աշխատողների բանվորների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահ: Վախճանվել է 1991 թվականին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՄԱՐԳԱՐԻ (1920-1980) – Ծնվել է 1920 թ. Երևանում: 1940 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, երկրորդ կուրսից կամավոր մեկնել է կարմիր բանակ: Համալսարանի մի շարք սաների հետ միասին նրան ուղարկել են Բաքու՝ ռազմական ուսումնարանում սովորելու: Երեք ամիս սովորելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և նշանակվել ծառայության 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 400-րդ գնդում: 1942 թ. սեպտեմբերին վաշտի քաղղեկ Մարգարյանը նույն դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Առաջին անգամ մարտերին մասնակցել է Կովկասի Մալգաբեկ քաղաքի շրջանում: 1943 թ. ձմռանը Մարգարյանը վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Երրորդ ուկրաինական ռազմաճակատ, որտեղ մասնակցել է Ուկրաինայի քաղաքների ու գյուղերի ազատագրմանը: 1944 թ. արդեն որպես գվարդիայի կապիտան և գումարտակի հրամանատար եղել է Ռումինիայում, Լեհաստանում: Լեհական հողերի ազատագրման ժամանակ՝ 1945 թ. ապրիլին, ծանր վիրավորվել է և նորից ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո ծառայել է մինչև 1945 թ. սեպտեմբերը: 1945 թ. սեպտեմբերին զորացրվել է և մինչև 1948 թվականը աշխատել որպես Երևանի Սպանդարյանի շրջսովետի գործկոմի պատասխանատու քարտուղար: Նույն թվականին ուղարկվել է Մոսկվա՝ իրավաբանական կուրսեր անցնելու, որն ավարտելուց հետո նշանակվել է Երևանի Լենինյան շրջանի դատախազ: Աշխատանքին համընթաց սովորել ու

ավարտել է պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1962-1972 թթ. աշխատել է որպես դպրոցի տնօրեն, իսկ 1972 թվականից՝ Երևանի Խորհրդայինի շրջանի արհմիության նախագահ:

Վ. Մարգարյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երրորդ աստիճանի» շքանշաններով ու մեդալներով: Վախճանվել է 1980 թվականին:

ՄԱՐՏԻԿՅԱՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԻ (1912-) – Ծնվել է 1912 թ. Թուրքիայի Բալըքեսիր քաղաքում, դերձակ-արհեստավորի ընտանիքում: Թուրքական կոտորածների ժամանակ զոհվել է նրանց գրեթե ամբողջ գերդաստանը: Մանկությունը անցկացրել է Պոլսի և Հունաստանի որբանոցներում, որտեղ ստացել է նախնական կրթությունը: Օրվա հացը սկսել է վաստակել Հունաստանի Պիրեա քաղաքում: Եղել է կոշկակար, բանվոր, աշխատել Պիրեայի «Վերո» և «Ֆակտում» ֆաբրիկաներում, որտեղ ընդգրկվել է ընդհատակյա հեղափոխական աշխատանքներում՝ դառնալով Հունաստանի կոմերիտմիության անդամ: 1931 թ. իր ավագ եղբոր՝ Մինաս Մարտիկյանի՝ որպես կոմունիստ-հեղափոխական արտաքսվելու կապակցությամբ տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Բնակություն է հաստատել Երևանում, սովորել է Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանին կից ուսումնարանում և ավարտելուց հետո աշխատել է որպես ձուլող բանվոր: 1935 թ. որպես բանվոր-թղթակից նշանակվել է աշխատանքի «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: 1938 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Սովորել է Երևանի ռադիստ պարաշյուտիստների դասընթացներում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, ռադիստ պարաշյուտիստների մի խմբի հետ միասին Աշոտ Մարտիկյանը մեկնել է Ղրիմի ռազմաճակատ և ծառայել Ղրիմի ռազմաճակատի հետախուզական բաժնի գումարտակում: Պարաշյուտային թռիչքներից մեկի ժամանակ Ա. Մարտիկյանը կատարել է անհաջող վայրէջք, ծանր վիրավորվել է

գլխից ու մեջքից և ուղարկվել հոսպիտալ: 1942 թ. մոտ 40 օր Կրասնոդարի հոսպիտալում մահվան դեմ մաքառելուց հետո կորցրել է քայլելու հավասարակշռությունը, ձախ ականջի լսողությունը և որպես հաշմանդամ զորացրվել բանակից: Երևանում երկար ժամանակ բուժվելուց հետո շարունակել է սովորել համալսարանում: 1944 թ. ավարտել է բանասիրական ֆակուլտետը և աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: 1950 թ. տեղափոխվել է «Հայաստան» հրատարակչություն, որտեղ աշխատել է որպես վերաստուգող սրբագրիչ, խմբագիր, բաժնի վարիչ և գլխավոր խմբագրի տեղակալ:

ՄԱՐՏԻԿՅԱՆ ՄԻՆԱՍ ԿԱՐԱՊԵՏԻ (1907-1978) – Ծնվել է 1907 թ. Թուրքիայի Բալըքեսիր քաղաքում, տնայնագործ դերձակի ընտանիքում: 1915 թ. Եղեռնի, ապա փոքրասիական աղետի ժամանակ կորցրել է իր մեծ գերդաստանը: Սկզբնական և միջնակարգ կրթությունը ստացել է Պոլսի հայկական որբանոցներում, «Հայտնվեր» վարժարանում և անգլիական որբանոցում: 1925 թ. եղել է Հունաստանի կոմերիտմիության, 1927 թ.՝ Հունաստանի կոմկուսի անդամ, իսկ 1942 թվականից՝ ԽՄԿԿ անդամ: Հեղափոխական գործունեության համար երկու անգամ ցմահ աքսորի է դատապարտվել Էգեյան կղզիներից մեկում: 1930 թ. որպես վտարանդի իր կնոջ և եղբոր հետ միասին եկել է Խորհրդային Հայաստան: 1937-1939 թթ. սովորել և ավարտել է Երևանի երկամյա ուսուցչական ինստիտուտը: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որտեղ սովորել է մինչև 1941 թվականը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Մ. Մարտիկյանը զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև պատերազմի ավարտը: Եղել է Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Հարավային և Առաջին ուկրաինական ռազմաճակատներում:

1942 թվականից մինչև զորացրվելը աշխատել է որպես «Մարտական գրոհ», «Մարտական Ղրիմյան», «Հանուն հայրենիքի փառքի», «Առաջ հանուն հաղթանակի», «Հանուն թշնամու ջախջախման» հայկական և ռուսական թերթերի թղթակիր կազմակերպիչ: Նա

իր հայրենասիրական հոդվածներով ու թղթակցություններով ոգևորել է զինվորներին՝ ռազմաճակատում մարտական խնդիրները կատարելու համար: Կապիտան Մարտիկյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Կերչի, Նովոռոսիյսկի, Սևաստոպոլի, ինչպես նաև Կուբանի, Թամանսկի, Ղրիմի, Բրեսլավլի ազատագրմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Մ. Մարտիկյանը զորացրվելուց հետո ավարտել է պետական համալսարանի ասպիրանտուրան՝ փիլիսոփայության գծով: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Վախճանվել է 1978 թվականին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1924-) – Ծնվել է 1924 թ. օգոստոսի 20-ին Սևանի շրջանի Լճաշեն գյուղում: Սովորել է տեղի դպրոցում, իսկ միջնակարգ կրթությունը ստացել է Երևանում: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1942 թ. կիսատ թողնելով ուսումը՝ մեկնել է ռազմաճակատ: Եղել է ռազմաքաղաքական ուսումնարանի կուրսանտ, այնուհետև մի խումբ զինակիցների հետ համալրել է 5-րդ օդադեսանտային գվարդիական բանակի շարքերը՝ մասնակցելով 1943 թ. ամռան ռազմական գործողություններին, որոնք մղվում էին Կուրսկ-Բելգորոդ ելուստում: Այդ մարտերը վճռական էին Հայրենական պատերազմի հաղթական ելքի համար: Այստեղ ծառայել է որպես շարքային, ապա՝ հետախույզ, պարգևատրվել է «Խիզախության համար», «Ռազմական ծառայության համար» մեդալներով, ստացել է նաև «Կարմիր աստղ» շքանշան: Պրոխորովկա կայարանի մարտերում ծանր վիրավորվել է: Վերադառնալով թիկունք՝ կարճ ժամանակ աշխատել է որպես պատմության և աշխարհագրության ուսուցիչ Սևանի միջնակարգ դպրոցում և խմբագրել է «Սևանշիհ» թերթը: 1944 թ. շարունակել է ուսումը Երևանի պետական համալսարանում: Երկու ֆակուլտետ (աշխարհագրու-

թյուն և երկրաբանություն) միաժամանակ գերազանցությամբ ավարտելով՝ դարձել է Ստալինյան թոշակառու, ընդունվել ասպիրանտուրա: Աշխատել է Երևանի մի շարք բուհերում, հեղինակ է 400-ից ավելի հոդվածների, որոնցից 100-ը գիտահանրամատչելի բնույթի են: 1995 թ. ընդգրկվել է ՀՀ աշխարհագրական ասոցիացիայի պատվավոր անդամ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱԶԱՐԻԱՅԻ (1917-2006) – Ծնվել է 1917 թ. Ղափանի շրջանի Կեմանց գյուղում: 1936 թ. ավարտել է Ղափանի միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Նույն տարում ավարտել է Սումխումիի զինվորական ուսումնարանը, ստացել սպայի կոչում և հոկտեմբերին նշանակվել է դասակի հրամանատար 236-րդ հրաձգային դիվիզիայում: 1941 թ. դեկտեմբերի 31-ին մեկնել է Ղրիմի ռազմաճակատ: Մասնակցել է Ղրիմի թերակղզու պաշտպանությանը, առանձնապես Թեոդոսիայի համար մղվող դեսանտային զորամասերի մարտերին: 1942 թ. ապրիլին Ղրիմի թերակղզու պաշտպանական մարտերի ժամանակ կրտսեր լեյտենանտ Գ. Մարտիրոսյանին արտահերթ շնորհվել է ավագ լեյտենանտի կոչում:

Ղրիմում Գ. Մարտիրոսյանը երկու անգամ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել զորամաս: Երկրորդ անգամ ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Կովկասի ռազմաճակատ և նշանակել դիվիզիայի շտաբի 6-րդ բաժնի պետի տեղակալ: Այստեղ նա մասնակցել է Հյուսիսային Կովկասի քաղաքների ազատագրման մարտերին և պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Թամանյան թերակղզու ազատագրումից հետո ավագ-լեյտենանտ Մարտիրոսյանը 389-րդ հրաձգային դիվիզիայի կազմում տեղափոխվել է Առաջին ուկրաինական ռազմաճակատ, մասնակցել աջափնյա և Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրմանը, Վիսլայի գետանցմանը և Սանդոմիրի հենակետի գրավմանը: Մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվել է «Կարմիր աստղ»

շքանշանով, իսկ դիվիզիայի գվարդիական կոչմանը արժանանալու համար նրան շնորհվել է ավագ լեյտենանտի կոչում:

1945 թ. առաջին ամիսներին գվարդիայի ավագ լեյտենանտ Մարտիրոսյանը իր դիվիզիայի հետ մասնակցել է Պրահայի ու Չեխոսլովակիայի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի համար Գ. Մարտիրոսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և «Բեռլինի գրավման համար», «Պրահայի ազատագրման համար» մեդալներով:

1946 թ. Գ. Մարտիրոսյանը զորացրվել է և շարունակել սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է և անցել կուսակցական աշխատանքի: Եղել է Լենինյան շրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, Երևանի Սպանդարյանի և Էջմիածնի շրջկոմների առաջին քարտուղար, իսկ 1863 թվականից նշանակվել է ժողովրդական վերահսկողության Երևանի քաղաքային կոմիտեի նախագահ: Կուսակցական աշխատանքում մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով: Վախճանվել է 2006 թվականին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՅԿԻ (1917-) –Ծնվել է 1917 թ. Ախալցխա քաղաքում (Վրացական ԽՍՀ): 1934 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: Ծառայության է նշանակվել Միջինասիական զինվորական օկրուգի գլխավոր հրամանատարության պահեստի 123-րդ մեքենայացված հրետանային գնդում: 1940 թ. հոկտեմբերին նրան ուղարկել են՝ սովորելու Միջինասիական զինվորական օկրուգի հրետանային զորքերի հրամանատարական դասընթացներում: 1941 թ. սկզբին ավարտել է, ստացել հրամանատարի կոչում և որպես կրակային մարտկոցի հրամանատար ծառայության է նշանակվել Մարի քաղաքում (Թուրքմենական ԽՍՀ): Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Հ. Մարտիրոսյանին 104-րդ հրետա-

նային գնդի կազմում ուղարկել են Արևմտյան ռազմաճակատ: Առաջին մարտական մկրտությունը ստացել է Սմոլենսկի պաշտպանական մարտերում:

1941 թ. հոկտեմբերին 649-րդ հրետանային գունդը, որի կազմում էր Հ. Մարտիրոսյանը, Ռոսլավլ քաղաքի մոտ պաշտպանական ծանր մարտեր է մղել թշնամու գերակշռող ուժերի դեմ: Այդ մարտում Հ. Մարտիրոսյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Վեց ամիս հոսպիտալում բուժվելուց հետո զորացրվել է և վերադարձել համալսարան: 1948 թ. ընդունվել է ասպիրանտուրա՝ հայոց լեզվի և գրականության գծով: 1944 թ., երբ միութենական հանրապետություններում կազմակերպվել են արտաքին գործերի մինիստրություններ, Հ. Մարտիրոսյանը ՀԿԿ կենտկոմի կողմից գործուղվել է Մոսկվա՝ ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրությանը կից բարձրագույն դիվանագիտական դպրոցում սովորելու: 1947 թ. ավարտել է այդ դպրոցի թուրքական բաժինը և ատաշեի դիվանագիտական կոչումով աշխատանքի նշանակվել ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր և Միջին Արևելքի երկրների բաժնում: 1948 թ. գործուղվել է Հարավսլավիա և որպես քարտուղար, փոխհյուպատոս ու հյուպատոսության ղեկավար աշխատել է Հարավսլավիայի Զագրեբ և Սպլիտ քաղաքներում: Արտասահմանյան գործուղումից վերադառնալուց հետո սկզբում աշխատանքի է անցել ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրությունում, ապա՝ Հայպետհրատում որպես գլխավոր խմբագրի տեղակալ: 1961-1962 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտական բաժնում, իսկ 1963 թ. տեղափոխվել է համալսարան: Այնուհետև աշխատել է ԵՊՀ արևելագիտական ֆակուլտետում որպես ավագ դասախոս:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ (1921-1977) – Ծնվել է 1921 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1938 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. հունիսի 22-ին ինքնակամ զորակոչվել է բանակ: Մինչև աշնան ավարտը սովորել է Բաքվի հակատանկային հրետանային ուսում-

ճարաճում: Այստեղ ստացել է լեյտենանտի կոչում: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի մարտերին: 1942 թ. տեղափոխվել է Հարավարևմյան ճակատ և նշանակվել 51-րդ բանակի դասակի հրամանատար, ապա՝ մարտկոցի հրամանատար: Խարկովի շրջանում ծանր մարտերի ժամանակ վիրավորվել է և տեղափոխվել զինվորական հոսպիտալ: Վերականգնվելուց հետո ծառայել է Հյուսիսկովկասյան, Անդրկովկասյան, Դոնի, Առաջին ուկրաինական ռազմաճակատներում: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Խիզախության համար» և այլ մեդալներով: Ջորացրվելուց հետո շարունակել է ուսումը ԵՊՀ պատմության ֆակուլտետում:

1950 թվականից պեղումներ է կատարել Գոլովինոյում, Կարմիր բլուրում, Արմավիրում, հետազոտական աշխատանքներ՝ Լենինականում,

Գեղարոտում և այլուր: 1960 թվականից ղեկավարել է Գեղամա լեռների ժայռապատկերների ուսումնասիրության աշխատանքները, 1962 թվականից՝ Արգիշտիխինիլի քաղաքի պեղումները: Հ. Մարտիրոսյանի հետազոտությունները կարևոր ավանդ են Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի հնագույն մշակույթի, Ուրարտուի պատմության ուսումնասիրության, ինչպես նաև հնագույն դարաշրջանների ժամանակագրության գիտական պարբերացման և Հին Արևելքի ժողովուրդների հետ Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի հնագույն ցեղերի փոխհարաբերությունների հետազոտման ասպարեզում:

Հարություն Մարտիրոսյանի գրչին են պատկանում երկու գրքեր՝ նվիրված հայաստանյան հնագիտությանը՝ սկսած քարի դարից մինչև ուրարտական ժամանակաշրջանը, և Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնիկների հոգևոր մշակույթին («Քարե դարից Ուրարտու», 1971 թ. և «Գիտությունը սկսվում է նախնադարում», 1978 թ.), ինչպես նաև հայրենիքի և սփյուռքի հանրամատչելի տարբեր պարբերականներում և թերթերում լույս տեսած մեկ տասնյակից ավելի հոդվածները, որոնցում հեղինակը ներկայացրել է Հայաստանի տարբեր հուշարձաններում ընթացող պեղումների արդյունքները,

հնագիտության զարգացման և հուշարձանների պահպանության առնչվող խնդիրները և ընդհանրապես լուսաբանել Հայկական լեռնաշխարհի դերը հինարևելյան մշակույթների համատեքստում: Մահացել է 1977 թ. հուլիսի 28-ին Երևանում:

ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ (1915-1976) – Ծնվել է 1915 թ. Արթիկի շրջանի Փոքր Պարնի (Անուշավան) գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: 1931-1932 թթ. ավարտել է Լենինականի (Գյումրի) տեքստիլ կոմբինատին կից ֆաբրիկագործարանային ուսումնարանը: 1934-1936 թթ. սովորել ու ավարտել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը: 1937 թ. ավարտել է Լենինականի երկաթուղային բանֆակը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է և մի քանի ամիս «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում աշխատելուց հետո զորակոչվել է կարմիր բանակ: 1943 թ. սովորել է Կրասնոդարի գնդացրային-ականանետային ռազմական ուսումնարանում, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և մեկնել ռազմաճակատ: Ականանետային մարտկոցի հրամանատարի պաշտոնով 140-րդ հրաձգային դիվիզիայի հետ Մ. Մեժլումյանը եղել է Չորրորդ ուկրաինական ռազմաճակատում: Մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների ու Լեհաստանի ազատագրման մարտերին: Օդերի շրջակայքում տեղի ունեցող կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել է, կորցրել ձախ ձեռքը և որպես հաշմանդամ զորացրվել բանակից: Մարտական գործողություններում աչքի ընկած ծառայությունների համար նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մի շարք մեդալներով:

Զորացրվելուց հետո՝ 1946 թ., աշխատել է Երևանի երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում որպես գրական բաժնի վարիչ: 1947-1948 թթ. սովորել է ՀԿԿ կենտկոմին կից կուսակցական երկամյա դպրոցում: 1948 թվականից աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում որպես նամակների բաժնի վարիչ: Վախճանվել է 1976 թվականին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ (1905-) – Ծնվել է 1905 թ. Արմավիր գյուղում: Մեծ եղեռնի ժամանակ մի կերպ ազատվել է թուրքական յաթաղանից և ընկել որբանոց: Յոթ տարի որբանոցում մնալուց հետո՝ 1923 թ., կամավոր ընդունվել է Երևանի Ա. Մյասնիկյանի անվան ռազմական դպրոցը: 1926 թ. ավարտել է և մինչև 1937 թվականը տարբեր պաշտոններով ծառայել կարմիր բանակում: 1937 թ. աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում: Մինչև 1941 թվականը աշխատել է որպես ռազմական պատրաստականության դասախոս: Հայրենական մեծ պատերազմը սկսվելուն պես զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել ռազմաճակատ: Մինչև 1945 թվականը եղել է մի քանի ռազմաճակատներում: Առաջին մարտական գործողություններին մասնակցել է Պոլտավայի և Խարկովի պաշտպանության ժամանակ: Հետագայում եղել է Ստալինգրադի ռազմաճակատում: Բրեստ քաղաքի ազատագրման համար ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար գերագույն գլխավոր հրամանատարի կողմից արժանացել է շնորհակալագրի: 1944 թ. գվարդիայի մայոր Մելքոնյանը մասնակցել է Վարշավայի ազատագրական մարտերին: Նույն թվականի սեպտեմբերի 12-ին ծանր վիրավորվել և տեղափոխվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ և մասնակցել Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով և «Ստալինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակից հետո նա մինչև 1946 թվականը ծառայել է Գերմանիայում: 1946 թ. զորացրվել, վերադարձել է Երևան՝ անցնելով թոշակի:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԽԻԹԱՐԻ (1904-1993) – Ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար գաղթել և բնակություն է հաստատել Խորհրդային Հայաստանում: 1924 թ. ավարտել է Երևանի խորհրդային կուսակցական դպրոցը և ՀԿԿ կենտկոմի կողմից նշանակվել է հրահանգիչ Ախտայի կուսշրջկոմում: 1927 թ. Կենտկոմի գործուղմամբ մեկնել է՝ սո-

վորելու Անդրկովկասի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանում: Ավարտելուց հետո՝ 1931 թ., նորից անցել է կուսակցական աշխատանքի ՀԿԿ Թալինի կուսշրջկոմում: 1933-1939 թթ. աշխատել է Արտաշատի շրջկոմում որպես առաջին քարտուղար և Կիրովականում (Վանաձոր)՝ որպես քաղկոմի քարտուղար: 1939 թ. նրան նշանակել են ՀԿԿ կենտկոմի կազմակերպական-հրահանգչական բաժնի վարիչ: Մեկ տարի հետո անցել է դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Լ. Մելքոնյանը զորակոչվել է կարմիր բանակ, մինչև 1945 թվականը ծառայել գործող բանակում: Եղել է դիվիզիայի կուսակցական հանձնաժողովի քարտուղար, գնդի կոմիսար և գնդի հրամանատարի տեղակալ:

Պատերազմի սկզբին Լ. Մելքոնյանը եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Ռոստովի, Բատայսկի և մյուս քաղաքների պաշտպանությանը: 1941 թ. դեկտեմբերին նրան ուղարկել են Ղրիմի ռազմաճակատ, որտեղ նա մասնակցել է Կերչի պաշտպանական մարտերին: Հետագա երկու տարիների ընթացքում Լ. Մելքոնյանը եղել է Առաջին ուկրաինական և Առաջին բելառուսական, Մերձբալթյան ռազմաճակատներում: 1944 թ. աշնանը մասնակցել է Արևելյան Պրուսիայի գրավմանը: Քյոնիգսբերգի գրավման ժամանակ ծանր վիրավորվել է, ապաքինվել և ուղարկվել Անդրկովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ, որտեղ ծառայել է մինչև 1945 թվականը:

Լ. Մելքոնյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և հինգ մեդալով:

1944 թ. Մելքոնյանը վատառողջ լինելու պատճառով զորացրվել է, նորից անցել կուսակցական ու խորհրդային աշխատանքի: 1945-1954 թթ. աշխատել է որպես Էջմիածնի սովխոզի տնօրեն, 1954-1958 թթ.՝ ՀԽՍՀ պետական վերահսկողության մինիստր, 1958-1961 թթ.՝ Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի նախագահ, 1961-1974 թթ.՝ ՀԽՍՀ սոցապ մինիստր: 1974 թ. մարտից Լ. Մելքոնյանն անցել է թոշակի: Վախճանվել է 1993 թ. ապրիլի 25-ին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ԳՐԻԳՈՐԻ (1909-1976) – Ծնվել է 1909 թ. Կիրովականում (Վանաձոր): 1928 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և անցել ուսուցչական աշխատանքի: Երեք տարի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի վարիչ աշխատելուց հետո՝ 1933 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1938 թ. ավարտել է և աշխատել որպես ավագ դասախոս քիմիական ֆակուլտետում: 1942 թ. ամռանը Լ. Մելքոնյանը կամովին մեկնել է ռազմաճակատ: Երեք ամիս Սուխումիում վերապատրաստվելուց հետո նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Մոզդոկի և մյուս քաղաքների ազատագրմանը: Հյուսիսային Կովկասի ազատագրումից հետո լեյտենանտ Մելքոնյանը սկզբում որպես դասակի, իսկ հետո որպես վաշտի հրամանատար մասնակցել է Ուկրաինայի քաղաքների ազատագրմանը: Ռազմաճակատներում Լ. Մելքոնյանը վիրավորվել է երկու անգամ: Առաջին անգամ վիրավորվել է Հյուսիսային Կովկասի Կռապոտկին քաղաքի, իսկ երկրորդ անգամ՝ Վորոշիլովգրադի համար մղվող մարտերի ժամանակ: Զինվորական ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով 1944 թ. հունիսին զորացրվել է և դասախոսական աշխատանքի անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1958 թ. տեղափոխվել է Պոլիմերների գիտահետազոտական ինստիտուտ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1969 թ. ստացել է պրոֆեսորի կոչում՝ նույն թվականին աշխատանքի անցնելով Երևանի պետական համալսարանում: Ղեկավարել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնն ու պրոբլեմային լաբորատորիան: Վախճանվել է 1976 թվականին:

ՄԻՐՋՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆԻ (1918-2010) – Ծնվել է 1918 թ. սեպտեմբերի 1-ին Գորիսում: 1936 թ. ավարտել է Գորիսի միջնակարգ դպրոցը և ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, որն ավարտել է 1941 թվականին: Նույն թվականին զորակոչվել է բանակ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սկզբում սովորել է Կ. Վորոշիլովի անվան ռազմաքիմիական ակադեմիայի արագացված կուրսերը: 1941 թ. հոկտեմբերին

նրան շնորհվել է լեյտենանտի կոչում, և նա ծառայության է անցել օդային ուժերի քիմիական հատվածում որպես գնդի ղեկավար: Այդ ընթացքում Մոսկվայում ձևավորվել է աշխարհազորային դիվիզիա, որի կազմում մասնակցել է Մոսկվայի ազատագրման գործողություններին: 1943 թ. մարտին վիրավորվել է, ապաքինվելուց հետո ուղարկվել Կարմիր բանակի կառավարչության քիմիական զորքերի բաժին: Այդ ընթացքում մասնակցել է Ուկրաինայի և Լեհաստանի ազատագրմանը: Միաժամանակ զբաղեցրել է Կրակովի, իսկ 1945 թ.՝ Գլեյվիցի օդանավակայանի պարետի պաշտոնը: 1946 թ. հուլիսին որպես գվարդիայի կապիտան զորացրվել է կարմիր բանակից: 1960-1964 թթ. եղել է ՀԽՍՀ երկրագործության ԳՀԻ բույսերի պաշտպանության բաժնի ահազանգման ու կանխագուշակման բաժնի վարիչ, 1964 թվականից՝ ՀԽՍՀ բույսերի պաշտպանության ԳՀԻ անտառի պաշտպանության լաբորատորիայի վարիչ:

Ս. Միրզոյանի գիտական աշխատանքները վերաբերում են անտառային միջատաբանության, անտառի պաշտպանության, օգտակար միջատների պահպանության հարցերին: Բացահայտել է ՀԽՍՀ անտառների, տնկարանների և պուրակների դենդրոֆիլ միջատների տեսակակազմը, որոշել դրանց տնտեսական նշանակությունը, մշակել վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ, կազմել ՀԽՍՀ կենդանաաշխարհագրական ու շրջանացման քարտեզ:

Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և 15 ռազմական մեդալներով: Վախճանվել է 2010 թվականին:

ՄԽՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՏԻԿ ՏԻԳՐԱՆԻ (1910-1964) – Ծնվել է 1910 թ. Նոր Բայազետում (Կամո): 1929 թ. ավարտել է Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումը և նշանակվել Մարտունու շրջանի Ջոլաքար գյուղի միջնակարգ դպրոցի վարիչ: Երկու տարի Ջոլաքարում աշխատելուց հետո նրան նույն պաշտոնով տեղափոխել են Նոր Բայազետի միջնակարգ դպրոց: 1933 թ. դպրոցից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել երկու տարի: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել գաղութների վարչությունում: 1939 թ. Ա. Միքայելյա-

նը տեղափոխվել է Երևանի պետական համալսարան և նշանակվել ռազմագիտության դասախոս:

1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ա. Միքայելյանը կազմակերպչական մեծ աշխատանք է կատարել համալսարանում կամավորական շարժում ծավալելու ուղղությամբ: Նա եղել է 1941 թ. աշնանը համալսարանում դեսանտային զորամասերում ծառայելու համար ծավալված կամավորական շարժման կազմակերպիչներից մեկը: Նա առաջինն է եղել, որ կամավոր ցանկություն է հայտնել մեկնել գործող բանակ: Սակայն ռեկտորատի միջնորդությամբ զինվորական կոմիսարիատը ժամանակավորապես հետաձգել է նրա մեկնումը բանակ և նշանակել համալսարանի աշխարհազորի հրամանատար: Մի քանի ամիս հայրենասեր համալսարանականը՝ Արտիկ Միքայելյանը, մեծ աշխատանք է ծավալել համալսարանի կոլեկտիվի անդամների ռազմական ուսուցման ուղղությամբ: Նրա ղեկավարած աշխարհազորի անդամները ոչ միայն ուսումնասիրել են ժամանակակից զենքի տեսակներն ու պատերազմելու ժամանակակից տակտիկական ձևերը, այլև ակտիվ մասնակցություն են ունեցել մայրաքաղաքի ռազմապաշտպանական աշխատանքներին: Ա. Միքայելյանի ղեկավարությամբ համալսարանի ուսանողները պաշտպանական գծեր են կառուցել Նորքի զանգվածում և Քանաքեռում:

1941 թ. ավագ լեյտենանտ Ա. Միքայելյանը բանակ է մեկնել: Նրան՝ որպես փորձված զինվորականի, առաջին իսկ օրը ուղարկել են գործող բանակ: Եղել է Հյուսիսային Կովկասի և Երրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Մարտերում վիրավորվել է, բայց ապաքինվելուց հետո նորից շարունակել է մարտնչել ռազմաճակատներում: Մարտական առաջադրանքները խիզախությամբ կատարելու համար պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

1945 թ. առողջության վատթարացման պատճառով Ա. Միքայելյանը զորացրվել է բանակից և աշխատանքի անցել Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտում: 1964 թ. հայրենասեր զինվորականը վախճանվել է:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԵԿԻ (1906-1973) – Ծնվել է 1906 թ. ապրիլի 12-ին Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղում: 1907 թ. նրա ընտանիքը տեղափոխվել է Գորիս: Այստեղ նա երկդասյա ուսումնարանն ավարտելուց հետո ուսանել է տեղի գիմնազիայում: 1923 թ. գործուղվել է Թիֆլիս, սովորել ՀԿԿ կենտկոմին կից երկաստիճան կուսակցական դպրոցում: Ավարտելով այն՝ 1927-1930 թթ. ուսանել է տեղի կոմհամալսարանում: Ս. Միքայելյանը 1930 թ. զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ նախ Լենինականի (Գյումրի) կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտում, որտեղ վարել է քաղաքատնտեսության դասախոսի և քաղաքատնտեսության ամբիոնի վարիչի պաշտոնները, ապա տեղափոխվել և աշխատել է Երևանի պետական համալսարանում: 1934 թ. նա աշխատել է Հրազդանում որպես շրջանային թերթի խմբագիր, 1937-1940 թթ.՝ պետական հանրային գրադարանում, Հայպետհրատում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1942-1943 թթ. զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Կովկասյան ռազմաճակատի գործողություններին, Ղրիմի և Կերչի մարտերին, Կուրսկի ռազմական գործողություններին: Վերադառնալով բանակից՝ նա մինչև 1946 թվականը աշխատել է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության մինիստրությունում որպես պլանբաժնի պետ, որից հետո՝ մինչև իր կյանքի վերջը՝ համալսարանում քաղտնտեսության դասախոս: Նա ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ էր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Վախճանվել է 1973 թ. փետրվարի 4-ին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԵՆՈՔԻ (1919-1999) – Ծնվել է 1919 թ. Կրասնոսելսկի շրջանի Թթու ջուր գյուղում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. աշնանը, երբ մայրաքաղաքում կամավորական շարժում է սկսվել՝ դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար, Գ. Մխիթարյանը համալսարանի բազմաթիվ ուսանողների հետ կամովին մեկնել է կարմիր բանակ: 1942 թ. հունվարին նրան ուղարկել են Մախաչկալայի զինվորական ուսումնարանը, որն այդ ժամանակ գտնվում էր Վրաստանի

Մանգլիս քաղաքում: Գ. Մխիթարյանը նույն թվականի հուլիսին ավարտել է ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել Կովկասյան ռազմաճակատ: Առաջին անգամ մասնակցել է Օրջոնիկիձեի համար մղվող մարտերին: Երբ թշնամին Ստալինգրադի տակ պարտություն կրելուց հետո սկսել է նահանջել, Գ. Մխիթարյանը եղել է թշնամուն հետապնդող զորամասերից մեկում: Մասնակցել է հատկապես Նալչիկի, Պյատիգորսկի և մի շարք այլ քաղաքների ու ավանների ազատագրմանը:

Վիրավորվել է երկու անգամ: Առաջին անգամ վիրավորվել է Կաբարդինո-Բալկարիայում, երբ նա 82 մմ. գումարտակային ականանետաձիգների դասակի հրամանատար էր, իսկ երկրորդ անգամ՝ Ազովի ծովի ափին թշնամու հակահարձակման ժամանակ: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Երրորդ անգամ նրա ստացած վերքը եղել է ծանր, որի պատճառով բժշկական հանձնաժողովը նրան համարել է ոչ պիտանի զինծառայության համար: 1945 թ. փետրվարին որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է բանակից և վերադարձել համալսարան: ԵՊՀ պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո սովորել է, 1946 թ. ընդունվել ասպիրանտուրա՝ փիլիսոփայություն մասնագիտության գծով: 1949-1959 թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմին կից եռամյա կուսակցական դպրոցում ավագ դասախոսի, ապա՝ դոցենտ պաշտոնում: 1953 թ. Երևանի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1959 թ. տեղափոխվել է համալսարան, որտեղ աշխատել է մինչև իր կյանքի վերջը: Եղել է համալսարանի փիլիսոփայության պատմության, ապա՝ 1970 թ.՝ պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի դոցենտ: 1958-1977 թթ. միաժամանակ ղեկավարել է ՀԿԿ Երևանի քաղկոմին կից մարքսիզմ-լենինիզմի համալսարանի փիլիսոփայության ամբիոնը: 1965 թ. պաշտպանել դոկտորական ատենախոսություն, ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: 1974 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1979-1989

թթ. եղել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1999 թ. ապրիլի 26-ին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐԻ (1912-1955) – Ծնվել է 1912 թ. Թբիլիսիում: 1930 թ. ավարտել է տեղի հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի տնտեսագիտական ինստիտուտի ապրանքագիտական ֆակուլտետը: 1933 թ. ավարտել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ապրանքագիտության գծով: Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ մինչև 1937 թվականը, համալսարանում աշխատել է որպես ասիստենտ, իսկ 1937 թվականից մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը՝ ավագ դասախոս: 1941 թ. հունիսին Ռ. Մխիթարյանը զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1943 թվականը մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սկզբում եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, ապա Ղրիմի թերակղզու ազատագրական մարտերից մեկում ծանր վիրավորվել է, ստացել կոնտուզիա և ուղարկվել երկարատև բուժման: Ապաքինվելուց հետո ճանաչվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ և զորացրվել բանակից: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1943 թ. Ռ. Մխիթարյանը վերադարձել է դասախոսական աշխատանքի: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և դասախոսական աշխատանքին համընթաց համալսարանում վարել է մի քանի պաշտոններ: Եղել է պրոռեկտորի տեղակալ, ԵՊՀ ասպիրանտուրայի վարիչ և գիտական խորհրդի պատասխանատու քարտուղար: 1954 թվականից մինչև իր կյանքի վերջը եղել է տնտեսագիտական ֆակուլտետի ապրանքագիտության ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1955 թվականին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԱՖԻԿ ՍՈՂՈՄՈՆԻ (1916-1997) – Ծնվել է 1916 թ. Շամշադինի շրջանի Թովուզ գյուղում: 1936 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1941 թ.

հունիսի 21-ին հանձնել է պետական քննությունը, և չնայած այն հանգամանքին, որ նա միաժամանակ աշխատելիս է եղել Ս. Մ. Կիրովի անվան գործարանում և հնարավորություն է ունեցել դիմելու զինվորական կոմիսարիատ ու կամովին մեկնել է կարմիր բանակ: Մինչև 1942 թվականը ծառայել է մերձճակատային զորամասում, իսկ 1942 թվականից եղել է անմիջապես մարտական գործողությունների մեջ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատներում: Մասնակցել է Կիսլովոդսկ, Պյատիգորսկ, Ժելեզնովոդսկ, Կրասնոդար, Սլավյանսկ քաղաքների պաշտպանական մարտերին: 1943 թ. Ռ. Մխիթարյանը ծանր վիրավորվել է, ստացել կոնտուզիա և որոշ ժամանակ հոսպիտալում բուժվելուց հետո շարային ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով զորացրվել է բանակից: Մինչև 1945 թվականը եղել է երկրորդ կարգի հաշմանդամ և չի աշխատել: 1945 թ. դեկտեմբերին աշխատանքի է անցել ԵՊՀ քիմիական ֆակուլտետում սկզբում որպես լաբորանտ, ապա՝ որպես ավագ դասախոս: 1957 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1960 թվականից անօրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ էր: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին կարգի շքանշանով», եղել է աշխատանքի վետերան: Վախճանվել է 1997 թ. դեկտեմբերի 25-ին:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐԻ (1919-1992) – Ծնվել է 1910 թ. նոյեմբերի 23-ին Թբիլիսիում: 1926 թ. ավարտել է տեղի դպրոցը, իսկ 1928 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը և 1932 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, որը կազմավորվել էր 1930 թվականին: 1935 թվականից աշխատել է նույն ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնում: 1938 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1939 թ. դարձել է դոցենտ: Նույն թվականին զորակոչվել է բանակ և մասնակցել խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական պատերազմի հենց սկզբից ակտիվ մասնակցություն է ցուցաբերել: Բժշկասանիտարական լաբորատորիայի վարիչն էր, ինչպես նաև Երկրորդ բելա-

ռուսական ռազմաճակատի համար 1025 ժամանակավոր ռազմական սանիտարական գնացքի ղեկավարը: Նրա ղեկավարությամբ տարհանվել է 43280 վիրավոր, նրանց 20 տոկոսը բերվել է ռազմաճակատից: Պատերազմի ողջ ընթացքում գնացքում որևէ մահվան դեպք չի գրանցվել: Խիզախ ծառայության և իր պարտականությունների բարեհաջող կատարման համար մայոր Մխիթարյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, ինչպես նաև «Մոսկվայի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Պատերազմի ավարտից հետո վերադարձել է Երևան և շարունակել իր գործունեությամբ զբաղվել: 1960-1986 թթ. եղել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

Վ. Մխիթարյանը եղել է ՀԽՍՀ կենսաքիմիկոսների գիտական ընկերության փոխնախագահը, ՀԽՍՀ առողջապահության նախարարության գիտաբժշկական խորհրդի պրոբլեմային հանձնաժողովի նախագահը:

1985 թ. պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1992 թ. Երևանում:

ՄԿՐՏՉՅԱՆ ԵԼԻԱԶԱՐ ՍՈՂՈՄՈՆԻ (1908-1985) – Ծնվել է 1908 թ. Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Լիցք գյուղում: 1915 թ. հարազատների հետ միասին գաղթել է Արևելյան Հայաստան՝ բնակություն հաստատելով Ախտայի շրջանի Ախտա գյուղում: 1917 թ. ընտանիքով վերադարձել են Արևմտյան Հայաստան, իսկ 1918 թ. գարնանը՝ թուրքական կոտորածներից ազատվելու համար փախել Իրան: Ե. Մկրտչյանը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1922 թ., վերադարձել է Խորհրդային Հայաստան: 1930 թ. ընդունվել է կուսակցության շարքերը և մինչև 1935 թվականը վարել է կոմերիտական ու կուսակցական մի քանի պաշտոն: 1936 թ. ավարտել է Անդրկովկասի 26 կոմիսարների կոմունիստական համալսարանը և անցել կուսակցական աշխատանքի: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆա-

կուլտետը, որտեղ սովորել է ընդամենը մեկ տարի: 1941 թ. նոյեմբերին զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1946 թվականը: Եղել է սկզբում Ղրիմի, ապա՝ Երրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների՝ Լեհաստանի ու Չեխոսլովակիայի ազատագրմանը: Ռազմաճակատներում վիրավորվել է չորս անգամ, որոնցից երկուսը եղել են ծանր: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

1945 թ.՝ զորացրվելուց հետո, Ե. Մկրտչյանը շարունակել է սովորել ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1949 թ. ավարտել է՝ ստանալով պատմաբանի որակավորում: Աշխատել է Երևանի առևտրակոլիձնարական տեխնիկումում որպես քաղաքատնտեսության ուսուցիչ: Վախճանվել է 1985 թվականին:

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՆԻԿ ՍԻՄՈՆԻ (1913-1984) – Ծնվել է 1913 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1931 թ. ավարտել է Լենինականի մանկավարժական տեխնիկումը և մինչև 1935 թվականը աշխատել որպես ուսուցիչ: 1935 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1940 թ. ավարտել և ընդունվել է ասպիրանտուրա՝ հայ բանահյուսության գծով: 1942 թ. ասպիրանտուրայի երկրորդ կուրսից կուսակցության կոչով մեկնել է կարմիր բանակ և ուղարկվել է Անդրկովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ: Երեք ամիս սովորել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանում, ստացել լեյտենանտի կոչում և քաղաքական գծով մարտկոցի հրամանատարի տեղակալի պաշտոնով նշանակվել է ծառայության Բաքվի 252-րդ զենիթային հրետանային գնդում: Նա մասնակցել է Կովկասի պաշտպանությանը: 1942 թ. աշնանը Մ. Մկրտչյանին ուղարկել են 45-րդ բանակի շտաբ: Մեկ ամիս անց 262-րդ դիվիզիայի թերթում նշանակվել է գրական աշխատող:

1943 թ. զորացրվել և վերադարձել է համալսարան: 1944 թ. ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1944-1950 թթ. դասավանդել է համալսարանում: 1950-1954 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թեր-

թի խմբագրությունում, 1954 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Հայրենական պատերազմի ժամանակ պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «1941-1945 թթ. Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Վախճանվել է 1984 թվականին:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՂԱՋԱՆ ՇԱՔԱՐԻ (1912-2000) – Ծնվել է 1912 թ. մարտի 12-ին Վրաստանի Շուլավեր բնակավայրում: 1938 թ. Երևանի պետական համալսարանն ավարտելուց հետո նշանակվել է Բոլնիսի շրջանի Խաչեն գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն: 1939 թ. հունվարին զորակոչվել է բանակ: Ծառայել է 87-րդ դիվիզիայի 293-րդ հրաձգային գնդում: 1939 թ. մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, իսկ 1940 թ. որպես դասակի հրամանատար մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին և մարտի 12-ին ծանր վիրավորվել է: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: 1939 թ. դարձել է ԽՄԿԿ անդամ: 1941 թ. ընդունվել է աշխատանքի ԱրմՓանում որպես կադրերի բաժնի պետ, իսկ այնուհետև նշանակվել ՀԽՍՀ ԳԱ նախագահության բաժնի պետ, խորհուրդների գիտական քարտուղար՝ կիրառական գիտությունների խնդիրներով: 1969 թ. Ա. Մնացականյանը նշանակվել է կադրերի բաժնի պետ, իսկ 1984 թ. զբաղվել է կադրերի պատրաստման և կատարելագործման աշխատանքներով: 1985 թ. Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Մահացել է 2000 թ. Երևանում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1905-1967) – Ծնվել է 1905 թ. ապրիլի 1-ին Էրզրումի նահանգի Խնուս գավառի Խալիլ-Չաուշ գյուղում: Հայկական կոտորածների ժամանակ սպանվել են նրա ընտանիքի բոլոր անդամները: Մանուկ Մովսիսյանը նահանջող ռուսական զորքերի հետ եկել է Անդրկովկաս: Մինչև 1921 թվականը

եղել է Ստեփանավանի որբանոցում, որտեղ սովորել է գրագիտություն: 1925 թ. ստացել է միջնակարգ կրթություն, իսկ 1931 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1933 թ. ընդունվել է ասպիրանտուրա: 1936 թ. ավարտել է և անցել դասախոսական աշխատանքի համալսարանում: 1941 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1959 թ.՝ դոկտորական ատենախոսություններ:

1942 թ. փետրվարին Մ. Մովսիսյանը զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատը: Մասնակցել է Ղրիմ թերակղզին թշնամուց ազատագրելու համար մղվող կատաղի մարտերին: Մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո զինվորական ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի և զորացրվել: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և մի շարք մեդալներով:

Զորացրվելուց հետո Մ. Մովսիսյանը վերադարձել է մանկավարժական աշխատանքի: 1944-1946 թթ. եղել է ՀԽՍՀ լուսավորության մինիստրության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1946-1948 թթ.՝ լուսավորության մինիստրի տեղակալ: 1950 թ. Մ. Մովսիսյանը վերադարձել է համալսարան: 1961 թ. ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը շնորհել է նրան գիտության վաստակավոր գործչի կոչում: 1963 թ. արժանացել է պրոֆեսորի գիտական կոչման: 1962-1967 թթ. եղել է ԵՊՀ մանկավարժության ու հոգեբանության միացյալ ամբիոնի վարիչը: Վախճանվել է 1967 թ. սեպտեմբերի 21-ին:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ ԼԵՎՈՆԻ (1914-2000) – Ծնվել է 1914 թ. մայիսի 25-ին Ստեփանակերտ քաղաքում: 1933 թ. ավարտել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1938 թ. գերազանցությամբ ավարտելով ուսումը՝ ընդունվել է ֆակուլտետին կից ասպիրանտուրա: 1939 թ. նշանակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, առաջին իսկ օրերին կամովին մեկնել է կարմիր բա-

նակ: 1941 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին սովորել ու ավարտել է Վ. Ի. Լենինի անվան ակադեմիան, ստացել ավագ քաղղեկի կոչում և ուղարկվել Կարելական ռազմաճակատ: Մինչև 1941 թ. դեկտեմբեր ամիսը եղել է օպերատիվ խմբի քաղբաժնի ավագ հրահանգիչ, իսկ դեկտեմբերից մինչև պատերազմի վերջը՝ ռազմաօդային զորամասերում որպես զինվորական կոմիսար և հրամանատարի քաղաքական գծով տեղակալ: Մինչև 1944 թվականը մասնակցել է Հյուսիսային Կովկասի ազատագրմանը և Ստալինգրադի պաշտպանությանը: 1944 թվականից մասնակցել է Ուկրաինայի, Մոլդավիայի, Կարելիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի ազատագրմանը: Փոխգնդապետ Մովսիսյանը պարգևատրվել է շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո ավելի քան մեկ տարի շարունակել է ծառայել Ավստրիայում և Ռումինիայում գտնվող խորհրդային զորամասերում: 1946 թ. զորացրվել է և վերադարձել Երևան: Սկզբում աշխատել է Գյուղատնտեսական ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնում, իսկ 1948 թ.՝ տեղափոխվել Երևանի պետական համալսարան: 1948-1951 թթ. աշխատել է որպես ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար, իսկ 1951-1953 թթ.՝ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար: 1953 թվականից Ռ. Մովսիսյանը եղել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ և ընդմիջումներով երկար տարիներ վարել է ԽՄԿԿ ամբիոնի վարիչի պաշտոնը: 1960-1964, 1974-1980 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան: Նրան շնորհվել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորի պատվավոր կոչում: Վախճանվել է 2000 թ. օգոստոսին:

ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ (1914-1987) – Ծնվել է 1914 թ. Երևանում: Մանուկ հասակից զրկվել է հորից և կյանքի փորձություններով լի ճանապարհ է անցել: Իր մոր, փոքրահասակ քրոջ ու եղբայրների հետ նյութական ծանր զրկանքներ է կրել: 1934 թ. ավարտել է Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումը և ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1938 թ. ավարտելուց հետո նրան նշանակել են ֆակուլտե-

տի դասախոս և Հեռակա իրավաբանական ինստիտուտի հայկական մասնաճյուղի ուսմասվար:

1938 թ. ընդհանուր զորակոչի ժամանակ Վ. Մուսախանյանը զորակոչվել է կարմիր բանակ: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա գտնվելիս է եղել մարտական շարքում և մասնակցել է ֆաշիստական արյունարբու զորքերի դեմ մղվող առաջին մարտերին: Պատերազմի առաջին իսկ ամսում նրան նշանակել են 28-րդ մոտոմեխանիզացված կորպուսի, կարճ ժամանակ անց՝ 47-րդ բանակի զինվորական տրիբունալի անդամ և նախագահ:

Վ. Մուսախանյանը ոչ թե սոսկ գրասենյակային աշխատող է եղել, այլ իրեն դրսևորել է իբրև ճակատային առաջամարտիկ և ակտիվորեն մասնակցել է պաշտպանական մարտերին: Ռազմաճակատում նրա սկզբունքն է եղել պայքարել մեր երկրի զինված ուժերի համակարգում սոցիալիստական օրինականության ամրապնդման, արմատավորման, խորհրդային արդարադատության ճիշտ ու անթերի իրականացման համար:

Հայրենական պատերազմի ժամանակ Մուսախանյանի ռազմական ճանապարհը անցել է Կերչ-Թաման-Նովոռոսիյսկ-Կուրսկ-Բելգորոդ-Վորոնեժ-Կիև-Մինսկ-Վարշավա-Բեռլին-Խաբարովսկ ուղղությամբ: Հաղթանակից հետո նա շարունակել է իր ծառայությունը Խաբարովսկում ու Վլադիվոստոկում: Եղել է կորպուսային կամ ռազմաօդային բանակների զինվորական տրիբունալների նախագահ:

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերին ակտիվորեն մասնակցելու, բարձրագույն հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու, խորհրդային զինված ուժերի համակարգում երկարամյա ու անբասիր ծառայությունների համար Մուսախանյանը պարգևատրվել է կառավարական շքանշաններով ու մեդալներով, այդ թվում՝ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության համար», «Վարշավայի ազատագրման հասար», «Բեռլինի գրավման համար» և մի շարք այլ մեդալներով: Վ. Մուսախանյանը մոտ 30 տարի ծառայել է

խորհրդային բանակում: 1961 թ. հանրապետության վերադաս կուսակցական օրգանների պահանջով նա զորացրվել է և նշանակվել Հայկական ԽՍՀ դատախազ: Այդ կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նույն թվականի դեկտեմբերին նրան շնորհել է «Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական» բարձր կոչումը: Իբրև ՀԽՍՀ դատախազ՝ նա աշխատել է ավելի քան 10 տարի: Այդ ընթացքում ստացել է վաստակավոր իրավաբանի կոչում և պարգևատրվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի երկու պատվոգրերով: Հետագայում ղեկավարել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի իրավաբանական բաժինը: Վախճանվել է 1987 թվականին:

ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐԻ (1917-1979) – Ծնվել է 1917 թ. Թիֆլիսում: 1918 թ. մահացել է հայրը և ընտանիքով տեղափոխվել են Նոր Բայազետ (Կամո): 1936 թ. ավարտել է Նոր Բայազետի տեխնիկումը և մինչև 1938 թվականը աշխատել է որպես ուսուցիչ: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, զորակոչի առաջին իսկ օրերին նա համալսարանի բազմաթիվ սաների հետ միասին մեկնել է կարմիր բանակ: 1941 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին սովորել է Սուխումիի ռազմական դպրոցում: Ավարտելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և վաշտի հրամանատարի պաշտոնով ծառայության նշանակվել 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: 1942 թ. դեկտեմբերին Գ. Մուրադխանյանը այդ դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Առաջին իսկ պահից նա մասնակցել է Մոզդոկի տակ տեղի ունեցող մարտերին: Դեկտեմբերի վերջին ծանր վիրավորվել է, կարճ ժամանակում ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Նրան դարձյալ վաշտի հրամանատարի պաշտոնով ուղարկվել են Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ: 1944 թ. Շիվաշի, Ղրիմի հյուսիսային մասի, հատկապես Չանկո քաղաքի ազատագրական մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար իր զինվորների հետ պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

Գ. Մուրադխանյանը Ղրիմում ծանր վիրավորվել է, կորցրել մի ոտքը և որպես հաշմանդամ զորացրվել է բանակից: 1945-1947 թթ. աշխատել է Նոր Բայազետի շրջանի Կարմիր գյուղում որպես միջնակարգ դպրոցի տնօրեն, 1947-1948 թթ.՝ որպես շրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: 1952 թ. ավարտել է Երևանի կուսակցական դպրոցը՝ նշանակվելով Կենտկոմի «Ագիտատորի բլոկնոտի» խմբագրի տեղակալ: 1953-1966 թթ. աշխատել է որպես տպարանի տնօրեն, իսկ 1966-1970 թթ.՝ բազայի տնօրեն: 1970 թ. աշխատել է «Հայ գրքի» 5-րդ խանութի տնօրեն: Վախճանվել է 1979 թվականին:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՎԻԹԻ (1920-1986) – Ծնվել է 1920 թ. հունիսի 29-ին Մեղրիում: 1939 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ և հենց առաջին կուրսում մեկնել է՝ մասնակցելու խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական պատերազմի առաջին օրերից նա ծառայել է Բեսարաբիայում՝ Դանուբ գետի ափին: Ակտիվորեն մասնակցել է Հարավային ռազմաճակատի ռազմական գործողություններին որպես զենիթային հրանոթի սերժանտ: 1941 թ. սովորել է Կրասնոդարի զենիթահրթիռային ուսումնարանում, որն ավարտել է նույն թվականի դեկտեմբերին: Վերադառնալով ռազմաճակատ՝ նշանակվել է 5-րդ զենիթահրետանային դիվիզիայի 112-րդ գվարդիական գնդի պահեստային դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատար: Նրա զորամիավորումը Հյուսիսկովկասյան, Երրորդ և Չորրորդ ուկրաինական ռազմաճակատներում մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը: Կործանել է թշնամու 4 ինքնաթիռ, որի համար պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով: Հ. Մուրադյանը պարգևատրվել է նաև «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Վիեննայի գրավման», «Բուդապեշտի գրավման» մեդալներով:

Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում և 1952 թ. ավարտել է այն գերազանցությամբ: 1974 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստի-

ճան, իսկ 1983 թվականից՝ պրոֆեսորի կոչում: 1958 թվականից եղել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, 1972-1986 թթ.՝ բաժնի վարիչ: Զբաղվել է բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, պատմական քերականության հարցերով: Սկզբնավորել է հայերենի բարբառագիտական առաջին ատլասի նյութերի հավաքման և հրատարակության գործը: Մահացել է 1986 թ. հունիսի 5-ին Երևանում:

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ ԵՓՐԵՄԻ (1915-) – Ծնվել է 1915 թ. Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում: 1931 թ. ավարտել է Հոկտեմբերյանի (Արմավիր) մանկավարժական տեխնիկումը և Թալինի շրջանում անցել ուսուցչական աշխատանքի: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: 1941 թ. ավարտել է Ֆերգանայի հեծելազորային դպրոցը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և նշանակվել դասակի հրամանատար հեծյալ գնդում: 1941 թ. ապրիլին պաշտպանության մինիստրի հրամանով գնդի մի շարք սպաների հետ միասին ուղարկվել է Կիևի հատուկ զինվորական օկրուգի տրամադրության տակ: 1941 թ. հունիսին, երբ սկսվել է Հայրենական պատերազմը, Հ. Նազարյանը 34-րդ հեծյալ դիվիզիայի կազմում եղել է Հարավարևմտյան ռազմաճակատում՝ որպես դասակի հրամանատար: Մասնակցել է Բեսարաբիայի համար մղվող մարտերին: 1941 թ. հոկտեմբերին նրանց հեծյալ կորպուսը ուղարկվել է Մոսկվա պաշտպանության համար: Մոսկվայի ճակատամարտում կարմիր բանակի տարած հաղթանակից հետո այդ հեծյալ կորպուսը նորից ուղարկվել է Հարավարևմտյան ռազմաճակատ: 1942 թ. նոյեմբերի 26-ին ծանր վիրավորվել է և ուղարկվել թիկունք՝ երկարատև բուժման: Ապաքինվելուց հետո՝ 1943 թ. դեկտեմբերին, նրան ուղարկել են Առաջին բելառուսական ռազմաճակատ որպես գումարտակի հրամանատարի տեղակալ՝ մարտական ծառայությունների գծով: Մասնակցել է Բելառուսիայի ու Լեհաստանի ազատագրմանը: Բեռլինի մոտ երկրորդ անգամ վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Երկարատև բուժում ստանալուց հետո՝ 1946 թ.,

զորացրվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ և վերադարձել համալսարան: Հետագայում աշխատել է երկրաբանական ֆակուլտետում որպես դասախոս: Եղել է երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: Պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկի» շքանշանով, «Խիզախության համար» և մի շարք այլ մեդալներով:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՀՈՎՍԵՓԻ (1912-1990) – Ծնվել է 1912 թ. Թուրքիայի Էսկիշահիր վիլայեթի Մուրադելա գյուղում: 1922 թ. ընտանիքով արտաքսվել է Հունաստան, որտեղից 1927 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել Երևանում: 1936 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, մեկ տարի աշխատելուց հետո ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Պետական որոշման համաձայն՝ նույն թվականին վերադարձել է, հանձնել պետական քննությունները և 1942-1943 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Կրասնոդարի և մի քանի այլ քաղաքների ազատագրմանը: Պարգևատրվել է «Կովկասի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Մարտական ծառայությունը կատարելու համար» և այլ մեդալներով:

1943 թ. փետրվարին Կրասնոդարի ազատագրումից հետո գործուղվել է Պյատիգորսկի ռազմաքաղաքական դպրոցը, ստացել լեյտենանտի կոչում և ծառայել տարբեր զորամասերում: Առողջության վատանալու պատճառով 1944 թ. ուղարկվել է Հայաստանի զինվորական կոմիսարիատի տրամադրության տակ: 1944-1962 թթ. ծառայել է տարբեր զինկոմիսարիատներում որպես բաժնի պետ: 1962 թ. մայոր Նալբանդյանը զորացրվել է և անցել ուսուցչական աշխատանքի: Եղել է Երևանի թիվ 6 բաներիտ դպրոցի տնօրեն և պատմության ուսուցիչ: Վախճանվել է 1990 թվականին:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՎԱՉԵ ՍՄԲԱՏԻ (1919-1998) – Ծնվել է 1919 թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետում (Գավառ): 1936 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1941 թ.՝ Երևանի պետական համալսա-

րանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեկնել է բանակ, ավարտել Թելավի ռազմական ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կոչում: 1942 թ. անդամակցել է Կոմունիստական կուսակցությանը: 1942 թ. աշնանը Վ. Նալբանդյանը՝ որպես ականանետային դասակի հրամանատար, 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 684-րդ գնդի կազմում մասնակցել է Հյուսիսային Կովկասում մղված մարտերին: Մոզդոկի մոտակայքում վիրավորվել է: Վերականգնվելով ուղարկվել է Կրասնոդարի հրետանաականանետային ուսումնարան, որտեղ ծառայել է նախ որպես դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: Զորացրվել է 1946 թ. որպես պահեստային սպա և ունեցել է ավագ լեյտենանտի կոչում:

1946-1948 թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1969 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1971 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1994 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1948 թվականից շուրջ կես դար Վ. Նալբանդյանը դասավանդել է ԵՊՀ-ում: 1948-1950 թթ. աշխատել է որպես ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար, 1950-1952 թթ.՝ ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի կուսակցական օրգանների բաժնի վարիչ:

1952-1953 թթ. եղել է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, 1953-1956 թթ.՝ ՀԿԿ կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ, 1956-1965 թթ.՝ ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1965-1977 թթ՝ ՀԽՍՀ ԳԱ Մաշտոց Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, իսկ 1978-1998 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

1958-1967 թթ. Վ. Նալբանդյանը նշանակվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, 1954-1963 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի անդամ, 1956-1958 թթ.՝ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու, ՀԽՍՀ IV-VII գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1966 թվականից՝ գրողների միության անդամ:

Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», ինչպես նաև «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» ու այլ մեդալներով: Վ. Նալբանդյանը վախճանվել է 1998 թ. փետրվարի 28-ին Երևանում:

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ ԽՈՍՐՈՎԻ (1905-1994) – Ծնվել է 1905 թ. Արևմտյան Հայաստանի Բիթլիս (Բաղեշ) քաղաքում: 1924 թ. ավարտել է Էջմիածնի երկրորդ աստիճանի դպրոցը և անցել ուսուցչական աշխատանքի: 1928-1931 թթ. սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Մինչև 1940 թվականը աշխատել է կուսակցական ու խորհրդային համակարգում, իսկ 1940 թվականից դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում: Երկու տարի համալսարանում աշխատելուց հետո՝ 1941 թ., զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Կովկասյան ռազմաճակատ: Մարտերից մեկում վիրավորվել է, ապաքինվել և նորից շարունակել ծառայությունը բանակում: Զանազան զորամասերում աշխատել է որպես քաղղեկ: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով:

1945 թ. Նազարյանը զորացրվել է բանակից, վերադարձել համալսարան՝ նորից անցնելով դասախոսական աշխատանքի: 1946-1955 թթ. եղել է ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնի դասախոս, 1955-1975 թթ.՝ դոցենտ, 1975-1985 թթ.՝ պրոֆեսոր: 1947 թ. պաշտպանել է թեկնածուական, 1972 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1955 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1985 թ. անցել է վաստակած հանգստի: Վախճանվել է 1994 թ. հուլիսի 1-ին Երևանում:

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՆԻԿՈՂՈՍԻ (1914-1994) – Ծնվել է 1914 թ. Լոռու գավառի Հաջի Ղարա գյուղում: 1933 թ. ավարտել է Ղարաքիլիսայի (Վանաձոր) մանկավարժական ուսումնարանը և նշանակվել Լեռնապատ գյուղի յոթնամյա դպրոցի ուսմասվար: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմու-

թյան ֆակուլտետը: 1941 թ. հունիսին կամովին մեկնել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1945 թվականը: 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. հոկտեմբեր ամիսը սովորել է Բաքվի զենիթային հրետանու ուսումնարանում, ավարտել է, ստացել լեյտենանտի կոչում և նշանակվել դասակի հրամանատար Անդրկովկասյան հակաօդային պաշտպանության զորամասերից մեկում: 1944 թ. հուլիսին նրան ուղարկել են՝ Սմոլենսկի մերձճակատային գոտում ռազմական ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտները պաշտպանելու: Նրանց մարտկոցը խոցել է թշնամու 18 ինքնաթիռ:

1945 թ. Վ. Ներկարարյանը նշանակվել է զենիթային հրետանու և մարտկոցի հրամանատար Վիտեբսկի հակաօդային պաշտպանության երկրորդ բրիգադում: 1945 թ. տեղափոխվել է Լեհաստան և մասնակցել նախ Մլավայի, ապա՝ Վարշավայի հակաօդային պաշտպանությանը:

1945 թ. հոկտեմբերին Վ. Ներկարարյանը զորացրվել է, վերադարձել համալսարան և շարունակել սովորել ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1946 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1949 թ. ասպիրանտուրան ավարտելուց հետո ավագ դասախոսի պաշտոնով աշխատանքի է անցել ԵՊՀ ԽՍՀՄ պատմության ամբիոնում: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԽՄԿԿ կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում: 1965-1978 թթ. նշանակվել է կուսակցության արխիվի գիտության գծով փոխտնօրեն: Միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում: 1968 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1978-1989 թթ. եղել է ԵՊՀ ԽՄԿԿ ամբիոնի պրոֆեսոր, 1990-1994 թթ.՝ 20-րդ դարի քաղաքական պատմության ամբիոնի պրոֆեսոր-խորհրդատու: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1994 թ. դեկտեմբերի 18-ին:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՀԱՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԻ (1917-1986) – Ծնվել է 1917 թ. Կարսի գավառի Սարիղամիշի շրջանի Շաղևան գյուղում: 1918-1920 թթ. հայ-թուրքական կոտորածի ժամանակ ընտանիքի հետ միասին գաղթել է Դիլիջան և բնակություն հաստատել Մարտու-

նի գյուղում: 1939 թ. ավարտել է Դիլիջանի մանկավարժական տեխնիկումը՝ նշանակվելով ուսուցչական աշխատանքի: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ընդամենը մեկ տարի սովորելուց հետո՝ 1941 թ., զորակոչվել է կարմիր բանակ և մինչև վերջը մասնակցել է Հայրենական պատերազմին: Սկզբում սովորել ու ավարտել է Դոնի Ռոստովի ռազմաօդային ուսումնարանը և ուղարկվել Վիտեբսկ-Սմոլենսկի ռազմաճակատ: Ֆաշիստական ռմբակոծիչների դեմ մղվող օդային մարտի ժամանակ վիրավորվել է, կարճ ժամանակում ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Այս անգամ նրան ուղարկել են Կենտրոնական ռազմաճակատ: 55-րդ ավիոգնդի կազմում մասնակցել է Կիևի պաշտպանությանը: Արագաշարժ թռիչքների ժամանակ խոյահարող ինքնաթիռը հմուտ ու մարտական ձևով վարելու համար ստացել է լեյտենանտի կոչում: 1941 թ. սեպտեմբերին օդային մարտում Ա. Նիկողոսյանը երկրորդ անգամ է վիրավորվել: Ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ և մասնակցել Մոսկվայի պաշտպանությանը: 1941 թ. հոկտեմբերին նրան ուղարկել են Լենինգրադի ռազմաճակատ, որպես գրոհող օդաչու: Թշնամու դեմ հաջող մարտեր մղելու և նրան լուրջ կորուստներ պատճառելու համար արժանացել է մի շարք խրախուսանքների: 1941 թ. նոյեմբերին Ա. Նիկողոսյանին նորից ուղարկել են Մոսկվայի ռազմաճակատ, ուր մասնակցել է օդային ամենակատաղի մարտերին: Դեկտեմբերի 6-ին մարտերից մեկում խորհրդային անվախ օդաչու Նիկողոսյանը երրորդ անգամ վիրավորվել է, ստացել կոնտուզիա, երկար ժամանակ բուժվել, որից հետո ուղարկվել է Հարավային ռազմաճակատ՝ մասնակցելով Ղրիմի, Սևաստոպոլի ազատագրմանը: Մինչև 1945 թվականը Ա. Նիկողոսյանը եղել է օդային մարտերի մեջ: Ռազմաճակատներում ցուցաբերած արիության ու խիզախության համար պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով և «Խիզախության համար», «Կիևի պաշտպանության համար», «Լենինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տա-

րած հաղթանակի համար» մեդալներով:

1945 թ. Ա. Նիկողոսյանը զորացրվել է և վերադարձել պետական համալսարան: 1948 թ. ավարտել է և նշանակվել ուսուցչական աշխատանքի Երևանում:

Վախճանվել է 1986 թվականին:

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1921-1991) – Ծնվել է 1921 թ. Էջմիածնում: 1938 թ. ավարտել է Երևանի Ս. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. հուլիսի 15-ին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականի դեկտեմբերին ավարտել է Բաքվի հետևակային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել գործող բանակ: Սկզբում եղել է Հարավարևմտյան ռազմաճակատում՝ մասնակցելով Ուկրաինայի քաղաքների ու գյուղերի ազատագրման մարտերին: Խարկովից ոչ հեռու գտնվող, Բրիգատովկա կոչվող գյուղաքաղաքի տակ տեղի ունեցող մարտերում Կ. Շահբազյանը վիրավորվել է և ուղարկվել Ստալինգրադի մարզի Օբերդորֆ գյուղաքաղաքի հոսպիտալը: Կարճ ժամանակում ապաքինվելուց հետո ծառայության է նշանակվել 178-րդ հրաձգային գնդում: 1942 թ. աշնանը մեկնել է Ստալինգրադի ռազմաճակատ և մասնակցել քաղաքի ազատագրման վերջին մարտերին: Ստալինգրադի տակ տարած հաղթանակից հետո 178-րդ հրաձգային գունդը անցել է Չորրորդ ուկրաինական ռազմաճակատի տրամադրության տակ: Ռազմաճակատներում Կ. Շահբազյանը եղել է նախ դասակի, ապա՝ վաշտի հրամանատար և գումարտակի հրամանատարի ավագ համհարզ: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Ստալինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

1946 թ. մայիսին Կ. Շահբազյանը կապիտանի կոչումով զորացրվել է: 1949 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, իսկ 1952 թ.՝ ֆակուլտետին կից ասպիրանտուրան: 1953 թ.

աշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նույն թվականին եղել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի ամբիոնի ավագ դասախոս, 1958 թ.՝ դոցենտ: 1966 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և մեկ տարի անց ստացել պրոֆեսորի կոչում: Համալսարանում դասախոսական աշխատանքին զուգընթաց նա վարել է նաև վարչական պաշտոններ: Կ. Շահբազյանը եղել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ, ապա՝ դեկան, իսկ 1977-1991 թթ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գծագրական երկրաչափության և նկարչության ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1991 թ. հուլիսի 15-ին:

ՇԱՌՈՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ ՎԱՆՈՅԻ (1906-2007) – Ծնվել է 1906 թ. Բայազետ քաղաքում (Կամո): Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1931 -1934 թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1934 թվականից անցել դասախոսական աշխատանքի ԽՍՀՄ պատմության ամբիոնում: 1941 թ. օգոստոսին զորակոչվել է կարմիր բանակ և ծառայության մտել 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Սկզբում նշանակվել է ականանետային մարտկոցի հրամանատար, իսկ հետո՝ դիվիզիայի թերթի աշխատող ու թարգմանիչ: 1942 թ. վերջերին մասնակցել է Մոզդոկի տակ տեղի ունեցող մարտերին, այնուհետև տեղափոխվել է Հարավարևմտյան և Երրորդ ուկրաինական ռազմաճակատները: 1944-1945 թթ. կապիտան Շառոյանը մասնակցել է Ռումինիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, հատկապես Բելգրադի ու Բուդապեշտի ազատագրմանը:

Գ. Շառոյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար», «Բելգրադի ազատագրման համար», «Բուդապեշտի գրավման համար», «Վիեննայի գրավման համար» և այլ մեդալներով:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Գ. Շառոյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1967 թ. պաշտպանել է դոկ-

տորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1969 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1968-1970 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանը, իսկ 1970-1976 թթ.՝ ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչ: 1976-1986 թթ. աշխատել է ԽՍՀՄ պատմության ամբիոնում որպես պրոֆեսոր, իսկ 1986 թ. անցել է վաստակած հանգստի: Վախճանվել է 2007 թ. օգոստոսի 16-ին:

ՈՍԿԵՐՉՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ (1910-1993) – Ծնվել է 1910 թ. Կարսի նահանգի Բաշշորագյալ գյուղում: 1918-1920 թթ. հայթուրքական կռիվների ժամանակ ընտանիքով գաղթել է և բնակություն հաստատել Ալեքսանդրապոլի շրջակա գյուղերում: 1930 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և նշանակվել «Ավանգարդ» թերթի գրականության և արվեստի բաժնի վարիչ: Միաժամանակ աշխատել է որպես «Գրական դիրքերում» ամսագրի պատասխանատու քարտուղար: 1931-1932 թթ. եղել է հանրապետության լուսավորության մինիստրության ռեպերտուարային վարչության պետ և գլավլիտի քաղաքական խմբագիր: 1935 թ. Ա. Ոսկերչյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը և երկու տարի հետո ընդունվել Մոսկվայի Չերնիշևսկու անվան փիլիսոփայության, պատմության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: 1941 թ. ավարտել է, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և նշանակվել դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում: 1943 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1946 թվականը: 1943 թ. ավարտել է Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմաքաղաքական կուրսերը և նշանակվել դասախոսական աշխատանքի Թբիլիսիի հրետանային ուսումնարանում: 1945 թ. սկզբին Ոսկերչյանին ուղարկել են Բելառուսական ռազմաճակատ, և նա մասնակցել է Քյոնիգսբերգի մարտերին: Մինչև պատերազմի հաղթական ավարտը եղել է Արևելյան Պրուսիայում՝ մասնակցելով վերջին ու վճռական մարտերին: Հայրենական պատերազմից հետո Ոսկերչյանը զորացրվել է բանակից և նորից աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում և ինստիտուտներում: 1966 թ. պաշտպանել է դոկ-

տորական ատենախոսություն, ստացել պրոֆեսորի կոչում: 1969 թվականից Ա. Ոսկերչյանը աշխատել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտում: Վախճանվել է 1993 թ. հուլիսի 13-ին Յալթայում:

ՉԱԹԻՆՅԱՆ ՋԻՎԱՆ ԳԵՎՈՐԳԻ (1916-) – Ծնվել է 1916 թ. Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղում: 1936 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական բանֆակը և նույն տարում ընդունվել է պետական համալսարանի աշխարհագրաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. ավարտել է և անմիջապես զորակոչվել կարմիր բանակ: Նույն թվականին սովորել ու ավարտել է Մուրոմի ռազմական ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և մեկնել ռազմաճակատ: Եղել է Չորրորդ ուկրաինական ռազմաճակատում, Սիբիրյան 8-րդ դիվիզիայի 61-րդ հրետանային գնդում որպես ջոկի հրամանատար և դիվիզիոնի կապի պետ: Մասնակցել է Կուրսկի, Բրյանսկի ազատագրմանը:

Ջ. Չաթինյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և ութ մեդալներով: Մարտերում նա չորս անգամ վիրավորվել է, ստացել կոնտուզիա, բայց ապաքինվելուց հետո նորից մտել է մարտական գործողությունների մեջ:

1946 թ. Ջ. Չաթինյանը զորացրվել է և աշխատել իր մասնագիտությամբ: 1946-1949 թթ. եղել է Ալավերդու շրջանի Շամլուղի հանքերում որպես հանքերի երկրաբան, իսկ 1949-1953 թթ.՝ Գլոմովյան արշավախմբում որպես երկրաբանական հետախուզական կետի տեխնոլոգ, Հայաստանի երկրաբանական վարչության գլխավոր ինժեներ: 1966 թ. Ջ. Չաթինյանը մանկավարժական աշխատանքի է անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կիրովականի (Վանաձոր) մասնաճյուղում: 1968 թ. ստացել է դոցենտի կոչում և աշխատել նույն մասնաճյուղում որպես ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր:

ՊԱՌԱՎՅԱՆ ՀՐԱՉԻԿ ԳԱԼՈՒՍՏԻ (1919-1953) – Ծնվել է 1919 թ. Կիրովականի (Վանաձոր) շրջանի Ղշլաղ գյուղում: 1938 թ. ավարտել է Կիրովականի N°1 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. հունիսին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. մարտին ավարտել է Թելավի զինվորական դպրոցը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և դասակի հրամանատարի պաշտոնով ուղարկվել Ղրիմի ռազմաճակատ: 1942 թ. մարտից մինչև մայիս ամիսը մասնակցել է Ղրիմի պաշտպանությանը: 1942 թ. մայիսի 12-ին՝ գերմանական զորքերի հարձակման ժամանակ, մի խումբ ընկերների հետ ընկել է շրջապատման մեջ: Հետագայում ճեղքել է թշնամու օղակը՝ միանալով պարտիզանական ջոկատներին: Երբ թշնամին գրավել է Ղրիմը, Հ. Պառավյանը իր մի շարք ընկերների հետ գերվել է և ուղարկվել ֆաշիստական ճամբար: Պատերազմից հետո՝ 1946 թ., վերադարձել է Հայաստան և շարունակել է սովորել ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Թե՛ մինչև պատերազմը և թե՛ պատերազմից հետո՝ իր ուսումնառության տարիներին, Հ. Պառավյանը ակտիվ մասնակցություն է ունեցել ֆակուլտետի հասարակական-քաղաքական աշխատանքներին: 1948 թ. նա ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ստացել պատմաբանի որակավորում: Որոշ ժամանակ Հայաստանում աշխատելուց հետո մեկնել է Ռուսաստան: 1953 թ. պատահական աղետի ժամանակ Հ. Պառավյանը մահացել է ընդամենը 34 տարեկան հասակում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂՎԱՆ ՍԻՐԵԿԱՆԻ (1919-1982) – Ծնվել է 1919 թ. Հրազդանում: 1938 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Ա. Մռավյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1941 թ. երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Նույն թվականին սովորել ու ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը և ծառայության նշանակվել 34-րդ հրետանային գնդում: Հետագայում տեղափոխվել է 220-րդ հրաձգային դիվիզիա, որտեղից ուղարկվել է՝ սովորելու Բաքվի հրետանային ուսումնարանում: 1942 թ. սեպտեմբե-

րին ուսումնարանի սաների հետ Պետրոսյանը մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Կովկասի քաղաքների ազատագրական մարտերից մեկում վիրավորվել է, երկար ժամանակ բուժվել և ուղարկվել սանիտարական ծառայության 21-րդ շինարարական գումարտակը:

1946 թ. Ա. Պետրոսյանը զորացրվել է և մի քանի տարի աշխատել որպես ուսուցիչ, այնուհետև՝ մոսկովյան հատուկ շինարարության աշխղեկ: 1956 թ. շարունակել է սովորել ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել համալսարանում: Հետագա տարիների ԵՊՀ-ում աշխատել է որպես լաբորատորիայի վարիչ և դասախոս: Վախճանվել է 1982 թվականին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԲԱԽՇԻԻ (1902-1997) – Ծնվել է 1902 թ. Գորիսում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1922 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1929 թ. ավարտել է և աշխատանքի անցել համալսարանում սկզբում որպես դասախոս, ապա՝ պրոռեկտոր, իսկ հետո՝ 1937-1957 թթ.՝ ընդմիջումներով ռեկտոր:

1941թ. աշնանը, երբ սկսվել է կուսակցական ու խորհրդային համակարգի աշխատողների մոբիլիզացիան, Գ. Պետրոսյանը կամովին մեկնել է բանակ և նշանակվել 408-րդ հայկական դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ: Նա արիաբար կռվել է Հյուսիսային Կովկասի քաղաքների ու գյուղերի ազատագրման համար: Գարեգին Պետրոսյանի մասին պատկերավոր է նկարագրված դիվիզիայի քաղբաժնի պետ Ս. Սարգսյանի «Այրվող անտառը» գրքում: Ըստ որի՝ պարզ է դառնում, որ 1942 թ. հոկտեմբերին Հյուսիսային Կովկասի Գոյտխի մոտ՝ Պշիշի հովտում, գերմանական պահակային դիվիզիայի զորամասերը հարձակվել են 408-րդ հայկական դիվիզիայի վրա: Թշնամին իր կրակային ամբողջ հզորությունն ուղղել է դիվիզիայի հրամանատարական գնդերի հրամանատարական կետերի և շտաբային զորամասերի վրա: Այդ դաժան ու ահավոր ճակատամարտի ժամանակ ավագ քաղղեկ Գարեգին Պետրոսյանը և նրա մարտական ընկեր Սուրեն Գրիգորյանը գլխավորել են դիվիզիան պաշտպանող մարտական խումբը: Կատաղի ու անզիջում մարտեր մղելով թշնամու դեմ՝ Գ. Պետրոսյանի խումբը պաշտպանել է աջ-

թևյան զորքի նահանջը, որպեսզի այն ամբողջապես չընկնի թշնամու շրջապատման մեջ:

1942 թ. հոկտեմբերի 22-ին՝ թշնամու դեմ հակագրոհի գնալու ժամանակ, Գարեգին Պետրոսյանը ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Նրա հետ մարտնչող ռազմիկները մեծ հիացմունքով են խոսել այն մասին, որ Գ. Պետրոսյանը միշտ եղել է զինվորների հետ թե՛ պաշտպանական խրամատներում և թե՛ թշնամու վրա կատարվող վճռական գրոհների ժամանակ: Նրա մարտական ընկերներից մեկի գրավոր հիշողությունների մեջ ասված է, որ մայոր Պետրոսյանը միշտ գտնվելիս է եղել հրաձգությունների վայրում, կրակոցների մեջ: Դիվիզիայի հրամանատարները միշտ իրենց մարտիկներին հիշեցրել են կռվել այնպես, ինչպես կռվում է համալսարանի ռեկտոր Գարեգին Պետրոսյանը:

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, Տուապսեի, Նովոռոսիյսկի և Գոյտխի համար մղվող մարտերում ցուցաբերած խիզախության համար Պետրոսյանը պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

Պատերազմից հետո Կրասնոդարի երկրամասի Տուապսեի շրջանի Շահումյանի անվան գյուղը հատուկ որոշմամբ Գարեգին Պետրոսյանին հայտարարել է իր պատվավոր քաղաքացին: Գյուղսովետի որոշման մեջ այդ մասին ասված է. «Թանկագի՛ն Գարեգին Բախշիևիչ, ուրախությամբ հայտնենք ձեզ այն մասին, որ Շահումյանի անվան գյուղի բնակիչների ընդհանուր ժողովի որոշմամբ Շահումյանի հիմնադրման 50-ամյակի և Տուապսեի շրջանը Գերմանական ֆաշիստներից ազատագրելու 25-րդ տարեդարձի առթիվ դուք՝ որպես մեր գյուղի պաշտպանության համար ակտիվ մարտնչող, գտնվում եք մեր գյուղի պատվավոր քաղաքացիների ցուցակում»:

1949-1957 թթ. Գ. Պետրոսյանը կրկին ստանձնել է ԵՊՀ ռեկտորի պաշտոնը: Նրա ջանքերով համալսարանում հիմնադրվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների պատմության ամբիոն, որը նա ղեկավարել է մինչև 1956 թվականը: 1955 թ. Գ. Պետրոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1964 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի

կոչում: 1965 թ. ընտրվել է Բնագիտության ու տեխնիկայի պատմության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Գիտության պատմության խնդիրներով Գ. Պետրոսյանն զբաղվել է դեռևս 1940-ական թվականներից: Նրա աշխատանքները հիմնականում վերաբերում են մաթեմատիկայի, մասնավորապես հայ հին և միջնադարյան մաթեմատիկայի պատմությանը: 1938-1947 և 1951-1955 թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, իսկ 1954-1958 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1967 թ. Գ. Պետրոսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 1997 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄԻ (1921-1997) – Ծնվել է 1921 թ. Երևան քաղաքում: 1939 թ. ավարտել է Մեղրու միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Նույն տարվա աշնանը զորակոչվել է կարմիր բանակ, ուղարկվել է Արևմտյան հատուկ ռազմական օկրուգ՝ շարքային ծառայության: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, Հ. Պետրոսյանը ջոկի հրամանատարի պաշտոնով մասնակցել է սահմանագծային առաջին մարտերին: 1941 թ. հունիսի վերջին՝ Մինսկի պաշտպանական մարտերի ժամանակ, ստացել է կոնտուզիա և տարհանվել սկզբում Սմոլենսկ, իսկ հետո՝ Տամբով: Հոսպիտալներում ապաքինվելուց հետո ուղարկվել է Ղազախստան: 1942-1945 թթ. սովորել և ավարտել է մարշալ Շապոշնիկովի անվան Տամբովի ռազմահրետանային ուսումնարանը և Մոսկվայի պետական կենտրոնական ֆիզկուլտուրայի ինստիտուտին կից Վ. Ի. Լենինի անվան կարմրադրոշ ռազմական ֆակուլտետը: Մինչև զորացրվելը աշխատել է որպես ինստիտուտի ռազմական ամբիոնի դասախոս և հրետանային դպրոցի ուսուցիչ: 1948 թ. մայիսին զորացրվել է և կրկին շարունակել ուսումը ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1955 թվականին: 1955-1958 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում: 1959 թ. աշխատանքի է ընդուն-

վել Հեղափոխության թանգարան սկզբում որպես թանգարանի գիտքարտուղար, ապա՝ գիտացուցադրական բաժնի վարիչ: Ջուգահեռ աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1961 թ. եղել է կուսակցության պատմության ամբիոնի ասիստենտ, ապա՝ դասախոս: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1970-1974 թթ. եղել է պատմության ֆակուլտետի դեկան: 1991 թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: Վախճանվել է 1997 թ. օգոստոսի 13-ին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ ՀԱԿՈԲԻ (1904-) – Ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Մոկս գավառի Հիր գյուղում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար փախել է Արևմտյան Հայաստանից և բնակություն հաստատել Երևանում: 1924 թ. ավարտել է Երևանի ինդուստրիալ տեխնիկումը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ավարտել է 1930 թ.՝ անցնելով դասախոսական աշխատանքի ֆիզիկամաթեմտիկական ֆակուլտետում:

1941 թ. հունիսի 30-ին զորակոչվել է կարմիր բանակ: Առաջին տարում եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, Սևծովյան խմբավորման մեջ և մարտկոցի հրամանատարի տեղակալի պաշտոնով մասնակցել է Կրասնոդարի պաշտպանությանը: 1943 թ. լեյտենանտ Ն. Պետրոսյանը հրետանային ծառայության մեջ ակտիվություն ցուցաբերելու համար նշանակվել է դիվիզիոնի հրամանատարի տեղակալ, տեղափոխվել է Մերձբալթիկա և մասնակցել կուռլանդական ֆաշիստական խմբավորման դեմ մղվող կատաղի մարտերին: Այդ ռազմաճակատում նա մնացել է մինչև թշնամու լիակատար ջախջախումը:

Ն. Պետրոսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Պատվո նշան» շքանշաններով և «Կովկասյան պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Ն. Պետրոսյանը ռազմադաշտում վիրավորվել է երկու անգամ. առաջին անգամ՝ 1943 թ. Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, երկրորդ անգամ՝ 1944 թ. Լիտվայի համար մղած մարտերում: Հաղթանակից հետո՝ 1945 թ., վերադարձել է համալսարան և աշխատել որպես դասախոս մեխմաթ ֆակուլտետում:

ՊԻՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Թբիլիսիում: 1937 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական քիվ 70 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի աշխարհաերկրաբանական ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 8-ին 5-րդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Թելավիի ռազմական ուսումնարանը: Ավարտելուց հետո՝ մինչև 1942 թ. հոկտեմբերը, դասակի հրամանատարի պաշտոնով ծառայել է Բաքվի հետևակային ռազմական ուսումնարանում: 1942-1943 թթ. եղել է Հյուսիսային Կովկասի, ապա՝ Ուկրաինայի ռազմաճակատներում: Մասնակցել է Տուապսեի շրջանում դեսանտային զորամասերի, Կուրսկ, Բելգորոդ քաղաքների տակ տեղի ունեցած հարձակողական մարտերին, Դնեպրի գետանցմանը և ձախափնյա Ուկրաինայի ազատագրմանը: Վիրավորվել է երեք անգամ. առաջին անգամ՝ Կովկասի ռազմաճակատում, երկրորդ անգամ՝ Մալայա Զեմլյայում, երրորդ անգամ՝ Դնեպրի գետանցման ժամանակ:

1946 թ. զորացրվել է և վերադարձել Երևան, հանձնել է ԵՊՀ-ում ավարտական քննությունները և ստացել երկրաբանի մասնագիտացում՝ աշխատանքի անցելնելով ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտում: 1951 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1969 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1959 թ. ղեկավարել է Գիտությունների ակադեմիայի երկրաքիմիայի բաժինը և զուգահեռ դասավանդել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով, իսկ 1985 թ՝. «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»:

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԵՐՈԲ ՊՈՂՈՍԻ (1904-1983) – Ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանի Սպարկերտի գավառի Վերին Հյուրուկ գյուղում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար պատանի հասակում փախել է և ապաստան գտել Արևելյան Հայաստանի որբանոցներից մեկում մինչև 1923 թվականը: 1926 թ. ավարտել է Երևանի Ա. Մյասնիկյանի անվան երկրորդ աստիճանի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը: 1931 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1932-1941 թթ. աշխատել է որպես դասախոս: 1939 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1941 թ. սեպտեմբերին զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում աշխատել է որպես ավագ քաղղեկ, իսկ հետո՝ որպես գնդի կուսկազմակերպության պատասխանատու քարտուղար: Ընդունվել է Հայկական դիվիզիան և նրա հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Մոզդոկի և Գրոզնու պաշտպանական մարտերին: 1942 թ. դեկտեմբերին Մոզդոկի տակ վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Պողոսյանը ուղարկվել է ծառայության ռազմավիրական ճանապարհի վրա հսկող զորամասերում: Որոշ ժամանակ անց տեղափոխվել է Երևան, աշխատել որպես քաղբաժնի ավագ հրահանգիչ մինչև 1946 թվականը, որից հետո զորացրվել է և վերադարձել համալսարան: 1956 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1959 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1937-1941 թթ. եղել է ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1937-1941, 1955-1960 և 1964-1968 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, 1937-1940 թթ.՝ նաև Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն: 1965 թ. արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման: Եղել է «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական դասագրքերի հեղինակ: Պարգևատրվել է «Պատվո նշան» և մարտական շքանշաններով ու մեդալներով: Վախճանվել է 1983 թ. ապրիլի 5-ին Երևանում:

ՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՄԵՍՐՈՊԻ (1918-1946 թ.) – Ծնվել է 1918 թ. Կիրովականի (Վանաձոր) շրջանի Եղուրլու գյուղում: 1937 թ. ավարտել է Կիրովականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ

դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, շատ համալսարանականների հետ միասին առաջին իսկ օրերին զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. հուլիս-օգոստոս ամիսներին սովորել ու ավարտել է Թելավի ռազմահետևակային ուսումնարանը: 1942 թ. օգոստոսին դասակի հրամանատարի պաշտոնով ծառայության է ուշանակվել Թամանյան դիվիզիայի 390-րդ գնդում: Նույն թվականի աշնանը այդ դիվիզիայի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և մասնակցել Գրոզնու տակ տեղի ունեցող մարտերին: Մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է, ապաքինվել և ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով զորացրվել է բանակից: 1943 թ. Ս. Պողոսյանը նշանակվել է ՀԽՍՀ միլիցիայի վարչության քաղբաժնի պետի տեղակալ՝ կոմերիտմիության գծով: 1946 թ. սեպտեմբերի 8-ին ավտովթարի հետևանքով մահացել է:

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԵԳԼԱՐԻ (1920-2005) – Ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում: 1937 թ. ավարտելով Երևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ և ավարտել 1941 թվականին: 1941 թ. աշնանը զորակոչվել է բանակ և մասնակցել պաշտպանական մարտերին, ապա՝ 1942-1943 թթ.՝ Կովկասի համար մղվող մարտերին, Կերչի և Ղրիմի ճակատամարտերին, 1943 թ.՝ Բելգորոդի ուղղությամբ մղվող մարտերին: Մարտնչել է Հարավային Ուկրաինայի ազատագրության համար: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: 1945-1949 թթ. Գ. Ջահուկյանը եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ավագ դասախոս, 1948-1957 թթ.՝ օտար լեզուների, 1957-1970 թթ.՝ ռոմանագերմանական բանասիրության ամբիոնների վարիչ, 1970 թվականից՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր: 1947 թ. Գ. Ջահուկյանը պաշտպանել է թեկնածուական, 1955 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1958 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1949-1950 թթ., 1959-1962 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1962 թվականից մինչև կյանքի վերջը՝ նույն ինստիտուտի տնօրեն: 1968 թ. ընտրվել

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974 թ.՝ ակադեմիկոս: Գ. Ջահուկյանն իր անգնահատելի ներդրումն է բերել հայ նորագույն լեզվաբանության հիմնադրման գործին: Ականավոր լեզվաբանի թողած գիտական պատկառելի ժառանգության մեջ մեծ արժեք են «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (Երևան, 1959), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուս., Երևան, 1967), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (ռուս., Երևան, 1982), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (Երևան, 1987) և այլ ծավալուն աշխատություններն ու բազմաթիվ հոդվածները: Վախճանվել է 2005 թ. հուլիսի 8-ին Երևանում:

ՋԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏԻ (1920-2000) – Ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1940 թ., ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ուսանող էր և աշխատում էր ռազմական հոսպիտալում: Արժանացել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալի: 1945 թ. սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) համալսարանի ասպիրանտուրայում: 1949 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնում: 1962-1991 թթ. եղել է նույն ամբիոնի վարիչը: 1959 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991 թ.՝ պրոֆեսորի կոչում: Դ. Ջաղացպանյանը վախճանվել է 2000 թ. նոյեմբերի 19-ին Երևանում:

ՋՈՒՀԱՐՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԳԵՎՈՐԳԻ (1905-1988) – Ծնվել է 1905 թ. դեկտեմբերի 27-ին Կարսի նահանգի Կըզըլ-Չաղչախ գյուղում: Հայրենի գյուղում ստացել է տարրական կրթություն և հայ ժողովրդին պատուհասած դառը ճակատագրի արդյունքում տեղափոխվել են Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղ նա կրթությունը շարունակել է տեղի առևտրական դպրոցում և ինդուստրիալ տեխնիկումում, որից հետո անցել է ուսուցչական աշխատանքի Շիրակի մարզի Ախուրյանի շրջանի Բաջողլի (Հայկավան) գյուղի դպրոցում: 1926-1930 թթ. սովորել և ավարտել ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը: Աշխատել է Եղեգնաձորի շրջանում որ-

պես ժողկրթության բաժնի վարիչ, ապա՝ Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում: Թ. Ջուհարյանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել է Կովկասի պաշտպանության և ազատագրության համար մղվող մարտերին՝ Կերչի ու Ղրիմի ճակատամարտերին, Հարավային Ուկրաինայի և Բելառուսիայի ազատագրմանը, ապա՝ Ճապոնիայի դեմ մղվող պատերազմում Կվանտունյան բանակի ջախջախմանը: Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի», «Պատվո նշան» շքանշաններով: Նրան շնորհվել է վաստակավոր ուսուցչի կոչում, նաև ստացել է բազմաթիվ մեդալներ: Ջորացրվելուց հետո աշխատանքի է անցել ՀԽՍՀ լուսավորության մինիստրությունում որպես տեսուչ: 1976-1988 թթ. եղել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչը, ստացել է պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 1988 թ. ապրիլի 17-ին:

ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՐՈԲԻ (1913-2000) – Ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 10-ին Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում: 1933 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) շինարարական տեխնիկումը և մեկ տարի ուսուցչական աշխատանք կատարելուց հետո՝ 1934 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա: Ընդամենը մեկ ամիս հետո զորակոչվել է կարմիր բանակ: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, նա առաջին իսկ օրերին եղել է գործող բանակում: Մինչև 1944 թ. վերջը ծառայել է 7-րդ հատուկ բանակի կապի գնդի ռադիովաշտում որպես միջին հզորության զինվորական ռադիոկայանի պետ: Սկզբում եղել է Կարելո-ֆիննական, ապա՝ Առաջին ու Երկրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի ազատագրմանը: 9-րդ գվարդիական բանակի կազմում լեյտենանտ Սահակյանը, մարտեր մղելով, հասել է մինչև Վիեննա: Նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մի քանի մեդալներով:

1945 թ.՝ զորացրվելուց հետո, Գ. Սահակյանը սովորել ու ավար-

տել է Մոսկվայի Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1950 թ. աշխատանքի անցել համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1951 թ. հիմնադրել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնը և ղեկավարել այն մինչև 1985 թվականը: 1963 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1964 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թվականից՝ ակադեմիկոս: 1967-1972 թթ. Եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան: Վախճանվել է 2000 թ. մարտի 26-ին Երևանում:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆԻ (1912-1993) – Ծնվել է 1912 թ. Վրաստանի Շուլավեր քաղաքում: 1928 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, մեկ տարի աշխատել է որպես ուսուցիչ և 1929 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1932 թ. ավարտել է համալսարանը և նշանակվել դասախոսական աշխատանքի: 1936-1940 թթ. սովորել է Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրայում: 1940 թ. հունիսին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և վերադարձել Երևանի համալսարան՝ որպես դասախոս: 1940 թ. նոյեմբերին զորակոչվել է խորհրդային բանակ, ավարտել է ավիացիոն դպրոցը և սերժանտի կոչումով ծառայել Օդեսայի ու Բեսարաբիայի ավիացիոն դիվիզիաներում: Ավիացիայի սերժանտ Վ. Սաղաթելյանը Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է առաջին իսկ օրից: Նա՝ որպես ավիացիոն դիվիզիայի հրամանատարի մարտական ինքնաթիռի հրաձիգ-ռադիստ, մասնակցել է Բեսարաբիայի, Օդեսայի և Դոնբասի պաշտպանական ամենածանր մարտերին: Վ. Սաղաթելյանը դիվիզիայի հրամանատարի և կոմիսարի հանճնարարությամբ քաղաքական-հայրենասիրական մեծ աշխատանք է կատարել դիվիզիայի մարտիկների և հրամանատարների շրջանում: 1942 թ. մայիսի 20-ին Դոնբասում՝ Շախտի քաղաքի մոտակայքում, օդային մարտի ժամանակ օդաչու Վ. Սաղաթելյանը ծանր վիրավորվել է՝ զրկվելով աջ ոտքից: Ռազմաճակատում ցուցաբերած մարտական ակտիվ գործողությունների համար ավիացիայի սերժանտ Վ. Սաղաթելյանը պար-

գնատրվել է «Կարմիր աստղ» մարտական շքանշանով ու մի շարք մեդալներով:

1942 թ. Վ. Սաղաթելյանը զորացրվել և վերադարձել է համալսարան: 1943-1949 թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական, իսկ 1968-1970 թթ.՝ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետների դեկան: 1949-1981 թթ. աշխատել է որպես բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ:

1970 թ. ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը, հաշվի առնելով Վ. Սաղաթելյանի գիտամանկավարժական ծառայությունները, նրան շնորհել է պրոֆեսորի, իսկ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչում:

Համալսարանում կատարած երկարամյա և ամբասիր աշխատանքի համար պրոֆեսոր Վ. Սաղաթելյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 3 պատվագրով: Վախճանվել է 1993 թ. դեկտեմբերի 28-ին:

ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱԲԱԲԻ (1918-2006) – Ծնվել է 1918 թ. Խանլարի շրջանի Ազատ գյուղում: 1937 թ. ավարտել է Կիրովաբադի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1941 թ. օգոստոսի 5-ին կամովին մեկնել է բանակ: 1941 թվականի օգոստոսից մինչև 1942 թ. հունվարը սովորել է Թելավի զինվորական ուսումնարանում, ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել ռազմաճակատ: Մասնակցել է Խարկովի, Չուգանի, Իզիումբարվենկոյի և Ստալինգրադի համար մղվող մարտերին: Պարգևատրվել է «Արիության համար», «Ստալինգրադի պաշտպանության համար» և այլ մեդալներով: 1942 թ. Ստալինգրադի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվել է, ապաքինվել և ուղարկվել ՀԽՍՀ զինվորական կոմիսարիատի տրամադրության տակ: 1943 թ. ապրիլից մինչև 1944 թ. փետրվարը աշխատել է Կոտայքի շրջանի զինվորական կոմիսարիատում որպես ընդհանուր ուսուցման պետ: 1944 թ. փետրվարից մինչև 1944 թ. հուլիսը սովորել ու ավարտել է Թբիլիսիի հրամանա-

տարական վերապատրաստման կուրսերը և մինչև 1946 թ. վերջը ծառայել 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: 1946 թ. հոկտեմբերին զորացրվել է, հեռակա կարգով ավարտել ԵՊՀ պատմության ֆակուլտետը և գործուղվել Մոսկվա՝ բարձրագույն դիվանագիտական դպրոցում սովորելու: 1949-1952 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՀԿԿ կենտկոմում: 1958-1962 թթ. աշխատել է ԽՄԿԿ կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում: 1962 թվականից աշխատել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ: Վախճանվել է 2006 թ. Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱԼԵՔՍԱՆԻ (1920-1997) – Ծնվել է 1920 թ. Սիսիանի շրջանի Շնաքաղ գյուղում: 1943 թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը, որը ավարտել է 1941 թ.՝ աշխատանքի անցնելով «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում: 1942 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1943 թվականը: Ավարտել է Թբիլիսիի ռազմական դպրոցը և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մինչև 1943 թ. հունիս ամիսը աշխատել է «Առաջ հանուն հայրենիքի» ռազմաճակատային թերթի խմբագրությունում: Թերթի էջերում լույս են տեսել Սարգսյանի՝ հայրենասիրություն, ժողովուրդների բարեկամություն ու եղբայրություն ներշնչող բազմաթիվ հոդվածները:

Գ. Սարգսյանը գրոհով անցել է Գրոզնուց մինչև Կրասնոդար: Մասնակցել է Պրոխլադնո, Գեորգևսկ, Մինվոդի, Կավկազսկիի, Կրասնոդարի ազատագրմանը: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: 1943 թ. հունիսին զորացրվել է և վերադարձել Երևանի պետական համալսարան: 1947 թ. ավարտել է ասպիրանտուրան, նույն տարում պաշտպանել թեկնածուական ատենախոսու-

թյուն և անցել դասախոսական աշխատանքի: 1947-1949 թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնում որպես հրահանգիչ: 1948 թ. վերջին ստացել է դոցենտի կոչում և աշխատել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ գրականության ամբիոնում: Վախճանվել է 1997 թ. հունվարի 6-ին:

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԵՍԻ (1917-1981) – Ծնվել է 1917 թ. Իջևանի շրջանի Սևքար գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի մելիորատիվ հողաշինարարական տեխնիկումը, նշանակվել հողաշինարարական գյուղատնտեսության մինիստրությունում և Ալավերդու շրջանային գործադիր կոմիտեում: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետը: 1941 թ. հունիսին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Մի քանի ամիս Դիլիջանում և Ավճալայում ծառայելուց հետո ընդունվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը: 1942 թ. մայիսին ավարտել է, ստացել լեյտենանտի կոչում և մեկնել Հարավային ռազմաճակատ: Մայիսի 17-ին հրետանու պետի ղեկավարման մարտկոցի տոպոգրաֆիական դասակի հրամանատարի պաշտոնով ծառայության է նշանակվել 216-րդ հրաձգային դիվիզիայում: 1942 թ. հուլիսին, երբ ֆաշիստական զորքերը Հարավային ռազմաճակատի ուղղությամբ սկսել են իրենց հարձակումները, Գ. Սարգսյանն իր դիվիզիայով մասնակցել է Կովկասի պաշտպանությանը: 1943 թ. մասնակցել է Դոնբասի ազատագրմանը և Սիվաշի պլացդարմի գրավմանը: 1944 թ. աշնանը Առաջին մերձբալթյան ռազմաճակատից տեղափոխվել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատ, մարտնչելով հասել Լեհաստան և Արևելյան Պրուսիա: 1945 թ. ապրիլին մասնակցել է Քյոնիգսբերգի գրավմանը և մինչև Գերմանիայի կապիտուլացիան մնացել այնտեղ: 1946 թ. ապրիլին զորացրվել է և շարունակել իր ուսումը համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում: 1948 թ. ավարտել է և ընդունվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան՝ քարտեզագրության գծով: 1951 թ. ավարտելուց հետո դասախոսական աշխատանքի է անցել նույն ինստիտուտի աշխարհագրության ամբիոնում: 1952 թ. պաշտպանել է թեկ-

ճածուական ատենախոսություն: Աշխատել է որպես Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ:

Գ. Սարգսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության համար», «Քյոնիգսբերգի գրավման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Վախճանվել է 1981 թվականին:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ (Խորհրդային Միության հերոս) (1924-2009) – Ծնվել է 1924 թ. Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1942 թ. սեպտեմբերին զորակոչվել է կարմիր բանակ: Ս. Սարգսյանը առաջին անգամ իր մարտական մկրտությունը ստացել է Կարաչև քաղաքի ազատագրման մարտերում և պարգևատրվել «Մարտական ծառայությունների համար» մեդալով: 1945 թ. մարտի 24-ին մարտական առաջադրանքը խիզախորեն կատարելու համար Ս. Սարգսյանը ստացել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Հրամանատարությունը նրա մարտական սխրագործությունը հետևյալ կերպ է բնութագրել. «1944 թ. հունիսի 27-ին հակառակորդի հրետանային ու գնդացրային սաստիկ կրակի տակ ընկ. Սարգսյանն առաջիններից թվում անցավ Դնեպր գետը Մուգիլյով քաղաքի շրջանում: Ատամներով բռնած հեռախոսալարը՝ նա կապ էր հաստատում գետի ձախ և աջ ափերի հետ: Կապի գիծը հաճախ կտրվում էր, բայց նա, իր կյանքը վտանգի ենթարկելով, ժամանակին և արագ վերականգնում էր իր գծի փչացած մասերը՝ ապահովելով մեր հրամանատարության կապը Դնեպրն անցած զորքերի հետ»:

Ս. Սարգսյանը եղել է մի շարք ռազմաճակատներում, մասնակցել Ուկրաինայի և Բելառուսիայի մի շարք քաղաքների և Լեհաստանի տարածքի ազատագրմանը: Մինչև Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանն արժանանալը նա պարգևատրվել է նաև «Լենի-

ցի», «Կարմիր աստղ» շքանշաններով ու մեդալներով: 1944 թ. պարգևատրվել է ՀամԼԿԵՄ կենտկոմի պատվոգրով: Վեց անգամ արժանացել է գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրի: Պատերազմի ավարտից հետո Խորհրդային Միության հերոս Սուրեն Սարգսյանն իր ուսումը շարունակել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում: Ավարտել է և անցել դասախոսական աշխատանքի: Աշխատել է ինժեներ Ավտոպահեստամասերի գործարանում, 1963 թվականից եղել է «Հայմետաղմատի» վարչության պետ: Վախճանվել է 2009 թ. նոյեմբերի 14-ին:

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍԻ (1914-) – Ծնվել է 1914 թ. Մարտունու շրջանի Ծովինար գյուղում: 1936-1937 թթ. սովորել ու գերազանց առաջադիմությամբ ավարտել է Բասագեչարի միջնակարգ դպրոցը: 1938 թ. Լ. Սարդարյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ուսումնառության տարիներին ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, իսկ հասարակական աշխատանքում՝ ակտիվություն՝ դառնալով անվանական թոշակառու:

1942 թ. Լ. Սարդարյանը զորակոչվել է կարմիր բանակ: Ծառայել է Թամանյան դիվիզիայի 400-րդ և 526-րդ գնդերում: Եղել է վաշտի քաղղեկ, գումարտակի կազմակերպիչ, սպա և կոմիսար: Նա անցել է Գրոզնի-Թերեք-Կուբան-Մալգոբեկ-Նովոռոսիյսկ-Թամանից-Կերչ-Սիմֆերոպոլ-Սևաստոպոլ-Լվով-Լյուբլին-Վարշավա-Ֆրանկֆուրտ-Բեռլին մարտական փառապանծ ուղին: 1945 թ. ապրիլի 29-ին Բեռլինի համար մղվող առաջին մարտերից մեկում Սարդարյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Մի քանի անգամ վիրահատվելուց հետո ապաքինվել է և որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից: Պատերազմի տարիներին ճակատային ու թիկունքային թերթերը բազմիցս գրել են հոդվածներ Սարդարյանի արիության ու խիզախությունների մասին: Նրանց գումարտակի հրամանատար Ն. Ավետյանը 1944 թ. հուլիսին «Խորհրդային Հայաստան» թերթում գրել է. «Սարդարյանը Թամանի համար մղած մարտերում ցուցաբերեց բացառիկ քաջություն ու արիություն և ար-

ժանացավ կառավարական ամենաբարձր պարգևին՝ «Լենինի շքանշանին»: Այդ սխրանքը արտահայտվեց նրանում, որ միայն մի մարտի ժամանակ նա սպանեց 27 և ծանր վիրավորեց 20 հիտլերականների: Մեկ այլ մարտում նա կազմակերպեց յուրայիններին և ետ շպրտելով հիտլերականների չորս գրոհները՝ մարտադաշտում փռեց թշնամու զինվորների ավելի քան 130 դիակ: Այդ նույն սխրագործության համար նա պարգևատրվեց «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»[224]: Մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար Լ. Սարդարյանը պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և «Կովկասի պաշտպանության համար», «Մարտական ծառայությունների համար», «Վարշավայի ազատագրման համար», «Բեռլինի գրավման համար» և մի շարք այլ մեդալներով:

Ռազմաճակատներից Սարդարյանը նույնիսկ մարտերի ծանր պահերին ոգևորող նամակներ է ուղարկել իր ընկեր ուսանողներին ու դասախոսներին: «Համալսարանի իմ ընկերներին» հասցեով մի նամակում նա գրել է. «Մեր հայրենիքի սահմաններից հեռու՝ ռազմաճակատից, Ձեզ հղում եմ մարտական ողջույնս, բարևում իմ բոլոր դասախոսներին և ուսանող ընկերներին: Ընկե՛ր ուսանող-ուսանողուհիներ, գիտությանը տիրապետելու բնագավառում թող ձեզ ոգևորեն մեր քաջարի մարտիկների սխրագործությունները և խորհրդային բանակի զենքի փառքը: Ես կոչ եմ անում ձեզ, որ անդադրում կերպով ձեր համառ աշխատանքով ձգտեք հասնելու ռազմաճակատի ձեր ընկերների նվաճումներին: Արդեն մոտենում է մեր հաղթական վերադարձի օրը: Տուն վերադառնալու ամենակարճ ճանապարհը Բեռլին-Երևան մարշրուտն է»[225]:

Ծանր վիրահատություններից հետո Սարդարյանը հրաշքով կյանք է վերադարձել, զորացրվել և նորից շարունակել է իր կիսատ թողած ուսումը Երևանի պետական համալսարանում: 1951 թ. նա առաջին

[224] «Սովետական Հայաստան», 1944, № 4 և 132:
[225] «Սովետական Հայաստան», 1944, № 80, ապրիլի 20:

կարգի դիպլոմով ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը և մեկնել աշխատանքի իր ծննդավայրը: Չնայած իր հաշմանդամ լինելուն՝ նա կատարել է մի շարք պատասխանատու աշխատանքներ՝ գործարանի տնօրեն, կոլտնտեսության նախագահ, շինվարչության պետ: Հետագայում աշխատել է Մարտունու արտադրական վարչությունում որպես իրավախորհրդատու և միաժամանակ միջնակարգ դպրոցում դասավանդել է «խորհրդային իրավունք» առարկան:

ՍԱՖԱՐՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ԿՆՅԱԶԻ (1908-1970) – Ծնվել է 1908 թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: 1924 թ. ավարտել է Եղվարդի 7-ամյա դպրոցը և տեղափոխվել Երևան: 1929 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցիչ Ախտայի շրջանի Յայջի գյուղում: 1930-1932 թթ. դարձել է այդ դպրոցի վարիչ: 1932-1934 թթ. աշխատել է որպես ժողկրթբաժվար: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և աշխատանքին համընթաց իրավունք ստացել հանձնելու ասպիրանտական քննություններ: 1941 թ. երբ սկսվել է Հայրենական պատերազմը, հունիսի 23-ին զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1943 թվականն անընդմեջ եղել է գործող բանակում: Սկզբում եղել է Հարավարևմտյան, ապա՝ Ստալինգրադյան, Լենինգրադյան ու Արևմտյան ռազմաճակատներում: Ծառայել է Հարավարևմտյան ռազմաճակատի 291-րդ թեթև հրետանային գնդում որպես տոպոգրաֆ, 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 43-րդ հրետանային գնդում՝ որպես հրետանավոր: 1942 թ. ծանր վիրավորվել է, հոսպիտալում ապաքինվել և նորից մեկնել ռազմաճակատ: Մինչև 1943 թ. սեպտեմբերը ծառայել է 199-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային հատուկ դիվիզիոնում: 1943 թ. սեպտեմբերի 17-ին Սմոլենսկի տակ երկրորդ անգամ վիրավորվել է և տեղափոխվել Մոսկվայի հոսպիտալ: Նույն թվականի դեկտեմբերին նրան տեղափոխել են Երևանի հոսպիտալ, ուր բուժվել է և որպես զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ զորացրվել բանակից: Ռազմաճակատներում մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար Սաֆարյանը պարգևատրվել է մեդալներով:

Մ. Սաֆարյանը զորացրվելուց հետո՝ 1944 թ., ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրան, 1947 թ. վերջին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: Մինչև 1950 թվականը աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում որպես բաժնի վարիչ: 1950 թ. Սաֆարյանը տեղափոխվել է Երևանի պետական համալսարան: Սկզբում աշխատել է ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնում, իսկ 1951 թվականից մինչև իր մահը՝ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: Վախճանվել է 1970 թվականին:

ՍԱՖՅԱՆ ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1918-) – Ծնվել է 1918 թ. Ստեփանավանում: 1936 թ. ավարտել է Ստեփանավանի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1941 թ. հունիսին ավարտել է և նշանակվել ասիստենտ ԵՊՀ բուսաբանության ամբիոնում: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, 1941 թ. հուլիսի 10-ին կամավոր մեկնել է կարմիր բանակ: 1941 թ. հուլիսից մինչև նույն թվականի հոկտեմբերի 30-ը սովորել է Վորոշիլովի անվան ռազմաքիմիական ակադեմիայում, ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Կենտրոնական ռազմաճակատ: Սկզբում եղել է դասակի հրամանատար, իսկ 1943 թվականից՝ 122-րդ հատուկ դիվիզիոնի քիմիական ծառայության պետ: 1943 թ. հուլիսին Վորոնեժի տակ ծանր վիրավորվել է և ուղարկվել Տամբովի հոսպիտալ: Մոտ չորս ամիս բուժվելուց հետո վերադարձել է նույն Կենտրոնական ռազմաճակատ: 153-րդ հրաձգային դիվիզիայի կազմում նորից որպես դիվիզիոնի քիմիական ծառայության պետ մասնակցել է Բելոստոկի, Սմոլենսկի, Գոմելի, Գրոդնոյի և մի շարք այլ քաղաքների ազատագրմանը: Մասնակցել է Լեհաստանի ազատագրմանը և գերմանական մի շարք քաղաքների գրավմանը: 1945 թ. հունվարին Արևելյան Պրուսիայում նա երկրորդ անգամ ծանր վիրավորվել է և նորից ուղարկվել հոսպիտալ: Մինչև պատերազմի հաղթական ավարտը ապաքինվել է և որպես երրորդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից:

Լ. Սաֆյանը պարգևատրվել է 2 «Կարմիր աստղ» շքանշաննե-

րով, 2 «Խիզախության համար», «Մարտական ծառայությունների համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Մոսկվայի պաշտպանության համար» մեդալներով:

1946 թ. Լ. Սաֆյանը զորացրվել է և ընդունվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանական ինստիտուտի ասպիրանտուրան: Մի տարի սովորելուց հետո նրա առողջությունը վատացել է, որի պատճառով նա ժամանակավորապես ընդհատել է սովորելը և անտառապետի պաշտոնով աշխատանքի անցել Ստեփանավանում: Բուժվելուց հետո՝ 1949 թ., գիտական աշխատանքի է նշանակվել ֆիտոպոտոլոգիայի և կենդանաբանության ինստիտուտում: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատել որպես ավագ գիտաշխատող բույսերի պաշտպանության ինստիտուտում:

ՍԵՄԵՐՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՐԿՈՍԻ (1918-) – Ծնվել է 1918 թ. Երևանում, արհեստավորի ընտանիքում: 1938 թ. ավարտել է Երևանի թիվ 5 միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: 1940 թ. զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, առաջին կուրսից նորից զորակոչվել է կարմիր բանակ: 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 400-րդ գնդի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մինչև 1943 թ. հունվար ամիսը մասնակցել է Հյուսիսային Կովկասի քաղաքների ազատագրմանը: 1943 թ. հունվարին նրան ուղարկել են՝ սովորելու: 1943-1944 թթ. սովորել ու ավարտել է Պոդոլսկու հրետանային ուսումնարանը, որն այդ ժամանակ գտնվում էր Տաշքենդում: Վ. Սեմերջյանը ստացել է լեյտենանտի կոչում և հակատանկային հրետանու դասակի հրամանատարի պաշտոնով մեկնել Առաջին ուկրաինական ռազմաճակատ: Մասնակցել է Լեհաստանի, Չեխոսլովակիայի ազատագրմանը և գերմանական մի շարք քաղաքների գրավմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքաշանով և մի շարք մեդալներով:

1945 թ. Վ. Սեմերջյանը զորացրվել է բանակից և վերադարձել

համալսարան: 1950 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և նշանակվել կուսակցական աշխատանքի: 1950-1959 թթ. եղել է Երքաղկոմի Կիրովյան շրջկոմի հրահանգիչ, Երքաղկոմի և Լենինյան շրջկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ, Անասնաբուծական, անասնաբուժական ինստիտուտի կուսկոմիտեի ազատ քարտուղար և 26 կոմիսարների շրջկոմի քաղ. լուս. կաբինետի, 1959-1974 թթ.՝ 26 կոմիսարների շրջանի ժողկրթբաժնի վարիչ: 1974 թվականից աշխատել է Երևան քաղաքի թիվ 51 միջնակարգ դպրոցում որպես տնօրեն:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1907-1978) – Ծնվել է Արցախի Գետաշեն գյուղում: 1928 թ. ավարտել է Բաքվի թիվ 22 իննամյա դպրոցը, 1931 թ.՝ Երևանի պետական համալսարանի - պատմագրական ֆակուլտետը: 1931-1933 թթ. աշխատել է Աշտարակում սկզբում որպես ժողկրթբաժնի վարիչ, ապա՝ «Այգեգործ» թերթի քարտուղար: 1933 թ. սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) գեղարվեստագիտության պետական ակադեմիայի արևմտաեվրոպական գրականության բաժնում: Այնուհետև աշխատել է Երևանի մանկավարժական ինստիտուտում որպես բանասիրական ֆակուլտետի դեկան, արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ և եվրոպական գրականության ավագ դասախոս: Միաժամանակ դասախոսել է Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում: 1941-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, որի ընթացքում վաստակել է մայորի կոչում: Մասնակցել է Կովկասի համար մղվող մարտերին, Կերչի և Ղրիմի ազատագրմանը: 1943-1945 թթ. մասնակցել է Ուկրաինայի, Բելառուսիայի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի ազատագրման համար մղվող մարտերին: 1946-1947 թթ. եղել է «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագիրը և Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: 1947 թ. պաշտպանել է «Ռոմանտիկական դրամայի տեսությունը» թեմայով ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի

աստիճան: 1966 թ. «Ժամանակակից հայ պոեզիան» թեմայով ատենախոսություն է պաշտպանել և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: 1971 թվականից եղել է Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչը: Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի և «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով: Նրա աշխատությունները մինչ օրս գործածվում են որպես բուհական դասագրքեր: Մահացել է 1978 թվականի օգոստոսի 28-ին Երևանում:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴԻ (1922-2007) – Ծնվել է 1922 թ. Թբիլիսիում բանվորի ընտանիքում: 1940 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Թբիլիսիի 89-րդ հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1942 թ. փետրվարին երկրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1944 թվականը:

1942 թ. սկզբից մինչև 1944 թ. օգոստոս ամիսը ծառայել է 409-րդ հայկական դիվիզիայի 196-րդ առանձին կործանիչ հակատանկային դիվիզիոնում սկզբում որպես քաղղեկի տեղակալ, ապա՝ որպես ջոկի հրամանատար: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի քաղաքների ազատագրմանը: 1943 թ. սեպտեմբերին Խարկով-Լոզովայա երկաթուղու Զմեև կայարանի մատույցներում տեղի ունեցող մարտերից մեկում ծանր վիրավորվել է: Մինչև 1944 թ. մարտը հոսպիտալներում ապաքինվել է և որպես հաշմանդամ զորացրվել բանակից:

1945-1948 թթ. ընթացքում շարունակել է սովորել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: 1954 թ. Ա. Սուքիասյանը պաշտպանել է թեկնածուական, 1971 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1954-1966 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես գիտաշխատող, 1966-2005 թթ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում նախ որպես դասախոս, ապա՝ դոցենտ, 1974 թվականից՝ պրոֆեսոր: 1976-1991 թթ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Ա. Սուքիասյանի բառարանները հայ բազմադարյան բառարանագրության նոր նվաճումներ են, իսկ «Ժամանակակից հայոց լեզու» գիրքն այժմ էլ կիրառվում է որպես բուհական հիմնական դասագիրք: Կարևոր աշխատություններն են «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (Երևան, 1971), «Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն)» (Երևան, 1982), «Հայոց լեզվի հոմանիշների բառարան» (Երևան, 1967), «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (համահեղինակ, Երևան, 1975): 2004 թ. Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան» (Երևան, 2003, 2009) աշխատությունն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

Ա. Սուքիասյանը վախճանվել է 2007 թ. հունվարի 13-ին Երևանում:

ՎԱՀԱՆՅԱՆ ԳՎԻԴՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1919-1993) – Ծնվել է 1919 թ. դեկտեմբերի 10-ին Նոր Բայազետի շրջանի Կարմիր գյուղում: Նախնական կրթությունն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան և ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ: Ուսումնառության 4-րդ կուրսում ինքնակամ մեկնել է ծառայության, սովորել Թբիլիսիի հրետանային ուսումնարանում: Ուսումնարանն ավարտելով՝ ստացել է լեյտենանտի կոչում և նշանակվել ծառայության 320-րդ հրաձգային դիվիզիայի 478-րդ հրաձգային գնդում, որը տեղակայված էր Գյումրիում: Որպես դասակի հրամանատար մասնակցել է Հյուսիսային Կովկասի մարտերին: Մոզդոկի մոտ տեղի ունեցած մարտերից մեկում ծանր վիրավորվել է և երկար ժամանակ բուժվել հոսպիտալում: Բուժվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է:

Վերադառնալով ծառայությունից՝ ավարտել է ուսումը, աշխատանքի է անցել «Սովետական Հայաստան» թերթում: 1945 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա՝ «լեզվաբանություն» մասնագիտությամբ: Ասպիրնատուան ավարտելուց հետո մինչև 1961 թվականը աշխատել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնում: 1951 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1961 թ. մինչև իր կյանքի

վերջը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով, 1985 թ. շնորհվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1993 թ. մայիսի 1-ին Երևանում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ (1917-1997) – Ծնվել է 1917 թ. Վրաստանում: 1936 թ. ստացել է միջնակարգ կրթություն և մեկ տարի հետո՝ 1937 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1941 թ. հունիսին զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Վորոշիլովի անվան ռազմաքիմիական ակադեմիան: 1942 թ. ավարտել է ակադեմիան և ուղարկվել գործող բանակ: Մարտնչել է Առաջին բելառուսական և Մոսկվայի կենտրոնական ռազմաճակատներում: Մասնակցել է Մոսկվայի, Մոզդոկի, Ռոստովի, Տագանրոգի, Քիշինյովի, Նիկոլաևի, Օդեսայի պաշտպանությանը, Լեհաստանի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: Բուրայսկի մոտ ստացել է Կոնտուզիա, ապաքինվել և նորից մեկնել ռազմաճակատ:

1944 թ. պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», իսկ 1945 թ.՝ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Վարդանյանը պարգևատրվել է նաև «Կարմիր աստղ» շքանշանով և բազմաթիվ մեդալներով: 1946-1949 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Ի. Դ. Զելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտ: 1949 թ. շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1951-1955 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Ի. Դ. Զելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի դոկտորանտ, 1953-1968 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ացետիլենի քիմիայի լաբորատորիայի վարիչ: 1955 թ. նրան շնորհվել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1955-1967 թթ. կարդացել է «Չհագեցած միացությունների քիմիայի» հատուկ կուրս ԵՊՀ քիմիական ֆակուլտետում:

1963 թ. եղել է տեսական և կիրառական քիմիայի 14-րդ միջազգային գիտաժողովի պատգամավոր Լոնդոնում: 1964 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 1967 թ. կարդացել է ացետիլենի քիմիայի թեմայով դասախոսություններ Փարիզի գիտահետազոտական կենտրոններում և բուհերում: 1967-1970 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի չհագեցած միացությունների հիմքի վրա կատարվող կենսաբանորեն ակտիվ նյութերի սինթեզի լաբորատորիայի վարիչ, իսկ 1969 թ.՝ հետերոցիկլիկ միացությունների քիմիային նվիրված 11-րդ միջազգային կոնգրեսի պատգամավոր Մոնպելիեում (Ֆրանսիա):

1970 թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար՝ ի նշանավորումն Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի» մեդալով: 1970-1987 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Ա. Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն: 1971 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: Երեք տարի անց նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում և դարձել է «Հայկական սովետական հանրագիտարանի» խմբագրական խորհրդի անդամ: Նույն թվականին դարձել է Կոնֆորմացիոն անալիզի 9-րդ միջազգային գիտաժողովի պատգամավոր Օտտավայում, 1975 թ.՝ հետերոցիկլիկ միացությունների քիմիային նվիրված միջազգային կոնգրեսի պատգամավոր Զագրեբում (Հարավսլավիա), 1976 թ.՝ բնական միացությունների քիմիայի 4-րդ հնդկախորհրդային գիտաժողովի պատգամավոր Լակնաու քաղաքում (Հնդկաստան): Մասնակցել է ԳԴՀ քիմիական ընկերության գիտաժողովին (Լայպցիգ): 1977 թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1977-1987 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ քիմիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ, 1978 թ.՝ «Химико-фармацевтический журнал»- ի խմբագրական խորհրդի անդամ: Գիտության զարգացման մեջ ներդրած վաստակի համար պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ վաստակագրով, Գերագույն խորհրդի պատվոգրով: 1987-1994 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քար-

տուղար և ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ: 1988-1997 թթ. նշանակվել է «Հայկական քիմիական ամսագրի» գլխավոր խմբագիր, իսկ 1994-1997 թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական: Վախճանվել է 1997 թ. ապրիլի 2-ին Երևանում:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՀՄԱՅԱԿԻ (1923-2011) – Ծնվել է 1923 թ. մայիսի 10-ին Արտաշատի շրջանի Ազատավան գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երրորդ կուրսից մեկնել է ռազմաճակատ, կռվել ֆաշիզմի դեմ, մասնակցել Կովկասի պաշտպանության և ազատագրման, համար մղվող մարտերին, Ուկրաինայի, Բելառուսի ազատագրմանը: Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ կարգի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: Պատերազմից հետո Ս. Վարդանյանը շարունակել է ուսումառությունը: Ավարտել է համալսարանը, աշխատել ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, ՀԿԿ կենտկոմի բաժնի վարիչ, ՀԽՍՀ մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստր: Եղել է ՀԽՍՀ V-XI գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր: Ս. Վարդանյանը ծավալել է գործունեություն մի քանի բնագավառներում, ստեղծագործել է, հեղինակել է ութ գիրք: Վախճանվել է 2011 թ.:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ ՎԱՐԴԻ (1923-1988) – Ծնվել է 1923 թ. Վրացական ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Գոնդուրա գյուղում: 1940 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. կամովին մեկնել է կարմիր բանակ: Կարճ ժամանակ անց նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, ուր մասնակցել է Մոզդոկի, Գրոզնու պաշտպանությանը: 714-րդ հրաձգային գնդի գնդացրորդ Վարդապետյանը ակտիվ մասնակցություն է ունեցել հատկապես Նովոռոսիյսկի և Սևաստոպոլի ազատագրմանը: Նովոռոսիյսկի մարտերում նա ուսից վիրավորվել է, երկու շաբաթվա ընթացքում բուժվել և նորից մտել մարտերի մեջ: Այս անդամ նա եղել է Թամանյան կարմրադրոշ հրաձգային դիվիզիա-

յում, որը գտնվելիս է եղել Առաջին ուկրաինական ռազմաճակատում: 1943 թ. հոկտեմբերին, երբ Առաջին ուկրաինական ռազմաճակատի զորքերը համառ մարտեր են սկսել՝ Կիևը ազատագրելու համար, Ա. Վարդապետյանը ցուցաբերել է աչքի ընկնող մարտական ծառայություն, որի համար արժանացել է գերագույն հրամանատարության շնորհակալագրի: Ժիտոմիրի, Բելղիչևի, Պրոսկուրովի ազատագրմանը և Դնեպրի գետանցմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: 1943 թ. Ա. Վարդապետյանը մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: Մարտերի ընթացքում նա ընդունվել է կուսակցության շարքեր: 1944 թ. սեպտեմբերին Արևմտյան Ուկրաինայում ծանր վիրավորվել է գլխից, աջ ուսից, թևից և տեղափոխվել խորը թիկունք ապաքինվելու համար: Շուրջ երեք ամիս Մոսկվայի, Կիրգիզիայի O_2 քաղաքի հոսպիտալներում ապաքինվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է բանակից: 1945-1946 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ավարտել է և նշանակվել կոմերիտական ղեկավար աշխատանքի: 1949-1953 թթ. աշխատել է Կիրովականում (Վանաձոր) որպես դպրոցի տնօրեն, 1953 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրան: 1956 թ. ավարտել է, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի: 1967 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, ստացել պրոֆեսորի կոչում և աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1975 թ.-ից մինչև կյանքի վերջը եղել է Երևանի ժող. տնտեսության ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1988 թվականի սեպտեմբերի 24-ին Երևանում:

ՎԱՐԴԻԿՅԱՆ ՍԵԴԱ ԱՎԱԳԻ (1920-2001) – Ծնվել է 1920 թ. Դիլիջան քաղաքում: 1938 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի անվան) միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա եղել է չորրորդ կուրսում: 1941 թ. աշնանը համալսարանի ԼԿԵՄ կո-

միտեի հանճնարարությամբ նա կազմակերպել է կարճատև քույրական դասընթաց, որում ընդգրկվել են ոչ միայն կենսաբանական, այլև մյուս ֆակուլտետների ուսանողուհիները: Դասընթացի նպատակն էր պատրաստել քույրական անձնակազմ, որի մի մասը պետք է մեկներ ռազմաճակատ կամ Խորհրդային Միության այլ հոսպիտալներ, իսկ մյուս մասը ծառայության նշանակվեր հանրապետության հոսպիտալներում:

Դասընթացն ավարտելուց հետո Ս. Վարդիկյանին՝ որպես քույր, նշանակել են ծառայության Երևանի №2469 հոսպիտալում: Նա կատարել է քույրական ծառայություն և միաժամանակ սովորել ու ավարտել ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետը: 1942 թ. օգոստոսին նա ՀԼԿԵՄ կենտկոմին ցանկություն է հայտնել, որ իրեն քույրական ծառայության ուղարկեն գործող բանակ: Կենտկոմը ընդառաջ գնալով նրա հայրենասիրական խնդրանքին՝ հանրապետության մի խումբ կոմերիտուհիների հետ նրան ուղարկել է Մոսկվա՝ վերապատրաստվելու համար: 1942 թ. սեպտեմբերին նա ընդունվել է ԽՍՀՄ ներքին գործով մինիստրությանը կից բարձրագույն դպրոցը: Գերազանց առաջադիմությամբ ավարտել է, ստացել 1-ին կարգի ռադիստի կոչում և նշանակվել հատուկ ծառայության: Ս. Վարդիկյանը ոչ միայն պատրաստել է հարյուրավոր բարձրորակ ռադիստներ՝ թշնամու կողմից ռազմակալված տարածքներում աշխատանք կատարելու համար, այլև կատարել է բազմաթիվ մարտական առաջադրանքներ: Մի քանի անգամ նա թռիչքներ է կատարել դեպի թշնամու թիկունք, հետազոտել նրա ուժերը և արժեքավոր տեղեկություններ հաղորդել գործող բանակի հրամանատարությանը: Հնարամիտ ու համարձակ ռադիստ Սեդա Վարդիկյանը հայրենիքի պաշտպանության համար իր ծառայությունը շարունակել է մինչև 1945 թվականը: Հայրենական պատերազմի ավարտից հետո հայրենիքի հանդեպ իր պարտականությունը գերազանց կատարելուց հետո վերադարձել է և մասնագիտական գործունեություն ծավալել: 1947-1950 թթ. սովորել է ասպիրանտուրայում, ստացել թեկնածուի գիտական աստիճան և աշխատել ՀԽՍՀ ԳԱ կենսաբանական ինստիտուտում որպես ավագ գի-

տաշխատող և գիտական խորհրդի քարտուղար: 1945 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում, 1961-1966 թթ.՝ եղել է միաժամանակ գիտքարտուղար, 1978-1990 թթ.՝ փոխտնօրեն: 1996 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Վախճանվել է 2001 թվականին:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ ԳՐԻԳՈՐԻ (1910-1990) – Ծնվել է 1910 թ. Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Շահբաղ գյուղում: 1915 թ. թուրքական կոտորածներից ազատվելու համար ընտանիքով տեղափոխվել է Սուրմալու, իսկ 1918 թ.՝ Հայաստան: Մոտ երկու տարի հետո տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում: Սկզբնական կրթությունը ստացել է Նորքի և Երևանի Ա. Մյասնիկյանի անվան երկրորդ աստիճանի դպրոցներում: 1933 թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը և անցել ուսուցչական աշխատանքի: Մեկ տարի անց՝ 1934 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1938 թ. ավարտել է և ընդունվել ֆակուլտետին կից ասպիրանտուրան: 1942 թ. մայիսի 26-ին զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1946 թվականը: Գրեթե այդ ամբողջ ժամանակ Մ. Տեր-Ղազարյանը եղել է ռազմաճակատային ներքին ծառայության զորամասերում: 30-րդ դիվիզիայի կազմում սկզբում եղել է Գրոզնիում, իսկ հետագայում՝ Մախաչկալայում: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի քաղաքների, երկաթգծերի, կամուրջների, թունելների, դեպի ռազմաճակատ մեկնող ապրանքատար գնացքների պաշտպանությանը: 30-րդ դիվիզիան, որի կազմում եղել է Տեր-Ղազարյանը, թշնամու կողմից բազմիցս ենթարկվել է ռմբակոծությունների: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով և շնորհակալագրերով:

Պատերազմի ավարտից հետո Մ. Տեր-Ղազարյանը մինչև 1946 թվականը ծառայել է Վրաստանում: 1946 թ. մարտին նա զորացրվել է և նորից վերադարձել համալսարան դասախոսական աշխատանքի: 1947 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1951

թ. ստացել դոցենտի կոչում և աշխատել ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում: Շուրջ 10 տարի աշխատել է որպես համալսարանի արհկոմի նախագահ: 1987 թ. առողջության վատացման պատճառով ազատվել է աշխատանքից: Վախճանվել է 1990 թ. մարտի 5-ին:

ՈՒԹՄԱԶՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ ՄՈՒՐԱԴԻ (1912-1970) – Ծնվել է 1912 թ. Արևմտյան Հայաստանում: Մեծ եղեռնի ժամանակ կորցրել է հորը և ընտանիքի մյուս անդամների հետ միասին գաղթել Վրաստան և բնակություն հաստատել Սուխումի քաղաքում: 1935 թ. ավարտել է Սուխումիի մանկավարժական տեխնիկումը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ավարտելուց հետո 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Բաքվի հետևակային ռազմական ուսումնարանը: Նույն թվականի սեպտեմբերից մինչև 1944 թ. հոկտեմբերը եղել է գործող բանակում՝ Հյուսիսային Կովկասի, Թամանի, Ղրիմի, Կերչի ռազմաճակատներում: Առաջին անգամ վիրավորվել է Թամանյան թերակղզում, երկրորդ անգամ՝ Կերչի փողոցային կռիվների ժամանակ: Ակտիվ մարտական գործողությունների համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և չորս մեդալներով:

1944 թ. Հ. Ութմազյանը զորացրվել է և վերադարձել համալսարան: 1945-1948 թթ. սովորել է ասպիրանտուրայում, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ անցնելով դասախոսական աշխատանքի նախ ԵՊՀ հայ ժողովրդի պատմության, այնուհետև՝ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1966 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1967 թ. ստացել պրոֆեսորի կոչում և մինչև 1970 թվականը եղել է ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, 1966-1967 թթ.՝ ԵՊՀ պրոռեկտոր: 1968 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատել է որպես ՀԽՍՀ մինիստրների խորհրդի մամուլի պետական կոմիտեի նախագահ: Վախճանվել է 1970 թ. դեկտեմբերի 13-ին:

ՔԱՄԱԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՇԱՎԱՐՇԻ (1917-1969) – Ծնվել է 1917 թ. Շուլավեր քաղաքում: 1934 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցչական աշխա-

տանքի: Մինչև 1936 թվականը աշխատել է Վրաստանի Ծալկայի շրջանի Ոզնի գյուղի դպրոցում: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, ժամանակից շուտ հանձնել է պետական քննությունները և զորակոչվել կարմիր բանակ: Մինչև 1942 թվականը սովորել ու ավարտել է Մոսկվայի Ֆ. Ջերժինսկու անվան հրետանային ակադեմիայի դասընթացը, ստացել ավագ տեխնիկ լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Լեհաստանի քաղաքների ազատագրմանը: Պարգևատրվել է մի քանի մեդալներով:

1947 թ. Վ. Քամալյանը զորացրվել է և դասախոսական աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: Մինչև 1949 թ. եղել է ԵՊՀ ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, իսկ հետո՝ Ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ: Վախճանվել է 1969 թ. հոկտեմբերին:

ՔԱՆՔԱՆՅԱՆ ԱՂԱՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ (1904-1999) – Ծնվել է 1904 թ. սեպտեմբերի 17-ին: 1915 թ. նրանց ընտանիքը բռնել է գաղթի ճանապարհը, հասել Երևան: Սովորել է գաղթականների երեկոյան, ապա՝ Ա. Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1924 թվականին: 1928 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնում նախ որպես լաբորանտ, ապա՝ ասիստենտ: 1935-1935 թթ. սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) համալսարանի ասպիրանտուրայում: 1939 թ. թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո վերադարձել է Երևան և շարունակել աշխատել ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնում մինչև 1985 թվականը: Հայրենական պատերազմի տարիներին եղել է աշխարհազորային, կատարել է պահակային ծառայություններ, մասնակցել ամրությունների կառուցման աշխատանքներին և Կովկասի համար մղվող մարտերին: 13 տարի համատեղությամբ դասավանդել է գյուղատնտեսական ինստիտուտում, շուրջ տասը տարի աշխատել ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում: 1941 թ. նրան շնորհ-

վել է դոցենտի կոչում: Եղել է համալսարանի արհկոմիտեի նախագահը, աշխատանքային պաշտպանության բաժնի վարիչ, վերահսկողության խմբակի նախագահ, շուրջ 40 տարի քիմիական ֆակուլտետի գիտական խորհրդի գիտական քարտուղարը: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով»: 1970 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Վախճանվել է 1999 թ. հունվարի 15-ին:

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ԵԶԵԿԻԻ (1913-1986) – Ծնվել է 1913 թ. հոկտեմբերի 15-ին Լոռու Դսեղ գյուղում: Դպրոցն ավարտելով՝ ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի Անդրկովկասյան երկրաբանական-հետախուզական տեխնիկումում, որը գերազանց ավարտելուց հետո որպես տեխնիկ-հետախույզ աշխատել է Վրաստանի Ճիաթուրի մանգանի հանգավայրում:

1935-1940 թթ. սովորել է ԵՊՀ նորաբաց երկրաբանական ֆակուլտետում, որն ավարտելով՝ 1940-1945 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես գիտական աշխատող:

1943 թ. զորակոչվել է բանակ և մինչև պատերազմի ավարտը ծառայել է ռազմաերկրաբանական ջոկատի շտաբի ինժեներական զորքերում որպես Անդրկովկասյան ռազմաճակատի երկրաբան, միաժամանակ մասնակցել Կովկասի պաշտպանության համար մղվող մարտերին: Զբաղվել է բազմակողմանի երկրաբանական հետազոտություններով Ղափանի պղինձ-հրաքարային հանքային դաշտի սահմաններում: Աշխատանքի արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են որպես ատենախոսություն, որի համար 1945 թ. նրան շնորհվել է երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: 1970 թ. Մոսկվայում հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Հանրապետության տարածքում հազվագյուտ տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտմանը: 1945-1947 թթ. Ա. Քոչարյանը աշխատել է ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարարության «Արմցվետմետռազվեդկա» կազմակերպության արտադրատեխնիկական բաժնի պետի պաշտոնում:

1950-1961 թթ. Ա. Քոչարյանը աշխատանքի է անցել ԽՍՀՄ երկրաբանության մինիստրության մասնագիտացված «Գրոմովյան» արշավախմբի գլխավոր երկրաբանի, ապա՝ գլխավոր ինժեների և արշավախմբի պետի տեղակալի պաշտոններում: Նրա անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ Հայաստանի տարածքում հազվագյուտ, գլխավորապես ուրանի հանքային հումքի կուտակումների որոնման և հետախուզման, ինչպես նաև դրանց օգտագործման հեռանկարների որոշման ուղղությամբ:

1961 թվականից մինչև կյանքի վերջը Ա. Քոչարյանը կրկին աշխատել է ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում նախ գիտության գծով փոխտնօրենի, իսկ 1967-1971 թթ.՝ տնօրենի պաշտոններում:

Անվանի երկրաբանը 40-ից ավելի տպագիր աշխատությունների և շուրջ 200 հաշվետվությունների, գրախոսականների, ինչպես նաև բազում գիտահանրամատչելի հրատարակումների հեղինակ է: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 1986 թ. հուլիսի 31-ին:

ՔՈՉԱՐՅԱՆ ՄՈՒՍԱՅԵԼ ՏԻԳՐԱՆԻ (1920-1996) – Ծնվել է 1920 թ. ՀԽՍՀ Կրասնոսելսկի շրջանի Վերին Ճամբարակ գյուղում: 1937 թ. ավարտել է Կիրովականի (Վանաձոր) Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը և մինչև 1938 թվականը աշխատել որպես ուսուցիչ: 1938 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. օգոստոսի 5-ին երրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. մարտին ավարտել է Թելավի հրետանային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ուղարկվել Կերչի ռազմաճակատ: Դասակի և վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոններով ծառայել է 390-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Մինչև 1942 թ. մայիս ամիսը մասնակցել է Կերչի պաշտպանությանը: Կամիշ Կուռղունի համար մղվող մարտի ժամանակ վիրավորվել է և ուղարկվել՝ բուժվելու սկզբում Կիսլովոդսկի, ապա՝ Բաքվի հոսպիտալներում: Ապաքինվելուց հետո՝ 1942 թ. նոյեմբերին, Մ. Քոչարյանին ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 18-րդ բանակի 107-րդ հա-

տուկ գվարդիական բրիգադի կազմում մասնակցել է Տուապսեի, Գոյթղի և Կրասնոդարի պաշտպանությանը: Նևթի Գորսելի համար մղվող մարտերից մեկում ծանր վիրավորվել է և 1942 թ. դեկտեմբերին ուղարկվել Դիլիջանի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո՝ 1943 թ., որպես զինվորական ծառայության համար ոչ պիտանի զորացրվել է և վերադարձել համալսարան: 1944 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և մեկնել Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոց՝ սովորելու: 1946 թ. ավարտել է և նշանակվել ՀԿԿ Երքաղկոմի Կիրովյան շրջկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ: 1947 թ. անցել է դասախոսական աշխատանքի ՀԿԿ կենտկոմին կից կուսակցական դպրոցում: 1953 թ. ՀԿԿ կենտկոմի գործուղմամբ մեկնել է Մոսկվա և մինչև 1957 թվականը սովորել ԽՄԿԿ կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության պատմության բաժնում: Այն ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նշանակվել ամբիոնի վարիչ Երևանի պետական բժշկական ինստիտուտում: 1959-1970 թթ. աշխատել է որպես կուսշրջկոմի քարտուղար: 1970-1975 թթ. եղել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր: 1975-1996 թթ. դասավանդել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում, 1975-1991 թթ. եղել փիլիսոփայության ամբիոնի վարիչ: Ընտրվել է ԽՄԿԿ 22-րդ, ՀԿԿ 21-25-րդ համագումարների պատգամավոր, ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր: 1980 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1981 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մ. Քոչարյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 1996 թ. նոյեմբերի 3-ին:

ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1923-) – Ծնվել է 1923 թ. ՀԽՍՀ Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղում, հողագործի ընտանիքում: 1940 թ. ավարտել է Ղշղոթանի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի աշ-

խարհաերկրաբանական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը: 1942 թ. հունվարին երկրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել ծառայության 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: 1942 թ. նոյեմբերին այդ դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և նույն թվականի դեկտեմբերին մասնակցել է Թերեքի երկաթուղային կայարանի շրջանում տեղի ունեցող մարտերին: Ս. Քոչարյանն իր գնդացրով լռեցրել է թշնամու մի քանի կրակակետեր և իր մարտական ընկերների հետ հնարավորություն ստեղծել հետևակային վաշտերին առաջ շարժվելու: Դեկտեմբերի 19-ին դիվիզիան ճեղքել է Մոզդոկի տակ թշնամու պաշտպանական գիծը: Այդ ահեղ մարտում Ս. Քոչարյանը ծանր վիրավորվել է: Կիսաուշաթափ վիճակում նրան տեղափոխել են հոսպիտալ: Վիրահատվելուց հետո նա որպես հաշմանդամ զորացրվել է բանակից:

Մոզդոկի տակ տեղի ունեցած մարտում գնդացրորդ Քոչարյանը հրամանատարության առաջադրանքը խիզախորեն կատարելու համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և գերագույն գլխավոր հրամանատարի կողմից ստացել շնորհակալագիր: Պարգևատրվել է նաև «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Խորհրդային բանակից զորացրվելուց հետո Ս. Քոչարյանը սովորել ու ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը, ստացել աշխարհագրագետի որակավորում և աշխատել հայրենի գյուղի դպրոցում որպես ուսուցիչ:

ՔՈՉԻՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ ԵՐՎԱՆԴԻ (1924-1971) – Ծնվել է 1924 թ. Կիրովականի (Վանաձոր) շրջանի Շահալի (Վահագնի) գյուղում: 1941 թ. ավարտել է Շահալիի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանում նա սովորել է մոտ մեկ տարի: Սակայն այդ կարճ ժամանակում աչքի է ընկել իր առաջադիմությամբ, հասարակական ակտիվությամբ, արտակարգ ընկերասիրությամբ ու համես-

տությամբ: Պատերազմի առաջին տարում համալսարանի մյուս աշխարհազորայինների հետ միասին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել մայրաքաղաքում կատարվող ռազմապաշտպանական միջոցառումներին: 1942 թ. աշնանը, երբ կամավորական նոր շարժում է ծավալվել Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, Հ. Քոչինյանը նույնպես համալսարանական ընկերների հետ կամովին մեկնել է ռազմաճակատ: Մոտ երեք տարի անընդմեջ եղել է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում: Մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների Լեհաստանի, Չեխոսլովակիայի ազատագրմանը և Գերմանիայի մի շարք քաղաքների գրավմանը: Չեխոսլովակիայի ազատագրման մարտերում Հ. Քոչինյանը ծանր վիրավորվել է: Չեխուհի Աննա մայրիկի խնամքով մի քանի օրվա ընթացքում առողջացել է և վերադարձել իր զորամասը: Պարգևատրվել է մեդալներով և ստացել գլխավոր հրամանատարության շնորհակալագրեր:

1946 թ. Հ. Քոչինյանը զորացրվել է և շարունակել իր ուսումը Երևանի պետական համալսարանում: Սակայն այս անգամ ոչ թե պատմության, այլ երկրաբանական ֆակուլտետում: 1951 թ. ավարտել է և հատուկ մետաղների որոնման ու հետախուզման գծով աշխատանքի անցել Գրոմովյան էքսպեդիցիայում: Մի քանի տարի էքսպեդիցիայում աշխատելուց հետո Հ. Քոչինյանը տեղափոխվել և աշխատանքի է անցել Երևանի լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտում: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մինչև իր կյանքի վերջը գլխավորել է լեռնամետալուրգիական ինստիտուտի երկրաբանության բաժինը: Վախճանվել է 1971 թվականին:

ՔՐՄՈՅԱՆ ԵԼԻՇԵ ՀՈՎՍԵՓԻ (1900-1985) – Ծնվել է 1900 թ. Հին Բայազետում (Արևմտյան Հայաստան): 1918 թ. Արևմտյան Հայաստանից գաղթել է և բնակություն հաստատել Երևանում: 1920 թ. մասնակցել է Նոր Բայազետի (Ղարաղլուղի) մայիսյան ապստամբությանը, իսկ 1921 թ.՝ Դարալագյազի քաղաքացիական կռիվներին: 1921-1923 թթ. սովորել ու ավարտել է Երևանի հրամանատարական

դպրոցը, ստացել է կարմիր հրամանատարի կոչում և նշանակվել դասակի հրամանատար Հայկական հրաձգային դիվիզիայի կից դպրոցում: 1924-1925 թթ. սովորել է Անդրկովկասի ռազմական օկրուգի վերապատրաստման դպրոցում և մինչև 1932 թ. վաշտի հրամանատարի պաշտոնով ծառայել է Հայկական դիվիզիայի առաջին և չորրորդ գնդերում: 1932-1936 թթ. եղել է Երևանի բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի, իսկ 1939-1941 թթ.՝ ԵՊՀ ռազմական ամբիոնի վարիչ: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Ե. Քրոմյանը առաջին օրը՝ հունիսի 22-ին, զորակոչվել է բանակ և նշանակվել 60-րդ կորպուսի, հետագայում՝ 44-րդ բանակի շտաբի 5-րդ բաժնի պետի տեղակալ: Եղել է նաև 404-րդ դիվիզիայի 643-րդ գնդի շտաբի պետ: Մասնակցել է Կերչի թերակղզում տեղի ունեցած ամենակատաղի մարտերին, առանձնապես Նովոռոսիյսկի շրջանի դեսանտային գործողություններին: Ռազմաճակատներում Ե. Քրմոյանը եղել է մինչև 1943 թվականը: Մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է, ստացել կոնտուզիա և ապաքինվելուց հետո նշանակվել ծառայության ՀԽՍՀ զինվորական կոմիսարիատում նախ որպես Մարտունու շրջանային զինկոմ, ապա՝ հանրապետական զինկոմիսարիատի ավագ հրահանգիչ: 1952-1955 թթ. եղել է գյուղատնտեսական ինստիտուտի ռազմական ամբիոնի վարիչ: 1955 թվականից անցել է թոշակի և եղել է պահեստային փոխգնդապետ, 1957 թվականից՝ Երևանի քաղաքային խորհրդի նախագահի օգնական:

Ե. Քրմոյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով, երկու «Մարտական ծառայությունների համար», «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով ու գովասանագրերով: Վախճանվել է 1985 թվականին:











Ձախից աջ՝ Աբգարյան Գևորգ Վարազի, Աբգարյան Գրիգոր Աբրահամի, Աղամյան Հայկազ Իսահակի, Ազիզբեկյան Հայկազ Հարությունի, Աթաջանյան Մելքոն Ավետիսի, Ամարյան Գևորգ Ասատուրի, Ամիրբեկյան Միքայել Արշակի, Անանիկյան Կորյուն Գևորգի, Առաքելյան Սահակ Նիկողոսի



Ձախից աջ՝ Առաքելյան Վաղարշակ Միքայելի, Առուստամյան Ռուբեն Հովսեփի, Առուստամյան Վահան Մովսեսի, Ասլանյան Աշոտ Տիգրանի, Ավագյան Լիպարիտ Ավագի, Ավագյան Սուրեն Արտեմի, Ավետիսյան Վարդգես Աբգարի, Ավետիսյան Խաչատուր Անդրեասի, Արաբյան Իոսիֆ Արփիարի



Ձախից աջ՝ Արզումանյան Անուշավան Աղաֆոնի, Արզումանյան Մակիչ Վահանի, Արզումանյան Սիմոն Կարապետի, Բաբաջանյան Գևորգ Համազասպի, Բագլաչյան Մամիկոն Սիմոնի, Բալյան Սողոմոն Պողոսի, Բաղդասարյան Աշոտ Տիգրանի, Բարսամյան Վաղարշակ Հայկի, Բարսեղյան Հովհաննես Խաչատուրի



Ձախից աջ՝ Բիչախչյան Միշա Կարապետի, Բոշնաղյան Պերճ Սերգեյի, Բոյախչյան Փայլակ Եգորի, Գառնիկյան Հովսեփ Եղիշի, Գասպարյան Արտավազդ Գասպարի, Գևորգյան Լյուդվիգ Ավետիսի, Գրիգորյան Ահարոն Վաղարշակի, Գրիգորյան Գարեգին Արմենակի, Գրիգորյան Գրիգոր Համբարձումի



Ձախից աջ՝ Գյուլբուդաղյան Լիպարիտ Վաղարշակի, Գյուլբուդաղյան Սիրաք Վաղարշակի, Գյուլնազարյան Խաժակ Մեսրոպի, Դավթյան Դավիթ Սիերի, Եղիազարյան Երեմ Հարությունի, Ենգոյան Փայլակ Իսահակի, Երեմյան Նիկողայ Ղուկասի, Թաիրյան Իվան Աղասու, Թավաղյան Աղասի Բախշիի



Ձախից աջ՝ Թովմասյան Ներսես Ռաֆայելի, Թումանյան Բենիկ Եսայու, Իսախանյան Ալեքսանդր Եփրեմի, Իշխանյան Ռաֆայել Ավետիսի, Խաչատրյան Գուրգեն Մովսեսի, Խաչատրյան Կիմ Բալայի, Խաչատրյան Հակոբ Եփրեմի, Խոնդկարյան Հարություն Արշավիրի, Կարապետյան Արծվիկ Գալուստի



Ձախից աջ՝ Կոստանյան Գուրգեն Իսրայելի, Հակոբյան Լևոն Արզումանի, Հայրապետյան Արտաշես Պետրոսի, Հովհաննիսյան Գուրգեն Ալեքսանի, Հովհաննիսյան Հովհաննես Մկրտչի, Հովհաննիսյան Ղազար Սոսինի, Հովհաննիսյան Միսակ Լևոնի, Հովհաննիսյան Սուրեն Երեմի, Հովհաննիսյան Վրույր Արշակի



Ձախից աջ՝ Ղազարյան Վահան Հովսեփի, Ղասաբյան Ռուբեն Հակոբի, Ղարագյոզյան Իշխան Աղալոյի, Ղարիբջանյան Գևորգ Բագրատի, Ճշմարիտյան Սուրեն Աղաբեկի, Մանուկյան Եփրեմ Ղազարի, Մանուկյան Սարիբեկ Արմենակի, Մանուկյան Ռաֆիկ Արշակի, Մարգարյան Արշալույս Դավթի



Ձախից աջ՝ Մարգարյան Ջավեն Սմբատի, Մարգարյան Նիկոլայ Առաքելի,
Մարգարյան Վարդգես Մարգարի, Մարտիկյան Աշոտ Կարապետի,
Մարտիկյան Մինաս Կարապետի, Մարտիրոսյան Գուրգեն Ազարիայի,
Մարտիրոսյան Հակոբ Հայկի, Մարտիրոսյան Հարություն Արտաշեսի,
Մեժլումյան Մամիկոն Մնացականի



Ձախից աջ՝ Մելքոնյան Գառնիկ Միքայելի, Մելքոնյան Լևոն Մխիթարի, Մելքոնյան Լիպարիտ Գրիգորի, Միքայելյան Արտիկ Տիգրանի, Մխիթարյան Գուրգեն Ենոքի, Մխիթարյան Ռաֆիկ Սողոմոնի, Մխիթարյան Ռաֆիկ Գրիգորի, Սկրտչյան Եղիազար Սողոմոնի, Սկրտչյան Մանիկ Սիմոնի



Ձախից աջ՝ Մովսիսյան Աբգար Խաչատուրի, Մովսիսյան Ռաֆիկ Լևոնի, Մուսախանյան Վարդգես Մաթևոսի, Նազարյան Հմայակ Եփրեմի, Նալբանդյան Մկրտիչ Հովսեփի, Նաջարյան Հուսիկ Խոսրովի, Ներկարարյան Վլադիմիր Նիկողոսի, Նիկողոսյան Ահարոն Ալեքսանի










Ձախից աջ՝ Շահբազյան Կորյուն Խաչատուրի, Շառոյան Գարսևան Վանոյի, Ոսկերչյան Արտաշես Կարապետի, Չաթինյան Ջիվան Գևորգի, Պառավյան Հրաչիկ Գալուստի, Պետրոսյան Աղվան Սիրեկանի, Պետրոսյան Գարեգին Բախշիի, Պետրոսյան Հայրապետ Աբրահամի










Ձախից աջ՝ Պետրոսյան Նահապետ Հակոբի, Պիջյան Գրիգոր Հովհաննեսի, Պողոսյան Սերոբ Պողոսի, Պողոյան Սուրեն Մեսրոպի, Սահակյան Գուրգեն Սերոբի, Սաղաթելյան Վաչագան Վարդանի, Սարգսյան Ալեքսանդր Աղաբաբի, Սարգսյան Գրիգոր Ալեքսանի



Ձախից աջ՝ Սարգսյան Գրիգոր Ներսեսի, Սարգսյան Սուրեն Գևորգի, Սարդարյան Լևոն Պետրոսի, Սաֆարյան Մնացական Կնյազի, Սաֆյան Լևոն Հարությունի, Սեմերջյան Վարդան Մարկոսի, Սուքիասյան Աշոտ Մուրադի, Վարդապետյան Արշակ Վարդի










Ձախից աջ՝ Վարդիկյան Սեդա Ավագի, Տեր-Ղազարյան Մելիքսեթ Գրիգորի, Ութմազյան Հայկարամ Մուրադի, Քամալյան Վահրամ Շավարշի, Քոչարյան Մուսայել Տիգրանի, Քոչարյան Սարիբեկ Խաչատուրի, Քոչինյան Հրաչիկ Երվանդի, Քրմոյան Եղիշե Հովսեփի

Վերևում պատկերված է Ծաղկաձորում տեղի ունեցած ամենամյա հավաքի մասնակիցների մի մասը



Ձախից աջ՝ Աբրահամյան Աշոտ Գարեգինի, Աբրահամյան Գրիգոր Սարգսի, Ալեքսանդրյան Արտաշես Մաթևոսի, Աղայան Աշոտ Հարությունի, Ամարյան Արսեն Գրիգորի, Առաքելյան Հայկազ Եգորի, Առաքելյան Մարտիրոս Համբարձումի, Առուստամյան Մամիկոն Առուստամի, Ասլանյան Վարդգես Սեդրակի



Ձախից աջ՝ Ավագյան Սարգիս Դադաշի, Ավագյան Սարգիս Նազարի, Ավագյան Սմբատ Դարչինի, Արամյան Արամ Ջալիկոյի, Այվազյան Ղազար Վարդանի, Բաբալյան Լևոն Արմենակի, Բաբայան Թարխան Հովհաննեսի, Բաղալյան Սմբատ Աղալոյի, Բատիկյան Թոմիկ Ստեփանի



Ձախից աջ՝ Բատիկյան Լևոն Մանուկի, Բալայան Բորիս Պավելի, Բաղդասարյան Միսակ Բախշիի, Բորյան Մառլեն Տիգրանի, Գաբրիելյան Հովհաննես Վարդգեսի, Գալստյան Միքայել Իվանի, Գասպարով Վարդան Սամսոնի, Գասպարյան Նորայր Մեխակի, Գևորգյան Հայկազ Մնացականի



Ձախից աջ՝ Գևորգյան Հրանտ Մուշեղի, Գեյոկչակյան Մկրտիչ Գրիգորի, Գրիգորյան Բագրատ Հովհաննեսի, Գուլքանյան Ռուբեն Հովհաննեսի, Դիբալին Լեոնիդ Գավրիլի, Դրամբյան Տիգրան Սամսոնի, Դուրգարյան Արշակ Հակոբի, Ջավարյան Միքայել Սարիբեկի, Թաթոսյան Գևորգ Ալեքսանդրի



Ձախից աջ՝ Թորոսյան Միքայել Գևորգի, Թումանյան Գեղամ Երանոսի, Իսահակյան Գառնիկ Դրաստամատի, Լազիկյան Լեոնիդ Մովսեսի, Լալայան Ավագ Սողոմոնի, Խաչատրյան Գուրգեն Մնացականի, Խաչատրյան Մովսես Մարտիրոսի, Խաչատրյան Վաղարշակ Բաբկենի, Խառատյան Գուրգեն Վոլոդի



Ձախից աջ՝ Կանդաևով Դիմտրի Գեորգիևիչ, Կապլուն Բորիս Յակովլևիչ, Կարապետյան Մացակ Գեղամի, Կարապետյան Ռեմ Մերգեյի, Կիրակոսյան Անուշավան Սարիբեկի, Հակոբյան Սարգիս Արշակի, Հարությունյան Արամ Կարապետի, Հովհաննիսյան Արտավազդ Մամիկոնի, Հովհաննիսյան Բագրատ Մարգարի



Ձախից աջ՝ Հովհաննիսյան Երվանդ Վերդիի, Ղազարյան Գաբրիել Պետրոսի, Ղազարյան Միտյա Սիմոնի, Ղարիբյան Սուրեն Գրիգորի, Մարգարյան Բագրատ Օհանի, Մարտիրոսյան Գրիշա Ղազարի, Մարության Նիկոլայ Հովհաննեսի, Մելիքյան Մեհեռնակ Արտաշեսի, Մելքումյան Բագրատ Գրիգորի



Ձախից աջ՝ Մելքումյան Մելքում Սարոյի, Մելքումյան Ռաֆիկ Սեդրակի, Մովսիսյան Հովհաննես Ավետիսի, Մուսախանյան Վարդան Արամի, Նազարյան Գևորգ Հարթենի, Յուզբաշյան Բենիկ Տիգրանի, Ներսիսյան Սկրտիչ Գեղամի, Շահնազարյան Նիկոլայ Հարությունի, Շիրինյան Սերգեյ Խաչատուրի



Ձախից աջ՝ Չաքինյան Վազգեն Սարգսի, Չիլինգարյան Վլադիմիր Մուրադի, Պավժիկով Արոն Իլյիչ, Պետրոսյան Միքայել Հովսեփի, Պիվազյան Հարություն Մուշեղի, Ջրբաշյան Էդուարդ Մկրտչի, Սահակյան Գարեգին Խաչատուրի, Սահակյան Համլետ Հմայակի, Սահրադյան Գևորգ Միսակի



Ձախից աջ՝ Սարգսյանց Մամիկոն Բախշիի, Սարգսյան Անդրանիկ Մերգելի, Սարգսյան Արամ Վարդանի, Սարգսյան Սերգեյ Հովհաննեսի, Սարկիսով Արսեն Երվանդի, Սիմոնյան Խաչատուր Բախշիի, Վարդապետյան Հովհաննես Կարապետի, Տեր-Մինասյան Լևոն Երվանդի



Հայրենական պատերազմի մի խումբ մասնակիցներ



Համալսարանի մի խումբ ռազմաճակատայիններ

Քառասունհինգի սերունդը

Այս աշխարհի դեմ ահավոր՝ կանգնած,
Տրված մարդևության, ցավի, տանջանքի,
Պատերազմներից ու մահից հոգնած՝
Դեռ կանք՝ սերունդը քառասունհինգի:

Հալածված, մերժված, լքված, անանուն,
Կորցրած հաճույքն ու խինդը երգի՝
Դեռ քարշ ենք գալիս կյանքի քառուղում
Պարտականներս քառասունհինգի:

Նախորդ սերնդից մահվան մատնված
Առանց գթության ու կարեկցանքի
Եվ նոր սերնդից չգնահատված՝
Դժբախտ սերունդը քառասունհինգի:

Հրաշքներ գործած և սակայն համեստ,
Միշտ դյուրահավատ ու պարզահոգի,
Սովոր լոկ խոսքի պարզ ու անարվեստ՝
Խաբված սերունդը քառասունհինգի:

Մեռնում ենք այսօր ասպիճանաբար՝
Թողնելով վերջին հույսերը կյանքի,
Մնացել է լոկ մի կարճ ճանապարհ
Մոհիկաններիս քառասունհինգի:

Հաղթանակ տարած, բայց պարտված կյանքում,
Հարվածներ կրած, բայց չեկած ծնկի՝
Կվարչապետվենք միայն գալիքում
Մենք՝ զավակներս քառասունհինգի:

Գևորգ Ջահուկյան, 20.06.1990 թ.
ԵՊՀ շրջանավարտ

Բ) ՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԵՎ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍԱՆԱԾ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

Համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվում այսօր զգալի թիվ են կազմում այն ռազմաճակատայինները, որոնք 1941-1944 թթ. պատերազմ են մեկնել այլ կազմակերպություններից: Նրանց մի մասը համալսարան է ընդունվել 1945-1946 թթ. և ավարտելուց հետո գիտական ու մանկավարժական աշխատանքի անցել համալսարանի ամբիոններում, լաբորատորիաներում, ֆակուլտետներում ու ռեկտորատում, իսկ մյուս մասը՝ զորացրվելուց հետո: Նրանցից շատերը պրոֆեսորներ, դոկտորներ, դոցենտներ, բարձրաստիճան զինվորականներ և վարչական համակարգի աշխատողներ են, որոնք մեծ ջանքեր են գործադրել ուսանողությանը կրթելու, մասնագիտական գիտելիքներով նրանց զինելու և բարձր հայրենասիրությամբ դաստիարակելու ուղղությամբ: Նրանց կյանքի ու գործունեության մասին է պատմում ներկայացվող նյութը: Այն նվիրված է պատերազմյան և հետպատերազմյան տարիներին ԵՊՀ-ում ուսանած, գործունեություն ծավալած և մարտերում մկրտված համալսարանականներին:

ԱՐԳԱՐՅԱՆ ՌՈԶԱԼՅԱ ՍԵՐԳԵՅԻ (1923 թ.) – ծնվել է 1923 թ. հունիսի 17-ին Թբիլիսիում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ատեստատը ստանալու հաջորդ օրը սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը և նա իր հինգ համադասարանցի ընկերուհիների հետ կամավոր դիմում է զինկոմիսարիատ և խնդրում ուղղարկել ռազմաճակատ: Նրանց ուղարկում են ռադիոհեռախոսավարների կուրսեր սովորելու: Երեք ամսվա ռադիոհեռախոսավարների դասընթացներն ավարտելուց հետո նա մեկնում է ռազմաճակատ, նախ՝ Ռաստով, ապա Ստալինգրադ: Սկզբում 12-րդ բանակի 88-րդ կապի գնդի, ապա 18-րդ բանակի կազմում անցնում է նրա մարտական ուղին: 1942 թ. ձմռանը մասնակցել է Վորոշիլովգրադի մոտ մղվող ծանր մարտերին ապա Նովոռասիյսկի, Սև ծովի ափին, Մալայա զեմլյա

այրվող փոքր հողակտորին դաժան կռիվներին, երբ կրակ էր տեղում ծովից ու ցամաքից: 1-ին ապա 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի կազմում մասնակցել է Ուկրաինայի, Լեհաստանի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի ազատագրական մարտերին: Նա միշտ գտնվելով առաջին գծում արժեքավոր տեղեկություններ է հաղորդել բանակի հրամանատարությանը: Նրա նման մի հաղորդագրության՝ «Պրահան վտանգի մեջ է» շնորհիվ հնարավոր եղավ, որ նախատեսված ժամկետից շուտ 1945թ. մայիսի 9-ին խորհրդային զորքը մտնի Պրահա և ազատագրի Չեխոսլովակիան ֆաշիստական խմբավորումից: Պարգևատրվել է հայրենական պատերազմի մի շարք հուշամեդալներով և մարտական մեդալներով: Պատերազմից հետո ավագ սերժանտ Ռ. Աբգարյանը 1948-1952թթ. ընդունվել և ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, ապա երկար տարիներ աշխատել է ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի մայրաքաղաքի տարբեր դպրոցներում: Այսօր էլ 96-ամյա վետերան Ռ. Աբգարյանը Հայրենական պատերազմի կին մասնակցիների վետերանների խորհրդի նախագահն է:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳԻՍ (1923-2006) – Ծնվել է 1923 թ. Թուրքմենական ԽՍՀ Մարի քաղաքում, բանվորի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Թուրքմենիայում, իսկ միջնակարգը՝ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քարաքենդ գյուղում: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1942 թ. սեպտեմբերը սովորել է Բույնակի ռազմահետևակային ուսումնարանում, որն այդ ժամանակ գտնվում էր Ստեփանակերտում: Ուսումնարանն ավարտելուց հետո ստացել է սպայի կոչում և գործուղվել ռազմաճակատ: Սկզբում ծառայել է 256-րդ առանձին հրաձգային բրիգադում, այնուհետև՝ Թամանյան դիվիզիայում, Հարավային Կովկասի Առաջին սնծովյան և Առաջին բելառուսական ռազմաճակատներում: Մասնակցել է Մոզդոկի, Արմավիրի, Թամանի, Կերչի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը:

Ռազմաճակատներում Գ. Աբրահամյանը եղել է վաշտի, գումարտակի հրամանատար և գնդի շտաբի պետ: Նա երկու անգամ վիրավորվել է Հյուսիսային Կովկասի ազատագրման համար մղվող

մարտերում, իսկ երրորդ անգամ՝ Ղրիմում: Թամանյան դիվիզիայի քաղբաժինը Գ. Աբրահամյանին կուսակցության շարքերն է ընդունել:

Գ. Աբրահամյանը պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկու», «Կարմիր դրոշի» շքանշաններով և 13 մարտական մեդալներով: Նա շարքային զինվորից հասել է մինչև գնդապետի աստիճանի: Պատերազմից հետո՝ 1947 թ., Գ. Աբրահամյանը ավարտել է «Վիստրել» դասընթացները և նշանակվել սկզբում գումարտակի հրամանատար, իսկ հետո՝ գնդի շտաբի պետ Երևանում ու Լենինականում (Գյումրի): 1955 թթ. նա ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան և նշանակվել գնդի հրամանատար: Մինչև 1969 թվականը շարունակել է ծառայել խորհրդային բանակում:

27-ամյա զինվորական ծառայությունից հետո՝ 1969 թ., նշանակվել է ԵՊՀ ռազմական ամբիոնի վարիչ և ուսանողներից պատրաստել զինվորական կադրեր: Նաև զբաղվել է գիտական գործունեությամբ և 1974 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1989 թ. աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ ավագ գիտաշխատող, իսկ 1995 թ. դարձել է պատմական գիտությունների դոկտոր: Վախճանվել է 2006 թ. մարտի 21-ին Երևանում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳԱՆՋՈՒՄԻ (1925-2005) – Ծնվել է 1925 թ. փետրվարի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղում: 1942 թ. դեկտեմբերի 20-ին՝ 10-րդ դասարանը ավարտելուց հետո, զորակոչվել է բանակ: Սկզբում ծառայել է Բաքվում գտնվող դիպուկահարների ուսումնարանում, իսկ այնուհետև մեկնել է ռազմաճակատ: Որպես շարքային 39-րդ հրաձգային գնդի կազմում մասնակցել է Բրյանսկի և Գոմելի ազատագրական մարտերին: 1943 թ. նոյեմբերի 26-ին Գոմելի համար մղված մարտերում ծանր վիրավորվել է: Մինչև 1944 թ. մայիսի 9-ը բուժվել է զինվորական հոսպիտալում, որից հետո զորացրվել է: 1945 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ, որն ավարտել է 1950 թվականին: Նույն թվականին դարձել է ԽՄԿԿ անդամ, ինչպես նաև ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա՝ «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտացմամբ: Ասպիրանտուրան ավարտել է 1953 թ. և պաշտպանել է թեկնածուա-

կան ատենախոսություն: 1966 թ. դարձել է բանասիրական գիտությունների դոկտոր, իսկ 1970 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, դասագրքերի, ձեռնարկների և ավելի քան 100 հոդվածների: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և մի շարք մեդալներով:

ԱԴԱՄՅԱՆ ՎԻԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1926-1986) – Ծնվել է 1926 թ. հունվարի 19-ին Լեռնային Ղարաբաղում: Սովորել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1943 թ. տակավին 10-րդ դասարանի աշակերտ նա կամավոր մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. ավարտել է Բույնակսկի (Չեչնյա) ռազմական ուսումնարանը լեյտենանտի կոչումով: Այնուհետև տարբեր սպայական պաշտոններում ծառայությունը շարունակել է Թամանյան դիվիզիայում: 1952-1956 թթ. Վ. Ադամյանը սովորել է Լենինգրադի Մ. Կալինինի անվան բարձրագույն ռազմամանկավարժական ակադեմիայի տնտեսագիտության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո վերադարձել է Հայաստան: 1966 թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա՝ քաղաքատնտեսության գծով, և 1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1974 թ. գնդապետի կոչումով զորացրվել է զինվորական ծառայությունից և աշխատանքի անցել ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում որպես դոցենտ: Միաժամանակ երկար տարիներ գլխավորել է ՀԿԿ կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնը: Վախճանվել է 1986 թ. նոյեմբերի 9-ին:

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ԼԵՆԴՐՈՒԾ ԱԲԻՍՈՂՈՄԻ (1926-2010) – Ծնվել է 1926 թ. փետրվարի 20-ին Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Սամաղարի (Գեղակերտ) միջնակարգ դպրոցում: 1944 թ. զորակոչվել է բանակ և ծառայել 261-րդ հրաձգային դիվիզիայի 978-րդ հրաձգային գնդում, որը տեղակայված էր խորհրդա-թուրքական սահմանին: 1945 թ. ծառայել է Թամանյան դիվիզիայում: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», «1941-1945 թթ. Հայրենական մեծ

պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Որպես գրաշար աշխատել է «Կարմիր զինվոր» թերթում: 1950 թ. նշանակվել է ավագ գրաշար ՀԽՍՀ ԳԱ տպարանում, 1952-1970 թթ.՝ տնօրենի տեղակալ: 1964 թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը, որն ավարտելուց հետո 1970 թվականից սկսած՝ 30 տարուց ավելի աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ տպարանի տնօրեն: Նրա տնօրինության տարիներին տպարանի վարկն ու համարումը շատ բարձր էին հանրապետությունում: Լ. Ազիզբեկյանի գլխավորությամբ Գիտությունների ակադեմիայում տպագրվել են մի շարք գիտական աշխատություններ, մենագրություններ, որոնց թվում են «Հայ ժողովրդի պատմության», «Հայ գրականության պատմության» ակադեմիական հրատարակությունները, ինչպես նաև հայ դասականներից շատերի՝ Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի, Դ. Վարուժանի և ուրիշների բազմահատորյակները: Երկարամյա և անբասիր գործունեության համար արժանացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի, ՀԽՍՀ ԳԱ շնորհակալագրերի, ինչպես նաև ՀԽՍՀ «Աստղաֆիզիկա» ամսագրի սահմանած հատուկ մրցանակի: Վախճանվել է 2010 թ. օգոստոսի 22-ին Երևանում:

ԱԹԱՋԱՆՅԱՆ ՄԵԼՔՈՆ ԱՎԵՏԻՍԻ (1919-) – Ծնվել է 1919 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղում: 1938 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Թալիշ գյուղի դպրոցում: 1939 թ. ընդունվել է Շուշիի մանկավարժական ինստիտուտը: Ընդամենը մեկ տարի սովորելուց հետո՝ 1940 թ., փետրվարին զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայել է Արևմտյան Ուկրաինայում, իսկ հետո՝ Լենինգրադի մարզում՝ Կարելո-ֆիննական ԽՍՀ սահմանի վրա գտնվող զորամասերից մեկում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Մ. Աթաջանյանը Կարելո-ֆիննական ԽՍՀ Կեքսգոլմի տեղամասում գտնվող 115-րդ դիվիզիայի կազմում մասնակցել է ֆիննական զորամասերի դեմ մղվող մարտերին: Երբ թշնամին մոտեցել է Լենինգրադին (Սանկտ Պետերբուրգ), քաղաքի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերից մեկում Մ. Աթաջանյանը 1941 թ. հոկտեմ-

բերին ռումբի պայթումից վիրավորվել է, ստացել կոնտուզիա և գերվել թշնամու կողմից: Ծանր պայմաններում ապաքինվել է: Ձմեռային սառնամանիքների ժամանակ գերիներին, այդ թվում՝ նրան, հարկադրել են կատարել ամենածանր ֆիզիկական աշխատանքներ, օրինակ՝ մաքրել ականապատված դաշտերը, ինչի հետևանքով վերջիններս զոհվել են ականների պայթյուններից: 1941 թ. մի խումբ գերիների հետ Մ. Աթաջանյանին ուղարկել են Լեհաստան՝ համակենտրոնացման ճամբար: Ռազմաճակատի մոտ տաժանակիր աշխատանք կատարելու ժամանակ Աթաջանյանն իր ընկերների հետ փախել է՝ միանալով հարձակվող խորհրդային զորամասերին:

1942 թ. հոկտեմբերին Մ. Աթաջանյանը զորացրվել է և վերադարձել հայրենի գյուղ: Մեկ տարի ուսուցիչ աշխատելուց հետո՝ 1946 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1951 թ. ավարտել է և աշխատանքի անցել էլեկտրալամպերի գործարանում: 17 տարի գործարանում աշխատելուց հետո վերադարձել է համալսարան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, որից հետո աշխատել է որպես դասախոս ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ (1897-1992) – Ծնվել է 1897 թ. Կարսում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գաղթել է Վրաստան և բնակություն հաստատել Թիֆլիսում: Սովորել և ավարտել է տեղի առևտրական ուսումնարանը և 1924 թ. հատուկ կանչով զորակոչվել կարմիր բանակ: Շուրջ 33 տարի, ներառյալ Հայրենական պատերազմի տարիները, Ա. Ալեքսանդրյանը ծառայել է բանակում: Զինվորական ծառայությանը համընթաց նա սովորել ու ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, որպես կադրային զինվորական առաջին իսկ օրերին ուղարկվել է գործող բանակ: Ա. Ալեքսանդրյանը եղել է սկզբում Հյուսիսային Կովկասի, Կալինինի, Երրորդ մերձբալթյան, ապա Լենինգրադյան ու Երկրորդ բելառուսական ռազմաճակատներում: Նա վարել է մի շարք պաշտոններ, եղել է զինվորական հոսպիտալի, նաև գնդի բժշկական մասի պետ և այլն:

Կարմիր բանակի տարբեր զորամասերում բժիշկ Ալեքսանդրյանը մարտնչելով անցել է մինչև Բեռլին՝ ամենուրեք աչքի ընկնելով իր համեստությամբ, հիվանդ ու վիրավոր ռազմիկների նկատմամբ ցուցաբերած մեծ հոգատարությամբ: Ռազմաճակատներում, բժշկական ծառայության մեջ դրսևորած արիության ու խիզախության համար Ա. Ալեքսանդրյանը պարգևատրվել է «Լենինի», «Կարմիր աստղ», «Կարմիր դրոշի» շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Պատերազմից հետո Ա. Ալեքսանդրյանը ծառայել է 67-րդ բանակում որպես բժշկական կետի վարիչ, այնուհետև՝ 45-րդ բանակի առաջին բաժանմունքի պետի տեղակալ: 1955 թ. զորացրվել է բանակից բժշկական ծառայության փոխգնդապետի կոչումով: 1956-1958 թթ. որպես դասախոս աշխատել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի համաճարակաբանության, իսկ 1958-1978 թթ.՝ ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոններում: Հետագա տարիներին աշխույժ մասնակցություն է ունեցել հասարակական կյանքին: Դասավանդել է ԵՊՀ-ում: Վախճանվել է 1992 թ. հոկտեմբերի 15-ին:

ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ ԻՍԱՀԱԿԻ (1908-1978) – Ծնվել է 1908 թ. հունիսի 24-ին Գանձակում: 1931թ. ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) համալսարանը և աշխատանքի անցել Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: 1940 թ. Ա. Ալիխանյանն արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճանի, 1942 թ.՝ պրոֆեսորի կոչման: 1943 թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ, 1930-1943 թթ.՝ Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի գիտաշխատող, ապա՝ լաբորատորիայի վարիչ: 1931-1941 թթ. դասախոսել է Լենինգրադի պետական համալսարանում: 1942 թ. Ա. Ալիխանովի հետ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում կազմակերպել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, որը 1943 թ. համալսարանի կազմում վերածվել է Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի: 1943-1973 թթ. Ա. Ալիխանյանը, լինելով Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ստեղծել է տիեզերական ճառայթների ուսումնասի-

րության բնագավառի գիտնականների մի ամբողջ դպրոց: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ա. Ալիխանյանի կատարած մի շարք աշխատանքներ ունեցան պաշտպանական բացառիկ կարևոր նշանակություն: 1946 թ. Ա. Ալիխանյանի ջանքերով ստեղծվել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի միջուկային ֆիզիկայի ամբիոնը: 1942 թ. Ա. Ալիխանովի հետ ստեղծել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը, որտեղ տիեզերական ճառագայթներում հայտնաբերել են լիցքավորված մասնիկների «ձեղ» հեղեղներ, մեծ էներգիայով պրոտոնների ուժգին հոսքեր և տիեզերական արագ նեյտրոնների ազդեցությամբ առաջացող պրոտոններ: Ա. Ալիխանյանն առաջինն է նշել տարրական նոր մասնիկների գոյությունը տիեզերական ճառագայթներում: 1950-ական թվականների կեսերին իր աշխատակիցների հետ նա կատարել է տարրական մասնիկների ուսումնասիրություն: Ա. Ալիխանովի և Մ. Կոզոդոևի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի առաքման երևույթը, Ա. Ալիխանովի հետ սահմանել ռադիոակտիվ տարրերի b սպեկտորների տեսքի կախումը տարրի ատոմական համարից: Հայտնաբերել է էլեկտրոններ առաքող առաջին արհեստական ռադիոակտիվ սիլիցիում տարրը: Ա. Ալիխանյանը ստեղծել և կատարելագործել է մեծ էներգիայով մասնիկների հետազոտման սարքեր: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է նաև Երևանի 6 ԳԷՎ էներգիայով արագացուցիչը: 1958 թ. նա Հայաստանում հիմնադրել է Նոր Ամբերդի կայանը, միաժամանակ ղեկավարել Նոր Ամբերդի տեսական և փորձարարական ֆիզիկայի միջազգային դպրոցը: Ա. Ալիխանյանն արժանացել է ԽՍՀՄ պետական (1941, 1948) և Լենինյան (1970) մրցանակների, պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով»: Դասավանդել է նաև ԵՊՀ-ում: Վախճանվել է 1978 թ. փետրվարի 25-ին Մոսկվայում:

ԱԼԻԽԱՆՈՎ ԱԲՐԱՀԱՄ ԻՍԱՀԱԿԻ (1904-1970) – Ծնվել է 1904 թ. մարտի 4-ին Թիֆլիսում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) պոլիտեխնիկական ինստի-

տուտ, որն ավարտել է 1929 թվականին: 1927-1941 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: Ա. Ալիխանովի առաջին աշխատությունները նվիրված են ռենտգենակառուցվածքային վերլուծությանը և ռենտգենյան ճառագայթների ֆիզիկային: 1932 թվականից զբաղվել է միջուկային և տարրական մասնիկների ֆիզիկայով և ռադիոակտիվության ու միջուկների ռադիոակտիվ ճառագայթման հետազոտման ասպարեզում կատարել մի շարք աշխատանքներ, որոնք բացառիկ նշանակություն են ունեցել: Ա. Ալիխանյանի և Մ. Կոզոդոկի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի արձակման երևույթը, Ա. Ալիխանյանի հետ հայտնաբերել ռադիոակտիվ տարրերի b սպեկտորների տեսքի կախումը տարրի ատոմական համարից և ճշգրտել Ռեզերֆորդի ստացած որոշ արդյունքներ: 1940 թ. Ա. Ալիխանովը կազմակերպել է Էլբրուսի տիեզերական ճառագայթների հետազոտման առաջին արշավախումբը: Հայրենական մեծ պատերազմի ամենածանր շրջանում՝ 1942 թ., նա Ա. Ալիխանյանի հետ Արագածում հիմնել է գիտական կայան, իսկ ԵՊՀ-ում՝ տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, որը համալսարանի կազմում վերածվեց Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի՝ Ա. Ալիխանովի տնօրինությամբ, իսկ 1944 թ. տեղափոխվեց ակադեմիայի համակարգ:

Ա. Ալիխանովն իր գործուն մասնակցությունն է ունեցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծմանը և նրա հիմնադրման օրից դարձել ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ: Նրա գիտական ղեկավարությամբ 1949 թ. ստեղծվեց ԽՍՀՄ առաջին հետազոտական միջուկային ռեակտորը՝ ծանր ջրի կիրառմամբ: Նա երկար տարիներ ղեկավարել է Մոսկվայի՝ աշխարհում հայտնի տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը, որտեղ ռեակտորաշինության բնագավառի աշխատանքներին զուգահեռ կատարվել են հիմնարար հետազոտություններ տարրական մասնիկների ֆիզիկայի ասպարեզում: Ա. Ալիխանովը մեծ ավանդ ունի նաև բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառում կատարվող հետազոտությունների նյութա-

կան բազայի զարգացման գործում: Նրա ղեկավարությամբ Մոսկվայում կառուցվել է պրոտոնների արագացուցիչ՝ 7 ԳէՎ էներգիայով, որը դարձավ մողել Սերպուխով քաղաքում կառուցված պրոտոնների՝ 70 ԳէՎ էներգիայով արագացուցչի համար, և որի նախագիծը մշակվեց Ա. Ալիխանովի ակտիվ մասնակցությամբ: Նա միջուկային ֆիզիկայի և տարրական մասնիկների արագացուցիչների ֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրներից է: Ա. Ալիխանովն արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ԽՍՀՄ պետական մրցանակի, պարգևատրվել «Լենինի» և «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով: Դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: Վախճանվել է 1970 թ. դեկտեմբերի 8-ին Մոսկվայում:

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ (1921-1995) – Ծնվել է 1921 թ. Երևանում: 1939 թ. գերազանց գնահատականներով ավարտել է թիվ 29 միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ և նոյեմբերի 24-ին զորակոչվել խորհրդային բանակ: Հայրենական պատերազմի առաջին օրերից Հարավարևմտյան ճակատում մասնակցել է կռիվներին, միշտ եղել է ճակատի առաջին գծում, բազմիցս վիրավորվել է: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով: Ջորացրվելուց հետո ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է գերազանցության դիպլոմով՝ ստանալով պատմաբան-միջազգայնագետի որակավորում: 1950 թ. աշխատանքի է նշանակվել ՀԽՍՀ պետական գրապալատում որպես փոխտնօրեն: 1961 թ. օգոտոսին նշանակվել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության գրադարանային բաժնի պետ: Վարչական աշխատանքին զուգընթաց Գ. Աղախանյանը դասավանդել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժնում՝ մշակույթի նախարարության մշտական գործող դասընթացներում: Վախճանվել է 1995 թվականին:

ԱՂԱՅԱՆ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1920-1999) – Ծնվել է 1920 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1937 թ. Աղայանը ավարտել է Կիրովականի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պե-

տական բժշկական ինստիտուտը: 1942 թ. հունիսին ավարտել է և նույն թվականի սեպտեմբերին զորակոչվել կարմիր բանակ: 1942-1944 թթ. նա ծառայել է Կույբիշև քաղաքի 43-րդ Օդային ծառայության գնդում որպես գլխավոր բժիշկ, 1944 թ. մայիսին նրան ուղարկել են Երկրորդ ուկրաինական ռազմաճակատ: 18-րդ օդային բանակի 305-րդ գումարտակի կազմում Ա. Աղայանը մասնակցել է Վենեցիայի և Բոսնիայի համար մղվող օդային մարտերին: 1945 թ. հունվար-փետրվար ամիսներին մասնակցել է Լեհաստանի քաղաքների ազատագրմանը, այնուհետև՝ Քյոնիգսբերգի ու Բեռլինի գրավմանը: Ա. Աղայանը վիրավորվել է 1944 թ. նոյեմբերին, ապաքինվել և վերադարձել է ռազմաճակատ: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Մարտական ծառայությունների համար» և այլ մեդալներով: Պատերազմից հետո աշխատել է վիրաբույժ մի շարք զորամասերում: 1969 թ.՝ զորացրվելուց հետո, եղել է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս: Վախճանվել է 1999 թվականին:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՎՍԵՍԻ (1923-1967) – Ծնվել է Թուրքմենական ԽՍՀ Մարի քաղաքում: 1925 թ. ընտանիքը տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաք: 1940 թ. ավատել է Ստեփանակերտի Գորկու անվան միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ալմա Աթայի հետևակային ուսումնարանը, որն ավարտել է 1941 թ. դեկտեմբերին: 1942 թ. հունվարից մինչև Հայրենական պատերազմի ավարտը մասնակցել մարտերին՝ որպես դասակի վաշտի հրամանատար և գումարտակի հրամանատարի տեղակալ: 1947 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և ավարտելով այն՝ 1951 թ. անցել է կուսակցական աշխատանքի: Եղել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի հրահանգիչ, բաժնի վարիչի տեղակալ, 1954 թ.՝ ՀԿԿ ԿԿ պատասխանատու կազմակերպիչ: 1957 թ. ընտրվել է ՀԿԿ Արթիկի շրջկոմի 2-րդ քարտուղար: 1958 թ. օգոստոսից աշխատել է որպես ՀԿԿ Կալինինոյի շրջկոմի 1-ին քարտուղար: Ընտրվել է ՀԽՍՀ ԳԽ

պատգամավոր: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1967 թվականին:

ԱՄԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐԻ (1909-1977) – Ծնվել է 1909 թ. Գորիսի շրջանի Հին Գորիս գյուղում: 1929 թ. ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Խնձորեսկ գյուղում: 1931 թ. ընդունվել է Երևանի կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը: Երկրորդ կուրսից փոխադրվել է Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ: 1935 թ. ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: Մի տարի ծառայել է Հեռավոր Արևելքի կարմրադրոշ բանակում և զորացրվել: Հայրենական պատերազմի առաջին օրերին Ա. Ամարյանը Պլեխանովի անվան ինստիտուտի ասպիրանտուրայի երկրորդ կուրսից մեկնել է գործող բանակ: 1941-1945 թթ. նա եղել է կապի սպա: Առաջին տարին մարտնչել է Արևմտյան, իսկ մյուս տարիներին՝ Հարավային և Առաջին ուկրաինական ռազմաճակատներում: Ա. Ամարյանը մասնակցել է Ստալինգրադի, Խարկովի, Կիևի, Պոլտավայի, Վիննիցի, Բերդիչևի, Պերեմիշլի, Սանդամիրի, Բրեսլավուլի ազատագրմանը: Վիննիցի ազատագրման ժամանակ ծանր վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ծառայության: Նա պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով ու մի շարք մեդալներով:

1945 թ. աշնանը Ա. Ամարյանը զորացրվել է և շարունակել ուսումը Պլեխանովի անվան ինստիտուտի ասպիրանտուրայում: 1947 թ. մայիսին ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և դասախոսական աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում՝ սկզբում տնտեսագիտական, այնուհետև ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետում որպես դոցենտ: Վախճանվել է 1977 թվականին:

ԱՅՎԱԶՅԱՆ ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՆԻ (1913-1998) – Ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 5-ին Սամարղանդում (Ուզբեկստանում): 1929-1932 թթ. աշխատել է «Ուզբեկիստանսկայա պրավդա», «Կարակալպակսկայա կոմունա» և «Պրիբալխաշսկայա պրավդա» թերթերի խմբագրու-

թյուններում որպես գրական աշխատող և բաժնի վարիչ: 1937 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1937-1941 թթ. դասախոսել է Երևանի ռուսական ուսուցչական ինստիտուտում և համալսարանում: 1941 թ. օգոստոսին Ղ. Այվազյանը զորակոչվել է կարմիր բանակ և նյութական մատակարարման գծով գնդի հրամանատարի տեղակալի պաշտոնով ծառայության է նշանակվել 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: 1942 թ. օգոստոսին մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և ծառայության նշանակվել դիվիզիայի շտաբում: 1943 թ. ապրիլին մարտերից մեկում ստացել է կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո շարային ծառայությունների համար որպես ոչ պիտանի զորացրվել է բանակից:

Ղ. Այվազյանը պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «Մարտական ծառայության համար» մեդալներով: Վերադառնալով Երևան՝ 1943-1947 թթ. նշանակվել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի տնօրենի տեղակալը, 1947-1950 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար: 1950-1970 թթ. եղել է ԵՊՀ ռուս գրականության ամբիոնի դոցենտ, 1970-1978 թթ.՝ նշված ամբիոնի վարիչ: 1978 թվականից աշխատել է ԵՊՀ հայագիտական կենտրոնում որպես ԽՍՀՄ ժողովրդների գրական կապերի ուսումնասիրության բաժնի վարիչ: 1985 թ. պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1998 թ. փետրվարի 6-ին:

ԱՆԴՐԵԵՎ ՄԻՔԱՅԵԼ (1924-) – Ծնվել է 1924 թ. Թբիլիսիում: 1941 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: 1942-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, կռվել տարբեր ռազմաճակատներում, հասել մինչև Բեռլին, պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: 1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլ-

տետում: Աշխատել է Վրաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԵԳՈՐԻ (1921-2000) – Ծնվել է 1921 թ. Մարտունու շրջանի Թաղաքյանդ (Թազագյուղ) գյուղում: 1939 թ. ավարտել է Նոր Բայազետի մանկավարժական ուսումնարանը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Աբթաշ գյուղում: 1940 թ. հունվարից զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1962 թվականը: Հ. Առաքելյանը ծառայության է նշանակվել հրետանու գնդում որպես հրետանավոր: Կարճ ժամանակում նա իրեն դրսևորել է որպես գերազանց նշանառու և հմուտ հրետանավոր: 1940 թ. Բեսարաբիայի ազատագրման մարտերում աչքի է ընկել՝ արժանանալով գովասանքի ու պարգևատրման:

Հայրենական մեծ պատերազմին Հ. Առաքելյանը մասնակցել է առաջին իսկ օրվանից: Սկզբում եղել է Ղրիմի ռազմաճակատում և մասնակցել թերակղզու քաղաքների ազատագրմանը: 1941 թ. հոկտեմբերին ծանր վիրավորվել է և բուժման ուղարկվել Տոմսկ քաղաքը: Ապաքինվելուց հետո նրան որպես փորձված հրետանավորի ուղարկել են Երրորդ ուկրաինական ռազմաճակատ: Մասնակցել է Ռումինիայի և Բուլղարիայի ազատագրմանը: Կեսգիշերին թշնամու բոլոր տեսակի զենքերի կրակի տակ Հ. Առաքելյանի դասակը առանց կորուստի անցել է Դնեպր գետը, գրավել է Դնեպրոձերժինսկից հարավ գտնվող Առլ գյուղը և ապահովել մյուս զորամասերի առաջխաղացումը: Մարտական այդ բարդ խնդիրը կատարելու համար նա պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Հ. Առաքելյանին ուղարկել են՝ սովորելու Դնեպրոպետրովսկի հրետանու դպրոցում: Սակայն, երբ թշնամին մոտեցել է քաղաքին, դպրոցի սաների հետ միասին նա մասնակցել է քաղաքի պաշտպանությանը: Առաքելյանին նորից ուղարկել են սովորելու: 1942 թ. մայիսին նա ավարտել է ռազմական դպրոցը, ստացել սպայի կոչում և նորից մեկնել ռազմաճակատ:

1944 թ. Հ. Առաքելյանը իր դասակով հետապնդել է նահանջող թշնամուն, հասել մինչև Ռումինիա և Բուլղարիա: Սոֆիա մտնելիս նա

ստացել է մարտական առաջադրանք՝ կապ հաստատել Դիմիտրովի անվան պարտիզանական գումարտակի հետ: Առաջադրանքը կատարել է խիզախությամբ և արժանացել գովասանքի: Հաղթանակից հետո փոխգնդապետ Առաքելյանը, ավելի քան 20 շքանշաններ ու մեդալներ ստացած, վերադարձել է հայրենիք: Այնուհետև՝ մինչև 1962 թվականը, նա ծառայել է խորհրդային բանակում, զորացրվելուց հետո աշխատանքի է անցել ԵՊՀ ռազմական ամբիոնում: Վախճանվել է 2000 թվականին:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ (1915-1986) – Ծնվել է 1915 թ. մարտի 24-ին Ելիզավետապոլի նահանգի Շամխորի շրջանի Նյուզգյար գյուղում: 1935 թ. ավարտել է Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումը և նույն տարում ընդունվել Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1939 թ. ինստիտուտն ավարտելուց հետո ընդունվել է ասպիրանտուրա և սովորել մինչև նույն թվականի աշունը: 1939 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1968 թվականը: Բանակում եղել է վաշտի քաղղեկ, գումարտակի կոմիսար, հոսպիտալի կոմիսար, ռազմական օկրուգի քաղվարչության տեսուչ, ռազմական ակադեմիայի դասախոս և ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ:

Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, ավագ քաղղեկ Առաքելյանը եղել է Վոլխովի ռազմաճակատում և մասնակցել Տխվինի ու Վոլխովի ազատագրման համար մղվող մարտերին: 1942 թ. փետրվարին ծանր վիրավորվել է և ապաքինվելուց հետո շարունակել իր զինվորական ծառայությունը: 1949-1968 թթ. աշխատել է ռազմական ակադեմիայում: Այնուհետև զորացրվել ու մշտական աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում: 1967 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1971 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Հետագա տարիներին եղել է համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Զինվորական ծառայության ընթացքում պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, «Մարտական ծառայության համար», «1941-1945

թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և մի շարք այլ մեդալներով: Վախճանվել է 1986 թ. հունվարի 10-ին:

ԱՍԱՏՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԵԳՈՐԻ (1926-2000) – Ծնվել է 1926 թ. ապրիլի 26-ին Էջմիածնի շրջանի Արագած գյուղում: 1939 թ. ավարտել է Աղավնատուն գյուղի յոթնամյա դպրոցը, 1942 թ.՝ Էջմիածնի մանկավարժական ուսումնարանը: 1944-1946 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել է Ուկրաինայի, Բելառուսիայի և Լեհաստանի ազատագրական մարտերին: 1951 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1942-1944 թթ. աշխատել է որպես ուսուցիչ, 1954 թվականից՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում որպես դասախոս: 1954 թ. Մ. Ասատրյանը պաշտպանել է թեկնածուական, 1970 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1973 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990-1995 թթ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ: Մ. Ասատրյանը վախճանվել է 2000 թ. հունվարի 25-ին Երևանում:

Մ. Ասատրյանի հեղինակած աշխատություններից առավել կարևոր են «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» (3 հատորով), «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» (Երևան, 1959), «Ուրմիայի (Խոյի) բարբառը» (Երևան, 1968), «Լոռու խոսվածքը» (Երևան, 1968) մենագրությունները և «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» (4-րդ հրատ., Երևան, 2004), «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն. պարզ նախադասություն» (Երևան, 1987) բուհական դասագրքերը: Վախճանվել է 2000 թ. Երևանում:

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԱՌՈՒՍՏԱՄԻ (1910-1995) – Ծնվել է 1910 թ. Շահումյանի շրջանի Երքեջ գյուղում: 1931 թ. ավարտել է Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: Երեք տարի դպրոցում աշխատելուց հետո՝ 1935 թ., ընդունվել է Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ավարտել է 1940 թ. և նույն տարում զորակոչվել

բանակ: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա ծառայելիս է եղել Կիևի զինվորական օկրուգում, եղել է մարտկոցի քաղղեկի տեղակալ: 1941 թ. հուլիսի 12-ին Ուկրաինայի Կորստեն քաղաքի մոտ տեղի ունեցող մարտերից մեկում Մ. Առուստամյանը վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Մինչև 1942 թ. սկիզբը ապաքինվել է և օգոստոս ամսին ուղարկվել Անդրկովկասյան ռազմաճակատ: Առուստամյանը եղել է գումարտակի կուսկազմակերպիչ, մասնակցել Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի քաղաքների ու տարածքների ազատագրմանը, ստացել է մեդալներ, շնորհակալագրեր, դրամական պարգևատրումներ:

1944 թ. աշնանը Մ. Առուստամյանը զորացրվել է և նորից անցել ուսուցչական աշխատանքի: 1946 թ. տեղափոխվել է Երևան և ընդունվել Երևանի պետական համալսարանի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնին կից ասպիրանտուրան: 1950 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի, 1969 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1973-1983 թթ. եղել է ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1995 թ. հուլիսի 21-ին Երևանում:

ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԳԱԲՐԻԵԼԻ (1903-1980) – Ծնվել է 1903 թ. մայիսի 1-ին Երևանի նահանգի Սուրմալու գավառի Կողբ գյուղում: 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքով ընտանիքի հետ միասին գաղթել է Երևան: Ավելի ուշ, զրկվելով ծնողներից, քրոջ հետ տեղափոխվել է Էջմիածնի որբանոց: 1923-1926 թթ. Հայկազ Ալսանյանը սովորել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանում, իսկ 1926-1929 թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում: 1929-1931 թթ. դասախոսել է Թիֆլիսի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1931-1953 թթ. ղեկավարել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի, Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի, ետպատերազմյա տարիների՝ Երևանի պետական համալսարանի և ՀԿԿ կենտկոմին առընթեր հանրապետական կուսակ-

ցական դպրոցի փիլիսոփայության ամբիոնները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ղեկավարել է «Կոմունիստ» և «Սովետական Հայաստան» թերթերի պրոպագանդայի բաժինը: 1966 թ. Հ. Ասլանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ արդեն 1967 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Հեղինակել է ավելի քան 50 գիտական աշխատություններ:

1963 թ. Հ. Ասլանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով: 1944-1948 և 1956-1969 թթ. նա ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության, ապա՝ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքը: 1958-1961 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հանդեսի խմբագիր: 1969-1978 թթ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի բաժնի վարիչ: Վախճանվել է 1980 թվականի հոկտեմբերի 6-ին Երևանում:

ԱՍԼԱՆՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՍԵԴՐԱԿԻ (1921-2010) – Ծնվել է 1921 թ. Արթիկի շրջանի Հնաբերդ գյուղում: 1932 թ. ընտանիքի հետ տեղափոխվել և մշտական բնակություն է հաստատել Լենինական (Գյումրի) քաղաքում: 1940 թ. Ասլանյանն ավարտել է Լենինականի թիվ 10 միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել կարի գործարանում: 1942 թ. հունվարին զորակոչվել է բանակ և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ եղած նոր ձևավորվող հրաձգային դիվիզիա, որի կազմում մեկնել է Կենտրոնական ռազմաճակատ, մասնակցել Ուկրաինայի քաղաքների ու գյուղերի պաշտպանության համար մղվող մարտերին: 1942 թ. մայիսին Սավինցկի շրջանի Չեպել գյուղի տակ Վ. Ասլանյանը վիրավորվել է և ուղարկվել Սավինցկի հոսպիտալ: Կարճ ժամանակում ապաքինվել է և նորից մեկնել Կենտրոնական ռազմաճակատ: 1942 թ. հուլիսին նրան ուղարկել են ռազմական ուսումնարան, բայց գերմանական զորքերի առաջխաղացման պատճառով ժամկետից շուտ ուսումնարանից տարել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ նախ որպես ջոկի, ապա՝ դասակի հրամանատարի պաշտոնակատար: Վ. Ասլանյանը 272-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Մալգո-

բեկ-Մոզդոկ հատվածի մարտերին: 1942 թ. դեկտեմբերին երկրորդ անգամ ծանր վիրավորվել է և ուղարկվել Մախաչկալայի մոտ գտնվող Դվիգատելստրոյ կոչվող գյուղաքաղաքի հոսպիտալը: Այն տեղից նրան ուղարկել են Թբիլիսիի հոսպիտալ, ուր ապաքինվել է և որպես պատերազմի հաշմանդամ զորացրվել բանակից: 1943 թ. փետրվարին վերադարձել է Լենինական և մինչև 1950 թվականը ծառայել Լենինականի կայազորի տարբեր զորամասերում:

1950 թ. Վ. Ասլանյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1955 թ. ավարտել է և նշանակվել կուսակցական աշխատանքի ՀԿԿ Երքաղկոմի Կիրովյան շրջանային կոմիտեում: 1959 թ. վերադարձել է համալսարան և մինչև 1963 թվականը աշխատել որպես կուսակցական կոմիտեի քարտուղար: 1963-1987 թթ. աշխատել է որպես համալսարանի վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1987-2006 թթ. եղել է գիտական գրադարանի տնօրեն:

Վ. Ասլանյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», «Մարտական ծառայությունների համար», «1941-4945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով: Վախճանվել է 2010 թվականին:

ԱՎԱԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԴԱԴԱՇԻ (1916-) – Ծնվել է 1916 թ. Բաքվում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցել նավթարդյունաբերական ձեռնարկություններից մեկում: 1935 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել ռազմական ուսումնարան: 1938 թ. ավարտել է ուսումնարանը՝ նշանակվելով մշտական զինվորական ծառայության: 1940 թ. մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին, իսկ 1941-1944 թթ.՝ Հայրենական մեծ պատերազմին: Նա եղել է Մոսկվայի, Կալինինի և Առաջին բելառուսական ռազմաճակատներում, մասնակցել Սմոլենսկի, Մոսկվայի և այլ քաղաքների, Բելառուսիայի պաշտպանությանը, իսկ հետագայում՝ դրանց ազատագրման մարտերին: Ռազմաճակատներում պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով և մի շարք մեդալներով: Պատերազմից հետո Ավագյանը ավարտել է Մ. Վ. Ֆրուն-

զեի անվան ռազմական ակադեմիան և մինչև 1961 թվականը ծառայել խորհրդային բանակի տարբեր զորամասերում: 1961 թ. գնդապետի կոչումով զորացրվել է և անցել դասախոսական աշխատանքի: 1967 թվականից աշխատել է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնում:

ԱՎԱԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐԻ (1918-1995) – Ծնվել է 1918 թ. մարտի 16-ին Կիրովականի շրջանի Դարբազ գյուղում: 1939 թ. Ավագյանը առաջին կարգի դիպլոմով ավարտել է Կիրովականի (Վանաձոր) հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1941 թթ. ավարտել է և հերթափոխի պետի պաշտոնով աշխատանքի նշանակվել Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական գործարանում:

Հայրենական պատերազմի առաջին օրերին՝ 1941 թ. հունիսի վերջին, կամովին մեկնել է բանակ և անմիջապես գործուղվել՝ Ռազմաքիմիական ակադեմիայում սովորելու: 1941 թ. դեկտեմբերին ավարտել է, ստացել լեյտենանտի կոչում և ուղարկվել գործող բանակ: Եղել է Առաջին մերձբալթյան և Առաջին բելառուսական ռազմաճակատներում, ակտիվորեն մասնակցել է Վելեժի, Վիտեբսկի, Սմոլենսկի, Շաուլյայի, Տիլզիտի, Քյոնիգսբերգի, Գդինի, Դանցիգի և մի շարք այլ քաղաքների համար մղվող մարտերին: Ս. Ավագյանը եղել է գլխավոր հրամանատարության 43-րդ հրանոթային գնդի քիմիական ծառայության պետ, 209-րդ հատուկ քիմիական պաշտպանության վաշտի հրամանատար, 27-րդ սակրավորային բրիգադի քիմիական ծառայության պետ:

Փոխգնդապետ Սարգիս Ավագյանը պարգևատրվել է Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով: Մի քանի քաղաքների ազատագրման համար գերագույն հրամանատարության կողմից ստացել է նաև շնորհակալագրեր: 1945 թ.՝ զորացրվելուց հետո, աշխատանքի է նշանակվել ԵՊՀ քիմիական ֆակուլտետում: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, 1967 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1969 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1973-1975 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան, 1975-1984

թթ.՝ ՀՊՄԻ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1984-1989 թթ.՝ ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1995 թ. ապրիլի 2-ին:

ԱՎԱԳՅԱՆ ՍՄԲԱՏ ԴԱՐՉԻՆԻ (1922-1994) – Ծնվել է 1922 թ. Լեռնային Ղարաբաղում: 1940 թ. ավարտել է Ստեփանակերտի միջնակարգ դպրոցը և մինչև բանակ մեկնելը աշխատել սկզբում ԼԿԵՄ մարզկոմիտեում, ապա՝ մարզխորհրդի գործադիր կոմիտեում: 1942 թ. փետրվարին Ավագյանը զորակոչվել է և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Նույն թվականի աշնանը Օրջոնիկիձեի ազատագրման համար մղվող մարտերում վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: 1943 թ. նա մասնակցել է Կրասնոդարի համար մղվող մարտերին, ուր նույն թվականի մայիսին ծանր վիրավորվել է և որպես երկրորդ կարգի հաշմանդամ բանակից զորացրվել: Այդ մասին Ս. Կարապետյանի «Լեռնային երկրամասի քաջարի զավակները» գրքում նշված է. «1943 թ. մարտ: Կրասնոդարի մոտերքն է, թշնամին ետ է նահանջում, խորհրդային զորքերը կրնկակոխ հետապնդում են նրան, ոչնչացնում: Այստեղ Սմբատը կատարում է մի շարք առաջադրանքներ. հետախուզում է թշնամուն, իմանում նրա ուժի չափը, ճիշտ տեղեկություններ տալիս ֆաշիստների մտադրությունների մասին: Առաջադրանքը կատարված է: Գոհ է ոչ միայն ինքը՝ Սմբատը, այլև հրամանատարությունը: Առաջադրանքը կատարելու ժամանակ նա 2-րդ անգամ վիրավորվել է և վերադարձել Ստեփանակերտ՝ հայրենի քաղաքի հոսպիտալում բուժվելու»:

Զորացրվելուց հետո Ս. Ավագյանը նորից աշխատանքի է անցել Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեում, եղել է «Լեռնային Ղարաբաղ» թերթի պատասխանատու քարտուղարը: 1952 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ավարտել 1957 թվականին: Մինչև 1964 թվականը աշխատել է որպես «Երևանի համալսարան» թերթի խմբագիր, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի: 1972 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և նույն թվականին աշխատանքի անցել ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնում: Վախճանվել է 1994 թ. մարտին Երևանում:

ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ ՋԱԼԻԿՈՅԻ (1921-2005) – Ծնվել է 1921 թ. Աշտարակի շրջանի Աշտարակ գյուղում: 1940 թ. ավարտել է Ուզբեկական ԽՍՀ Սամարղանդ քաղաքի միջնակարգ դպրոցը և ընդունվել Ուզբեկստանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Երբ սկսվել է պատերազմը, Ա. Արամյանը համալսարանի երկրորդ կուրսից զորակոչվել է կարմիր բանակ: Կարճ ժամանակ անց նրան ուղարկել են Ստալինգրադյան ռազմաճակատ, ուր 747-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Ստալինգրադի պաշտպանական մարտերին: 1943 թ. հունվարին Արամյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: 1944 թ. սեպտեմբերին շարային ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով զորացրվել է բանակից և վերադարձել Երևան: 1945 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1948 թ. ավարտել և ձշանակվել է մանկավարժական աշխատանքի Երևանի Գրիբոյեդովի անվան միջնակարգ դպրոցում: 1965 թ. Արամյանը աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնում: Վախճանվել է 2005 թվականին:

ԱՐԱՄՈՒՆԻ ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1914-1966) – Ծնվել է 1914 թ. դեկտեմբերի 12-ին Կարսում: Վաղ հասակում զրկվել է ծնողներից: 1934 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը: 1934 թ. եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: 1935 թվականից աշխատել է Երևանի թերթերի խմբագրություններում, ռադիոկոմիտեում: 1941 թ. մեկնել է ռազմաճակատ՝ մասնակցելով Կովկասի, Կերչի, Ղրիմի համար մղվող մարտերին և Ուկրաինայի, Բելառուսիայի ազատագրմանը: 1956 թ. ռուսերեն լույս է տեսել նրա «Հանդիպում» գիրքը: Մահացել է Երևանում 1966 թ. հունվարի 20-ին:

ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ ՄՈՎՍԵՍԻ (1924-2000) – Ծնվել է 1924 թ. ՀԽՍՀ Սպիտակի շրջանի Գոգարան գյուղում: 1934 թ. տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ 1942 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: Նույն թվականին զորակոչվել է խորհրդային բանակ և գործուղվել Գրոզնու

ռազմահետևակային ուսումնարան: 1944 թ. ավարտելով ուսումնարանը՝ ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ: Կռվել է Առաջին ուկրաինական ռազմաճակատում որպես գնդացրային դասակի հրամանատար, մասնակցել է Պրահայի ազատագրման մարտերին: 1947 թ. զորացրվել է և վերադարձել հայրենիք:

1947-1952 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1954 թ. աշխատանքի է անցել Երևանի Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտում որպես մարքսիզմ-լենինիզմի կաբինետի վարիչ, ապա՝ Փիլիսոփայության և գիտական կոմունիզմի կաբինետի վարիչ: 1970 թ.՝ մինչև թոշակի անցնելը, եղել է նույն ինստիտուտի փիլիսոփայության և գիտական կոմունիզմի ամբիոնի ավագ դասախոս: Վախճանվել է 2000 թվականին:

ԲԱԲԱԼՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐՄԵՆԱԿԻ (1923-2018) – Ծնվել է 1923 թ. Բաթումում: 1941 թ. ավարտել է տեղի ռուսական միջնակարգ դպրոցը և զորակոչվել բանակ: Նույն տարում սովորել ու ավարտել է ռուսական ուսուցման կարճատև դասընթացներ՝ ծառայության ուղարկվելով Երևանում նոր կազմակերպվող 89-րդ հայկական հրաձգային դիվիզիա: 1942 թ. այդ դիվիզիայի կազմում ուղարկվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, մասնակցել Հյուսիսային Կովկասի քաղաքների ու բնակավայրերի ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թ. Բաբալյանը տեղափոխվել է Մերձծովյան հատուկ բանակ և մասնակցել ծովեզրյա տարածքների, Նովոռոսիյսկի և Սևաստոպոլի ազատագրմանը: 1944 թ. Բաբալյանին ուղարկել են Առաջին բելառուսական ռազմաճակատ: Այստեղ նա մասնակցել է Լեհաստանի տարածքների և առանձնապես Վարշավայի ազատագրմանը, ապա՝ Բեռլինի գրավմանը: Նա վիրավորվել է 1943 թ. Կերչի մոտ, ապաքինվել է և նորից վերադարձել ռազմաճակատ: Բաբալյանը պարգևատրվել է երեք շքանշանով և վեց մեդալով:

Պատերազմից հետո՝ 1945 թ., Բաբալյանը զորացրվել է և մի քանի տարի այլ կազմակերպություններում աշխատելուց հետո՝ 1956 թ., տեղափոխվել է համալսարան: Պաշտպանել է թեկնածուական ատե-

նախոսություն, ստացել դոցենտի կոչում և աշխատել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Վախճանվել է 2018 թ. դեկտեմբերին:

ԲԱԲԱՅԱՆ ԹԱՐԽԱՆ ՀՈՎՍԵՓԻ (1918-) – Ծնվել է 1918 թ. Շամշադինի շրջանի Ղրղի գյուղում: Ավարտել է Ղրղիի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը և մինչև Հայրենական մեծ պատերազմը զբաղվել բանվորությամբ: 1940 թ. զորակոչվել է կարմիր բանակ: 1942-1945 թթ. ծառայել է որպես վարորդ: Մասնակցել է Սևաստոպոլի պաշտպանությանը, Կերչի, Բուդապեշտի, Բելգրադի ազատագրմանը: 1945 թ. հունվարին վիրավորվել է, ապաքինվելուց հետո՝ մինչև 1946 թ. մայիս ամիսը, ծառայել ինժեներական գումարտակում որպես ավագ սերժանտ: Պարգևատրվել է «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Պատերազմից հետո Թ. Բաբայանը զորացրվել է, 1960 թ. տեղափոխվել համալսարան և աշխատել է համալսարանի №1 հանրակացարանում որպես բանվոր:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ (1907-1982) – Ծնվել է 1907 թ. սեպտեմբերի 3-ին Բաքվում: Միջնակարգ կրթությունը ստացել է Լենինականում (Գյումրի): 1932 թ. ավարտել է Միջինասիական բամբակի ինստիտուտը: 1941 թ. կիսատ թողնելով ուսումը Մոսկվայի համալսարանի դոկտորանտուրայում՝ մեկնել է ռազմաճակատ: Մինչև պատերազմի հաղթական ավարտը կռվել է թշնամու դեմ: Զորացրվել է 1946 թ. կապիտանի զինվորական աստիճանով: 1946-1953 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ գենետիկայի ինստիտուտի տնօրեն: Զբաղվել է նաև գիտնականների պատրաստման գործով: Մասնավորապես 1948 թվականից եղել է ԵՊՀ դարվինիզմի հիմունքների և գենետիկայի ամբիոնի վարիչ: Իր ղեկավարությամբ 80 գիտնականներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: 1948-1953 թթ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ, 1956 թվականից՝ ՀԽՍՀ երկրագործության ԳՀԻ բույսերի գենետիկայի բաժնի վարիչ: Գիտական աշխատանքները նվիր-

ված են գյուղատնտեսական բույսերի բեղմնավորման կենսաբանությանը և գենետիկական հարցերի ուսումնասիրմանը: 1965 թվականից Գ. Բաբաջանյանը զբաղվել է հետերոզիսի և կենսունակության (լետալության) գենետիկայի հարցերով: Բացահայտել է լետալ գեների բազմալելության մի շարք օրինաչափություններ, որոնք պայմանավորում են հիբրիդի կենսունակության մակարդակը:

Գ. Բաբաջանյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Վախճանվել է 1982 թ. մարտի 5-ին Երևանում:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀՄԱՅԱԿԻ (1924-2002) – Ծնվել է 1924 թ. Երևանում: 1942 թ. զորակոչվել է բանակ և մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը ծառայել է Թամանյան դիվիզիայում իբրև ռադիոկայանի պետ, մասնակցել է Բեռլինի գրավմանը: Ջորացրվելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1950 թվականին: 1950-1953 թթ. աշխատել է ՀԿԿ ԿԿ ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում իբրև հրահանգիչ, միաժամանակ եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի ասպիրանատ: Մինչև 1960 թվականը աշխատել է իբրև խմբագիր Հայպետհրատում, եղել է ՀԽՍՀ կենտրոնական արխիվի պետ: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, և նրան շնորհվել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև աշխատել է Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի փիլիսոփայության և գիտական կոմունիզմի ամբիոններում: 1973-1975 թթ. եղել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ: 1975-1982 թթ. վերստին աշխատել է պոլիտեխնիկական ինստիտուտի կոմունիզմի ամբիոնում, որից հետո աշխատանքի է անցել համալսարանի համապատասխան ամբիոնում: 1963 թ. եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ: Հայրենական մեծ պատերազմին մաս-

նակցելու համար պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով և մեկ տասնյակից ավելի մեդալներով: Վախճանվել է 2002 թվականին:

ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ ԱՂԱԼՈՅԻ (1907-1986) – Ծնվել է 1907 թ. Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: 1930 թ. ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը, իսկ 1934 թ. Երևանի պետական համալսարանի հեռակա բաժնի պատմատնտեսագիտական ֆակուլտետը: Մինչև Հայրենական մեծ պատերազմը Ս. Բադալյանը վարել է մի շարք կուսակցական ու պետական պատասխանատու պաշտոններ: 1942 թ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի հատուկ մոբիլիզացիայով մի շարք պատասխանատու աշխատողների հետ մեկնել է գործող բանակ: Եղել է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում քաղբաժնի պրոպագանդիստ, մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Գելենջիկի, Գոյթղի համար մղվող մարտերին: 408-րդ հայկական դիվիզիայի քաղբաժնի պետ, պահեստի գնդապետ Ս. Մ. Սարգսյանի «Այրվող անտառը» գրքում նշված է, որ Գունայկա բնակավայրի մոտ զինվորներին վճռական մարտերի նախապատրաստելու համար քաղբաժնի աշխատողներ Գարեգին Պետրոսյանի, Կոլյա Սարգսյանի և մյուսների հետ միասին հայրենասիրական աշխատանք է կատարել նաև Սմբատ Բադալյանը: 1942 թ. հոկտեմբերի 21-ին, երբ 408-րդ հայկական դիվիզիայի որոշ ստորաբաժանումներ ընկնել են շրջապատման մեջ, քաղբաժնի պրոպագանդիստ Ս. Բադալյանը երկու շարքային զինվորների հետ անցել է խիտ անտառը և զեկուցել հրամանատարությանը Պշիշի հովտում դիվիզիայի ստորաբաժանումների համար ստեղծված ծանր վիճակի մասին: Հրամանատարությունը, նրա կողմից տրված տեղեկության համաձայն, դասավորել է դիվիզիայի ուժերը և կարողացել է դուրս գալ կիսաշրջապատումից: 1942 թ. աշնանը մարտերը շարունակվել են: Թշնամին ցանկացել է տիրանալ Պշիշի ձախ ափին, դրա համար տեղի են ունեցել կատաղի կռիվներ: Դեկտեմբերին Ս. Բադալյանը ծանր վիրավորվել է, ապաքինվել, բայց շարային ծառայության համար ոչ պիտանի լինելու պատճառով 1943 թ. զորացրվել է:

1943 թվականից Ս. Բաղալյանն աշխատել է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնում: 1963 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և 1964 թ. ստացել պրոֆեսորի կոչում: 1971-1977 թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչը: 1967 թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր գործչի կոչման: Վախճանվել է 1986 թ. հունվարի 20-ին Երևանում:

ԲԱՏԻԿՅԱՆ ԹՈՄԻԿ ՍՏԵՓԱՆԻ (1906-) – Ծնվել է 1906 թ. Նոր Բայազետում (Կամո): 1923 թ. ավարտել է տեղի երրորդ աստիճանի դպրոցը և կոմերիտմիության ուղեգրով ընդունվել Ա. Մյասնիկյանի անվան հայկական ռազմական ուսումնարանը: 1926 թ. ավարտել և մինչև 1931 թվականը ծառայել կարմիր բանակում: 1931-1933 թթ. ավարտել է Պուշկինի քաղաքի հրետանավորների վերապատրաստման դասընթացները, իսկ 1933-1938 թթ.՝ Ջերժինսկու անվան ակադեմիան: 1938 թվականից մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը ծառայել է Կիևի հրետանային ուսումնարանում: 1941 թ. Թ. Բատիկյանը ուղարկվել է Հարավարևմտյան ռազմաճակատ, մասնակցել է ԽՍՀՄ սահմանամերձ շրջանների պաշտպանության առաջին մարտերին և Կիևի պաշտպանությանը: Մարտերից մեկում ստացել է կոնտուզիա: Ապաքինվելուց հետո՝ 1942 թ., նրան ուղարկել են Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության տրամադրության տակ, ապա նշանակվել է հրաձգային կորպուսի հրետանային գնդի հրամանատար: Նրա գունդը մասնակցել է Կովկասի ծովեզրյա տարածքների պաշտպանությանը: 1944 թվականից մինչև պատերազմի ավարտը գնդապետ Բատիկյանը 4-րդ բանակի կազմում հրետանային գնդի հրամանատարի պաշտոնով եղել է Իրանում:

Թ. Բատիկյանը պարգևատրվել է «Լենինի», երկու «Կարմիր դրոշի» շքանշաններով և 8 մեդալով: 1947-1963 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես ռազմական ամբիոնի ավագ դասախոս: 1963 թվականից եղել է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի վարիչը:

ԲԱՏԻԿՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԱՆՈՒԿԻ (1922-1988) – Ծնվել է 1922 թ. Նոր Բայազետի (Գավառ) շրջանի Ղուլայի գյուղում: 1940 թ. ավար-

տել է Երևանի Տ. Մուշեղյանի անվան մանկավարժական տեխնիկումը և մինչև 1942 թվականը աշխատել Շարբուլախ գյուղի յոթնամյա դպրոցում որպես տնօրեն: 1942 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել ծառայության 200-րդ առանձին հրետանային գումարտակում, որը գտնվում էր Բաքու քաղաքում: 1942 թ. վերջին նույն գումարտակի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Տուապսեի և Նովոռոսիյսկի շրջանում տեղի ունեցող կատաղի մարտերին: 1943 թ. մարտին Նովոռոսիյսկի մոտ սառնամանիքներից հիվանդացել է և պաշտպանության մինիստրության հրամանի համաձայն՝ որպես վատառողջ զորացրվել: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Զորացրվելուց հետո Լ. Բատիկյանը էքստեռն կարգով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1944-1968 թթ. որպես ուսուցիչ, ապա տնօրեն աշխատել է հանրապետության դպրոցներում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1968 թվականից աշխատել է համալսարանի գիտահետազոտական լաբորատորիայում որպես ավագ գիտաշխատող: Վախճանվել է 1988 թվականին:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԽԻԿԱՐ ՀԱԿՈԲԻ (1918-1996) – Ծնվել է 1918 թվականի հունիսի 7-ին Շինուհայր գյուղում: 1937 թ. ավարտել է հայրենի գյուղի դպրոցը և ընդունվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, որն էլ ավարտել է 1941 թվականին: Հայրենական պատերազմի առաջին օրերին կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1942 թ. օգոստոսից եղել է Թամանյան դիվիզիայի շարքերում նախ որպես վաշտի քաղղեկ, ապա՝ գնդի կոմերիտմիության բյուրոյի ազատված քարտուղար: Մասնակցել է Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Գրոզնու մատույցներում, Թերեքի ափերին, Թամանի թերակղզում, Կերչում մղված մարտերին: Պատերազմի ավարտից հետո զբաղվել է լրագրությամբ: 1944-1953 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան», «Բանվոր» (Լենինական) թերթերում

ՀԿԿ կենտկոմում, 1958-1961 թթ.՝ ՍԼԻ հայկական մասնաճյուղում նախ որպես փոխտնօրեն, ապա՝ տնօրեն, 1961-1967 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1967-1970 թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության տնօրեն: 1970-1984 թթ. աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ նախագահության առընթեր հասարակական գիտական ինֆորմացիայի կենտրոնի տնօրեն: 1984-1990 թթ. եղել է ԳԱ հրատարակչության տնօրեն, իսկ 1990 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ ԳԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտնական: 1948 թվականից դասավանդել է Երևանի բուհերում: 1950-1971 թթ. մի շարք առարկաներ է դասավանդել Երևանի պետական համալսարանում: 1950 թ. պաշտպանել է թեկնածուական, 1964 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1966 թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: Խ. Բարսեղյանը երկար տարիներ եղել է «Գիտելիք» կամավոր հասարակական կազմակերպության փոխնախագահը: Պարգևատրվել է «1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով, «Կարմիր աստղ» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով: Վախճանվել է 1996 թ. հունվարի 11-ին:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՏԻԳՐԱՆԻ (1921-) – Ծնվել է 1921 թ. Երևանում: 1939 թ. ավարտելով Երևանի թիվ 11 միջնակարգ դպրոցը ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, որտեղից զորակոչվել է կարմիր բանակ: Մասնակցել է խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմներին: Կռվել է բազմաթիվ ռազմաճակատներում, արժանացել մի շարք շքանշանների և մեդալների: 1946 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: Ուսմանը զուգահեռ աշխատել է համալսարանի դպրոցներում: Զբաղվել է նաև ալպինիզմով: Երեք տարի աշխատել է որպես Կուրսկի մարզի Բելովյան շրջանիի Բոբրովա գյուղի կոլտնտեսության նախագահ: Հետագա տարիներին աշխատել է կրթության համակարգում նախ որպես ուսուցիչ, ուսմասվար, ապա՝ տնօրեն, հետագայում՝ ՀԽՍՀ լուսավորության աշխատողների արհմիությունում՝ տեսուչ,

իսկ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունում՝ ավագ տեսուչ: 1963 թ. Հ. Բարսեղյանը նշանակվել է Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանի տնօրեն: Նրան շնորհվել է նաև վաստակավոր ուսուցչի կոչում:

ԲԱԼԱՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԱՎԵԼԻ (1921-2005) – Ծնվել է 1921 թվականի հունիսի 22-ին Բաքու քաղաքում: Նրա ընտանիքը հաստատվել էր Բաքվում՝ հեռանալով Շուշիի կոտորածներից: 10 տարի՝ 1940-1950 թթ., ծառայել է խորհրդային բանակում, եղել է Հայրենական մեծ պատերազմի մասնակից: Ավարտել է խորհրդային բանակի օտար լեզուների ինստիտուտը (Մոսկվա, 1943), Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը (1950): Ծառայել է Անդրկովկասյան ճակատում որպես հետախույզ, իսկ հետո՝ 90-րդ առանձին հրաձգային բրիգադում, որից հետո տեղակայվել է Ղազվինում որպես պարսկերենի թարգմանիչ և ռեֆերենդ: Մասնակցել է 1943 թ. Թեհրանի խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքներին: Վարել է մի շարք կարևոր բանակցություններ մահմեդական հրամանատարների հետ՝ հասցնելու համար ԽՍՀՄ դաշնակիցների սպառազինությունները, որոնք արգելափակվում էին մահմեդականների կողմից: 1950-1955 թթ. պարսկերեն է դասավանդել Թբիլիսիի պետական համալսարանի ռազմական ամբիոնում: 1959-1973 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող: 1967-1977 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում: 1973-1977 թթ.՝ եղել է ԵՊՀ արևելագիտական ֆակուլտետի դեկան, 1977-2001 թթ.՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, միաժամանակ դասախոսել է Երևանի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում:

Բ. Բալայանի աշխատությունները վերաբերում են Իրանի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և Ռուսաստանի միջազգային հարաբերություններին, Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցերին, մասնավորապես Ալեքսանդր Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանը: Եղել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պա-

տերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» , «1941-1945 թթ. Հայրենական պատերազմում հաղթանակի 20-ամյակի» և այլ մեդալներով: Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 2005 թ. հունիսի 22-ին Երևանում:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԻՍԱԿ ԲԱԽՇԻԻ (1910-1995) – Ծնվել է 1910 թ. Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: 1929 թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը՝ ընդունվելով Երևանի կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի ապրանքագիտական բաժինը: 1933 թ. ավարտելուց հետո նա տեղափոխվել է Վորոնեժ և աշխատանքի անցել հացի տրեստի կենտրոնական լաբորատորիայում: Այնուհետև ինժեներ-տեխնոլոգի մասնագիտությամբ և տարբեր պաշտոններով աշխատել է Կուրսկում և Կույբիշևում: 1940 թ. Մ. Բաղդասարյանը մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին, որից հետո կարճ ժամանակով զորացրվել է և Հայրենական մեծ պատերազմն սկսվելուն պես նորից զորակոչվել: 1941-1942 թթ. նա գումարտակի հրամանատարի օգնականի և պարենի մատակարարման պետի պաշտոնով եղել է Հարավարևմտյան, 1942-1943 թթ.՝ Վորոնեժի, իսկ 1943-1945 թթ.՝ Առաջին ուկրաինական ռազմաճակատներում: 1945 թ. մայիսին մասնակցել է Բեռլինի գրավմանը: Մ. Բաղդասարյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» ու մի քանի մեդալներով:

1944 թ. դեկտեմբերին մայոր Բաղդասարյանը զորացրվել է և աշխատանքի անցել ԽՍՀՄ պետական վերահսկողության մինիստրությունում: Մինչև 1960 թվականը աշխատել է պետական ռեզերվների հայկական վարչությունում, կոոպերատիվ տեխնիկումում, առևտրի ինստիտուտի հայկական մասնաճյուղում, ապա՝ տեղափոխվել Երևանի պետական համալսարան: Դոցենտ Բաղդասարյանը հետագայում աշխատել է ԵՊՀ ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ամբիոնում: Վախճանվել է 1995 թվականին:

ԲՈՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ ՏԻԳՐԱՆԻ (1926-) – Ծնվել է 1926 թ. ՀԽՍՀ Կարմիրի շրջանի Թթու ջուր գյուղում: 1944 թ. 10-րդ դասարանից զո-

րակոչվել է կարմիր բանակ: 1944 թվականից մինչև 1945 թ. մայիս ամիսը ծառայել է Վրաստանում, այնուհետև նրան ուղարկել են Հեռավորարևելյան ռազմաճակատ: Մասնակցել է միլիտարիստական Ճապոնիայի Կվանտունյան բանակի դեմ մղվող մարտերին: Որպես բորտմեխանիկ ծառայել է 29-րդ օդային բանակում: Ճապոնացիների դեմ տարած հաղթանակից հետո՝ մինչև 1951 թվականը, ծառայել է Սախալինում: 1951 թ. զորացրվել է և շարունակել սովորել միջնակարգ դպրոցում: 1953 թ. ավարտել է և աշխատանքի անցել Երևանի ժամացույցի գործարանում: 1955 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1960 թ. ավարտել է և աշխատանքի նշանակվել Համխում: 1963 թ. վերադարձել է համալսարան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և դասախոսական աշխատանքի անցել համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնում որպես դոցենտ:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԳԵՍԻ (1917-1993) – Ծնվել է 1917 թ. Ախալքալաքի շրջանի Դաղեշ գյուղում, ուսուցչի ընտանիքում: Տակավին մանուկ հասակից զրկվել է հորից և մնացել տատիկի խնամքի տակ: 1936 թ. ավարտել է Ախալքալաքի մանկավարժական ուսումնարանը և անցել ուսուցչական աշխատանքի հայրենի գյուղում:

1939 թ. Հ. Գաբրիելյանը զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1945 թվականը: Երբ սկսվել է խորհրդա-ֆիննական պատերազմը, նա և իր մի քանի ընկերները կամովին մեկնել են ռազմաճակատ: 1940 թ. Վիբորգ քաղաքի համար մղվող մարտերի ժամանակ նա ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Չորս ամիս բուժվելուց հետո ուղարկվել է Անդրկովկասի գինվորական օկրուգի հրամանատարության տրամադրության տակ: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նա մի խումբ ընկերների հետ դիմել է օկրուգի հրամանատարությանը և 1942 թ. սեպտեմբերին մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Հ. Գաբրիելյանը ծառայել է 11-րդ բանակի, 11-րդ կորպուսի առանձին հրետանային-հակատանկային դիվիզիոնում և մասնակցել Օրջոնիկիձե, Արմավիր, Կրոպոտկին, Նալչիկ, Կրասնոդար քաղաքների ազատագրմանը: 1943 թ. Հ. Գաբրիելյանին

ուղարկել են Խարկովի հրետանային ուսումնարանը: Նույն թվականի սեպտեմբերին ավարտել է ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և ուղարկվել Առաջին բելառուսական ռազմաճակատ: Բելառուսիայի Բիխով քաղաքի մոտ Հ. Գաբրիելյանի դասակը մարտի է բռնվել գերմանական ինը տանկի և հետևակի հետ: Ավելի քան կես օր տևող այդ մարտում թշնամուն չի հաջողվել գրավել այն տարածքը, որի համար կռիվ է տվել: Այդ կատաղի մարտը խիզախորեն վարելու համար Հ. Գաբրիելյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

1944 թ. հուլիսին մարտկոցի հրամանատար լեյտենանտ Գաբրիելյանը ստացել է մի նոր ու բարդ առաջադրանք, Վիդոմլա գյուղի մոտ արգելակել շրջապատման մեջ ընկած գերմանական երկու դիվիզիաների նահանջը: Այդ խնդիրը նա հաջողությամբ կատարելու համար Հ. Գաբրիելյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով», իսկ դասակի հրամանատար Խախոյակովին հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բելառուսիայի ազատագրումից հետո Հ. Գաբրիելյանը մասնակցել է Լեհաստանի Լոձ, Կունտո, Տումաշով, Գնեզնո, Վարշավա և այլ քաղաքների ազատագրմանը: Տումաշով քաղաքի ուղղությամբ մարտերին մասնակցելու համար նա պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկու» շքանշանով:

1944 թ., երբ կարմիր բանակի զորամասերը մոտեցել են Գերմանիայի սահմաններին, Հ. Գաբրիելյանը վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Իմանալով, որ իր զորամասը անցել է սահմանը, նա առանց թույլտվության հեռացել է հոսպիտալից՝ մեկնելով իր գունդը: Այս անգամ մասնակցել է գերմանական Ռեպին, Գերից, Կյուստրին, Ֆրանկֆուրտ քաղաքների գրավմանը և Օդեր գետի արևմտյան ափին տեղի ունեցած հրետանային մեծ ճակատամարտին:

1945 թ. ապրիլի վերջին և մայիսի առաջին օրերին մարտկոցի հրամանատար, արդեն կապիտան Գաբրիելյանը մասնակցել է թշնամու վերջին ամրոցի Բեռլինի գրավմանը: Փողոցային մարտերից մեկի ժամանակ ցուցաբերած խիզախության համար նա պար-

գնատրվել է երկրորդ «Կարմիր դրոշի շքանշանով»: Երբ հաղթանակին մնացել էր ընդամենը մի քանի օր, Հ. Գաբրիելյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: 1945 թ. Գաբրիելյանը զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1950 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1953 թ. ավարտել է ասպիրանտուրան և անցել դասախոսական աշխատանքի Գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1961 թ. տեղափոխվել է համալսարան: Այստեղ աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնում որպես ավագ դասախոս: Վախճանվել է 1993 թվականին:

ԳԱԼՍՏՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԻՎԱՆԻ (1913-2000) – Ծնվել է 1913 թ. Նոր Բայազետում (Կամո): 1932 թ. ավարտել է Կրասնոդարի երկրամասի Խոլմսկի-Աբինսկի շրջանի միջնակարգ դպրոցը և զորակոչվել բանակ: 1936 թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը և մշտական ծառայության նշանակվել տարբեր զորամասերում: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից Մ. Գալստյանը մասնակցել է ֆաշիստական բանակի դեմ մղվող կռիվներին: Որպես հրետանային գնդի հրամանատար եղել է Ղրիմի ռազմաճակատում և կատաղի մարտեր մղել նրա ազատագրման համար: Գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակից հետո Գալստյանը Ղրիմյան հրաձգային դիվիզիայի հետ որպես հրետանային գնդի հրամանատար մասնակցել է միլիտարիստական Ճապոնիայի դեմ մղվող պատերազմին: Նա պարգևատրվել է երկու «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով և 10 մեդալով:

Պատերազմից հետո Մ. Գալստյանը ավարտել է բարձրաստիճան սպայական կազմի դպրոցը և գնդապետի կոչումով շարունակել իր ծառայությունը խորհրդային բանակի տարբեր զորամասերում: Նա Երևանի պետական համալսարան է եկել 1956 թ. և շուրջ քսան տարի աշխատել համալսարանի ռազմական ամբիոնում: Վախճանվել է 2000 թվականին:

ԳԱՍՊԱՐՈՎ ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆԻ (1915-) – Ծնվել է 1915 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: 1934 թ. ավարտել է Բաքվի հայկական միջնակարգ դպրոցը և մի տարի աշխատել Ղարաբաղի

մարզային մթերման կոմիտեում: 1935 թ. ընդունվել է Անդրկովկասի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը և ավարտել 1940 թվականին: Նույն թվականին նրան գործուղել են Երևան՝ նշանակելով անասնաբուժական ինստիտուտի ֆիզկուլտուրայի ամբիոնի վարիչ: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրը՝ հունիսի 22-ին, զորակոչվել է բանակ: 1941-1942 թթ. ծառայել է Նախիջևանում, իսկ 1943 թ. ուղարկվել է Դերբենդ՝ ավիացիոն գումարտակում ծառայելու, ապա մեկնել է Առաջին ուկրաինական ռազմաճակատ, որտեղ աշխատել է ռազմական օդանավակայանների շինարարությունում: 1944-1945 թթ. Վ. Գասպարովը մասնակցել է Ուկրաինայի, Լեհաստանի ու Չեխոսլովակիայի բազարների ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: Մարտերում երկու անգամ ստացել է կոնտուզիա. առաջին անգամ՝ 1944 թ., երկրորդ անգամ ավելի խիստ՝ 1945 թ.՝ գերմանական Բունցլավա քաղաքի գրավման ժամանակ: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Պրահայի ազատագրման համար», «Կովկասի պաշտպանության համար», «Կիևի պաշտպանության համար», «Բեռլինի գրավման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Գերմանիայի կապիտուլացիայից հետո Վ. Գասպարովին ուղարկել են Հեռավոր Արևելք, մանջուրական սահման: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել է ճապոնական միլիտարիստների դեմ մղվող պատերազմին, որի հաղթական ավարտից հետո զորացրվել է և վերադարձել Երևան: 1946-1950 թթ. աշխատել է Հայկական մանկավարժական ինստիտուտում որպես ֆիզկուլտուրայի ամբիոնի վարիչ, 1950-1951 թթ.՝ գյուղատնտեսական ինստիտուտում, իսկ 1954 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես ավագ դասախոս:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՅԿԱԶ ՄՆԱՑԱԿԱՆԻ (1922-) – Ծնվել է 1922 թ. Ջուլֆայում: 1930 թ. ընտանիքով տեղափոխվել և բնակություն է հաստատել Երևանում: Ավարտել է Երևանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, ապա՝ էլեկտրատեխնիկական տեխնիկումը: 1941 թ. հուլիսի 24-

ին զորակոչվել է բանակ, սովորել է Շուլավերի տանկային ուսումնարանում, ստացել սերժանտի կոչում և որպես տանկիստ մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, մասնակցել Կրասնոդարի, Գոյթղի և մի քանի այլ բնակավայրերի պաշտպանությանը: 1943 թ. հունվարին Հյուսիսային Կովկասի Շահումյան գյուղի մոտ տեղի ունեցող տանկային մարտի ժամանակ տանկիստ Գևորգյանը ստացել է կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Կարճ ժամանակում ապաքինվելուց հետո ուղարկվել է Բաքու՝ տանկային նոր զորամաս: Որոշ ժամանակ անց իր գնդի հետ տեղափոխվել է Նախիջևան, ապա՝ Լենինական և զորացրվել: Ռազմաճակատում նա պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1947 թ. Գևորգյանը զորացրվել է և աշխատանքի անցել սկզբում ՀԽՍՀ ԳԱ էլեկտրալաբորատորիայում, այնուհետև՝ երկրաբանական ինստիտուտում, լուսատեխնիկական գործարանում և արհեստակցական ուսումնարանում: 1956 թվականից աշխատել է ԵՊՀ տնտեսական մասում որպես մեխանիկ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՐԱՆՏ ՄՈՒՇԵՂԻ (1903-1987) – Ծնվել է 1903 թ. Իջևանի շրջանի Սև քար գյուղում: 1919 թ., երբ Հայաստանում ստեղծվել է «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը, Հ. Գևորգյանն ընդունվել է որպես պատասխանատու քարտուղար: 1920 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը և ակտիվ մասնակցություն ունեցել Մայիսյան ապստամբությանը: Նույն թվականի նոյեմբերի 29-ին Ադրբեջանից եկող պարտիզանական զորամասերի կազմում եկել է Հայաստան և մասնակցել խորհրդային կարգերի հաստատմանը: 1920-1923 թթ. եղել է Իջևանի կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար: 1923-1926 թթ. սովորել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանում: 1928-1931 թթ. սովորել է Մոսկվայի արևելագիտական ինստիտուտում: 1931-1934 թթ. աշխատել է Թուրքիայում խորհրդային դեսպանատանը: 1934-1941 թթ. աշխատել է Թբիլիսիի համալսարանում և գիտահետազոտական ինստիտուտում: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1945 թվականը մասնակցել

Հայրենական մեծ պատերազմին: Եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի քաղբաժնում որպես տեսուչ և նրա կազմում տեղափոխվել Ղրիմի ռազմաճակատ: Մասնակցել է Կերչի ազատագրման մարտերին: Հետագայում նրան ուղարկել են 45-րդ բանակ, որտեղից էլ 1945 թ. զորացրվել է: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով: 1945 թ. Հ. Գևորգյանը վերադարձել է մանկավարժական աշխատանքի: Շուրջ 27 տարի որպես դասախոս, ամբիոնի վարիչ ու ղեկան աշխատել է Լենինականի (Գյումրի) մանկավարժական ինստիտուտում: 1972 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարան և աշխատել որպես ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ: Վախճանվել է 1987 թ. Երևանում:

ԳԵՅՈԿՉԱԿՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԳՐԻԳՈՐԻ (1920-) – Ծնվել է 1920 թ. Լենինական քաղաքում: 1939 թ. ավարտել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը և աշխատանքի անցել սկզբում Մենչեգորսկում, իսկ հետո՝ Մուրմանսկում: Երկրաբանական հետախուզական աշխատանքի ժամանակ նա հիվանդացել է, փոխադրվել Երևան և առողջանալուց հետո՝ 1941 թ., զորակոչվել բանակ: Ծառայությունն սկսել է 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայում որպես դասակի հրամանատար: 1941 թ. նա դիվիզիայի հետ ուղարկվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, մասնակցել Մոզդոկի տակ տեղի ունեցող կատաղի մարտերին: Կրասնոդարի մոտերքում հիվանդացել է դեղնախտով և ուղարկվել Բաքվի հոսպիտալը: Ապաքինվելուց հետո նա ստացել է արձակուրդ և ուղարկվել Երևան: Պատերազմից հետո՝ 1945-1950 թթ., սովորել ու ավարտել է Մոսկվայի Մ. Կալինինի անվան գունավոր մետալուրգիայի ինստիտուտը, ապա սովորել է Լենինգրադի լեռնային ինստիտուտում, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և 1950 թ. տեղափոխվել Երևանի պետական համալսարան: Աշխատել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում որպես դոցենտ:

ԳՈՋԵՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՏԻԳՐԱՆԻ (1921-) – Ծնվել է 1921 թ. Նոր Բայազետում: 1928 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը:

1932 թ. ընտանիքով տեղափոխվել է Կիրովական (Վանաձոր), որտեղ սովորել և 1939 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: 1939 թ. սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ նույն թվականի դեկտեմբերին զորակոչվել խորհրդային բանակ: 1940 թ. հունիսին մասնակցել է Բեսարաբիայի ազատագրմանը: 1941 թ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմի ընթացքում պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և բազմաթիվ այլ շքանշաններով և մեդալներով: 1946-1951 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1951-1953 թթ. աշխատել է Պետական անվտանգության կոմիտում, որից հետո՝ մինչև 1962 թվականը, աշխատել է Պետպլանում: 1962-1967 թթ. աշխատել է Ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում որպես տնտեսական և ֆինանսական գործերով նախագահի տեղակալ: Այնուհետև՝ 1982 թ., աշխատել է Հայաստանի մամուլի տարածման վարչությունում որպես վարչության պետ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1910-1994) – Ծնվել է 1910 թ. ներկայիս Վայոց ձորի Ղուշչի (Կեչուտ) գյուղում: Ավարտել է գյուղի դպրոցի 4-րդ դասարանը և մինչև 1938 թվականը զբաղվել հողագործությամբ: 1938 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան և նախադպրոցական արտելում աշխատել որպես հյուսն: 1941 թ. հունիսի 22-ին զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1944 թվականը ծառայել բանակում: Սկզբում եղել է Լենինականի (Գյումրի) բուժական վաշտում, իսկ հետո՝ որպես հյուսն Երևանի զորամասերից մեկում: 1944 թ. սկզբին Բ. Գրիգորյանին մոբիլիզացիայի կարգով ուղարկել են Առաջին բելառուսական ռազմաճակատ: 1944 թ. օգոստոսին վիրավորվել է, ստացել կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Մինչև ապաքինվելը պատերազմն ավարտվել է: Նա զորացրվել և վերադարձել է Երևան: 1945 թվականից որպես հյուսն աշխատել է Երևանի պետական համալսարանում: Վախճանվել է 1994 թ. օգոստոսի 23-ին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՀՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ (1925-2015) – Ծնվել է 1925 թ. հոկտեմբերի 6-ին ՀԽՍՀ Մարտունու շրջանի Լիճք գյուղում: Սովորել է և ավարտել տեղի միջնակարգ դպրոցը: 1943թ. զորակոչվել է

խորհրդային բանակ: 89-րդ Թամանյան դիվիզիայի կազմում 1943 թ. աշնանը մասնակցել է Թաման և Կերչ թերակզիների, Ղրիմի, Սևաստապոլի ազատագրական մարտերին, 1944 թ. Լեհաստանի, իսկ 1945 թ. Գերմանական Օդերի Ֆրանկֆուրտ, Բեռլինի գրավմանը: Նա պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի մասնակցի շքանշաններով և մի շարք մեդալներով: Զորակոչվելուց հետո շուրջ 5 տարի ծառայել է Միջին Ասիայում, ապա տեղափոխվել Հայաստան և ծառայությունը շարունակել Թամանյան դիվիզիայում մինչև 1956 թ. նրա լուծարումը: 1954 թ. ընդունվել և 1959 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: Քննիչ ապա, դատախազ է աշխատել Երևան քաղաքի Սպանդարյանի և մի շարք այլ շրջանների դատաքննչական և դատախազության կենտրոնական համակարգերում մինչև թոշակի անցնելը: 2015 թ. մայիսի 20-ին դուրս է եկել տանից և այլևս չի վերադարձել: Անհայտ կորած է համարվում:

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԱԿԻ (1922-1996) – Ծնվել է 1922 թ. Արաբկիրում (Արևմտյան Հայաստան), որը ծվարած է Եփրատի ափին գտնվող Ոսկեգետակի մոտ: 4 տարեկան է եղել, երբ Տրապիզոնից նավով գաղթել են և ժամանակավորապես հաստատվել Կրասնոդարում: Գաղթական արաբկիրցիները 1930-ական թթ. եկել և Երևանում հիմնել են Նոր Արաբկիր թաղամասը: Այդ մասին իմանալով՝ 1932 թ. մոր և քրոջ հետ վերադարձել և հաստատվել են Երևանում, հայրը ավելի ուշ միացել է ընտանիքին, քանի որ աշխատում էր Կրասնոդարում օրվա ապրուստը հոգալու համար:

Դպրոցն ավարտելուց հետո Վ. Դավթյանը մեկնել է բանակ, անմիջապես սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել է և վերադարձել տուն, ընդունվել համալսարան: Արժանացել է բազմաթիվ մեդալների ու «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» ու «Պատվո նշան» շքանշանների: 1948 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1945-1954 թթ. եղել է «Ավանգարդ» թերթի աշխատակից, 1954-1962 թթ.՝ «Գրական թերթի» պատասխանատու

քարտուղար, 1962-1965 թթ.՝ «Գրական թերթի» գլխավոր խմբագիր, 1965-1967 թթ.՝ «Հայրենիքի ձայն» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր, 1967-1981 թթ.՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ, 1981-1991 թթ.՝ «Վերածնված Հայաստան» հանդեսի գլխավոր խմբագիր: 1991-1994 թթ. ընտրվել է Հայաստանի գրողների միության նախագահ, 1986 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ակադեմիկոս: Մահացել է 1996 թ. փետրվարի 21-ին Երևանում:

ԴԻԲԱԼԻՆ ԼԵՈՆԻԴ ԳԱՎՐԻԼՈՎԻՉ (1926-) – Ծնվել է 1926 թ. Օմսկ քաղաքում: 1943 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել՝ սովորելու Կրասնոյարսկի ավիացիայի դպրոցում: Նույն թվականին ավարտել է և ծառայության նշանակվել Միլիտոպոլի ավիացիայի գվարդիական դիվիզիայում: Ծառայության առաջին իսկ օրերին ավագ սերժանտ Դիբալինը աչքի է ընկել իր մարտունակությամբ: 1944 թվականից Ղրիմում կատարել է թշնամու ռազմական ուժերը հետախուզելու բարդ առաջադրանքներ: Ղրիմի ազատագրման համար մղվող մարտերի ժամանակ նա կատարել է 18 մարտական թռիչք: ԻԼ–2 ինքնաթիռը, որի անձնակազմում եղել է Լ. Դիբալինը, հաջողությամբ է կատարել մարտական առաջադրանքները և մեծ վնասներ հասցրել թշնամու կենդանի ուժերին ու ռազմական տեխնիկային: Զգալի քանակությամբ կենդանի ուժ, տանկեր ու մարտական այլ տեխնիկա ոչնչացնելու համար ԻԼ–2 ինքնաթիռի անձնակազմը պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով»: 1942 թ. Լ. Դիբալինը իր ավիացիայի գնդի հետ տեղափոխվել է Բելառուսիա, մասնակցել Արևմտյան Բելառուսիայի և Լեհաստանի ազատագրմանը: 1945 թ. փետրվարին Լ. Դիբալինը մասնակցել է Հունգարիայի և Չեխոսլովակիայի ազատագրմանը: Նա կատարել է ավելի քան 60 մարտական թռիչք, օդային մարտում ոչնչացրել գերմանական ինքնաթիռներ, տանկեր, հրանոթներ և կենդանի ուժ: Հունգարիայի Բալատոն լճի շրջանում թշնամու գլդակոծման ժամանակ Լ. Դիբալինը ինքնաթիռի մեջ վիրավորվել է, բայց շարունակել է մարտը թշնամու ինքնաթիռների դեմ: Պարգևատրվել է «Փառքի երրորդ աստիճանի շքա-

նշանով», «Խիզախության համար», «Բուդապեշտի ազատագրման համար», «Պրահայի ազատագրման համար», «Վիեննայի գրավման համար» մեդալներով: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո գնդապետ Դիբալինը մի շարք զորամասերում ծառայելուց հետո տեղափոխվել է Երևանի պետական համալսարան և աշխատել ռազմական ամբիոնում:

ԴՐԱՄԲՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՍՈՆԻ (1921-2011) – Ծնվել է 1921 թ. Նովոռոսիյսկում: 1939 թ. ավարտել է Երևանի Մայակովսկու անվան ռուսական միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: 1941 թ. ավարտել է Բաքվի զինվորական ուսումնարանը և նշանակվել դասակի հրամանատար հրաձգային դիվիզիայում: Հայրենական պատերազմի առաջին օրերին նա եղել է Հարավարևմտյան ռազմաճակատում: 1942 թ. մայիսին գերմանական երկու սպաներ գերելու և կարևոր նշանակություն ունեցող գաղտնի փաստաթղթեր հայտնաբերելու համար պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով»: 1942 թ. մայիսի 26-ին՝ մարտի ժամանակ, վիրավորվել է և ընկել գերության մեջ: Մինչև 1945 թ. ապրիլը եղել է Լեհաստանի և Ավստրիայի ֆաշիստական ճամբարներում: Գերությունից ազատվելուց հետո՝ մինչև 1945 թ. նոյեմբեր ամիսը, խորհրդային օկուպացիոն զորամասերում աշխատել է որպես թարգմանիչ: 1945 թ. դեկտեմբերին զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Ավարտել է 1950 թ. և աշխատանքի անցել ԴՕՍԱՖ-ում: 1962 թ. դասախոսական աշխատանքի է նշանակվել Երևանի պետական համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1967 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով: 1972 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1980 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1985-1990 թթ. դասախոսել է Երևանի համալսարանում, 1974-1977 թթ.՝ Կոնգոյի ժողովրդական հանրապետության, 1977-1984 թթ.՝ Մոսկվայի բուհերում: Տ. Դրամբյանի աշխատությունները վերաբերում են հայերի մասնակցությանը Ֆրանսիայի հասարակական-քաղաքական կյանքին և դիմադրական շարժմանը (1940-1944 թթ.):

Վախճանվել է 2011 թվականին:

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ ՀԱԿՈԲԻ (1923-1989) – Ծնվել է 1923 թ. հոկտեմբերի 1-ին Վրացական ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում: 1938 թ. ավարտել է Գանձայի միջնակարգ դպրոցը, իսկ 1941 թ.՝ Թբիլիսիի հայկական մանկավարժական ուսումնարանը և զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. ուղարկվել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և ծառայել 408-րդ դիվիզիայի առանձին մոտոհետախուզական վաշտում: Շատ հաճախ թշնամու ուժերը հետախուզելու ժամանակ անհավասար մարտերի մեջ է մտել նրա հետ: Երկու անգամ վիրավորվել է, ապաքինվել և նորից շարունակել իր ծառայությունը գործող բանակում: Երրորդ անգամ նա վիրավորվել է թշնամու շրջապատումից դուրս գալու ժամանակ և այլևս չի վերադարձել ռազմաճակատ: Հոսպիտալում ապաքինվելուց հետո՝ 1943 թ., զորացրվել է, վերադարձել հայրենի գյուղ և անցել մանկավարժական աշխատանքի:

Պարգևատրվել է «Խիզախության համար», «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Զորացրվելուց հետո՝ 1944 թ., Դուրգարյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1949 թ. ավարտել է և նշանակվել ասիստենտական աշխատանքի: 1960 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում: 1983 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1984 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1987-1989 թթ. եղել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ: Վախճանվել է 1989 թ. սեպտեմբերի 27-ին:

ԵՂՇԱՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆԻ (1922-2001) – Ծնվել է 1922 թ. Երևանում: 1939 թ. գերազանցությամբ ավարտել է Շահումյանի անվան դպրոցը: 1940 թ. զորակոչվել է կարմիր բանակի շարքերը: 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Երկու անգամ վիրավորվել է: Մասնակցել է Մոսկվայի և Ստալինգրադի

պաշտպանությանը, Բեռլինի գրավմանը: 1946-1951 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է Հայաստանի կոմկուսի ԿԿ-ում որպես հրահանգիչ: 1951 թ. դեկտեմբերին ընտրվել է «Նաուկա» մարզական միության հանրապետական խորհրդի նախագահ: 1962 թ. հեռակա կարգով ավարտել է Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտը: 1961-1963 թթ. աշխատել է Երևանի էլեկտրատեխնիկական գործարանում որպես մատակարարման գծով փոխտնօրեն: 1963-1968 թթ. աշխատել է «Սպարտակ» մարզական ընկերության հանրապետական խորհրդի նախագահ: 1979 թ. ղեկավարել է «Արարատ» ֆուտբոլային ակումբը՝ աշխատելով որպես ակումբի պետ: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: Վախճանվել է 2001 թվականին:

ՋԱՎԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ (1911-1999) – Ծնվել է 1911 թ. Թիֆլիսում, երկաթուղային բանվորի ընտանիքում: 1929 թ. ավարտել է Թիֆլիսի 82-րդ հայկական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1934 թվականից հետո՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը, Ալավերդու և Թիֆլիսի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, ուսմասվար, ապա՝ տնօրեն: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, 1941 թ. հունիսի 23-ին կամովին մեկնել է կարմիր բանակ: Եղել է Հարավարևմտյան ռազմաճակատում և մասնակցել Ուկրաինայի մի շարք քաղաքների պաշտպանությանը: 1941 թ. սեպտեմբերին Խարկովի պաշտպանության ժամանակ վիրավորվել է, զորամասում ապաքինվել և շարունակել է կռվել:

1942 թ. 199-րդ հրաձգային դիվիզիան, որի կազմում եղել է Մ. Ջավարյանը, փոխադրվել է Ստալինգրադի ռազմաճակատ: Ավելի քան երեք ամիս նա մասնակցել է Ստալինգրադի պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին: 1942 թ. ապրիլին ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Մագնիտագորսկի և Չելյաբինսկի

հոսպիտալներում վեց ամիս ապաքինվելուց հետո որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել է:

Ռազմաճակատներում Մ. Ջավարյանը եղել է հրետանային մարտկոցի հրամանատարի տեղակալ, հրետանային գումարտակի, ապա՝ գնդի կոմիսար: Պարգևատրվել է «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Մարտական ծառայությունների համար», «Ստալինգրադի պաշտպանության համար» և այլ մեդալներով:

1943 թ. Մ. Ջավարյանը զորացրվել է և նշանակվել ՀԽՍՀ լուսավորության մինիստրության բարձրագույն դպրոցների և տեխնիկումների գլխավոր վարչության պետ: 1948 թ. փոխադրվել է Երևանի պետական համալսարան՝ անցնելով դասախոսական աշխատանքի: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1953 թ. ստացել է դոցենտի կոչում: Հետագայում աշխատել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի գեղագիտության գրականության տեսության ամբիոնում և կատարել է ֆակուլտետի դեկանի տեղակալի պարտականություն: Վախճանվել է 1999 թվականին:

ՋԱՔԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԽԱՉԻԿԻ (1922-1987) – Ծնվել է 1922 թ. Մեղրիում: 1930 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան, որտեղ նա ստացել է միջնակարգ կրթություն: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1940 թ., զորակոչվել է բանակ: Ծառայության ընթացքում ընդունվել է Կորյոլի Ֆրունզեի անվան զրահատանկային ուսումնարան: 1942 թ. ավարտելով ուսումնարանը՝ երիտասարդ լեյտենանտը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի մարտերին որպես տանկի հրամանատար: 1942 թ. հոկտեմբերին ծանր վիրավորվել է և տեսողության կորստի պատճառով 1943 թ. հուլիսին որպես առաջին խմբի հաշմանդամ զորացրվել է՝ վերադառնալով Երևան: Նույն տարում Գ. Ջաքարյանն ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ, 1948 թ. ավարտել է այն և ընդունվել ասպիրանտուրա: 1949 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում՝ ծավալելով գիտամանկավարժական գործունեություն: 1953 թ.

պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1969 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1962-1965, 1973-1986 թթ. եղել Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահ՝ չկտրվելով մանկավարժական աշխատանքից:

Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և մի քանի մեդալներով: Վախճանվել է 1987 թվականին:

ՋՈՐԱՔՅԱՆ ԺՈՐԺ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1921-1997) – Ծնվել է 1921 թ. Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղում: 1933 թ. ավարտելով գյուղի 5-րդ դասարանը՝ տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ ստանալով միջնակարգ կրթություն՝ վերադարձել է Ղալաչա: 1940 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: Նույն թվականին աշխատանքի է անցել Պետական անվտանգության կոմիտեում՝ զբաղեցնելով մի շարք պաշտոններ: Ստացել է փոխգնդապետի կոչում: Պարգրատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և մի շարք մեդալներով: Վախճանվել է 1997 թվականին:

ՋՈՒՔՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԴԱՎԻԹԻ (1912-1981) – Ծնվել է 1912 թ. սեպտեմբերի 1-ին Երևանում: 1929 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Գորիսի շրջանի Տաթև գյուղի դպրոցում որպես մաթեմատիկայի և աշխարհագրության ուսուցիչ: 1932-1937 թթ. սովորել է Մոսկվայի հիդրոօդերևութաբանական ինստիտուտում: 1937-1962 թթ. աշխատել է Սամարայում, ապա՝ Մոսկվայի եղանակի կանխատեսումների կենտրոնական ինստիտուտում որպես օթերևութաբան, բաժնի վարիչ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին որպես ինժեներ-կապիտան: 1946 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել ֆիզմաթ գիտություննե-

րի գիտական աստիճան: 1956 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1962 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ աշխարհագրության բաժնում: 1965 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1970 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1964-1977 թթ. Գ. Ջուբյանը ղեկավարել է ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը, իսկ 1977-1981 թթ. աշխատել է նույն ամբիոնում որպես պրոֆեսոր: Վախճանվել է 1981 թ. օգոստոսի 16-ին:

ԼՅՈՒԼԻԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐԱՄԻ (1923-2015) – Ծնվել է 1923 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1940 թ. ավարտել է Երկաթգծի բիվ 51 դպրոցը: Սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում և 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Ծառայել է մինչև 1946 թ. մայիսը: Եղել է հրետանավոր, մարտկոցի հրամանատար՝ լեյտենանտի կոչումով: Ավարտելով Երրորդ լենինգրադյան հրետանային ուսումնարանը՝ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1941-1942 թթ. մասնակցել է Մոսկվայի պաշտպանության, 1943 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին՝ Կուրսկի աղետալի մարտերին և Ուկրաինայի ազատագրմանը, Դնեպրի գետանցմանը՝ Չերկասկի մոտ, ապա՝ 1944 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին՝ Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: Երկու անգամ ծանր վիրավորվել է: Մասնակցել Չեխոսլովակիայի ազատագրմանը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» երկու շքանշաններով, «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով և 14 մեդալներով: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: 1951-1952 թթ. աշխատել է Անդրերկաթուղու բաժանմունքի քաղբաժնում, 1952-1953 թթ.՝ ՀԿԿ Երևանի օկրուգային կոմիտեում, 1953-1955 թթ.՝ «Կոմունիստ» թերթի խմբագրությունում, 1955-1957 թթ.՝ Հայպետրհրատում, 1957-1962 թթ.՝ նորաստեղծ Հայկական հեռուստատեսությունում, 1962-1966 թթ.՝ ՀԿԿ ԿԿ «Լենինյան ուղիով» տեսական ամսագրի խմբագրությունում, 1966-1971 թթ.՝ «Հայաստան» հրատարակչությունում, 1971-1992 թթ.՝ «Հայկական հանրագիտարանի» խմբագրությունում: Եղել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում իրավագիտության ավագ դասախոս: 1957 թ. ընտրվել

է ԽՍՀՄ ժուռնալիստների միության հիմնադիր անդամ, իսկ 1973 թ. ճանաչվել է ՀԽՍՀ վաստակավոր ժուռնալիստ: Վախճանվել է 2015 թ. Երևանում:

ԹԱԹՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1922-2000) – Ծնվել է 1922 թ. Դոնեցկի մարզի Սլավյանսկ քաղաքում: 1940 թ. ավարտել է Սլավյանսկի միջնակարգ դպրոցը և 1941 թ. մայիսին զորակոչվել կարմիր բանակ: Սկզբում որպես շարքային զինվոր ծառայել է Արևմտյան Ուկրաինայի Տեռնեպոլի մարզում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Գ. Թաթոսյանը ծառայելիս է եղել արևմտյան սահմանների վրա գտնվող զորամասերում: Ակտիվ մասնակցություն է ունեցել սահմանային ռազմական օդանավակայանների կառուցմանը: 1942 թ. Գ. Թաթոսյանին ուղարկել են Սարատով՝ հրամանատարական կուրսերում վերապատրաստվելու: Կարճ ժամանակում կուրսերն ավարտելուց հետո ստացել է տեխնիկ լեյտենանտի կոչում և ուղարկվել Հարավարևմտյան ռազմաճակատ: Վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոնով նա մասնակցել է Բելառուսիայի քաղաքների ու գյուղերի ազատագրմանը: 1943 թ. դեկտեմբերին Բելառուսիայի Օրշա քաղաքի մոտ Մաթոսյանը վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո որպես հաշմանդամ զորացրվել է: 1944 թ. սեպտեմբերին Գ. Թաթոսյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1949 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա՝ «ռուս գրականություն» մասնագիտության գծով: 1952 թ. ավարտել է ասպիրանտուրան և աշխատանքի նշանակվել «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: 1957 թվականից աշխատել է համալսարանում որպես ավագ դասախոս: 1962-1968 թթ. եղել է ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետների ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ: Գ. Թաթոսյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և մեդալներով: 1977 թ. Ուկրաինական ԽՍՀ-ի կողմից ճանաչվել է մշակույթի վաստակավոր գործիչ: Վախճանվել է 2000 թ. օգոստոսին:

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՍԻՍԱԿԻ (1922-1989) – Ծնվել է 1922 թ. Կաթնաղբյուր գյուղում՝ Կարսից գաղթի ճանապարհին: Ման-

կությունն ու պատանեկությունն անց է կացրել Գյումրիում, որտեղ 1941 թ. ավարտել է Պուշկինի անվան դպրոցը և իսկույն կամավոր անդամագրվել և մեկնել ռազմաճակատ: 1945 թ. ծանր վիրավորվել է, ապա՝ զորացրվել՝ արժանանալով բազմաթիվ պարգևների: 1945 թ. ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ, սակայն շուտով փոխադրվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ճորաբաց ֆակուլտետ: Համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Պետական անվտանգության կոմիտեում: Փոխգնդապետի զինվորական աստիճան ստանալուց հետո ծառայության է անցել խորհրդային զինված ուժերում: Աշխատել է Երևանի 26 կոմիսարների շրջխորհրդում՝ որպես գործկոմի նախագահի տեղակալ, իսկ թոշակի անցնելուց հետո՝ թիվ 7 գրախանութի վարիչ էր: Վախճանվել է 1989 թվականին:

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲԻ (1909-1980) – Ծնվել է 1909 թ. դեկտեմբերի 20-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: 1926 թ. ընդունվել է կոմերիտմիության շարքերը՝ 1930 թ. ստանալով ՀԱՍԿ(բ)Կ տոմս: Այդ շրջանում նա աշխատել է Զանգեզուրի մայրուղիների շինարարությունում, 1929 թվականից, տեղափոխվելով Երևան, աշխատանքային գործունեությունը շարունակել է «Բանկոոպ» ձեռնարկությունում: 1929-1931 թթ. արտադրությունից չկտրվելով՝ սովորել է Երևանի բանֆակում: 1932 թ. Ս. Թովմասյանն սկսել է կուսակցական գործունեությունը. սկզբում աշխատել է որպես Սիսիանի կուսշրջկոմի հրահանգիչ, հետո՝ Իջևանի շրջկոմի բաժնի վարիչ: 1938 թ. ընտրվել է Կապանի՝ Հայաստանի խոշոր և տնտեսապես կարևոր շրջանի կուսկոմի քարտուղար, 1939 թ.՝ Կենտկոմի անդամ: Երկու ամիս անց նշանակվել է ներքին գործերի ժողկոմի առաջին տեղակալ: 1941 թ. օգոստոսին Ս. Թովմասյանը դիմել է Կենտկոմի բյուրո՝ իրեն ռազմաճակատ ուղարկելու խնդրանքով: Նրա խնդրանքը բավարարվել է: Պատերազմում նա երկու անգամ ծանր վիրավորվել է, բայց հրաժարվել է զորացրվելուց: Մասնակցել է 409-րդ դիվիզիայի կազմում ազատագրական մարտերին Հյուսիսային Կովկասի Մոզդոյի շրջանից մինչև Ավստրիա, Չեխոսլովա-

կիա, Հունգարիա: Իր փառահեղ ռազմական ուղին ավարտել է 1945 թվականի մայիսի 9-ին Պրահայում որպես 61-րդ դիվիզիայի քաղբաժնի պետ: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո վերադարձել է Երևան: 1946 թ. աշխատել է որպես Կոմկուսի կենտկոմի անասնաբուծության բաժնի վարիչ, իսկ 1947-1948 թթ.՝ վարչական բաժնի վարիչի տեղակալ: Զուգահեռաբար քննություններ է հանձնել և 1949 թ. էքստեռն կարգով ավարտել ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1948 թ. Ս. Թովմասյանն ընտրվել է Երևանի կուսքաղկոմի քարտուղար և դրանից անմիջապես հետո հրաժարվել այն թոշակից, որը նրան՝ որպես երկրորդ խմբի հաշմանդամի, նշանակվել էր պատերազմի ավարտից հետո՝ կարծելով, որ աշխատող կոմունիստն այն ստանալու բարոյական իրավունք չունի: 1950 թ. ՀԱՄԿ(բ)Կ կենտկոմին կից երկամյա վերապատրաստման դասընթացներն ավարտելուց հետո Թովմասյանը սկզբում վերադարձել է նախկին պաշտոնին, իսկ հետո՝ 1952 թ., ընտրվել Երևանի օկրուգկոմի երկրորդ քարտուղար:

1953 թվականի մայիսին օկրուգկոմները վերացվել են: Ս. Թովմասյանը նշանակվել է Կոմկուսի կենտկոմի վարչական և առևտրաֆինանսական մարմինների բաժնի վարիչի տեղակալ: 1953-1960 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար: 1961-1964 թ. ազատվել է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և նշանակվել Վիետնամում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան: 1965-1970 թթ. եղել է Լիբիայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան, 1954-1962 թթ.՝ ԽՍՀՄ, 1951-1963 թթ.՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր: 1970 թ. Ս. Թովմասյանն անցել է թոշակի: Վախճանվել է 1980 թ. փետրվարի 10-ին Երևանում:

ԹՈՐՈՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳԵՎՈՐԳԻ (1922-) – Ծնվել է 1922 թ. մարտի 17-ին Երևանում: 1941 թ. ավարտել է Երևանի բժշկական տեխնիկումը և նույն թվականի սեպտեմբերին զորակոչվել կարմիր բանակ: Դեկտեմբեր ամսին նրան ուղարկել են Հարավարևմտյան ռազմաճակատ, ուր մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան տարածքների

պաշտպանությանը: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի ռազմական ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Այնտեղ 10-րդ գվարդիական բրիգադում նշանակվել է հետախուզական դասակի հրամանատար: Հյուսիսային Կովկասի Օրջոնիկիձեի շրջանի Մայրամուղու գյուղի մոտ ծանր վիրավորվել է և ուղարկվել դաշտային հոսպիտալ՝ ապաքինվելու: 1942 թ. դեկտեմբերին տարհանվել է Լենինական (Գյումրի): Հոսպիտալում բուժվելուց հետո՝ 1943 թ. մարտին, նա նորից ուղարկվել է Կովկասյան ռազմաճակատ: Մինչև վերջ մասնակցել է պատերազմին: Պատերազմից հետո ծառայության է նշանակվել 89-րդ հայկական դիվիզիայում սկզբում որպես դասակի հրամանատար, իսկ հետո՝ որպես վաշտի ու գումարտակի հրամանատարի տեղակալ՝ քաղաքական գծով: Ռազմաճակատներում պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և «Արիության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: 1965 թ. Մ. Թորոսյանը փոխգնդապետի կոչումով զորացրվել է և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: 1965 թվականից աշխատել է որպես ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետի վարիչ:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ ԵՐԱՆՈՍԻ (1911-1971) – Ծնվել է 1911 թ. Անիի շրջանի Լուսաղբյուր գյուղում: 1929-1932 թթ. աշխատել է Լենինականի (Գյումրի) տեքստիլ կոմբինատում որպես բանվոր: 1931 թ. ավարտել է կոմբինատի բանվորական կրթության ֆաբրիկագործարանային լրիվ դասընթացը և ստացել որակյալ բանվորի կոչում: 1932- 1936 թթ. սովորել ու ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1936-1938 թթ. աշխատել է Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում որպես միջնակարգ դպրոցի տնօրեն: 1938 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1946 թվականը՝ մասնակցելով Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: Եղել է Ղրիմի ռազմաճակատում, մասնակցել է Կերչի համար մղվող կատաղի մարտերին: Մարտերից մեկում ծանր վիրավորվել է, ապա-

քինվել և վերադարձել ռազմաճակատ: 1942 թվականից եղել է Ուկրաինական ռազմաճակատում: Ռազմաճակատներում կապիտան Թումանյանը եղել է գումարտակի հրամանատար, գնդի հրամանատարի տեղակալ և քաղաշխատող: Պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

1942 թ. Գ. Թումանյանը զորացրվել է: Ավարտել է համալսարանի ասպիրանտուրան, 1950 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ անցնելով դասախոսական աշխատանքի: Մինչև 1971 թվականը՝ իր կյանքի վերջը, աշխատել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում: Վախճանվել է 1971 թ. Երևանում:

ԻՆՃԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԻ (1913-1990) – Ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 25-ին քաղաք Ախալցխայում: Նախնական կրթությունը ստացել է տեղում, ապա՝ Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումում: 1931-1934 թթ. գյուղական դպրոցում աշխատել է որպես տնօրեն և ուսուցիչ: 1934-1939 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտը: 1939 թ. զորակոչվել է բանակ: Նույն թվականին ընդունվել է Կոմունիստական կուսակցության շարքերը: 1940 թ. նրան շնորհվել է քաղղեկի աստիճան և աշխատել Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում որպես ընդհանուր պատմության դասախոս: 1941 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ակտիվ մասնակցություն է ունեցել Տուլայի մարտերին, իսկ այնուհետև՝ 340-րդ դիվիզիայի կազմում, մասնակցել է Քաշիր, Վենև, Ստալինոգորսկ, Բելև քաղաքների և բազմաթիվ բնակավայրերի ազատագրությանը: 1942 թ. փետրվարին Հ. Ինճիկյանին շնորհվել է գումարտակի կոմիսարի աստիճան և նշանակվեց 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 390-րդ նոր ձևավորված գնդի կոմիսար: 1942 թ. օգոստոսին տեղափոխվել է 45-րդ բանակի քաղբաժին, իսկ հետո՝ 7-րդ գվարդիական բանակի նույն բաժինը որպես դասախոս:

Պարգևատրվել է «Ռազմական սխրանքների համար», «Մոսկվայի պաշտպանության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմա-

նիայի դեմ տարած հաղթանակի» և հոբելյանական բազմաթիվ մեդալներով: 1985 թ. Հայրենական պատերազմում տարած հաղթանակի 40-ամյակի կապակցությամբ ստացել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան»:

1946 թ. զորացրվել է մայորի կոչումով: Զբաղեցրել է տարբեր կուսակցական պաշտոններ, իսկ 1955-1958 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է նորագույն պատմություն: 1958 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատել է Գիտությունների ակադեմիայում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 1974 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և դարձել պատմական գիտությունների դոկտոր, իսկ մեկ տարի անց նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 1990 թ. ապրիլի 7-ին Երևանում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԴՐԱՍՏԱՄԱՏԻ (1908-1980) – Ծնվել է 1908 թ. Թիֆլիսում: 1926 թ. ավարտել է Թիֆլիսի 76-րդ հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի սոցիալ- տնտեսագիտական ֆակուլտետը: 1930 թ. ավարտել է, ընդունվել Թբիլիսիի Անդրկովկասի պետպլանին կից ասպիրանտուրան: Երեք տարի ասպիրանտուրայում սովորելուց հետո նշանակվել է կուսակցական աշխատանքի ՀԿԿ կենտկոմում և միաժամանակ դասավանդել պետական համալսարանում: 1939-1941 թթ. աշխատել է որպես հանրապետության պետական պլանային հանճնաժողովի անդամ և բաժնի պետ: 1941 թ., երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Գ. Իսահակյանը կամովին մեկնել է կարմիր բանակ և և նշանակվել նորաստեղծ 409-րդ հրաձգային դիվիզիայի 675-րդ հրաձգային գնդի կուսակցական կազմակերպության պատասխանատու քարտուղար: 1942 թ. դեկտեմբերին նա իր դիվիզիայի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ և մասնակցել Կովկասի քաղաքների ազատագրմանը:

1942 թ. մարտին՝ Կրասնոյարսկ կայարանի համար մղվող մարտերի ժամանակ՝ 675-րդ հրաձգային գնդի հրամանատարի տեղակալի զոհվելուց հետո, Գ. Իսահակյանը փոխադրվել է այնտեղ և խիզախորեն կատարել մարտական առաջադրանքները: 1943 թ. վերջե-

րին՝ Կուբանում մղվող համառ մարտերի ժամանակ՝ 409-րդ դիվիզիայի մեծ կորուստներից հետո, համալրվել է ԽՍՀՄ մի շարք այլազգի մարդկանցով, հարկ է եղել դիվիզիայի հայերեն թերթը հրատարակել ռուսերեն: Այնուհետև դիվիզիայի տպագրական բազայի հիման վրա կազմակերպվել է նոր խմբագրություն: Երրորդ ուկրաինական ռազմաճակատի հայ մարտիկների համար հրատարակվել է «Խորհրդային ռազմիկ» թերթը, որի խմբագիրը եղել է մայոր Իսահակյանը:

1944 թ.՝ Ղրիմի ազատագրման համար կարմիր բանակի վճռական հարձակումների ժամանակ, քաղաքական մի շարք աշխատողների հետ Գ. Իսահակյանը տեղափոխվել է Թամանյան թերակղզի, Մերձծովյան բանակ և մասնակցել թերակղզու ազատագրմանը: Մայոր Իսահակյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Կարմիր դրոշի» շքանշաններով և մի շարք մեդալներով: Հայրենական պատերազմի ավարտից հետո փոխգնդապետ Իսահակյանը փոխադրվել է Երևան և տասը տարի շարունակ աշխատել որպես ռազմագիտության դասախոս: Աշխատանքին համընթաց 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1955 թ. փոխգնդապետ Իսահակյանը զորացրվել է և նշանակվել «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի խմբագիր: 1955-1960 թթ. Գ. Իսահակյանը աշխատել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում: 1970 թվականից եղել է Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի դասախոս: Վախճանվել է 1980 թ. փետրվարին:

ԼԱԶԻԿՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՄՈՎՍԵՍԻ (1921-) – Ծնվել է 1921 թ. Լենինական քաղաքում (Գյումրի): 1939 թ. ավարտել է Լենինականի ռուսական միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: 1939-1941 թթ. սովորել ու ավարտել է Պոլտավայի տանկային և Կազանի ավագ հրամկազմի ուսումնարանները:

Լ. Լազիկյանը պատերազմի մեջ է եղել սկզբից մինչև նրա հաղթական ավարտը: Կարմիր բանակի այդ փորձված սպան մասնակցել

է ոչ միայն ֆաշիստական Գերմանիայի, այլև միլիտարիստական Ճապոնիայի բանակների ջախջախմանը: 1941-1942 թթ. եղել է Ղրիմի, 1942 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ Դոնի, 1942-1943 թթ. Ստալինգրադի, 1943 թ. հունիս-օգոստոս ամիսներին՝ Առաջին ուկրաինական, 1944 թ. հունիս-օգոստոս ամիսներին՝ Երրորդ բելառուսական, 1944-1945 թթ.՝ Առաջին մերձբալթյան, 1945 թ. փետրվար-մայիս ամիսներին՝ Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ), 1945 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ Պրիմորյան ռազմաճակատներում: Փոխգնդապետ Լազիկյանը պատերազմի բոլոր տարիներին միշտ եղել է պատերազմական գործողությունների մեջ, շարունակ կատարել է հայրենիքի մարտական առաջադրանքը, որի համար էլ նրա կուրծքը զարդարվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Նա վիրավորվել է, բայց չի դադարել կռվել: Փառքով ու հաղթանակով վերադարձել է տուն և աշխատանքի անցել: Աշխատել է Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնում:

ԼԱԼԱՅԱՆ ԱՎԱԳ ՍՈՂՈՄՈՆԻ (1922-2002) – Ծնվել է 1922 թ. Շահումյանի շրջանի Երքեջ գյուղում: 1939 թ. ավարտել է Կիրովաբադի մանկավարժական ուսումնարանը և նույն տարում դիմել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը: Սակայն քննությունները չավարտած՝ կոմերիտմիության կոչով մեկնել է մանկավարժական աշխատանքի Ախտայի շրջանում: 1942 թ. ամռանը դպրոցից զորակոչվել է կարմիր բանակ: Առաջին երկու ամիսների ընթացքում կապի գծով վերապատրաստվել է Թբիլիսիում, և որպես կապավոր ջոկատի հրամանատար նրան ուղարկել են Պարսկաստան: 1942 թ. դեկտեմբերին վերադարձել է Հայաստան և մի քանի օր հետո մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Մոզդոկի, Մինվոդի և Տիխարեցկի ազատագրական մարտերին: Մինչև 1945 թվականը ծառայել է Ռոստովում: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: 1944 թ. ավագ Լալայանը զորացրվել է և վերադարձել ուսուցչական աշխատանքի հայրենի Երքեջ գյուղում: Նույն

թվականի սեպտեմբերին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1951 թ. ավարտել է և նույն տարում ընդունվել ֆակուլտետին կից ասպիրանտուրան: 1954 թ. ավարտել է ասպիրանտուրան, 1955 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1957 թ. ստացել դոցենտի կոչում՝ անցնելով դասախոսական աշխատանքի: 1953-1993 թթ. դասավանդել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: 1975-1978 թթ. նշանակվել է ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1978-1988 թթ.՝ դեկան: Այդ տարիներին կարճ ժամանակով ղեկավարել է ԵՊՀ պետական իրավունքի, խորհրդային շինարարության և միջազգային իրավունքի ամբիոնը: Ուսանողական տարիներից սկսած՝ մի քանի անգամ եղել է համալսարանի արհկոմի նախագահ և իրավաբանական ֆակուլտետի կուսակցական կազմակերպության քարտուղար: Վախճանվել է 2002 թ. մայիսի 24-ին:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԿԱՐՈ ԷՐԱՆԻ (1909-1993) – Ծնվել է 1909 թ. հունվարի 7-ին Սասուն գավառի Ջրաշեն գյուղում: 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ Խաչատուրյանների ընտանիքը գաղթել է Ալեքսանդրապոլ (Գյումրի): 1920-1930 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, իսկ 1930 թ. ընդունվել և 1935 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի քիմիայի ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրայում: 1939 թվականից դասախոսել է Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմածովային ակադեմիայում, 1940-1945 թթ. նույն ակադեմիայում ղեկավարել է ջերմաֆիզիկայի ամբիոնը: 1945 թ. նշանակվել է Ա. Ն. Կռիլովի անվան ակադեմիայի թերմոդինամիկայի և այրման տեսության ամբիոնի վարիչ, որտեղ էլ ստացել է ինժեներ-գնդապետի զինվորական կոչում: 1941 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1958 թ. շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1960 թվականից աշխատել է ԵՊՀ քիմիական ֆակուլտետում որպես տեսական քիմիայի ամբիոնի վարիչ, 1967-1977 թթ.՝ նույն համալսարանի գիտական գծով պրոռեկտոր: Եղել է նաև Բրատիսլավայի (Չեխոսլովակիա) համալսարանի պատվավոր դոկտոր (1970), ԽՍՀՄ ԳԱ

բարձր ջերմաստիճանային ջերմաֆիզիկայի խորհրդի անդամ (1974): Վախճանվել է 1993 թ. մարտի 28-ին:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ (1907-) – Ծնվել է 1907 թ. Լենինականում (Գյումրի): 1925 թ. ավարտել է տեղի յոթնամյա դպրոցը և աշխատանքի անցել տեքստիլ կոմբինատում: Աշխատանքին զուգընթաց ավարտել է երեկոյան բաժնի բանֆակը: 1929 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1931 թվականը: 1931 թ. Գ. Խաչատրյանին ուղարկել են՝ սովորելու Անդրկովկասյան ռազմական միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո ստացել է սպայի կոչում և մինչև Հայրենական պատերազմի ավարտը տարբեր պաշտոններով ծառայել է բանակում: 1939 թ. Գ. Խաչատրյանը մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Բելառուսիայի ազատագրմանը, իսկ 1940 թ.՝ խորհրդա-ֆիննական պատերազմին: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, նրան դիվիզիոնի հրամանատարի պաշտոնով ուղարկել են Ղրիմի ռազմաճակատ: 1942 թ. Ղրիմի համար մղված մարտերում ծանր վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Նույն թվականին երկրորդ անգամ վիրավորվել է և ուղարկվել սկզբում Խարկովի, իսկ հետո՝ Երևանի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Անդրկովկասյան ռազմական օկրուգի կողմից նշանակվել է Երևանի հրետանու դպրոցում որպես ավագ դասախոս: 1945-1948 թթ. աշխատել է Երևանի Խ. Աբովյանի հայկական մանկավարժական ինստիտուտի ռազմական ամբիոնում, 1948-1953 թթ.՝ Վալերի Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտում որպես տնօրենի տեղակալ և ուսուցիչ: 1957 թվականից Գ. Խաչատրյանն աշխատել է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնում որպես ավագ ուսուցիչ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՎՍԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ (1923-1991) – Ծնվել է 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղում: 1940 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Բանյակսկի ռազմահետևակային դպրոցը, ստացել լեյտենանտի կոչում և որպես հրաձգային դասակի հրամանատար նշանակվել Անդրկովկասյան զինվորական օկրուգի գե-

րազանցիկ հրաձիգների 28-րդ օկրուգային դպրոցում: 1943 թ. նրան նույն պաշտոնով ուղարկել են ռազմաճակատ: Մինչև 1944 թ. հունիս ամիսը եղել է Առաջին մերձբալթյան ռազմաճակատում: Մ. Խաչատրյանը սկզբում եղել է դասակի սպա, ապա՝ վաշտի հրամանատար: Մասնակցել է Սմոլենսկի, Մոգիլևի, Նևելի, Վելիկիե Լուկի, Վիտեբսկի և այլ քաղաքների համար մղվող մարտերին: Բազմիցս կատարել է հետախուզական առաջադրանքներ և օգտակար տեղեկություններ հավաքել թշնամու գործողությունների մասին:

Լեյտենանտ Խաչատրյանը պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և մի շարք մեդալներով: Վիտեբսկ քաղաքի ազատագրական մարտերից մեկում Խաչատրյանը ծանր վիրավորվել է և 1944 թ. հունիսին որպես հաշմանդամ զորացրվել: Երկու տարի աշխատել է միջնակարգ դպրոցում: 1947 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1952 թ. ավարտել է և աշխատանքի անցել ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի կաբինետում: Հետագայում իրավագիտության գծով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով իրավագիտության թեկնածուի աստիճան, ապա դոցենտի կոչում: Այնուհետև աշխատել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Վախճանվել է 1991 թվականին:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՀՐԱՉԻԿԻ (1921-1996) – Ծնվել է 1921 թ. Թբիլիսիում: Նրա ընտանիքը 1924 թ. տեղափոխվել է Բաքու, որտեղ 1938 թ. ավարտել է Ս. Շահումյանի անվան համար 9-րդ միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ուսանողական տարիներին զորակոչվել է բանակ և ուղարկվել Բաքվի զենիթահրթիռային դպրոց: 1942 թ. Ռ. Խաչատրյանը ավարտել է դպրոցը և ստացել է լեյտենանտի կոչում: Հրահանգ է ստացել իր զինակիցների հետ գերմանական հարձակումից պաշտպանելու Բաքվի նավթային շրջանները: Մինչև պատերազմի ավարտը ծառայել է Բաքվի պաշտպանության վաշտերում: 1945 թ. դեկտեմբերին զորացրվել է և շարունակել ուսումը: Այ-

ետևում տեղափոխվել է Երևան և աշխատել ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրությունում՝ հետագայում զբաղեցնելով կուսակցական տարբեր պաշտոններ: 1947-1952 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1973-1979 թթ. եղել է Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական ինստիտուտի ռեկտորը: Կյանքի հետագա տարիներին աշխատել է ԳԱ պատմության ինստիտուտում, ինչպես նաև զբաղեցրել է կուսակցական տարբեր պաշտոններ: 1982 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով, ինչպես նաև «Կիրիլ և Մեթոդիոս առաջին աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1996 թ. նոյեմբերի 7-ին Մոսկվայում:

ԽԱՌԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՓՈԼԱԴԻ (1908-) – Ծնվել է 1908 թ. ժամանակակից Ադրբեջանի Նուխայի շրջանի Դաշբոսլաղ գյուղում: 1930 թ. ավարտել է Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը և չորս տարի աշխատել որպես ուսուցիչ: 1935 թ. ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը, 1940 թ. ավարտելուց հետո՝ մինչև 1941 թ. օգոստոսը, աշխատել է Կամոյում որպես առբաժնի վարիչ: 1941 թ. օգոստոսից մինչև 1961 թվականը ծառայել է կարմիր բանակում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գ. Խառատյանը տարբեր պաշտոններով եղել է մի քանի ռազմաճակատներում, նախ՝ Վորոնեժի, հետո՝ Ստալինգրադի ռազմաճակատներում: Մասնակցել է այդ երկու քաղաքների պաշտպանության համար մղվող կատաղի մարտերին: Հետագայում Գ. Խառատյանը եղել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատում՝ մասնակցելով ԽՍՀՄ արևմտյան տարածքների ազատագրմանը: Պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ», մեկ «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և ինը մեդալներով:

1961 թ. մայոր Խառատյանը զորացրվել է և մինչև 1964 թվականը աշխատել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավար-

ժական ինստիտուտում և առողջապահության մինիստրությունում: 1964 թվականից աշխատել է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության ամբիոնում որպես ավագ դասախոս:

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՇԱՎԻՐԻ (1921-2002) – Ծնվել է 1921 թ. մտավորականի ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Պետական Համալսարանի Երկրաբանաախշարհագրական ֆակուլտետը: Սակայն նրա ուսումը ընդհատվել է, քանի որ նա մասնակցել է Ֆիննական, ապա՝ Հայրենական մեծ պատերազմներին: Հ. Խոնդրակյանը, մարտնչել է մինչև Մեծ հայրենականի հաղթական ավարտը: Նա մասնակցել է Կովկասի պաշտպանության, Կերչի, Ղրիմի ազատագրական մարտերին, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը, արժանացել է կառավարական բարձր պարգևների և մի շարք մեդալների: Պատերազմի ավարտից հետո՝ 1945 թ. ընդունվել է Երևանի Պետական Համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և 1950 թ. գերազանցությամբ ավարտել այն: 1950-1952 թթ. աշխատել է Հայաստանի Կոմկուսի Կիրովյան շրջկոմում՝ որպես բաժնի վարիչ: 1952-1955 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1954 թ. ստաժավորվել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ժողովրդական տնտեսության պատմության ամբիոնում և անցնել աշխատանքի ԵՊՀ-ի քաղաքատնտեսության ամբիոնում:

1955 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան, 1958 թ. դոցենտի, իսկ 1995 թ.՝ պրոֆեսորի կոչում: Վախճանվել է 2002 թ. Երևանում:

ԿԱՆԴԱՆՈՎ ԴԻՄԻՏՐԻ ԳԵՈՐԳԻԵՎԻՉ (1908-) – Ծնվել է 1908 թ. Ալավերդիում: 1930 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: Մինչև 1931 թվականը որպես շարքային ծառայել է Հայկական հրաձգային դիվիզիայում: 1931-1935 թթ. ընթացքում սովորել ու ավարտել է Օդեսայի օդաչուական դպրոցը և մինչև 1956 թվականը ծառայել է կարմիր բանակի ռազմաօդային զո-

րամասերում: Մինչև Հայրենական մեծ պատերազմը մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Դ. Կանդաևովը ծառայելիս է եղել Էստոնիայի Տարտու քաղաքի ռազմաօդային զորամասում: Այն էսկադրիլիան, որի կազմում եղել է նա, խնդիր է ստացել ռմբակոծելու և ոչնչացնելու Արևելյան Պրուսիայում գտնվող գերմանական զորամասերն ու ռազմական տեխնիկան: Երբ կարմիր բանակի զորամասերը նահանջել են սահմանամերձ շրջաններից, Դ. Կանդաևովն իր գնդի հետ միասին տեղափոխվել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) մոտ՝ Օրսկ քաղաքի օդանավակայան, և մարտնչել Լենինգրադի պաշտպանության համար: Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Դ. Կանդաևովը կատարել է 136 մարտական թռիչք, թշնամու ինքնաթիռների դեմ օդային մարտի մեջ է մտել 36 անգամ: Իր ինքնաթիռով ոչնչացրել է թշնամու ինը ինքնաթիռ: 1941 թ. ամռանը Լենինգրադի ռազմաճակատի հետախուզությունը հայտնել է, որ Գատչինոյի շրջանում գտնվում են թշնամու հեռաձիգ հրանոթներ, որոնք իրենց համազարկերով շարունակում են մեծ վնասներ պատճառել քաղաքի կենտրոնական մասերին: Ռազմաճակատի հրամանատարությունը Կանդաևովի ռազմաօդային գնդին մարտական խնդիր է տրել ոչնչացնելու թշնամու այդ հրանոթները: Դ. Կանդաևովը և իր ընկեր օդաչուները թշնամու համար բոլորովին անսպասելի կատարել են իրենց համաբնակ թռիչքը և ոչնչացրել թշնամու հեռաձիգ կրակակետերը: Մարտական այդ խնդիրը կատարելու համար գնդի ամբողջ անձնակազմը պարգևատրվել է շքանշաններով: Օդային բոլոր մարտերում մարտական խնդիրները խիզախորեն կատարելու համար փոխգնդապետ Դ. Կանդաևովը պարգևատրվել է «Լենինի», «Կարմիր աստղ» երկու շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար», «Լենինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Փոխգնդապետ Դ. Կանդաևովը ռազմաօդային մարտական գործողությունների մեջ եղել է մինչև 1943 թ. աշնանը: «Հին Ռուսիայի»

համար մղած օդային մարտերում 1943 թ. նոյեմբերին թշնամու ինքնաթիռները 3000 մետր բարձրության վրա շրջապատել են Դ. Կանդաևովի ինքնաթիռը և գնդացրային կրակ տեղացել նրա վրա: Նա վիրավոր վիճակում կատարել է կեղծ մանյովր և վայրէջք կատարել չեզոք գոտում: Կարմիր բանակի ճակատային հետախույզները գտել են նրան անզգա վիճակում և տեղափոխել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Կիրովարագի ռազմաօդային դպրոցը: 1956 թ. Դ. Կանդաևովը զորացրվել է և 1960 թ. աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: Հետագայում աշխատել է ԵՊՀ տնտեսական մասում որպես մատակարարման բաժնի պետ:

ԿԱՊԼՈՒՆ ԲՈՐԻՍ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ (1922-) – Ծնվել է 1922 թ. Ուկրաինայի Վիննիցայի մարզում: 1940 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին մասնակցել է ԽՍՀՄ արևմտյան սահմանների համար մղվող մարտերին, իսկ 1941 թ. աշնանը՝ Ռոստովի պաշտպանությանը: 1942 թ. աշնանը Տուապսե քաղաքի հյուսիսարևելյան մասում վիրավորվել է, ստացել է կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Կարճ ժամանակում ապաքինվել և վերադարձել է իր զորամասը: 1943 թ.՝ Կրասնոդարի ազատագրման ժամանակ, մարտական խնդիրը խիզախորեն կատարելու համար կապի դասակի հրամանատար Բ. Կապլունը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Նույն թվականի գարնանը և ամռանը ավագ լեյտենանտ Կապլունը մասնակցել է Նովոռոսիյսկի ազատագրման համար մղվող մարտերին: Ջրային տարածություններում կապի գծեր անցկացնելու գործում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է «Արիության համար» մեդալով և երկրորդ «Կարմիր աստղ» շքանշանով:

1943 թ. սեպտեմբերին Բ. Կապլունը մասնակցել է Նովոռոսիյսկի դեսանտային զորամասերի մարտական գործողություններին, 1944 թ.՝ Ուկրաինայի հողերի ազատագրմանը: Այնուհետև անցել է Կարպատները և մասնակցել Չեխոսլովակիայի և Հունգարիայի ազատագրմանը: Չեխոսլովակիայի ազատագրման ժամանակ կապի ծառայության մեջ ցուցաբերած մարտական ծառայության համար

Բ. Կապլունը պարգևատրվել է երրորդ «Կարմիր աստղ» շքանշանով և «Խիզախության համար» մեդալով:

1957 թ. ավարտել է կապի ռազմական ակադեմիան և նշանակվել առանձին կորպուսային գումարտակի հրամանատար: 1962-1965 թթ. փոխգնդապետ Կապլունը եղել է կապի առանձին գնդի շտաբի պետ: 1965 թ. նա աշխատել է Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնում որպես դասախոս, իսկ 1968 թվականից՝ որպես ցիկլի պետ: Ուսանողության ռազմական ուսուցման և դաստիարակության գործում ցուցաբերած ծառայության համար նրան շնորհվել է գնդապետի կոչում:

ԿԱՐԱԲԵԳՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ԻՎԱՆԻ (1921-1984) – Ծնվել է 1921 թ. հոկտեմբերի 20-ին Թբիլիսիում: 1939 թ. ավարտել է դպրոցը և զորակոչվել բանակ: Երկրորդ աշխարհամարտի խորհրդա-ֆիննական պատերազմի ժամանակ՝ 1939-1940 թթ. ձմռանը, սառեցրել է ոտքերը և վիրահատվելուց հետո զորացրվել: 1940 թ. ընդունվել է Թբիլիսիի պետական համալսարան և 1946 թ. գերազանցությամբ ավարտել այն՝ ստանալով մաթեմատիկոսի որակավորում: 1950-1953 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ համակարգում, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում: 1953-1958 թթ. դասավանդել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: 1958 թվականից աշխատել է Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, ապա՝ մաթեմատիկայի բաժնի վարիչ: Երևանի պետական համալսարանը նախկին ԽՍՀՄ բուհերից առաջինն էր, որտեղ 1963 թ. ստեղծվեց տնտեսության մաթեմատիկայի մոդելավորման ամբիոնը՝ Վ. Կարաբեգովի ղեկավարությամբ: 1965 թ. համատեղությամբ աշխատել է էկոնոմիկա-մաթեմատիկական լաբորատորիայում որպես վարիչ: 1973-1974 թթ. եղել է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետի դոցենտ: Մինչև 1975 թվականը աշխատել է ԵՊՀ-ում: 1975 թվականից մինչև իր կյանքի վերջը եղել է ՀԽՍՀ պետպլանին առընթեր հաշվողական կենտրոնի տնօրենը: Վախճանվել է 1984 թ. հուլիսի 20-ին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՍԱՂԱԹԵԼԻ (1922-2003) – Ծնվել է 1922 թ. Արցախի Ստեփանակերտի շրջանի Խանաբադ գյուղում: 1922-1930 թթ. ընտանիքով ապրել է Տաշքենդում, 1930-1932 թթ.՝ Ստեփանակերտում, 1932-1938 թթ.՝ Երևանում, 1938-1940 թթ.՝ Բաքվում: 1940 թ. ավարտել է Բաքվի հայկական միջնակարգ դպրոցը: 1940-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Ստացել մի շարք մեդալներ, զորացրվել է կապիտանի կոչումով: 1946-1951 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Աշխատել է կուսակցական մարմիններում՝ սկսած 1951 թվականից: 1963-1969 թթ. եղել է հանրապետության մշակույթի մինիստրության կուլտ-լուս հիմնարկների վարչության պետ, 1969-1989 թթ.՝ արտասահմանյան տուրիզմի վարչության պետի տեղակալ: 1950-ական թթ. սկսած՝ դասավանդել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Վախճանվել է 2003 թվականին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ԳԱՐՈՒՇ) ՄԵԽԱԿԻ (1924-1997) – Ծնվել է 1924 թ. Գյումրիում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատել է նույն դպրոցում որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Կովկասի համար մղվող մարտերին, մասնավորապես Ուկրաինայի, Բելառուսիայի ազատագրման համար կռիվներին: Զորացրվել է 1945 թ. և նույն տարում ընդունվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որը ավարտել է 1950 թվականին: 1955 թ. հեռակա կարգով ավարտել է Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական պետական ինստիտուտը, 1967 թ.՝ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը: 1975 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1952-1967 թթ. աշխատել է որպես Երևանի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական տան տնօրեն, «Սպարտակ» կամավոր մարզական ընկերության հանրապետական խորհրդի նախագահ: 1961-1990 թթ. նշանակվել է Երևանի քաղաքային խորհրդի համակարգում ֆաբրիկայի տնօրեն, ապա՝ Կենցաղային վարչության, իսկ հետո՝ նաև արդյունաբերական ձեռնարկությունների վարչության պետ: 1961-1963 թթ. եղել է Ծաղրամարտի հանրապետական ֆեդերացիայի նախագահ, ստա-

ցել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում: Եղել է ակրոբատիկայի և ծանրամարտի վաստակավոր մարզիչ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ: 1975 թ. ընտրվել է Ծանրամարտի եվրոպական ֆեդերացիայի փոխնախագահ, իսկ 1977-1995 թթ.՝ առաջին փոխնախագահ: Պարգևատրվել է ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշանով: Վախճանվել է 1997 թվականին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՅԱԿ ԳԵՂԱՄԻ (1924-1989) – Ծնվել է 1924 թ. Էջմիածնի շրջանի Ներքին Զեյվա գյուղում: 1942 թ. ավարտել է Երևանի հիդրոմելորատիվ տեխնիկումը և զորակոչվել կարմիր բանակ: Նույն թվականի աշնանը նրան ուղարկել են Ստալինգրադի ռազմաճակատ: Մասնակցել է քաղաքի փողոցային կատաղի մարտերին և վիրավորվել: Կարճ ժամանակում ապաքինվելուց հետո ուղարկվել է Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Կրասնոդարի, Արմավիրի և Տուապսեի ազատագրման համար մղվող մարտերին: Կովկասյան ռազմաճակատում ծանր վիրավորվել է, ստացել կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո ավարտել է Լվովի ռազմատեխնիկական ուսումնարանը և Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) ռազմամանկավարժական ինստիտուտը:

Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», երկու «Կարմիր աստղ» շքանշաններով, ինչպես նաև ութ մեդալով:

Մինչև 1969 թվականը գնդապետ Կարապետյանը ծառայել է կարմիր բանակի տարբեր զորամասերում, ապա աշխատանքի անցել ԵՊՀ ռազմական ամբիոնում: Վախճանվել է 1989 թվականին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՌԵՄ ՍԵՐԳԵՅԻ (1924-) – Ծնվել է 1924 թ. Երևանում: 1941 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և մեկնել Լիտվա: Նույն թվականի դեկտեմբերին կամովին մեկնել է կարմիր բանակ և մասնակցել Հայրենական պատերազմին: Ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի ռազմական ուսումնարանը, ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Դասակի հրամանատարի պաշտոնով ծառայել է 18-րդ դեսանտային բանակում: Մասնակցել է Նովոռոսիյսկի պաշտպանական մարտերին: 1943 թ. Կարապետյանը 46-րդ գվարդիական դիվիզիայի հետ եղել է Կալինի-

նի ռազմաճակատում: 1944 թ. նրան ուղարկել են Առաջին մերձբալթյան ռազմաճակատ, որտեղ ակտիվ մասնակցություն է ունեցել Տարտուի, Վարշավայի ազատագրմանը, իսկ հետագայում՝ Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և «Կովկասի պաշտպանության համար», «Բեռլինի գրավման համար», «Վարշավայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Պատերազմից հետո՝ 1946 թ., Կարապետյանը զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1951 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1954 թ.՝ ասպիրանտուրան ավարտելուց հետո, անցել է դասախոսական աշխատանքի համալսարանում: Աշխատել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ավագ դասախոս:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ (1919-1995) – Ծնվել է 1919 թ. Անիի շրջանի Մարալիկ գյուղում: 1938 թ. ավարտել է Լենինականի (Գյումրի) դաշտավարական տեխնիկումը, մինչև 1940 թվականը աշխատել է որպես ուսուցիչ և ավարտել Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1940 թ. հունվարին զորակոչվել է կարմիր բանակ և առաջին իսկ օրվանից մասնակցել Հայրենական պատերազմին: Եղել է Առաջին ուկրաինական ռազմաճակատում, Պոլտավայի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվել է: 1942 թ. կեսերին ապաքինվել է և ուղարկվել Երրորդ բելառուսական ռազմաճակատ: Մասնակցել է Գումբինենի, Ինստեներբուրգի և Քյոնիգսբերգի գրավմանը: Ռազմաճակատներում կատարել է բարդ ու պատասխանատու մարտական առաջադրանքներ: Իր դասակի ու ջոկատի մարտիկների հետ միասին բազմիցս խորացել է թշնամու դիրքերը և հետախուզել նրա ուժերն ու ռազմատակտիկական ծրագրերը: Պարգևատրվել է «Խիզախության համար», «Քյոնիգսբերգի գրավման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Պատերազմից հետո՝ 1945 թ. հոկտեմբերին, Ա. Կիրակոսյանը զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1949 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ անցնելով դասախոսական աշխատանքի: 1960 թ. եղել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1970 թ.՝ դեկան: 1973 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1968 թվականից աշխատել է որպես ԵՊՀ ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոնի վարիչ: 1975 թ. ստանձնել է նորաստեղծ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պրոռեկտորի պաշտոնը: Վախճանվել է 1995 թ. փետրվարի 26-ին:

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՎԵՏԻՍ ԵԼԻԱԶԱՐԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Երևան քաղաքում: 1933 թ. սեպտեմբերին ընդունվել է Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը: 1941 թ. փոխադրվել է և 1943 թ. ավարտել Երևանի թիվ 41 միջնակարգ դպրոցը: 1943 թ. ապրիլին զորակոչվել է խորհրդային բանակ: Թբիլիսիում ավարտել է Լեռնահրետանային ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և ուղարկվել Առաջին բելառուսական ռազմաճակատ: Մասնակցել է մարտերին, հասել մինչև Բեռլին: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, Բեռլինի գրաման համար և այլ մեդալներով: 1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1950-1970-ական թթ. զբաղեցրել է կուսակցական և քաղաքական տարբեր պաշտոններ, եղել է ՀԽՍՀ Երևանի քաղաքային էլեկտրատրանսպորտի վարչության պետի տեղակալ: 1969-1975 թթ. եղել է Սպանդարյանի շրջանային խորհրդի պատգամավոր:

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ (1908-1993) – Ծնվել է 1908 թվականի հունվարի 6-ին Կարսի մարզի Սարիղամիշի գավառի Ստհան գյուղում: Փրկվելով քեմալական թուրքերի կոտորածներից՝ ապաստան է գտել Երևանում: 1920 թ. աշխատել է Երևանի տպարանում, եղել գրաշարի օգնական, ապա՝ գրաշար: Խորհրդային կարգե-

րի հաստատումից հետո Ա. Հակոբյանի աշխատանքի և ուսման հնարավորություններն ընդլայնվել են: 1924 թ. անդամագրվել է լենինյան կոմերիտմիությանը: 1928 թվականի հոկտեմբերին տպարանի կուսակցական կազմակերպությունը Ա. Հակոբյանին ընդունել է լենինյան կուսակցության շարքերը: 1929-1930 թթ. եղել է «Սովետական Հայաստան» թերթի կուսակցական և մասսայական բաժնի քարտուղար: Բանֆակն ավարտելուց հետո նշանակվել է Երևանի գյուղատնտեսական բանֆակի ուսմասվար և պատմության ուսուցիչ: 1932-1939 թթ. վարել է կուսակցական ղեկավար աշխատանք, եղել շրջկոմի բաժնի վարիչ, Լենինականի քաղկոմի հրահանգիչ, կուսշրջկոմի քարտուղար, ՀԿԿ կենտկոմի պրոպագանդիստ: 1939-1941 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: Մարքսիզմ-լենինիզմի հիմունքներ է դասավանդել Գյուղատնտեսական ինստիտուտում: 1940 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1951-1980 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, ապա՝ գիտական խորհրդատու:

1941 թ. հուլիսին Ա. Հակոբյանը զորակոչվել է կարմիր բանակ, ծառայել 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում նախ որպես 672-րդ հրաձգային գնդի պրոպագանդիստ, 1942 թվականի մարտից՝ «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր: 1942 թվականի դեկտեմբերին ավագ քաղղեկ Հակոբյանը նշանակվել է Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային զորախմբի «Առաջ՝ հանուն հայրենիքի» թերթի խմբագրի տեղակալ: 1943 թվականի սեպտեմբերի սկզբին կապիտան Ա. Հակոբյանը նշանակվել է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պրոպագանդիստ և մասնակցել Թամանի, Կերչի և Ղրիմի ազատագրման համար մղված մարտերին: Ակտիվ մասնակցություն է ունեցել Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերին, աչքի է ընկել Ռուսկի Բրուղի մոտ ֆաշիստական շուրջ վեց հազար հոգուց բաղկացած խմբավորման ջախջախմանը: Թամանյան դիվիզիայի շարքերում Ա. Հակոբյանն ակտիվ մասնակ-

ցություն է ունեցել Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքից հարավ՝ գետի ձախ ափին գրավված հենակետի վաթսունօրյա հերոսական պաշտպանությանը, ապա՝ Բեռլինի ճակատամարտին: Հայկական Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի կազմում վերադարձել է Խորհրդային Հայաստան և մինչև 1946 թ. հուլիս շարունակել է ծառայությունը բանակում: Այնուհետև Ա. Հակոբյանն աշխատել է Երևանի սպայի տանը՝ որպես մարքս-լենինյան պատրաստության գծով ավագ հրահանգիչ: Խորհրդային բանակից զորացրվել է 1947 թ. հուլիսին, որից հետո աշխատել է Երևանի պետական համալսարանում, Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտում և տարբեր բուհերում:

Պարգևատրվել է «Կարմիր աստղ» (երկու անգամ), «Պատվո նշան» «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, «Աշխատանքային արիության համար» մեդալով: 1967 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Վախճանվել է 1993 թ. հունվարի 27-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՄՈՎՍԵՍԻ (1921-1994) – Ծնվել է 1921 թ. Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում: Մեկ տարի անց ընտանիքով տեղափոխվել են Երևան: 1939 թ. ավարտել է Երևանի մանկավարժական ուսումնարանը և անցել աշխատանքի Արագածոտնի մարզի Գեղարոտ գյուղի դպրոցում որպես ուսուցիչ: 1939 թ. զորակոչվել է խորհրդային բանակ: 1940 թ. կայազորի կոմերիտական կամավորական խմբով մեկնել է ֆիննական ռազմաճակատ, որտեղ կարճ ծառայությունից հետո վերադարձել է նույն զորամասը: Գ. Հակոբյանը մասնակցել է Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի ազատագրմանը, Մոսկվայի պաշտպանությանը, որտեղ Պոգորելոյե Գորոդիշչե ավանի մոտակայքում հրամանատարի զոհվելու պատճառով խուճապի մատնված վաշտը դուրս է բերել թշնամու կրակի տակից և գրոհով վերցրել մոտակա Լեբյոդկին գյուղը: Այդ հերոսության համար 20-ամյա Գ. Հակոբյանը պարգևատրվել է «Լենինի» և «Կարմիր աստղ» շքանշաններով, միաժամանակ նրան շնորհ-

վել է լեյտենանտի, ապա՝ ավագ լեյտենանտի կոչում: 1944 թ. մասնակցել է Բելառուսիայի, ապա՝ Լիտվայի և Արևելյան Պրուսիայի ազատագրմանը: Գ. Հակոբյանը մասնակցել է նաև Հեռավոր Արևելքում Ճապոնիայի դեմ մղվող պատերազմին: Զորացրվել է և վերադարձել հայրենիք 1946 թվականին: Պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: 1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Այնուհետև անցել է կուսակցական և լրագրողական աշխատանքների: 1955-1959 թթ. աշխատել է արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերությունում, որից հետո՝ «Սովետական Հայաստան» օրաթերթում որպես լրագրող, ապա՝ ՀՀ ռադիոհեռուստապետկոմում քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագիր, «Գիտելիք» ընկերության կենտրոնական վարչությունում՝ գիտական քարտուղար: Վախճանվել է 1994 թվականին:

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՆԱՎԱՍԱՐԴԻ (1925-1983) – Ծնվել է 1925 թ. մարտի 10-ին ՀԽՍՀ Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղում: 1943 թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ զորակոչվել է բանակ: Ականանետահրետանային կարճատև դասընթացներն ավարտելով՝ Մ. Հակոբյանը ծառայության է անցել 105-րդ պահեստային, իսկ 1944 թ.՝ 77-րդ դիվիզիայի 276-րդ հրաձգային գնդերում: Առանձնացել է Ղրիմի մարտերում: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Այնուհետև վիրավորվել է և վերադառնալով ռազմաճակատ՝ ծառայել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատում: Մարտնչել է Լեհաստանի ազատագրման և Գերմանիայի ջախջախման գործողություններին:

Զորացրվելուց հետո եղել է «Ավանգարդ» թերթի սեփական թղթակիցը Ջանգեզուրում: 1947-1949 թթ. աշխատել է Ղափանի «Պղնձի համար» թերթում որպես գրական աշխատող, ապա՝ պատասխանատու քարտուղար: 1954 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: 1952-1954 թթ.՝ ուսանելու տարիներին, եղել է «Սովետական ուսանողություն» թերթի

խմբագիրը: 1955-1957 թթ. աշխատել է «Ավանգարդի» խմբագրությունում որպես բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ: 1957-1959 թթ. եղել է «Առողջապահություն» ամսագրի պատասխանատու քարտուղարը: 1959-1961 թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայում: 1962-1965 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» ամսագրի, 1965-1966 թթ.՝ «Սովետական Հայաստան» օրաթերթի, իսկ 1966-1969 թթ.՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» պատասխանատու քարտուղարը, ապա՝ ավագ գիտխմբագիր: 1969-1973 թթ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի պատասխանատու քարտուղար: 1973-1983 թթ. եղել է ավագ գիտաշխատող ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1974 թ. պաշտպանել է «Գրիգոր Մսերյանը և նրա «Մետերոա» հանդեսը հայ լուսավորական-ղեմոկրատական շարժման մեջ» թեմայով ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Ռուսերեն լույս է տեսել նրա «Օր առանց մայրամուտի» գիրքը (Երևան, 1974): Մահացել է 1983 թ. դեկտեմբերի 25-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՇԱԿԻ (1915-2005) – Ծնվել է 1915 թ. ներկայիս Ադրբեջանի Քարհատի շրջանի Չովդար գյուղում: 1933 թ. ավարտել է գյուղատնտեսական տեխնիկումը և աշխատել որպես կոլտնտեսության ագրոտեխնիկ: 1943 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և ընդունվել Մոսկվայի ուղեղի ինստիտուտի ասպիրանտուրան: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, առաջին իսկ օրերին զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Սուխումի ռազմական դպրոցը, ստացել սպայի կոչում և 409-րդ հայկական դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքների պաշտպանությանը: Երեք անգամ վիրավորվել է, ապաքինվել և նորից վերադարձել ռազմաճակատ: Ռազմաճակատում մարտական առաջադրանքները արիաբար կատարելու համար պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և

մի քանի մեդալներով: Ս. Հակոբյանը «Կարմիր աստղ» շքանշանով պարգևատրվել է՝ մի բարդ մարտական առաջադրանք կատարելու համար: 1943 թ. սկզբին ռազմաճակատի հատվածներից մեկում թշնամին խիստ դիմադրություն է ցույց տվել կարմիր բանակի զորամասերի առաջխաղացմանը: Անհրաժեշտ է եղել իմանալ նրա ուժերի քանակի և դասավորության մասին, ըստ այդմ՝ կազմակերպել հարձակումը: Այդ խնդրի կատարումը հանձնարարվել է երեք զինվորականների՝ Սարգիս Հակոբյանին, Օստին Խուրեբովին և Վասիլևին: Երբ հիտլերականները ցուցադրաբար սկսել են զվարճանալ և տարվել երաժշտությամբ, երեք մարտական ընկերները թափանցել են թշնամու պաշտպանական գոտին, գերել երկու գերմանացու և հավաստի տեղեկություններ կորզել նրանցից թշնամու ուժերի ու մտադրությունների մասին: Ս. Հակոբյանի և նրա մարտական ընկերների կողմից այդ դժվար խնդրի կատարումը հնարավորություն է տվել Կարմիր բանակի զորամասերին ազատագրելու թշնամու կողմից զբաղեցրած տարածքը՝ մեծ զոհեր պատճառելով նրան:

1943 թ. Ս. Հակոբյանը որպես հաշմանդամ զորացրվել է: 1944 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի Բաքվի պետական համալսարանում: 1949 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարան: Սկզբում աշխատել է որպես շարքային դասախոս, իսկ 1950 թ.՝ նշանակվել ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ: 1949-1954 թթ. համատեղությամբ աշխատել է Երևանի արյունաբանության և արյան փոխներարկման ինստիտուտում որպես բաժնի վարիչ: 1955 թ. ստացել է կենսաբանական գիտությունների դոկտորի աստիճան: Գիտության վաստակավոր գործիչ Ս. Հակոբյանը եղել է ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր: Զբաղեցրել է նաև հասարակական, քաղաքական ու գիտական այլ պաշտոններ, որոնց թվում են ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության գիտական ղեկավարի, Երևանի արյան փոխներարկման ինստիտուտի, ԵՊՀ կուսբյուրոյի քարտուղարի, Երևանի բժշկական կենսաբանական ժողովրդական համալսարանի ռեկտորի, Հայաս-

տանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության կենսաբանական գիտամեթոդական խորհրդի նախագահի պաշտոնները: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մի շարք մեդալներով: Վախճանվել է 2005 թ. մարտի 21-ին:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՏԻԳՐԱՆԻ (1924-1995) – Ծնվել է 1924 թ. Վրաստանի Ախալքալաք քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ կռվելով Ուկրաինական, Բելառուսական, Մերձբալթյան ռազմաճակատներում: Պարգևատրվել է մարտական շքանշաններով և մեդալներով: 1946 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թ. և աշխատանքի անցել ՀԽՍՀ պետական ռադիոկոմիտեում որպես լրագրող, որից հետո աշխատել է գիտական և քաղաքական գիտելիքների տարածման ընկերությունում: Վախճանվել է 1995 թվականին:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՄԿՐՏԻՉԻ (1926-1987) – Ծնվել է 1926 թ. դեկտեմբերի 14-ին Երևանում: Սովորել է Գորկու, ապա՝ Պուշկինի անվան միջնակարգ դպրոցներում: 1942-1944 թթ. սովորել է Երևանի համար 17 հրետանային հատուկ դպրոցում: Ուսումն ավարտելուց հետո ուղարկվել է զինվորական ծառայության և սովորել Սևաստոպոլի զենիթահրթիռային ուսումնարանում: 1946 թ. ուսումը շարունակել է Չկալովկայի ուսումնարանում: Ծառայել է Թամանյան դիվիզիայում: 1948-1854 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և ստացել պատմաբան-միջազգայնագետի որակավորում: 1958 թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: Զբաղվել է հայկական գաղթավայրերի և հատկապես Ֆրանսիայի հայկական գաղթօջախի պատմության ուսումնասիրման աշխատանքներով:

Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով, իսկ 1985 թ.՝ «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Վախճանվել է 1987 թվականին:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲԻ (1911-) – Ծնվել է 1911 թ. Ղամառլուի (Արտաշատ) շրջանի Բաշնալու (Բաղրամյան) գյուղում: 1931 թ. ավարտել է տեղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը և կոլտնտեսությունում զբաղվել հողագործությամբ: 1941 թ. սեպտեմբերին զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել Թելավի ռազմահետևակային ուսումնարան՝ սովորելու: Մինչև 1942 թ. ապրիլը ծառայել է Սուխումում և Կրասնոդարում, որից հետո նրան ուղարկել են Կերչի ռազմաճակատ: Մասնակցել է Թեոդոսիա և Կերչ քաղաքների պաշտպանությանը: Կերչի մոտ տեղի ունեցած մարտերից մեկի ժամանակ գերի է ընկել և ուղարկվել Գերմանիա՝ համակենտրոնացման ճամբար: 1945 թ., երբ ֆրանսիական զորքերը գրավել են Ֆիլեգին քաղաքը, Ս. Հակոբյանը ազատագրվել է գերությունից և միացել կարմիր բանակի զորամասերին: 1945 թ. զորացրվել է և նորից վերադարձել հայրենի գյուղ: Մոտ մեկ տարի գյուղում աշխատելուց հետո փոխադրվել է Երևան և տարբեր կազմակերպություններում աշխատելուց հետո՝ 1967 թ., աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի տնտեսական մասում:

ՀԱՅՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆԱԿԻ (1913-1999) – Ծնվել է 1913 թ. սեպտեմբերի 18-ին Ղափանի շրջանի Ծավ գյուղում: Տարրական կրթություն ստացել է տեղի դպրոցում: 1922 թ. տեղափոխվել է Ալեքսանդրապոլ (Գյումրի), ավարտել միջնակարգ դպրոցն ու աշխատանքի անցել տեքստիլ գործարանում: Գ. Հայրյանի բանաստեղծական նախափորձերը տպագրվել են «Մանածագործ» թերթում: 1938 թ. ավարտելով Մոսկվայի ժուռնալիստիկայի համամիութենական ինստիտուտը՝ աշխատանքի է անցել «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրությունում: 1941-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Պատերազմի առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ, ծառայել 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 39-րդ սահմանապահ ջոկատում, իսկ հետագայում՝ 406-րդ հրաձգային դիվիզիայում, 45-րդ բանակի շտաբի Անդրկովկասյան ճակատում որպես քաղղեկ, քաղբաժնի վարիչ, պրոպագանդիստ, բանակի ռազմական

գրաքննիչ: Մասնակցել է Կովկասի մարտերին: Զորացրվել է 1946 թվականին:

1949 թ. ավարտել է Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը: Մինչև 1954 թվականը եղել է «Պրավդայի» սեփական թղթակիցը Հայաստանում, 1954-1961 թթ.՝ ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1961-1966 թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար: 1965 թ. Գ. Հայրյանը պաշտպանել է թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1969 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1967-1979 թթ. նա եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, 1979 թվականից՝ «Սովետական գրող» հրատարակչության տնօրեն: 1949-1975 թթ. (ընդմիջումներով) դասախոսել է ԵՊՀ-ում: 1962-1971 թթ. եղել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ: 1954-1974 թթ. ընտրվել է ՀԿԿ կենտկոմի անդամ, ՀԽՍՀ 49-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր: Պարգևատրվել է «Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով» և մի շարք մեդալներով: Վախճանվել է 1999 թ. նոյեմբերի 8-ին Երևանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓԻ (1911-1986) – Ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 31-ին Կապանի շրջանի Արծվանիկ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա՝ Կապանի 7-ամյա դպրոցում: 1928-1930 թթ. սովորել է մանկավարժական տեխնիկումում, որից հետո աշխատել է Կապանի համար 1 միջնակարգ դպրոցում և դասավանդել է պատմություն: 1934 թ. ինքնակամ ծառայության է անցել կարմիր բանակում: Ծառայությունը սկսել է 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայում: 1937 թ. անդամագրվել է Կոմունիստական կուսակցությանը:

1939 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1941 թ. հունիսի 22-ին ինքնակամ ներկայացել է Երևանի զինկոմիսարիատ և ցանկություն հայտնել մեկնելու ռազմաճակատ: 1941 թ. օգոստոսին նրան ուղարկել են 408-րդ հրաձգային դիվիզիայի նոր ձևավորված 663-րդ

հրաձգային գունդ որպես հրետանային մարտկոցի կոմիսար: 1942 թ. սկզբին քաղղեկ Հարությունյանը նշանակվել է նոր ձևավորված 409-րդ հայկական դիվիզիայի 684-րդ հրաձգային գնդի կոմիսար: 1942 թ. նոյեմբերից դիվիզիան մասնակցել է Մոզդոկի շրջանում պաշտպանողական ծանր մարտերին, որոնք մղվում էին Կովկասի պաշտպանության համար: 1943 թ. հունվարից մինչև ապրիլ դիվիզիայի առանձին հատվածներ ծանր մարտերով անցան Թերեքի ափերից մինչև Կուբան գետ, որը կազմում էր շուրջ 1000 կմ: Այդ ճանապարհին նրանք գերմանաֆաշիստական ուժերից ազատագրեցին մի շարք քաղաքներ, գյուղեր և բնակավայրեր Կաբարդինո-Բալկարիայում, Չեչեն-Ինգուշեթիայում, Ստավրապոլի և Կրասնոդարի երկրամասերում: 1943 թ. գարնանից դիվիզիան սկզբում Տափաստանային, ապա Երկրորդ ուկրաինական ռազմաճակատում իրականացրել է ծանր մարտեր Ուկրաինայի ազատագրության համար: Հատկապես ծանր էին մարտերը Խարկովի, Կուրսկի ելուստի ուղղություններում, որտեղ դիվիզիան ակտիվ մասնակցություն ունեցավ:

1943 թ. օգոստոսի 29-ին Կլեմենովկա գյուղի մարտերում Ա. Հարությունյանի կազմակերպած պաշտպանությունը կարևոր նշանակություն է ունեցել գերմանական զորքերին հետ մղելու և գյուղի ազատագրման գործում, իսկ 46-րդ բանակի ղեկավարության կողմից այդ գործողությունների համար մայոր Հարությունյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: 1943 թ. նոյեմբեր ամսին Ա. Հարությունյանն ու իր հայրենակիցները ճեղքել են Դնեպրը: Ինչպես նշել խորհրդային թերթերը, հերոսներն իրենց անունը ոսկե տառերով են գրել Հայրենական պատերազմի պատմության մեջ: Պատերազմի ավարտից հետո Ա. Հարությունյանը շարունակել է ծառայությունը խորհրդային բանակում: 1947-1950 թթ. առանց ծառայությունից հեռանալու սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

1963 թվականից աշխատել է որպես ՀԽՍՀ ն ախարարների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչության պետ: 1978

թվականից եղել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի գլխավոր խմբագիր:

Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» և «Կարմիր աստղ» շքանշաններով, «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով: Վախճանվել է 1986 թ. հունիսի 21-ին Երևանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ (1911-) – Ծնվել է 1911 թ. Արևմտյան Հայաստանի Մշո գավառի Կոպ գյուղում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կոտորածներից ազատվելու համար գաղթել է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Կոտայքի շրջանի Գետամեջ գյուղում: 1929 թ. ավարտել է Քանաքեռի 7-ամյա դպրոցը, իսկ 1931 թ.՝ Երևանի մանկավարժական տեխնիկումը: Մինչև 1933 թվականն աշխատել է որպես ուսուցիչ, այնուհետև ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1938 թ. ավարտել է, զորակոչվել բանակ և ուղարկվել Հեռավոր Արևելք: Մինչև Հայրենական մեծ պատերազմը ծառայել է Առաջին հեռավորարևելյան բանակի 66-րդ հրաձգային դիվիզիայում՝ մասնակցելով Խասանի դեպքերին: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է մի քանի ռազմաճակատներում և վարել բժշկական ծառայության մի քանի պաշտոններ: Պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ» շքանշանով և մի շարք մեդալներով: Պատերազմից հետո փոխգնդապետ Հարությունյանը տեղափոխվել է Հայաստան և ծառայության մտել 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: 1960 թ. զորացրվել է բանակից և երեք տարի աշխատել Երևան քաղաքի առողջապահության բաժնում: 1963 թվականից աշխատել է ԵՊՀ քաղպաշտպանության ամբիոնում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՄԱԶԴ ՍԻՍԱԿԻ (1921-2014) – Ծնվել է 1921 թ. Արտաշատի շրջանի Մրգավան գյուղում: 1938 թ. ավարտելով Արտաշատի մանկավարժական տեխնիկումը՝ դասավանդել է նույն շրջանի Մղչյան գյուղի միջնակարգ դպրոցում: 1939 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել հրետանային զորամասում:

Մասնակցել է խորհրդա-ֆիննական, ապա Հայրենական մեծ պատերազմին: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և 5 մեդալով: 1945 թ. զորացրվելով խորհրդային բանակից՝ շարունակել է մանկավարժական աշխատանքը Արտաշատի շրջանի Յուվա գյուղի դպրոցում: 1946-1951 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1951-1952 թթ. աշխատել է Հայաստանի ազգային անվտանգության կոմիտեում, այնուհետև՝ Երևան քաղաքի շրջանային խորհուրդների ոլորտներում: Վախճանվել է 2014 թ. Երևանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԳՈՒՇ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1912-1993) – Ծնվել է 1912 թ. նոյեմբերի 23-ին Երևանում: 1930 թ. ընդունվել է Մոսկվայի Վ. Կույբիշևի անվան ռազմաճարտարագիտական ակադեմիա: 1936 թ. ավարտելով այն և ստանալով ճարտարագետ-հիդրոշինարարի որակավորում՝ աշխատանքի է անցել Սևան-Զանգուշիի վարչությունում որպես ճարտարագետ՝ միաժամանակ դասավանդելով ԵրՊԻ-ում: 1937 թ. Ն. Հարությունյանն ընդունվել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրա: 1941 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մեկնել ռազմաճակատ՝ նշանակվելով ռազմադաշտային շինարարական աշխատանքների 233-րդ բրիգադի հրամանատար: Հյուսիսարևմտյան և Լենինգրադի ռազմաճակատներում մասնակցել է պաշտպանողական ծանր մարտերի: Ռազմական հրահանգների օրինակելի կատարման համար հրամանատարությունը ինժեներ-մայոր Ն. Հարությունյանին նշանակել է Գլխավոր շտապի պահեստային 16-րդ ռազմաշինարարական ջոկատի 21-րդ պաշտպանողական-շինարարական կառավարչության հրամանատար: 1944-1945 թթ. հարձակողական գործողությունների ժամանակ նրա ջոկատի կողմից վերականգնվել է 300 կմ ճանապարհ, վերականգնվել և կառուցվել են 100 խողովակ և կամուրջ, 30 կիլոմետր անվահետքային ճանապարհ 6-րդ գվարդիական, 4-րդ հարվածային, 5-րդ տանկային և 50-րդ բանակների հարձակումների համար: Ինժեներ-մայոր Հարությունյանի ջոկատը հատկապես աչքի է ընկել Քյոնիգսբերգի վրա

հարձակման ժամանակ: 1945 թ. զորացրվել է, վերադարձել Հայաստան և վերսկսել իր գիտամանկավարժական գործունեությունը: 1949 թ. ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսության: 1950 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, նույն թվականին նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1952-1955 թթ. Ն. Հարությունյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1955 թ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի սողքի և ամրության նորաստեղծ լաբորատորիայի վարիչ: 1959 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ: 1945-1951 թթ. նա դասավանդել է ԵրՊԻ-ում, 1951 թվականից՝ ԵՊՀ-ում՝ լինելով տեսական մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր: 1958-1978 թթ. նշանակվել է ԵՊՀ առաձգականության և պլաստիկության տեսության նորաստեղծ (հոծ միջավայրի մեխանիկայի) ամբիոնի վարիչ: 1961 թ. նշանակվել է ԵՊՀ ռեկտոր: Նրա նախաձեռնությամբ ԵՊՀ-ում հիմնադրվել են բջջաբանության ամբիոնը, ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը, ամրապնդվել են ԵՊՀ գիտական և ուսումնական կապերը Մոսկվայի, Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) պետական համալսարանների, ինչպես նաև ԽՍՀՄ և արտասահմանյան այլ առաջնակարգ բուհերի ու գիտական կենտրոնների հետ:

1962-1975 թթ. Ն. Հարությունյանը եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ: 1975 թ. նա տեղափոխվել է Մոսկվա և գլխավորել ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմային ինստիտուտի առաձգամածուցիկ մարմինների մեխանիկայի բաժինը՝ զոլգահեռաբար ղեկավարելով նաև ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի առաձգականաության տեսության բաժինը: Նա ղեկավարել է բազմաթիվ գիտական աշխատանքներ, ստեղծել գիտական ուրույն դպրոց: Երկար տարիներ եղել է ԽՍՀՄ տեսական և կիրառական մեխանիկայի գծով ագգային կոմիտեի նախագահության անդամ, «Հայկական ԽՍՀ ԳԱ տեղեկագիր, մեխանիկա» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, «ԽՍՀՄ ԳԱ տեղեկագիր, պինդ մարմնի մեխանիկա» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

Բազմիցս ընտրվել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների պատգամավոր:

1962 թ. Ն. Հարությունյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Լենինի», «Հոկտեմբերյան հեղափոխության», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով: Վախճանվել է 1993թ. հունվարի 18-ին Մոսկվայում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՈՒՄԱՌՅԱՆ) ՍԵՐԳԵՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1920-1995) – Ծնվել է 1920 թ. մայիսի 21-ին Լեռնաձոր գյուղում: Ավարտել է Երևանի բժշկական ուսումնարանը և աշխատել հայրենի գյուղում: 1941 թ. զորակոչվել է խորհրդային բանակ և 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Ծառայության ընթացքում նրան շնորհվել է բժշկական ծառայության լեյտենանտի կոչում: Բելառուսական ռազմաճակատում 90-րդ հեծելազորային գնդի սանիտարական գումարտակում օգնել է հարյուրավոր վիրավորների: Եղել է բժշկական ծառայության լեյտենանտ, սանիտարական գումարտակի հրամանատար, մասնակցել է Մոսկվայի պաշտպանությանը, Նեմանի սառցահատի մարտական գործողությանը, Քյոնիգսբերգի գրավմանը, Լեհաստանի ազատագրման մարտերին: Բեռլինի գրավումից հետո սանիտարական գումարտակի հրամանատար, կապիտան Ումառյանը զորացրվել և վերադարձել է հայրենիք: 1951 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը: 1952 թվականից աշխատել է «Հայաստան» (1976 թվականից՝ «Սովետական գրող») հրատարակչության գեղարվեստական գրականության խմբագրությունում՝ որպես ավագ խմբագիր: Պարգևատրվել է շքանշաններով ու մարտական մեդալներով: Ումառյանի թարգմանությամբ լույս են տեսել Ֆիլդուսու «Շահնամե», Օմար Խայամի քառյակները, արևելյան և «Ճապոնական հեքիաթների» ու գեղարվեստական ստեղծագործությունների ընտրանին: «Անդոկ», «Ռուսա» պատմական վեպերի, «Սյունիքը դիցարան» և այլ աշխատությունների հեղինակ է: Վախճանվել է 1995 թ. Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՄԻԿՈՆԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Ապարանի շրջանի Քասախ գյուղում: 1936 թ. ավարտել է տեղի թերի միջնակարգ դպրոցը և զբաղվել հողագործությամբ: 1943 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ուղարկվել ռազմաճակատ: Նույն թվականի ամռանը մասնակցել է Կուրսկի տակ տեղի ունեցած մարտերին, Օրյոլ քաղաքը ազատագրելու ժամանակ վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նորից մեկնել է ռազմաճակատ: Չերնիգովի ազատագրման ժամանակ երկրորդ անգամ է վիրավորվել: 1945 թ. մարտին՝ Վիսլա գետի ափին տեղի ունեցած մարտի ժամանակ, վիրավորվել է երրորդ անգամ, բայց մնացել է մարտական շարքում մինչև պատերազմի հաղթական ավարտը: 1945 թ. երբ կարմիր բանակը ակտիվ մարտական գործողություններ է ծավալել՝ Լեհաստանի տարածքը ազատագրելու համար, Ա. Հովհաննիսյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Լոձի, Պոզնանի և լեհական մյուս քաղաքների ազատագրմանը: Մոտ մեկ ամիս նա եղել է Օդեր գետի գետանցման և դրանից հետո գերմանական խոշոր ամրությունների գրավման համար մղվող մարտերում, 1945 թ. ապրիլին մասնակցել է Բեռլինի գրավմանը և վիրավորվել է:

Պարգևատրվել է «Արիության համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Պատերազմի հաղթական ավարտից հետո զորացրվել է: 1957 թվականից որպես բանվոր աշխատել է Երևանի պետական համալսարանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՄԱՐԳԱՐԻ (1909-1996) – Ծնվել է 1909 թ. Ղափանի շրջանի Եղվարդ գյուղում: 1940 թ. ավարտել է ներքին գործերի մինիստրության միջնակարգ մասնագիտության դպրոցը և մինչև 1956 թվականը աշխատել մինիստրության հիմնարկներում ու խորհրդային բանակում: 1946-1949 թթ. սովորել ու ավարտել է համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը՝ ստանալով իրավաբանի կոչում:

Գործող բանակ է ուղարկվել 1942 թվականին: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Մոզդոկի և մի

շարք այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման համար մղվող մարտերին: Խորհրդային բանակում և ներքին գործերի մինիստրության հիմնարկներում օրինակելի ծառայության, արիության ու խիզախության համար պարգևատրվել է «Լենինի», «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» շքանշաններով ու մեդալներով:

1945 թ. փետրվարին ավագ լեյտենանտ Ռ. Հովհաննիսյանը վերադարձել է բանակից և նորից շարունակել ծառայությունը ներքին գործերի մինիստրության հիմնարկներում: 1956 թ. տեղափոխվել է համալսարան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում: Հետագայում աշխատել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում որպես դասախոս և դեկանի տեղակալ: Վախճանվել է 1996 թվականին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՕՀԱՆԵՋՈՎ) ԳԵՈՐԳԻ ԴԱՆԵԼԻ (1924-) – Ծնվել է 1924 թ. Վրացական ԽՍՀ Թիֆլիս քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին աշխատել է Թիֆլիսի ռազմական ավիացիոն գործարանում, որի համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի մասնակցի շքանշանով» և մեդալներով: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թ. և աշխատանքի անցել Երևանի կուսժողկոմում որպես հրահանգիչ: 1952 թ. գործուղվել է Մոսկվա՝ Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մարքսիզմ-լենինիզմի բուհերի դասախոսական կադրերի պատրաստման կուրսերի: 1953 թ. ավարտելով այն՝ աշխատանքի է անցել Չելյաբինսկի (ՌՍՖՍՀ) մարզային կուսկոմիտեում: Այնուհետև երկար տարիներ դասավանդել է տարբեր բուհերում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԵՐԴԻԻ (1908-1974) – Ծնվել է 1908 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Արջաձոր գյուղում: Վաղ հասակից զրկվելով ծնողներից՝ 1918-1924 թթ. բատրակություն է արել հայրենի գյուղում, որտեղ ստացել է սկզբնական կրթություն, ապա սովորել և ավարտել է Ստեփանակերտի խորհրդային կուսակցական դպրոցը: 1929-1932 թթ. Ե. Հովհաննի-

սյանը աշխատել է Ստեփանակերտի շրջանում որպես բատրակկոմի նախագահ, այնուհետև անցել է մանկավարժական աշխատանքի: 1930 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և նույն տարում ընտրվել Բժշկական ինստիտուտի կուսկոմիտեի քարտուղար: 1939-1940 թթ. աշխատել է ՀԿԿ Երևանի կազմակերպության Կիրովյան շրջկոմում որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: 1941 թ. երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, ՀԿԿ կենտկոմի կենտրոնացմամբ մեկնել է կարմիր բանակ: Ավագ քաղղեկի պաշտոնով ծառայել է Երևանում նոր կազմակերպվող Հայկական դիվիզիայում, իսկ 1942 թ. փետրվարին մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի մի քանի քաղաքների պաշտպանությանը: Նույն թվականի վերջին Հովհաննիսյանին ուղարկել են Ստալինգրադի ռազմաճակատ, ուր մասնակցել է քաղաքի համար մղվող ամենակատաղի մարտերին:

1943 թ. փետրվարին Ե. Հովհաննիսյանին ուղարկել են Լենինգրադի ռազմաճակատ: Լենինգրադի հարավարևմտյան հատվածում գտնվող 11-րդ դիվիզիայի կազմում մարտնչել է մինչև ռազմաճակատի ճեղքումը: Կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել և ուղարկվել է հոսպիտալ: Ապաքինվելուց հետո՝ մինչև 1945 թ. սկիզբը, եղել է Առաջին ուկրաինական ռազմաճակատում: Այստեղ երկրորդ անգամ է վիրավորվել, բայց առանց հոսպիտալ մեկնելու ապաքինվել է և շարունակել է մասնակցել հարձակողական մարտերին: Ե. Հովհաննիսյանը մասնակցել է Լեհաստանի, Չեխոսլովակիայի ազատագրմանը և Դրեզդենի ու Բեռլինի գրավմանը:

Ռազմաճակատներում ցուցաբերած արիության ու խիզախության համար ավագ քաղղեկ Ե. Հովհաննիսյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և «Լենինգրադի պաշտպանության համար», «Ստալինգրադի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Օդեր գետի անցման ժամանակ գերագույն գլխավոր հրամա-

նատար Ի. Վ. Ստալինի ստորագրությամբ ստացել է շնորհակալագիր:

1945 թ. Հովհաննիսյանը զորացրվել է և դասախոսական աշխատանքի անցել ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: Վախճանվել է 1974 թվականին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԿԱՐԱՊԵՏԻ (1919-1997) – Ծնվել է 1919 թ. դեկտեմբերի 8-ին Կոտայքի մարզի տարածքում: 1941 թ. Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսից մեկնել է խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Կռվել է տարբեր ռազմաճակատներում, արժանացել բազմաթիվ շքանշանների ու մեդալների: 1944 թ.՝ զորացրվելուց հետո, աշխատել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունում, ռադիոհաղորդումների կոմիտեում, «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում: 1955-1959 թթ. եղել է «Գրական թերթի» խմբագիրը, 1959-1975 թթ.՝ Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ քարտուղարը, 1988-1990 թթ. նշանակվել է նախագահ: 1978 թվականից եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիրը: Զոհվել է 1997 թ. նոյեմբերի 22-ին ավտովթարից:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԲՂԻՇ ԱՐՇԱԿԻ (1922-2004) – Ծնվել է 1922 թ. հոկտեմբերի 18-ին Մարտունու շրջանի (Գեղարքունիքի մարզ) Ներքին Ալուչալու (Արծվանիստ) գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1938-1940 թթ., ուսուցչություն է արել հայրենի գյուղում, 1940-1943 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, կռվել մի շարք ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա և այլն: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Վերադառնալուց որոշ ժամանակ հետո աշխատել է Մարտունու շրջանային թերթում: 1950 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1950 թվականից պատասխանատու աշխատանք է կատարել Հայաստանի գրողների միությունում և «Գրական թերթի» ու «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրություններում, վարել է ՀԳՄ Սևանի ավազանի բաժանմունքի պատասխանատու քարտուղարի պաշտոնը: Վախճանվել է

2004 թ. փետրվարի 10-ին:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎՌԱՄ ՄԻՔԱՅԵԼԻ (1925-1991) – Ծնվել է 1925 թ. մայիսի 15-ին Ներքին Թալինում (Դաշտադեմ): 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և պարգևատրվել է շքանշաններով: 1955 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1955-1974 թթ. Վ. Հովսեփյանն աշխատել է «Հայգրքի» վարչությունում, Հայպետհրատում, «Մետաքսագործ» թերթի և «Պիոներ» ամսագրի խմբագրություններում, հանրապետական ժողովրդական ստեղծագործության տանը:

Վ. Հովսեփյանի առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1950 թ. «Գրական թերթում»: 1958 թվականից եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: 17 գրքերի հեղինակ է: Նրա գրեթե բոլոր, այդ թվում նաև՝ անտիպ ժողովածուների ու գրքերի մասին դրականորեն են արտահայտվել ժամանակի անվանի մտավորականները՝ Գուրգեն Մահարին, Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը և ուրիշներ:

Մահացել է 66 տարեկանում՝ 1991 թ. նոյեմբերի 24-ին:

ՀՈՒՆԱՆՅԱՆ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1923-1994) – Ծնվել է 1923 թ. Լենինականում (Գյումրի): 1930-1940 թթ. սովորել է տեղի թիվ 51 դպրոցում և գերազնաց գնահատականներով ավարտել այն: Նույն տարում ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Ավարտել է Թբիլիսիի հրետանային զինվորական ուսումնարանը, լեյտենատի կոչումով մասնակցել է պատերազմին Կովկասյան ռազմաճակատում (Մոզդոկ): Ծանր վիրավորվելուց հետո զորացրվել է բանակից: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և այլ շքանշաններով: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք, աշխատել երկաթծի օկրուգում, «Բանվոր» թերթի խմբագրությունում, դասավանդել է տեղի մանկավարժական ինստիտուտում: Վախճանվել է 1994 թվականին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ ՊԵՏՐՈՍԻ (1908-1982) – Ծնվել է 1908 թ. Նախիջևանում: 1929 թ. Երևանում ստացել է միջնակարգ կրթություն և զորակոչվել կարմիր բանակ: 1935 թ. ավարտել է Թբիլիսիի

ռազմական ուսումնարանը և ծառայության ուղարկվել սկզբում Լենինականում (Սակտ Պետերբուրգ), իսկ 1937 թ.՝ Հեռավոր Արևելքում: 26-րդ հրաձգային դիվիզիայի, 19-րդ հրետանային գնդի մարտկոցի հրամանատար Ղազարյանը 1938 թ. մասնակցել է Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերին: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Գ. Ղազարյանը 1941 թ. օգոստոսին նույն գնդի հետ փոխադրվել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատ և մասնակցել Լենինգրադի պաշտպանության համար մղվող մարտերին: 1941 թվականի վերջին Գ. Ղազարյանին ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, որտեղ եղել է հրետանային գնդի շտաբի պետ և գնդի հրամանատարի տեղակալ: Գ. Ղազարյանն իր հայրենասիրական լուման է ներդրել գնդի առաջ դրված մարտական առաջադրանքները կատարելու գործում, որի համար էլ պարգևատրվել է կառավարական բարձր շքանշաններով: Հայրենական պատերազմի երեք ռազմաճակատներում խիզախություն և արիություն ցուցաբերելու համար Գ. Ղազարյանը պարգևատրվել է «Լենինի շքանշանով», երկու «Կարմիր աստղ», երկու «Կարմիր դրոշի» շքանշաններով և մի քանի մեդալներով:

1943 թ. Ղազարյանը ավարտել է հրետանային տեխնիկական սպայական ուսումնարանը, իսկ 1956 թ.՝ Լենինգրադի հրետանային դպրոցը: 1958 թվականից աշխատել է որպես պահեստային սպա է և մանկավարժական գործունեություն ծավալել ԵՊՀ ռազմական ամբիոնում: Վախճանվել է 1982 թվականին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԼԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ (1924-1980) – Ծնվել է 1924 թ. Երևան քաղաքում: 1942 թ. ավարտել է Ս. Շահումյանի անվան դպրոցի 9-րդ դասարանը և զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. օգոստոսի 15-ից մինչև 1943 թ. սեպտեմբերի 18-ը ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար» և մի շարք այլ մեդալներով: Զորացրվել է ծանր վիրավորվելու հետևանքով: 1943 թ. ընդունվել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, որն ավարտել է 1945 թվականին: 1946-1951 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1951-1952 թթ. աշխատել է որպես

ԵՊՀ մարքսիզմ-լենինիզմի կաբինետի վարիչ: Այնուհետև հանրապետության տարբեր շրջաններում վարել է կուսակցական տարբեր պաշտոններ: Վախճանվել է 1980 թվականին:

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԻՏՅԱ ՍԻՄՈՆԻ (1918-1999) – Ծնվել է 1918 թ. Լենինականում (Գյումրի): 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: Մինչև 1940 թվականը ծառայել է 231-րդ կորպուսի հրետանային գնդում, որի կազմում մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը: 1940-1941 թթ. ծառայել է Մուրմանսկի Հաուբեցային հրետանային գնդում: Այստեղ էլ նա մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին: 1941 թ. Մ. Ղազարյանին իր զորամասի հետ միասին ուղարկել են ռազմաճակատ: Մոտ կես տարի ռազմաճակատում մնալուց հետո՝ 1942 թ., նա մեկնել է՝ սովորելու Կիրովսկ քաղաքում: Ինը ամիս սովորելուց հետո ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում և նորից մեկնել ռազմաճակատ: Հրետանային մարտի ժամանակ՝ 1943 թ. հունիսի 21-ին, ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Երեք ամիս ապաքինվելուց հետո նրան ուղարկել են ֆիննական ռազմաճակատ, ուր մինչև 1944 թվականը մնալուց հետո տեղափոխվել է Արևմտյան ռազմաճակատ և մասնակցել Ռումինիայի, Հունգարիայի և Ավստրիայի ազատագրմանը: Ավստրիայից Մ. Ղազարյանը իր զորամասի հետ վերադարձել է հայրենիք և զինվորական ծառայության նշանակվել Տիրասպոլ քաղաքում: Երեք տարի այդտեղ մնալուց հետո վերադարձել է Երևան: 1962 թվականից աշխատել է ԵՊՀ քաղպաշտպանության ամբիոնում որպես լաբորատորիայի վարիչ: Վախճանվել է 1999 թվականին:

ՂԱԶԱՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՎԵՏԻՍԻ (1924-2007) – Ծնվել է 1924 թ. հունվարի 26-ին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում: 1941-1943 թթ. սովորել է Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, ապա՝ մեկնել ռազմաճակատ: Մասնակցել է Հյուսիսկովկասյան, Կալինինի և Առաջին մերձբալթյան ռազմաճակատների մարտերին: 33-րդ առանձին սահմանապահ գնդի կազմում մասնակցել է Լիտվայի ազատագրմանը

և Քյոնիգսբերգի գրավմանը, աչքի է ընկել մարտերում և պարգևատրվել «Կարմիր աստղ» շքանշանով: 1945 թ. ամռանը տեղափոխվել է Հեռավոր Արևելք՝ Մանջուրիա՝ միլիտարիստական Ճապոնիայի ջախջախմանը մասնակցելու համար:

1946 թ. զորացրվել է: Նույն թվականին ընդունվել և մինչև 1951 թվականը սովորել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտում, որն ավարտելուց հետո եկել է Երևան և մասնակցել Սփյուռքի համար կառուցվող ռադիոհաղորդիչ կայանի մոնտաժման աշխատանքներին: 1953-1956 թթ. Ռ. Ղազարյանը սովորել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտել է՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն:

1957 թ. նա տեղափոխվել է Երևան: 1959 թ. ԵՊՀ-ում հիմնադրել է ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն՝ ղեկավարելով այն մինչև 1969 թվականը: 1963 թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հիմնադիրներից: Մինչև 1991թ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի քվանտային էլեկտրոնիկայի բաժինը: Այստեղ կատարված հետազոտությունների արդյունքում ստեղծվել է Երևան-Բյուրական լազերային բազմակապուղի հեռախոսագիծը, որն ամենաերկարն էր աշխարհում: 1975-1990 թթ. նա հիմնադրել և ղեկավարել է ռադիոկապի ամբիոնը ԵրՊԻ-ում:

1975 թ. Ռ. Ղազարյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1978 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986 թ. Ռ. Ղազարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Գիտական գործունեությունից զատ՝ նա հայտնի է նաև որպես հասարակական և քաղաքական գործիչ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ (1988-1990 թթ.): 1989 թ. հունվարին ձերբակալվել է և մինչև հունիս պահվել է Մոսկվայի Բուտիրյան բանտում: 1989 թ. Ռ. Ղազարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, 1990 թ.՝ ԳԽ փոխնախագահ, 1990-1995 թթ.՝ ՀՀ ԳԽ կրթության, գիտության, լեզվի և մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ: Նրա ղեկա-

վարությամբ պաշտպանվել է ավելի քան մեկ տասնյակ թեկնածուական ատենախոսություն:

Ռ. Ղազարյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով», ինչպես նաև «Խիզախության համար», «Կովկասի պաշտպանության համար», «Քյոնիգսբերգի գրավման» մեդալներով և բազմաթիվ այլ շքանշաններով ու պարգևներով: Վախճանվել է 2007 թ. նոյեմբերի 3-ին Երևանում:

ՂԱՆԹԱՐՉՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՍԻԼԻ (1921-1987) – Ծնվել է 1921 թ. ՀԽՍՀ Ալեքսանդրապոլ (Գյումրի) քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թբիլիսիում: 1939 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է սկզբից մինչև նրա հաղթական ավարտը: Մասնակցել է Ուկրաինայի, Բելառուսիայի ազատագրմանը, Պրահայից ու Ավստրիայից գերմանական զորքերի դուրսմղմանը: 1945 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն ավարտել է 1950 թվականին: 1952 թ. անցել է մանկավարժական աշխատանքի, եղել թիվ 110 հերթափոխային դպրոցի տնօրեն: Հետագա տարիներին նա աշխատել է Մարտիրոս Սարյանի անվան թիվ 86 գեղարվեստի թեքումով դպրոցում որպես տնօրեն: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով և մեդալներով: Վախճանվել է 1987 թվականին:

ՂԱՍԱԲՅԱՆ ՋՈՀՐԱԲ ՄԱՐԿՈՍԻ (1919-2006) – Ծնվել է 1919 թ. հունվարի 19-ին Կոստանդնուպոլսում: 1922 թ. ընտանիքի հետ հաստատվել է Բուլղարիայի Յամբոլ բնակավայրում: 1931 թ. Զ. Ղասաբյանը ավարտել է տեղի «Օշական» նախնական դպրոցը: Այնուհետև սովորել է Պլովդիվի պետական արդյունաբերական տեխնիկումը, որը ավարտել է գերազանցության 1940 թվականին: 1942 թ. մի շարք հայրենակիցների հետ միասին փորձել է անցնել պարտիզանական պայքարի, սակայն ձերբակալվել է և դատապարտվել 15 տարվա ազատազրկման: 1944 թ. հարավսլավական պարտիզանները հարձակվել են այն բանտի վրա, որտեղ գտնվում էր Զ. Ղասաբյանը, և ազատել են բանտարկյալներին, որոնք միացել են հարավսլավական պարտիզաններին՝ ընդդեմ գերմանական զորքերի: Այդ ըն-

թացքում Զ. Ղասաբյանն անդամակցել է Բուլղարիայի կոմունիստական կուսակցությանը: Սկզբում ծառայել է Վասիլի Կոլարով պարտիզանական գումարտակում: Այնուհետև բուլղարական նոր կառավարության կոչով այդ գումարտակը միացվել է Առաջին բուլղարական բանակին: 1944 թվականի օգոստոսից կռվել է Երրորդ ուկրաինական ռազմաճակատում: Զ. Ղասաբյանը մասնակցել է Ստրացին, Կրիվա-Պալանկա, Պչինյա, Կումանով, Սկոպյա և այլ բնակավայրերի ազատագրմանը: Պարգևատրվել է մի շարք պատվոգրերով և մեդալներով, այդ թվում՝ «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» մեդալով:

1946 թ. մեծ հայրենադարձության տարիներին Զ. Ղասաբյանը հայրենադարձել է և ընտանիքի հետ միասին հատատվել Ստեփանավանում: 1948-1953 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1953-1956 թթ. համագործակցել է ՀԽՍՀ, 1960 թվականից՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ: 1964-1970 թթ. կնոջ՝ Ա. Գ. Քեղիյանի հետ արտասահմանում վարել է ընդհատակյա հետախուզական աշխատանք: 1971-2006 թթ. աշխատել է Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: 1981-1998 թթ. նշանակվել է ակադեմիայի սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի վարիչ, ապա՝ թեմատիկ խմբի ղեկավար, առաջատար գիտաշխատող, միաժամանակ 1997-2004 թթ. դասախոսել է ԵՊԼՀ-ում: 2002-2005 թթ. եղել է Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանատան գլխավոր խորհրդականը:

Զ. Ղասաբյանի աշխատությունները վերաբերում են հայկական գաղթավայրերի, մասնավորապես Բուլղարիայի հայ համայնքի - պատմությանը: Եղել է Հայաստան-Բուլղարիա մշակութային կապերի ընկերության փոխնախագահ: Վախճանվել է 2006 թ. մարտի 9-ին Երևանում:

ՂԱՐԻԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ (1918-2000) – Ծնվել է 1918 թ. ներկայիս Ադրբեջանի Շամխորի շրջանի Նյուզգեր գյուղում: 1938 թ. ավարտել է Կիրովաբադի բանֆակը և նշանակվել ուսուցչական աշխատանքի Շամխորի շրջանի Լեռնային Ջացիր գյուղում: 1940 թ.

տեղափոխվել է հայրենի Նյուզգեր գյուղի միջնակարգ դպրոցը, որտեղից և զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. սովորել ու ավարտել է Բաքվի ռազմական հետևակային դպրոցը, ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում և ականանետային վաշտի հրամանատարի պաշտոնով ծառայության նշանակվել 416-րդ հրաձգային դիվիզիայում: 1943 թ. սկզբին Ս. Ղարիբյանը նույն դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Գրոզնի, Նալչիկ, Արմավիր, Կրասնոդար քաղաքների ազատագրական մարտերին: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով:

1946 թ. Ս. Ղարիբյանը զորացրվել է, նորից վերադարձել հայրենի Նյուզգեր գյուղ և նշանակվել ուսուցչական աշխատանքի: 1952 թ. ընդունվել է Կիրովաբադի գյուղատնտեսական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը: 1958 թ. ավարտել է, վերադարձել գյուղ և աշխատել որպես անասնաբույժ: 1969 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում որպես համալսարանի 5-րդ ուսումնական շենքի պարետ: Վախճանվել է 2000 թվականին:

ՂԱՓԼԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՄԱՆՎԵԼԻ (1924-1981) – Ծնվել է 1924 թ. Դոնի Ռոստովում: 1933 թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1943 թ. ավարտել է հրետանային ուսումնարանը և զորակոչվել խորհրդային բանակ: Մասնակցել է 1943-1944 թթ. ազատագրական մարտերին Ուկրաինական, Բելառուսական, Լեհական ռազմաճակատներում: Պարգևատրվել է մի շարք մեդալներով: Զորացրվելուց հետո՝ 1945 թ., ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1950 թվականին: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է որպես ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կադրերի բաժնի վարիչ, ապա՝ նախագահի տեղակալի օգնական: 1957 թ. նշանակվել է ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի օգնական: 1959 թ. ստանձնել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեի բաժնի պետի պաշտոն: Նրա ավան-

դը մեծ է արտասահմանյան երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ բարեկամական կապերի ամրապնդման, Հայաստանի բուհերում արտասահմանյան երկրների համար մասնագետների պատրաստման, սփյուռքահայության հետ կապերի ամրապնդման գործում: Աշխատել է այդ բնագավառում մինչև իր մահը՝ 1981 թվականը:

ՃԻՆԳՈՋՅԱՆ ԿԱՐՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1920-) – Ծնվել է 1920 թ. օգոստոսի 15-ին Հռոդոսում: 1922 թ. ընտանիքի հետ տարագրվել է Բուլղարիա և մինչև 1946 թվականը ապրել է Պլովդիվում: Պատերազմի տարիներին ակտիվորեն ներգրավված է եղել ֆաշիստական հակաքարոզչության իրականացման մեջ: Ձերբակալվել է և ազատ արձակվել կարմիր բանակի Բուլղարիա մտնելուց հետո: Մասնակցել է Բուլղարիայում գործող «Երևան» միության գործունեությանը:

1949 թ. ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Երևան: 1949-1954 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնում: 1961 թ. մինչև կյանքի վերջը աշխատել է Գիտությունների ակադեմիայի Մաշտոց Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Պարգևատրվել է «Կիրիլ և Մեթոդիոս առաջին աստիճանի շքանշանով», «1941-1944 թթ. ազգային ազատագրության» մեդալով: Գերմանիայի դեմ տարած հաղթանակի գործում Կ. Ճինգոզյանի վաստակը գնահատելով՝ խորհրդային իշխանությունները նրան շնորհել են «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան»:

ՄՂՂԱՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ (1914-1982) – Ծնվել է 1914 թ. ապրիլի 6-ին Թբիլիսիում, բժիշկների ընտանիքում: 1935 թ. ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) լեռնային ինստիտուտը: 1934-1940 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ տաջիկպամիրյան արշավախմբում որպես ջոկատի պետ: 1940 թ. զորակոչվել է բանակ: Հայրենական պատերազմի հենց սկզբից ընդգրկվել է սակրավորային ականածեղքային դասակի հրամանատար և մասնակցել Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի պաշտպանողական ծանր մար-

տերին: 1941 թ. ստանալով հրաման՝ պայթեցնելու Արևմտյան Բուգի վրա գտնվող վերին կամուրջը, Հ. Մաղաքյանը կրակահերթի ու ռազմական դատարանի վտանգի սպառնալիքի տակ սպասել է այնքան, մինչև խորհրդային զորքերի մնացորդները, փախստականները կանցնեն կամուրջը: Այդպես դատապարտվելու փոխարեն նա առաջադրվել է «Կարմիր աստղ» շքանշանի և ստացել լեյտենանտի կոչում: Այնուհետև ծանր վիրավորվել է և որոշ ժամանակ չանցած՝ դուրս գրվել ու վերադարձել իր դիրքեր: Այդ ժամանակ սկսվել է դեպի Ստալինգրադ գերմանական գրոհը: Նա տեղակայվել է Կալմիկիայի տափաստաններում: Երկու ամիս շարունակ շոգի ու կրակահերթի պայմաններում նրա ղեկավարած զորամիավորը դուրս է եկել Կովկասի նախալեռներ: Այդ ծանր անցումը բացասական ազդեցություն է թողել նրա առողջական վիճակի վրա, և Հ. Մաղաքյանը տեղափոխվել է թիկունք: 1942 թվականի աշնանը զորացրվել է և անցել աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1947 թվականից՝ տնօրենի գիտական գծով տեղակալ: 1957 թ. Հ. Մաղաքյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախ տեխնիկական գիտությունների, իսկ 1963 թվականից՝ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: 1963-1966 թթ. համատեղության կարգով եղել է երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենը: 1940 թվականից դասախոսել է Լենինգրադի լեռնային ինստիտուտում, իսկ 1950 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում:

Հ. Մաղաքյանի հիմնական աշխատությունները վերաբերում են մետաղածնության, մետաղային հանքավայրերի ու ֆորմացիաների, միներալոգիայի, երկրաքիմիայի ու միներագրաֆիայի հարցերին: Մետաղային հանքավայրերի մասին ուսմունքի, հրաբխային ֆորմացիաների մետաղածնության, տեկտոնամագմատիկ համալիրների մետաղածնական մասնագիտացման գծով Հ. Մաղաքյանի զարգացրած պրոբլեմները լայն արձագանք են գտել ԽՍՀՄ-ում և արտասահմանում: Նրա մի շարք գիտական աշխատություններ թարգմանվել են օտար լեզուներով: Հ. Մաղաքյանի «Մետաղային հանքավայրեր»

ձեռնարկը եղել է ԽՍՀՄ հիմնական բուհական դասագրքերից, թարգմանվել է չինարեն (ՉԺՀ, 1957) և անգլերեն (ԱՄՆ, 1968): Հ. Մաղաքյանը ընտրվել է ՀԽՍՀ V գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: Նա եղել է ԽՍՀՄ (1950) և ՀԽՍՀ (1976) պետական մրցանակների դափնեկիր: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Կարմիր աստղ», «Պատվո նշան» շքանշաններով: Վախճանվել է 1982 թ. նոյեմբերի 14-ին Երևանում:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԼԵՎՈՆԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Գորիսի շրջանի նախկին Ջորաշեն գյուղում: Մանկավարժական ուսումնարանն ավարտելուց հետո մեկ ուսումնական տարի աշխատել է Ջորաշենի (Հարթաշեն) գյուղի դպրոցում: 1943 թ. զորակոչվել է խորհրդային բանակ և սովորել Կրասնոդարի զիվորական դպրոցում, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում: Դասակի հրամանատար Գրիշա Մանուչարյանը 1944 թ. Առաջին ուկրաինական ռազմաճակատում 5-րդ գվարդիական բանակի 58-րդ հրաձգային դիվիզիայում մասնակցել է Սանդիմորի համար մղված մարտերին, ապա՝ Լեհաստանի Վրոցլավ և այլ քաղաքների ազատագրմանը: 1945 թ. զորացրվել է և աշխատել Գորիսի շրջանի մի քանի գյուղերի դպրոցներում: 1948 թ. ընդունվել և 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, մեկ տարի աշխատել Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի հայկական միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչ: Ապա աշխատանքի է անցել Տուապսեի շրջանային ժողովրդական կրթության բաժնում տեսուչ: 1955 թ. աշխատել է հայրենիքում՝ Քարաշենի ութամյա, ապա՝ Հարթաշեն գյուղի միջնակարգ դպրոցներում որպես տնօրեն: Ռազմաճակատում ցուցաբերած սխրագործության համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մարտական հոբելյանական մեդալներով:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՕՀԱՆԻ (1921-1998) – Ծնվել է 1921 թ. Թալինի շրջանի Շղարշիկ գյուղում, որտեղ նոր էին բնակություն հաստատել Սասունից գաղթած նրա ծնողները և համագյուղացիները: Մայրը անասելի զրկանքներով ու տառապանքներով է պահել

1934 թվականից հորից որբ մնացած իր յոթ երեխաներին, որոնցից ամենամեծը 15 տարեկան է եղել:

Հայրենի գյուղում տարրական կրթություն ստանալուց հետո Բ. Մարգարյանն ավարտել է Եղնիկ գյուղի յոթնամյա և Ն. Սասնաշեն գյուղի միջնակարգ դպրոցները: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայել է Կիևում, իսկ երբ տեղափոխվել է Ստալինիսլավ քաղաք, սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Մասնակցել է Պոլտավայի, այնուհետև Խարկովի պաշտպանական մարտերին: Խարկովի մոտ վիրավորվել է, պառկել քաղաքի հոսպիտալում, բայց դեռ չապաքինված՝ ռմբակոծության պատճառով իրենց զորամասի հետ տեղափոխվել է Սարատով: Այստեղից 1942 թ. վատառողջ լինելու պատճառով հանձնաժողովի որոշմամբ ուղարկվել է ՀԽՍՀ զինկոմիսարիատի տրամադրության տակ: Մի ամիս Երևանի հոսպիտալում բուժվելուց հետո ճանաչվել է ոչ պիտանի շարային ծառայության համար:

1941 թ. Բ. Մարգարյանը ուսուցչական աշխատանքի է անցել Թալինի շրջանի Կարմրաշեն գյուղի միջնակարգ դպրոցում: 1944 թ. ընդունվել և 1949 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը: Մինչև 1962 թվականը որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Թալինի շրջանի Բազմաբերդ, Եղնիկ և Կարմրաշեն գյուղերում: 1962 թ. վերադարձել է համալսարան և աշխատել գիտահետազոտական բաժնում որպես ավագ լաբորանտ: 1972 թվականից աշխատել է համալսարանի հրատարակչությունում որպես ավագ խմբագիր:

Բ. Մարգարյանը բանաստեղծություններ է գրել պատերազմի ժամանակ և ավարտից հետո: Այդ ստեղծագործությունները տպագրվել են պարբերական մամուլում: Բանաստեղծությունների հիմնական թեման հայրենասիրությունն ու խաղասիրությունն էին: Ահա երկու քառյակ Բ. Մարգարյանի 1944 թ. համալսարանի պատի թերթում հրատարակված բանաստեղծություններից.

Խաղաղությո՜ւն, դու հավերժ ես,
Պատերազմներն ակնթարթ.
Ամիից փլվող ժայռերն ինչպես

Օվկիանոսի մեջ հանդարտ:
Խաղաղություն, սիրելով քեզ,
Անդավաճան և անպարտ,
Մենք կմնանք հավերժ քեզ պես,
Ռազմամոլները՝ ակնթարթ:
Վախճանվել է 1998 թ. ապրիլի 9-ին:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ ՕՆԻԿԻ (1922-2001) – Ծնվել է 1922 թ. ապրիլի 22-ին Բուլղարիայի Ռուսե բնակավայրում: 1938-1940 թթ. որպես բանվոր աշխատել է Ռուսեի տեքստիլ ֆաբրիկայում: 1940 թ. անդամակցել է Բուլղարիայի կոմունիստական կուսակցությանը: 1941 թ. դեկտեմբերի 3-ից ղեկավարել է Ռուսեի ընդհատակյա կոմունիստական կազմակերպությունը: 1943 թ. ձերբակալվել է ֆաշիստական ոստիկանության կողմից և դատապարտվել ցմահ ազատազրկման: Ազատվել է բանտից, երբ կարմիր բանակի զորամասերը ազատագրել են Բուլղարիան ֆաշիստներից:

1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում, իսկ այնուհետև շարունակել է ուսումը ասպիրանտուրայում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և դարձել բանասիրական գիտությունների թեկնածու: 1959 թ. աշխատել է ԳԱ Մաշտոց Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1956 թ. եղել է ԽՄԿԿ անդամ:

Պարգևատրվել է «1941-1944 թթ. ազգային ազատագրության» մեդալով: Գերմանիայի դեմ տարած հաղթանակի գործում Հ. Մարգարյանի վաստակը գնահատելով՝ խորհրդային իշխանությունները նրան շնորհել են «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան»: Վախճանվել է 2001 թվականին:

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ (1920-1999) – Ծնվել է 1920 թ. ապրիլի 6-ին Ստավրապոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքում: 1939 թ. Երևանում ավարտելով միջնակարգ դպրոցը՝ զորակոչվել է բանակ և տեղակայվել Մոլդովիայում գտնվող 441-րդ հրաձգային գնդում: Այնուհետև ծառայել է 16-րդ տանկային դիվիզիայում որպես վարորդ-մեխանիկ: Մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական պատերազմի տարիներին Ռումինիայի սամաննե-

րում մասնակցել է պաշտպանողական ծանր մարտերի: Դնեպրոպետրովսկում ստացել է կանտուզիա և անգիտակից վիճակում գերի ընկել, որից հետո տեղափոխվել է ծանր աշխատանքների Դանցիգում, իսկ հետո՝ Մայնի Ֆրանկֆուրտում: Չեռնարկել է փախուստի մի քանի փորձեր: Արդյունքում ձերբակալվել է և տեղակայվել Ֆլյուսենբերգի համակենտրանացման ճամբարում, որտեղ գտնվում էին 150 000 ռազմագերիներ, որոնցից փրկվեցին միայն կեսը, երբ դաշնակիցները 1945 թ. ազատագրեցին ճամբարը:

1946 թ. վերադարձել է Երևան, իսկ 1957 թ. ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի երեկոյան բաժինը: Այնուհետև սկսել է աշխատել Երևանի էլեկտրոմեքենաշինական գործարանում: Հետագա տարիներին աշխատել է ԳԱԱ տարբեր ստորաբաժանումներում:

Պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով: Մ. Մարկոսյանը մահացել է 1999 թ. Երևանում:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՐԻՇԱ ՂԱԶԱՐԻ (1913-) – Ծնվել է 1913 թ. Արտաշատի շրջանի Բամբակավան գյուղում: 1929 թ. ավարտել է Երևանի Ա. Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը և մինչև 1934 թվականը աշխատել է Երևանի Հայկոոպի համակարգում որպես հաշվապահ- պլանավիկ: 1934 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1939 թ. ավարտել է և նշանակվել ֆինանսական իրավունքի ու փորձագիտության դասախոս Հեռակա իրավաբանական ինստիտուտում: 1941 թ. հունիսի 23-ին զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1947 թվականը սկզբում Լենինական քաղաքում (Գյումրի), ապա տեղափոխվել է Երևան: 1942 թ. երբ ձևավորվել է 408-րդ հայկական դիվիզիան, Գ. Մարտիրոսյանը ծառայության է նշանակվել այդ դիվիզիայի մոտոհետախուզական վաշտում: 1942 թ. սեպտեմբերին դիվիզիան մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Գ. Մարտիրոսյանը մասնակցել է Տուապսեի, Գելենջիկի, Գոյտխի ազատագրման մարտերին: Կատարել է թշնամու ուժերը հետախուզելու մի շարք պատասխանատու առաջադրանքներ: 1942 թ. հոկտեմբերի 8-ին այն

գունդը, որի կազմում եղել է Գ. Մարտիրոսյանը, խնդիր է ստացել ճեղքելու թշնամու պաշտպանական գիծը և տիրանալու նրա ձեռքում գտնված բարձունքներից մեկին: Այդ դժվարին խնդիրը կատարելու ժամանակ նա վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Մի քանի ամսում բուժվելուց հետո նշանակվել է ծառայության ներքին զորամասերում:

1947 թ. Գ. Մարտիրոսյանը զորացրվել է և նորից աշխատանքի անցել Երևանի հեռակա իրավաբանական ինստիտուտում: 1956 թ. ինստիտուտը համալսարանին միացնելու պատճառով տեղափոխվել է Երևանի պետական համալսարան: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1970 թ. ստացել է դոցենտի կոչում և աշխատել ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման և տնտեսական գործունեության վերլուծության ամբիոնում:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1909-1990) – Ծնվել է 1909 թ. Ելիզավետապոլի նահանգի Գետաշեն գյուղում: 1930 թ. ավարտել է տեղի 9-ամյա դպրոցը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: Մինչև 1933 թվականը աշխատել է որպես աշխարհագրության ուսուցիչ և ապա դպրոցի վարիչ: 1933-1937 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի մարզային մանկավարժական ինստիտուտը: 1937-1939 թթ. դասախոսական աշխատանք է կատարել Բաքվի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1939 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Մի տարի ծառայելուց հետո զորացրվել է և աշխատանքի անցել Բաքվի մանկավարժական ինստիտուտում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, առաջին իսկ հավաքին՝ 1941 թ. հունիսի 23-ին, զորակոչվել է կարմիր բանակ: 1941 թ. հունիսից մինչև 1945 թ. եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Ծառայել է 8-րդ ավիացիոն կորպուսում և վարել զինվորական տարբեր պաշտոններ: Եղել է քաղաքական աշխատող և օդերևութաբան: Թշնամու կատարած ռմբակոծությունների ժամանակ վիրավորվել է և առանց շարքից դուրս գալու շարունակել իր ծառայությունը: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գեր-

մանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով և պատվոգրերով:

1943 թ. նոյեմբերին Ն. Մարությանը զորացրվել է և նորից դասախոսական աշխատանքի անցել Բաքվի մանկավարժական ինստիտուտում: 1957 թ. տեղափոխվել է Երևան և մինչև 1964 թվականը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արտաղրողական ուժերի ուսումնասիրության խորհրդում որպես ավագ գիտաշխատող: 1964 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետի տնտեսական աշխարհագրության ամբիոնում որպես դոցենտ: Վախճանվել է 1990 թվականին:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՍՈՒՔԻԱՍԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Լենինական (Գյումրի) քաղաքում, որտեղ 1943 թ. ավարտել է Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը և զորակոչվել խորհրդային բանակ: 1944 թ. ավարտելով Մախաչկալայի ռազմահետևակային ուսումնարանը՝ որպես դասակի հրամանատար մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Լենինգրադի ռազմաճակատի կռիվներին, ինչպես նաև Էստոնիայի և Լատվիայի ազատագրմանը, երկու անգամ վիրավորվել է: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և 17 մեդալով: 1946 թ.՝ զորացրվելուց հետո, ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1951 թ. ավարտելով այն՝ ծառայել է Սևծովյան ռազմածովային նավատորմում որպես կուսակցական համալսարանի ավագ դասախոս և նույն համալսարանին կից կուսակցական դպրոցի պետ: 1958 թ. ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) Ժդանովի անվան ռազմածովային քաղաքական ուսումնարանը: 1961-1964 թթ. աշխատել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունում որպես ավագ ռեֆերենտ, իսկ 1964-1988 թթ.՝ սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում ավագ ռեֆերենտ, ապա՝ բաժնի վարիչ:

ՄԵԼԻՔՅԱՆ ՄԵՀԵՆԴԱԿ ԱՐՏԱՇԵՍԻ (1919-1993) – Ծնվել է 1919 թ. Լենինական քաղաքում: 1937 թ. ավարտել է Երևանի Շահու-

մյանի անվան միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: 1939-1940 թթ. 30-րդ հրետանային դիվիզիայի հետ մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: 1940 թ. նրան փոխադրել են Դնեպրոպետրովսկ և Զապորոժյե: 295-րդ օդանավակայանային սպասարկման գումարտակում նշանակվել է ռազմամթերքի մատակարարման բաժնի պիրոտեխնիկ: Նույն թվականին մասնակցել է Բեսարաբիայի ազատագրմանը:

1941 թ. հունիսին, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Մ. Մելիքյանը եղել է սահմանամերձ զորամասերից մեկում և մասնակցել է առաջին մարտերին: Եղել է Ստալինգրադի համար մղվող կատաղի մարտերում: Այնուհետև Մ. Մելիքյանին փոխադրել են Կենտրոնական ռազմաճակատ: Նա մասնակից է եղել Կուրագի տակ տեղի ունեցող հռչակավոր ճակատամարտին, Ուկրաինայի ազատագրմանը: 1943 թ. վերջին սկզբում գնդացրային վաշտի կուսկազմակերպչի, այնուհետև գումարտակի մատակարարման պետի պաշտոնով նրան ուղարկել են Երկրորդ բելառուսական ռազմաճակատ: Նա մասնակցել է Գոմելի, Բուբրույսկի, Մինսկի, 1944 թ. Լեհաստանի ազատագրմանը: Ռազմաճակատներում վիրավորվել է երկու անգամ. առաջին անգամ՝ 1943 թ.՝ Ստալինգրադի պաշտպանության ժամանակ, իսկ երկրորդ անգամ՝ 1944 թ. հոկտեմբերին Վարշավայի մատույցներում: Դնեպրի հենակետում գտնվող զորամասերին ռազմամթերք հասցնելու գործում ցուցաբերած խիզախության և Բարտույսկ քաղաքի ազատագրման համար Մ. Մելիքյանը պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ» շքանշաններով, իսկ Ստալինգրադի ճակատամարտում՝ «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալով: 1945 թ. Մեհենդակ Մելիքյանը սպայի աստիճանով զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1949 թ. ավարտել է և ընդունվել ասպիրանտուրա: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1967 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1958-1962 թթ. վարել է ԵՊՀ գիտահետազոտական բաժնի վարիչ պաշտոնը, իսկ 1967-1973 թթ.՝ որպես պրոռեկտոր ղեկավարել հրատարակչության և ար-

տասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքները: 1970-1983 թթ. եղել է ԵՊՀ պատմական մատերիալիզմի, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի վարիչ, 1983-1986 թթ.՝ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջին դեկան, 1986-1991 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: Գլխավորապես զբաղվել է ազգային հարցի հիմնախնդիրներով: Վախճանվել է 1993 թ. մայիսի 12-ին:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱԲԳԱՐԻ (1921-1992) – Ծնվել է 1921 թ. Շնող գյուղում: 1939 թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 86 ցուցադրական դպրոցը, որից հետո զորակոչվել է բանակ: 1941 թ. ավարտել է Սրետինսկի հետևակային ուսումնարանը և սկզբից մինչև վերջ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ դասակի հրամանատարից հասնելով մինչև գնդի շտաբի պետի տեղակալի պաշտոնին և կապիտանի աստիճանով ավարտելով պատերազմը Պրահայում: Մասնակցել է Մոսկվայի, Լենինգրադի պաշտպանության, Քյոնիգսբերգի, Բեռլինի գրավմանը, Չեխոսլովակիայի, Պրահայի ազատագրմանը և բազմաթիվ այլ մարտական գործողություններին: Պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով: 1945-1950 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, իսկ 1967 թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը: 1950-1951 թթ. աշխատել է Երքաղխորհրդի ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահի, 1951-1957 թթ. Երևանի ժամացույցի գործարանի տնօրենի տեղակալի պաշտոնում: Հետագա տարիներին մի շարք աշխատանքներ է իրականացրել հանրապետության կարևորագույն ձեռնարկություններում, իսկ 1983-1992 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ մատակարարման վարչության պետ: Վախճանվել է 1992 թվականին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԲԱԳՐԱՏ ԳՐԻԳՈՐԻ (1910-1992) – Ծնվել է 1910 թ. Գորիսի շրջանի Ազատաշեն գյուղում: 1923-1926 թթ. եղել է բատրակ, 1927-1932 թթ.՝ սնագործ բանվոր: 1933 թ. ավարտել է Բաքվի ինդուստրիալ տեխնիկումը և նույն տարին ընդունվել Երևանի պետական բժշկական ինստիտուտը: 1938 թ. ավարտել է և նշանակվել

Աղինի շրջանի Անիպեմզայի բանվորական ավանի հոսպիտալի և գյուղական տեղամասի բժիշկ, իսկ մի տարի հետո՝ շրջանի առողջապահության բաժնի վարիչ: 1942 թ. հունվարի 10-ին Բ. Մելքումյանը զորակոչվել է կարմիր բանակ և նշանակվել 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի ավագ բժիշկ: Նույն թվականին նրանց դիվիզիան մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Սեպտեմբերի 23-26-ին՝ Թերեք գյուղի շրջակայքում տեղի ունեցող մարտերի ժամանակ, բժիշկ Մելքումյանի ղեկավարությամբ առաջին բժշկական օգնություն է ցույց տրվել 950 վիրավոր զինվորականների, որոնք տեղափոխվել են թիկունքային հոսպիտալներ: 1943 թ. հունիսին Բ. Մելքումյանը նորից տեղափոխվել է 89-րդ դիվիզիայի 197-րդ գումարտակ և նշանակվել տեսակավորող դասակի հրամանատար, իսկ 1944 թ. ապրիլին՝ նույն բժշկական գումարտակի հրամանատար: Նովոռոսիյսկի, Կերչի և Սևաստոպոլի համար մղվող մարտերում 197-րդ բժշկական գումարտակը նրա ղեկավարությամբ թշնամու կրակի տակ բժշկական օգնություն է ցույց տվել հազարավոր վիրավորների՝ փրկելով նրանց կյանքը: Բ. Մելքումյանի հրամանատարությամբ 197-րդ բժշկական գումարտակը հայրենասիրական ու հերոսական աշխատանք է կատարել Առաջին բելառուսական ռազմաճակատում: Գումարտակի բժշկական անձնակազմը օգնություն է ցույց տվել Վիսլայի և Օդերի գետանցման ժամանակ 89-րդ դիվիզիայի վիրավորված բոլոր զորականներին: 197-րդ բժշկական գումարտակը հասել է մինչև Բեռլին: Իր գոյության ընթացքում գումարտակն առաջին օգնություն է ցույց տվել և հոսպիտալներ ուղարկել 25000 վիրավորների: Գումարտակի հրամանատար Բ. Մելքումյանը իր ծառայությունների համար պարգևատրվել է երկու «Կարմիր աստղ» շքանշաններով և 11 մարտական մեդալներով:

Բ. Մելքումյանը Հայրենական պատերազմից հետո՝ մինչև 1962 թվականը, ծառայել է մի շարք զորամիավորումներում: 1962 թ. հիվանդության պատճառով զորացրվել է և աշխատանքի անցել «Կանազի» երկրորդ բուժսանիտարական միավորումում: Հետագայում աշխատել է որպես համալսարանի առողջապահական կայանի վա-

րիչ: Վախճանվել է 1992 թվականին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԵԼՔՈՒՄ ՍԱՐՈՅԻ (1917-2007) – Ծնվել է 1917 թ. Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղում: 1937 թ. ավարտել է Շուշիի մանկավարժական բանֆակը և Սարուշեն ու Շուշիքենդ գյուղերում աշխատել որպես ուսուցիչ: 1939 թ. զորակոչվել է բանակ և անընդմեջ ծառայել է մինչև 1946 թվականը: 1941-1942 թթ. մասնակցել է Իրանում կարմիր բանակի գործողություններին: 1942 թ. գործուղվել ու ավարտել է Սարատովի ռազմաքաղաքական ուսումնարանը, ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Չորրորդ ուկրաինական ռազմաճակատ: 1944-1945 թթ. ընկել է պատերազմական գործողությունների մեջ: Մասնակցել է Լեհաստանի և Չեխոսլովակիայի տարածքների ազատագրման մարտերին: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Պրահայի ազատագրման համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Գերագույն գլխավոր հրամանատարի հատուկ հրամանով ստացել է մի շարք շնորհակալագրեր: Հաղթանակից հետո՝ 1945 -1946 թթ., Անդրկարպատյան Ուկրաինայի Տուլչին քաղաքում աշխատել է որպես պարետի տեղակալ: 1946 թ. զորացրվել է և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հոգեբանության բաժինը: 1952 թ. առաջին կարգի դիպլոմով ավարտել է այն և նույն տարում ընդունվել ասպիրանտուրա: 1955 թ. ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի: 1967-1972 թթ. եղել է ԵՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, իսկ հետագայում աշխատել է նույն ամբիոնում որպես դոցենտ: Վախճանվել է 2007 թվականին:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՌԱՖԻԿ ՍԵԴՐԱԿԻ (1923-1973) – Ծնվել է 1923 թ. Լենինականում (Գյումրի): Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է կարմիր բանակ: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից մինչև 1945 թվականը ընդմիջումներով եղել է գործող բանակում: Պատերազմի առաջին տարում եղել է Կենտրոնական

ռազմաճակատում, իսկ այնուհետև՝ Առաջին բելառուսական ռազմաճակատում: Մասնակցել է Ուկրաինայի և Բելառուսիայի ազատագրման մարտերին: Երկար ժամանակ եղել է հետախուզական ջոկատի հրամանատար և կատարել դժվարին հանձնարարություններ: Բելառուսիայի Ռելիցա քաղաքը ազատագրելու ժամանակ Ռ. Մելքումյանը վիրավորվել է, ստացել կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նա վերադարձել է և մասնակցել ֆաշիստական Գերմանիայի ջախջախման համար մղվող վերջին մարտերին: Ռ. Մելքումյանը պարգևատրվել է «Խիզախության համար», «Մարտական ծառայությունների համար» և «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Պատերազմից հետո Մելքումյանը զորացրվել է, ավարտել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, 1956 թ.՝ ասպիրանտուրան: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և մինչև 1973 թվականը աշխատել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում: Իր գիտական ու մանկավարժական ուժերի ծաղկման ժամանակ՝ 1973 թ., վախճանվել է:

ՄԻՆԱՍՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ՍՈՂՈՄՈՆԻ (1922-2000) – Ծնվել է 1922 թ. Երևանում: 1922-1939 թթ. սովորել և ավարտել է թիվ 29 դպրոցը: 1939 թ. զորակոչվելով բանակ՝ սովորել և ավարտել է Ստալինգրադի (Վոլգոգրադ) կապի ռազմական ուսումնարանը, եղել է կապի դասակի հրամանատար: 1941 թ. ծառայել է գործող բանակի զորամասերում, տարբեր ռազմաճակատներում, պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Արիության համար», «Աշխատանքային արիության համար» շքանշաններով և 10 մեդալով: Զորացրվելով բանակից՝ 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: Մինչև 1961 թվականը աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ Վեդիի շրջանի ժողկրթբաժվար: 1961 թ. մինչև իր կյանքի վերջը աշխատել է

Ն. Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանում: Վախճանվել է 2000 թվականին:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ ԷՄԻԼ ՀԱՅԿԻ (1922-1980) – Ծնվել է 1922 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում, ՀԽՍՀ վաստակավոր բժիշկների ընտանիքում: 1940 թ. զորակոչվել է խորհրդային կարմիր բանակ և ուղարկվել Թիֆլիսի հրետանային ուսումնարան: 1941 թ. կրտսեր լեյտենանտ Միրզաբեկյանը մասնակցել է Անդրկովկասի մարտերին, իսկ հետո Հարավային ռազմաճակատի ռազմական գործողություններին: 1943 թ. սեպտեմբերին Հարավային ռազմաճակատի զորքերը ազատագրել են Դոնբասը և սկսեցին շարժվել Մելիտոպոլի ուղղությամբ: Սեպտեմբերի 18-ին 150-րդ գվարդիական գունդը, որը գործում էր 11-րդ հեծելազորային դիվիզիայի 37-րդ գվարդիական հեծելազորային գնդի հետ, առաջադրանք է ստացել ազատագրելու Մալայա Տոկմաչկա բնակավայրը, որտեղով անցնում էր Բրյանսկ-Պոլոգի-Օրեխով-Զապոռոժի երկաթգիծը: Զորքերի հրամանատարը ծանր վիրավորվել էր, ուստի 150-րդ գվարդիական գնդում կռվող լեյտենանտ Միրզաբեկյանն ստանձնել է զորքի ղեկավարումը՝ հաջողությամբ իրականացնելով գործողությունը: Այդ խիզախության համար նա ստացել է «Կարմիր աստղ» շքանշան: 1944 թ. հոկտեմբերի 4-ին պարգևատրվել է նաև «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով»: Նույն թվականին դարձել է Կոմունիստական կուսակցության անդամ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Դեբրեցենսկի, Բուդապեշտի, Բալատոնսկի ռազմական գործողություններին: Պատերազմի հաղթական ավարտից հետո զորացրվել է և վերադարձել Երևան, ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1950 թ. ավարտելով ԵՊՀ-ն՝ աշխատանքի է անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: 1951 թ. դեկտեմբերին ընդունվել է այդ ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել ԽՍՀՄ ԳԱ աշխարհահռչակ Պ. Ն. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտ: 1953-1955 թթ. նույն ինստիտուտում աշխատել է որպես կրտսեր գիտաշխատող և պաշտպանել ատենախոսություն՝ ստանալով գիտությունների թեկնածուի աստիճան: 1955-1958 թթ. վերադառնալով Երևան՝ աշխա-

տանքի է անցել Բյուրականի աստղաղիտարանում նախ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, որտեղ առաջին անգամ Հայաստանում կազմակերպվել են գերբարձր հաճախականությունների գրանցման ռադիոֆիզիկական մեթոդների գիտական հետազոտություններ, դրանց կիրառումը ռադիոաստղագիտությունում: 1958-1960 թթ. եղել է Բյուրականի աստղաղիտարանի ռադիոֆիզիկայի բաժնի վարիչ: 1960 թ. հաշվի առնելով ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի աճող դերը գիտության և արդյունաբերության մեջ՝ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի և Էմիլ Միրզաբեկյանի նախաձեռնությամբ Աշտարակ գյուղում (դարձել է քաղաք 1963 թ.) հիմնադրվել է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, որի կազմակերպիչն ու անփոփոխ տնօրենն է եղել մինչև իր կյանքի ավարտը: 1971 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: 1974 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: 1974 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչում: 1974-1976 թթ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկատեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1976 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ:

Է. Միրզաբեկյանը եղել է ՀԽՍՀ-ում նոր գիտական ուղղության, ԳԲՀ ռադիոֆիզիկայի հիմնադիրն է: Նրա շնորհիվ փոխվեց ՀԽՍՀ զարգացման ուղղությունը՝ խթան դառնալով ռադիոարդյունաբերության արագ զարգացմանը: Նրա հիմնական գիտական հետաքրքրությունները առնչվել են էլեկտրամագնիսական ճառագայթման հատկությունների հետազոտություններին և նրանց կիրառմանը ռադիոֆիզիկայի ոլորտում: Ստեղծել է էլեկտրամագնիսական ճառագայթման հետազոտման սարքերի նոր դաս, առաջինն է ուսումնասիրել Արեգակի ռադիոճառագայթման բևեռացումը: Աշխատակիցների հետ ստեղծած գերզգայուն համակարգերը կիրառվել են տիեզերական հետազոտություններում: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում որպես տնօրեն մեծ աշխատանք է կատարել՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը դարձնելու մեր երկրի խոշոր և առաջատար գիտական հաստատություններից մեկը ռադիոֆիզի-

կայի, կիսահաղորդչային էլեկտրոնիկայի և էլեկտրոնային ավտոմատիկայի բնագավառներում: Ինստիտուտի աշխատանքների մի մասն ընդգրկված է եղել ԽՍՀՄ տիեզերքի հետազոտությունների ընդհանուր ծրագրում:

Գիտական հանրությունը ճանաչում էր Էմիլ Միրզաբեկյանին՝ որպես գիտնականի, որը մեծ ուշադրություն էր դարձնում երիտասարդ գիտնականների պատրաստմանն ու դաստիարակմանը: Նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվեց ռադիոֆիզիկայի ֆակուլտետը և Երևանի ճարտարապետության և շինարարարության պետական համալսարանում (Պոլիտեխնիկ)՝ ռադիոտեխնիկայի ֆակուլտետը: Վախճանվել է 1980 թ. սեպտեմբերի 16-ին Մոսկվայում, թաղված է Երևանում:

ՄԻՐՋՈՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՍԻՄՈՆԻ (1923-2017) – Ծնվել է 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Լյուլասազ (Հակոբ Կամարի) գյուղում: 1940 թ. գերազանցությամբ ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որտեղ սովորել է մեկ տարի, իսկ ապա՝ զորակոչվել բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին Ուկրաինական, Բելառուսական ռազմաճակատներում՝ իր նպաստը բերելով այդ տարածքների, ինչպես նաև Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը: Ռազմաճակատում երկու անգամ ծանր վիրավորվել է և վերադարձել ռազմաճակատ: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 1950 թ. հաջողությամբ ավարտելով բուհը՝ աշխատել է Երևանի շրջանային կուսակցական կազմակերպություններում:

1952-1953 թ. սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանին առընթեր հասարակական գիտությունների դասախոսների վերապատրաստման միամյա կուրսերում: 1953-1958 թթ. աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ավագ դասախոս: 1958-1968 թթ. աշխատել է «Հայաստանի ժողովրդական տնտե-

սության» ամսագրում՝ որպես բաժնի վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար: 1968 թ. սեպտեմբերից նորից անցել է դասախոսական աշխատանքի Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում: 1978 թ. նույն ինստիտուտում աշխատել է որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1970 թ. նրան շնորհվել է դոցենտի, ապա՝ պրոֆեսորի կոչում: 1968 թ. եղել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ: Վախճանվել է 2017 թ. Երևանում:

ՄԽՐՋՈՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ (1923 -) – Ծնվել է 1923 թ. հունիսի 5-ին Ստեփանակերտում: Ուսումն ավարտելուց հետո որպես ավագ սերժանտ և հետախույզ մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է Ղրիմի և Ստալինգրադի մարտերին: 1943 թ. աշնանը Դոմբասի համար մղվող մարտերում երրորդ անգամ ծանր վիրավորվել է, բուժվել զինհոսպիտալներում՝ դառնալով երկրորդ խմբի հաշմանդամ: Պատերազմից հետո ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Գործունեություն է ծավալել երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: 1969 թ. հրատարակվել է նրա «Ստալինգրադյան հրացոլք» փաստավավերագրական ստեղծագործությունը, որը 1974 թ. լույս է ընծայվել նաև ռուսերեն: 1985 թ.՝ Մեծ հայրենականի 40-ամյակի առթիվ, հրատարակվել է նրա «Сталинградцы-творцы победы» ստվարածավալ պատմափաստագրական հետազոտությունը: Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով և մարտական մեդալներով:

ՄԽՔԱՅԵԼՅԱՆ ԳԵԳԵՈՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ (1907-1985) – Ծնվել է 1907 թ. սեպտեմբերի 1-ին Նոր Բայազետում: 1928 թ. ավարտել է Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը: 1941 թվականի հուլիսին որպես գնդի հրամանատար մասնակցել է Տուլայի համար մղված մարտերին: 1942-1943 թթ. սովորել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում և նշանակվել գնդի հրամանատար Երկրորդ ուկրաինական ռազմաճակատում:

1943 թ. հոկտեմբերի 26-ին Դնեպրը գետանցելու և դիրքեր գրավելու համար Գ. Միքայելյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. դեկտեմբերին ծանր վիրավորվել է և ստացել կանտուզիա, բուժումը տևել է մեկ տարի, որից հետո թեև ձգտել է մեկնել ռազմաճակատ, սակայն ճանաչվել է երկրորդ կարգի հաշմանդամ՝ նշանակվելով 38-րդ դիվիզիայի 88-րդ հրաձգային գնդի հրամանատար: Հայրենական մեծ պատերազմից հետո եղել է Երևանի համալսարանի ռազմական ամբիոնի պետ, զուգընթաց ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1947-1951 թթ. ընտրվել է ՀԽՍՀ երկրորդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ: 1959 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Հերոս-ռազմիկի և գիտնականի կյանքն ավարտվել է 1985 թ. դեկտեմբերի 1-ին Երևանում:

ՄԽՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱԼԵՔՍԱՆԻ (1924-2005) – Ծնվել է 1924 թվականի դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1941 թ. տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է շրջանի Քեֆլի և Քոռաղբյուր գյուղերում: Ծառայել է խորհրդային բանակի սևծովյան նավատորմում (այդտեղից էլ հայտնի է նրա «Մարյակ» մականունը): 1942 թ. զորակոչվել է կարմիր բանակ և մինչև 1944 թ. վերջը ծառայել Սևծովյան ռազմածովային ուժերում: 213-րդ առանձին զենիթային դիվիզիոնի կազմում մասնակցել է Գելենջիկ-Նովոռոսիյսկ գծի պաշտպանությանը և պարգևատրվել «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: 1944 թվականից մինչև 1945 թ. մայիսի 9-ը Դանուբյան ռազմական նավատորմի կազմում մասնակցել է Ռումինիայի և Բուլղարիայի, ինչպես նաև Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադի ազատագրմանը: 1947 թ.՝ զորացրվելուց հետո, Վ. Միքայելյանը սովորել է Երևանի պետական համալսարանի նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և 1952 թ. ավարտել գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա, որը ավարտել է 1955 թ. և անմիջապես պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական

ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով (առանձին գրքով հրատարակվել է 1960 թ.): 1955-1959 թթ. Վ. Միքայելյանն աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: 1959-1972 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1972 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիրը:

1988 թվականից աշխատել է որպես ԳԱ պատմության ինստիտուտում բաժնի վարիչ: 1996 թվականից եղել է ՀՀ ԳԱ ակադեմիկոս, 1999 թվականից՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: 1989-1990 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրել և խմբագրել է «Գոյամարտ» շաբաթաթերթը:

1964 թ. լույս է տեսել նրա «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» առաջին գիրքը: Այն ներառում էր Ղրիմի պատմության միջնադարյան շրջանը և ավարտվում 1778 թ. ռուսական կառավարության կողմից ղրիմահայերի տեղահանությամբ: Վ. Միքայելյանն այս աշխատությունը 1965 թ. պաշտպանել է որպես դոկտորական ատենախոսություն: Այնուհետև իրար են հաջորդել Ղրիմի հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը նվիրված մի շարք մենագրություններ:

1989 թ. Վ. Միքայելյանը մեկնել է Բոն գերմանական արխիվներում Հայոց ցեղասպանության մասին նյութերի ուսումնասիրման համար: Գերմաներենի իմացությունը նրան հնարավորություն է տվել կարճ ժամանակամիջոցում ժողովելու ավելի քան 3500 արխիվային միկրոկադրեր, որից 1000-ից ավելին տեղ են գտել 1995 թ. նրա կազմած «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива м-ва иностр. дел Кайзеровской Германии» վերնագրով ժողովածուում՝ առաջաբանով, ներածությամբ և հմուտ ծանոթագրություններով: Մեծանուն գիտնականը վախճանվել է 2005 թ. մարտի 31-ին Երևանում:

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐԻ (1920-) – Ծնվել է 1920 թ. Երևանում ցեղասպանությունից փրկված վանեցու ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1939 թ., զորակոչվել է բանակ, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և Լեհաստանի,

Գերմանիայի և Ավստրիայի ազատագրման համար մղված ռազմական գործողություններին:

1945-1950 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Դեռևս ուսանողական տարիներին աշխատել է Ռադիոկոմիտեի վերջին լուրերի խմբագրությունում, եղել է Ն. Արեշյանի մշակույթի տան տնօրենը: 1952-1956 թթ. աշխատել է ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության կենտրոնական դասախոսական բյուրոյում, որի փակվելուց հետո աշխատանքի է անցել Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, իսկ այնուհետև շուրջ 10 տարի եղել է Հանրապետության գրադարանագիտության գիտամեթոդական բաժնի վարիչ: Գրադարանագիտության մեջ խորանալու նպատակով Գ. Մկրտչյանը 1958 թ. ընդունվել է Մոսկվայի գրադարանային ինստիտուտի հեռակա բաժինը և ստացել գրադարանավար-մատենագետի որակավորում: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1970 թ. աշխատանքի է անցել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի նորաբաց գրադարանային բաժնում՝ ստանալով դոցենտի կոչում:1973-1975 թթ. եղել է կուլտուրայի ֆակուլտետի դեկան:

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՇԱԿԻ (1925-) – Ծնվել է 1925 թվականի նոյեմբերի 16-ին Սարդարապատ գյուղում: 1942-1943 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1943-1945 թթ. աշխատել է ՀԽՍՀ Թալինի շրջանի Մաստարա գյուղի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1949 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1952 թ. «Սովետահայ գեղարվեստական արձակը հետպատերազմյան շրջանում» թեմայով ատենախոսություն է պաշտպանել և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1952 թվականից դասախոսել է ԵՊՀ-ում: 1946 թ. եղել է ԽՄԿԿ անդամ: 1947-1950 թթ. եղել է ՀԼԿԵՄ Երևանի

Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղարը, 1955-1961 թթ.՝ գլխավոր խմբագիր Հայպետհրատում, 1962-1963 թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության գիտության և հրատարակչությունների վարչության պետ, 1964-1967 թթ.՝ «Հայֆիլմ» կինոստուդիայի տնօրեն, 1967-1974 թթ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի մամուլի պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ: 1972-1974 թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության տնօրենը, 1974 թվականից՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեկտորը: 1996 թվականից ապրել է ԱՄՆ-ում:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՆԱՎԱՍԱՐԴԻ (1911-1984) – Ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 28-ին Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում, որտեղ էլ ստացել է նախնական կրթությունը: Այնուհետև սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1940 թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1938 թ. անդամակցել է Կոմունիստական կուսակցությանը: Մինչ պատերազմը Դիլիջանի, Ստեփանավանի և Գորիսի շրջանային թերթերում աշխատել է որպես խմբագիր: 1942 թ. հունվարի 26-ին ուղարկվել է Ղրիմի ճակատ: Մինչև 1942 թ. կեսերը ավագ քաղղեկ Մնացականյանը մասնակցել է Ղրիմի թերակղզում ծավալվող հերոսական կռիվներին: Կերչում նա ձեռնարկել է հայկական տպարանի և ռազմական թերթի ստեղծում, որտեղ նկարագրել է պատերազմի մասնակիցների հերոսական գործողությունները: 1942 թ. հոկտեմբերին տեղափոխվել է Կովկասյան ճակատ, իսկ նույն թվականի վերջից մինչև 1943 թ. սկիզբը մայոր Մնացականյանը գտնվել է 89-րդ հայկական դիվիզիայի 400-րդ հրաձգային գնդում և մասնակցել է Մալգոբեկ քաղաքի ազատագրմանը: Անդրկովկասյան ռազմաճակատի ղեկավարության կողմից պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Զորացրվել է 1946 թ. փոխգնդապետի զինվորական կոչումով: Այնուհետև զբաղեցրել է բազմաթիվ կուսակցական պաշտոններ: Դեռևս 1945 թ. դարձել է պատմական գիտությունների թեկնածու, իսկ 1951 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն,

սակայն կոչումը շնորհվել է միայն 1957 թվականին: 1966 թ. Ա. Մնացականյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Հեղինակել է 32 մենագրություն և 200 գիտական, գիտահանրամատչելի հոդվածներ: 1947 թվականից սկսած՝ դասախոսել է հանրապետության տարբեր բուհերում, այդ թվում՝ ԵՊՀ-ում, եղել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչը: Վախճանվել է 1984 թ. նոյեմբերի 16-ին Երևանում:

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍԻ (1913-1995) – Ծնվել է 1914 թ. Բաքվում: 1925 թ. ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Սիսիանի շրջան: ՀԼԿԵՄ կենտկոմի գործուղմամբ 1932 թ. ավարտել է ուսուցիչների որակավորման կարճատև դասընթացը և նշանակվել ուսուցչական աշխատանքի: 1938 թ. կամովին մեկնել է կարմիր բանակ: 1939 թ. մասնակցել է Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը, իսկ 1939-1940 թթ.՝ խորհրդա-ֆիննական պատերազմին: 1940 թ. դեկտեմբերին զորացրվել է և նորից անցել ուսուցչական աշխատանքի հայրենի Շաղաթ գյուղում: Սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, և 1941 թ. հունիսի 22-ին Մովսիսյանը նորից զորակոչվել է կարմիր բանակ: Ծառայել է Վորոշիլովի անվան 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայում որպես հրաձգային գնդի շտաբի պետի օգնական և հակատանկային կործանիչ հրետանու մարտկոցի կոմիսար: 76-րդ հրաձգային դիվիզիայի հետ Հ. Մովսիսյանը եղել է Հարավարևմտյան, Դոնի, Ստալինգրադյան և Վորոնեժի ռազմաճակատներում: 1942 թ. հունիսի 24-ին Բելայա գյուղի մոտ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: 1944 թ. օգոստոսին նրան ուղարկել են Երկրորդ ուկրաինական ռազմաճակատ, ուր նշանակվել է հակատանկային կործանիչ հրետանային մարտկոցի հրամանատար: Մասնակցել է Ռումինիայի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի տարածքների, բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ազատագրմանը: Հ. Մովսիսյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, «Խիզախության համար», «Մարտական ծառայությունների համար» «Ստալինգրադի պաշտպանության համար», «Բուդապեշտի ազատագրման համար» և այլ մեդալներով:

«Խորհրդային Հայաստան» թերթի 1943 թ. մայիսի 1-ի համա-

րում Հրաչյա Քոչարը գրել է Հովհաննես Մովսիսյանի ռազմաճակատային խիզախումների մասին. «Նա իր մարտական սխրանքներով արժանավոր տեղ գրավեց ստալինգրադյան հերոս պաշտպանների շարքերում: Ապրեց նա մեր անհաջողությունների ամբողջ ծանրությունը: Տեսավ ամեն ինչ: Մաքառեց հուսահատության դեմ և հասավ Ստալինգրադի ազատագրման համար մղվող ամենավճռական մարտերին...: Հակատանկային հրետանու կրակով նա ոչնչացնում էր ամրություններ ու դիրքեր, կրակում, փակում թշնամու ճանապարհը: Առաջին անգամ Ստալինգրադի պատերի տակ նա սվինով խոցեց իր վրա ավտոմատ բարձրացրած գերմանացուն: Ավտոմատը ցած ընկավ հիտլերականի ձեռքից: Գերմանացին, սակայն, կենդանի մնաց: Հովհաննեսը խոցեց նրան երկրորդ անգամ՝ իր ձեռքերի վրա զգալով թշնամու արյան ջերմությունը, և դիտեց գետնին թավալվող գերմանացու գալարումները: Նույնպիսի պատմություն կրկնվեց մի անգամ ևս: Տանկն անցավ նրա և ավագ լեյտենանտ Սմիրնովի մոտից՝ չնկատելով նրանց, իսկ տանկի հետևից գնում էին հինգ զինվորներ: Առանց վայրկյան կորցնելու նրանք հասան այդ զինվորներին և սվիններով խոցեցին նրանց: Այս անգամ ևս Հովհաննեսը կրկին անգամ զգաց թշնամու արյան ծանոթ ջերմությունը իր ձեռքերի վրա»:

«Խորհրդային Հայաստան» թերթը Հ. Մովսիսյանի սխրագործությունների մասին գրել է նաև իր 1943 թ. ապրիլի 23-ի համարում. «Հրամանատարներ Սմիրնովի և Հովհաննես Մովսիսյանի մարտկոցն ամբողջովին ավերեց թշնամու բները, ջարդուփշուր արեց նրանց ամրոցները»:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում իր արիությամբ ու խիզախությամբ աչքի ընկած ու ճանաչված Հ. Մովսիսյանը 1960 թվականից աշխատել է ԵՊՀ-ում որպես կադրերի բաժնի վարիչ: Վախճանվել է 1995 թվականին:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԽԱՉԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ (1919-1992) – Ծնվել է 1919 թ. սեպտեմբերի 20-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի քաղաքում: 1941 թ. զորակոչվել է բանակ և մինչև 1942 թ. օգոստոս ամիսը սովորել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանում՝ ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում:

Ռազմաճակատում ծառայել է 320-րդ հրաձգային դիվիզիայի 985-րդ հրետանային գնդում սկզբում որպես հրետանային կրակային դասակի, ապա՝ հրամանատարի տեղակալի և մարտկոցի հրամանատարի պաշտոններում: Այստեղ մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Դոնի Ռոստովի, Մելիտոպոլի, Պերեկոպի, Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի ազատագրությանը: 1944 թ. մայիսին՝ Ղրիմի միացումից հետո, որտեղ ևս մարտնչել է, ուղարկվել է Մերձբալթիկա և մասնակցել Լիտվայի և Լատվիայի ազատագրությանը: Պատերազմի ավարտին մասնակցել է Կուրլանդիայի ազատագրությանը: Խ. Մուշեղյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Կովկասի պաշտպանության» մեդալներով:

Վերադառնալով շարունակել է կիսատ թողած ուսումը Լենինականի (Գյումրի) մանկավարժական ինստիտուտում, որն ավարտել է 1948 թվականին: 1955 թվականից նշանակվել է Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ: Ուսումնասիրել է Հայաստանում գտնված դրամական հին գանձերը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ընդունված դրամակշռային համակարգերը (վաղ ժամանակներից մինչև ուշ միջնադար): Խ. Մուշեղյանը ընդհանուր և հատուկ կուրսեր է դասավանդել Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: Վախճանվել է 1992 թ. նոյեմբերի 4-ին:

ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԻ (1919-2001) – Ծնվել է 1919 թ. Երեվանում: 1939 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և նույն տարում զորակոչվել կարմիր բանակ: 1939-1940 թթ. մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի, Բելառուսիայի և Հյուսիսային Բուկովինայի ազատագրմանը: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Վ. Մուսախանյանը եղել է սահմանամերձ զորամասերում և մասնակցել հարձակվող ֆաշիստական զորքերի դեմ մղվող առաջին մարտերին: Հարավարևմտյան ռազմաճակատի տանկի հրամանատար

Վ. Մուսախանյանը մասնակցել է Լվովի, Ջոլուչևի, Կիևի, Խարկովի և Պոլտավայի պաշտպանությանը: Խարկովի մատույցներում խորհրդային զորքերի մղած պաշտպանական մարտերի ժամանակ՝ 1942 թ. դեկտեմբերին, ծանր վիրավորվել է և լուրջ վնասվածք ստանալու պատճառով զորացրվել, ապա ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ավարտել 1946 թվականին: Մեկ տարի Երևան քաղաքի դատախազությունում որպես քննիչ աշխատելուց հետո ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետին կից ասպիրանտուրա: 1951 թ. ավարտել է և նշանակվել Համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղի տնօրեն: 1954 թ., երբ մասնաճյուղը միացել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետին, Վ. Մուսախանյանը նշանակվել է հեռակա և երեկոյան ուսուցման գծով պրոռեկտոր: 1956 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1958 թ. ստացել է դոցենտի կոչում: Աշխատել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի ամբիոնում: Դասախոսական աշխատանքին համատեղ 1971-1974 թթ. նա կատարել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանի պարտականությունը: 1979-1984 թթ. աշխատել է սովետական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում: 1984-1998 թթ. եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ: Ուսումնառության տարիներին և դասախոսական աշխատանքի ժամանակ Վ. Մուսախանյանը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև համալսարանի կուսակցական ու հասարակական աշխատանքներին: 1944-1947 թթ. եղել է ԵՊՀ արհկոմի նախագահ, իսկ 1963-1964 թթ.՝ կուսակցական կոմիտեի քարտուղար: Վախճանվել է 2001 թ. սեպտեմբերի 30-ին:

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԲԵՆԻԿ ՏԻԳՐԱՆԻ (1920-1975) – Ծնվել է 1920 թ. Գորիսի շրջանի Խնճորեսկ գյուղում: 1937 թ. ավարտել է Գորիսի թիվ 1 օրինակելի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1941 թ. հունիսին

ավարտել է և նույն թվականի հուլիսի 8-ին զորակոչվել կարմիր բանակ: Մինչև 1941 թ. վերջը սովորել ու ավարտել է ԲԳԿԲ Մուրոմ քաղաքի կապի ուսումնարանը: Որպես կապի դասակի հրամանատարի նրան ուղարկել են գործող բանակ: 1942 թ. փետրվարից Բ. Յուզբաշյանը եղել է Հարավարևմտյան ռազմաճակատի զորամասերից մեկի կազմում՝ մասնակցելով Վորոշիլովգրադի, Արտեմովսկի և Խարկովի համար մղվող կատաղի մարտերին: Հյուսիսային Դոնեցկի աջ ափին տեղի ունեցող մարտերից մեկում ծանր վիրավորվել է, հոսպիտալային բուժումից հետո՝ որպես երկրորդ կարգի պահեստային սպա զորացրվել: 1943-1946 թթ. աշխատել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ: 1946 թ. ընդունվել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրա՝ «արտասահմանյան գրականություն» մասնագիտության գծով: Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1951 թ., պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նույն տարում դասախոսական աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: 1973 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և աշխատել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնում: Վախճանվել է 1975 թվականին:

ՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՐԹԵՆԻ (1926-) – Ծնվել է 1926 թ. Նոր Բայազետի (Գավառ) շրջանի Կարմիր գյուղում: 1943 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և մի քանի ամիս անց՝ 1943 թ. դեկտեմբերի 12-ին, զորակոչվել կարմիր բանակ: Սկզբում ծառայել է 88-րդ պահեստային գնդում, իսկ 1944 թ. փետրվարի 12-ին մեկնել է Երկրորդ բելառուսական ռազմաճակատ: Մասնակցել է Կալինինգրադի, Վարշավայի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: Կալինինգրադի համար մղած մարտերից մեկում վիրավորել է, հոսպիտալում ապաքինվել է և վերադարձել իր զորամասը: Պարգևատրվել է «Կալինինգրադի ազատագրման», «Վարշավայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով: Պատերազմից հետո Նազարյանը մինչև 1950 թվականը շարունակել է ծառայել

խորհրդային բանակում: 1950 թ. զորացրվել է և աշխատանքի անցել ՀԽՍՀ ներքին գործերի մինիստրությունում: 1972 թ. անցել է թոշակի: 1973 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես պարետ:

ՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՄԻՀՐԱՆԻ (1925-1976) – Ծնվել է 1925 թ. դեկտեմբերի 10-ին Գյումրիում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի մարտերին՝ Մոզդոկի և Նովոռոսիյսկի կռիվներին: 1952 թ. Երևանի տնտեսագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո՝ մինչև 1975 թվականը, աշխատել է նույն ֆակուլտետի ժողովրդական տնտեսության պլանավորման և ճյուղային էկոնոմիկայի ամբիոնում: Այդ ընթացքում ուսումնառությունը շարունակել է Մոսկվայի Լ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1967 թ. ստացել է դոցենտի կոչում: 1970-1975 թթ. նշանակվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ: Վախճանվել է 1976 թ. հունվարի 21-ին Երևանում:

ՆԱԶԻՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏԻՉԻ (1924-1999) – Ծնվել է 1924 թ. Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: 1941 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: 1942 թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1942-1944 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Կռվել է տարբեր ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկաս, Առաջին ուկրաինական և այլն: 1943 թ. մայիսին վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ՝ բուժվելու: Ապաքինվելուց հետո Խարկովի հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Կրիվոյ Ռոգի կռիվներին: Կրտսեր լեյտենանտ Ա. Նազինյանը՝ իբրև երկրորդ կարգի հաշմանդամ, զորացրվել է 1944 թ. փետրվարին և շարունակել կիսատ թողած ուսումը, որն ավարտել է 1948 թվականին: Ապա ընդունվել է ասպիրանտուրա: Արժանացել է մի շարք պարգևների: 1953 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դասավանդել ԵՊՀ-ում: 1960-1999 թթ. եղել է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանա-

հյուսության բաժնի վարիչ: Մահացել է 1999 թ. օգոստոսի 2-ին Երևանում:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԳԵՂԱՄԻ (1909-1999) – Ծնվել է 1909 թ. նոյեմբերի 25-ին Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Նախնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1927 թվականին: Նույն թվականին ընդունվել և 1931 թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը:

1931-1937 թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտում, 1938-1940 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (ԱրմՖան) պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, 1940-1941 թթ.՝ տնօրեն:

1941 թ. Մ. Ներսիսյանը մեկնել է ռազմաճակատ, թեև որպես գիտնական կարող էր և չմեկնել: Ծառայել է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Նա եղել է տարբեր զորամիավորումներում, կարդացել դասախոսություններ հայոց պատմության տարբեր թեմաներով: Երևանից նրանց զորամիավորումը ուղևորվել է Փոթի նավահանգիստ, ապա՝ Տուապսե՝ հանգրվանելով Գելենջիկի մոտ, հենց այստեղ էլ Մ. Ներսիսյանը ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Երկարատև բուժումից հետո նրան զորացրել են որպես երկրորդ կարգի հաշմանդամ:

Պատերազմից վերադառնալով՝ նա զբաղեցրել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի պաշտոնը, իսկ 1945-1946 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1946-1950 թթ.՝ ՀԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ: 1939 թ. պաշտպանել է թեկնածուական, 1946 թ. դոկտորական ատենախոսություններ: 1947 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1950 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և մինչև 1962 թվականը վարել հասարակական գիտությունների գծով փոխնախագահի պաշտոնը: 1962-1966 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի

ակադեմիկոս-քարտուղար, 1966-1977 թթ.՝ ԵՊՀ ռեկտոր: 1977 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ: 1931-1968 թթ. Մ. Ներսիսյանը գիտական գործունեությանը զուգահեռ զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով. հայ ժողովրդի պատմություն է դասավանդել Խ. Աբովյանի անվան հայկական և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտներում, ԵՊՀ-ում: 1943-1944 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, 1949-1954 թթ.՝ ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ:

Մ. Ներսիսյանը մեծ վաստակ ունի նաև գիտական կադրերի պատրաստման գործում: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական ու դոկտորական ավելի քան 20 ատենախոսություն: Մ. Ներսիսյանը հրատարակչական գործի քաջագիտակ կազմակերպիչ էր. նրա նախաձեռնությամբ 1958 թ. հիմնադրվել է «Պատմա-բանասիրական հանդեսը», որի անփոփոխ գլխավոր խմբագիրն է եղել մինչև կյանքի վերջը: 1967 թ. նա հիմնադրել է նաև «Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա հանդեսը:

Մ. Ներսիսյանը եղել է Հայաստանի կոմկուսի XV, XXIV, XXVI համագումարների պատգամավոր, բազմիցս ընտրվել ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի VII, VIII, IX գումարումների պատգամավոր: 1961 թ. Մ. Ներսիսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Լենինի«», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, «Մովսես Խորենացի» և ԵՊՀ ոսկե մեդալներով: Վախճանվել է 1999 թ. հունվարի 28-ին Երևանում:

ՇԱՏՎՈՐՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՀՈՎՍԵՓԻ (1922-) – Ծնվել է 1922 թ. Երևանում: 1940 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և նույն թվականին զորակոչվել բանակ: Ծառայել է Լիտվայի Կաունաս քաղաքում: 1941 թ. մարտին Սակրավորական զորամասը, որտեղ ծառայել է Հ. Շատվորյանը, պաշտպանողական ամրություններ է կառուցել

խորհրդա-գերմանական սահմանի երկայնքով: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը զորամասը կռվի է բռնվել գերմանա-ֆաշիստական զորքերի հետ: 1942 թ. սեպտեմբերի 15-ին՝ Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) շրջափակման ճեղքման ժամանակ, ծանր վիրավորվել է: Ապաքինվելուց հետո՝ 1943 թ. հուլիսից, նորից է մեկնել ռազմաճակատ և պատերազմն ավարտել է 1945 թ. ապրիլի 15-ին Քյոնիգսբերգ քաղաքում: Զորացրվել է 1946 թ. նոյեմբերին Արևելյան Գերմանիայի Ռոսլաու քաղաքից: 1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Աշխատել է կուսակցական տարբեր պաշտոններում: 1990-2001 թթ. աշխատել է հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվում որպես արխիվագետ, ապա բաժնի վարիչ: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1915-1992) – Ծնվել է 1915 թ. Շամխորի շրջանի Բարսամ գյուղում: 1932 թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական տեխնիկումը և անցել ուսուցչական աշխատանքի: 1937 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ավարտել է 1941 թ. և նույն տարում զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Թելավի ռազմական հետևակային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ուղարկվել Ղրիմի ռազմաճակատ: 390-րդ հայկական հրաձգային դիվիզիայում որպես գնդացրային վաշտի հրամանատար մասնակցել է Կերչի պաշտպանական մարտերին: 1942 թ. վերջին Ն. Շահնազարյանին ուղարկել են 409-րդ հայկական դիվիզիա, որը գտնվում էր Լենինականում (Գյումրի): 1942 թ. դեկտեմբերին այդ դիվիզիայի հետ մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Մասնակցել է Մոզդոկի ուղղությամբ մղվող հարձակողական մարտերին: Դեկտեմբերի վերջին Մոզդոկի տակ ծանր վիրավորվել է, հոսպիտալում ապաքինվել և որպես երկ-

րորդ կարգի հաշմանդամ զորացրվել է: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար», «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

1943 թ.՝ զորացրվելուց հետո, Ն. Շահնազարյանն անցել է կուսակցական աշխատանքի ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեում: 1944 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան, ավարտել է 1947 թվականին: 1952 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1947-1953 թթ. աշխատել է Լենինականի Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, իսկ 1953 -1969 թթ.՝ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1969 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնում որպես դոցենտ: Վախճանվել է 1992 թ. փետրվարի 25-ին Երևանում:

ՇԻՐԻՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1920-2001) – Ծնվել է 1920 թ. Ախալքալաքում: 1927 թ. ընդունվել է Ախալքալաքի հայկական միջնակարգ դպրոցը: 1940 թ. զորակոչվել է կարմիր բանակ: Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը որպես շարքային հրետանավոր ծառայել է Վլադիմիրի մարզի Կովրով քաղաքում: 1941 թ. հունիսի 22-ին՝ պատերազմի առաջին իսկ օրը, նրանց գունդը մեկնել է Բելառուսիա: Հունիսի 23-ին, երբ գունդը շարժվել է դեպի Վիտեբսկ, ընկել է պաշարման մեջ: 18 օր համառ մարտնչելով՝ դուրս է եկել շրջապատումից և պաշտպանական դիրք գրավել Սմոլենսկում: Քաղաքը պաշտպանելու համար տեղի են ունեցել կատաղի մարտեր: 1941 թ. օգոստոսի 3-ին այդ մարտերից մեկում Ս. Շիրինյանը ծանր վիրավորվել է և ընկերների օգնությամբ հասել Զվենոգորոդի հոսպիտալը: Երբ թշնամին մոտեցել է Զվենոգորոդին, նրան փոխադրել են Մոսկվայի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Կիրով քաղաքում նոր կազմակերպվող 761-րդ հրետանային դիվիզիա, որի հետ նորից մեկնել է ռազմաճակատ: Այս անգամ մասնակցել է Տուլա, Յասնի Պոլյանա, Շչեկինի քաղաքների ազատագրմանը: Շչեկինի տակ նորից ծանր վիրավորվել է և ուղարկվել Սկոպին քաղաքի

հոսպիտալ: 20 օր հոսպիտալում մնալուց հետո ինքնակամ մեկնել է Արևմտյան ռազմաճակատ: Ավելի քան 8 ամիս կռվելուց հետո երրորդ անգամ վիրավորվել է և ուղարկվել Տուլայի հոսպիտալ: Ապաքինվելուց հետո ճանաչվել է շարային ծառայության համար ոչ պիտանի և բանակից զորացրվել:

Ռազմաճակատում Ս. Շիրինյանը կատարել է հետախուզական բարդ առաջադրանքներ: Իր մի խումբ մարտական ընկերների հետ ձեռք է բերել թշնամու ուժերի դասավորման ծրագիրը, որը շատ կարևոր է եղել հարձակվող խորհրդային զորամասերի համար: Շրջապատել ու գերի է վերցրել թշնամու զրահապատ գնացքի անձնակազմին: Մարտական այդ կարգի խնդիրներ կատարելու համար նա պարգևատրվել է մեդալներով և շքանշաններով:

1945 թ. Ս. Շիրինյանը զորացրվել է և վերադարձել իր ծննդավայրը՝ Ախալքալաք: Մինչև 1952 թվականը աշխատել է մի քանի կազմակերպություններում, այնուհետև տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանում: Աշխատանքին համընթաց սովորել ու ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժինը: Հետագայում աշխատել է համալսարանի տնտեսական մասում: Վախճանվել է 2001 թ. հոկտեմբերի 26-ին Երևանում:

ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՊԱՐՈՒՅՐԻ (1915-1997) – Ծնվել է 1915 թ. Աշտարակում: 1939-1941 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ապա զորակոչվել է բանակ: Մասնակցել է Կովկասի համար մղվող կռիվներին՝ արժանանալով մարտական բազմաթիվ մեդալներ: Պատերազմի ավարտից հետո շարունակել է ուսումնառությունը և այն ավարտել 1947 թվականին: 1956 թ. ավարտել է նաև Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է որպես գրադարանավար, արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավարի կոչման: Վախճանվել է 1997 թվականին Երևանում:

ՉԱՏԻՆՅԱՆ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍԻ (1922-1992) – Ծնվել է 1922 թ. Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղում: Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը և 1938 թ. կամովին ըն-

դուվել Երևանի ռազմահրետանային հատուկ դպրոցը: 1942 թ. ավարտել է և շարունակել սովորել Թբիլիսիի ռազմահրետանային ուսումնարանում: Երկու ամիս անց, երբ ֆաշիստական զորքերը մոտեցել են Անդրկովկասի սահմաններին, Վ. Չաթինյանը ուսումնարանի մյուս սաների հետ կամովին մեկնել է Կովկասի ռազմաճակատ՝ համալրելով 34-րդ գվարդիական բրիգադան: Գվարդիական բրիգադան փակել է այն ճանապարհը, որտեղից թշնամին ցանկացել է ճեղքել Կովկասյան բանակի պաշտպանական գիծը: 1942 թ. նոյեմբերին սկսվել են առաջին կատաղի մարտերը Ստալինգրադյան ռազմաճակատում: Թշնամին կամեցել է սեղմել օղակը նաև հարավից և թևանցել Ստալինգրադը Կովկասի կողմից: Սակայն Կովկասյան ռազմաճակատի զորամասերը, այդ թվում՝ 34-րդ գվարդիական բրիգադան, որի կազմում է եղել Վ. Չաթինյանը, անառիկ են պահել իրենց գրաված դիրքերը: 1942 թ. դեկտեմբերին գվարդիական բրիգադան առաջխաղացում է կատարել և կատաղի մարտի բռնվել ֆաշիստական զորամիավորումների հետ: Վ. Չաթինյանը թշնամու հրետանու արկից ծանր վիրավորվել է և դուրս բերվել ռազմադաշտից: Վեց ամիս ապաքինվելուց հետո զինվորական ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի և որպես երկրորդ կարգի հաշմանդամ զորացրվել բանակից:

Վ. Չաթինյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1949 թ. ավարտել է և մեկնել Մոսկվա՝ ասպիրանտուրայում սովորելու: 1953 թ. ավարտել է, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտական ինստիտուտում: Մի քանի տարի ՀԿԿ կենտկոմում աշխատելուց հետո՝ 1962 թ., վերադարձել է համալսարան՝ դասախոսական աշխատանքի: 1964-1974 թթ. Վ. Չաթինյանը եղել է ապրանքագիտության և առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետի դեկանը և առևտրի էկոնոմիկայի ամբիոնի վարիչը: 1974-1988 թթ. նշանակվել է Երևանի քաղաքային խորհրդի առևտրի վարչության պետ, այնուհետև տեղափոխվել ԽՍՀՄ առևտրի նախարարության առևտրի կոնյուկտուրայի և բնակչության սպառողական պահանջարկի ուսումնասիրության համամիութենական ինստիտուտի Հա-

յաստանի մասնաճյուղ՝ որպես ղեկավար: Վախճանվել է 1992 թ. հունվարի 14-ին Երևանում:

ՇԱՐԻՖՈՎ ՍՈՒՐԵՆ ԱԼԻԵՎԻ (1922-1987) – Ծնվել է 1922 թ. Նախիջևան քաղաքում: 1933 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան, որտեղ և ավարտել է Կիրովի անվան դպրոցի 10-րդ դասարանը: 1940 թ. զորակոչվել է խորհրդային բանակ: Ավարտել է Կիևի օդաչուական զինվորական դպրոցը և մեկնել ռազմաճակատ: Որպես շտուրման մասնակցել է պատերազմական գործողություններին, ինչպես նաև Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: 1946 թ. զորացրվել է բանակից և ընդունվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1951 թ. ավարտելով այն՝ աշխատել է հայկական հեռագրական գործակալությունում որպես թարգմանիչ, որից հետո տեղափոխվել է Հայաստանի լուսավորության նախարարություն՝ աշխատելով որպես նախարարի տեղակալ: Աշխատել է նաև «Սովետէրմենեստան» թերթի խմբագրությունում: Վախճանվել է 1987 թվականին:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՒՐԱԴԻ (1922-) – Ծնվել է 1922 թ. Թբիլիսիում: 1941 թ. ավարտել է Թբիլիսիի միջնակարգ դպրոցը և նույն տարում զորակոչվել կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Մուրոմի ռազմական ուսումնարանը, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ: Առաջին անգամ Վ. Չիլինգարյանն իր մարտական մկրտությունը ստացել է 1943 թ. հուլիսին Կուրսկի տակ տեղի ունեցող ահեղ մարտերում: 308-րդ հրաձգային դիվիզիայի հետ նա 24 օրուգիշեր մասնակցել է Կուրսկի և Օրյոլի համար մղվող մարտերին: Օրյոլի ազատագրումից հետո գումարտակի կապի պետ, իսկ հետո կապի դասակի հրամանատար Վ. Չիլինգարյանը 351-րդ գնդի հետ մասնակցել է Դնեպրի գետանցմանը և Ռոգաչև ու Խլոբին քաղաքների ազատագրմանը: Ձմեռային դաժան պայմաններում Չիլինգարյանի դասակը կատարել է ամենապատասխանատու խնդիրները. թշնամու կրակի տակ անխափան կերպով նա անց է կացրել ու ապահովել կապի բոլոր միջոցները:

1942 թ. հուլիսին 120-րդ հրաձգային գվարդիական դիվիզիան, որի կազմում եղել է Վ. Չիլինգարյանը, մասնակցել է Առաջին բելառուսական ռազմաճակատի մարտական գործողություններին, Բաբրուիսկի և Մինսկի տակ եղած ֆաշիստական խմբավորումների ջախջախմանը և նույն թվականի աշնանը անցնելով Նարվա գետը՝ մասնակցել է Լեհաստանի տարածքի ազատագրմանը: Ռոժան բերդը գրավելու ժամանակ Չիլինգարյանը ծանր վիրավորվել է և ուղարկվել հոսպիտալ: Մոտ մեկ ամիս ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ: Այս անգամ որպես կապի վաշտի հրամանատար մասնակցել է Լեհաստանի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղվող մարտերին: Երրորդ բելառուսական ռազմաճակատի զորամասերի կազմում Վ. Չիլինգարյանի վաշտը բարդ առաջադրանքներ է կատարել Քյոնիգսբերգի գրավման ժամանակ: 1945 թ. սկզբին, գերագույն հրամանատարության հրամանի համաձայն, այն դիվիզիան, որի կազմում եղել է Չիլինգարյանի կապի վաշտը, տեղափոխվել է Գերմանիա և մասնակցել Օդերի գետանցմանը: Նա մասնակցել է ֆաշիստական վերջին զորամասերի ջախջախմանը գերմանական տարածքներում: Մայիսի 2-ին և 3-ին նրա վաշտը մարտնչելով անցել է Էլբա գետը և միացել դաշնակիցների զորքերին: Վերջին մարտի ժամանակ, ինչպես ասում են, կյանքը ժպտացել է Վ. Չիլինգարյանին, թշնամու գնդակը կպել է նրա շինելի կոճակին, կոտրել այն, բայց չի հասել կրծքին: Մազից փրկված Չիլինգարյանն իր մարտական ընկերների հետ միասին գերմանական հողում վայելել է այն ուրախությունը, որը համակել է խորհրդային ժողովրդին ֆաշիստական Գերմանիայի կապիտուլացիայից հետո:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում Չիլինգարյանը պարգևատրվել է տասնութ շքանշաններով ու մեդալներով, տասնչորս անգամ ստացել է շնորհակալագիր գերագույն գլխավոր հրամանատարի կողմից:

1956 թ. Վ. Չիլինգարյանը սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) կապի ակադեմիայում և նշանակվել մոտոմեխանիզացված դիվիզիայի կապի պետ: 1962-1964 թթ. դասավանդել է Թբիլիսիի

հրետանային ուսումնարանում, իսկ 1964 թվականից աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնում: Հետագայում նաև նշանակվել է այդ ամբիոնի ուսումնական մասի պետ:

ՉՈՔԱՆՅԱՆ ՕՆԻԿ ՍԱՄՍՈՆԻ (1924-2000) – Ծնվել է 1924 թ. Վրաստանի Շուլավեր ավանում, ապա ընտանիքով տեղափոխվել են Ալավերդի: 1930-1940 թթ. սովորել է Սպանդարյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտելով գերազանցության առաջադիմությամբ՝ դասավանդել է նույն դպրոցում: 1942 թ. զորակոչվել է բանակ, ծառայել է տարբեր ռազմաճակատներում: Պատերազմն ավարտել է Քյոնիգսբերգ քաղաքում: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և բազմաթիվ մեդալներով: 1945 թ. զորացրվել է և վերադառնալով Հայաստան՝ աշխատել է ուսուցիչ Մխչյան գյուղում: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: 1951-1953 թթ. սովորել է Մոսկվայի պետանվտագության հատուկ դասընթացում, ապա՝ մինչև 1955 թվական աշխատել Հայաստանի պետանվտանգության մարմիններում: Այնուհետև դասախոսական աշխատանք է վարել Երևանի մանկավարժական ինստիտուտում: Փիլիսոփայական գիտությունների գծով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և որպես դոցենտ մինչև 1988 թվականը դասավանդել Պոլիտեխնիկական ինստիտուտում: Վախճանվել է 2000 թ. Անապայում:

ՊԱՎԱԺԻՏԿՈՎ ԱՐՈՆ ԻԼՅԻՉ (1920-) – Ծնվել է 1920 թ. Ուկրաինայի Սումսկի մարզի Ռոմնի գյուղում: 1936 թ. ավարտել է տեղի ութամյա դպրոցը և անցել աշխատանքի Խարկովի Ս. Ս. Կիրովի անվան մեքենաշինական գործարանում: 1937-1941 թթ. առանց արտադրությունից կտրվելու սովորել ու ավարտել է վարպետի որակավորման կուրսերը: 1941 թ. օգոստոսին կամովին մեկնել է կարմիր բանակ: 1942 թ. հուլիսին ավարտել է Կիևի ռազմական ուսումնարանը (գտնվում էր Կրասնոյարսկում), ստացել է լեյտենանտի կոչում և դասակի հրամանատարի պաշտոնով ծառայության նշանակվել 16-րդ

առանձին գնդի գվարդիական գումարտակում: 1943 թ. հոկտեմբեր ամսին եղել է Կենտրոնական ռազմաճակատում: 1943 թ. փետրվարին Բրյանսկում տիֆով հիվանդացել է և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նրան ուղարկել են Կուրսկի ռազմաճակատ: Կապի վաշտի հրամանատարի պաշտոնով լեյտենանտ Պավժիտկովը մասնակցել է Կուրսկի տակ ֆաշիստական խմբավորման ջախջախմանը:

1943 թ. հոկտեմբերին Պովժիտկովը տեղափոխվել է Առաջին ուկրաինական ռազմաճակատ: 1943 թ. դեկտեմբերից մինչև պատերազմի հաղթական ավարտը նա եղել է Առաջին բելառուսական ռազմաճակատում: Մարտնչելով հասել է Գերմանիա, մասնակցել Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Բեռլինի գրավման համար», «Վարշավայի ազատագրման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և մի շարք այլ մեդալներով:

Ա. Պովժիտկովը մինչև 1952 թվականը ծառայել է Լեհաստանում: 1950 թ. նշանակվել է կապի հատուկ դիվիզիայի շտաբի պետ: 1955-1956 թթ. սովորել ու ավարտել է կապի ծառայության սպաների վերապատրաստման կուրսերը, որից հետո ծառայության է նշանակվել Օրենբուրգ քաղաքում: 1958-1959 թթ. եղել է կապի գումարտակի հրամանատարի տեղակալ: 1964-1970 թթ. աշխատել է Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ռազմական ամբիոնում: 1970 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1908-1999) – Ծնվել է 1908 թ. Արևմտյան Հայաստանում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար գաղթել է Երևան: Վաղ հասակում զրկվել է ծնողներից և վեց տարի եղել Երևանի մանկատներում: 1924 թ. դուրս է եկել մանկատնից և երկար ժամանակ զբաղվել բանվորությամբ: Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը աշխատել է Երևանի մի շարք հիմնարկություններում: 1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ և մինչև վերջ մասնակցել Հայրենական պատերազմին: Պատե-

րազմի առաջին տարում որպես շարքային զինվոր եղել է Արևմտյան ռազմաճակատում: Մասնակցել է Կինի, Կրասնոդոնի և ուկրաինական մի քանի այլ քաղաքների պաշտպանական մարտերին: 1942-1943 թթ. եղել է Ստալինգրադի ճակատամարտում: Արևմտյան ռազմաճակատում եղած ժամանակ վիրավորվել է, կարճ ժամանակում բուժվել և նորից վերադարձել իր զորամասը: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով:

1942 թ. Ա. Պետրոսյանը զորացրվել է և որպես մեխանիկ աշխատել Երևանի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում: 1962 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանի տնտեսական մասում որպես փականագործ: Վախճանվել է 1999 թվականին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎՍԵՓԻ (1917-1999) – Ծնվել է 1917 թ. Բասարգեչարի (Վարդինիս) շրջանի Ծովակ գյուղում: 1938 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և զորակոչվել է կարմիր բանակ՝ ծառայության նշանակվելով Բելառուսիայի ռազմական օկրուգում: Սույն թվականի նոյեմբերին ավարտել է օկրուգի զինվորական դպրոցը և նշանակվել Բելառուսիայի առաջին հրաձգային դիվիզիայում որպես քաղղեկ: 1939 թ. մասնակցել է Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը: 1941 թ. օգոստոսին գործուղվել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատի տրամադրության տակ և մասնակցել Վոլխով գետի վրա տեղի ունեցած մարտերին:

1941 թ. երբ Գերմանական ֆաշիստները հոկտեմբերի 15-ին գրավել են Կալինին քաղաքը, Պետրոսյանը 185-րդ հրաձգային դիվիզիայի կազմում որպես վաշտի հրամանատար մասնակցել է քաղաքի պաշտպանությանը: Նույն թվականի դեկտեմբերին Մոսկվայի մատույցներում, Վիսոկովսկ քաղաքի շրջանում տեղի ունեցող կատաղի մարտերի ժամանակ ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նորից վերադարձել է ռազմաճակատ և մասնակցել Սմոլենսկի մարզի Բորյատինսկ, Կազլովսկ, Միշչնսկ և Կալուգա քաղաքների ազատագրմանը:

1942 թ. նոյեմբերին Մ. Պետրոսյանը փոխադրվել է Լենինգրադի ռազմաճակատ և մասնակցել քաղաքի հերոսական պաշտպանությա-

նը: Նույն թվականի դեկտեմբերին նրան ուղարկել են Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա, որն ավարտել է 1943 թ. հունիսին և գնդի հրամանատարի տեղակալի պաշտոնով ուղարկվել ռազմաճակատ: Այս անգամ մասնակցել է Կուրսկի, Պրոխորովկայի, Աբայանի, Սումայի, Չեռնիգովի ազատագրմանը: 759-րդ գնդի կազմում մասնակցել է Դնեպրի գետանցմանը և Կիևի ազատագրմանը: 1944 թ. մարտին նրա ղեկավարած գունդը անցել է Ռումինիայի սահմանը և մասնակցել Յասսի, Բուզեռ քաղաքների ազատագրմանը: Օգոստոսին ծանր վիրավորվել է և ապաքինվելուց հետո ծառայության նշանակվել դեսանտային զորամասում: Տեսա գետի հենակետը գրավելու ժամանակ՝ 1944 թ. հոկտեմբերին, երրորդ անգամ ծանր վիրավորվել է, տեղափոխվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո նույն թվականի դեկտեմբերին որպես գնդի հրամանատար մասնակցել է Բուդապեշտ քաղաքի ազատագրմանը: 1945 թ. փետրվարին գունդը մասնակցել է Բուդապեշտի գրավմանը, որի համար Պետրոսյանը պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկի» շքանշանով: Նույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին Պետրոսյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Վեսպերմ, Ենինգ, Բալատոն քաղաքների և Ավստրիայի տարածքի ազատագրմանը:

Պատերազմից հետո Մ. Պետրոսյանը ծառայել է Ռումինիայի հարավային խմբավորումում: 1950 թ. նրան ուղարկել են Անդրկովկասյան ռազմական օկրուգի տրամադրության տակ, ուր եղել է գումարտակի հրամանատար, ապա՝ գնդի հրամանատարի տեղակալ: 1953-1959 թթ. աշխատել է ԵՊՀ ռազմական ամբիոնում որպես ավագ դասախոս: Հետագայում գնդապետ Պետրոսյանը նշանակվել է համալսարանի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ: Պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Ալեքսանդր Նևսկու», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով և 14 մեդալով: Վախճանվել է 1999 թվականին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐՏԱՇԵՍԻ (1923-) – Ծնվել է 1923 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1941 թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ կամավոր մեկնել է խորհրդային բանակ: Սովորել է Թբիլի-

սիի հրետանային զինվորական դպրոցում: 1942 թ. ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում՝ մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է պատերազմական գործողություններին առանձին կործանիչ հակատանկային դիվիզիոնի կազմում սկզբում որպես հրետանային դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատար տարբեր ռազմաճակատների հրետանային զինվորական միավորումներում: 1943-1944 թթ. երեք անգամ վիրավորվել է, ապաքինվելուց հետո նորից մեկնել ռազմաճակատ: Մասնակցել է Ուկրաինայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի և այլ երկրների ազատագրմանը: Հաղթական պատերազմը ավարտել է Բեռլինի պարիսպների տակ: Պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով և երկու տասնյակից ավելի մեդալներով: 1946 թ. զորացրվել է բանակից, հետագայում ստացել փոխգնդապետի կոչում: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և 1951 թ. ավարտելով այն՝ աշխատել է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունում: Սկսած 1959 թվականից՝ գործուղվել է արտասահման: Աշխատել է մի շարք երկրների դեսպանատներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Եգիպտոս, Լիբանան, Իրաք և այլ երկրներ)՝ ունենալով դիվանագիտական տարբեր աստիճաններ և պարտականություններ: 1973 թ. վերադառնալով Հայաստան ՝ աշխատել է Սփյուռքահայության հետ կապի կոմիտեում որպես նախագահի տեղակալ: 1977 թ. աշխատանքի է անցել Հայաստանի արտասահմանյան տուրիզմի գլխավոր վարչությունում որպես պետի տեղակալ: 1990 թ. անցել է դասախոսական աշխատանքի: Այժմ Հայրենական մեծ պատերազմի վետերանների կոմիտեի նախագահն է:

ՊԻՎԱԶՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՇԵՂԻ (1923-1994) – Ծնվել է 1923 թ. Նոր Բայազետում (Գավառ): 1941 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է կարմիր բանակ: 1942 թ. ավարտել է Թբիլիսիի հրետանային ռազմական դպրոցը, ստացել լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ: Սկզբում եղել է Հյուսիսային Կովկասի, իսկ հետո՝ Չորրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Հյուսիսային Կովկասում մասնակցել է Բատայսկ, Ռոստով, Տագան-

րոգ և Միլիտրոպոլ քաղաքների ազատագրական մարտերին: Առաջին անգամ ծանր վիրավորվել է Տագանրոգի ազատագրման ժամանակ՝ 1943 թ. գարնանը: Կոնտուզիա ստանալու պատճառով ուղարկվել է հոսպիտալ: Կարճատև բուժումից հետո վերադարձել է ռազմաճակատ և մասնակցել Միլիտոպոլի ազատագրմանը: 1943 թ. սեպտեմբերի 21-ին երկրորդ անգամ ծանր վիրավորվել է և վեց ամիս հոսպիտալում բուժվելուց հետո որպես հաշմանդամ զորացրվել բանակից: Տագանրոգ և Միլիտոպոլ քաղաքների համար մղվող մարտերի ժամանակ պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով: Զորացրվելուց հետո՝ 1944 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1949 թ. ավարտել է, սովորել ասպիրանտուրայում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953 թվականից մինչև իր կյանքի վերջը դասախոսել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: 1972-1983 թթ. ղեկավարել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը: Վախճանվել է 1994 թվականին:

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1922-1997) – Ծնվել է 1922 թ. մայիսի 27-ին Խծաբերդում: 1941 թ. ավարտել է Հադրութի մանկավարժական ուսումնարանը և որպես ուսուցիչ աշխատել է հայրենի դպրոցում: 1942-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, մասնավորապես Կովկասի համար մղվող կռիվներին: 1946 թվականին աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում, ապա հայրենի Խծաբերդ գյուղում: 1948 թ. ընդունվել է և 1953 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, իսկ 1960 թ.՝ Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն գրական դասընթացները: Մինչև 1967 թվականը աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես կրկնօրինակման ավագ խմբագիր: 1967-1971 թթ. եղել է բաժնի վարիչ ՀԽՍՀ նախարարների խորհրդի մամուլի պետական կոմիտեում: 1971-1975 թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության մանկապատանեկան գրականության խմբագրության վարիչ: Ռուսերեն լույս են տեսել Ա. Պողոսյանի «Բախտը

դժվար է տրվում» (Մոսկվա, 1966), «Հիմն հողի և արևի» (Մոսկվա, 1975) գրքերը: Վախճանվել է 1997 թ. դեկտեմբերի 2-ին:

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ ՄՆԱՑԱԿԱՆԻ (1923-2008) – Ծնվել է 1923 թ. Տավուշի շրջանի Թովուզ գյուղում: Բերդի դպրոցի 8-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի մանկավարժական ուսումնարանի 2-րդ կուրս: Ուսմանը զուգահեռ 1939-1941 թթ. զբաղվել է ուսուցչությամբ: Սկզբում որպես շարքային, ապա քիմիական դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Պողոսյանը մասնակցել է Հարավային ռազմաճակատի ռազմական գործողություններին Հյուսիսային Կովկասում՝ Դոնի Ռոստով-Մոզդոկ ուղղություններում: 1942 թ. սեպտեմբերին գերեվարվել է, իսկ հաջորդ տարվա փետրվարի 10-ին կարողացել է փախչել գերությունից և անցնել ռազմաճակատի գիծը, ինչի համար պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով: 1945 թ. զորացրվել է և ընդունվել ԵՊՀ քիմիական ֆակուլտետը, որն ավարտել է 1951 թվականին: 1952 թվականից աշխատել է ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտում, 1977-2004 թթ. եղել է Մոնոմերների և պոլիմերների քիմիայի լաբորատորիայի վարիչ:

Գ. Պողոսյանի աշխատանքները վերաբերում են օրգանական նյութերի սինթեզին: ՍԻՄ-եռազինային մոնոմերներից ստացել է բարձր հաճախական ճառագայթատեխնիկայի և մեքենաշինության համար կարևոր բարձրջերմաստիճանային պոլիմերներ, որոնց մեխանիկական կայունությունը պահպանվում է մինչև 500°C տաքացնելիս: Ակրիլամիդի հիմքի վրա ստեղծել է մոնոմեր-պոլիմեր բաղադրամասերով համակարգեր, որոնցով ներծծված հողը դառնում է առավել անջրանցիկ:

1973 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1981 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» և այլ մեդալներով, իսկ 1985 թ.՝ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով», նաև Սոցիալիստական աշխատանքի հերոս է: Վախճանվել է 2008 թ. Երևանում:

ՉՈՔԱՆՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ՄՈՎՍԵՍԻ (1923-) – Ծնվել է 1923 թ. Վրաստանի Մառնեուլի շրջանի Շուլավեր գյուղում: 1930-1940 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1940-1941 թթ. աշխատել է Թբիլիսիի Կիրովի անվան դազգահաշիհնական գործարանում: Այնուհետև վատառողջ լինելու պատճառով տեղափոխվել է Բոլնիս քաղաք ու աշխատել շրջանային խորհրդի կոմունալ տնտեսության վարչությունում: 1941 թ. զորակոչվել է բանակ: Ծառայել է Անդրկովկասյան ռազմաճակատի հակաօդային պաշտպանության զորքերում: Աչքի է ընկել Հյուսիսային Կովկասի համար մղվող մարտերում: Բանակից զորացրվելուց հետո՝ 1947-1952 թթ., սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Զբաղեցրել է մի շարք պաշտոններ հանրապետության սննդի արդյունաբերության բնագավառում, վարել է կուսակցական ակտիվ գործունեություն: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Պատվո նշան» շքանշաններով:

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ ՄԻՔԱՅԵԼԻ (1924-1992) – Ծնվել է 1924 թ. սեպտեմբերի 15-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում: Սովորել է տեղի 7-ամյա դպրոցում, ապա՝ մանկավարժական ուսումնարանում: 1940 թ. որպես ուսուցիչ աշխատել է Սիսիանի շրջանի Նորավան, այնուհետև՝ Տաթև գյուղերում: 1942 թ. Հայրենական մեծ պատերազմի ընթացքում զորակոչվել է բանակ, կռվել մի շարք ռազմաճակատներում՝ Կերչում, Ղրիմում, մասնակցել է Ուկրաինայի, Բելառուսիայի և Լեհաստանի ազատագրմանը: Զորացրվելուց հետո՝ 1946-1948 թթ., աշխատել է գյուղի դպրոցում: 1949 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ և 1954 թ. գերազանցությամբ ավարտել այն: 1954-1957 թթ. ուսումը շարունակել է ասպիրանտուրայում և հաջողությամբ պաշտպանել թեկնածուական թեզ: 1957 թ. մինչև կյանքի վերջ դասավանդել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: Վախճանվել է 1992 թ. հունվարի 18-ին:

ՋՈԹՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1913-1954) – Ծնվել է 1913 թ. մարտի 13-ին Մեծ Պարնի (Սպիտակի շրջան) գյուղում: 1931-1934 թթ. որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել

է Կիրովականի (Վանաձոր) շրջանի գյուղական դպրոցներում: 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և որպես մանկավարժ աշխատել ՀԽՍՀ Սիսիանի շրջանում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել ու զորացրվել 1943 թ. և ուսուցչությամբ զբաղվել Ստեփանավանի և Ալավերդու (Թումանյանի) շրջաններում: 1944 թվականից աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, միաժամանակ դասավանդելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում: 1949-1950 թթ. սովորել է Մոսկվայի երիտասարդ գրողների երկամյա դասընթացներում: Անավարտ է մնացել նրա Խաչատուր Աբովյանին նվիրված վեպը: Մահացել է 1954 թ. հոկտեմբերի 8-ին Երևանում:

ՋՐԲԱՇՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉԻ (1923-1999) – Ծնվել է 1923 թ. Երևանում, 1941 թ. ավարտել է Երևանի Շ. Ռուսթավելու անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին զորակոչվել կարմիր բանակ: Սկզբում սովորել է Թբիլիսիի ավիացիոն դպրոցում, իսկ հետո՝ Բաքվի հետևակային ռազմական ուսումնարանում: Ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ: Ջոկի, դասակի և ականանետային մարտկոցի հրամանատարի պաշտոնով եղել է մի քանի ռազմաճակատներում: Սկզբում ջոկի ու դասակի հրամանատարի պաշտոնով եղել է Հյուսիսային Կովկասի, Բրյանսկի, ապա՝ որպես մարտկոցի հրամանատար Երկրորդ բելառուսական և Մերձբալթյան ռազմաճակատներում: Մասնակցել է Լիտվայի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղվող մարտերին: 1944 թ. հոկտեմբերին 157-րդ ականանետային գնդի կազմում Է. Ջրբաշյանը անցել է պետական սահմանը և կատաղի մարտերից մեկում ծանր վիրավորվել: Հենց այդ ժամանակ էլ մարտական խնդիրները խիզախորեն կատարելու համար շատերի հետ պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

1944 թ. հոկտեմբերին ծանր վիրավորվելուց հետո կորցրել է ոտքը, մեկ տարի բուժվել է և որպես հաշմանդամ զորացրվել բանակից: 1945 թ. օգոստոսին Է. Ջրբաշյանը զորացրվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ և ընդունվել Երևանի պետական համալսարանի

բանասիրության ֆակուլտետ: 1950 թ. ավարտել է բուհը և ընդունվել ասպիրանտուրա: 1954 թ. պաշտպանել է թեկնածուական, 1965 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1967 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ ակադեմիկոս: 1950-1972 թթ. Է. Ջրբաշյանը դասախոսել է ԵՊՀ հայ գրականության տեսության ամբիոնում: 1972-1985 թթ. ղեկավարել է իր իսկ հիմնադրած ԵՊՀ գրականության տեսության և գեղագիտության, 1982 թվականից՝ գրականության տեսության և արտասահմանյան գրականության ամբիոնը: 1966-1970 թթ. նա աշխատել է նաև ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես գրականության տեսության բաժնի վարիչ, իսկ 1977-1999 թթ.՝ նույն ինստիտուտի տնօրեն: Մեծ է նրա ներդրումը «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման գործում:

1953-1954 թթ. եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագրի տեղակալ, 1961-1962 թթ. խմբագրել է «Սովետական գրականություն» ամսագիրը: 1967-1977 թթ. եղել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադիր խմբագիրը: 1956 թվականից ընտրվել է գրողների միության անդամ: 1970 թ. Է. Ջրբաշյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, ՀԽՍՀ պետական մրցանակների (1974, 1980): Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Կարմիր աստղ» և «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով: Վախճանվել է 1999 թ. օգոստոսի 10-ին Երևանում:

ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ (1903-1979) – Ծնվել է 1903 թ. Ղափանի շրջանի Քաջարան գյուղում: 1913 թ. ավարտել է Ծավգյուղի տարրական դպրոցը, 1914-1920 թթ. աշխատել է Բաքվի նավթահանքերում: 1920-1950 թթ. ծառայել է կարմիր բանակում: Եղել է քաղղեկ, կոմիսար և Անդրկովկասյան բանակի քաղվարչության ավագ տեսուչ: 1934-1950 թթ. աշխատել է ԽՍՀՍ Գերագույն դատարանի հատուկ դատախազությունում որպես Անդրկովկասյան բանակի ռազմահեղափոխական տրիբունալի հայկական բաժնի նախագահ: Հայրենական պատերազմի տարիներին (1941-1945 թթ.) մասնակցել է մարտերին: Եղել է Հյուսիսային Կովկասի և Ուկրաի-

նական ռազմաճակատներում: Մասնակցել է Ղրիմի, Ուկրաինայի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը և Գերմանիայի մի շարք քաղաքների գրավմանը: 1941 թ. դեկտեմբերին Ղրիմի դեսանտային գործողությունների ժամանակ ստացել է կոնտուզիա, ապաքինվել և նորից վերադարձել ռազմաճակատ: 1950 թ. հիվանդության պատճառով զորացրվել է բանակից: Ռազմաճակատներում մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Լենինի շքանշանով», «Կարմիր դրոշի», երկու «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և ավելի քան 10 մեդալով: Զորացրվելուց հետո՝ մինչև 1963 թվականը, գնդապետ Սահակյանը աշխատել է հանրապետության մի շարք կազմակերպություններում: 1963 թվականից տեղափոխվել է համալսարան և աշխատել է որպես իրավախորհրդատու: Վախճանվել է 1979 թվականին:

ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՀԱՄԱՅԱԿԻ (1918-2001) – Ծնվել է 1918 թ. Դիլիջան քաղաքում: 1938 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և մեկ տարի հետո՝ 1939 թ., զորակոչվել կարմիր բանակ: Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը ծառայել է տարբեր զորամասերում: Պատերազմը սկսվելուն պես 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի կազմում ուղարկվել է ռազմաճակատ: Կերչի ազատագրական մարտերի ժամանակ վիրավորվել է և դեռ լրիվ չապաքինված՝ դաշտային հոսպիտալից վերադարձել է իր զորամասը: Այնուհետև մասնակցել է Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը: Բեռլինից ոչ հեռու գտնվող, Ռուսկի Բրուտ կոչվող բնակավայրի մոտ խորհրդային զորքերի կողմից օղակված ֆաշիստական խմբավորումը ջախջախելու ժամանակ երկրորդ անգամ վիրավորվել է և ուղարկվել ապաքինվելու:

Մարտական գործողություններում ակտիվություն և խիզախություն ցուցաբերելու համար Սահակյանը պարգևատրվել է «Կարմիր դրոշի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, «Փառքի երրորդ աստիճանի», «Խիզախության համար», «Բեռլինի գրավման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար»

մեդալներով:

1943 թ. ամռանը Սահակյանը զորացրվել է բանակից, վերադարձել Երևան և ընդունվել պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1950 թ. ավարտել է և աշխատանքի անցել Դիլիջանի կուսշրջկոմում: 1962 թ. տեղափոխվել է համալսարան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի կոչում և աշխատել դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնում: Վախճանվել է 2001 թվականին:

ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԳԱԼՈՒՍՏԻ (1918-1984) – Ծնվել է 1918 թ. Թբիլիսիում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Ժդանովի անվան Երևանի ռուսական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից զորակոչվել է և մինչև պատերազմի ավարտը գտնվել ռազմաճակատում: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի համար մղվող կռիվներին: Վիրավորվել է, ստացել կառավարական բազմաթիվ պարգևներ, շքանշաններ և մեդալներ: Զորացրվելուց հետո վերադարձել է Երևան և ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1950 թվականին: Համալսարանն ավարտելուց հետո անցել է կուսակցական աշխատանքի: 1954-1956 թթ. եղել է Վ. Բրյուսովի անվան Երևանի ռուսական պետական մանկավարժական ինստիտուտի կուսակցական կազմակերպության ազատված քարտուղար: 1956-1958 թթ. աշխատել է Ա. Չեխովի անվան դպրոցում իբրև ուսումնական մասի վարիչ, իսկ 1968 թ. մինչև մահ նույն պաշտոնը վարել է Երևանի թիվ 122 դպրոցում: Վախճանվել է 1984 թվականին:

ՍԱՀԱԿՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ ՍՈՒՐԵՆԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Աշտարակում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո անմիջապես մեկնել է ծառայության: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, կռվել տարբեր ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Բելառուսիայում և Լեհաստանում: Պարգևատրվել է մարտական շքանշաններով ու մեդալներով: 1948-1953 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Համալսա-

րանն ավարտելուց հետո աշխատել է Երևանի վարչական և տտեսական մարմիններում:

ՍԱՀՐԱԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՄԻՍԱԿԻ (1914-) – Ծնվել է 1914 թ. Կարս քաղաքում: Թուրքական կոտորածներից ազատվելու համար նրանց ընտանիքը գաղթել և բնակություն է հաստատել սկզբում Վրաստանում, այնուհետև՝ Հայաստանում: Տասներեք տարեկան հասակում որպես փականագործի աշակերտ աշխատանքի է անցել Ալավերդու պղնձաձուլական գործարանում: 1930 թ. գործարանի և շրջանային կոմերիտական կազմակերպության ուղեգրով գործուղվել է սովորելու Երևանի ինդուստրիալ տեխնիկումում: 1933 թ. ավարտել է և աշխատել սկզբում Քանաքեռգէսի, իսկ հետո՝ Չորագէսի շինարարությունում: 1936 թ. զորակոչվել է կարմիր բանակ: 1938 թ. զորացրվել է և աշխատանքի անցել ներքին գործերի մինիստրությունում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Գ. Սահրադյանը նորից է զորակոչվել: Թբիլիսիի ռազմական ուսումնարանում վեց ամիս սովորելուց և լեյտենանտի կոչում ստանալուց հետո մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: Ծառայել է 255-րդ կրկնակի կարմիր դրոշ, Սուվորովի և Կուտուզովի շքանշանակիր ծովային դեսանտային բրիգադում և 394-րդ դիվիզիայի 815-րդ գնդում: Եղել է ականաձգային մարտկոցի հրամանատար և մասնակցել է Կերչի, Նովոռոսիյսկի, Սևաստոպոլի և Կրասնոդարի ազատագրմանը: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Կարմիր աստղ» շքանշաններով, «Խիզախության համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

Մարտերում Գ. Սահրադյանը վիրավորվել է չորս անգամ: Առաջին անգամ ծանր վիրավորվել է 1942 թ. հունվարին Կրասնոդարի մարզի Կալուժկա ավանի տակ: Երեք օր ռմբակոծված հողաթմբերի տակ մնալուց հետո գտնվել ու տեղափոխվել է հոսպիտալ: Երկրորդ անգամ ծանր վիրավորվել է 1943 թ. հուլիսին Նովոռոսիյսկի ազատագրման ժամանակ: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո նա համարվել է զոհված և գրանցվել է զոհվածնե-

րի ցուցակում:

1945 թ. վատառողջ լինելու պատճառով Գ. Սահրադյանը զորացրվել է, որոշ ժամանակ կազդուրվելուց հետո՝ աշխատանքի անցել Երևանի ալյումինի գործարանում: 1948 -1954 թթ. աշխատել է հանրապետության ներքին գործերի մինիստրությունում, 1954-1964 թթ.՝ Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում: 1972 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարան և աշխատել է ԵՊՀ ֆիզիկական կուլտուրայի դասախարակության ամբիոնում:

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԼ ՍԱՐԳԻՍ (1925-1985) – Ծնվել է 1925 թ. նախկին Հոկտեմբերյանի (Արմավիր) շրջանի Արմավիր գյուղում: 1930 թ. ընտանիքը փոխադրվել է Երևան: 1933 թ. ընդունվել է Երևանի Ս. Շահումյանի անվան դպրոցը: Ավարտելով 8-րդ դասարանը՝ ընդունվել է Երևանի ռազմական օդաչուների ուսումնարանը: 1942 թ. ավարտելով ուսումնարանը՝ 17-ամյա հասակում կամավոր մեկնել է ռազմաճակատ և կռվել գործող բանակի 52-րդ զրահատանկային բրիգադի կազմում: Վերադառնալով ռազմաճակատից՝ 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1951 թ. ավարտելով համալսարանը՝ նշանակվել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալի օգնական, իսկ հետագայում՝ Մինիստրների խորհրդի դասընթացների տնօրեն: 1955-1985 թթ. աշխատել է ՀԽՍՀ կապի նախարարությունում որպես կադրերի բաժնի պետ: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: Վախճանվել է 1985 թվականին Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆՑ ՄԱՄԻԿՈՆ ԲԱԽՇԻԻ (1902-) – Ծնվել է 1902 թ. Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տաղասար գյուղում: Տեղի 6-ամյա դպրոցն ավարտելուց հետո՝ 1923 թ., մեկնել է Աշխաբադ: Նույն թվականին մարզային ԼԿԵՄ կոմիտեի կոչով մոբիլիզացվել է և ուղարկվել՝ սովորելու կարմիր հրամանատարների կուրսերում: 1924 թ. ջոկի հրամանատարի պաշտոնով նրան ուղարկել են Աշխաբադ՝ զինվորական ծառայության: 1929 թ. Մոսկվայի ճակատամարտից հետո Պամֆիլովի գումարտակի կազմում մեկնել է Աֆղանստան՝ հատուկ առաջադրանք կատարելու համար: 1930 թ. վերադարձել է Խորհրդային Միություն և շարունակել իր զինվորական ծառայությու-

նը սկզբում Կեմկովո, ապա՝ Օմսկ քաղաքում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Մ. Սարգսյանցը սովորելիս է եղել Մոսկվայում: 1941 թ. հուլիսին նրան գնդի հրամանատարի պաշտոնով ուղարկել են Հարավարևմտյան ռազմաճակատ: Այստեղ նա մասնակցել է առաջին կատաղի մարտերին: 1942 թ. փետրվարին Կուրսկի տակ ծանր վիրավորվել է և ուղարկվել սկզբում Սարատով, իսկ հետո՝ Երևան՝ ապաքինվելու: Չորս ամիս բուժվելուց հետո նրան ուղարկել են Կրասնոյարսկ: 1943 թ. ապրիլին Մ. Սարգսյանցին գործուղել են Մոսկվա՝ Մ. Վ. Ֆրունզեի անվան ակադեմիայում սովորելու համար: 1944 թ. ակադեմիան ավարտելուց հետո նրան ուղարկել են Լեհաստան: 1945 թ. փետրվարին նրա գունդը մասնակցել է Օդեր գետի անցմանը, իսկ նույն թվականի ապրիլին ներխուժել է Բեռլինի արվարձանները: Մ. Սարգսյանցը նորից է վիրավորվել, ստացել կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ՝ ապաքինվելու: Վեց ամիս հոսպիտալում բուժվելուց հետո ծառայել է Գերմանիայի տարածքում գտնվող խորհրդային զորամասերում: 1949 թ. նշանակվել է Բեռլինի Լիխտենբերգ քաղաքամասի պարետ: 1949 թ. սկզբին Մ. Սարգսյանցին ուղարկել են Անդրկովկասի ռազմական օկրուգի տրամադրության տակ, որտեղից էլ գնդի հրամանատարի պաշտոնով ծառայության է ուղարկվել Ախալցխա: Մեկ տարի հետո՝ 1951 թ., գնդապետ Սարգսյանցը աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանի ռազմական ամբիոնում: Հետագայում նա աշխատել է համալսարանի տնտեսական մասում:

Գնդապետ Սարգսյանցը պարգևատրվել է «Լենինի», «Կարմիր դրոշի», «Սուվորովի երրորդ աստիճանի», «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով և ինը մեդալով:

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՐԳԵԼԻ (1907-) – Ծնվել է 1907 թ. Ախալքալաքում: 1934 թ. ավարտել է Թբիլիսիի մանկավարժական տեխնիկումը և նույն թվականին ընդունվել Անդրկովկասի երկաթուղային ինստիտուտի ավտոխճուղային ֆակուլտետը: Ընդամենը մեկ տարի սովորելուց հետո, տնտեսական պայմաններից դրդված, թողել է ուսումը և ուսուցչական աշխատանքի անցել Ախալքալաքի Ազարվե գյուղի միջնակարգ դպրոցում: 1940-1941 թթ. որպես ուսմասվար աշ-

խատել է Բոգդանովկայի փոքր Խանչալի գյուղում: Երբ սկսվել է Հայրենական պատերազմը, Մ. Սարգսյանը զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայել է Բաթումի մոտ ռազմական ամրոցներ կառուցող զորամասերում, որից հետո նրան ուղարկել են սովորելու: 1941-1942 թթ. սովորել է Սուխումի հետևակային ուսումնարանում: Առանց ավարտելու ստացել է ավագ սերժանտի կոչում և մեկնել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1943 թ. Նովոռոսիյսկում մասնակցել «Մալայա Զեմլյայի» դեսանտային գործողություններին:

1943 թ. փետրվարի 18-ին ծանր վիրավորվել է, զրկվել աջ ձեռքից և ուղարկվել Բաքվի հոսպիտալ: Վեց ամիս բուժվելուց հետո որպես առաջին կարգի հաշմանդամ զորացրվել է: 1943 թ. աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում որպես ԵՊՀ կենսաբանական համալիրի պահակ:

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆԻ (1913-1985) – Ծնվել է 1913 թ. Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Ամիճաշատ գյուղում: Մեծ եղեռնի ժամանակ զրկվել է ծնողներից և մինչև 1932 թվականը եղել է Բաղդադի, Երուսաղեմի և Կիպրոսի որբանոցներում: 1932 թ. գաղթել է Խորհրդային Հայաստան, աշխատել է և միաժամանակ ստացել միջնակարգ կրթություն: Ավարտել է Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը և մի շարք հիմնարկներում աշխատել որպես ինժեներ: 1941 թ. հունիսի 23-ին զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, այնուհետև տեղափոխվել Ուկրաինական ռազմաճակատ: Մասնակցել է Դոնբասի, Կրասնիլուչի, Շախտի ազատագրմանը: Մարտերից մեկում վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Հետագայում առողջությունը վատանալու պատճառով նրան Շախտի քաղաքի հոսպիտալից տեղափոխել են թիկունք՝ երկարատև բուժման: Ապաքինվելուց հետո գործուղվել է հակաօդային պաշտպանության տրամադրության տակ, որտեղ ծառայել է մինչև Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը: Զորացրվելուց հետո որպես ինժեներ աշխատել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում: 1951 թ. տեղափոխվել է համալսարան և աշխատել համալսարանում որպես կապիտալ շինարարության բաժնի պետ: Վախճանվել է 1985 թվականին:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1911-1982) – Ծնվել է 1911 թ. Սպիտակի շրջանի Համամլու գյուղում: Վաղ հասակում կորցրել է հորը և մեծացել Կիսլովոդսկի և Ժելեզնավոդսկի մանկատներում: 1922 թ. եկել է Ալավերդի և աշխատանքի մտել պղնձաձուլական գործարանում: Մինչև 1934 թ. շարքային բանվորից հասել է մինչև արտադրամասի պետի պաշտոնին և ակտիվ գործունեություն ծավալել պղնձարդյունաբերության վերականգնման ու վերակառուցման համար: 1934 թ. շրջանային կուսակցական կազմակերպության ուղեգրով մեկնել է Մոսկվայի ռազմաօդային բարձրագույն ուսումնարանը: Չորս տարի սովորելուց հետո նրան ուղարկել են ծառայության սևծովյան օդային նավատորմում: Մինչև 1940 թվականը ծառայել է թուրքական ափերի ու ջրերի վրա հսկող հետախուզական զորամասերում: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Սարգսյանը մասնակցել է կարմիր բանակի՝ Իրանում գտնվող զորամասերի գործողություններին, այնուհետև կատարել բազմաթիվ դժվարին հանձնարարություններ՝ ավիառումբեր ու ռազմամթերքներ տեղափոխելով Արևմտյան ռազմաճակատ: Զինվորական ծառայության ռեժիմով աշխատել է ավիագործարանում ու դաշտային արհեստանոցներում: Եղել է զինվորական ներկայացուցիչ Մոսկվայի ավտոգործարանում: Պատերազմի վերջին տարում ծառայել է 47-րդ կարմրադրոշ գվարդիական ավիագնդում: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և ութ մեդալով:

Պատերազմից հետո՝ 1949 թ., Ս. Սարգսյանը ծառայել է ռազմագերիների ճամբարներում, ապա՝ քաղաքացիական պաշտպանության համակարգում որպես շտաբի և ուսումնական մասի պետ: 25 տարի բանակում ծառայելուց հետո՝ 1960 թ., Ս. Սարգսյանը զորացրվել է և աշխատանքի անցել ռադիոֆիզիկայի ինստիտուտում: 1962 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարան: Սկզբում աշխատել է տնտեսական մասում, իսկ հետո՝ ֆիզիկայի ֆակուլտետի լաբորատորիայում: Հետագայում նա ֆիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի լաբորատորիայի վարիչն էր: Վախճանվել է 1982 թվականին:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳԻՍԻ (1924-1998) – Ծնվել է 1924 թ. Կիրովական (Վանաձոր) քաղաքում: 1942 թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ զորակոչվել է կարմիր բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, կռվել մի շարք ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկասում, Տուապսեում, Նովոռոսիյսկում, Գելենջիկում, որտեղ աչքի է ընկել խիզախությամբ: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով» և մի շարք մեդալներով: 1947-1952 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Ավարտելով բուհը՝ նշանակվել է «Ավանգարդ» թերթի սեփական թղթակից Կիրովական քաղաքում: 1959 թ. աշխատել է «Երեկոյան Երևան» թերթի խմբագրությունում որպես բաժնի վարիչ: Վախճանվել է 1998 թվականին:

ՍԱՐԿԻՍՈՎ ԱՐՍԵՆ ԵՐՎԱՆԴԻ (1925-1988) – Ծնվել է 1925 թ. Գրոզնիում: Դեռևս միջնակարգ դպրոցը չավարտած՝ 1943 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայության ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի սահմանապահ գունդը: Նույն թվականի գարնան ամիսներին մասնակցել է Կրասնոդարի երկրամասի ազատագրմանը: 1943 թ. ամռանը նրանց գունդը ուղարկվել է սկզբում Տափաստանային, իսկ հետո՝ Երկրորդ ուկրաինական ռազմաճակատ: Նա մասնակցել է Խարկովի, Կրիվոյ Ռոգի և Հին ու Նոր Օսկոլների ազատագրական մարտերին: Հետագայում՝ 1944-1945 թթ., լեյտենանտ Սարկիսովը եղել է գվարդիական զորամասերում և ակտիվ մասնակցություն է ունեցել Պրահայի ազատագրմանն ու Բեռլինի գրավմանը: Նա պարգևատրվել է Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով:

1951 թ. Ա. Սարկիսովը ավարտել է միջնակարգ դպրոցը, իսկ 1956 թ.՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատել է համալսարանի ռազմական ամբիոնում որպես դասախոս: Վախճանվել է 1988 թվականին:

ՍԱՐԻՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՆԵՐՍԵՍԻ (1924-2017) – Սերգեյ Սարինյանը ծնվել է 1924 թ. նոյեմբերի 17-ին Սեյտիշեն (Խաչեն) գյուղում՝ Ստեփանակերտի (Ասկերանի) շրջանում: 1941-1942 թթ. եղել է Սեյ-

տիշենի միջնակարգ դպրոցի ուսուցիչ: 1942 թ. զորակոչվել է բանակ և ծառայել 165-րդ հատուկ հրաձգային բրիգադում որպես հրետանու կապավոր: 1942 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մարտնչել է Հյուսիսային Կովկասում: 1943 թ. փետրվարին շարքային Սարինյանը Նովոռոսիյսկի շրջանի պաշտպաններից էր, որտեղ էլ փետրվարի 28-ին վիրավորվել է: Հանճնարարականների ժամանակին կատարման, խիզախության համար պարգևատրվել է «Ռազմական վաստակի համար» մեդալով: Նույն թվականի նոյեմբերին զորացրվել է և ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայերեն բաժինը, որն ավարտել է 1949 թվականին: 1949-1952 թթ. սովորել է ասպիրանտուրայում, որից հետո՝ 1953 թ., պաշտպանել է թեկնածուական, իսկ 1967 թ.՝ դոկտորական ատենախոսությունը:

1952-1958 թթ. եղել է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող, 1958-1960 թթ.՝ ավագ գիտաշխատող, 1960 թվականից՝ ԵՊՀ հայ նոր գրականության բաժնի վարիչը: 1970 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Վախճանվել է 2017 թ. հունիսի 8-ին Երևանում:

ՍԻՄՈՆՅԱՆ ԱԲԵԼ ՊՈՂՈՍԻ (1922-1994) – Ծնվել է 1922 թ. օգոստոսի 15-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Ավարտելով Գորիսի մանկավարժական տեխնիկումը՝ Խնձորեսկի, Խնաձախի, Տանձատափի դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ և տնօրեն: 1941 թ. ավարտելով Խարկովի ռազմական օկրուգի դպրոցը՝ ուղարկվել Գորկիում գտնվող Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմաքաղաքական տանկային ուսումնարան: Մասնակցել է Հարավարևմտյան ռազմաճակատի ռազմական գործողություններին: Խարկովի մոտ՝ Չուգունա քաղաքում ծավալված մարտերում նրանց բրիգադը ընկել է շրջափակման մեջ: Զոհվել է բրիգադի հրամանատարը և Սիմոնյանը իր վրա է վերցրել մարտի ղեկավարումը: 1942 թ. Նոր Սերգեյևկա բնակավայրի մոտ վիրավորվել է: Վերականգնվելուց հետո մասնակցել է

Տեմկինո, Վյազմո, Ժիզդրա երկաթգծերի ազատագրմանը: 1943 թ. մայիս-օգոստոս ամիսներին արդեն կապիտանի կոչում ստացած Սիմոնյանը Մոսկվայում սովորել է զրահատանկային զորքերի հրամանատարների պատրաստման ակադեմիայում: Մարտական գործողությունները 1944 թ. շարունակել է Առաջին մերձբալթյան ռազմաճակատում՝ անցնելով 1000 կիլոմետրանոց ռազմական ճանապարհ, ինչի համար ստացել է մայորի կոչում: 1944 թ. սեպտեմբերի 5-ին կրկին ծանր վիրավորվել է և բուժվել Տամբովում: 1945 թ. մարտից վերադարձել է մարտադաշտ և մասնակցել Երրորդ բելառուսական բանակի կողմից իրականացվող Քյոնիգսբերգի մարտերին: 1946 թ. առողջական վիճակի վատթարացման հետևանքով զորացրվել է, սակայն 1956 թ. ստիպված է եղել կրկին հագնել զինվորական համազգեստ և մասնակցել Լենինգրադում կազմակերպված պահեստային սպաների չորսամսյա դասընթացներին՝ ստանալով փոխգնդապետի կոչում:

1946-1950 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և 4 տարում ավարտել հնգամյա ծրագիրը: 1950-1953 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի կուսկոմիտեի քարտուղար, 1961-1964 թթ.՝ ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, 1965-1974՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» գլխավոր խմբագրի տեղակալ, 1974-1979 թթ.՝ գլխավոր խմբագիր, 1983 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Սովետական Հայաստանի քաղաքների և գյուղերի պատմության բաժնի վարիչ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1972 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1950-1980-ական թթ. դասավանդել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Վախճանվել է 1994 թ. հունիսի 3-ին Երևանում:

ՍԻՄՈՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԽՇԻԻ (1915-1996) – Ծնվել է 1915 թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարտակերտ ավանում: Շուշիի մանկավարժական տեխնիկումը ավարտելուց հետո մեկնել է կարմիր բանակ: 1939 թ. ավարտել է Օդեսայի հրետանային դպրոցը: Շուրջ 25 տարի ծառայել է բանակում՝ շարքային բանակայինից հասնելով փոխգնդապետի աստիճանի: 1939 թ. մասնակցել է Արևելյան Ուկրաինայի, իսկ 1940 թ.՝ Հյուսիսային Բուկովինայի

ազատագրմանը: Հայրենական պատերազմին մասնակցել է առաջին իսկ օրերից մինչև 1945 թ. մայիսը, սկզբում՝ Հարավարևելյան, իսկ հետո՝ Հարավարևմտյան ռազմաճակատներում: Պատերազմի առաջին օրերին «Պրավդայում» հրատարակվել է մի հողված, որում Խ. Սիմոնյանը բնութագրվել է որպես խորհրդային բանակի խիզախ սպա ու հայրենասեր:

1942 թ. հունիսից մինչև դեկտեմբերը և 1943 թ. փետրվարից մինչև հոկտեմբերը Խ. Սիմոնյանը մասնակցել է Չերկասի, Բրյանսկի, Սումի, Օրյոլի, Կուրսկի, Չեռնիգովի մարզերի պարտիզանական շարժումներին: 1944 թ. հոկտեմբերից մինչև 1945 թ. մայիսը եղել է Ուկրաինական ռազմաճակատներում: Մասնակցել է Բեռլինի գրավմանը և Պրահայի ազատագրմանը: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

1956-1958 թթ. եղել է ԵՊՀ զինվորական ամբիոնի դասախոս: Խ. Սիմոնյանը զորացրվել է 1961 թվականին: Ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը և 1962 թ. սեպտեմբերից աշխատել է այդ ֆակուլտետում որպես դասախոս: Վախճանվել է 1996 թ. սեպտեմբերի 5-ին:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ԼԵՎՈՆԻ (1924-1992) – Ծնվել է 1924 թվականին: Հայրենական պատերազմի սկզբից մասնակցել է ռազմական գործողություններին, մասնավորապես Հյուսիսային Կովկասի, Մոզդոկի ուղղությամբ մղվող մարտերին, հատկապես 1943-1944 թթ. ազատագրական մարտերին: Պարգևատրվել է մի շարք մարտական մեդալներով: 1947-1952 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության բաժինը: Ծավալել է լրագրողական գործունեություն: Վախճանվել է 1992 թ. Երևանում:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ (1905-) – Ծնվել է 1905 թ. Թուրքիայի Բորսիայի նահանգում: 1925 թ. որբացած եկել է Հալաստան և մինչև 1927 թ. զբաղվել է կոշկակարությամբ: 1927 թ. զորակոչվել է կարմիր բանակ և ծառայել մինչև 1929 թվականը: 1929 թ. զորացրվել է և աշխատանքի անցել Լուկաշենի անվան կոմունա-

յում: 1931 թ. տեղափոխվել է Երևանի ձեթօճառ գործարան, որտեղից էլ 1941 թ. հունիսի 25-ին նորից զորակոչվել է կարմիր բանակ: Սկզբում ծառայությունն անցկացրել է Հայաստանում, ապա մեկնել է Ստալինգրադյան ռազմաճակատ: 1943 թ. ժամանակավորապես տեղափոխվել է Կազան, որտեղից էլ մեկնել է Բելառուսական ռազմաճակատ: Մինչև 1945 թ. մայիս ամիսը եղել է քիմիական ծառայության զորամասերում: Պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով: 1945 թ. զորացրվել է, վերադարձել Երևան: 1968 թ. տեղափոխվել է համալսարան և աշխատել է տնտեսական մասում որպես բանվոր:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ԲԱԲԿԵՆԻ (1904-1986) – Ծնվել է 1904 թ. Թբիլիսիում: 1924 թ. ավարտել է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1930 թ. ավարտել է և նշանակվել պետական սանիտարական տեսուչ Ղափանում: Մեկ տարի անց նրան նշանակել են սկզբում պոլիկլինիկայի վարիչ, ապա՝ շրջանի առողջապահության բաժնի վարիչ: 1941 թ. հունիսի 22-ին զորակոչվել է կարմիր բանակ, ապա՝ ուղարկվել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ: 1941 թ. աշխատել է որպես էվակուացիոն հոսպիտալի բաժնի պետ, գումարտակի բժշկական բաժնի հրամանատար, դաշտային հոսպիտալի թերապևտիկ բաժնի պետ և այլն: 1943 թ. հուլիսին Տագանրոգի տակ ստացել է կոնտուզիա և ուղարկվել հոսպիտալ: Ապաքինվելուց հետո ճանաչվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ և աշխատել թիկունքային զորամասերում: 1943 թ. օգոստոսին նրան նշանակել են Երևանի կայազորի հոսպիտալի թերապևտիկ բաժանմունքի ավագ օրդինատոր, 1956 թ. սեպտեմբերից մինչև 1961 թվականն աշխատել է բուժական գումարտակի հոսպիտալում, 1961 թ. զորացրվել է և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանի քաղաքացիական պաշտպանության ամբիոնում:

Վ. Տեր-Խաչատրյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի

պաշտպանության համար» և այլ մեդալներով: 1958 թ. նրան շնորհվել է վաստակավոր բժշկի կոչում: Վախճանվել է 1986 թվականին:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԵՐՎԱՆԴԻ (1918-2001) – Ծնվել է 1918 թ. Թբիլիսիում: 1935 թ. ավարտել է Երևանի Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի անվան) միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1940 թ. ավարտել է և զորակոչվել կարմիր բանակ: Վեց ամիս Խարկովի տանկային կուրսերում սովորելուց հետո ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում և ուղարկվել ռազմաճակատ՝ մասնակցելով Դվինսկի, Ռիգայի, Լեհաստանի ազատագրմանը և Սաքսոնիայի համար մղված վճռական մարտերին: Լեյտենանտ Տեր-Մինասյանը վիրավորվել է 1944 թ. սեպտեմբերին Ռիգայի համար մղվող մարտերից մեկում: Ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

1946 թ. Լ. Տեր-Մինասյանը զորացրվել է և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում: 1957 թ. տեղափոխվել է անօրգանական քիմիայի ինստիտուտ և նշանակվել հետազոտական լաբորատորիայի վարիչ: 1961-1963 թթ. աշխատել է Քարի և սիլիկատի ինստիտուտում, 1964-1970 թթ.՝ Մինիստրների խորհրդի քիմիական արդյունաբերության վարչությունում: 1970 թվականից աշխատել է համալսարանում, դասավանդել Քիմիայի ֆակուլտետ: Վախճանվել է 2001 թվականին:

ՈՒԶՈՒՆՅԱՆ ՄԱԿԻՉ ԻՎԱՆԻ (1925-1982) – Ծնվել է 1925 թ. սեպտեմբերի 23-ին Շամխորի շրջանի Բարսում գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո որպես ուսուցիչ է աշխատել գյուղի դպրոցում: Ապա զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, կռվել տարբեր ռազմաճակատներում՝ Գրոզնուց մինչև Չեխոսլովակիայի ազատագրում: Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով և պարգևներով: Զորացրվելուց հետո՝ 1945-1950 թթ., սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, ապա ընդունվել ասպիրանտու-

րա՝ «քրեական իրավունք» մասնագիտությամբ: Միաժամանակ աշխատել է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում և Համամիութենական իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում որպես դասախոս: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953 թվականից եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, 1980 թ. հունվարից՝ ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ գիտական աշխատանքների գծով: Վախճանվել է 1982 թ. ապրիլի 17-ին:

ՈՒԼՈՒՆՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ (1924-2003) – Ծնվել է 1924 թ. Սիմֆերոպոլում, իսկ պատանեկությունը անցել է Թբիլիսիում, որտեղ 1941 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: 1942 թ. Հ. Ուլունյանը զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել պատերազմական գործողություններին, որոնք ավարտել է Ավստրիայում: Պարգևատրվել է «Կիրիլ և Մեֆոդի առաջին աստիճանի» և «Կիրիլ և Մեֆոդի երկրորդ աստիճանի», նաև «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և մի շարք մեդալներով: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը որն ավարտել է 1951 թվականին: Նույն թվականին ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան: 1953 թ. գործուղվել է ԽՍՀՄ ԳԱ սլավոնագիտոթյան ինստիտուտը և որոշ ժամանակ անց դարձել է գիտաշխատող: Բուլղարների պատմության ազատագրական շրջանին վերաբերող ատենախոսությունը Հ. Ուլունյանը պաշտպանել է հենց Բուլղարիայում և դարձել պատմական գիտությունների թեկնածու: Վախճանվել է 2003 թվականին:

ՓԱԽԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԹՈՐՈՍԻ (1921-1986) – Ծնվել է 1921 թ. Աջարական ԻԽՍՀ Բաթումի քաղաքում: Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Վրացական ԽՍՀ Ախալքալաք քաղաք, որտեղ նա ստացել է սկզբնական կրթություն, այնուհետև՝ 1938 թ., ավարտել Ախալքալաքի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել նույն շրջանի Վաչիան գյուղի միջնակարգ դպրոցում որպես մանկավարժ, որտեղ աշխատել է մինչև 1942 թվականը: 1942 թ. հունվարին ընտրվել է Ախալքալաքի շրջանի ԼԿԵՄ առաջին քարտու-

ղար: 1942 թ. օգոստոսին ընդունվել է Մախաչկալայի ռազմահետևակային ուսումնարանը, ավարտել է 1943 թ. և որպես վաշտի հրամանատար զորակոչվել ռազմաճակատ: 1944 թ. մայիսի 10-ին զորացրվել է ծանր վիրավորված: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: 1945 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ՀԿԿ ԿԿ ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում որպես հրահանգիչ:

1953 թ. Ս. Փախլանյանը նշանակվել է ՀԽՍՀ պետպլանի կուլտուրայի և կենցաղի բաժնի պետ, իսկ 1973 թվականից մինչև իր մահը աշխատել է որպես կրթության բաժնի պետ: Վախճանվել է 1986 թվականին:

ՓԻԼՈՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՎԵԼԻԽԱՆԻ (1925-) – Ծնվել է 1925 թ. Լենինականում (Գյումրի): 1943 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է կարմիր բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, մասնավորապես Կովկասի պաշտպանական կռիվներին, որտեղ ծանր վիրավորվել է: Պարգևատրվել է մի շարք մարտական մեդալներով: Ապաքինվելուց հետո ընդունվել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը: 1948 թ. փոխադրվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն ավարտել է 1952 թվականին: 1954 թ. ընդունվել է Մոսկվայի Վ. Լենինի անվան պատմության ամբիոնի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական թեզ: Ասպիրանտուրայում սովորելուն զուգահեռ դասախոսական աշխատանք է կատարել ինստիտուտում և Երևանի մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանում: 1962 թ. ապրել և աշխատել է Մոսկվայում՝ դասավանդելով տեղի բուհերում:

ՔԵՉԵՉՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԴԵՎՈՍԻ (1924-) – Ծնվել է 1924 թ. Կրասնոդար քաղաքում: 1941 թ. ավարտել է Կրասնոդարի թիվ 24 միջնակարգ դպրոցը: 1941 թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է մի շարք ռազմական կարևորագույն գործողությունների Ուկրաինական, Բելառուսական ռազմաճակատներում: 1944 թ.

զորացրվել է վիրավոր լինելու պատճառով: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, «Արիության համար» և տասը այլ մեդալներով: 1946 թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և 1950 թ. սովորելուն զուգընթաց աշխատել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում որպես Մարքսիզմ-լենինիզմի կաբինետի վարիչ: 1953 թ. զբաղեցրել է կուսակցական և պետական տարբեր պաշտոններ: 1972 թ. նշանակվել է «Հայգիրք» հանրապետական վարչության պետ և ՀԽՍՀ հրատպետկոմի կոլեգիայի անդամ: 1978 թ. տեղափոխվել է աշխատանքի ՀԽՍՀ մինիստրների խորհրդին կից հայրենադարձության կոմիտե՝ որպես ընդունման ու տեղավորման վարչության պետ: Մինչև 1989 թ. աշխատել է Երևանի պատմության թանգարանում որպես բաժնի վարիչ:

ՓԵՅՐԻԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ (1920-1990) – Ծնվել է 1920 թ. հունվարի 1-ին Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է քիմիական տեխնիկումում և աշխատանքի անցել Երևանի «Կաուչուկ» գործարանում: Հայրենական պատերազմի հենց սկզբից կամավոր մեկնել է բանակ: Մասնակցել է Ստալինգրադի, Կուրսկի ճակատամարտերին: Հաղթանակը դիմավորել Բուդապեշտում: Մեկ տարի մասնակցել է Չելյաբինսկ քաղաքի վերականգնողական աշխատանքներին: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և պատվոգրերով: 1948-1953 թթ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Կարճ ժամանակ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռազմական ամբիոնում աշխատելուց հետո տեղափոխվում է նույն ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոն, որտեղ աշխատել է շուրջ 40 տարի:

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԳԵՎՈՐԳԻ (1924-) – Ծնվել է 1924 թ. Իջևանի շրջանի Իջևան գյուղում: 1942 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և զորակոչվել կարմիր բանակ: Եղել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում: Մասնակցել է Օրջոնիկիձեի, Գրոզնիի ազատագրման մարտերին: 1943 թ. նրան տեղափոխել են Կենտրոնական ռազմաճակատ: 136-րդ գվարդիական հրաձգային գնդի կազ-

մում որպես գնդացրորդ մասնակցել է Կուրսկի տակ տեղի ունեցող մարտերին: 1943 թ. փետրվարին վիրավորվել է: Ապաքինվելուց հետո վերադարձել է Կենտրոնական ռազմաճակատ: Երկրորդ անգամ վիրավորվելուց հետո զորացրվել է: Պարգևատրվել է «Փառքի առաջին աստիճանի» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով:

1943 թ. նոյեմբերին Ա. Օհանյանը զորացրվել է և մինչև 1971 թվականը աշխատել Իջևանի ժողովրդական տնտեսության հաշվառման բաժնում: 1971 թվականից աշխատել է պետական համալսարանում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Լրացավ Մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100- ամյակը, որը մեր ժողովրդի նորագույն պատմության կարևորագույն իրադարձություններից է: Լինելով հայ ժողովրդի 20-րդ դարի ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ ԵՊՀ-ն, իր գոյության 100-ամյա տարիներին զարգանալով ու հզորանալով, դարձել է հանրապետության ուսումնագիտական ու կրթամշակութային խոշոր կենտրոն, ակնառու նվաճումների է հասել Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների համար բարձրորակ կադրերի պատրաստման գործում: ԵՊՀ-ն, ունենալով դեռևս 5-րդ դարում ձևավորված և շարունակվող միջնադարյան համալսարանների՝ Սանահինի ու Հաղպատի (10-րդ դ.), Անիի (11-րդ դ.), Գետիկի, Կարսի, Կեչառիսի, Գլաձորի, Տաթևի և Կիլիկյան Հայաստանի՝ Սսի, Տարսոնի, Սկևռայի, Լամբրոնի (11-15-րդ դդ.) ուսումնակրթական հարուստ փորձն ու ավանդույթները, իր ստեղծման առաջին օրվանից խորհրդանշելով հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը՝ կարողացավ իր շուրջը համախմբել ոչ միայն հանրապետությունում աշխատող, այլ նաև արտասահմանում կրթություն ստացած հեղինակավոր հայ մտավորականության մեծ մասին, որոնք իրենց կարողությունները ներդրեցին բարձրագույն կրթությամբ սերունդներ պատրաստելու, մեր երկրի զարգացման, անկախ պետականության ստեղծման, կայացման ու հետագա ամրապնդման գործում:

Հայտնի է, որ օտար նվաճողների արշավանքների և մասնավորապես պարսկա-օսմանյան տիրապետության շրջանում Հայաստանում կրթական գործը խիստ անկում ապրեց: Փակվեցին գրեթե բոլոր դպրոցներն ու համալսարանները: Այս մղձավանջային տարիներին հայ մշակութային կյանքը ինչ-որ չափով զարգանում էր Հնդկաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների հայ գաղթավայրերում: Հայ մշակույթի և դպրոցական կյանքի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրվելուց և Ռուսաստանի կազ-

մի մեջ մտնելուց հետո: Դպրոցներ բացվեցին Թիֆլիսում, Երևանում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում և մի շարք այլ վայրերում: Արևելահայ իրականության մեջ հայ մշակույթի զարգացմանը հատկապես մեծ ծառայություններ մատուցեցին Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1815-1918), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824-1921) և Գևորգյան ճեմարանը (հիմնադրվել է 1874 թ.): Այս հաստատությունները անգնահատելի դեր խաղացին 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին մանկավարժական կադրեր՝ հայագետներ, արևելագետներ ու այլ ոլորտի գիտնականներ պատրաստելու գործում, միաժամանակ նպաստեցին և հնարավորություն տվեցին հայ երիտասարդությանը հաղորդակցվելու ռուսական և արևմտաեվրոպական մշակույթին, գիտությանն ու առաջավոր մտքին: Հայաստանում և Այսրկովկասում բարձրագույն ուսումնական հաստատությունների բացակայությունը ստիպում էր ուսումնատենչ հայ երիտասարդությանը ուսումնառության մեկնել Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի, Լայպցիգի, Վիեննայի, Բեռլինի, Փարիզի, Ժնևի և եվրոպական այլ քաղաքների համալսարաններ, ինչը, սակայն, քչերին էր հաջողվում:

Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատության անհրաժեշտությունը 19-րդ դարում նշել են Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Ստեփանոս Նազարյանցը և շատ ուրիշ երախտավորներ: Հայկական համալսարան ստեղծելու գաղափարը ջերմորեն պաշտպանել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա նշել է, որ անհրաժեշտ է հիմնադրել հայկական համալսարան, որտեղ բարձրագույն գիտությունները կավանդվեն հայերեն լեզվով: Սեփական համալսարան ունենալու մեր ժողովրդի բաղձանքը իրականացավ միայն հայոց պետականության վերականգնումից հետո՝ 1918-1920 թթ.՝ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին: Իր գոյության մեկ տարին դեռ չբոլորած՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը 1919 թ. մայիսի 16-ին ընդունեց համալսարանի հիմնադրման մասին որոշումը, որով նախատեսվում էր հիմնել Երևանում համալսարան հետևյալ չորս բաժիններով՝

ա) պատմալեզվաբանական,

բ) տնտեսահրավաբանական,

գ) բժշկական,

դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումներով:

1919-1920 ճեմարանական տարում առաջին հերթին որոշվեց բացել պատմալեզվաբանական բաժինը: Քանի որ Երևանում շենքային պայմաններ չկային նման կրթական հաստատություն հիմնելու համար, ուստի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առևտրայի դպրոցի շենքում՝ խորհրդարանի փոխնախագահ Ա. Սահակյանի, վարչապետ Ա. Խատիսյանի, հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի, բարձրաստիճան այլ պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագետների ներկայությամբ: Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր, տեսուչ Յ. Ղամբարյանը, ապա ելույթ ունեցավ Ն. Աղբալյանը՝ նշելով. «Չնայած, որ մեր երկիրն ավերված է, մեր ժողովուրդը աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան… Այս համալսարանում միտքը լինելու է մատչելի ամենքի համար, մտնելը լինելու է հեշտ՝ ելնելը դժվար, ուսումը լինելու է ծրի, գիտությունը պիտի վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքին Հայաստանում»: Այնուհետև արարողությունը վերածվել է տոնախմբության: Առաջին կիսամյակի դասերն սկսվեցին 1920 թ. փետրվարի 1-ից՝ տևելով մինչև մայիս ամիսը: Առաջինը բացվեց պատմալեզվաբանական ֆակուլտետը (262 ուսանող, 32 դասախոս): Հանրապետության բուհերի առաջնեկի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրումը բացառիկ իրադարձություն էր, քանզի մի քանի հարյուրամյակների ընդմիջումից հետո վերականգնվեց հայ համալսարանական կյանքը: Հայ երիտասարդությունը հնարավորություն ունեցավ բարձրագույն համալսարանական կրթություն ստանալու մայրենի լեզվով, իսկ օտար երկրներում դեգերող հայ մտավո-

րականությունը՝ վերադառնալու Հայաստան և լծվելու հայրենիքի մշակութային կյանքի վերածննդի գործին:

Գնահատելով Երևանի պետական համալսարանի հսկայական դերն ու նշանակությունը հայ ժողովրդի և Հայաստանի համակողմանի զարգացման գործում՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1923 թ. գրել է. «Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում, նրա համար միջոցներ չպետք է խնայել, ինչպես և գրագիտության տարածման համար: Սրանք համարժեք և կենսական մեծություններ են, որովհետև համալսարանն այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիր ու ընթերցանություն տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: …Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանալու է շարունակ ու անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանն այդ սիրտն է»: Երևանի պետական համալսարանի հիմնադրումը ցնծությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից և առաջ բերեց հսկայական ոգևորություն ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Արձագանքելով հանրապետության կառավարության և նորաստեղծ համալսարանի ղեկավարության հրավերին՝ հայրենիք վերադարձան մի շարք տաղանդավոր հայ մտավորականներ, մանկավարժ-գիտնականներ՝ Մոսկվայից, Պետրոգրադից, Թիֆլիսից, Բաքվից և եվրոպական երկրներից: Համալսարանում դասախոսական աշխատանքի անցան նաև Գևորգյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի մի խումբ ականավոր մանկավարժներ: Համալսարանի առաջին դասախոսները դարձան հայագիտության ավագ սերնդի ներկայացուցիչներ՝ Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Ստեփան Մալխասյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Գարեգին Հովսեփյանը, Սիրեկան Տիգրանյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արսեն Տերտերյանը, իրավաբան Գրիգոր Չուբարյանը, մանկավարժ-հոգեբան Գուրգեն Էդիլյանը, քիմիկոս Ստեփան Ղամբարյանը, բնագետներ Ավետիք Տեր-Պողոսյանը, Պապա Քալանթարյանը, մեխանիկոս Ալեքսանդր Հակոբյանը, բժիշկ Վահան Արծրունին և ուրիշներ: Կարճ ժամանակ անց Երևանի համալսարան հրավիրվեցին Ռուսաստանում և Եվրոպայում կրթու-

թյուն ստացած մանկավարժական ու գիտական մեծ փորձառությամբ անվանի մասնագետներ Հրաչյա Աճառյանը, Լեոն, Ցոլակ Խանզադյանը Թադևոս Ավդալբեկյանը, Գրիգոր Արեշյանը, Գևորգ Ասատուրը, Հովհաննես Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Լևոն Ռոտինյանցը, Հարություն Անժուրը, Սպանդարատ Կամսարականը, Համբարձում Քեչեկը և ուրիշներ: Հետագայում համալսարանի դասախոսական կազմը աստիճանաբար համալրվեց բարձրորակ նոր մասնագետներով: Երևանի համալսարանում աշխատող դասախոսները Ռուսաստանի ու Եվրոպայի առաջնակարգ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած, մի քանի լեզուների տիրապետող, մեծ համբավ ունեցող գիտնականներ ու մանկավարժներ էին, որոնք, հայրենասիրությունից դրդված, գերադասեցին թողնել արտասահմանում ստացած բարձր աշխատավարձն ու բարեկեցիկ կյանքը, վերադառնալ սեփական հայրենիք և բազմաթիվ ծանր ու դժվարին իրավիճակներում դիմանալով զանազան զրկանքների ու փորձությունների՝ ստեղծել լավագույն ավանդույթներ ու դաստիարակել մտավորականների մի ամբողջ սերունդ: ՀՀ նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի նիստում որոշվեց համալսարանը տեղափոխել Երևան՝ նրան տրամադրելով Երևանի սեմինարիայի շենքը (ներկայիս Սև շենքը – Է. Մինասյան), որտեղ համալսարանի պարապմունքները պետք է վերսկսվեին հոկտեմբերի 16-ին, սակայն թուրք-հայկական պատերազմի, քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումն իրագործել: Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երևանում: Ելնելով այդ իրողությունից և հատկապես գիտակրթական այդ կարևորագույն օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից՝ շուրջ տասնամյակներ շարունակ անտեսվել են առաջին հանրապետության օրոք արված ձեռնարկումներն և այդ մասին եղած համապատասխան փաստաթղթերը: Մինչդեռ որքան էլ ակնհայտ էր նորաստեղծ խորհրդային իշխանության ատելությունը նախորդի հանդեպ, այնուամենայնիվ կարևորելով նրա ստեղծած համալսարանի գոյության պատմական փաստը՝ որոշվեց ոչ թե փա-

կել, այլ պարզապես վերակազմել այն՝ հարմարացնելով իր շահերին ու խնդիրներին: Այդ է փաստում ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանը՝ «Երևանը համալսարանի վերակազմելու մասին»:

1921 թ. հունվարի 23-ին՝ շուրջ մեկամյա նախապատրաստական աշխատանքներից հետո, տեղի ունեցավ համալսարանի բացման պաշտոնական հանդիսությունը: Հունվարի 24-ին սկսվեցին համալսարանի պարապմունքները: Նույն թվականի հունվարի սկզբին դեռևս համալսարանի խորհրդի առաջին նիստում գաղտնի քվեարկությամբ համալսարանի ռեկտոր ընտրվեց ականավոր պատմաբան, Ենայի, Պետերբուրգի և Դորպատի համալսարանները ավարտած, հետագայում ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը: Նա կոչ արեց, որ հայ առաջավոր մտավորականությունը աշխարհի բոլոր ծայրերից վերադառնա հայրենիք և ծառայի իր ժողովրդին ու երկրին: Անդրադառնալով Երևանի պետական համալսարանի խնդիրներին՝ նա նշեց. «Ես ապրում եմ միայն համալսարանի ստեղծագործման գաղափարներով, որը համարում եմ այս երկրի համար ամենախոշոր գործը և վերաշինության և վերածնության միակ ուղիղ ճանապարհը: Իմ ամբողջ կյանքը միմիայն կապված է համալսարանի հետ»: Անհրաժեշտ է նշել, որ վերը թվարկված առաջավոր մտավորականների հայրենասիրական նախաձեռնության շնորհիվ համեմատաբար կարճ ժամանակում լուծվեց բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ ունենալու խնդիրը, մինչդեռ երկրի ծայրաստիճան քայքայված տնտեսության պայմաններում անչափ ծանր ու դժվար էր նրա նյութատեխնիկական բազայի ստեղծումը: Չնայած դժվարություններին՝ հետևողականորեն լուծվեց համալսարանի նյութատեխնիկական բազան անընդհատ մեծացնելու և նրա աճող պահանջներին համապատասխան դարձնելու հիմնախնդիրը:

Վերաբացված համալսարանն ուներ երկու ֆակուլտետ՝ հասարակագիտական և բնագիտական: 1921 թ. հոկտեմբերին արդեն գործում էր հինգ ֆակուլտետ՝ բնագիտական, արևելագիտական, տեխնիկական, մանկավարժական և սովետական շինարարության: Նույն

տարվա նոյեմբերին բնագիտական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեց գյուղատնտեսական ֆակուլտետը, իսկ 1922 թ.՝ բժշկականը: Արդեն համալսարանի գոյության առաջին տարիներին կազմակերպվեցին ամբիոններ, ուսումնական կաբինետներ, լաբորատորիաներ, գրադարան, ընթերցարան: 1922 թվականից սկսած՝ պրոֆեսորադասախոսական կազմը լուրջ աշխատանքներ սկսեց մայրենի լեզվով դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, օժանդակ նյութերի ստեղծման ու հրատարկման ուղղությամբ: 1927 թ.՝ համալսարանում հրատարակչական-տպագրական հատուկ մարմնի ստեղծումից հետո, հրատարակչական գործը ավելի բարենպաստ ընթացք ստացավ:

Առաջին ուսումնական տարում համալսարանում սովորում էր ընդամենը 255 ուսանող, սակայն ուսումնառության թվի մշտական աճի շնորհիվ 1929-1930 ուստարում այդ թիվը հասավ 1316-ի, իսկ Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին՝ 1940-1941 ուստարում այն կազմում էր 1461 ուսանող: Այդ նույն ժամանակ համալսարանն ուներ ութ ֆակուլտետ՝ բանասիրական, պատմության, իրավաբանական, տնտեսագիտական, կենսաբանական, քիմիական երկրաբանական, աշխարհագրական և ֆիզիկամաթեմատիկական: Այս ֆակուլտետներում դասավանդում էին 19 պրոֆեսորներ, 54 դոցենտներ, 94 ավագ դասախոսներ և 54 ասիստենտներ: 1940 թ. համալսարանում գործում էր 41 ամբիոն, որտեղ սովորում էին 68 ասպիրանտներ:

Մինչև Հայրենական մեծ պատերազմը Երևանի պետական համալսարանը դարձել էր արդեն բարձրագույն կրթությամբ մասնագետ կադրերի պատրաստման մեծ դարբնոց: Իր գոյության 20 տարիների ընթացքում (1920-1940) համալսարանը հանրապետության ժողովրդական տնտեսությանը տվել է 2540 մասնագետ կադրեր, այդ թվում ՝ 491 տնտեսագետ, 282 բանասեր, 276 քիմիկոս, 228 կենսաբան, 219 իրավաբան, 203 պատմաբան, 198 ֆիզիկոս և մաթեմատիկոս, 72 աշխարհագրագետ, 71 երկրաբան, իսկ առաջին տասը տարիների ընթացքում (նախքան բժշկական, գյուղատնտեսական, տեխնիկական, ֆակուլտետների առանձնացումը և ինքնուրույն բուհեր

կազմակերպելը) նաև 279 գյուղատնտես, 137 բժիշկ և 47 ճարտարապետ: 1928 թ. սկզբից մինչև 1940 թ. վերջը ասպիրանտուրան ավարտեց 67 մարդ:

Մինչև Հայրենական մեծ պատերազմը սոցիալիզմի կառուցման հիմնական ժամանակաշրջանում համալսարանը արդյունաբերացման և կոլեկտիվացման քաղաքականությունը իրականացնող մեծ թվով մասնագետ կադրեր պատրաստեց: Շրջանավարտ ինժեներները, մեխանիկները, երկրաբանները, քիմիկոսները, ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները և հումանիտար ոլորտի մասնագետները ներգրավվեցին խորհրդային շինարարության բնագավառներում՝ նպաստելով հանրապետության սոցիալ-տնտեսական գիտակրթական ու մշակութային վերելքին: Համալսարանը անգնահատելի աշխատանք կատարեց հայրենի գիտությունը զարգացնելու ուղղությամբ: Պատերազմի նախօրյակին նրա ամբիոններում ու լաբորատորիաներում մշակվեցին բազմաթիվ գիտական հիմնախնդիրներ, կատարվեցին արժեքավոր հայտնագործություններ, որոնք ներդրվեցին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ: Համալսարանի քիմիական, ֆիզիկամաթեմատիկական և երկրաբանական ֆակուլտետների ամբիոնները մշտական կապի մեջ մտան հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների հետ և օգնեցին նրանց արտադրական տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու, ժողովրդական տնտեսության ռեսուրսների ճիշտ հաշվարկները կատարելու և արտադրական առօրյա բազմաթիվ խնդիրներ լուծելու հարցերում: Համալսարանի հայագիտական ամբիոնները գիտական խոր ուսումնասիրություններ կատարեցին հայոց պատմության, հայոց լեզվի, գրականության բնագավառներում: Համալսարանի բազմաթիվ սաներ դարձան հանրապետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման գործի կազմակերպիչներ, կուսակցական ու պետական համակարգի ղեկավար աշխատողներ, իսկ նրա մեծ կոլեկտիվի անդամները՝ հանրապետության հասարակական կյանքի վերափոխման ակտիվ մասնակիցներ: Համալսարանի կոլեկտիվը, նրա կուսակցական և հասա-

րակական կազմակերպությունները ակտիվ գործունեություն ծավալեցին սոցիալիզմի կառուցման ամբողջ ժամանակաշրջանում հանրապետության սոցիալ-տնտեսական ոլորտների վերելքն ապահովելու համար և հասան լուրջ հաջողությունների:

ԵՊՀ 100-ամյա տարեգրության մեջ արձանագրված համալսարանական լավագույն նվաճումների հաջողությունների կողքին 1930-ական թթ. երկրորդ կեսին, կապված Ստալինի անձի պաշտամունքի հետ, եղան բազմաթիվ դժվարություններ ու կորուստներ, որոնք մեծ վնաս պատճառեցին համալսարանի ուսումնակրթական ու գիտական գործընթացներին՝ խոչընդոտելով նրա առաջընթացին: Դրանցից կարելի է առանձնացնել այն փաստը, որ միայն 1937 թ. Երևանի պետական համալսարանում փոխվել է 6 ռեկտոր, որոնցից և ոչ մեկը, բնականաբար, չի հասցրել քիչ թե շատ լուրջ ավանդ ներդնել համալսարանի պատմության մեջ: Դաժան ճակատագրի արժանացան նաև բազմաթիվ համալսարանականներ, որոնք ենթարկվեցին անլուր հալածանքների, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով, նրանցից շատերն իրենց մահկանացուն կնքեցին բանտերում և աքսորավայրերում: Երևանի պետական համալսարանը հանրապետության հասարակական քաղաքական ու տնտեսական կյանքի զարգացման գործում իր ակտիվ գործունեությունը շարունակեց նաև Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ միասին կենաց և մահու պայքարի ելավ ֆաշիզմի դեմ:

Մեծ հայրենականի տարիներին համալսարանի 869 դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ զինվորագրվեցին հայրենքի պաշտպանությանը, նրանցից 300-ը հերոսաբար զոհվեցին, մի մասն էլ տուն վերադարձավ վիրավոր և հաշմանդամ:

Հիտլերյան Գերմանիայի այդ սանձազերծած պատերազմը նախկին Խորհրդային Միության ժողովուրդների համար 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմ կոչվեց՝ իր կործանարար հետևանքներով և մարդկային զոհերի ահռելի քանակով պատմության մեջ մնալով որպես նախադեպը չունեցող հասարակական չարաղետ

արհավիրք: Համաշխարհային տիրապետության հասնելու իր նկրտումներով ֆաշիստական ռասիզմի ամբողջական ժողովուրդներ և մշակույթներ ոչնչացնելու ոճրագործ ծրագրերը խափանվեցին առաջին հերթին Խորհրդային Միության ժողովուրդների՝ ռազմաճակատներում և թիկունքում գործադրվող գերմարդկային ճիգերի, աշխատանքային ու ռազմական մեծ սխրագործությունների շնորհիվ:

Պատերազմի հենց սկզբից ԵՊՀ ղեկավարությունն ու ողջ կոլեկտիվը՝ պահակից սկսած մինչև ռեկտոր, պատրաստակամություն հայտնեցին հայրենիքի պաշտպանության համար մեկնելու ռազմաճակատ և կռվելու անարգ թշնամու դեմ: 1941-1945 թթ. Հայրենական պատերազմի հաղթանակը, որը ձեռք բերվեց նաև հայ ժողովրդի հազարավոր զավակների զոհաբերման, ինչպես նաև ռազմական ու աշխատանքային սխրանքների գնով, հայ ժողովրդին փրկեց գերմանաթուրքական ռասիստների կողմից ծրագրված մի նոր ցեղասպանությունից:

Հայրենական պատերազմին համալսարանականները մասնակցեցին քաղաքացիական ու ազգային արժանապատվության բարձր գիտակցմամբ: Միջնակարգ պարտադիր ուսուցման պետական ծրագիրն իրականացրած հայ ժողովրդի համար Հայրենական պատերազմը մտավորականության պատերազմ եղավ: Պատերազմում զոհված շուրջ 270 հազար հայերի մեծագույն մասը 18-24 տարեկան երիտասարդներ էին, որոնց թվում էին 300 զոհված համալսարանականները: Պատերազմին մասնակցած հայկական զորամիավորումների տարբեր զորատեսակների միջին և բարձր հրամանատարական կազմի մեջ ծանրակշիռ տեղ են ունեցել համալսարանի սաները:

Համալսարանականները ակտիվորեն մասնակցեցին հանրապետությունում աշխարհազորային ջոկատների կազմակերպման աշխատանքներին, շատերը կամավոր մեկնեցին ռազմաճակատ, մի մասը ռազմական գործողությունների մասնակցեց հայկական ազգային դիվիզիաների կազմում 390-րդ, 89-րդ (Թամանյան), 408-րդ, 409-րդ, 261-րդ, մի մասն էլ Հայաստանում և Վրաստանում ձևավորված այլ, ինչպես նաև խորհրդային տարբեր բանակային զորամասե-

րի, ինչպես նաև աշխարհազորի կազմում և այլն: ՀԿԿ կենտկոմի որոշմամբ հանրապետության բոլոր հիմնարկներում կազմակերպվեցին աշխարհազորեր: ԵՊՀ-ում ստեղծվեցին աշխարհազորային վաշտեր, և հրամանատարներ նշանակվեցին զինվորական գործին քաջատեղյակ սպաները, իսկ քաղաքական գծով տեղակալներ՝ կուսակցական կոմիտեի և ֆակուլտետային բյուրոների քարտուղարները: Համալսարանի աշխարհազորի ընդհանուր հրամանատար նշանակվեց ռազմական ամբիոնի դասախոս, լեյտենանտ Արտիկ Միքայելյանը, կոմիսար՝ առաջին քարտուղար Դավիթ Դավթյանը: Աշխարհազորային միավորումներում ուսանողության ու դասախոսական կազմի ռազմապաշտպանական ուսուցման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց ԵՊՀ ռեկտոր Գաբրիելի Պետրոսյանի վրա:

1941 թ. հուլիսի 11-ին Երևանի երկաթուղային կայարանից համալսարանականների առաջին կամավորական խումբը մեկնեց բանակ: Նրանց մեջ էին Պարույր Առաքելյանը, Դրաստամատ Ավագյանը, Մխիթար Սկրտչյանը, Վահրամ Պետրոսյանը և ուրիշներ, որոնք իրենց նամակներում ընկերներին հավաստիացնում էին, որ կկռվեն ու կպայքարեն արիաբար՝ բարձր պահելով համալսարանի պատիվն ու հեղինակությունը: Համալսարանականները մեծ դեր կատարեցին նաև թիկունքում ռազմաճակատի կարքները բավարարելու ուղղությամբ: Այդ գործում մեծ էր 1942-1946 թթ. համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանի դերը, ինչպես նաև հայ գիտնականների կատարած հայտնագործությունները: Հայ գիտնականների գիտահետազոտական աշխատանքներն ավելի խոր ու բեղմնավոր ընթացք ստացան Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նրանց հայտնագործությունները մեծապես օգնեցին երկրի պաշտպանության ամրապնդման ու ռազմաճակատի կարիքները հոգալու գործին:

Պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որը մշակեց ԵՊՀ դասախոս, ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը, արագորեն ներդրվեց ռազմական արդյունաբերության մեջ և ստեղծ-

վեցին գիշերային պայմաններում օգտագործվող նշանացույցներ: ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում դասավանդող Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների կողմից համալսարանում հիմնադրված տիեզերական ճառագայթների և միջուկային հետազոտությունների լաբորատորիայում և 1942 թ. օգոստոսին Արագածի վրա տիեզերական ճառագայթների հետազոտման կայանում կատարված փորձերը ճանապարհ հարթեցին միջուկային էներգիան ռազմական ու խաղաղ պայմաններում օգտագործելու համար: Իրենց հայտնագործություններով աչքի ընկան նշանավոր գիտնականներ ֆիզիկոս Նորայր Քոչարյանը, մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը, քիմիկոսներ Լևոն Ռոտինյանցը, Արաքսյա Բաբայանը, Արմենակ Մնջոյանը, երկրաբան Կոստանտին Պաֆենհոլցը, կենսաբաններ Արմեն Թախտաջյանը, Լևոն Հովհաննիսյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, արևելագետ Հովսեփ Օրբելին և ուրիշներ, որոնց հիմնական մասը դասավանդում էր ԵՊՀ-ում:

Չնայած պատերազմական դաժան պայմաններին՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի՝ ԱրմՖանի հիման վրա 1943 թ. նոյեմբերի 29-ին Երևանում հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, որի առաջին նախագահ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, իսկ փոխնախագահներ՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանն ու Վարդան Գուլքանյանը: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը պատմական խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ: Դա մեծ չափով նպաստեց հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությանը մեկ միասնական կենտրոնում միավորելու և գիտական աշխատանքի նպատակասլաց զարգացումն ապահովելու գործին:

Համալսարանականները ակտիվորեն մասնակցեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական մարտերին՝ Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի, Կիևի, Կովկասի, Ուկրաինայի, Բելառուսիայի Մերձբալթյան և եվրոպական երկրների ազատագրական մարտերին, Բեռլինի գրավման և

միլիտարիստիկան Ճապոնիայի ջախջախման մարտական գործողություններին:

Պատերազմում անմահանում է ամեն մի քաջ, իսկ հերոսանում են երջանիկ անհատները միայն: Համալսարանականներից հերոսի փառքին արժանացել են երկու զորականներ: Ռազմագիտության ամբիոնի այն ժամանակվա վարիչ, մայոր Անդրանիկ Գեղամի Ղազարյանը (ծնվ. 1904 թ., Բաքու), որը պատերազմի տարիներին աչքի ընկավ իր զորավարական տաղանդով, բարձրացավ գեներալ-մայորի աստիճանի և որպես դիվիզիայի հրամանատար 1943 թ. Դեսնայի գետանցը հմտորեն կազմակերպելու և ղեկավարելու համար արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Միանալով հայ մարշալների ու գեներալների մեծ բանակին՝ նա պատերազմի ողջ ընթացքում բարձր պահեց հայ ռազմական արվեստի հազարամյա փառքը: Նույն կոչմանն է արժանացել ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետի 1-ին կուրսից բանակ մեկնած, 19-ամյա շարքային (կապավոր) Սուրեն Գևորգի Սարգսյանը (ծնվ. 1924 թ., Աշտարակ, Ոսկեվազ): Այդ կոչումը շնորհվել է նրան Մոգիլյով քաղաքի մոտ մեր զորքերի Դնեպրի գետանցի ժամանակ ցուցաբերած անձնազոհության, ռմբակոծության տակ գետի երկու ափերի միջև հեռախոսային անխափան կապ հաստատելու համար: Մեկ ուրիշ համալսարանական՝ քաջարի մարտիկ Արտաշես Օհանջանյանը կրկնեց Գաստելլոյի սխրանքը և նրա օրինակով իր այրվող ինքնաթիռով մխրճվեց թշնամու տանկերի շարասյան մեջ՝ ոչնչացնելով դրանք: Հայրենասեր հայորդի համալսարանականը հետմահու պարգևատրվել է «Կարմիր դրոշի շքանշանով»:

Ռազմական բարձր կոչումների և շքանշանների արժանացած համալսարանականների մի մասը նախկին կադրային զինվորականներ էին, որոնց զգալի մասը հետագայում ծառայել և ծառայում էր համալսարանի ռազմական ամբիոնում՝ այստեղ շարունակելով իր ռազմահայրենասիրական գործունեությունը: Քիչ չէր նաև համալսարանական ուսման և ուսուցման գործի մարդկանցից պարգևա-

տրվածների և փառաբանվածնների թիվը: Այդ անունների թվարկումը կարելի է անվերջ շարունակել:

Հայրենական պատերազմում ամենամեծ ծառայությունը, սակայն, մատուցեցին նրանք, ովքեր պատերազմի դաշտում ընկան՝ պատերազմի դաժան օրենքով շատ հաճախ մնալով որպես անհայտ ու անանուն զինվոր: Պրոֆ. Փ. Ենգոյանի՝ մեզ հայտնի գրքում թվարկված է պատերազմում զոհված 57 համալսարանականի անուն: Սա իրականում զոհվածների մի փոքր մասն է միայն, այնպես, ինչպես պատերազմի մասնակիցների համար բերված 500 թիվը: Մենք սույն աշխատությունում ավելացրել ենք ինչպես զոհվածների, այնպես էլ մասնակիցների քանակն ու անունները: Նույնիսկ մահերի ընտրության մեջ պատերազմը անարդար ու չարամիտ է: Ոչ միայն տանում է պատանուն ու զավակի ծնունդը դեռ չտեսած փեսային, այլև հաճախ մորը զրկում է իր մինուճար որդուց, իսկ երբեմն էլ ամբողջ տոհմը որձակոտոր է անում: Դիլիջանի շրջանի նախկին Ջարխեչ (հետո՝ Կույբիշև, այժմ՝ Հաղարծին) գյուղից Աղաջանյան չորս եղբայրները, որոնցից երեքը համալսարանի ուսանողներ էին, ընկան ռազմի տարբեր դաշտերում: Մեծը՝ Աղաջանը (1909 թ. ծնվ.), պատմության ֆակուլտետի 1938-1941 թթ. ուսանող էր, մյուսը՝ Արփիարը (1912 թ. ծնվ.)՝ լեզվագրական ֆակուլտետի 1936-1941 թթ. ուսանող, երրորդը՝ Պերճը (1914 թ. ծնվ.)՝ ֆիզմաթ ֆակուլտետի 1935-1940 թթ. ուսանող:

Կոտայքի շրջանի Արամուս գյուղից ռազմաճակատ մեկնած Մարգարյան հինգ եղբարներից տուն վերադարձավ միայն լեզվագրական ֆակուլտետի 1936-1941 թթ. ուսանող, հետագայում ուսուցիչ և գրականագետ, Հ. Շիրազի համակուրսեցի և մտերիմ ընկեր Դավիթ Մարգարյանը: Գլուխ խոնարհելով բոլոր զոհվածների հիշատակի առջև՝ կարելի է մխիթարվել միայն Եղիշեի «Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն» հայտնի հոգեսփոփիչ ասույթով:

Հայրենական պատերազմից հաղթանակով տուն վերադարձած տարբեր մասնագիտությունների ու զբաղմունքների տեր համալսարանականները հետպատերազմյան տարիներին Խորհրդային Հա-

յաստանի բարգավաճմանը ծառայող ամենաակտիվ քաղաքացիները եղան: Պատերազմից փառքով վերադարձած ականավոր գիտնականների մոտ մեկ տասնյակից ավելին դարձել են հանրապետության ԳԱԱ իսկական անդամներ, շատերը՝ անվանի գրողներ և մշակույթի գործիչներ: Հաղթահարելով մարմնում ղեռնս շարժվող գնդակի ու բեկորի ցավը, մոռանալով մարմնի խեղված անդամի վիշտն ու խնամքը՝ այդ սերունդը հետևողականորեն ու քայլ առ քայլ վեր բարձրացավ աշխատանքային փառքի սանդուղքներով: Պատերազմի բովով անցած համալսարանական գիտնականների մի ամբողջ բանակ գոյացավ: Նրանցից շատերը բարձրացան, նվաճեցին գիտության ամենաբարձր աստիճանները, դարձան պրոֆեսորներ, դոկտորներ, առաջատար գիտնականներ, նոր գիտաճյուղերի հիմնադիրներ, բնագիտական, հայագիտական, հիմնարար և ճշգրիտ գիտությունների համբավավոր նորարարներ: Այստեղ տեղին է հիշել պատերազմի մասնակից, հետագայում ակադեմիկոս դարձած համալսարանականներին՝ ֆիզիկոսներ Գուրգեն Սահակյանին, Էմիլ Միրզաբեկյանին, բուսաբան Վահան Ղազարյանին, քիմիկոս Սարգիս Վարդանյանին, պատմաբաններ Մկրտիչ Ներսիսյանին, Գևորգ Ղարիբջանյանին, գրականագետներ Էդուարդ Ջրբաշյանին, Վաչե Նալբանդյանին, լեզվաբան Գևորգ Ջահուկյանին, ՀԳ ԱԱ թղթակից անդամ, գրող Վահագն Դավթյանին, գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին և ուրիշների:

Ինչպես ամեն մի պատերազմ, այնպես էլ Հայրենական պատերազմը ունեցավ ոչ միայն իր զինվորն ու զորավարը, այլև իր գիտությունն ու գիտնականը, արվեստն ու արվեստի գործիչը, գրականությունն ու գրողը: Համալսարանն էլ պատերազմական տարիներին ունեցավ իր բանաստեղծն ու արձակագիրը: Բանաստեղծ Դերենիկ Չարխչյանը (1916 թ.) 1941 թ. պետական քննասեղանից պատերազմ մեկնեց, բայց, դժբախտաբար, Ստալինգրադի պաշտպանության կռիվներում 1943 թ. հուլիսին զոհվեց՝ նախապես աշխարհին հայտնած լինելով մահով ուրիշներին ապրեցնելու իր հավատամքը.

Գնում եմ երկրիս իմ պարտքը տալու
Գնում եմ կռիվ, կռիվն է վերջին,
Հերոսի փառքով հուր կռվի միջին՝
Հերոսների հետ անմահանալու։

1941 թ. համալսարանի երրորդ կուրսից բանակ մեկնած սկսնակ Հրաչյա Հովհաննիսյանը պատերազմից վերադարձավ որպես հասունացած բանաստեղծ և 1948 թ. հրատարակեց իր «Իմ կյանքի երգը» 1-ին գիրքը, որի ամեն մի բանաստեղծություն պատերազմի արահետներով անցած գրողի խոհի ու զգացման քնարական արտահայտությունն է:

1940 թ. դպրոցն ավարտելուց հետո բանակ մեկնած Վահագն Դավթյանը համալսարան եկավ պատերազմում վիրավորվելուց հետո և 1947 թ. համալսարանը դեռ չավարտած՝ հրատարակեց իր «Առաջին սերը» բանաստեղծությունների գիրքը՝ լի ծննդավայր Արաբկիրի (Արևմտյան Հայաստան) և նոր հայրենքում խաղաղ ապրելու կապույտ երազներով: Պարույր Ջոթյանը պատերազմական թեմաներով գրված իր միակ «Գերված աղջիկը» վեպը հազիվ հասցրեց տպագրված տեսնել, վերքերից էլ մահացավ: Բաղիշ Հովսեփյանը համալսարան վերադարձավ՝ իր հետ բերելով «Սերմնացանները չվերադարձան» վեպի բանաստեղծական այս վերնագիրը միայն, բայց այն գրվեց և որպես պատերազմական արհավիրքների լավագույն արտացոլում, թարգմանվեց եվրոպական մի շարք լեզուներով:

Հայաստանում և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում է գտել ԵՊՀ-ում սկզբնավորված մաթեմատիկայի հայկական գիտական դպրոցը, որը հիմնադրել է Արտաշես Շահինյանը, և որի կայացմանն իրենց նպաստն են բերել Մխիթար Ջրբաշյանը, Սերգեյ Մերգելյանը և ուրիշներ: Մեխանիկայի գիտական դպրոցն ստեղծվել է ԵՊՀ ռեկտորներ Նագուշ Հարությունյանի և Սերգեյ Համբարձումյանի ջանքերով: Հայաստանում ֆիզիկական հետազոտությունները սկզբնավորվել են ԵՊՀ Ալիխանյան եղբայրների հիմնադրած տիեզերական ճառագայթների և միջուկային հետազոտությունների լաբորատորիայում և Արագածի գիտական կայանում, որոնց հենքի

վրա ստեղծվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտը: ԵՊՀ-ում 1950 թ. Գուրգեն Սահակյանի ջանքերով բացվել է տեսական ֆիզիկայի ամբիոնը, որը կարևորագույն դեր է խաղացել Հայաստանում բարձրորակ ֆիզիկոսների պատրաստման և ֆիզիկայի հայկական դպրոցի ստեղծման գործում:

ԵՊՀ-ն եղել և մնում է ազգային կրթության և գիտության կաճառ, որտեղ կրթվել, դաստիարակվել և կյանք են մտել բազմաթիվ սերունդներ: Մայր բուհը պատմական բացառիկ դերակատարություն է իրականացնում ոչ միայն մայր հայրենիքում, այլև սփյուռքահայության շրջանում: Հազարավոր սփյուռքահայեր, մասնագիտական կրթություն կամ գիտական աստիճան ստանալով ԵՊՀ-ում, վերադառնում են իրենց բնակության վայրերը՝ հայրենիքում ստացած գիտելիքներն ու հայրենասիրական ոգին ի սպաս դնելով հայապահպանության ազգանվեր գործում:

Հայրենական մեծ պատերազմում ծնված համալսարանական զինվորն ու զորավարը, գիտնականն ու գրողը մեծ դեր խաղացին հայրենասեր սերունդ դաստիարակելու և զինվորական փորձը նրանց փոխանցելու գործում: Պատերազմից վերադարձած համալսարանականները՝ իբրև Ստալինյան բռնապետության հնացած գաղափարախոսության այլախոհ ընդդիմություն, որոշակի դեր կատարեցին Հայաստանի հետագա հասարակական-քաղաքական կյանքում: Համալսարանը դարձավ Ղարաբաղյան շարժման կենտրոն՝ նաև համալսարան վերադարձած ազատամարտիկ հայրենասերների շնորհիվ: Արցախի ազատագրական պայքարը դարձավ նրանց սուրբ գործը:

Ուստի պատահական չէ, որ 1980-ական թթ. Արցախյան ազատագրական շարժմամբ շարունակվեց մեծ հայրենականի դասերը: Լեռնային Ղարաբաղի ազատագրման, Հայաստանի անկախ հանրապետություն ստեղծելու քաղաքական շարժման կենտրոնը շարունակեց մնալ Երևանի պետական համալսարանը, իսկ այդ շարժման ամենաակտիվ գործիչները նոր սերնդի հետ միասին եղան Հայրենական մեծ պատերազմի մասնակից դասախոսներն ու ուսանողները:

Հայրենական մեծ պատերազմում հաղթանական ԵՊՀ դասախոսների ջանքերով դաստիարակվեց և բարձրագույն կրթություն ստացավ համալսարանական նոր սերունդը, որը ազատագրական պայքարի գաղափարներով տոգորված իր դասախոսների հետ միասին պայքարի ելավ Արցախն ազատագրելու: 1988 թվականին հայ ժողովրդի ազգային զարթոնքի պահին ԵՊՀ-ն, նրա սաները դարձյալ առաջին շարքերում էին: Շարժման առաջին օրերից ԵՊՀ ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը կանգնեցին պայքարի առաջին շարքերում: Սկսվեց դասաղուլների ու նստացույցերի շրջան, և ԵՊՀ-ն հետզհետե դարձավ Արցախյան շարժման ղեկավարման կենտրոններից մեկը:

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը իր ժողովներում և ԽՄԿԿ կենտկոմին ուղղված դիմումներում բողոք և անհամաձայնություն էր հայտնում Արցախի հարցում Կրեմլի որդեգրած քաղաքականությանը: Համալսարանականներն ինչպես Հայրենական մեծ պատերազմի տարիներին, այնպես էլ Արցախյան նորօրյա ազատամարտում առաջին շարքերում էին ոչ միայն խոսքով, այլև գործով: Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ստիպեց մի շարք ֆակուլտետների ուսանողների կիսատ թողնել համալսարանական ուսումնառությունը, ստեղծել կամավորական ջոկատներ և մեկնել Արցախ, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: 1988-1994 թթ. ԵՊՀ-ում աշխատող և ուսանող ավելի քան 108 համալսարանականներ ակտիվորեն մասնակցեցին Արցախյան ազատամարտին, նրանց մեծ մասը աչքի ընկավ սխրագործություններով, առանձնակի քաջությամբ և հերոսությամբ: Նրանցից շուրջ երեք տասնյակը նահատակվեց՝ ընկնելով քաջի մահով: Միայն 1988-1989 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին 10-ից ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հագուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

1989 թ. կեսերին համալսարանում ստեղծված հատուկ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված էին ակադեմիկոս Սերգեյ Համբար-

ձումյանը (ԵՊՀ ռեկտոր), պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանը (ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ), դոցենտ Յուրի Մկրտումյանը (ԵՊՀ կուսկոմիտեի քարտուղար), դոցենտ Նորիկ Գալստյանը (հանճնաժողովի նախագահ), պրոֆեսոր Գարեգին Փանոսյանը (ԵՊՀ գենետիկայի ամբիոնի վարիչ), դոցենտ Ռաֆիկ Տոնոյանը (ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան), Ֆրիկ Մելիք-Ադամյանը (ԵՊՀ դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի դոցենտ), հիմնականում զբաղվում էր մարտական ջոկատներին և սահմանամերձ շրջաններին օգնություն կազմակերպելու հարցերով:

1990 թ. աշնանից համալսարանի կոլեկտիվը ստանձնել էր ԵՊՀ լազերային տեխնիկագիտաարտադրական միավորման հաշվողական տեխնիկայի բաժնի վարիչ Լեոնիդ Ազգալդյանի ջոկատին պարեհով ապահովելու գործը: Ջոկատը, որը 1990 թ. հայատյաց ադրբեջանցիների դեմ կռվում էր Շահումյանում, այնուհետև՝ Մարտակերտում, 1991 թ. վերակազմավորվեց ազատագրական բանակի (գլխավոր հրամանատար՝ Լեոնիդ Ազգալդյան):

ԵՊՀ ողջ կազմը նվիրվել էր Արցախին օգնելու գործին: Ֆիզիկայի ֆակուլտետում Միսակ Մարտիրոսյանի, Արմանդ Ռոստոմյանի, Սամվել Մխիթարյանի, Արթուր Չոբանյանի և մյուս աշխատակիցների ջանքերով պատրաստվեցին հատուկ կաղապարներ, ձուլվեցին մեծ քանակությամբ գնդակներ, Յուրի Մկրտումյանի նախաձեռնությամբ Եղեգնաձորից բերվեցին յափնջիներ, որոնցից որսորդական հրացանների համար պատրաստվեցին խիցեր: Այս ամենը, սննդի և հագուստի հետ կապավորների միջոցով ուղարկվում էր Արցախ:

Քիմիական ֆակուլտետում դասախոսներ Հելբիկ Հակոբյանը և Կարապետ Դավթյանը Հայաստանում առաջինը սինթեզեցին հրթիռային վառելանյութ:

Շարժման սկզբին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ Արցախից բերվում էր չոր թութ, մասուր, ուրց, թթի օղի և

այլն ու աճուրդի հանվում: Մարդիկ պատրաստակամ մասնակցում էին աճուրդին, քանի որ գոյացած գումարը տրամադրվում էր հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

Գ. Մելիքյանը համալսարանում առաջիններից էր, որ 1989 թ. հունիսից Արցախի հիվանդանոցների ու մանկապարտեզների համար կազմակերպում էր սննդամթերքի օգնություն և ինքնաթիռով անձամբ տեղ հասցնում (երբեմն մեկ օրվա ընթացքում 3-4 անգամ): Արցախյան ազատամարտում զենքը ձեռքին մարտնչող ազատամարտիկների թվում էին ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող Թաթուլ Կրպեյանը (հետմահու ՀՀ ազգային հերոս), ռադիոֆիզիկ Պետրոս Ղևոնդյանը (Պետո, հետմահու Արցախի հերոս) և ուրիշներ, իսկ ԵՊՀ դասախոսներից՝ Լեոնիդ Ազգալդյանը, Սիմոն Աչիկգյոզյանը և ուրիշներ: Պատերազմում նահատակված հերոսների հիշատակը Մայր բուհում հավերժացնելու նպատակով նրանց անուններով ԵՊՀ ֆակուլտետներում անվանակոչվել են լսարաններ: Սիայն պատմության ֆակուլտետում լսարաններ կան ֆակուլտետի սաներ, վեց զոհված ազատամարտիկների անուններով՝ Թաթուլ Կրպեյան (ՀՀ ազգային հերոս), Արթուր Մկրտչյան (ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահը), Վարդան Դալլաքյան, Վարդան Բախշյան, Զաքար Ավանեսյան և Ռոմա Մկրտչյան:

Արցախյան ազատամարտում, որ կենաց և մահու կռիվ էր հայ ժողովրդի համար, հաղթեց հայի կամքն ու ոգին, միասնությունն ու ժողովրդի հավաքական ուժը, որոնց կրողներն էին նաև համալսարանականները: Նրանցից շատերը, ընդունելով թշնամու մահաբեր գնդակը, իրենց արյամբ գծեցին Արցախի սահմանները:

Շատերն էլ, ապրելով պատերազմում հաղթողի բերկրանքը, վերադարձան խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի: Յուրաքանչյուրն իր մասնագիտական ոլորտում անմնացորդ նվիրվեց այս անգամ արդեն մեր երկրի տնտեսության, կրթության ու գիտության, մշակույթի զարգացման գործին՝ միշտ պատրաստ հարկ եղած դեպքում կրկին կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հայ զինվորն ու համալսարանականները աչքի ընկան նաև թշնամու կողմից սահմանամերձ շրջաններում կազմակերպված դիվերսիոն հարձակումների

ժամանակ: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ուսանող Ազատ Ասոյանը ընկավ քաջի մահով 2014 թ. թշնամու դիվերսիոն խմբի հարձակման հետևանքով: Նա հետմահու պարգևատրվել է ՀՀ մարտական ծառայության և ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, իսկ 2015 թ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվեց նրա անունով:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Գոռ Դարմանյանը 2015 թ. իր ջոկի հետ կասեցրեց թիկունք ներթափանցած հակառակորդի դիվերսիոն հետախուզական խումբը, ծանր վիրավորվեց, ապա ապաքինվեց և ցուցաբերած քաջության համար պարգևատրվեց ՀՀ «Արիության» և ԼՂՀ «Արիության համար» մեդալներով:

Արցախյան ազատամարտից 22 տարի անց՝ 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, Աղրբեջանը խախտեց զինադադարը և անցավ հարձակման՝ փորձելով շրջել պատմության անիվը, սակայն հաշվի չառավ, որ հայ զինվորը հանուն հայրենիքի միշտ էլ ընտրում է մահ իմացյալը: Ապրիլյան մարտական գործողությունների ընթացքում հայ զինվորն իր քաջությամբ ու անկոտրում ոգով, դիմակայելով աղրբեջանական հատուկ ստորաբաժանումների հարձակմանը, հօդս ցնդեցրեց թշնամու ծրագրերը: Դժբախտաբար, անհավասար մարտերում նորից ունեցանք կորուստներ:

Ապրիլյան առաջին իսկ օրերին սկիզբ առավ համաժողովրդական շարժում, որը հայրենասիրության բացառիկ դրսևորում էր: Բոլորը համախմբվեցին մի ընդհանուր գաղափարի շուրջ, յուրաքանչյուրը յուրովի վերագնահատեց ու վերաարժևորեց հայրենիքն ու պետականությունը և հաստատակամ կանգնեց հայ զինվորի կողքին՝ կանխելով մեր երկրի անվտանգությանն սպառնացող ոտնձգությունը:

Հայրենասիրության, միասնականության ու համախմբվածության նորօրյա դրսևորումներով համակված՝ Երևանի պետական համալսարանը ևս անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության գործից՝ բազմաթիվ ծրագրեր իրագործելով: Հայրենաշունչ այդ ոգին Մայր բուհի գոյության մշտական ուղեկիցն է եղել Հայրենական մեծ

պատերազմի, 1965 թ. ազգային զարթոնքի և Արցախյան գոյապայքարի ողջ ընթացքում:

Ապրիլյան պատերազմի օրերին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախաձեռնությամբ ձևավորված Մարտական պատրաստության ակումբում գրանցվեց ավելի քան 200 ուսանող կամավորական: Ակումբի անդամները և նրանց շարքերը համալրած համալսարանականները ձևավորեցին ջոկատ և մեկնեցին Արցախ՝ հայրենիքի մերօրյա պաշտպաններին զորավիգ լինելու և մեր իսկ արյամբ սրբագործված հողը հակառակորդից պահելու համար: Ջոկատի անդամները աչքի ընկան իրենց կազմակերպվածությամբ, կարգապահությամբ և զինվորական պարտականությունների ճշգրիտ կատարմամբ, որն ըստ արժանվույն գնահատվեց զորամասի հրամանատարության և աշխարհազորայինների կողմից:

Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և ռազմական բախումներից տուժած ազգաբնակչությանը համալսարանի ուսանողները կազմակերպեցին օգնություն՝ առաջին անհրաժեշտության իրեր, դեղորայք, սննդամթերք, տնտեսական ապրանքներ հասցնելով նրանց:

Ռեկտորատի արտահերթ նիստում կայացվեց որոշում՝ բացելու առանձին հաշվեհամար, որպեսզի աշխատակիցները և ուսանողները կամավոր հիմունքներով դրամական օգնություն ցուցաբերեն Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և սահմանամերձ գոտիներում ապրող մեր ազգաբնակչությանը: Հավաքվեց 8 մլն դրամ, որով գնվեցին առաջին անհրաժեշտության իրեր, իսկ գումարի մյուս մասը ԵՊՀ-ի տրամադրած 20 մլն դրամ գումարի հետ փոխանցվեց ԼՂՀ կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարին:

ԵՊՀ ուսանողական բոլոր կառույցները կազմակերպեցին տարաբնույթ միջոցառումներ: ԵՊՀ մշակույթի կենտրոնը ապրիլի 29-ին իր երգի-պարի և «Համալսարանական» թատրոն ստուդիայի սաների ուժերով ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական հոսպիտալում կազմակերպեց համերգ՝ ի զորակցություն Արցախում վիրավորված զինվորների:

Մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում բացվեց «Ճանաչենք մեր հերոսներին» խորագրով լուսանկարների ցուցահանդես, որի հերոսները քաջարի հայ մարտիկներն էին:

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները, պարբերաբար այցելելով ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալում բուժվող զինծառայողներին, բարձրացնում էին նրանց մարտական տրամադրությունը՝ նախապատրաստելով նրանց օր առաջ դիրքեր վերադառնալուն, իսկ ակումբի «Վարդանանք» թերթի էջերում մշտապես լուսաբանվում էին թե՛ համալսարանական և թե՛ ՀՀ նորօրյա հերոսների կյանքն ու գործած սխրանքները, որոնք հայրենասիրության լավագույն դասեր են:

Քառօրյա պատերազմին մասնակցած բազմաթիվ համալսարանականների մեջ իրենց քաջությամբ և հերոսական սխրանքներով աչքի ընկան ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Շուլի Հակոբյանը, որը 2016 թ. ապրիլի 4-ին 30 րոպեի ընթացքում խոցել է հակառակորդի «Т-80» տեսակի 3 տանկ, և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Գևորգ Մանուկյանը, որն արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի և ՀՀ «Արիության մեդալի», 2016 թ. ապրիլի 2-ին խոցել է հայոց բանակի մարտական դիրքերի ուղղությամբ հրթիռներ արձակող հակառակորդի «МИ-8» տեսակի ուղղաթիռը:

Այսպիսով՝ համալսարանական հայ զինվորների նորօրյա սխրանքները փաստում են, որ ներկա համալսարանական նոր սերունդը, առաջնորդվելով Հայրենական մեծ պատերազմի տարիներին իր պապերի ցուցաբերած սխրանքներով, շարունակում է հերոսական կռվի ավանդույթը մեր հարևան ոսոխի դեմ:

Ապրիլյան քառօրյա պատերազմը հերոսական մի նոր էջ դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ՝ ցույց տալով, որ հայը իր անկոտրում ոգով ու կամքով միշտ պատրաստ է մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու հանուն հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն իր ազգային արժանապատվության:

Այսպիսով՝ սույն աշխատությունում բերված փաստերը մեկ անգամ ևս հաստատում են այն ճշմարտությունը, որ Երևանի պետական համալսարանը եղել և մնում է ազգային կրթության և գիտության հզոր կաճառ, որտեղ կրթվել և հայրենասիրական ոգով դաստիարակություն են ստացել ու կյանք մտել բազմաթիվ սերունդներ: Համալսարանի շրջանավարտներից շատերը դարձել են ոչ միայն անվանի գիտնականներ, գրողներ՝ մեծ ճանաչում բերելով մեր երկրին նաև նրա սահմաններից դուրս, ինչպես նաև հասարակական-քաղաքական ու պետական մի շարք ականավոր գործիչներ, այլև հայրենիքի վտանգի պահին Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի տարիներին միշտ պատրաստ են եղել թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում լուրջ հետք թողնել իրենց հերոսական սխրագործություններով ազատագրելու և պաշտպանելու սեփական հայրենիքը ոսոխի հարձակումներից:

Այսօր, երբ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից անցել է 74, իսկ Արցախյան շարժման սկզբնավորումից՝ 31 տարի, ԵՊՀ ուսանողական լսարաններում սովորում և ազգային ոգով դաստիարակվում են Հայրենական մեծ պատերազմին մասնակցած, ինչպես նաև զոհված համալսարանականների թոռներն ու ծոռները և Արցախյան ազատամարտին մասնակցած ու նաև նահատակված համալսարանականների զավակները: Այս ամենը վկայում է, որ մեր ժողովրդին հաջողվել է հաղթանակով թերթել հայոց նորագույն պատմության փառավոր էջերը, քանի որ նորօրյա մի ամբողջ սերունդ ոգեշնչվում է անմահ հերոսների սխրանքներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տպագիր սկզբնաղբյուրներ, աշխատություններ և ուսումնասիրություններ.

ա) հայերեն.

Արխիվային սկզբնաղբյուրներ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

ֆ. 1, ց. 4, գ. 1, 3, 18, 37

ֆ. 1725, ց. 1, գ. 181

ֆ. 113, ց. 1, գ. 346

ֆ. 199, ց. 1, գ. 41, 207

ֆ. 48, ց. 1, գ. 17, 407

ֆ. 207, ց. 1, գ. 220, 337

ֆ. 122, ց. 1, գ. 261, 205

ֆ. 200, ց. 1, գ. 51

ֆ. 116, ց. 1, գ. 2, 69, 76, 83, 90

ֆ. 688, ց. 1-10, գ. 1-85 – Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ

ֆ. 1007, ց. 1-8, գ. 1-62 – 89-րդ հայկական հրաձգային (Թամանյան կարմրադրոշ) դիվիզիա

ֆ. 1524, ց. 1-11, գ. 1-92 – Ռազմաճակատային նամակներ

ֆ. 1029, ց. 1-9, գ. 1-28 – Պարտիզանական շարժման մասնակիցներ

ֆ. 1758, ց. 1-12, գ. 1-58 – Ռազմական գործիչները Հայրենական մեծ պատերազմում

Մատենադարանի անհատական արխիվների ֆոնդ, թղթապանակ 222:

ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921:

ՀԽՍՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1922, հ.8:

Համալսարանի պատմության թանգարանի արխիվ, գպն. № 2, 3, 5, 10, 12, 157, 250, 254, 265:

Գրքեր

ա) հայերեն

1. Աղասյան Ժ. Ա., Ղազարյան Է. Մ., Ղարիբջանյան Լ. Պ., Մարտիրոսյան Ռ. Մ., Երևանի պետական համալսարանը երեկ, այսօր, վաղը, Երևան, ԵՊՀ հրատ., 1999:

2. Ասլանյան Վ. Ս., Հայրապետյան Հ. Գ., Երևանի պետական համալսարանի գիտական գրադարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2001:

3. Բաբաջանյան Հ. Խ., Հաղթանակի ճանապարհներ, Երևան, «Հայաստան» հրատ., 1988:

4. Բաղրամյան Ի. Ք., Այսպես է սկսվել պատերազմը, Երևան, «Հայաստան» հրատ., 1975:

5. Բաղրամյան Ի. Ք., Այսպես մենք հասանք հաղթանակի, «Հայաստան» հրատ., Երևան, 1979:

6. Բաղրամյան Ի. Ք., Մեծ ժողովրդի զավակները, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:

7. Բարսեղյան Խ. Հ., Այսպես ապրեցին, Երևան, «Հայաստան» հրատ., 1985:

8. Գրիգորյան Ս., Մեր հերոսները և զինուժի գեներալները (1988-2012), Երևան, ՀԳՄ հրատ., 2012:

9. Գրիգորյան Ս., Մուսաները չլռեցին, հ. 1, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989:

10. Գրիգորյան Ս., Մուսաները չլռեցին, հ. 2, Երևան, «Երևան ուխտատուն» հրատ., 2005:

11. Գրիգորյան Ս., Մուսաները չլռեցին, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 2010:

12. Գրիգորյան Ք. Գ., Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, Երևան, 1977:

13. Դալլաքյան Ղ. Ս., Մարտական 89, Երևան, 1966:

14. Ենգոյան Փ. Ի., Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975:

15. ԵՊՀ կենսագրական հանրագիտարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009:

16. ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների 95-ամյա ուղին, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:

17. Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, կազմեց և հրատ. պատրաստեց՝ պրոֆ. Է. Մինասյան, Երևան, «Բավիղ» հրատ., 2009:

18. Երևանի համալսարան, 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատ., 1995:

19. Երևանի պետական համալսարան - 90, Սրտի խոսք, կազմեց և հրատ. պատրաստեց Վ. Ս. Մաղալյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2008:

20. Երևանի պետական համալսարանը վավերագրերում (փաստաթղթերի ժողովածու), կազմեց և հրատ. պատրաստեց Վ. Ս. Մաղալյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2009:

21. Երևանի պետական համալսարան, ԵՊՀ հրատ, 2009:

22. Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Հ. Ի. Աղամյան և ուրիշներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1970:

23. Երևանի պետական համալսարան, խմբ.՝ Գ. Ա. Ղարիբյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981:

24. Երևանի պետական համալսարան. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ (1945-1953), Երևան, 2004:

25. Երևանի պետական համալսարան. Իրավագիտության ֆակուլտետը 75 տարեկան է, կազմ՝ Գ. Ղարախանյան, Երևան, 2009:

26. Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, կազմեց և հրատ. պատրաստեց Ժ. Մանուկյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

27. Երևանի պետական համալսարանի պատմությունից, աշխատասիրությամբ՝ Հ. Գասպարյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:

28. Էլբակյան Է., Հայ-աղրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, Երևան, Հեղինակային հրատ., 2015:

29. Թադևոսյան Ռ. Մ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Երևան, «Զանգակ-97», 2012:

30. Կարապետյան Ե. Ա., Անմահության ճանապարհով, Երևան, 1969:

31. Հակոբյան Ա. Մ., Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա, Երևան, 1991:

32. Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ պրոֆ. Հ. Սիմոնյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

33. Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2010:

34. Հարությունյան Կ. Ա., Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում, Երևան, «Զանգակ-97» հրատ., 1990:

35. Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ. Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002:

36. Ղարիբջանյան Լ. Պ., Երևանի պետական համալսարանը 1919-1930 թթ., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1994:

37. Մաղալյան Վ. Ս., Երևանի համալսարանի հոբելյանները (1919-2009 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

38. Մեր անվանի դասախոսները, առաջին մաս, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1970:

39. Մեր անվանի դասախոսները, մաս երկրորդ, կազմեցին՝ Լ. Պ. Ղարիբջանյան, Հ. Ք. Գասպարյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2006:

40. Մեր անվանի դասախոսները, երրորդ մաս, կազմեցին՝ Լ. Պ. Ղարիբջանյան, Հ. Ք. Գասպարյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2009:

41. Մինասյան Է. Գ., Հայ հերոսուհի կանայք, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

42. Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, ԵՊՀ հրատ., 2018:

43. Պետրոսյան Գ. Բ., Երևանի պետական համալսարանը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1941:

44. Պողոսյան Վ. Ա., ՀԿԿ գործունեությունը Մեծ հայրենականում հաղթապետության նյութական և հոգևոր ուժերի մոբիլիզացման ուղղությամբ, Երևան, 1982:

45. Քնար համալսարանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2008:

բ) ռուսերեն

46. Арутюнян К. А., Участие Армянского народа в великой отечественной войне (1941-1945), Ереван, 2010.

47. Арутюнян К. А., Участие сынов Армянского народа в курской битве, Ер., 2014.

48. Арутюнян К. А., Погосян Г. Р., Вклад Армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945), Ереван, 2010.

49. Арутюнян К. А., Армянский народ Великой отчественной войне 1941-1945 гг., Ереван, 2018.

50. Армяне в битве за Ленинград, биографический справочник, Санкт-Петербург, 2014.

51. Арутюнян К. А., Саакян М. Г., Участие сотрудников национальной академии наук республики Армения в великой отечественной войне (1941-1945), Ереван, 2001 г.

52. Баграмян И. Х., Мои воспоминания, Е., 1979.

53. Гарибджанян Л. П., Ереванский государственный университет, Ереван, 1971.

54. Советская Армения в годы великой отечественной войне 1941-1945, сборник документов и материалов, Ереван, 2009.

Հոդվածներ և պարբերականներ

1. Բարսեղյան Հ. Խ., Երևանի պետական համալսարանը 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, «Հանդես Երևանի համալսարանի», 1995, № 2, էջ 15-23:

2. Բունիաթյան Հ. Խ., Պանծալի հոբելյանը (Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի 25-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան» ամսագիր, 1946, № 4-5 (ապրիլ-մայիս) միացյալ համարներ, էջ 14-19, 20-21, 22-23:

3. «Երևանի համալսարան», № 10 (1046), 10 մայիսի 1975, № 17-18 (1453-1454), 9 մայիսի 1985, № 19 (1656), 12 մայիսի, 1990:

4. «Խորհրդային Հայաստան», 19 սեպտեմբերի 1924 թ., 3 փետրվարի 1927 թ., № 197:

5. «Կոմունիստ» (հայերեն), 1920 թ., 19 դեկտեմբերի, 4 հունվարի 1921 թ., 8 փետրվարի 1921 թ.:

6. «Հայաստանի համալսարան», Ալեքսանդրապոլ, 31 հունվարի, 1920:

7. «Հարվածային ուսանող», 29 նոյեմբերի 1935 թ.:

8. Հովհաննիսյան Հ. Գ., «Հայաստանի պետական համալսարանը» հոբելյանական հոդված (նվիրված համալսարանի գործունեության 5-րդ տարեդարձին), «Գիտական տեղեկագիր», 1927, № 2-3:

9. Մելիքսեթյան Հ. Ու., Հայ ժողովրդի ավանդը Մեծ հայրենականի հաղթանակում, «Հանդես Երևանի համալսարանի», 1995, № 2, էջ 8-15:

10. Մինասյան Է., Հայաստանի առաջին հանրապետության կրթագիտական խոյանքը, «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» գիտաժողովի նյութեր, Երևան, 2018, էջ 180-194:

11. «Նաիրի» շաբաթաթերթ, Բեյրութ, 1961:

12. «Նոր ուսանող», Երևան, 1924 թ.:

13. «Սովետական Հայաստան», Երևան, 1941, 1945 թթ. համարները:

ՌԱԶՄԱՎԱԿԱՆ ՄԵԿՆԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ա. Մեծ Հայրենականի մարտադաշտերում զոհված համալսարանականները

Աբգարյան Արամայիս Վարազի
Աբովյան Գևորգ Հովհաննեսի
Աբրահամյան Հարություն Գալուստի
Աղաջանյան Աղաջան Սերգեյի
Աղաջանյան Արփիար Սերգեյի
Աղաջանյան Պերճ Սերգեյի
Առաքելյան Պարույր Ալեքսանի
Ավագյան Սամվել Նազարի
Ավետիսյան (Մասլով) Գուրգեն Մկրտչի
Ավետիքյան Իսահակ Ավետիսի
Բաբաջանյան Հակոբ Համազասպի
Բադալյան Արտեմ Եղիշեի
Բալասանյան Մուշեղ Արզումանի
Բախշինյան Գարեգին Ալեքսանդրի
Բարսեղյան Վարազդատ Տիգրանի
Գալստյան Աբաբեկ Ալեքսանի
Գալստյան Ավետիս Առաքելի
Գալստյան Գալուստ Տոնականի
Գրիգորյան Անդրանիկ Հարությունի
Գրիգորյան Արշավիր Կարապետի
Գրիգորյան (Գորյան) Հայկ Գևորգի
Գրիգորյան Հակոբ Գևորգի
Գրիգորյան Սասունիկ Սիրեկանի
Գրիգորյան Օնիկ Արտաշի
Զուբյան Դավիթ Դավթի
Զուրաբյան Վարդան Սիմոնի
Թումանյան Աշոտ Եսայու
Խալաթյան Հարություն Երվանդի
Խաչյան Թևան Կարապետի

Խնկոյան Վաչե Աթաբեկի
Խոջայան Աշոտ Գրիգորի
Կարապետյան Հայրապետ Աթանեսի
Կարապետյան Վանիկ Բագրատի
Կարապետյան Վարդան Գրիգորի
Կիրակոսյան Նիկողոս Աբրահամի
Կուլօղլյան Գրիգոր Հովհաննեսի
Հակոբյան (Սևանյան) Գուրգեն Ենոքի
Հարությունյան Բախշի Շամիրի
Հարությունյան Խաչատուր Ենգիբարի
Հարությունյան Վահագն Իգնատիոսի
Հովհաննիսյան Արտեմ Մարգարի
Հովհաննիսյան Նառնյակ Քրիստափորի
Հովսեփյան Արամ Սուրենի
Ղազարյան Վազգեն Խաչատուրի
Ղամարյան Արտաշես Ալեքսանդրի
Ղարիբյան Երվանդ Խաչատուրի
Ղուլյան Ջամիլ Եփրեմի
Ճշմարիտյան Հայկ Սեդրակի
Մանուկյան Արամ Վարդանի
Մանուկյան Մկրտիչ Խաչատուրի
Մանուկյան Սարգիս Մանուկի
Մաշուրյան Սերգեյ Մանուչարի
Մարգարյան Դրաստամատ Մաթևոսի
Մարգարյան Մանուկ Հովսեփի
Մարտիրոսյան Ալեքսանդր Մեսրոպի
Մարտիրոսյան Սարգիս Հովակիմի
Մարության Եղիշե Կարապետի
Մելիքսեթյան Համբարձում Ստեփանի
Մնացականյան Գարուշ Եգորի
Մովսիսյան Մովսես Ավետիսի
Մուրադյան Պողոս Հարությունի
Նալբանդյան Բագրատ Սամսոնի
Նալբանդյան Հմայակ Գրիգորի

Ներսիսյան Բախշի Մովսեսի
Ներսիսյան Հակոբ Հարությունի
Շիրակացի (Շատվորյան) Արտավազդ Մարտիրոսի
Ոսկանյան Գառնիկ Սահակի
Չարխչյան Դերենիկ Սերգոյի
Չիրիկյան Հարություն Գևորգի
Պողոսյան Ասքանազ Ստեփանի
Պողոսյան Ներսես Հարությունի
Ռոստոմյան Սերյոժա Վիրաբի
Սահակյան Գուրգեն Դավիթի
Սահակյան Ռուբեն Հովսեփի
Սաֆարյան Արտավազդ Կնյազի
Սաֆարյան Հայկազ Մկրտիչի
Սողոմոնյան Գուրգեն Արշակի
Տավարածյան Երվանդ Սերգեյի
Փանոսյան Գրիգոր Թադեվոսի
Փոթինյան Խաչիկ Սմբատի
Փուրսուղյան Ռուբեն Արշակի
Օհանջանյան Արտաշես Օհանջանի

Բ. Նախապատերազմյան տարիներին և պատերազմի սկզբում ԵՊՀ-ում ուսանած կամ աշխատած ռազմաճակատ մեկնած համալսարանականները:

Աբգարյան Գևորգ Վարագի
Աբրահամյան Աշոտ Գարեգինի
Աբրահամյան Գրիգոր Աբրահամի
Աբրահամյան Բենիամին Լևոնի
Ադամյան Հայկազ Իսահակի
Ազիզբեկյան Հայկազ Հարությունի
Ալեքսանդրյան Ռաֆայել Արամի
Աղաբաբյան Սուրեն Բագրատի
Ամարյան Գևորգ Ասատուրի
Ամիրբեկյան Միքայել Արշակի
Անանիկյան Կորյուն Գևորգի

Առաքելյան Բաբկեն Նիկոլայի
Առաքելյան Սահակ Նիկողոսի
Առաքելյան Վաղարշակ Միքայելի
Առուստամյան Ռուբեն Հովսեփի
Առուստամյան Վահան Մովսեսի
Ասլանյան Աշոտ Տիգրանի
Ավագյան Գուրգեն Դավիթի
Ավագյան Լիպարիտ Ավագի
Ավագյան Սուրեն Արտեմի
Ավետիսյան Վարդգես Աբգարի
Ավետիսյան Խաչատուր Անդրանիկի
Արաբյան Հովսեփ Արփիարի
Արզումանյան Անուշավան Աղաֆոնի
Արզումանյան Մակիչ Վահանի
Արզումանյան Սիմոն Կարապետի
Բաբախանյան Աշոտ Գրիգորի
Բաբայան Լևոն Հովհաննեսի
Բաբաջանյան Գևորգ Համազասպի
Բագլաչցան Մամիկոն Սիմոնի
Բադալյան Հայկ Վաղարշակի
Բալյան Սողոմոն Պողոսի
Բաղդասարյան Անդրանիկ Բախշիի
Բաղդասարյան Աշոտ Տիգրանի
Բաղդասարյան Գևորգ Պետրոսի
Բարսամյան Վաղարշակ Հայկի
Բարսեղյան Հովհաննես Խաչատուրի
Բեզիրգանյան Պետրոս Հակոբի
Բիչախչյան Միշա Կարապետի
Բոշնաղյան Պերճ Սերգեյի
Բոյախչյան Փայլակ Եգորի
Գառնիկյան Հովսեփ Եղիշեի
Գասպարյան Արտավազդ Գասպարի
Գասպարյան Նորայր Մեխակի
Գևորգյան Լյուդվիգ Ավետիսի

Գևորգյան Սոս Գեղամի
Գևորգյան Վազգեն Ասքանազի
Գրիգորյան Աիարոն Վաղարշակի
Գրիգորյան Գարեգին Արմենակի
Գրիգորյան Գրիգոր Համբարձումի
Գյուլբուդաղյան Լիպարիտ Վաղարշակի
Գյուլբուդաղյան Սիրաք Վաղարշակի
Գյուլնազարյան Խաժակ Մեսրոպի
Գյուլքանյան Ռուբեն Հովհաննեսի
Դավթյան Դավիթ Միերի
Դովլաթյան Վռամ Վաղինակի
Եղիազարյան Երեմ Հարությունի
Ենգոյան Փայլակ Իսահակի
Երեմյան Նիկողայ Ղուկասի
Թադևոսյան Գուրգեն Տիգրանի
Թադևոսյան Թադևոս Շահբազի
Թահրյան Իվան Աղասու
Թավադյան Աղասի Բախշիի
Թովմասյան Ներսես Ռաֆայելի
Թումանյան Բենիկ Եսայու
Թումանյան Սարգիս Քրիստափորի
Ինճիկյան Արամ Մկրտիչի
Իսախանյան Ալեքսանդր Եփրեմի
Իշխանյան Ռաֆայել Ավետիսի
Խալեյան Երվանդ Մկրտիչի
Խաչատրյան Գուրգեն Մովսեսի
Խաչատրյան Կիմ Բալայի
Խաչատրյան Հակոբ Եփրեմի
Խաչիկյան Յակով Իվանի
Կարապետյան Արծվիկ Գալուստի
Կոստանյան Գուրգեն Իսրայելի
Հակոբյան Թադևոս Խաչատուրի
Հակոբյան Լևոն Արզումանի
Հակոբյան Վազգեն Արտաշեսի

Հակոբյան Տիգրան Հարությունի
Հայրապետյան Արտաշես Պետրոսի
Հարությունյան Նիկոլայ Վասիլի
Հովհաննիսյան Գուրգեն Ալեքսանի
Հովհաննիսյան Հովհաննես Մկրտչի
Հովհաննիսյան Ղազար Սոսիևի
Հովհաննիսյան Միսակ Լևոնի
Հովհաննիսյան Շահեն Սարգիսի
Հովհաննիսյան Սուրեն Երեմի
Հովհաննիսյան Վրույր Արշակի
Ղազարյան Անդրանիկ Գեղամի (Խորհրդային Միության հերոս)
Ղազարյան Արշավիր Մելիքսեթի
Ղազարյան Վահան Հովսեփի
Ղասաբյան Ռուբեն Հակոբի
Ղարագյոզյան Իշխան Աղալոյի
Ղարիբջանյան Գևորգ Բագրատի
Ճշմարիտյան Սուրեն Աղաբեկի
Մանուկյան Եփրեմ Ղազարի
Մանուկյան Սարիբեկ Արմենակի
Մանուկյան Ռաֆայել Արշակի
Մարգարյան Դավիթ Հովսեփի
Մարգարյան Արշալույս Դավթի
Մարգարյան Զավեն Սմբատի
Մարգարյան Մանուկ Հովսեփի
Մարգարյան Նիկոլայ Առաքելի
Մարգարյան Վարդգես Մարգարի
Մարտիկյան Աշոտ Կարապետի
Մարտիկյան Մինաս Կարապետի
Մարտիրոսյան Գրիգորի Խաչատուրի
Մարտիրոսյան Գուրգեն Ազարիայի
Մարտիրոսյան Հակոբ Հայկի
Մարտիրոսյան Հարություն Արտաշեսի
Մեժլումյան Մամիկոն Մնացականի
Մելքոնյան Գառնիկ Մկայելի

Մելքոնյան Լևոն Մխիթարի
Մելքոնյան Լիպարիտ Գրիգորի
Միրզոյան Սամվել Ալեքսանի
Միքայելյան Արտիկ Տիգրանի
Միքայելյան Սուրեն Աղաբեկի
Մխիթարյան Գուրգեն Ենոքի
Մխիթարյան Ռաֆիկ Գրիգորի
Մխիթարյան Ռաֆիկ Սողոմոնի
Մխիթարյան Վահան Գրիգորի
Մկրտչյան Եղիազար Սողոմոնի
Մկրտչյան Մանիկ Սիմոնի
Մնացականյան Աղաջան Շաքարի
Մովսիսյան Աբգար Խաչատուրի
Մովսիսյան Ռաֆիկ Լևոնի
Մուսախանյան Վարդգես Մաթևոսի
Մուրադխանյան Գևորգ Բաղդասարի
Մուրադյան Հովհաննես Դավիթի
Նազարյան Հմայակ Եփրեմի
Նալբանդյան Մկրտիչ Հովսեփի
Նալբանդյան Վաչե Սմբատի
Նաջարյան Հուսիկ Խոսրովի
Ներկարարյան Վլադիմիր Նիկողոսի
Նիկողոսյան Ահարոն Ալեքսանի
Շահիբազյան Կորյուն Խաչատուրի
Շառոյան Գարսևան Վանոյի
Ոսկերչյան Արտաշես Կարապետի
Չաթինյան Ջիվան Գևորգի
Պառավյան Հրաչիկ Գալուստի
Պետրոսյան Աղվան Սիրեկանի
Պետրոսյան Գարեգին Բախշիի
Պետրոսյան Հայրապետ Աբրահամի
Պետրոսյան Նահապետ Հակոբի
Պիջյան Գրիգոր Հովհաննեսի
Պողոսյան Սերոբ Պողոսի

Պողոսյան Սուրեն Մեսրոպի
Ջահուկյան Գևորգ Բեգլարի
Ջաղացպանյան Դավիթ Կարապետի
Ջուհարյան Թորգոմ Գեվորգի
Սահակյան Գուրգեն Սերոբի
Սաղաթելյան Վաչագան Վարդանի
Սարգսյան Ալեքսանդր Աղաբաբի
Սարգսյան Գրիգոր Ալեքսանի
Սարգսյան Գրիգոր Ներսեսի
Սարգսյան Սուրեն Արտաշեսի (Խորհրդային Միության Հերոս)
Սարդարյան Լևոն Պետրոսի
Սաֆարյան Մնացական Կնյազի
Սաֆյան Լևոն Հարությունի
Սեմերջյան Վարդան Մարկոսի
Սողոմոնյան Սողոմոն Ալեքսանդրի
Սուքիասյան Աշոտ Մուրադի
Վահանյան Գվիդոն Հովհաննեսի
Վարդանյան Սարգիս Համբարձումի
Վարդանյան Ստեփան Հմայակի
Վարդապետյան Արշակ Վարդի
Վարդիկյան Սեդա Ավագի
Տեր-Ղազարյան Մելիքսեթ Գրիգորի
Ութմազյան Հայկարամ Մուրադի
Քամալյան Վահրամ Շավարշի
Քանքանյան Աղասի Գարեգինի
Քոչարյան Արմենակ Եզեկի
Քոչարյան Մուսայել Տիգրանի
Քոչարյան Սարիբեկ Խաչատուրի
Քոչինյան Հրաչիկ Երվանդի
Քրմոյան Եղիշե Հովսեփի

Գ. Պատերազմյան և ետպատերազմյան տարիներին ԵՊՀ-ում ուսանած կամ աշխատած հայրենական մեծ պատերազմի մասնակից համալսարանականները

Աբգարյան Ռոզալիա Սերգեյի
Աբրահամյան Գրիգոր Սարգսի
Աբրահամյան Սերգեյ Գյանջումի
Ադամյան Վիլեն Հովհաննեսի
Ազիզբեկյան Լենդրուշ Աբիսողոմի
Աթաջանյան Մելքոն Ավետիսի
Ալեքսանդրյան Արտաշես Մաթևոսի
Ալիխանյան Արտեմ Իսահակի
Ալիխանով Աբրահամ Իսահակի
Աղախանյան Գուրգեն Գարեգինի
Աղայան Աշոտ Հարությունի
Աղաջանյան Աշոտ Մովսեսի
Ամարյան Արսեն Գրիգորի
Այվազյան Ղազար Վարդանի
Անդրեև Միքայել
Առաքելյան Հայկազ Եգորի
Առաքելյան Մարտիրոս Համբարձումի
Ասատրյան Մանվել Եգորի
Առուստամյան Մամիկոն Առուստամի
Ասլանյան Հայկազ Գաբրիելի
Ասլանյան Վարդգես Սեդրակի
Ավագյան Սարգիս Դադաշի
Ավագյան Սմբատ Դարչինի
Ավագյան Սարգիս Նազարի
Արամյան Արամ Զալիկոյի
Արամունի Վահան Խաչատուրի
Արսենյան Արսեն Մովսեսի
Բաբալյան Լևոն Արմենակի
Բաբայան Թարխան Հովսեփի
Բաբաջանյան Գուրգեն Հմայակի
Բաբաջանյան Միքայել Հմայակի

Բաղալյան Սմբատ Աղալոյի
Բատիկյան Թոմիկ Ստեփանի
Բատիկյան Լևոն Մանուկի
Բարսեղյան Խիկար Հակոբի
Բարսեղյան Հենրիկ Տիգրանի
Բալայան Բորիս Պավելի
Բաղդասարյան Միսակ Բախշիի
Բորյան Մառլեն Տիգրանի
Գաբրիելյան Հովհաննես Վարդգեսի
Գալստյան Միքայել Իվանի
Գասպարով Վարդան Սամսոնի
Գևորգյան Հայկազ Մնացականի
Գևորգյան Հրանտ Մուշեղի
Գեյոկչակյան Մկրտիչ Գրիգորի
Գոզեյան Խաչատուր Տիգրանի
Գրիգորյան Բագրատ Հովհաննեսի
Գրիգորյան Միհրան Ստեփանի
Գուլքանյան Ռուբեն Հովհաննեսի
Դավթյան Վահագն Արմենակի
Դիբալին Լեոնիդ Գավրիլովիչ
Դրամբյան Տիգրան Սամսոնի
Դուրգարյան Արշակ Հակոբի
Եղշատյան Ռուբեն Ռուբենի
Զավարյան Միքայել Սարիբեկի
Զաքարյան Գրիգոր Խաչիկի
Զորաբյան Ժորժ Հարությունի
Զուբյան Գևորգ Դավիթի
Լյուլիկյան Արթուր Արամի
Թաթոսյան Գևորգ Ալեքսանդրի
Թովմասյան Մնացական Սիսակի
Թովմասյան Սուրեն Հակոբի
Թորոսյան Միքայել Գևորգի
Թումանյան Գեղամ Երանոսի
Ինճիկյան Հովհաննես Գրիգորի

Իսահակյան Գառնիկ Դրաստամատի
Լազիկյան Լեոնիդ Մովսեսի
Լալայան Ավագ Սողոմոնի
Խաչատուրյան Կարո Էրանի
Խաչատրյան Գուրգեն Մնացականի
Խաչատրյան Մովսես Մարտիրոսի
Խաչատրյան Ռոբերտ Հրաչիկի
Խառատյան Գուրգեն Փոլադի
Խոնդկարյան Հարություն Արշավիրի
Կանդաևով Դիմիտրի Գեորգիևիչ
Կապլուն Բորիս Յակով Լևիչ
Կարաբեգով Վլադիմիր Իվանի
Կարապետյան Արարատ Սաղաթելի
Կարապետյան Կարապետ (Գարուշ) Մեխակի
Կարապետյան Մացակ Գեղամի
Կարապետյան Ռեմ Սերգեյի
Կիրակոսյան Անուշավան Սարիբեկի
Հակոբյան Ավետիս Եղիազարի
Հակոբյան Արշավիր Մնացականի
Հակոբյան Գառնիկ Մովսեսի
Հակոբյան Միքայել Նավասարդի
Հակոբյան Սարգիս Արշակի
Հակոբյան Սերգեյ Տիգրանի
Հակոբյան Ստեփան Մկրտիչի
Հակոբյան Սուրեն Հակոբի
Հայրյան Գևորգ Արմենակի
Հարությունյան Աշոտ Հովսեփի
Հարությունյան Արամ Կարապետի
Հարությունյան Արամազդ Սիսակի
Հարությունյան Նագուշ Խաչատուրի
Հարությունյան (Ումառյան) Սերգեյ Հովհաննեսի
Հովհաննիսյան Արտավազդ Մամիկոնի
Հովհաննիսյան Բագրատ Մարգարի
Հովհաննիսյան (Օգանեզով) Գեորգի Դանելի

Հովհաննիսյան Երվանդ Վերդիի
Հովհաննիսյան Հրաչյա Կարապետի
Հովսեփյան Բաղիշ Արշակի
Հովսեփյան Վռամ Միքայելի
Հունանյան Ֆերդինանդ Վաղարշակի
Ղազարյան Արշավիր Մելիքսեթի
Ղազարյան Գաբրիել Պետրոսի
Ղազարյան Կարլեն Արմենակի
Ղազարյան Միտյա Սիմոնի
Ղազարյան Ռաֆայել Ավետիսի
Ղանթարչյան Արտավազդ Վասիլի
Ղասաբյան Զոհրաբ Մարկոսի
Ղարիբյան Սուրեն Գրիգորի
Ղափլանյան Աշոտ Մանվելի
Ճինգոզյան Կարո Հարությունի
Մաղաքյան Հովհաննես Գևորգի
Մանուչարյան Գրիգոր Լևոնի
Մարգարյան Բագրատ Օհանի
Մարգարյան Դավիթ Հովսեփի
Մարգարյան Հակոբ Օնիկի
Մարկոսյան Մանվել Գրիգորի
Մարտիրոսյան Գրիշա Ղազարի
Մարության Նիկողայ Հովհաննեսի
Մարության Հենրիկ Սուքիասի
Մելիքյան Մեհենդակ Արտաշեսի
Մելիքսեթյան Էդուարդ Աբգարի
Մելքումյան Բագրատ Գրիգորի
Մելքումյան Մելքում Սարոյի
Մելքումյան Ռաֆիկ Սեդրակի
Մինասյան Լյուդվիգ Սողոմոնի
Միրզաբեկյան Էմիլ Հայկի
Միրզոյան Բենիամին Սիմոնի
Միրզոյան Սուրեն Գարեգինի
Միքայելյան Գեղեոն Հայրապետի

Միքայելյան Վարդգես Ալեքսանի
Մկրտչյան Գուրգեն Գասպարի
Մկրտչյան Վահագն Արշակի
Մնացականյան Արամայիս Նավասարդի
Մովսեսյան Հովհաննես Ավետիսի
Մուշեղյան Խաչիկ Արտաշեսի
Մուսախանյան Վարդան Արամի
Յուզբաշյան Բենիկ Տիգրանի
Նազարյան Գևորգ Հարթենի
Նազարյան Գեորգի Միհրանի
Նազինյան Արտաշես Մկրտիչի
Ներսիսյան Մկրտիչ Գեղամի
Շատվորյան Հայրապետ Հովսեփի
Շահնազարյան Նիկողայ Հարությունի
Շիրինյան Սերգեյ Խաչատուրի
Շահազիզյան Ալբերտ Պարույրի
Չատինյան Վազգեն Սարգսի
Շարիֆով Սուրեն Ալիևի
Չիլինգարյան Վլադիմիր Մուրադի
Չոբանյան Լյուդվիգ Մովսեսի
Չոբանյան Օնիկ Սամսոնի
Պավժիտկով Արոն Իլյիչ
Պետրոսյան Անդրանիկ Հովհաննեսի
Պետրոսյան Միքայել Հովսեփի
Պետրոսյան Պետրոս Արտաշեսի
Պիվազյան Հարություն Մուշեղի
Պողոսյան Արտաշես Ալեքսանդրի
Պողոսյան Գալուստ Մնացականի
Պողոսյան Պողոս Միքայելի
Ջոթյան Պարույր Հովհաննեսի
Ջրբաշյան Էդուարդ Մկրտչի
Սահակյան Գուրգեն Խաչատուրի
Սահակյան Համլետ Համայակի
Սահակյան Ռուբեն Գալուստի

Սահակյան Սպարտակ Սուրենի
Սահրադյան Գևորգ Միսակի
Սարգսյան Կարլ Սարգսի
Սարգսյանց Մամիկոն Բախշիի
Սարգսյան Անդրանիկ Մերգելի
Սարգսյան Արամ Վարդանի
Սարգսյան Սերգեյ Հովհաննեսի
Սարգսյան Սուրեն Սարգսի
Սարկիսով Արսեն Երվանդի
Սարինյան Սերգեյ Ներսեսի
Սիմոնյան Աբել Պողոսի
Սիմոնյան Խաչատուր Բախշիի
Վարդանյան Վաչագան
Վարդապետյան Հովհաննես Կարապետի
Տեր-Խաչատրյան Վաղարշակ Բաբկենի
Տեր-Մինասյան Լևոն Երվանդի
Ուզունյան Մակիչ Իվանի
Ուլունյան Հակոբ Հարությունի
Փախլյան Սերգեյ Թորոսի
Փիլոյան Հրաչյա Վելիխանի
Քեչեչյան Հովհաննես Թադևոսի
Փեյրիզյան Վարդան Կարապետի
Օհանյան Արամայիս Գևորգի

Пайлак Енгоян, Эдик Минасян

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941-1945гг.)

РЕЗЮМЕ

В этом году отмечается столетие со дня основания Ереванского государственного университета. Ереванский государственный университет играет уникальную роль в системе высшего образования Армении. ЕГУ является большим достижением армянского народа в 20-ом веке. Со времени основания ЕГУ развивался, процветал и стал большим культурно-образовательным и научным центром, достиг ощутимых результатов в процессе подготовки высококвалифицированных кадров для разных отраслей жизнедеятельности Армении. ЕГУ тот животворный корень, из которого ответвилась большая часть наших высших учебных заведений.

В годы Великой Отечественной войны 869 преподавателей, аспирантов, студентов записались в армию, 300 из которых героически погибли, а многие вернулись домой раненными или инвалидами. Эта работа посвящена деятельности университета, его сотрудников и учащихся в годы Великой Отечественной войны. В основе книги лежит работа П. Енгояна " Ереванский университет во время Великой Отечественной" (Ереван 1975, изд. ЕГУ), которая дополнена новыми фактами и архивными документами и именами, прибавились новые главы, эпилог и список использованной литературы. В предисловии представлена важность основания Ереванского государственного университета и его роль в подготовке кадров с высшим образованием. Эти кадры внесли огромный вклад в социально-экономической, научной и культурной жизни Советской Армении а во время войны внесли свою лепту в достижении победы в Великой отечественной войне.

В первой главе на основе богатого фактического материала освещаются роль и участие университета в мобилизации и создании добровольных отрядов ополчения, армянских дивизий а также в работе в тылу. ЕГУ призвался к защите родины с первых дней Великой отечественной войны. Только в первом году войны на фронт ушли 360 сотрудников и студентов ЕГУ, в том числе Анушаван Арзуманян, Геворк Джаукян, Геворк Гарибджанян, Вače Налбандян, Ашот Асланян, Ованес Барсегян, Сирак Гюлбудагян, Петрос Безирганян, Перч Бошнагян, Сероб Погосян, Геворг Бабаджанян, Беник Туманян, Корюн Шахбазян, Вачаган Сагателян и другие. В годы войны университет столкнулся с новыми, требующими неотложных решений проблемами, пересмотрелись учебные планы, были внедрены курсы боевой подготовки, организовались оборонительные мероприятия, усилилась идейно-воспитательная работа. Организовались курсы для медсестёр, где учили методам оказания первой медицинской помощи, а практические занятия проводились в госпитале. Часть из первых выпускников этих курсов отправилась служить в государственных больницах и в госпитали, а другие - на разные фронты войны. Сотрудники и студенты активно участвовали и в работах в тылу. Кафедры и лаборатории университета внедрили в производство ряд новшеств: химики ЕГУ разработали методику получения угля для газоубежищ, технологию получения физиологической соли, изучили средство от коррозии для подземных электрических и телефонных кабелей Еревана. Физики, математики и механики помогли промышленным предприятиям внедрить в производство новые механизмы. Почти каждый день из университета отправлялась рабочая сила в разные регионы республики чтобы помогать колхозникам в полевых работах. Сотни студентов и преподавателей помогали загрузить и разгрузить вагоны на железнодорожной станции и автостанции Еревана. Они с большим энтузиазмом организовали сбор металлолома и теплой одежды для солдатов и участвовали в организации противовоздушной обороны Еревана.

В следующей главе представлены биографии погибших сотрудников и студентов. В 1979 году, 8-го мая, накануне 34-ой годовщины победы советского народа в Великой отечественной войне, во дворе университета торжественно был открыт памятный родник в честь погибших.

Третья глава посвящена подвигам студентов, аспирантов и преподавателей университета. В годы войны их подавляющее большинство побывало на фронте. Многие были награждены орденами и медальями. Из преподавателей генерал-майор Андраник Казарян, а из студентов Сурен Саргсян были удостоены высшего звания героя Советского Союза.

В четвертой главе представлены биографии тех, кто после участия в военных действиях на разных фронтах войны стали студентами или преподавателями ЕГУ. В эпилоге обобщены результаты работы, отмечена роль университета не только в Великой отечественной войне, но и в Арцахском движении, в азербайджано-арцахской войне, а также в Апрельской четырехдневной войне в 2016-ом году.

Paylak Yengoyan, Edik Minasyan

YEREVAN STATE UNIVERSITY DURING THE GREAT PATRIOTIC WAR (1941-1945)

SUMMARY

2019 is the year of 100th anniversary of the Alma Mater - Yerevan State University. The role of YSU is exceptional in the higher education system of Republic of Armenia. YSU is one of the greatest achievements of Armenia in the 20th century. Developing through years is has become a big scientific educational and cultural centre and has succeeded in preparation of qualified human resources for different spheres of activities of Armenia. YSU is the life-giving root from which the vast majority of higher education institutes branched later.

During the II World War 869 lecturers, post- graduates and students of YSU became soldiers to defend their motherland, 300 of them fell a prey and many of them returned home wounded and disabled. This work elucidates the activities of the university in the years of the World War 2. It has made use of P. Yengoyan' s work "Yerevan University in the years of the Great Patriotic War "(Yerevan 1975, YSU Press) and has been completed with new factual archival documents and names, new chapters, an epilogue and list of literature. The preface presents the importance of foundation of YSU and its role in preparing educated human resources who contributed largely to the development of social- economical, scientific-educational and cultural life of Soviet Armenia and the great instillation of the Armenian people in the victory in World War 2.

Basing on big factual material, the first chapter presents the participation of the university staff in mobilization work, formation of people's volunteer corps, Armenian military divisions and rear works. From the very first days of the war, during the first year 360 members of YSU staff (lecturers, students and others) went to the front, among them

Anushavan Arzumanyan, Gevorg Jahukyan, Gevorg Gharibjanyan, Vache Nalbandyan, Ashot Aslanyan, Hovhannes Barseghyan, Sirak Gyulbudaghyan, Petros Bezirganyan, Perch Boshnaghyan, Serob Poghosyan, Gevorg Babajanyan, Benik Tumanyan, Koryun Shahbazyan, Vachagan Saghatelyan and others. During the war YSU faced new urgent problems; the courses were reviewed, new courses of military preparation were included. Courses preparing nurses were organized where the students were taught the methods and ways of first aid and had their practice in hospitals. Part of the graduates of this courses went to serve in the hospitals of the republic and many others - to different fronts. YSU staff members took an active part in organisation of rear works. The chairs and laboratories of YSU came up with many innovations in production processes: the chemists developed new methods of extracting coil for the gas shelters, technologies for getting physiological salt, they invented anti-corrosion means for underground electrical and telephone cables for Yerevan. The YSU physicists and mathematicians helped the industrial enterprises to launch new mechanisms.

Almost every day work force was sent from YSU to different regions of the republic to help the collective farmers. After classes hundreds of students and teachers used to go to the railway and car stations helping to entrain and detrain. The university staff organized the works for gathering scrap metal and warm clothes for the soldiers, they also took part in organisation of anti-aircraft defense of Yerevan.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ, ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.)

PAYLAK YENGOYAN, EDIK MINASYAN

YEREVAN STATE UNIVERSITY DURING THE GREAT PATRIOTIC WAR (1941-1945)

ПАЙЛАК ЕНГОЯН, ЭДИК МИНАСЯН

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941-1945гг.)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Տպագրված է «Հայկարլի» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Կիևյան 18/6

Ստորագրված է տպագրության՝ 26.08.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 36.625 + 48 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Շապիկին օգտագործվել է Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանի լուսանկարը:

Քանդակագործ՝ Զ. Փաշիկյան
Ճարտարապետ՝ Ռոմեն Ջուլհակյան

Առաջին հուշարձանն է, որը կանգնեցվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի հարակից պուրակում 1979 թ. մայիսի 8-ին: 5 մետր բարձրություն ունեցող ուղղանկյունաձև գրանիտե հուշարձանի աղբյուրից ջուրը ցայտում է քարե ավազանի մեջ՝ խորհրդանշելով կյանքն ու հավերժությունը: Հուշարձանի վրա գրված է. «Հավերժ փառք 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականներին»: Այս մակագրության կողքին ամրացված է զոհված երիտասարդներին խորհրդանշող պղնձակուռ տերև:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am